ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ

ՄԱՍ 3. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ, ԵՆԹԱԽՄԲԵՐԻ, ՓՈՔՐ ԵՎ ՍՏՈՐԻՆ ԽՄԲԵՐԻ

ԲԱԺԻՆ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 1. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՕՐԵՆՍԴԻՐ, ԳՈՐԾԱԴԻՐ, ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Օրենսդիր, գործադիր, դատական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքական և հասարակական միավորումների ղեկավարները, իրենց վերապահված լիազորությունների սահմաններում, որոշում, հաստատում, մշակում, հանձնարարում և իրագործում են պետական քաղաքական և հասարակական կազմակերպությունների քաղաքականությունը, մշակում են օրենքներ և այլ իրավական ակտեր, ներկայացնում են պետությունը կամ հանդես գալիս նրա անունից, օրենսդրության և պետական քաղաքականության իրականացման նպատակով կազմակերպում և ուղղորդում են կառավարական կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպությունների ու հիմնարկների, ներառյալ դրանց կառուցվածքային ստորաբաժանումների, գործունեությունը:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. վերապահված լիազորությունների սահմաններում՝ պետական, տարածքային և համայնքային զարգացման քաղաքականությունը որոշելը, հաստատելը, ծրագրելը, համապատասխան իրավական ակտեր մշակելը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ֆինանսատնտեսական, վարկային, հարկային, արտաքին քաղաքականության, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում պետական քաղաքականության և վերահսկողության իրականցման, արդարադատության իրականացման, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հարգման, սեփականության և հասարակական կարգի պահպանման, հասարակական հանրօգուտ գործունեության, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կարգավորման, հասարարական-քաղաքական միջոցառումների իրականացման ապահովումը:

3.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1)**Ենթախումբ 11. Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր, դատական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքական ու հասարակական կազմակերպությունների.**

2)**Ենթախումբ 12. Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների, այդ թվում՝ դրանց կառուցվածքային ստորաբաժանումների.**

3)**Ենթախումբ 13. Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների:**

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 11. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՕՐԵՆՍԴԻՐ, ԳՈՐԾԱԴԻՐ, ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Օրենսդիր, գործադիր, դատական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքական ու հասարակական կազմակերպությունների ղեկավարները որոշում, հաստատում են պետական, տարածքային և համայնքային զարգացման քաղաքականությունը և ապահովում դրա իրագործումը, մշակում, ընդունում, հրապարակում, լրացնում, փոփոխում, դադարեցնում են իրավական ակտերի գործողությունը՝ ապահովելով և հսկելով դրանց պարտադիր կատարումը, ներկայացնում են պետությունը և հանդես գալիս նրա անունից, կազմակերպում և ղեկավարում են պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, ինչպես նաև հասարակական միավորումների և կազմակերպությունների գործունեությունը:

2.Այս ենթախմբի աշխատողների պարտականությունները ներառում են. օրենսդիր, գործադիր և դատական իշխանության իրականացումն ապահովելը, պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական միավորումների ու կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովումը, իրավական ակտեր մշակելը, ընդունելը, հրապարակելը, փոփոխելը, լրացնելը, գործողությունը դադարեցնելը. պետական հիմնարկների և կազմակերպությունների ու դրանց ստորաբաժանումների գործունեությունը ծրագրելը, աշխատողների գործունեության ղեկավարումը, համակարգելը և վերահսկելը. իրավական ակտի կիրառմամբ պայմանավորված հարցերի վերաբերյալ խորհրդատվություն, պարզաբանումներ և մեկնաբանություններ տրամադրելը. պետությունը ներկայացնելը և օտարերկրյա պետություններում նրա անունից հանդես գալը, հասարարական-քաղաքական միջոցառումներ իրականացնելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 111. Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների.**

2)**Փոքր խումբ 112. Ղեկավարներ և պաշտոնատար անձինք՝ պետական կառավարման մարմինների և ներկայացուցչությունների.**

3)**Փոքր խումբ 113. Ղեկավարներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների.**

4)**Փոքր խումբ 114. Ղեկավարներ՝ կուսակցությունների և հասարակական միավորումների:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 111. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՕՐԵՆՍԴԻՐ, ԳՈՐԾԱԴԻՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

1.Օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ղեկավարները որոշում, հաստատում, ուղղորդում, մշակում, իրականացնում են պետական և տարածքային կառավարման քաղաքականության և արդարադատության ապահովում, մշակում, ընդունում, հրապարակում, լրացնում, փոփոխում և դադարեցնում են իրավական ակտերի գործողությունը: Նրանց լիազորությունները սահմանվում և սահմանազատվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. օրենսդիր, գործադիր և դատական մարմինների, աշխատանքային խմբերի, հանձնաժողովների նիստերը հրավիրելը վարելը կամ դրանց մասնակցելը. օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացնելը. իրենց վերապահված լիազորությունների սահմաններում՝ օրենքներ և այլ իրավական ակտեր մշակելը, ընդունելը, հրապարակելը, լրացնելը, փոփոխելը, գործողությունը դադարեցնելը և դրանց կատարումն ապահովելու նպատակով հսկողություն ու վերահսկողություն իրականացնելը. ներքին և արտաքին քաղաքականությունը մշակելն ու իրականացնելը, այլ աշխատողներին ղեկավարելը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված լիազորություններ իրականացնելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 1110. Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների:**

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1110. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՕՐԵՆՍԴԻՐ, ԳՈՐԾԱԴԻՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

1.Օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ղեկավարները որոշում, ձևավորում, ուղղորդում, մշակում և իրականացնում են պետական քաղաքականությունը, մշակում, ընդունում, հրապարակում, լրացնում, փոփոխում, գործողությունը դադարեցնում օրենքների և այլ իրավական ակտերի: Նրանց լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)օրենսդիր, գործադիր և դատական մարմինների, աշխատանքային խմբերի, հանձնաժողովների նիստերը հրավիրելը, վարելը կամ դրանց մասնակցելը.

2)օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացնելը, իրենց վերապահված լիազորությունների սահմաններում, օրենքներ և այլ իրավական ակտեր մշակելը, ընդունելը, հրապարակելը, լրացնելը, փոփոխելը, գործողությունը դադարեցնելը և դրանց կատարումն ապահովելու նպատակով հսկողություն ու վերահսկողություն իրականացնելը.

3)միասնական ներքին և արտաքին պետական քաղաքականությունը մշակելը, իրականացնելը և դրանց կատարումն ապահովելը.

4) պետական բյուջեն մշակելը և հաստատելը, դրա կատարումն ապահովելը.

5)պետական սեփականությունը կառավարելը.

6)օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հարգման, պաշտպանման ապահովման ուղղությամբ ձեռնարկում է միջոցներ.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված լիազորություններ իրականացնելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) նախագահ.

2) նախագահ՝ Ազգային ժողովի.

3) վարչապետ.

4) պատգամավոր՝ Ազգային ժողովի.

5) նախարար.

6) ղեկավար՝ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի.

7) մարզպետ:

5. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 112. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ՝ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Պետական կառավարման մարմինների և ներկայացուցչությունների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք մշակում են պետական քաղաքականության ուղղությունները, ինչպես նաև, օրենքով և այլ իրավական ակտերով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, մշակում են համապատասխան նորմատիվ իրավական ակտեր և վերահսկում դրանց կատարումը, ապահովում են պետական հիմնախնդիրների լուծումը, համապատասխան բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տալիս են խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ղեկավարում են պետական կամ տարածքային կառավարման մարմինների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը, օտարերկրյա պետություններում ներկայացնում են պետությունը և հանդես գալիս նրա անունից, ինչպես նաև այդօրինակ գործունեություն են ծավալում միջկառավարական կազմակերպություններում:

2.Նրանց պարտականությունները ներառում են. պետական քաղաքականության ուղղությունների, նորմատիվ իրավական ակտերի մշակմանը մասնակցելը և դրանց կատարումը վերահսկելը. ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնախնդիրների լուծում ապահովելը և դրանց առնչվող հարցերի ճշտման նպատակով խորհրդատվական բնույթի պարզաբանումներ տալը. պետական և տարածքային կառավարման մարմինների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը ղեկավարելը, պետությունը օտարերկրյա պետություններում ներկայացնելը և նրա անունից հանդես գալը. միջկառավարական կազմակերպություններում այդօրինակ գործունեություն ծավալելը, այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 1120. Ղեկավարներ և պաշտոնատար անձինք՝ պետական կառավարման մարմինների և ներկայացուցչությունների:**

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1120. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ՝ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Պետական կառավարման մարմինների և ներկայացուցչությունների ղեկավարները և պաշտոնատար անձինք մշակում են պետական քաղաքականության ուղղությունները, ինչպես նաև մասնակցում են նորմատիվ իրավական ակտերի մշակմանը և վերահսկում դրանց կատարումը, ապահովում են պետական հիմնախնդիրների լուծումը և համապատասխան բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տալիս են խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, կազմակերպում և ղեկավարում են պետական և տարածքային կառավարման մարմինների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը, օտարերկրյա պետություններում ներկայացնում են պետությունը և հանդես գալիս նրա անունից, ինչպես նաև այդօրինակ գործունեություն են ծավալում միջկառավարական կազմակերպություններում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պետական քաղաքականության ուղղություններ, նորմատիվ իրավական ակտեր մշակելը և դրանց կատարումը վերահսկելը.

2)ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող հիմնախնդիրների լուծում ապահովելը և դրանց առնչվող հարցերի ճշտման նպատակով խորհրդատվական բնույթի պարզաբանումներ տալը.

3)պետական և տարածքային կառավարման մարմինների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կազմակերպելը և ղեկավարելը.

4)օտարերկրյա պետություններում պետությունը ներկայացնելը, նրա անունից և ի շահ գործելը, միջկառավարական կազմակերպություններում այդօրինակ գործունեություն ծավալելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)պաշտոնեական իրավասությունների սահմաններում բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) դեսպան.

2) հյուպատոս.

3) ղեկավար՝ ստորաբաժանման:

7. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 113. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

1.Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներն իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենսդրությամբ սահմանված գործունեություններ, որը միտված է տեղական նշանակության խնդիրների լուծմանը՝ ներառյալ համայնքի սեփականությունը կառավարելը և տնօրինելը:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. համայնքի սեփականությունը կառավարելը և տնօրինելը. համայնքի բյուջեն ձևավորելը, հաստատելը և դրա կատարումը վերահսկելը. աշխատողների գործունեության ղեկավարում. օրենքով սահմանված կարգով՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի կողմից կատարվող վճարումների դրույքաչափերը սահմանելը և դրանց հավաքումն իրականացնելը. հասարակական կարգի պահպանությունն ապահովելը. համայնքի տարածքում պարտադիր կատարման իավական ակտեր ընդունելը, ինչպես նաև տեղական նշանակության այլ հարցեր լուծելը: Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներն օրենքով կարող են օժտվել պետական կառավարման մարմիններին վերապահված լիազորություններով (պատվիրակած լիազորությունների իրականացումը), որոնց իրականացման համար պետական բյուջեից հատկացվում են անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցներ:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 1130. Ղեկավարներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների:**

8. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1130. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

1.Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներն իրականացնում են համայնքային շահերին վերաբերող և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված գործունեություն, որը միտված է տեղական նշանակության հարցերի լուծմանը, օրենքով կարող են օժտվել պետական կառավարման մարմիններին վերապահված լիազորություններով (պատվիրակած լիազորությունների իրականացումը), որոնց իրականացման համար պետական բյուջեից հատկացվում են անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցներ:

2. Նրանց հիմնական պարտականությունները ներառում են.

1)համայնքի սեփականությունը կառավարելը և տնօրինելը.

2)համայնքի բյուջեն /զարգացման ծրագիրը/ ձևավորելը, հաստատելը, իրականացնելը և դրա կատարումը վերահսկելը.

3)օրենքով սահմանված կարգով՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի կողմից կատարվող վճարումների դրույքաչափերը սահմանելը և դրանց հավաքումն իրականացնելը.

4)հասարակական կարգի պահպանությունն ապահովելը.

5)պետական իշխանության բարձրագույն մարմիններում և այլ կազմակերպություններում իր համայնքը ներկայացնելը.

6)տեղական նշանակության այլ հարցեր լուծելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)սահմանված իրավասությունների շրջանակներում այլ պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)Երևանի ավագանի.

2)Երևանի քաղաքապետ.

3) համայնքի ավագանի.

4) համայնքի ղեկավար

5) վարչական շրջանի ղեկավար:

9. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 114. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Կուսակցությունների և հասարակական միավորումների ղեկավարները մշակում, ձևավորում, ուղղորդում և իրականացնում են քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների (արհեստակցական միություններ, գործատուների կազմակերպություններ, արդյունաբերական միություններ, բարեգործական կազմակերպություններ, մարզական ընկերություններ, սոցիալական պաշտպանության միություններ՝ կանանց, երեխաների, վետերանների, հաշմանդամների, ուսանողների, փրկարարների և այլն) գործունեությունը՝ կանոնադրական նպատակներին ու խնդիրներին համապատասխան, օրենքով սահմանված կարգով՝ ներկայացնում ու պաշտպանում են իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, գործում և առաջնորդվում են կազմակերպության կանոնադրությանը համապատասխան:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. կուսակցությունների և կազմակերպությունների քաղաքականությունը, կանոնադրությունը և գործունեության կարգը սահմանելուն և մշակելուն մասնակցելը. կուսակցության/կազմակերպության, դրա անդամների և շահառուների անունից բանակցություններ վարելը. կուսակցության/կազմակերպության, դրա անդամների և շահառուների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտպանելը. կուսակցության/կազմակերպության գործունեությունն ընդլայնելը, իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով՝ առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելը, կանոնադրության հաստատմանը, կանոնադրական նպատակներին ու խնդիրներին

առնչվող աշխատանքներ ծրագրելը, կազմակերպելը և ուղղորդելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 1141. Ղեկավարներ՝ կուսակցությունների.**

2)**Ստորին խումբ 1142. Ղեկավարներ՝ հասարակական կազմակերպությունների և միավորումների.**

3)**Ստորին խումբ 1143. Ղեկավարներ՝ բարեգործական հասարակական կազմակերպությունների:**

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1141. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Կուսակցությունների ղեկավարները սահմանում և ձևավորում են կուսակցությունների քաղաքականությունը, կանոնադրական նպատակներն ու խնդիրները, նրա անդամների իրավունքները և պարտականությունները, կուսակցությանն անդամակցելու և անդամակցությունը կորցնելու պայմանները, ծրագրում, ուղղորդում և իրականացնում են կուսակցության կանոնադրական նպատակներին ու խնդիրներին առնչվող աշխատանքները և գործունեությունը, ներկայացնում են այն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և գործում դրանց անունից:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կուսակցության քաղաքականությունը, կանոնադրական նպատակներն ու խնդիրները, նրա անդամների իրավունքները և պարտականությունները, կուսակցությանն անդամակցելու և անդամակցությունը կորցնելու պայմանները սահմանելը, ձևավորելը, ծրագրելը և ուղղորդելը.

2)կուսակցության և դրա անդամների անունից բանակցություններ վարելը.

3)քաղաքական մարմինների ընտրության ժամանակ քաղաքական կուսակցության և դրա թեկնածուների անունից քարոզարշավներ և այլ միջոցառումներ ծրագրելն ու կազմակերպելը, ինչպես նաև ընտրություններում թեկնածուներ առաջադրելը.

4)կուսակցության շարքերում նոր անդամների ընդգրկման միջոցառումներ ծրագրելը և կազմակերպելը.

5)կուսակցության անդամների համար կուսակցության գործունեության, պատմության, քաղաքական հարցերով ուսուցման միջոցառումներ ծրագրելը և կազմակերպելը.

6)իր կանոնադրությամբ սահմանված կարգով նոր ստորաբաժանումներ ստեղծելը, դրանց գործունեությունը ծրագրելը, կազմակերպելը և կառավարելը, կանոնադրական նպատակներին ու խնդիրներին առնչվող աշխատանքներն ուղղորդելը և ծրագրելը.

7)կուսակցության ծրագրերը, կուսակցության և դրա անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և հասարակության առաջ ներկայացնելը.

8)կուսակցության պատմության, գործունեության, ծրագրերի վերաբերյալ գրքեր, գրքույկներ, պաստառներ և այլ տպագիր նյութեր պատրաստելը և հրատարակելը.

9) այլ աշխատողներին ղեկավարելը.

10)սահմանված իրավասությունների շրջանակներում բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)նախագահ՝ քաղաքական կուսակցության.

2)քարտուղար՝ քաղաքական կուսակցության:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1142. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Հասարակական կազմակերպությունների և միավորումների ղեկավարները մշակում, ձևավորում, ուղղորդում և իրականացնում են կազմակերպության քաղաքականությունը և

գործունեությունը՝ կանոնադրական նպատակներին ու խնդիրներին համապատասխան, օրենքով սահմանված կարգով՝ ներկայացնում ու պաշտպանում են իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և հանդես գալիս դրա անունից:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կազմակերպության քաղաքականությունը, կանոնադրական նպատակները, խնդիրները և իրավասությունները սահմանելը, ձևավորելը, ծրագրելը և ուղղորդելը.

2)կազմակերպության և դրա անդամների անունից բանակցություններ վարելը.

3)կազմակերպության և դրա անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և հասարակության առաջ ներկայացնելը.

4)կազմակերպության շարքերում նոր անդամների ընդգրկման և նրանց ուսուցման միջոցառումներ ծրագրելը և կազմակերպելը.

5)իր կանոնադրությամբ սահմանված կարգով նոր ստորաբաժանումներ ստեղծելը, դրանց գործունեությունը ծրագրելը, կազմակերպելը և կառավարելը, կանոնադրական նպատակներին ու խնդիրներին առնչվող աշխատանքներն ուղղորդելը և ծրագրելը.

6)կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող խնդիրների վերաբերյալ խորհրդատվական բնույթի ծառայություններ մատուցելը, պետական ծրագրերի մշակմանը մասնակցելը և դրանց իրագործմանը աջակցելը.

7)հաշվետվություններ պատրաստելը.

8) այլ աշխատողներին ղեկավարելը.

9)սահմանված իրավասությունների շրջանակներում բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) նախագահ՝ արհեստակցական միության.

2) նախագահ՝ ստեղծագործական միության.

3) նախագահ (տնօրեն)՝ հիմնադրամի.

4) քարտուղար՝ ստեղծագործական միության:

12. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1143. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Բարեգործական հասարակական կազմակերպությունների ղեկավարները սահմանում, ձևավորում, ուղղորդում և իրականացնում են բարեգործական կազմակերպությունների, մարզական ընկերությունների (ասոցիացիաների), սոցիալական պաշտպանության միությունների (կանանց, երեխաների, ուսանողների, վետերանների, հաշմանդամների միություններ, Կարմիր խաչի, փրկարարների կազմակերպություններ և այլն) և այլ հասարակական կազմակերպությունների քաղաքականությունը, գործունեությունը և իրավասությունները՝ կանոնադրական նպատակներին ու խնդիրներին համապատասխան, ներկայացնում ու պաշտպանում են իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և հանդես գալիս դրա անունից:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կազմակերպության քաղաքականությունը, կանոնադրական նպատակները, խնդիրները և իրավասությունները սահմանելը, ձևավորելը, ծրագրելը և ուղղորդելը.

2)կազմակերպության, դրա անդամների և շահառուների անունից բանակցություններ վարելը.

3)կազմակերպության, դրա անդամների և շահառուների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և հասարակության առաջ ներկայացնելը.

4)կազմակերպության շարքերում նոր անդամների ընդգրկման և նրանց ուսուցման միջոցառումներ ծրագրելը և կազմակերպելը.

5)իր կանոնադրությամբ սահմանված կարգով նոր ստորաբաժանումներ ստեղծելը, դրանց գործունեությունը ծրագրելը, կազմակերպելը և կառավարելը, կանոնադրական նպատակներին ու խնդիրներին առնչվող աշխատանքներն ուղղորդելը և ծրագրելը.

6)կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող խնդիրների վերաբերյալ խորհրդատվական բնույթի ծառայություններ մատուցելը, պետական ծրագրերի մշակմանը մասնակցելը և դրանց իրագործմանը աջակցելը.

7)հաշվետվություններ պատրաստելը.

8) այլ աշխատողներին ղեկավարելը.

9)սահմանված իրավասությունների շրջանակներում բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) նախագահ՝ փրկարարների միության,

2) նախագահ՝ Կարմիր խաչի:

13. ԵՆԹԱԽՈՒՄԲ 12. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Ենթախումբը ներառում է այն ղեկավարներին, ովքեր ղեկավարում են կազմակերպություններ, հիմնարկներ կամ դրանց կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց կառավարումն իրականացնելու համար անհրաժեշտ է առնվազն երեք ղեկավար:

2.Կազմակերպությունների և հիմնարկների, այդ թվում՝ դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները սահմանում, ձևավորում և իրականացնում են կազմակերպությունների, հիմնարկների, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքականությունը, կանոնադրական նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ ծրագրում, կառավարում և համակարգում են գործունեությունը:

3.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. հիմնարկների կամ կազմակերպությունների քաղաքականության ռազմավարությունը և մարտավարությունը որոշելը. դրանց գործունեությունը և պաշարների օգտագործումը կազմակերպելը, ծրագրելը, համակարգելը և վերահսկելը. այդ հիմնարկների կամ կազմակերպությունների հիմնական և գործառնական ստորաբաժանումների ու ծառայությունների աշխատանքները կամ հիմնարկի, կազմակերպության շրջանակներում գործունեության ուղղությունները ղեկավարելը և համակարգելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 121. Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների.**

2)**Փոքր խումբ 122. Ղեկավարներ՝ կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

3)**Փոքր խումբ 123. Ղեկավարներ՝ գործառնական և այլ ստորաբաժանումների ու ծառայությունների:**

14. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 121. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ

1.Կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարները գլխավորում ու իրականացնում են կազմակերպությունների և հիմնարկների, բացառությամբ քաղաքական կամ հասարակական կազմակերպությունների, կառավարումը և առնվազն երկու տեղակալի (մյուս ղեկավարների) օգնությամբ սահմանում ու ձևավորում են կազմակերպությունների, հիմնարկների քաղաքականությունը, դրանց գործունեությունը ծրագրում, ուղղորդում և համակարգում տնօրենների խորհրդի կամ կառավարման այլ մարմնի սահմանած կարգով, որի առաջ նրանք ստացված արդյունքների ու ձեռնարկված քայլերի համար պատասխանատու և հաշվետու են:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. հիմնարկի կամ կազմակերպության քաղաքականության ռազմավարությունը և մարտավարությունը որոշելը, սահմանելը և ձևավորելը. դրա գործունեությունը տնօրենների խորհրդի կամ կառավարման այլ մարմնի (որի առաջ նրանք ստացված արդյունքների ու ձեռնարկված քայլերի համար պատասխանատու և հաշվետու են) սահմանած կարգով ծրագրելը,

ուղղորդելը և համակարգելը. գործունեության ընթացքն ու արդյունքները վերլուծելը. տնօրենների խորհրդին կամ կառավարման այլ մարմնին զեկուցելը. հիմնարկի կամ կազմակերպության շահերը պետական, հասարակական, առևտրային և այլ կազմակերպություններում ներկայացնելը. հիմնարկի կամ կազմակերպության անունից հանդես գալը. ղեկավար կազմ ընտրելը և աշխատանքի բաշխում կատարելը. պայմանագրեր կնքելը, օրենքով, հիմնարկի և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում հրամաններ արձակելը, հրահանգներ տալը և դրանց կատարման համար պարտադիր ցուցումներ տրամադրելը, դրանց կատարման ընթացքը վերահսկելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 1210. Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների:**

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1210. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ

1.Կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարները գլխավորում ու իրականացնում են կազմակերպությունների և հիմնարկների, բացառությամբ քաղաքական կամ հասարակական կազմակերպությունների, կառավարումը և առնվազն երկու տեղակալի (մյուս ղեկավարների) օգնությամբ սահմանում ու ձևավորում են կազմակերպությունների, հիմնարկների քաղաքականությունը, դրանց գործունեությունը ծրագրում, ուղղորդում և համակարգում տնօրենների խորհրդի կամ կառավարման այլ մարմնի սահմանած կարգով, որի առաջ նրանք ստացված արդյունքների ու ձեռնարկված քայլերի համար պատասխանատու և հաշվետու են:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հիմնարկի, կազմակերպության գործունեության քաղաքականությունը որոշելը և դրա իրականացման ուղիներն ու միջոցներն ընտրելը.

2)կազմակերպության, հիմնարկի, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

3)հանձնարարությունների, պատվերների, պայմանագրերի կատարում, ինչպես նաև ֆինանսական, աշխատանքային, նյութական և տեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործում ապահովելը.

4)ենթակաների հետ շփվելը, որոշակի գործելակերպ ընտրելը և իրականացնելը.

5)կազմակերպության գործունեության ընթացքը և արդյունքները վերլուծելը, գնահատելը և վերահսկելը, դրանց մասին կառավարման մարմիններին զեկուցելը.

6)այլ կազմակերպությունների, հիմնարկների, իրավաբանական այլ անձանց հետ պայմանագրեր կնքելը, գործարքներ կատարելը.

7)կազմակերպությունների, հիմնարկների անունից բանկերում ֆինանսական հաշիվներ բացելը, դրանք կառավարելը.

8)հիմնարկի, կազմակերպության անունից հանդես գալը, այլ կազմակերպությունների հետ (այդ թվում՝ կառավարական և իշխանության այլ մարմինների) գործնական հանդիպումների ժամանակ կազմակերպությունը ներկայացնելը.

9) այլ աշխատողներին ղեկավարելը.

10)սահմանված իրավասությունների շրջանակներում բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գլխավոր տնօրեն՝ արտադրական միավորման.

2) գլխավոր տնօրեն՝ կազմակերպության.

3) գլխավոր բժիշկ.

4) գլխավոր խմբագիր.

5) ղեկավար՝ կազմակերպության.

6) նախագահ՝ բաժնետիրական ընկերության.

7) տնօրեն՝ կազմակերպության:

16. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 122. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները գլխավորում են հիմնարկների, կազմակերպությունների հիմնական արտադրական կամ շահագործական գործունեությանն առնչվող համապատասխան ստորաբաժանումները, ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցումը ծրագրում, ուղղորդում և համակարգում են տնօրենների (նրանց տեղակալների) ընդհանուր ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. գործունեության նպատակները, խնդիրները, ուղղությունները որոշելը և դրանք իրականացնելու արդյունավետ ուղիներ ու միջոցներ ընտրելը. կազմակերպությունների՝ ապրանքների արտադրությանը և ծառայությունների մատուցմանն առնչվող գործունեությունը ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը. ընթացիկ աշխատանքները ղեկավարելը. կադրերի ընտրությունը, պատրաստումը և աշխատանքի բաշխումը կատարելը. արդյունքները վերլուծելը և դրանց մասին տնօրեններին և ղեկավարներին զեկուցելը, այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելը, իրենց ստորաբաժանումը կազմակերպության ներսում կամ դրա սահմաններից դուրս ներկայացնելը: Այստեղ կարող է ներառվել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 1221. Ղեկավարներ՝ գյուղատնտեսության, որսորդական, անտառային և ձկնորսական կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

2)**Ստորին խումբ 1222. Ղեկավարներ՝ վերամշակող արդյունաբերության արտադրական և շահագործական կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

3)**Ստորին խումբ 1223. Ղեկավարներ՝ շինարարության արտադրական և շահագործական կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

4)**Ստորին խումբ 1224. Ղեկավարներ՝ մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

5)**Ստորին խումբ 1225. Ղեկավարներ՝ հանրային սննդի կազմակերպությունների և հյուրանոցային տնտեսությունների օբյեկտների մասնագիտացված ստորաբաժանումների.**

6)**Ստորին խումբ 1226. Ղեկավարներ՝ տրանսպորտի, կապի, նյութատեխնիկական մատակարարման և իրացման կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

7)**Ստորին խումբ 1227. Ղեկավարներ՝ առևտրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

8)**Ստորին խումբ 1228. Ղեկավարներ՝ բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկման ոլորտի կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների.**

9)**Ստորին խումբ 1229. Ղեկավարներ՝ մասնագիտացված ստորաբաժանումների, այլ խմբերում չներառված:**

17. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1221. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Գյուղատնտեսության, որսորդական, անտառային և ձկնորսական կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները տնօրենների (նրանց տեղակալների) ընդհանուր ղեկավարությամբ ծրագրում, կառավարում և համակարգում են այդ ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով համապատասխան ապրանքների արտադրությունը և համագործակցելով կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապրանքների արտադրությանն ու շահագործմանն առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

2)օպերատիվ արտադրական գործունեություն կազմակերպելը և ծրագրելը, միջոցների օգտագործման արդյունավետությունը և արտադրական առաջադրանքները ժամանակին կատարելն ապահովելը.

3)ստորաբաժանումների գործունեությունը բարելավելու նպատակով միջոցառումներ մշակելը և ներդնելը, ներտնտեսական հնարավորությունները հայտնաբերելը և օգտագործելը.

3334)արտադրատնտեսական գործունեությունը վերլուծելը և գնահատելը, արտադրվող արտադրանքների և մատուցվող ծառայությունների որակի ընդհանուր վերահսկողություն կազմակերպելը.

5)արտադրական գործունեության վերաբերյալ հաշվետվություն կազմելը և ղեկավարներին ժամանակին ներկայացնելը.

6)արդյունաբերական և բնական միջոցներն արդյունավետորեն օգտագործելը, արտադրական ծախսերի կրճատումը վերահսկելը.

7)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

8)ծախսերը հսկելը.

9)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

10)ստորաբաժանման արտադրատնտեսական գործունեության ընթացքում աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների և նորմերի պահպանումը վերահսկելը.

11)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը.

12) այլ աշխատողներին ղեկավարելը.

13) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ անտառային կազմակերպության ստորաբաժանման.

2) ղեկավար՝ գյուղատնտեսական կազմակերպության ստորաբաժանման.

3) ղեկավար՝ ձկնորսական կազմակերպության ստորաբաժանման.

4) ղեկավար՝ որսորդական կազմակերպության ստորաբաժանման:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1222. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Վերամշակող արդյունաբերության արտադրական և շահագործական մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության՝ արդյունաբերական ապրանքների արտադրությանը, հանքահորերից և հանքերից օգտակար հանածոների արդյունահանմանը, էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրությանն ու փոխանցմանն առնչվող գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արդյունաբերական ապրանքների արտադրություն և շահագործում ապահովելուն առնչվող նպատակներ, խնդիրներ սահմանելը և առաջադրելը.

2)ապրանքների արտադրությանը կամ հանքահորերից և հանքերից օգտակար հանածոների արդյունահանմանը, էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրությանն ու բաշխմանն առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

3)օպերատիվ արտադրական գործունեություն կազմակերպելը և ծրագրելը, միջոցների օգտագործման արդյունավետությունը և արտադրական առաջադրանքները ժամանակին կատարելն ապահովելը.

4)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

5)արդյունաբերական և բնական միջոցների արդյունավետ օգտագործումը, արտադրական ծախսերի կրճատումը վերահսկելը.

6)արտադրատնտեսական գործունեության արդյունքները վերլուծելը և գնահատելը, թողարկվող արդյունաբերական արտադրանքի որակի վերահսկողություն կազմակերպելը.

7)ստորաբաժանման արդյունաբերաարտադրական գործունեության հաշվետվությունը ճիշտ և ժամանակին ներկայացնելն ապահովելը, թողարկվող արտադրանքի հաշվառում կազմակերպելը.

8)ծախսերը հսկելը.

9)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

10)ստորաբաժանման արտադրատնտեսական գործունեության ընթացքում աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների և նորմերի պահպանումը վերահսկելը.

11)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը.

12) այլ աշխատողներին ղեկավարելը.

13) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ վերամշակող արդյունաբերության ստորաբաժանման.

2) պետ՝ արտադրամասի.

3) պետ՝ լաբորատորիայի.

4) պետ՝ հերթափոխի:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1223. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Շինարարության արտադրական և շահագործական կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության՝ արդյունաբերական, բնակարանային, մշակութային, կոմունալ-կենցաղային նշանակության և այլ օբյեկտների շինարարությանն առնչվող գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շինարարությանն առնչվող գործունեությունը ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

2)շինարարական աշխատանքների ժամկետները և ծախսերը (նյութական, աշխատանքային և այլն) կրճատելու ու որակը բարձրացնելու գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

3)նյութական, ֆինանսական, տեխնիկական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, արտադրական առաջադրանքները ժամանակին կատարելն ապահովելը.

4)շինարարական գործունեության արդյունքները վերլուծելը և գնահատելը, շինարարական նախագծման և շահագործման աշխատանքների որակը վերահսկելը.

5)շինարարական աշխատանքներ կատարող բոլոր օղակների համագործակցությունն ապահովելը.

6)հաշվառում կազմակերպելը, արտադրաշինարարական գործունեության մասին ժամանակին և ճիշտ հաշվետվություն կազմելը և ներկայացնելը.

7)շինարարության կազմակերպումը բարելավելու նպատակով միջոցառումներ մշակելը և ներդնելը.

8)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

9)ծախսերը հսկելը.

10)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

11)շինարարական աշխատանքներ կատարելու ընթացքում աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների և նորմերի պահպանումը վերահսկելը.

12)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը.

13) այլ աշխատողներին ղեկավարելը.

14) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝շինարարական կազմակերպության ստորաբաժանման.

2) ղեկավար՝ շինարարական հրապարակի.
3) ղեկավար՝ շինարարական տեղամասի:

20. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1224. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՄԵԾԱԾԱԽ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, կառավարում և համակարգում են կազմակերպության՝ առևտրին առնչվող գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)առևտրի բնագավառում գործունեություն կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

2)առևտրային կազմակերպությունների կամ հիմնարկների՝ մեծածախ և մանրածախ առևտրին առնչվող նպատակներ, խնդիրներ սահմանելը և առաջադրելը.

3) առևտրային գործառնություններ վարելու ժամկետները և ծախսերը (նյութական, աշխատանքային և այլն) կրճատելու, առևտրային սպասարկման որակը բարձրացնելու գործունեություն ծրագրելը, կազմակերպելը և համակարգելը.

4)անմիջական առևտուր կազմակերպելը և ծրագրելը, առևտրի ծավալները ժամանակին կատարելն ապահովելը.

5)առևտրային գործունեության ընթացքում նյութական, ֆինանսական, տեխնիկական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, առևտրային ծախսերը կրճատելը.

6)առևտրային գործունեության արդյունքները վերլուծելը և գնահատելը, առևտրային ծառայությունների որակը հսկելը.

7)հաշվառում կազմակերպելը, առևտրային գործունեության հաշվետվություն կազմելը և ժամանակին ներկայացնելը.

8)առևտրի կազմակերպումը և վարումը բարելավելուն, առևտրային ծախքերը կրճատելուն և առևտրային ծառայությունների որակը բարձրացնելուն նպաստող միջոցառումներ մշակելը և ներդնելը.

9)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

10)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

11)ստորաբաժանման առևտրային գործունեության ընթացքում աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների և նորմերի պահպանումը վերահսկելը.

12)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը.

13) այլ աշխատողներին ղեկավարելը.

14) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ մեծածախ առևտրի կազմակերպության ստորաբաժանման.

2) ղեկավար՝ մանրածախ առևտրի կազմակերպության ստորաբաժանման.

3) վարիչ՝ բաժնի.

4) վարիչ՝ բաժանմունքի.

5) վարիչ՝ պահեստի:

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1225. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Հանրային սննդի կազմակերպությունների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, կառավարում և համակարգում են կազմակերպության՝ կացարան տրամադրելուն, հանրային սննդով ապահովելուն և այլ ծառայությունների առնչվող գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց

տեղակալների) ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կացարանով, սննդով ապահովելուն և հյուրանոցային այլ ծառայությունների մատուցմանն առնչվող նպատակներ, խնդիրներ սահմանելը և առաջադրելը.

2)նվազագույն ծախսերով (նյութական, աշխատանքային և այլն) նախատեսված օպտիմալ ծավալով բարձրորակ ծառայությունների մատուցման գործունեություն կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

3)ընթացիկ արտադրական գործունեություն կազմակերպելը և ծրագրելը, նախատեսված ծավալի ծառայությունները որակով և ժամանակին մատուցելն ապահովելը.

4)նյութական, տեխնիկական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ և ճիշտ օգտագործումը, արտադրական ծախսերի կրճատումը և ծառայությունների մատուցումը հսկելը.

5)գործունեության արդյունքները վերլուծելը և գնահատելը, թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայության որակը հսկելը.

6)արտադրական գործունեության հաշվետվությունները ճիշտ և ժամանակին ներկայացնելն ապահովելը, թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայության հաշվառում կազմակերպելը.

7)ստորաբաժանումների գործունեությունը բարելավելու, մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու և ներքին հնարավորությունների օգտագործմամբ ծավալները մեծացնելու միջոցառումներ մշակելը և ներդնելը.

8)միջոցների օգտագործման արդյունավետությունն ապահովելը և աշխատանքներն ըստ ժամանակացույցի կատարելը.

9)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

10)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

11)արտադրական գործունեություն ծավալելու և ծառայություններ մատուցելու ժամանակ աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների ու նորմերի պահպանումը վերահսկելը.

12)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը.

13) այլ աշխատողներին ղեկավարելը.

14) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ հյուրանոցի.

2) վարիչ՝ ճաշարանի.

3) վարիչ՝ հյուրանոցի հարկի:

22. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1226. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Տրանսպորտի, կապի, նյութատեխնիկական մատակարարման և իրացման կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպությունների՝ տվյալ ծառայությունները մատուցող ստորաբաժանումների գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)համապատասխան ծառայություններ մատուցելուն առնչվող նպատակներ, խնդիրներ սահմանելը և առաջադրելը.

2)ստորաբաժանումների նվազագույն ծախսերով (նյութական, աշխատանքային և այլն) համապատասխան բարձրորակ ծառայությունների մատուցման գործունեություն կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

3)ընթացիկ արտադրական գործունեությունը կազմակերպելը և ծրագրելը, համապատասխան ծառայությունները որակով և ժամանակին մատուցելն ապահովելը, հսկելը.

4)նյութական, տեխնիկական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ և ճիշտ օգտագործումը, արտադրական ծախսերի կրճատումը և ծառայությունների մատուցումը հսկելը.

5)գործունեության արդյունքները վերլուծելը և գնահատելը.

6)հաշվառում կազմակերպելը և արտադրական գործունեության ու մատուցվող ծառայությունների հաշվետվություններ ներկայացնելը.

7)ստորաբաժանումների գործունեությունը բարելավելու, մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու և ծավալները մեծացնելու ներքին հնարավորություններ հայտնաբերելու և օգտագործելու միջոցառումներ մշակելը և ներդնելը.

8)միջոցների օգտագործման արդյունավետությունը և նախատեսված ծավալի ծառայություններ մատուցելն ապահովելը.

9)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

10)արտադրական գործունեություն ծավալելու և ծառայություններ մատուցելու ժամանակ աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների ու նորմերի պահպանումը վերահսկելը.

11)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը.

12) այլ աշխատողներին ղեկավարելը.

13) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ կապի կազմակերպության ստորաբաժանման.

2) պետ՝ վագոնի.

3) պետ՝ ուղեմասի.

4) վարիչ՝ տեսակավորման հարթակի.

5) վարիչ՝ պահասենյակի.

6) վարիչ՝ մոր և մանկան սենյակի:

23. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1227. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Առևտրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են բանկային, ապահովագրական և այլ ծառայություններ մատուցող, անշարժ գույքին առնչվող գործառնություններ կատարող ստորաբաժանումների գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)առևտրային գործունեությանը և տարաբնույթ առևտրային ծառայություններ մատուցելուն առնչվող նպատակներ, խնդիրներ սահմանելը և առաջադրելը.

2)ստորաբաժանման՝ տնտեսապես առավել արդյունավետ առևտրային գործունեությունը և նախատեսված ծավալի առևտրային ծառայությունների մատուցումը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

3)ընթացիկ առևտրային գործունեություն կազմակերպելը և ծրագրելը, առևտրային ծառայությունները որակով և ժամանակին մատուցելն ապահովելը.

4)ծախսերի կրճատումը և առևտրային գործունեության ու ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը.

5)ընթացիկ գործունեության և դրա արդյունքների մասին ճիշտ և ժամանակին հաշվետվություններ ներկայացնելը, համապատասխան հաշվառում կազմակերպելը.

6)ծավալները մեծացնելու և մատուցվող առևտրային ծառայությունների բազմազանությունն ապահովելու, դրանց որակը բարձրացնելու, ստորաբաժանումների գործունեությունը բարելավելու նպատակով որոշակի միջոցառումներ մշակելը և ներդնելը.

7)առևտրային այնպիսի ծառայություններ մատուցելուն առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը, ինչպիսիք են՝ բանկային գործ, ապահովագրություն, անշարժ գույքին առնչվող գործառնություններ, համակարգչով տվյալների մշակում, շուկայի հետազոտություն, հաշվապահական հաշվառում, տեխնիկական թեստավորում և վերլուծություն, գովազդ, փաթեթավորման ծախսեր.

8)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

9)ծախսերը հսկելը.

10)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

11)ստորաբաժանման (ծառայության) առևտրային գործունեության և ծառայությունների մատուցման ժամանակ աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների ու նորմերի պահպանումը վերահսկելը.

12)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը.

13)այլ աշխատողներին ղեկավարելը.

14)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ առևտրային կազմակերպության ստորաբաժանման.

2) բաժնի վարիչ՝ ապահովագրական գործակալության.

3) բաժնի վարիչ՝ գովազդային գարծակալության.

4) բաժնի վարիչ՝ անշարժ գույքի գործակալության:

24. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1228. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկման ոլորտի կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, կառավարում և համակարգում են կազմակերպության՝ տվյալ ծառայությունները մատուցելուն առնչվող գործունեությունը՝ տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկմանն առնչվող նպատակներ, խնդիրներ սահմանելը և առաջադրելը.

2)նախատեսված ծավալի սոցիալ-կենցաղային ծառայություններ մատուցող ստորաբաժանումների գործունեությունն առավել արդյունավետորեն կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

3)ստորաբաժանումների ընթացիկ գործունեությունը կազմակերպելը և ծրագրելը, բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկումը որակով և ժամանակին ապահովելը.

4)նյութական, տեխնիկական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը, ծախսերի կրճատումը և բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկումը հսկելը.

5)ստորաբաժանումների գործունեության արդյունքները վերլուծելը և գնահատելը, մատուցվող ծառայությունների որակը և արդյունավետությունը հսկելը.

6)գործունեության արդյունքների մասին ճիշտ և ժամանակին հաշվետվություններ ներկայացնելը, համապատասխան հաշվառում կազմակերպելը.

7)ծավալները մեծացնելու և մատուցվող սոցիալ-կենցաղային ծառայությունների բազմազանությունն ապահովելու, դրանց որակը բարձրացնելու, ստորաբաժանումների գործունեությունը բարելավելու նպատակով որոշակի միջոցառումներ մշակելը և ներդնելը.

8)ծախսերը հսկելը.

9)արտադրական և վարչական միջոցառումներ մշակելը, ձեռնարկելը և ղեկավարելը.

10)բնակչությանը սոցիալ-կենցաղային ծառայություններ մատուցելու ժամանակ աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների ու նորմերի պահպանումը վերահսկելը.

11)կադրերի ընտրությունը, պատրաստումը, տեղաբաշխումը և նրանց մասնագիտական որակավորման բարձրացումը ղեկավարելը,

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ղեկավար՝ անհատական սպասարկման կազմակերպության ստորաբաժանման.

2)ղեկավար՝ կենցաղային ապասարկման կազմակերպության.

3)վարիչ՝ լվացքատան ընդունման կետի:

25. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1229. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբը ներառում է մասնագիտացված ստորաբաժանումների այն ղեկավարներին, ովքեր չեն ներառվել փոքր խումբ 122-ի («Ղեկավարներ՝ մասնագիտացված ստորաբաժանումների») այլ ստորին խմբեր:

2.Այս ստորին խմբում ներառվում են նրանք, ովքեր զբաղվում են կազմակերպության՝ պետական կառավարմանը, կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, սպասարկման, հանգստի, արվեստի, սպորտի գծով մասնավոր և հանրային ծառայությունների մատուցմանն առնչվող գործունեությունը ծրագրելով, ուղղորդելով և համակարգելով, ինչպես նաև նրանք, ովքեր զբաղվում են տվյալ տարածքից դուրս կազմակերպությունների և մարմինների գործունեությամբ:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պետության կողմից տրամադրվող այնպիսի ծառայությունների առնչվող գործունեությունը ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը, ինչպիսիք են դրամական պահուստների հսկողությունը, հարկումը, առևտրային գործունեության կարգավորումը, վիճակագրական գործունեությունը, ինչպես նաև քաղաքացիական ծառայությունների կառավարումը և այդօրինակ գործունեությունը.

2)արտաքին տնտեսական հարաբերություններին և կապերին, հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

3)քաղաքացիների պետական անվտանգությանն առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

4)պետական կամ մասնավոր կրթության ոլորտի գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

5)առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտներին առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

6)հանգստի, արվեստի և սպորտի հարցերին առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

7)արտատարածքային կազմակերպություններին և մարմիններին առնչվող գործունեություն ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ առողջապահական կազմակերպության ստորաբաժանման.

2) ղեկավար՝ հանգստի և զվարճանքի կազմակերպության ստորաբաժանման.

3) դեկան՝ ֆակուլտետի.

4) ղեկավար՝ արտաքին առևտրի կազմակերպության վարչության.

5) վարիչ՝ ամբիոնի.

6) վարիչ՝ ասպիրանտուրայի.

7) վարիչ՝ դոկտորանտուրայի.

8) վարիչ՝ ուսումնական մասի:

9)ղեկավար՝ սոցիալական պաշտպանության կազմակերպության

ստորաբաժանման.

26. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 123. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Գործառնական և այլ ստորաբաժանումների ու ծառայությունների ղեկավարները ղեկավարում են գործառնական ստորաբաժանումների գործունեությունը, ուղղորդում, ծրագրում, կարգավորում և համակարգում են հիմնարկների, կազմակերպությունների անձնակազմերի աշխատանքները:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. գործառնական գործունեությանն առնչվող նպատակներ, խնդիրներ որոշելը և առաջադրելը, դրանք իրականացնելու լավագույն (օպտիմալ) ուղիներն ու միջոցներն ընտրելը. իրենց ղեկավարած ստորաբաժանումների գործունեությունը ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը, ընթացիկ աշխատանքները ղեկավարելը. կադրերի ընտրությունը, պատրաստումը և աշխատանքի բաշխումը կատարելը. աշխատանքների արդյունքները վերլուծելը և արդյունքների մասին տնօրեններին (նրանց տեղակալներին) զեկուցելը. կառուցվածքային մյուս ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 1231. Ղեկավարներ՝ ֆինանսատնտեսական և վարչական ստորաբաժանումների.**

2)**Ստորին խումբ 1232. Ղեկավարներ՝ կադրերի և աշխատանքային հարաբերությունների կառավարման ստորաբաժանումների.**

3)**Ստորին խումբ 1233. Ղեկավարներ՝ շուկայաբանության և արտադրանքի իրացման ստորաբաժանումների.**

4)**Ստորին խումբ 1234. Ղեկավարներ՝ գովազդատեղեկատվական ստորաբաժանումների.**

5)**Ստորին խումբ 1235. Ղեկավարներ՝ նյութատեխնիկական մատակարարման ստորաբաժանումների.**

6)**Ստորին խումբ 1236. Ղեկավարներ՝ համակարգչային սպասարկման ստորաբաժանումների .**

7)**Ստորին խումբ 1237. Ղեկավարներ՝ գիտատեխնիկական զարգացման ստորաբաժանումների.**

8)**Ստորին խումբ 1239. Ղեկավարներ՝ գործառնական ստորաբաժանումների, այլ խմբերում չներառված:**

27.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1231. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Ֆինանսատնտեսական ստորաբաժանումների ղեկավարները ղեկավարում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հիմնարկների կամ կազմակերպությունների անձնակազմերի աշխատանքների ուղղորդմանը և համակարգմանը, ֆինանսատնտեսական հարաբերությունների ձևավորմանը և կարգավորմանը, վարչական հարցեր լուծելուն առնչվող գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ֆինանսատնտեսական և վարչական գործունեությանն առնչվող նպատակներ, խնդիրներ որոշելը և առաջադրելը, դրանք իրագործելու լավագույն ուղիները և միջոցներն ընտրելը.

2)հիմնարկների, կազմակերպությունների՝ ֆինանսական, աշխատանքային և նյութական միջոցների նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքների հասնելուն ուղղված գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

3)ծառայողահաղորդակցական, կարգադրիչ, հսկիչ-գնահատիչ և վարչարարական այլ գործառույթներ կատարելը.

4) ընդհանուր գործավարությունը կազմակերպելը.

5)գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի մասին համալիր հաշվառում, վերլուծություն և գնահատում ապահովելը.

6)պաշարների, միջոցների ճիշտ ու արդյունավետ օգտագործումը և առաջադրանքների ու պատվերների կատարման ժամկետները, ֆինանսական կարգուկանոն պահպանելը, հաշվարկները ժամանակին կատարելը հսկելը.

7)ֆինանսատնտեսական և վարչական գործունեության մասին ժամանակին և ճիշտ հաշվետվություն կազմելն ապահովելը և դա սահմանված կարգով ու ժամկետներում համապատասխան մարմիններին ներկայացնելը հսկելը.

8)ֆինանսատնտեսական ցուցանիշերը և վարչական գործունեությունը բարելավելու, ներտնտեսական հնարավորությունները հայտնաբերելու և օգտագործելու միջոցառումներ մշակելը և ներդնելը.

9)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

10)ստորաբաժանումը կազմակերպության այլ ստորաբաժանումներում կամ կազմակերպությունից դուրս ներկայացնելը.

11)կադրերի հետ տարվող աշխատանք կազմակերպելը, կադրեր ընտրելը և տեղաբաշխելը, նրանց արդյունավետ օգտագործումը և որակավորման բարձրացումը հսկելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը.

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ վարչակազմի ստորաբաժանման.

2) տնտեսագետ՝ գլխավոր.

3) հաշվապահ՝ գլխավոր.

4) պետ՝ ֆինանսական բաժնի:

28. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1232. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱԴՐԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Կադրերի և աշխատանքային հարաբերությունների կառավարման ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության՝ կադրային հարցերին և արտադրական հարաբերություններին առնչվող գործունեությունը՝ տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կադրերի և աշխատանքային հարաբերությունների կառավարման ոլորտում նպատակներ ու խնդիրներ սահմանելը և դրանք կազմակերպության կամ հիմնարկի գործունեության մյուս ուղղությունների հետ փոխկապակցելը.

2)հիմնարկի, կազմակերպության՝ կադրային հարցերին և արտադրական հարաբերություններին առնչվող գործունեությունը ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

3)հիմնարկը, կազմակերպությունը անհրաժեշտ որակավորման մասնագետներով ապահովելը.

4)աշխատողների նյութական խրախուսումը կազմակերպելը.

5)անձնակազմի ընտրությունը, պատրաստումը, առաջընթացը ծրագրելը և կազմակերպելը, տարիֆային ցանցեր սահմանելը, աշխատավարձի մասին բանակցություններ վարելը, կազմակերպության աշխատողների հետ բանակցություններ վարելը և անձնակազմը ղեկավարելուն առնչվող այլ գործունեություն ծավալելը.

6)աշխատանքային պայմանագրերի մշակմանը մասնակցելը և դրանց իրագործումը հսկելը.

7)հիմնարկում, կազմակերպությունում աշխատանքային օրենսդրության և ներքին աշխատանքային կարգապահության, իրավունքների պահպանման նկատմամբ հսկողություն իրագործելը, աշխատանքային վեճերի լուծմանը մասնակցելը, կոլեկտիվում հոգեբանական բարենպաստ մթնոլորտ ստեղծելու նպատակով միջոցառումներ և ծրագրեր մշակելը՝ նպաստելով աշխատանքային կարգապահության խախտման կրճատմանը և աշխատանքով բավարարվածության ու արտադրողականության բարձրացմանը.

8)հիմնարկի, կազմակերպության կադրերի հաշվառում կազմակերպելը, փաստաթղթերի ճիշտ ձևակերպում, կադրերի վերաբերյալ հաշվետվության կազմում ապահովելը և դա համապատասխան մարմիններին ժամանակին ներկայացնելը հսկելը.

9)աշխատանքի անվտանգությանը, աշխատողների առողջությանն առնչվող տարբեր ծրագրեր ղեկավարելը՝ բոլոր շահագրգիռ անձանց մասնակցությամբ.

10)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

11)ստորաբաժանումը կազմակերպության այլ ստորաբաժանումներում կամ կազմակերպությունից դուրս ներկայացնելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ անձնակազմի կառավարման բաժնի.

2) ղեկավար՝ արտադրական հարաբերությունների բաժնի.

3) պետ՝ զբաղվածության և աշխատավարձի բաժնի.

4) պետ՝ լաբորատորիայի.

5) պետ՝ կադրերի բաժնի.

6) պետ՝ կադրերի վերապատրաստման բաժնի:

29.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1233. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Շուկայագիտության և արտադրանքի իրացման ստորաբաժանումների ղեկավարները ապրանքների և ծառայությունների իրացումից առավելագույն շահույթ ստանալու նպատակով ղեկավարում են իրացման շուկաների ուսումնասիրության գործունեությունը, կազմակերպում են արտադրանքի իրացման գործընթացը, ծրագրում, կառավարում և համակարգում են կազմակերպության առևտրահիրացման գործունեությունը՝ տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շուկայաբանությանը և արտադրանքի իրացմանն առնչվող նպատակներ, առաջադրանքներ սահմանելն ու առաջադրելը և հիմնարկների, կազմակերպությունների գործունեության մյուս ուղղությունների հետ դրանք փոխկապակցելը.

2)շուկայաբանական հետազոտություններ կազմակերպելը՝ իրացման առավել շահավետ շուկաները և ծառայություններ ու ապրանքներ սպառողներին որոշելու նպատակով.

3)արտադրանքի իրացման (այդ թվում՝ արտահանման), դրա շարժի և սպառողներին հասցնելու ծրագրեր, միջոցառումներ մշակելը և կազմակերպելը.

4)այս կամ այն արտադրանքի արտադրությանը, որակի բարձրացմանը և մրցունակությանը վերաբերող առաջարկություններ պատրաստելը.

5)վաճառքի կանխատեսումներ մշակելը.

6)արտադրանքի իրացման գործընթացում միջոցների արդյունավետ բախշումը և օգտագործումը հսկելը.

7)իրացման և շուկայաբանության ծրագրերի հիման վրա հատուկ միջոցառումներ ծրագրելը և կազմակերպելը՝ հենվելով գնահատման և վաճառքի տվյալների վրա.

8)գնացուցակ, զեղչերի համակարգ և մատակարարման պայմաններ, ապրանքների շարժի միջոցներ, վաճառքի մեթոդներ, լրացուցիչ սոցիալական միջոցառումներ սահմանելը.

9)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

10)կադրերի ընտրությունը, պատրաստումը և տեղաբաշխումը ղեկավարելը.

11)ճիշտ հաշվետվություն կազմելը և դա համապատասխան մարմիններին ժամանակին ներկայացնելն ապահովելը.

12)շուկայաբանության և արտադրանքի իրացման ոլորտի գործունեությունը գնահատելը, արդյունավետության բարձրացման միջոցառումներ մշակելը և անցկացնելը.

13)ստորաբաժանումը կազմակերպության այլ ստորաբաժանումներում կամ կազմակերպությունից դուրս ներկայացնելը.

14)այլ աշխատողներին ղեկավարելը.

15)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ղեկավար՝ իրացման բաժնի.
2)ղեկավար՝ շուկայաբանության բաժնի.
3)պետ՝ իրացման բաժնի:

30. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1234. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԳՈՎԱԶԴԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Գովազդատեղեկատվական ստորաբաժանումների ղեկավարները ղեկավարում են հիմնարկի, կազմակերպության աշխատանքներին վերաբերող տեղեկատվական ծրագրեր և գովազդային միջոցառումներ կազմակերպելու և ծրագրելու գործունեությունը, ծրագրում, կառավարում և համակարգում են հիմնարկի, կազմակերպության՝ գովազդի, հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության տրամադրման աշխատանքները՝ տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)գովազդի և տեղեկատվության ոլորտի հիմնարկների, կազմակերպությունների առաջադրանքները որոշելը.
2)գովազդային միջոցառումներ մշակելը և կազմակերպելը, նպատակներ սահմանելը, թեմաներ մշակելը, գովազդելու ժամանակը և միջոցներն ընտրելը, բանակցություններ վարելը և զանգվածային լրատվամիջոցների, գովազդային գործակալությունների հետ պայմանագրեր կնքելը.
3)տեղեկատվական ծրագրեր կազմելը և իրագործելը՝ հիմնարկի, կազմակերպության գործունեության և նվաճումների, արտադրվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների մասին հասարակությանը (սպառողներին, իշխանության ներկայացուցիչներին, հասարակական կազմակերպություններին) տեղեկացնելու, ինչպես նաև օգտակար կապեր հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու նպատակով.
4)գովազդային և տեղեկատվական միջոցառումներ անցկացնելու ժամանակ միջոցները տեղաբաշխելը, դրանց արդյունավետ օգտագործումը հսկելը.
5)գովազդի և տեղեկատվության ոլորտի գործունեությունը գնահատելը, դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ մշակելը և անցկացնելը.
6)հաշվետվությունները ճիշտ կազմելը և դրանք համապատասխան մարմիններին ժամանակին ներկայացնելն ապահովելը.
7)կրթական, մարդասիրական և այլ ոչ առևտրային կազմակերպությունների համար տարբեր հիմնադրամներ ծրագրելը և ղեկավարելը.
8)ծախսերը հսկելը և միջոցների արդյունավետ օգտագործում ապահովելը.
9)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.
10)կադրերի ընտրությունը, պատրաստումը և տեղաբաշխումը ղեկավարելը.
11)ստորաբաժանումը կազմակերպության այլ ստորաբաժանումներում կամ կազմակերպությունից դուրս ներկայացնելը.
12)այլ աշխատողներին ղեկավարելը.
13) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ղեկավար՝ գովազդի բաժնի.
2)ղեկավար՝ հասարակայնության հետ կապերի բաժնի:

31. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1235. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Նյութատեխնիկական մատակարարման ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են հիմնարկները, կազմակերպությունները գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցներով (հումք, նյութեր, կիսապատրաստվածքներ, վառելիք և այլն) ապահովելու գործունեությունը՝ տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ընթացիկ պահանջմունքներին և զարգացման հեռանկարներին համապատասխան՝ հիմնարկը կամ կազմակերպությունը գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցներով ապահովելը ծրագրելը և կազմակերպելը.

2)մատակարարների՝ պայմանագրային պարտականությունները խախտելու դեպքում նրանց ուղղված գանգատ-հայցերի նախապատրաստման աշխատանքներ կատարելը, կնքված պայմանագրերում կատարվող փոփոխությունները համաձայնեցնելը, գնումներից հրաժարվելու մասին իրազեկելը.

3)գնման պայմանագրերի, մատակարարներից շահավետ գնային առաջարկ ստանալու և գնվելիք ապրանքների որակի մասին բանակցություններ վարելը.

4)նյութական և համալրող իրերի պաշարների վիճակի, դրանց օպերատիվ կարգավորման և արդյունավետ ծախսի նկատմամբ հսկողություն ապահովելը.

5)նյութական միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, դրանց փոխադրման և պահպանման ծախսերը կրճատելու, երկրորդական պաշարները և արտադրական թափոններն օգտագործելու միջոցառումներ մշակելը և անցկացնելը.

6)պահեստային տնտեսության աշխատանքները կազմակերպելը, պահեստի տեխնիկական հագեցվածությունը մեծացնելու միջոցառումներ մշակելը.

7)գույքագրման համակարգ ծրագրելը և կազմակերպելը.

8)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

9)կադրերի ընտրությունը, պատրաստումը և տեղաբաշխումը ղեկավարելը.

10)ստորաբաժանումը կազմակերպության այլ ստորաբաժանումներում կամ կազմակերպությունից դուրս ներկայացնելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ղեկավար՝ ապրանքների բաշխման ստորաբաժանման.

2)ղեկավար՝ մատակարարման ստորաբաժանման.

3)պետ՝ նյութատեխնիկական մատակարարման բաժնի.

4)պետ՝ սարքավորումների համալրման բաժնի:

32. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1236. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Համակարգչային սպասարկման ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են հիմնարկի, կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումները համակարգիչներով և համակարգչային համակարգերով հագեցնելու, զանազան տեխնիկական, տնտեսական և այլ խնդիրներ լուծելու համար դրանց օգտագործումն ապահովելու գործունեությունը, իրենց պաշտոնեական պարտականությունները կատարում են տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կազմակերպությունում համակարգչային սպասարկման գործունեությունը ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը.

2)սարքերի, սարքավորումների ընտրությունը, օգտագործումն ու ընթացիկ նորոգումը, նյութական ապահովվածությունը ղեկավարելը, այլ կազմակերպություններից համակարգչային ծառայություններ գնելը.

3)կազմակերպությունում բոլոր տվյալների ընդհանուր մշակման գործունեությունը ծրագրելը, այլընտրանքային որոշումների որոնումները համակարգելը.

4)ծախսերի հսկողությունը և միջոցների արդյունավետ օգտագործումն ապահովելը.

5)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.

6)կադրերի ընտրությունը, պատրաստումը և տեղաբաշխումը ղեկավարելը.

7)հաշվետվությունները ճիշտ կազմելը և դրանք համապատասխան մարմիններին ժամանակին ներկայացնելն ապահովելը.

8)ստորաբաժանումը կազմակերպության այլ ստորաբաժանումներում կամ կազմակերպությունից դուրս ներկայացնելը.
9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը.
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) ղեկավար՝ համակարգչային սպասարկման ստորաբաժանման.
2) պետ՝ կառավարման մեքենայացված համակարգերի բաժնի.
3) պետ՝ հաշվողական կենտրոնի:

33. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1237. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1.Գիտատեխնիկական զարգացման ստորաբաժանումների ղեկավարները ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության գիտահետազոտական աշխատանքները՝ տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)հիմնարկների, կազմակերպությունների գիտատեխնիկական զարգացման նպատակները և խնդիրները որոշելը և առաջադրելը.
2)այլ հիմնարկների, կազմակերպությունների հետ համատեղ մշակումների մասին պայմանագրեր կնքելը, ընդհանուր գիտական գործունեությունը համակարգելը.
3)գիտահետազոտական մշակումների արդյունավետությունը բարձրացնելու (նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ընդլայնում և այլն) միջոցառումներ մշակելը և անցկացնելը.
4)իրենց կամ ներգրավված գիտական կադրերի կատարած գիտահետազոտական աշխատանքները ծրագրելը, ուղղորդելը և համակարգելը՝ կազմակերպությունում առկա տեխնոլոգիական գործընթացները, արտադրանքները և օգտագործվող նյութերը կատարելագործելու կամ նորերը ստեղծելու համար.
5)կազմակերպության հետազոտական ընդհանուր ծրագիրը կազմելը՝ որոշելով դրա նպատակները և անհրաժեշտ միջոցները.
6)ծախսերի հսկողությունը և միջոցների արդյունավետ օգտագործումն ապահովելը.
7)ընթացիկ աշխատանքները ծրագրելը և ղեկավարելը.
8)կադրերի ընտրությունը, պատրաստումը և տեղաբաշխումը ղեկավարելը.
9)հաշվետվություններ կազմելը և դրանք համապատասխան մարմիններին ժամանակին ներկայացնելն ապահովելը.
10)ստորաբաժանումը կազմակերպության այլ ստորաբաժանումներում կամ կազմակերպությունից դուրս ներկայացնելը.
11)այլ աշխատողներին ղեկավարելը.
12) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ղեկավար՝ գիտական հետազոտությունների և մշակումների ստորաբաժանման.
2)պետ՝ տեխնիկական բաժնի.
3)պետ՝ գիտահետազոտական լաբորատորիայի:

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1239. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է ստորաբաժանումների այն ղեկավարներին, ովքեր չեն ընդգրկվել փոքր խումբ 123-ի («Ղեկավարներ՝ գործառնական և այլ ստորաբաժանումների և ծառայությունների») այլ ստորին խմբերում:

35. ԵՆԹԱԽՈՒՄԲ 13. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են զանազան փոքր կազմակերպություններ, դրանք ղեկավարում են իրենց կամ սեփականատիրոջ անունից՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

2.Սույն ենթախմբի աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են. կազմակերպության գործունեության ռազմավարությունը և մարտավարությունը որոշելը, աշխատանքները կազմակերպելը, ծրագրելը և հսկելը, ընթացիկ գործունեությունը ղեկավարելը և արդյունքները գնահատելը, մատակարարների, պատվիրատուների, հաճախորդների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը, անձնակազմի ընտրության, տեղաբաշխման և արդյունավետ օգտագործման միջոցառումներ ձեռնարկելը, համապատասխան մարմիններին, կազմակերպության սեփականատերերին (եթե այդպիսիք կան) գործունեության մասին սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնելը, այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբում.

1)**Փոքր խումբ 131. Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների:**

36. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 131. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Ենթախումբը ներառում է այն ղեկավարներին, ովքեր կազմակերպությունները ղեկավարում են իրենց կամ սեփականատիրոջ անունից՝ առանց որևէ մեկի օգնության կամ մեկ ղեկավարի (իր տեղակալի) օգնությամբ, որը նույնպես ներառվում է այս ենթախումբ:

2.Փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են զանազան փոքր կազմակերպություններ, դրանք ղեկավարում են իրենց կամ սեփականատիրոջ անունից՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

3.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. տնտեսական քաղաքականությունը ծրագրելը, ձևավորելը և իրագործելը, կազմակերպության միջոցների օգտագործման ուղղությունները և գործունեության ռազմավարությունն ու մարտավարությունը որոշելը. ընթացիկ աշխատանքները ղեկավարելը և արդյունքները վերլուծելը, մատակարարների ու պատվիրատուների և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը. միջոցների օգտագործումը և կադրերի ընտրությունը ծրագրելը և հսկելը. կազմակերպության սեփականատերերին, եթե այդպիսիք կան, հաշվետվություն ներկայացնելը, այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 1311. Ղեկավարներ՝ գյուղատնտեսության, որսորդության, անտառային և ձկնորսական փոքր կազմակերպությունների.**

2)**Ստորին խումբ 1312. Ղեկավարներ՝ վերամշակման արդյունաբերության փոքր կազմակերպությունների.**

3)**Ստորին խումբ 1313. Ղեկավարներ՝ շինարարական փոքր կազմակերպությունների.**

4)**Ստորին խումբ 1314. Ղեկավարներ՝ առևտրի փոքր կազմակերպությունների.**

5)**Ստորին խումբ 1315. Ղեկավարներ՝ հանրային սննդի, ռեստորանների և հյուրանոցային տնտեսության փոքր կազմակերպությունների.**

6)**Ստորին խումբ 1316. Ղեկավարներ՝ տրանսպորտի, կապի, նյութատեխնիկական մատակարարման և իրացման փոքր կազմակերպությունների.**

7)**Ստորին խումբ 1317. Ղեկավարներ՝ առևտրային փոքր կազմակերպությունների.**

8)**Ստորին խումբ 1318. Ղեկավարներ՝ բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկման ոլորտի փոքր կազմակերպությունների.**

9)**Ստորին խումբ 1319. Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների, այլ խմբերում չներառված:**

37. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1311. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Գյուղատնտեսության, որսորդական, անտառային և ձկնորսական տնտեսությունների փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են համապատասխան ոլորտների կազմակերպություններ (փոքր գյուղական ագարակներ, որսորդական, անտառային և ձկնորսական տնտեսություններ և այլն)՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, ուղղորդում և համակարգում են այդ կազմակերպությունների գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գյուղատնտեսության, որսորդական, անտառային և ձկնորսական փոքր կազմակերպությունների՝ ապրանքների արտադրության, հումքի վերամշակման, բնական պաշարների արդյունավետ օգտագործման և այլ գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

2)սոցիալ-տնտեսական առավելագույն արդյունքներ ստանալու ընթացիկ արտադրական գործունեությունը ղեկավարելը.

3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, արտադրական գործունեության արդյունքները գնահատելը և թողարկվող արտադրանքի որակը հսկելը.

4)տնտեսական քաղաքականությունը ծրագրելը և վարելը.

5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.

6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.

7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.

8)թողարկվող արտադրանքի հաշվառում կազմակերպելը, արտադրական գործունեության հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).

9)կազմակերպությունների բյուջեն կազմելը.

10)աշխատողներ վարձակալելը, միջոցների օգտագործումը ծրագրելը և հսկելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) կառավարիչ՝ անտառային տնտեսության.

2) կառավարիչ՝ գյուղատնտեսական փոքր կազմակերպության.

3) կառավարիչ՝ ձկնորսական փոքր կազմակերպության.

4) կառավարիչ՝ որսորդական կազմակերպության.

38.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1312. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Վերամշակման արդյունաբերական փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են վերամշակման արդյունաբերության տարբեր ճյուղերի կազմակերպություններ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, կառավարում և համակարգում են այդ կազմակերպությունների գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վերամշակման արդյունաբերության տարբեր ճյուղերի՝ օգտակար հանածոների արդյունահանմանը, նյութերի մշակմանը, պարենային և արդյունաբերական ապրանքների, դեղերի, բժշկական տեխնիկայի և տարբեր տեսակի արտադրանքների արտադրությանն առնչվող փոքր կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

2)սոցիալ-տնտեսական առավելագույն արդյունքներ ստանալու ընթացիկ արտադրական գործունեությունը ղեկավարելը.

3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, արտադրական գործունեության արդյունքները գնահատելը և ապրանքային արտադրանքի որակը հսկելը.

4)տնտեսական քաղաքականությունը ծրագրելը և վարելը.

5)կազմակերպության բյուջեն կազմելը.

6)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.

7)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.

8)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.

9)թողարկվող արտադրանքի հաշվառում կազմակերպելը, արտադրական գործունեության հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կառավարիչ՝ վերամշակման արդյունաբերության փոքր կազմակերպության.

2)տնօրեն՝ մշակման արդյունաբերության փոքր կազմակերպության.

3)տնօրեն՝ շինանյութերի արտադրության փոքր կազմակերպության:

39.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1313. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Շինարարական փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են քաղաքացիական և արդյունաբերական շենքեր ու շինություններ կառուցող կազմակերպություններ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, ուղղորդում և համակարգում են դրանց գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բնակարանային, արտադրական և սոցիալական նշանակության շենքեր ու շինություններ կառուցող փոքր կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

2)սոցիալ-տնտեսական առավելագույն արդյունքներ ստանալու ընթացիկ արտադրական գործունեությունը ղեկավարելը.

3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, արտադրական գործունեության արդյունքները գնահատելը և շինարարության որակը հսկելը.

4)տնտեսական քաղաքականությունը ծրագրելը և վարելը.

5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրա անունից գործելը.

6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցությունների վարելը.

7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.

8)թողարկվող արտադրանքի հաշվառում կազմակերպելը, արտադրական գործունեության հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կառավարիչ՝ շինարարության.

2)տնօրեն՝ շինարարական փոքր կազմակերպության:

40. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1314. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԻ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Առևտրի փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են ապրանքային արտադրանքը սպառողներին հասցնող առևտրի կազմակերպություններ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի փոքր կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

2)ապրանքը սպառողներին նվազագույն ծախսերով արագ հասցնելու ընթացիկ գործունեությունը ղեկավարելը.

3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, գնորդներին սպասարկելու որակը և վաճառքը գնահատելը.

4)տնտեսական քաղաքականությունը ծրագրելը և վարելը.
5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.
6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.
7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.
8)ապրանքանյութական արժեքների հաշվառում կազմակերպելը, արտադրական գործունեության հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).
9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) կառավարիչ ՝ մանրածախ առևտրի.
2) կառավարիչ ՝ մեծածախ առևտրի.
3) տնօրեն՝ մեծածախ առևտրի փոքր կազմակերպության.
4) տնօրեն՝ մանրածախ առևտրի փոքր կազմակերպության:

41.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1315. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Հանրային սննդի, ռեստորանների և հյուրանոցային տնտեսության փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են փոքր ռեստորաններ ու հյուրանոցներ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)հանրային սննդի փոքր կազմակերպությունների, ռեստորանների և հյուրանոցների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.
2)հյուրանոցային ծառայությունները ժամանակին ու որակով մատուցելու և հյուրանոցներն ու ռեստորանները սննդով ապահովելու ընթացիկ գործունեությունը ղեկավարելը.
3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, արտադրական գործունեության արդյունքները և հաճախորդների սպասարկման որակը գնահատելը.
4)տնտեսական քաղաքականություն ծրագրելը և վարելը.
5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.
6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.
7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.
8)արտադրական աշխատանքների և ծառայությունների հաշվառում կազմակերպելը, արտադրական գործունեության հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).
9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) կառավարիչ՝ հյուրանոցի.
2) տնօրեն՝ ռեստորանի:

42. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1316. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Տրանսպորտի, կապի, նյութատեխնիկական մատակարարման և իրացման փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են տրանսպորտի, պահեստային տնտեսության, նյութատեխնիկական մատակարարման, իրացման, կապի և այդօրինակ այլ կազմակերպություններ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության

գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տրանսպորտի, կապի, նյութատեխնիկական մատակարարման և իրացման փոքր կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

2)նվազագույն ծախսերով համապատասխան ծառայությունները բարձր որակով մատուցելու ընթացիկ գործունեությունը ղեկավարելը.

3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, արտադրական գործունեության արդյունքները գնահատելը և մատուցվող ծառայությունների որակը հսկելը.

4)տնտեսական քաղաքականությունը ծրագրելը և վարելը.

5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.

6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.

7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.

8)արտադրական ծառայությունների հաշվառում կազմակերպելը, արտադրական գործունեության հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) կառավարիչ՝ կապի փոքր կազմակերպության.

2) կառավարիչ՝ պահեստային տնտեսության.

3) կառավարիչ՝ տրանսպորտային փոքր կազմակերպության.

4) տնօրեն՝ ապրանքահումքային բազայի.

5) տնօրեն՝ կապի փոքր կազմակերպության.,

6) տնօրեն՝ տրանսպորտային փոքր կազմակերպության:

43. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1317. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Առևտրային փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են փոքր առևտրային ձեռնարկատիրության, անշարժ գույքին առնչվող գործառնությունների և այդօրինակ այլ կազմակերպություններ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)առևտրային գործունեություն ծավալող, ծառայություններ մատուցող, անշարժ գույքին առնչվող գործառնություններ կատարող փոքր հիմնարկների, կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.

2)սոցիալ-տնտեսական առավելագույն արդյունքներ ստանալու ընթացիկ առևտրային գործունեությունը ղեկավարելը.

3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, առևտրային գործունեության արդյունավետությունը գնահատելը,

4)տնտեսական քաղաքականությունը ծրագրելը և վարելը.

5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.

6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.

7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.

8)հաշվառում կազմակերպելը, համապատասխան փաստաթղթաշրջանառություն վարելը, ծավալվող առևտրային գործունեության և մատուցվող ծառայությունների մասին հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).

9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)կառավարիչ՝ առևտրային սպասարկման կազմակերպության.
2)տնօրեն՝ առևտրային փոքր կազմակերպության:

44. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1318. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկման ոլորտի փոքր կազմակերպությունների ղեկավարները գլխավորում են բնակչությանը սոցիալ-կենցաղային և այլ ծառայություններ մատուցող փոքր կազմակերպություններ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, ուղղորդում և համակարգում են կազմակերպության գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկման ոլորտի փոքր կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.
2)տարաբնույթ սոցիալ-կենցաղային ծառայությունների մատուցման և սպասարկման որակի բարձրացման ընթացիկ գործունեությունը ղեկավարելը,
3)ֆինանսական, աշխատանքային և նյութական միջոցների արդյունավետ օգտագործումը հսկելը, մատուցվող ծառայությունների սոցիալ-տնտեսական արդյունավետությունը գնահատելը.
4)տնտեսական քաղաքականությունը ծրագրելը և վարելը.
5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.
6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.
7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.
8)հաշվառում կազմակերպելը, մատուցվող ծառայությունների քանակը, որակը և բազմազանությունն ապահովելու, բնակչությանը սպասարկելու գործունեության արդյունավետության մասին հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).
9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)կառավարիչ՝ անհատական սպասարկման կազմակերպության.
2)կառավարիչ՝ աղբահավաքման փոքր կազմակերպության.
3)վարիչ՝ բնակչության սոցիալ-կենցաղային պասարկման փոքր կազմակերպության:

45. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 1319. ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՓՈՔՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է փոքր կազմակերպությունների այն ղեկավարներին, ովքեր չեն ընդգրկվել փոքր խումբ 131-ի («Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների») այլ ստորին խմբեր:
2.Սույն ստորին խմբում ներառվել են այն անձինք, ովքեր գլխավորում են կրթության, առողջապահության, հանգստի, արվեստի, սպորտի ոլորտների փոքր կազմակերպություններ՝ անկախ դրանց սեփականության ձևից, իրենց կամ սեփականատիրոջ անունից ծրագրում, կառավարում և համակարգում են կազմակերպության գործունեությունը՝ ոչ ավելի, քան ևս մեկ ղեկավարի և առավել ցածր կարգի այլ անձնակազմի օգնությամբ:
3.Նրանց պարտականությունները ներառում են.
1)կրթության, առողջապահության, արվեստի մարզական և այլ բնագավառների փոքր կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը.
2)սոցիալ-տնտեսական առավելագույն արդյունքներ ստանալու ընթացիկ գործունեությունը ղեկավարելը.

3)նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործումը, արտադրանքի և ծառայության որակը հսկելը, գործունեության արդյունքները գնահատելը, հսկելը.

4)տնտեսական քաղաքականություն ծրագրելը և վարելը.

5)կազմակերպության շահերը ներկայացնելը և դրանց անունից գործելը.

6)մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը.

7)ընթացիկ աշխատանքները ղեկավարելը.

8)հաշվառում կազմակերպելը, համապատասխան հաշվետվություն ներկայացնելը, այդ թվում՝ կազմակերպությունների սեփականատերերին (եթե այդպիսիք կան).

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կառավարիչ՝ առողջապահական փոքր կազմակերպության.

2)կառավարիչ՝ գիտակրթական փոքր կազմակերպության.

3)կառավարիչ՝ հանգստի և զվարճանքի կազմակերպման փոքր կազմակերպության.

4)կառավարիչ՝ զբոսաշրջության փոքր կազմակերպության.

5)տնօրեն՝ մասնավոր դպրոցի.

6)տնօրեն (վարիչ)՝ զբոսաշրջության փոքր կազմակերպության:

ԲԱԺԻՆ 2

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 2. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Բարձր որակավորման մասնագետները մշակում և հետազոտում են գիտական տեսություններ և հայեցակարգեր՝ նպաստելով գործունեության տարբեր բնագավառներում հասարակության կուտակած գիտելիքների հարստացմանը և ծավալի ընդլայնմանը, դրանք գործնականում կիրառում են, ուսուցման միջոցով պարբերաբար տարածում կամ զբաղվում նշված երեք գործունեություններով միաժամանակ՝ ցանկացած համադրությամբ:

2.Որակավորման այս խումբ ներառված զբաղմունքների մեծ մասին հատուկ է կատարվող աշխատանքների բարդության բարձր աստիճանը: Դրանք պահանջում են բարձրագույն մասնագիտական կրթությանը համապատասխանող որակավորման մակարդակ կամ ավելի բարձր մակարդակի կրթություն, որը բնորոշվում է լրացուցիչ մասնագիտական գիտելիքներով և գիտական աստիճանով:

3.Տարբեր մասնագիտական խմբերի բարձր որակավորման մասնագետների հիմնական պատականությունները ներառում են. տեսություններ զարգացնելը, գործընթացներ, երևույթներ հետազոտելը և վերլուծելը, գիտության տարբեր բնագավառներում (բնագիտական, տեխնիկական, հումանիտար, հասարակական) հայեցակարգեր և մեթոդներ մշակելը. ձեռք բերված գիտելիքները և հետազոտությունների արդյունքները գործնականում կիրառելը գործունեության տարբեր ճյուղերում (երկրաբանություն, ճարտարագիտություն, բժշկություն, կենսաբանություն, գյուղատնտեսություն, տնտեսագիտություն, քաղաքականություն և այլն). գործունեության տարբեր ոլորտներում խորհրդատվություն մատուցելը. տարբեր բնագավառներում որոշակի կրթական մակարդակի տեսական և գործնական գիտելիքներ դասավանդելը, ֆիզիկական արատներ ունեցող մարդկանց ուսուցանելը և դաստիարակելը. տեղեկատվական, ֆինանսական, ձեռնարկատիրական, իրավաբանական և սոցիալական ծառայություններ մատուցելը. գրականության և արվեստի ստեղծագործություններ հեղինակելը և կատարելը. կրոնական գործունեություն ծավալելը, գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ նախապատրաստելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այդ հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1)**Ենթախումբ 21. Մասնագետներ՝ ֆիզիկայի, մաթեմատիկայի և ճարտարագիտության բնագավառների.**

2)**Ենթախումբ 22. Մասնագետներ՝ կենսաբանական գիտությունների և առողջապահության բնագավառների.**

3)**Ենթախումբ 23. Մասնագետներ՝ կրթության բնագավառի.**

4)**Ենթախումբ 24. Մասնագետներ՝ ֆինանսատնտեսական, իրավունքի, հասարակական գիտությունների, մշակույթի և այլ բնագավառների:**

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 21. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՖԻԶԻԿԱՅԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Ֆիզիկայի, մաթեմատիկայի և ճարտարագիտության բնագավառների մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, կատարելագործում և մշակում են նոր տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ, դրանք գործնականում կիրառում են ֆիզիկային, աստղագիտությանը, հիդրոօդերևութաբանությանը, քիմիային, երկրաֆիզիկային, երկրաբանությանը, ֆիզիկական աշխարհագրությանը, մաթեմատիկային, վիճակագրությանը, տեղեկատվությանը, ճարտարապետությանը, տեխնիկային և տեխնոլոգիաներին առնչվող ոլորտներում:

2.Այս ենթախմբում ներառված զբաղմունքները բնորոշվում են կատարվող աշխատանքների բարդության բարձր աստիճանով և պահանջում են աշխատողների բարձր որակավորում, մի շարք դեպքերում՝ նաև գիտական աստիճան:

3.Բնական և ճարտարագիտական գիտությունների բնագավառի մասնագետների պարտականությունները ներառում են. հետազոտություններ կատարելը և իրերի ու երևույթների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրության արդյունքներով ստացված գիտելիքները, ինչպես նաև մաթեմատիկական, վիճակագրական և տեղեկատվական հայեցակարգերը և մեթոդները գործնականում կիրառելը, դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը. քաղաքացիական և արդյունաբերական շենքեր ու շինություններ, տրանսպորտային համակարգեր, կայանքներ, մեքենաներ, սարքավորումներ նախագծելը, կառուցելը և ղեկավարելը, դրանց շահագործման և վերանորոգման վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը. արտադրական տեխնոլոգիաներ մշակելը և դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը. օգտակար հանածոների արդյունահանման և արդյունավետ օգտագործման մեթոդներ մշակելը, այդ մեթոդների վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը և դրանց գործնական կիրառմանը նպաստելը, բնական և ճարտարագիտական գիտությունների բոլոր բնագավառներում խորհրդատվություն մատուցելը. ծովի և ցամաքի մակերևույթի կառուցվածքը, եղանակն ուսումնասիրելը, համապատասխան քարտեզագրական նյութեր կազմելը. արտադրության և աշխատանքի կազմակերպման արդյունավետ մեթոդներ մշակելը, արտադրություն կազմակերպելը և դրա վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը. գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը:

4.Նշված մասնագետներին հատուկ է աշխատանքների կատարման ինքնուրույնության բարձր աստիճանը, իսկ որոշ դեպքերում նրանց պարտականությունները ներառում են նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

5.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 211. Ֆիզիկոսներ, քիմիկոսներ և մասնագետներ՝ հարակից**.

2)**Փոքր խումբ 212. Մաթեմատիկոսներ, վիճակագիրներ և մասնագետներ՝ հարակից.**

3)**Փոքր խումբ 213. Մասնագետներ՝ համակարգիչների.**

4)**Փոքր խումբ 214. Ճարտարապետներ, ճարտարագետներ և մասնագետներ՝ հարակից:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 211. ՖԻԶԻԿՈՍՆԵՐ, ՔԻՄԻԿՈՍՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Ֆիզիկոսները, քիմիկոսները և հարակից մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում են տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ, գիտական աշխատանքների միջոցով ստացված տվյալները գործնականում կիրառում են ֆիզիկայի, աստղագիտության, հիդրոօդերևութաբանության,

քիմիայի, երկրաբանության և երկրաֆիզիկայի, ֆիզիկական աշխարհագրության բնագավառներում:

2.Նրանց հիմնական պարտականություններն են. մեխանիկային, թերմոդինամիկային, օպտիկային, մագնիսականությանը, տեխնիկական ձայնագիտությանը (ակուստիկային), էլեկտրականությանը, էլեկտրոնիկային, միջուկային ֆիզիկային, աստղագիտությանը, քիմիայի տարբեր ճյուղերին, մթնոլորտային երևույթներին, երկրակեղևի (ցամաքի և ծովի) վիճակին առնչվող հետազոտություններ և փորձեր կատարելու միջոցով գիտելիքների ծավալն ավելացնելը. խորհրդատվություն մատուցելը և ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելը վերամշակող և արդյունահանող արդյունաբերությունում, նավագնացության, տիեզերական հետազոտությունների, կապի և այլ ծառայությունների, էներգապաշարների, հանքային հումքի և ջրի պաշարների շահագործման, քաղաքացիական ճարտարագիտության, գյուղատնտեսության, բժշկության բնագավառներում. գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 2111. Ֆիզիկոսներ և աստղագետներ.

2)Ստորին խումբ 2112. Հիդրոօդերևութաբաններ.

3)Ստորին խումբ 2113. Քիմիկոսներ.

4)Ստորին խումբ 2114. Երկրաբաններ, երկրաֆիզիկոսներ և աշխարհագետներ:

4.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2111. ՖԻԶԻԿՈՍՆԵՐ ԵՎ ԱՍՏՂԱԳԵՏՆԵՐ

1.Ֆիզիկոսները և աստղագետները կատարում են գիտական հետազոտություններ, մշակում և կատարելագործում են ֆիզիկական գործընթացների ու երևույթների ուսումնասիրության տեսություններ և մեթոդներ, ինչպես նաև ստացված գիտելիքները և արդյունքները գործնականում կիրառում են տնտեսության տարբեր ճյուղերում (արդյունաբերություն, բժշկություն, կապ և այլն):

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ֆիզիկայի և աստղագիտության բնագավառում տեսական հետազոտություններ կատարելը, հայեցակարգեր և մեթոդներ մշակելն ու կատարելագործելը.

2)մեխանիկայի, թերմոդինամիկայի, օպտիկայի, տեխնիկական ձայնագիտության (ակուստիկայի), էլեկտրականության, մագնիսականության, էլեկտրոնիկայի ու միջուկային ֆիզիկայի, աստղագիտության և այլ բնագավառներում փորձնական հետազոտություններ կատարելը և գործընթացներն ու երևույթները վերլուծելը.

3)տարբեր ագրեգատային վիճակների (պինդ, հեղուկ, գազային և պլազմային) նյութերի կառուցվածքին ու որակին և որոշակի ազդեցությունների դեպքում (տաքացում, ճնշում, սեղմում և այլն) դրանց վարքագծին վերաբերող փորձեր, փորձարկումներ և վերլուծություն կատարելը.

4)երկնային մարմիններ և երևույթներ դիտարկելը, վերլուծելը և ուսումնասիրելը, ստացված արդյունքները գործնական կարիքների (ժամանակի ծառայություն, նավագնացություն կամ տիեզերական հետազոտություններ և այլն) համար օգտագործելը.

5)հետազոտությունների, փորձերի և դիտարկումների արդյունքները գնահատելը, մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառմամբ եզրակացություններ պատրաստելը.

6)տեխնիկայի (էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, ջերմատեխնիկա և այլն), բժշկության, երկրագիտության, կապի և այլ բնագավառներում ֆիզիկայի և աստղագիտության օրենքները և մեթոդները գործնականում կիրառելը.

7)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)աստղագետ.

2)աստղաֆիզիկոս.

3)ֆիզիկոս:

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2112. ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՆԵՐ

1.Հիդրոօդերևութաբանները կատարում են հետազոտություններ, մշակում և կատարելագործում են մթնոլորտի կառուցվածքին, հատկություններին, մթնոլորտում ընթացող երևույթներին առնչվող տեսություններ, մեթոդներ և հայեցակարգեր, պատրաստում են եղանակի կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ՝ քարտեզների, ատլասների, տեղեկագրերի և այլ ձևերով, որոնք օգտագործվում են ավիացիայում, նավագնացության, գյուղատնտեսության և այլ բնագավառներում, ինչպես նաև բնակչության տեղեկատվության համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մթնոլորտի կառուցվածքի և հատկությունների, մթնոլորտում ընթացող գործընթացների և երկրի մակերևույթի հատկությունների ու դրանց ազդեցության փոխադարձ կապի հետազոտություններ կատարելը, տեսություններ, մեթոդներ ու հայեցակարգեր մշակելը և կատարելագործելը.

2)մթնոլորտում և երկրի մակերևույթին ջերմաշրջանառության, ջերմային ռեժիմների, մթնոլորտում խոնավության շրջանառության և ջրի փուլային փոխակերպման, օդի զանգվածների շարժման ուղղության և արագության, մթնոլորտային ճնշման, մթնոլորտում տարբեր երևույթների (արևային ճառագայթում, ամպերի գոյացում և տեղումներ, մթնոլորտի էլեկտրականացում և այլն) հետազոտություններ կատարելը.

3)օդերևութաբանական կայաններում և օդերևութաբանական արբանյակներից ստացված տվյալները ուսումնասիրելը և վերլուծելը, օդերևութաբանական քարտեզներ և եղանակի կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ պատրաստելը, որոնք կիրառվում են ավիացիայի, նավագնացության, գյուղատնտեսության և տնտեսության այլ ճյուղերում, ինչպես նաև բնակչությանը տեղեկացնելու համար.

4)եղանակագոյացմանը, երկրագնդի կլիմայի նկարագրությանը և դասակարգմանը, դրանց վրա մարդկային գործոնի ազդեցությանն առնչվող հարցեր ուսումնասիրելը.

5)մառախուղը ցրելուն, տեղումները և եղանակի կառավարման մյուս տեսակները հսկելուն վերաբերող փորձեր կատարելը.

6)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

7)այլ աշխատողների ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)եղանակագետ.

2)օդերևութաբան.

3)մասնագետ՝ եղանակի տեսության պատրաստման:

6.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2113. ՔԻՄԻԿՈՍՆԵՐ

1.Քիմիկոսները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում են քիմիական գործընթացների ուսումնասիրության տեսություններ ու մեթոդներ, ստացված գիտելիքները և արդյունքները գործնականում կիրառում են տնտեսության տարբեր ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն), որոնք առնչվում են հումքը, կիսապատրաստվածքները, արդյունաբերական թափոնները վերամշակելուն, տարբեր նյութեր և արդյունաբերական արտադրանք ստանալուն և կատարելագործելուն, տեխնոլոգիական գործընթացները մշակելուն և բարելավելուն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հետազոտություններ կատարելը, քիմիայի տարբեր բնագավառներում (անօրգանական, օրգանական, ֆիզիկական, անալիտիկ քիմիայի, պոլիմերների քիմիայի և այլն) տեսություններ և մեթոդներ մշակելը և կատարելագործելը.

2)նյութերի բաղադրությունը, կառուցվածքը, հատկություններն ու փոխակերպման գործընթացները, զանազան բնական ու արհեստական նյութերի, հումքի և ապրանքների էներգետիկ ու քիմիական փոփոխություններն ուսումնասիրելու նպատակով փորձեր, փորձարկումներ և վերլուծություններ կատարելը.

3)փորձերի և հետազոտությունների արդյունքները գնահատելը, դրանց գործնական կիրառության մասին եզրակացություններ և առաջարկներ նախապատրաստելը.

4)տարբեր նյութեր, արդյունաբերական ապրանքներ և տեխնոլոգիական գործընթացներ մշակելը և կատարելագործելը.

5)քիմիական արտադրանք պատրաստողների և սպառողների համար արտադրանքի որակը վերահսկելու մեթոդներ մշակելը.

6)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)քիմիկոս.

2)քիմիկոս՝ վերլուծաբան.

3)քիմիկոս՝ դեղաբան:

7.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2114. ԵՐԿՐԱԲԱՆՆԵՐ, ԵՐԿՐԱՖԻԶԻԿՈՍՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳԵՏՆԵՐ

1.Երկրաբանները, երկրաֆիզիկոսները և աշխարհագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում են մեթոդներ, տեսություններ և հայեցակարգեր, ապահովում են ստացված գիտելիքների և արդյունքների գործնական կիրառությունը օգտակար հանածոների հայտնաբերման, ջրային պաշարների պահպանման, սեյսմիկ ծառայության կազմակերպման, քաղաքացիական ճարտարագիտության, կառույցների սեյսմակայունության որոշման, նավագնացության և այլ բնագավառներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)երկրաբանության և երկրաֆիզիկայի բնագավառում տեսություններ, մեթոդներ և հայեցակարգեր մշակելը և կատարելագործելը, հետազոտություններ կատարելը.

2)երկրակեղևի և երկրագնդի ընդերքի կառուցվածքը և բաղադրությունը ուսումնասիրելը, լեռնային ապարների և հանքային հանածոների պաշարները հետազոտելը՝ երկրագնդի ձևավորման և զարգացման վրա ազդող գործընթացների, կյանքի բնականոն զարգացման, երկրաբանական գոյացությունների բնույթը և ժամանակագրությունն ուսումնասիրելու և բացահայտելու նպատակով.

3)մակերևութային և խորքային ջրերի, սառցադաշտերի, ձյան ծածկույթների աշխարհագրական տարածումը, դրանց բաղադրությունը և հատկություններն ուսումնասիրելը.

4)օգտակար հանածոների և ջրային պաշարների հանքավայրերը հայտնաբերելու համար հետախուզական աշխատանքներ կազմակերպելը, նախագծելը և անմիջականորեն կատարելը.

5)հանքանյութերի լեռնային ապարների, հանքաքարի, նստվածքաշերտերի իրական բաղադրության, առանձին տարածքների և հանքավայրերի կառուցվածքային վերլուծության մեթոդներ մշակելը և կատարելագործելը.

6)ամբարտակներ, կամուրջներ, թունելներ և բարձրահարկ շինություններ կառուցելիս ճարտարագիտական երկրաբանության գիտելիքներ կիրառելը.

7)երկրագնդի սեյսմիկ, գրավիտացիոն, էլեկտրական, մագնիսական, ջերմային հատկությունները (ուժերը) ուսումնասիրելը և չափելը.

8)երկրագնդի մագնիսական դաշտի քարտեզներ կազմելը և դրանք նավագնացության բնագավառում, եղանակի կանխատեսման և օգտակար հանածոների հայտնաբերման հետախուզական աշխատանքներ կատարելիս կիրառելը.

9)մթնոլորտում ընթացող օպտիկական և ձայնային երևույթներ ուսումնասիրելը և չափելը.

10)երկրագնդի չափերը, զանգվածը և կշիռը, դրա ներքին կառուցվածքը և բաղադրությունը որոշելը, հրաբուխների, սառցադաշտերի և երկրաշարժերի գործողության բնույթն ուսումնասիրելը.

11)ծովերի (օվկիանոսների) և մթնոլորտի ջերմային էներգիայի փոխանակման ժամանակ դրանց ֆիզիկական հատկությունները, փոխադարձ ազդեցություններն ուսումնասիրելը և չափելը.

12) գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը,

13)այլ աշխատողներին ղեկավարելը.

14)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) երկրաբան.
2) երկրաֆիզիկոս.
3) ջրաերկրաբան.
4) հնէաբան.
5) ապարագետ.

8. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 212. ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐ, ՎԻՃԱԿԱԳԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Մաթեմատիկոսները, վիճակագիրները և հարակից մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում են մաթեմատիկական, վիճակագրական և ապահովագրությանն առնչվող տեսություններ ու մեթոդներ, մատուցում են խորհրդատվություն, ստացված գիտելիքները գործնականում կիրառում են տեխնիկայի և տեխնոլոգիաների, բնագիտության, գյուղատնտեսության, բժշկության, հասարակական գիտությունների և ձեռնարկատիրական գործունեության բնագավառներում:

2.Այս խմբի մասնագետների հիմնական պարտականություններն են. հիմնարար մաթեմատիկայի բնագավառում հետազոտական աշխատանքներ կատարելը. մաթեմատիկական, վիճակագրական և ապահովագրությանն առնչվող սկզբունքներն ու մեթոդները գործնականում կիրառելը և այդ հարցերով խորհրդատվություն մատուցելը. վիճակագրական դիտարկումներ ծրագրելը, մշակելը և կատարելը. վիճակագրական տվյալներ գնահատելը, մեկնաբանելը և վերլուծելը. ապահովագրական գործունեություն ծավալելը, խորհրդատվություն մատուցելը՝ ներառյալ ապահովագրության և կենսաթոշակային ապահովության ծրագրերի առնչությամբ. չափագրման, հավաստագրման և որակի հարցերով չափորոշիչներ և նորմատիվային այլ փաստաթղթեր մշակելը և համաձայնեցնելը. նախագծային և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակման չափաբանական փորձաքննություն կատարելը, գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը: Որոշ դեպքերում նրանց պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Սույն փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2121. Մաթեմատիկոսներ և հարակից մասնագետներ.**

2)**Ստորին խումբ 2122. Վիճակագիրներ.**

3)**Ստորին խումբ 2123. Մասնագետներ՝ ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագիտության:**

9.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2121. ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ

1.Մաթեմատիկոսները և հարակից մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում են մաթեմատիկային և ապահովագրությանն առնչվող տեսություններ ու մեթոդներ, մատուցում են խորհրդատվություն, ստացված գիտելիքները գործնականում կիրառում են տեխնիկայի և տեխնոլոգիաների, բնագիտության, գյուղատնտեսության, բժշկության, հասարակական գիտությունների և ձեռնարկատիրական գործունեության բնագավառներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հիմնարար մաթեմատիկայի և ապահովագրությանն առնչվող բնագավառներում գիտական հետազոտություններ կատարելը, խնդիրների լուծման մաթեմատիկական ապահովման տեսություններ, մեթոդներ և մեթոդաբանություններ մշակելն ու կատարելագործելը.

2)գործունեության տարբեր բնագավառներում մաթեմատիկական սկզբունքները, մոդելները և մեթոդները գործնականում կիրառելը և դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

3)բնական և հասարակական գիտություններում, բժշկությունում, գյուղատնտեսությունում, ինչպես նաև տեխնիկայում, տեխնոլոգիայում,

ձեռնարկատիրության, ապահովագրության և գործունեության այլ բնագավառներում գիտատեխնիկական, արտադրական և կառավարչական խնդիրների լուծման մաթեմատիկական ապահովման համակարգ մշակելը.

4)ծրագրերի, խնդիրների մաթեմատիկական մոդելների համար տեխնիկական պայմաններ և առաջադրանքներ մշակելը, խնդիրների լուծման ալգորիթմներ և ծրագրերի տրամաբանական կառուցակարգեր կազմելը.

5)հաշվողական գործընթացների միասնականացման աշխատանքներ կատարելը, հաշվողական տեխնիկայի կիրառման բնագավառի ընդլայնման նախագծային աշխատանքներին մասնակցելը.

6)էլեկտրոնային հաշվիչ մեքենաներով ծրագրավորելու և լուծելու համար արտադրողականությանը և արտադրական ծախսերի արդյունավետությանն առնչվող կառավարչական խնդիրների վերլուծություն կատարելը, այդ խնդիրների մաթեմատիկական մոդելներ կառուցելը.

7)կենսաթոշակային ապահովությանը, կյանքի, առողջության ապահովագրությանը և ապահովագրության այլ ձևերին առնչվող ծրագրեր կազմելը և ներդնելը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ակտուար.

2) մաթեմատիկոս՝ տեսաբան.

3) մաթեմատիկոս՝ կիրառական մաթեմատիկայի բնագավառի.

4) մաթեմատիկոս՝ մաթեմատիկական ֆիզիկայի բնագավառի:

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2122. ՎԻՃԱԿԱԳԻՐՆԵՐ

1.Վիճակագիրները տեղեկատվության հավաքման, համակարգման, մշակման և վերլուծության նպատակով կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում վիճակագրական տեսությունների, հայեցակարգերի, մեթոդների և տեխնոլոգիաների մաթեմատիկական և այլ սկզբունքներ, դրանց վերաբերյալ մատուցում են խորհրդատվություն, ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառում են բնագիտության, գյուղատնտեսության, բժշկության, կրթության, հասարակական գիտությունների, ձեռնարկատիրական գործունեության և այլ բնագավառներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վիճակագրական տեսություններ, հայեցակարգեր և մեթոդաբանություն ուսումնասիրելը, կատարելագործելը և մշակելը.

2)բնագիտական, հասարակագիտական, տեխնիկական, բժշկական, կրթական և այլ վիճակագրական տեղեկատվություն հավաքելը, համակարգելը, վերլուծելը, մշակելը և գնահատելը.

3)վիճակագրական հետազոտություններ և դիտարկումներ ծրագրելն ու կազմակերպելը, հարցաթերթիկներ մշակելը.

4)վիճակագրական տվյալները հրապարակման նախապատրաստելը.

5)վիճակագրական մեթոդներին ու տեխնոլոգիաներին, տեղեկատվության հավաքման տարբեր ձևերի կիրառմանը վերաբերող խորհրդատվություն մատուցելը, այդ տեղեկատվության հավաստիությունը որոշելը.

6)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) վիճակագիր-տեսաբան.

2) վիճակագիր՝ մաթեմատիկայի բնագավառի.

3) վիճակագիր՝ տնտեսագիտության բնագավառի.

4) ժողովրդագրագետ:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2123. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ

1.Ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագիտության մասնագետները մշակում են ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագրման նոր ստանդարտներ և այլ փաստաթղթեր, վերանայում են գործող տարբերակները, դրանք ներդնում են կազմակերպություններում, կատարում են արտադրանքի և ծառայությունների որակը բարձրացնելու, դրանք սերտիֆիկացնելու աշխատանքներ, ապահովում են չափումների միասնականությունը, հսկում և վերահսկում են ստանդարտների, չափագիտության կանոնների և նորմերի պահանջների պահպանումը, ինչպես նաև այդ հարցերով խորհրդատվություն են մատուցում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սերտիֆիկացման, ստանդարտացման և չափագրման բնագավառներում հայրենական և արտասահմանյան առաջավոր փորձը, միջազգային կազմակերպությունների՝ ստանդարտացմանը, սերտիֆիկացմանը և չափագրմանը վերաբերող կանոնները և ընթացակարգերը ուսումնասիրելը և համակարգելը.

2)ստանդարտացման օբյեկտներ հայտնաբերելը, նոր ստանդարտներ մշակելը, ստանդարտներին, ստանդարտացմանը, սերտիֆիկացմանը, չափագրմանը և այլ փաստաթղթերի փոփոխմանը վերաբերող առաջարկություններ նախապատրաստելը.

3)փորձաքննություն կատարելը և նորմատիվային փաստաթղթերի նախագծերի համար եզրակացություններ նախապատրաստելը.

4)ըստ գործող ստանդարտների՝ տեխնիկական փաստաթղթերի ձևակերպումները վերահսկելը.

5)չափագիտության բնագավառում հիմնարար հետազոտությունների միջոցով չափումների միասնականություն ապահովելը, ստուգաչափանմուշների շտեմարան, չափման բարձր ճշտության միջոցներ ու մեթոդներ ստեղծելը.

6)չափագրումների գիտական ղեկավարումը, չափանմուշի պահանջվող գիտատեխնիկական մակարդակի պահպանման և կատարելագործման հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների և մշակումների մասին առաջարկություններ պատրաստելը.

7)պետական չափանմուշների սարքեր մշակելը և փորձարկելը, պետական չափանմուշները այլ երկրների ազգային և միջազգային չափանմուշների հետ համադրելը, համադրության արդյունքները վերլուծելը.

8)չափանմուշներ պահպանելը և կիրառելը՝ ըստ գործող կանոնների.

9)չափանմուշները ստուգելու և ստուգաճշտելու աշխատանքներ կատարելը.

10)արտադրանքի և ծառայությունների որակը ստանդարտացման մեթոդներով բարձրացնելու աշխատանքներ կատարելը, արտադրանքի և ծառայությունների սերտիֆիկացման համար նորմատիվային շտեմարան պատրաստելը.

11)արտադրանքը նախագծելու և արտադրության համար նախապատրաստելու, այն արտադրելու, իրացնելու, օգտագործելու, պահպանելու, տեղափոխելու և օգտահանելու փուլերում, ինչպես նաև տարաբնույթ ծառայություններ մատուցելիս՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից պետական ստանդարտների պարտադիր պահանջները պահպանելու նկատմամբ հսկողություն և պետական վերահսկողություն ապահովելը.

12)չափման միջոցները, չափագրական կանոնները և նորմերը պահպանելու, նորմատիվային փաստաթղթերով սահմանված չափումների միասնականությունն ապահովելու, չափիչ սարքերը ժամանակին ստուգման և չափաբերման ներկայացնելու նկատմամբ չափագրական վերահսկողությունը և հսկողությունը.

13)պետական չափագրական վերահսկողությունը և հսկողությունը.

14)ստանդարտացման ու չափագրման քարոզը և ստանդարտների մշակման ու կիրառման փորձի փոխանակումը.

15)այլ աշխատողներին ղեկավարելը.

16) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարագետ՝ չափագիտության.

2) ճարտարագետ՝ ստանդարտացման.

3) ճարտարագետ՝ պետական չափանմուշի պահպանման:

12. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 213. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ

1.Համակարգիչների մասնագետները հետազոտություններ են կատարում համակարգչային տեղեկատվության և համակարգերի բնագավառում, մշակում և կատարելագործում են համակարգիչների ծրագրային ապահովման սկզբունքները, մեթոդները և հայեցակարգերը, սպասարկում և ապահովում են տվյալների տեղեկատվական շտեմարանների հուսալիությունը:

2.Դասակարգման այս խմբի մասնագետների հիմնական պարտականություններն են. հաշվողական տեխնիկա, համակարգչային համակարգեր և ցանցեր ստեղծելու տեսական գիտահետազոտական աշխատանքներ կատարելը, դրանց գործնական կիրառությունը, որ ներառում է համակարգչի կառուցվածքը և արտաքին ձևավորումը, տվյալների շտեմարանները և կառուցվածքը, դրանց հաղորդակցման ուղիները, ալգորիթմներ մշակելը, արհեստական մտքի, և արդյունաբերական ռոբոտատեխնիկական համակարգեր և համալիրներ ստեղծելը. հատուկ կիրառման համար ծրագրային և տեխնիկական ապահովման կառուցվածք գնահատելը, ծրագրելը և մշակելը, համակարգչային ծրագրեր մշակելը, տպելը, ստուգելը և սպասարկելը. համակարգչային տեխնիկայով տառատեսակներ մշակելը, ստեղծելը, դրանք պահպանելը. գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ. մեթոդական ձեռնարկներ ու դասագրքեր պատրաստելը: Որոշ դեպքերում նրանց պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2131. Մշակողներ և վերլուծողներ՝ համակարգչային համակարգերի.**

2)**Ստորին խումբ 2132. Ծրագրավորողներ.**

3)**Ստորին խումբ 2133. Մշակողներ և պահպանողներ՝ տառատեսակների, համակարգչային տեխնիկայով.**

4)**Ստորին խումբ 2139. Մասնագետներ՝ համակարգիչների, այլ խմբերում չներառված:**

13.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2131. ՄՇԱԿՈՂՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՂՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

1.Համակարգչային համակարգեր մշակողները և վերլուծողները գիտահետազոտական աշխատանքներ են կատարում տեղեկատվության և համակարգչային համակարգերի ոլորտում, մշակում և կատարելագործում են համակարգչային հայեցակարգեր ու մեթոդներ, մասնակցում են ստացված գիտելիքների գործնական կիրառմանը, մատուցում են խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հաշվիչ տեխնիկային, համակարգչային համակարգերին ու ցանցերին, տեղեկատվության վերափոխման և փոխանցման տեսական ուղղություններին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ կատարելը.

2)գիտական հետազոտություններում և նախագծային աշխատանքների ընթացքում, տեխնոլոգիական, տնտեսական և սոցիալական համակարգերի կառավարման մեջ, ինչպես նաև մարդու հումանիտար գործունեության բնագավառներում հաշվիչ մեքենաների, համակարգչային համակարգերի և ցանցերի կիրառման միջոցներ, մեթոդներ և տեխնոլոգիաներ մշակելը.

3)մշակվող ծրագրային միջոցների աշխատունակության փորձնական ստուգումներին մասնակցելը.

4)հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ու ծրագրային ապահովման կատարելագործում, հարակից աշխատանքներ (համակարգչային ճարտարապետություն, տվյալների շտեմարանի կառուցվածք, ալգորիթմների մշակում, արհեստական մտքի, ռոբոտատեխնիկական համակարգերի ստեղծում).

5)հաշվողական միջոցների և դրանց համակարգերի տեխնիկական զարգացմանն առնչվող մշակումներին մասնակցելը.

6)օգտվողների հարցումների և տեխնիկական միջոցների հնարավորությունների հիման վրա հաշվողական տեխնիկայի միջոցների և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման պահանջներ և առանձնահատկություններ մշակելը.

7)համակարգչային համակարգերի շահագործման, բարելավման, սարքավորումների կազմի և ծրագրային ու տեխնիկական ապահովման ծախսերի հարցերով խորհրդատվությունը հաշվողական տեխնիկա օգտագործողներին.

8)համակարգիչները և դրանց համակարգերը կիրառելիս հաշվողական միջոցների աշխատանքը վերահսկող և տեխնիկական ու ծրագրային ապահովման փոխադարձ կապը պահպանող ծրագրերի տվյալները մշակելը, գրառելը և թարմացնելը.

9)համակարգչային տարբեր կայանքների միջև հաղորդակցման ցանց ստեղծելը.

10)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) վերլուծաբան՝ համակարգչային համակարգերի.

2)ճարտարագետ՝ արտադրության կառավարման ավտոմատացված համակարգերի.

3)ճարտարագետ՝ ավտոմատացված նախագծման համակարգերի.

4) մշակող՝ համակարգչային համակարգերի:

14. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2132. ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐ

1.Ծրագրավորողները մշակում, գրառում և ստուգում են զանազան տեխնիկական, տնտեսական և այլ խնդիրներ համակարգչային տեխնիկայի օգնությամբ լուծող ծրագրեր, ինչպես նաև հետևում են դրանց աշխատանքի ընթացքին և սպասարկմանը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)լուծվող խնդիրների նպատակները, արդյունքներին ներկայացվող պահանջներն ուսումնասիրելը, հաշվիչ մեքենաներով մշակման ենթակա տեղեկատվության ծավալները, կառուցվածքը, աղբյուրները, դրանց մուտքագրման, մշակման, պահպանման, տրամադրման և վերահսկման մանրօրինակները և կառուցակարգերը որոշելը.

2)մաթեմատիկական մոդելների և ալգորիթմների օգնությամբ խնդիրները նկարագրելը, բարձր մակարդակի ծրագրավորման և մեքենայական լեզուներով ծրագրեր կազմելը և գրառելը.

3)մշակված ծրագրերը փորձարկելը, շտկելը, ճշտելը.

4)այլ կազմակերպությունների մշակած պատրաստի ծրագրերը խնդիրներ լուծելու համար օգտագործելու հնարավորությունը որոշելը.

5)ավտոմատացված ծրագրավորման մեթոդներ, տիպային և ստանդարտ ծրագրեր, կառավարող, մշակող, սպասարկող ծրագրեր, դրանց օգտագործման հրահանգներ, մուտքային ալգորիթմական լեզուներ մշակելը և ներդնելը.

6)հաշվողական համակարգերը համանմանեցնելու, տեսակավորելու, դրանց կիրառման տիրույթն ընդլայնելու աշխատանքներ կատարելը.

7)համակարգչային ծրագրեր և փաստաթղթեր սպասարկելը, նորացնելը, ճշտելը՝ ըստ համապատասխան մուտքային և ելքային տվյալների փոփոխման և հաշվողական համակարգերի առանձնահատկությունների ու կառուցվածքի.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարագետ-ծրագրավորող.

2) ծրագրավորող:

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2133. ՄՇԱԿՈՂՆԵՐ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՂՆԵՐ՝ ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ

1.Համակարգչային տեխնիկայով տառատեսակներ մշակողները և պահպանողները հետազոտական և կիրառական աշխատանքներ են կատարում համակարգչային տեխնիկայի միջոցով նոր տառատեսակներ ստեղծելու, առկա տառատեսակները կատարելագործելու և պահպանելու, կուտակված գիտելիքները գործնականում

կիրառելու, նոր տառատեսակների վերաբերյալ խորհրդատվություն մատուցելու ուղղությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)համակարգչային տառատեսակներ ուսումնասիրելը, դրանց վերաբերյալ տեղեկատվական շտեմարաններ մշակելը.

2)նոր համակարգչային տառատետասկներ մշակելը և դրանց գործնական կիրառումն ապահովելուն աջակցելը.

3)հին ձեռագրեր ուսումնասիրելը և դրա հիման վրա հին տառատեսակները, ինչպես նաև նոր ստեղծվող տառատեսակները թվայնացնելը, (տառատեսակների համակարգչային տարբերակներ մշակելը).

4)առկա համակարգչային տառատեսակները լրամշակելը, նոր ծրագրային համակարգերի համար դրանց կիրառման վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը,

5)մշակված համակարգչային տառատեսակների փորձնական ստուգումներին մասնակցելը, դրանց վերաբերյալ եզրակացություններ տալը.

6)համակարգչային տառատեսակների ստեղծման համար նախատեսված ծրագրային ապահովման համակարգերի մշակմանը մասնակցելը, այդ ծրագրային համակարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ կատարելը.

7)տառատեսակների մշակման ժամանակ համակարգչային տեխնիկայի և դրա հետ կապված այլ համակարգերի աշխատանքը վերահսկելը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մշակող՝ համակարգչային տառատեսակների.

2) թվայնացնող՝ հին և նոր տառատեսակների.

3) տառաստեղծներ:

16.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2139. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբը ներառում է այն մասնագետներին, ովքեր կատարում են համակարգչային համակարգերի տվյալների շտեմարանների ապահովման և սպասարկման աշխատանքներ և չեն ներառվել այլ ստորին խմբեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)համակարգչային համակարգերում օգտագործվող տեղեկատվության հավաստիությունը և ամբողջականությունն ապահովելը.

2)համակարգչային տեխնիկա և ավտոմատացված համակարգեր օգտագործողների հանձնարարությամբ տվյալների շտեմարանը կուտակելը, պատճենահանելը և ճշգրտելը.

3)տվյալների շտեմարանի արդյունավետությունը որոշելը.

4)տվյալների բառարաններ և տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր վարելը.

5)համակարգչային համակարգեր օգտագործողներին ուսուցանելը և տվյալների շտեմարանների օգտագործման հարցերով խորհրդատվություն մատուցելը.

6)այլ աշխատողներ ն ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարագետ՝ տվյալների շտեմարանի.

2) մասնագետ՝ տվյալների շտեմարանի կառավարման:

17. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 214. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ, ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Ճարտարապետները, ճարտարագետները և հարակից մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում են հայեցակարգեր և մեթոդներ, ինչպես նաև գիտելիքները գործնականում կիրառում են ճարտարապետության և

տեխնիկայի, արտադրական գործընթացների կազմակերպման և դրանց տեխնոլոգիական ու տնտեսական արդյունավետության ապահովման բնագավառներում:

2.Այս խմբի մասնագետների հիմնական պարտականություններն են. գիտահետազոտական աշխատանքներ կատարելը, ճարտարագիտության տարբեր բնագավառներում խորհրդատվություն մատուցելը. արդյունաբերական և քաղաքացիական շենքեր ու շինություններ, տրանսպորտային համակարգեր նախագծելը, շինարարությունը ղեկավարելը, սպասարկելը և նորոգելը. զանազան հաստոցներ, մեքենաներ, սարքավորումներ, էլեկտրական շարժիչներ, գեներատորներ, տրանսֆորմատորներ և էլեկտրոնային համակարգեր նախագծելը և ստեղծելը, արդյունաբերական արտադրություն կազմակերպելը, որոշակի տեսակի արտադրություններում քիմիական գործընթացներ մշակելը և կիրառելը. օգտակար հանածոների արդյունահանման մեթոդներ զարգացնելը և իրացնելը, նոր նյութեր ստեղծելը, որոշակի նյութերի, ապրանքների, գործընթացների տեխնոլոգիաներ, արդյունավետ արտադրական և աշխատանքային գործընթացներ ուսումնասիրելը և դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.ծովը և ցամաքն ուսումնասիրելը, դրանք գրաֆիկական, թվային և լուսանկարչական մեթոդներով վերարտադրելը. գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը: Որոշ դեպքերում նրանց պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 2141. Ճարտարապետներ և ճարտարագետներ՝ տրանսպորտային համակարգերի և քաղաքային շինարարության.

2)Ստորին խումբ 2142. Ճարտարագետներ՝ արդյունաբերական և քաղաքացիական շինարարության.

3)Ստորին խումբ 2143. Ճարտարագետ-էլեկտրագետներ, ճարտարագետ-էներգա-գետներ.

4)Ստորին խումբ 2144. Ճարտարագետներ՝ էլեկտրոնային տեխնիկայի, և ճարտարագետներ՝ կապի ու սարքաշինության.

5)Ստորին խումբ 2145. Ճարտարագետ-մեքենագետներ և տեխնոլոգներ՝ մեքենաշինության.

6)Ստորին խումբ 2146. Քիմիկոս-ճարտարագետներ.

7)Ստորին խումբ 2147. Ճարտարագետներ՝ լեռնային, մետաղագործներ և մասնագետներ՝ հարակից.

8)Ստորին խումբ 2148. Երկրաբաշխներ, քարտեզագիրներ և տեղանքագիրներ.

9)Ստորին խումբ 2149. Ճարտարապետներ, ճարտարագետներ՝ հարակից մասնագիտությունների, այլ խմբերում չներառված:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2141. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1.Տրանսպորտային համակարգերի և քաղաքային շինարարության ճարտարապետները և ճարտարագետները կատարում են ճարտարապետական հայեցակարգեր, ծրագրեր, մեթոդներ մշակելուն, առավել շահավետ նախագծային լուծումներ հայտնաբերելուն առնչվող հետազոտական աշխատանքներ, մշակում են տրանսպորտային համակարգերի, շենքերի ու շինությունների, քաղաքային կանաչապատման և լանդշաֆտային շինարարության նախագծեր, հետևում են դրանց կատարմանը, տարբեր օբյեկտների վերանախագծմանն ու վերակառուցմանը, ինչպես նաև մատուցում են խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ճարտարապետության և ճարտարապետական ձևավորման բնագավառում նոր տեսություններ և մեթոդաբանություններ մշակելը, գոյություն ունեցող տեսությունները և մեթոդները կատարելագործելը, առավել խնայողական շինարարական նախագծեր որոնելը և փորձարկելը.

2)քաղաքաշինության գլխավոր ծրագրերի, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների, օդակայանների, զբոսայգիների և լանդշաֆտային շինարարության նախագծային առաջարկներ մշակելը և նախագծելը.

3)շինհրապարակներ զննելը, ըստ շինարարական նորմերի՝ շենքեր շինություններ նախագծելը, հատակագծերի, առանձին հանգույցների և մանրամասների գծագրեր

պատրաստելը, շինարարական նորմերի, շինարության ոճի, ծախսերի, ժամանակի և այլնի վերաբերյալ պատվիրատուներին խորհրդատվություն մատուցելը և երաշխավորություններ մշակելը.

4)շենքերի և շինությունների որակը և շահագործման արդյունավետությունն ապահովող լավագույն լուծումներ առաջարկելը և դրանց համապատասխան նախագծեր մշակելը.

5)շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալի անհրաժեշտ տեխնիկատնտեսական հիմնավորումներ և հաշվարկներ կազմելը, շինարարության նախահաշվային արժեքը, սարքավորումների, ապրանքների և նյութերի պահանջվող կազմը և քանակը որոշելը, պատվիրատուների և ենթակապալառու կազմակերպությունների հետ նախագծային-հետազոտական աշխատանքների պայմանագրեր կնքելու համար անհրաժեշտ նյութեր պատրաստելը.

6)նախագծված օբյեկտների շինարարության նկատմամբ հեղինակային և տեխնիկական հսկողությունը և օգտագործվող շինանյութերի, կառուցվածքների, ապրանքների՝ շինարարության հաստատված նախագծերին, չափորոշիչներին, տեխնիկական պայմաններին համապատասխանությունը վերահսկելը.

7)մշակութային ժառանգություն հանդիսացող օբյեկտներ և այլ շինություններ վերականգնելը և վերակառուցելը.

8)քաղաքային և տրանսպորտային շինարարության հարցերով խորհրդատվությունը.

9)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.

10)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարապետ.

2) ճարտարագետ՝ շինարարության հսկողության.

3) ճարտարագետ՝ տեխնիկական հսկողության.

4) ճարտարագետ-նախագծող:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2142. ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1.Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության ճարտարագետները կատարում են շինարարության տեսության և մեթոդաբանության մշակմանը և կատարելագործմանն առնչվող գիտական հետազոտություններ, մշակում են նախագծեր, կառուցում և շահագործում են արդյունաբերական և քաղաքացիական օբյեկտներ, մատուցում խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շինարարության բնագավառում տեսությանը և մեթոդաբանությանը վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ կատարելը.

2)արդյունաբերական և քաղաքացիական շինարարության հարցերով խորհրդատվությունը.

3)կամուրջներ, տրանսպորտային թունելներ, ջրատեխնիկական շինություններ, բնակելի և արդյունաբերական շենքեր, ջերմագազամատակարարման, օդափոխության, ջրմուղ-կոյուղու տնտեսության շենքեր և շինություններ, այլ օբյեկտներ նախագծելը.

4)շինարարության արժեքը, սարքավորումների, ապրանքների և նյութերի անհրաժեշտ կազմը և քանակը որոշելը՝ ըստ հաստատված նախագծերի, չափորոշիչների, տեխնիկական պայմանների.

5)շինարարության մեթոդներ, օգտագործվող շինարարական նյութեր, որակի չափորոշիչներ որոշելը, շինարարական աշխատանքները ղեկավարելը.

6)արդյունաբերական և քաղաքացիական շինություններ շահագործելը և վերանորոգելը, բացահայտված անճշտությունները վերացնելը.

7)շրջակա միջավայրի պահպանման և շինարարության անվտանգության վերահսկման արդյունավետ համակարգեր մշակելը և ներդնելը.

8)շինարարական նյութերի և կառուցվածքների արտադրության տեխնոլոգիաներ մշակելը և դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

9)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.
10)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.
11)այլ աշխատողներին ղեկավարելը.
12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) ճարտարագետ՝ արդյունաբերական շինարարության.
2) ճարտարագետ՝ քաղաքացիական շինարարության.
3) ճարտարագետ՝ ճանապարհների և օդանավակայանների շինարարության.
4) ճարտարագետ՝ կամուրջների և թունելների շինարարության.
5) ճարտարագետ՝ ջրատեխնիկական կառույցների շինարարության.
6) տեխնոլոգ՝ շինարարական նյութերի արտադրության:

20. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2143. ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԷԼԵԿՏՐԱԳԵՏՆԵՐ, ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԷՆԵՐԳԱԳԵՏՆԵՐ

1.Ճարտարագետ-էլեկտրագետները և ճարտարագետ-էներգագետները էլեկտրատեխնիկայի և էներգետիկայի բնագավառում կատարում են հետազոտություններ, մատուցում են խորհրդատվություն, նախագծում են էլեկտրական համակարգեր, շարժիչներ ու սարքավորումներ և ղեկավարում դրանց պատրաստումը, վերանորոգումը և շահագործումը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)էներգետիկայի, էներգամեքենաշինության և էլեկտրատեխնիկայի բնագավառում կատարում են հետազոտական աշխատաքներ, այդ հարցերով մատուցում խորհրդատվություն.
2)հիդրոկայանների, ջերմակայանների և ատոմակայանների սարքավորումների, էլեկտրատեխնիկական, ցածր լարման սարքավորումների, ավտոմեքենաների, տրակտորների, թռչող սարքերի, նավերի էլեկտրասարքավորումների, արդյունաբերական կայանքների և տեխնոլոգիական համալիրների, էլեկտրատեխնոլոգիական կայանքների և համակարգերի, էլեկտրակենցաղային տեխնիկայի նախագծային մշակումները և արդյունաբերական արտադրությունը.
3)շահագործումը և նորոգումը կազմակերպելը, էներգետիկական, էլեկտրատեխնիկական սարքավորումների, հաղորդակցության ուղիների և ցանցերի տեխնիկական խնամքի և հսկողության հրահանգները պահպանելու նկատմամբ հսկողությունը.
4)էլեկտրասարքավորումների և ցանցերի վթարների պատճառների հետաքննությանը մասնակցելը, դրանք կանխարգելելու և վերացնելու միջոցառումներ մշակելը.
5)էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի արդյունաբերական տեխնոլոգիաներ մշակելը և խորհրդատվություն մատուցելը.
6)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.
7)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) ճարտարագետ՝ էլեկտրական կայանների շահագործման.
2) ճարտարագետ՝ փոխարկիչ համալիրների.
3) ճարտարագետ-էներգագետ.
4) ճարտարագետ-էլեկտրագետ.
5) ճարտարագետ՝ էլեկտրաէներգիայի արտադրության.
6) ճարտարագետ՝ էլեկտրամեխանիկական սարքավորումների.
7) տեխնոլոգ՝ էլեկտրատեխնիկական մեքենաշինության:

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2144. ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ, ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ՝ ԿԱՊԻ ԵՎ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

1.Էլեկտրոնային տեխնիկայի ճարտարագետները, կապի և սարքաշինության ճարտարագետները կատարում են հետազոտություններ, իրագործում են տարբեր սարքերի,

էլեկտրոնային տեխնիկայի, կապի միջոցների և ավտոմատ կառավարման ու կարգավորման կայանքների նախագծում, արդյունաբերական արտադրություն, սպասարկում, նորոգում և այդ հարցերով մատուցում են խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սարքաշինության, էլեկտրոնային տեխնիկայի, ռադիոտեխնիկայի, կապի և ավտոմատ կառավարման համակարգերի բնագավառում հետազոտություններ կատարելը, այդ հարցերով խորհրդատվություն մատուցելը.

2)էլեկտրոնային սարքեր, սարքավորումներ, համակարգեր, այդ թվում՝ էլեկտրոնային հաշվողական և չափիչ տեխնիկա, կապի միջոցներ և ավտոմատ կառավարման և ռոբոտատեխնիկական համակարգեր, արտադրական ռոբոտներ և կենցաղային ռադիոէլեկտրոնային սարքեր նախագծելը, տեղակայելը և որակը վերահսկելը, արդյունաբերական արտադրություն կազմակերպելը.

3)ռադիոէլեկտրոնային սարքերի տեխնոլոգիաներ մշակելը.

4)էլեկտրոնիկայի, ավտոմատիկայի և կապի միջոցների տեխնիկական սպասարկումն ու նորոգումը կազմակերպելը, անսարքությունները ժամանակին հայտնաբերելու և վերացնելու նպատակով էլեկտրոնային տեխնիակայի թեստային ստուգումներ կատարելը.

5)էլեկտրոնային համակարգերի արդյունավետ շահագործման և անվտանգության ապահովման նպատակով չափորոշիչ ցուցանիշներ և տեխնոլոգիաներ որոշելը.

6)որոշակի նյութերի, արտադրատեսակների և գործընթացների տեխնոլոգիաներ ուսումնասիրելը և դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

7)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարագետ՝ ռադիոհեռարձակման սարքավորումների.

2) ճարտարագետ՝ էլեկտրոնիկ.

3) ճարտարագետ՝ էլեկտրական կապի.

4) ճարտարագետ՝ հեռահաղորդակցության.

5) ճարտարագետ՝ ռադիոհեռարձակման.

6) տեխնոլոգ-էլեկտրոնիկ՝ մեքենաշինության սարքավորումների.

7) տեխնոլոգ՝ հեռահաղորդակցության:

22. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2145. ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳՆԵՐ՝ ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ

1.Ճարատարգետ-մեքենագետները և մեքենաշինության տեխնոլոգները հետազոտություններ են կատարում մեքենաշինության, նյութամշակման բնագավառում, մշակում են կառուցվածքներ, տեխնոլոգիական գործընթացներ, ղեկավարում են մեքենաների և սարքավորումների արտադրությունը և սպասարկումը, մատուցում են խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մեքենաշինության, նյութամշակման, օդագնացական, հրթիռային-տիեզերական, ծովային տեխնիկայի, վերգետնյա տրանսպորտային միջոցների, մեքենաշինության տեխնոլոգիաների բնագավառներում գիտահետազոտական աշխատանքներ կատարելը, այդ հարցերով խորհրդատվություն մատուցելը.

2)մետաղամշակման, զոդման սարքավորումների, օդագնացական, տիեզերական, ծովային տեխնիկայի, դրանց շարժիչների և համակարգերի, վերգետնյա տրանսպորտային միջոցների, արդյունաբերության տարբեր ճյուղերի համար տեխնոլոգիական մեքենաների և սարքավորումների նախագծեր մշակելը և արդյունաբերական արտադրություն ղեկավարելը.

3)ճնշման միջոցով մետաղների մշակման, ծուլման, զոդման արտադրության, փայտամշակման և մեքենաշինության այլ բնագավառների տեխնոլոգիաներ մշակելը.

4)նախագծվող արտադրանքի, կառուցվածքների և տեխնոլոգիական գործընթացների արտոնագրային հետազոտություններ և տնտեսական արդյունավետության տեխնիկական հաշվարկներ կատարելը.

5)տեխնոլոգիական նոր գործընթացներ յուրացնելու և դրանք արտադրության մեջ ներդնելու փորձարարական աշխատանքներին, պատրաստի արտադրանքի և բարդ տեխնիկայի փորձարկումներին մասնակցելը.

6)մետաղամշակման հաստոցների, օդագնացական, տիեզերական, ջրային տեխնիկայի, վերգետնյա փոխադրամիջոցների, մեքենաշինական այլ սարքավորումների տեխնիկական սպասարկում և նորոգում կազմակերպելը, տեխնոլոգիական կարգապահության և տեխնոլոգիական սարքավորումների ճիշտ շահագործումը վերահսկելը.

7)տրանսպորտի ճիշտ շահագործում ապահովելը, դրանց հուսալիության մեծացման և վթարների կանխարգելման միջոցառումներ մշակելը.

8)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.

9)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարագետ-նախագծող.

2) ճարտարագետ-փորձարկող.

3) ճարտարագետ՝ տեխսպասարկման.

4) ճարտարագետ՝ ավտոմեքենաների.

5) ճարտարագետ՝ ինքնաթիռաշինության.

6) ճարտարագետ՝ նավի.

7) ճարտարագետ՝ գյուղատնտեսական մեքենաների.

8) ճարտարագետ՝ միջուկային էներգիայի սարքավորումների.

9) տեխնոլոգ՝ մեքենաշինության սարքավորումների:

23. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2146. ՔԻՄԻԿՈՍ-ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ

1.Քիմիկոս-ճարտարագետները մանածագործական և թեթև արդյունաբերության, վառելիքի, սննդամթերքի, դեղերի, սինթետիկ նյութերի արտադրության և այլ բնագավառներում կատարում են հետազոտություններ, մշակումներ, մատուցում խոհրդատվություն, ղեկավարում են արդյունաբերական քիմիական գործընթացները և զանազան նյութերի, դրանց միացությունների արտադրությունը, սպասարկում և նորոգում են քիմիական արդյունաբերության սարքավորումներ, ուսումնասիրում են նյութերի, արտադրանքների և գործընթացների տեխնոլոգիաներ և մատուցում խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)քիմիական տեխնոլոգիաների և գործընթացների անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառներում հետազոտություններ կատարելը և այդ հարցերով խորհրդատվություն մատուցելը.

2)տնտեսության տարբեր ճյուղերում քիմիական արտադրության գործընթացների տեխնոլոգիաներ ուսումնասիրելը, մշակելը և խորհրդատվություն մատուցելը.

3)քիմիական արտադրության գործընթացների անվտանգությունն ապահովելը, քիմիական և այլ արտադրության թափոնների վնասակար ազդեցությունից շրջակա միջավայրի պաշտպանության միջոցներ մշակելը.

4)սարքավորումների տեխնիկական սպասարկում և նորոգում կազմակերպելը, զանազան քիմիական արտադրություններում ընթացող տեխնոլոգիական գործընթացները վերահսկելը.

5)հումքի, նյութերի և պատրաստի արտադրանքի որակը վերահսկելը, խոտանը կանխելու և վերացնելու միջոցառումներ մշակելը.

6)արտադրատեսակների որակի վերահսկման նոր մեթոդների և որակի չափորոշիչների մշակմանը մասնակցելը.

7)քիմիական արտադրության սարքավորումների սպասարկումը ղեկավարելը և կազմակերպելը, անսարքությունները բացահայտելը, խորհրդատվություն մատուցելը.

8)քիմիական արտադրության անվտանգությունը և արդյունավետությունն ապահովելու նպատակով գործընթացների և տեխնոլոգիաների չափորոշիչ ցուցանիշներ որոշելը.

9)քիմիական արտադրության գործարանների շինարարությանը ներկայացվող պահանջները որոշելը.

10)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.

11)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնոլոգ-քիմիկոս.

2) ճարտարագետ-քիմիկոս.

3) ճարտարագետ՝ քիմիական գործընթացների.

4) տեխնոլոգ՝ սննդամթերքի և ջրի արտադրության:

24. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2147. ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ՝ ԼԵՌՆԱՅԻՆ, ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Լեռնային ճարտարագետները, մետաղագործները և հարակից մասնագետները կատարում են հետազոտություններ, տեխնոլոգիական գործընթացներ են նախագծում մետաղագործության և օգտակար հանածոների արդյունահանման բնագավառներում, սպասարկում են դրանք և խորհրդատվություն մատուցում այդ հարցերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)օգտակար հանածոների հանքերի մշակման և շահագործման, դրանց հարստացման, սև և գունավոր մետաղների ու համաձուլվածքների մշակման և շահագործման մեթոդները կատարելագործելը, այդ հարցերով հետազոտություններ կատարելը և խորհրդատվություն մատուցելը.

2)երկրաբանահետախուզական հորատանցքերի հորատման, ստորգետնյա շինարարության, նավթի, գազի հորատանցքերի հորատման, նավթագազատարների, նավթագազապահեստարանների կառուցումը ղեկավարելը, կառուցման համար նոր առաջավոր տեխնոլոգիաներ մշակելը.

3)երկրաբանական հետազոտությունների համար տարածքներ ընտրելը.

4)սև և գունավոր մետաղների, դրանց համաձուլվածքների հալման, մետաղամշակման, բաղադրային և փոշիացված նյութեր ու ծածկանյութեր ստեղծելու և արտադրելու տեխնոլոգիական գործընթացներ մշակելը.

5)արդյունահանող արդյունաբերության և մետաղագործության բնագավառներում տեխնոլոգիական գործընթացների պահպանումը վերահսկելը, դրանց արդյունավետության և հուսալիության մեծացման միջոցառումներ մշակելը.

6)աշխատանքների անվտանգությունն ապահովելը.

7)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարագետ՝ հորատման աշխատանքների.

2) ճարտարագետ՝ լեռնային.

3) մետաղագործ.

4) տեխնոլոգ՝ լուծահանման:

25. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2148. ԵՐԿՐԱԲԱՇԽՆԵՐ, ՔԱՐՏԵԶԱԳԻՐՆԵՐ ԵՎ ՏԵՂԱՆՔԱԳԻՐՆԵՐ

1.Երկրաբաշխները, քարտեզագիրները և տեղանքագիրները կատարում են երկրի մակերևույթի չափագրումներ և նկարահանումներ՝ կիրառելով երկրաբաշխական և տեղանքագրական մեթոդներ ու տեխնոլոգիաներ, որոշում են օբյեկտների ճշգրիտ տեղը և սահմանները, կազմում և ձևավորում են թվային, գծագրական կամ լուսանկարչական քարտեզներ ու հատակագծեր, դրանք կիրառում գործնական աշխատանքներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շինարարական օբյեկտները ճշգրիտ բնական տեսքի բերելն ապահովող երկրաբաշխական աշխատանքներ կատարելը, շենքերի, ջրանցքների, ճանապարհների, հեռարձակման կայանների և այլ շինությունների շինարարության նպատակով հողահատկացումը հիմնավորելու համար համապատասխան նյութեր պատրաստելը.

2)տեղագրական, աշխարհագրական և այլ քարտեզներ, հողային կադաստրեր կազմելու և նորացնելու նպատակով տարբեր մեթոդներով երկրագնդի մակերևույթի տեղանքագրական նկարահանումներ կատարելը, նկարահանումների ժամանակ օգտագործվող գործիքները ստուգելը և կարգավորելը.

3)երկրաբաշխական և տեղանքագրական աշխատանքներ կատարելու նորագույն մեթոդներ մշակելը և կիրառելը.

4)ծովերի, գետերի և լճերի հատակները հետազոտելը, դրանց նկարագիրը և պատկերների քարտեզները կազմելը՝ նավագնացության մեջ և ստորջրյա կառույցների շինարարությունում օգտագործելու համար.

5)մարկշեյդերական աշխատանքներ կատարելը.

6)օդանկարահանումներ ծրագրելը և կազմակերպելը.

7)քարտեզների նախագծման և պատրաստման տեխնոլոգիաներ, դրանց օգտագործման մեթոդներ մշակելը,

8)երկրաբաշխության, տեղանքագրության, քարտեզագրության և քարտեզների արտադրության հարցերով խորհրդատվությունը.

9)այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը.

10)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օդանկարահանող.

2)քարտեզագիր.

3) մարկշեյդեր.

4) տեղանքագիր.

5) երկրաբաշխ:

26. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2149. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ, ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբ ներառված են ճարտարագիտության բնագավառի մասնագետները, ովքեր չեն ընդգրկվել այլ ստորին խմբեր: Այդ մասնագետները զբաղվում են արտադրության արդյունավետության, աշխատանքի կազմակերպման և նորմավորման, աշխատանքի պաշտպանության ու անվտանգության, որոշակի նյութերի արտադրության գործընթացների և տեխնոլոգիաների մշակման և այլ հարցերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արտադրության ծրագրման և ձևերի վերաբերյալ ղեկավարներին խորհրդատվություն մատուցելը և հանձնարարականներ մշակելը.

2)մարդկանց աշխատանքը, նյութերը և սարքավորումները արդյունավետորեն, անվտանգ և տնտեսապես նպատակահարմար եղանակով օգտագործելու վերաբերյալ ղեկավարներին խորհրդատվություն մատուցելը և հանձնարարականներ մշակելը.

3)հանձնարարականներ կազմելը՝ հաշվի առնելով աշխատանքի եղանակները և գործառնությունների հաջորդականությունը, դրանց կատարումը ղեկավարելը.

4)աշխատանքի կազմակերպման հանձնարարականներ կազմելը և դրանց կատարումը հսկելը.

5)սարքավորումների և աշխատուժի առավել արդյունավետ տեղաբաշխման վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

6)աշխատանքի պայմանների վտանգավորության աստիճանը որոշելը և համապատասխան անվտանգության միջոցներ ներդնելը.

7)ապակե, հախճապակե, կաշվե, տեքստիլ նյութերին առնչվող արտադրական գործընթացների տեխնոլոգիաներ մշակելը և դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.
9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) ճարտարագետ՝ աշխատանքի նորմավորման.
2) ճարտարագետ՝ աշխատանքի կազմակերպման.
3) ճարտարագետ՝ արտադրության կառավարման և կազմակերպման.
4) ճարտարագետ՝ աշխատանքի պաշտպանության և անվտանգության:

27. ԵՆԹԱԽՈՒՄԲ 22. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Կենսաբանական գիտությունների և առողջապահության բնագավառների մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, կատարելագործում և մշակում են տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ, ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառում են կենսաբանության, կենդանաբանության, բուսաբանության, բնապահպանության, ֆիզիոլոգիայի, կենսաքիմիայի (բիոքիմիայի), միկրոկենսաբանության, գյուղատնտեսության, դեղաբանության և բժշկության բնագավառներում:

2.Այս ենթախմբում ներառված զբաղմունքներն առանձնանում են կատարվող աշխատանքների բարդության բարձր աստիճանով և պահանջում են աշխատողների բարձր որակավորում, որը բնորոշվում է բարձրագույն մասնագիտական կրթության առկայությամբ, մի շարք դեպքերում՝ նաև գիտական աստիճանով:

3.Կենսաբանական գիտությունների և առողջապահության բնագավառների մասնագետների պարտականությունները հիմնականում ներառում են. մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքը՝ իր բոլոր դրսևորումներով (ներառյալ առանձին օրգանները, հյուսվածքները, բջիջները և միկրոօրգանիզմները), դրանց վրա միջավայրի, դեղերի և այլ նյութերի ազդեցությունն ուսումնասիրելը, դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը, ձեռք բերված գիտելիքները տարածելը և գործնականում կիրառելը. մարդու, կենդանիների և բույսերի հիվանդություններն ուսումնասիրելը, կանխարգելման, բուժման և խնամքի մեթոդներ կիրառելը, այդ հարցերով խորհրդատվություն մատուցելը. գիտական զեկույցներ և հաշվետվություններ պատրաստելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 221. Մասնագետներ՝ կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների.**

2)**Փոքր խումբ 222. Մասնագետներ՝ առողջապահության բնագավառի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության).**

3) **Փոքր խումբ 223. Մասնագետներ՝ բժշկական խնամքի և մանկաբարձության:**

28. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 221. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, կատարելագործում և մշակում են տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ, գործնականում կիրառում են իրենց գիտելիքները կենսաբանության, միկրոկենսաբանության, բուսաբանության, կենդանաբանության, բնապահպանության, կազմախոսության (անատոմիայի), մանրէաբանության, կենսաքիմիայի, բնախոսության (ֆիզիոլոգիայի), բջջաբանության (ցիտոլոգիայի), ծագումնաբանության (գենետիկայի) և դեղաբանության բնագավառներում:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. մարդու, կենդանիների և բույսերի կյանքը, նրանց օրգանները, հյուսվածքները, բջիջները, միկրոօրգանիզմները, նաև դրանց փոխազդեցությունը, դրանց վրա միջավայրի, դեղերի և այլ նյութերի ազդեցությունն ուսումնասիրելը, ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելը. գյուղատնտեսության և անտառային տնտեսության, դեղագործության, բժշկության և այլ

բնագավառներում խորհրդատվությունը, գիտական փաստաթղթեր կազմելը: Պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2211. Կենսաբաններ, բուսաբաններ, կենդանաբաններ և մասնագետներ՝ հարակից.**

2)**Ստորին խումբ 2212. Մանրէաբաններ, դեղաբաններ, ախտաբաններ և մասնագետներ՝ հարակից.**

3)**Ստորին խումբ 2213. Գյուղատնտեսներ և մասնագետներ՝ հարակից**:

29. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2211. ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐ, ԲՈՒՍԱԲԱՆՆԵՐ, ԿԵՆԴԱՆԱԲԱՆՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Կենսաբանները, բուսաբանները, կենդանաբանները և հարակից մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, կենսաբանության, բուսաբանության, կենդանաբանության, բնապահպանության, միկրոկենսաբանության, մանրէաբանության, բջջաբանության, ծագումնաբանության բնագավառներում, կատարելագործում և զարգացնում են տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ, ապահովում են գիտելիքների գործնական կիրառությունը բժշկության, դեղագործության, գյուղատնտեսության ոլորտներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)համապատասխան բնագավառներում գիտահետազոտական աշխատանքներ կատարելը, տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ մշակելն ու կատարելագործելը.

2)դաշտային և լաբորատոր փորձեր կատարելը, մադկանց, կենդանիների, բույսերի ծագման, զարգացման, կյանքի, կառուցվածքի, բաղադրության, վերարտադրության գործընթացների վրա քիմիական և ֆիզիկական գործոնների ազդեցությունն ուսումնասիրելը.

3)բուսական և կենդանական կյանքն իր ողջ բազմազանությամբ ուսումնասիրելը, մարդկանց, կենդանիներ և բույսեր համակարգելը և դասակարգելը.

4)մարդկանց, կենդանիների և բույսերի առանձին տեսակների ծագման, զարգացման, կենսագործունեության, վերարտադրության, ժառանգականության մասին հետազոտություններ կատարելը.

5)հետազոտությունների արդյունքները գյուղատնտեսության, անտառային, ձկնային տնտեսության, բժշկության, դեղագործության, սննդի որոշ տեխնոլոգիաների մշակման և այլ բնագավառներում կիրառելը.

6)անասնապահության, թռչնաբուծության, ջրային մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիաներ մշակելը և սպասարկելը.

7)կենդանական և բուսական օրգանիզմների փոխազդեցությունը, դրանց վրա շրջակա միջավայրի ազդեցությունն ուսումանասիրելը, բնությունից արդյունավետորեն օգտվելու առաջարկություններ մշակելը, այդ հարցերով խորհրդատվություն մատուցելը.

8)շրջակա միջավայրից (անտառներ, ջրային կենսական պաշարներ, վայրի կենդանիներ) արդյունավետորեն օգտվելը և դրանց պաշտպանությունը.

9)բնատարածքային համալիրներ բարեկարգելը.

10)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) կենսաբան.

2) բուսաբան.

3) մանրէաբան.

4) կենդանաբան.

5) միջատաբան.

6) միկրոկենսաբան:

30. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2212. ՄԱՆՐԷԱԲԱՆՆԵՐ, ԴԵՂԱԲԱՆՆԵՐ, ԱԽՏԱԲԱՆՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Մանրէաբանները, դեղաբանները, ախտաբանները և հարակից մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, կատարելագործում և մշակում են տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ պաթոլոգիայի, ֆիզիոլոգիայի, կենսաքիմիայի, կենսաֆիզիկայի, թունաբանության, դեղաբանության բնագավառներում, ստացված գիտելիքները գործնականում կիրառում են բժշկության, գյուղատնտեսությունում, անտառային և ձկնային տնտեսություններում, սննդի և դեղագործական արդյունաբերության ոլորտներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)համապատասխան բնագավառներում գիտահետազոտական աշխատանքներ կատարելը, նոր տեսություններ ու մեթոդներ մշակելը և կատարելագործելը.

2)կենսաբանական կազմվածքը, քիմիական բաղադրությունը, կենդանի օրգանիզմներում, հյուսվածքներում և բջիջներում տեղի ունեցող ֆիզիկական և քիմիական գործընթացներն ուսումնասիրելը.

3)սովորական, անբարենպաստ և արտակարգ պայմաններում մարդու, կենդանիների և բույսերի օրգանիզմների, նրանց առանձին օրգանների, հյուսվածքների, բջիջների կենսագործունեության ուսումնասիրության լաբորատոր փորձեր և փորձարկումներ կատարելը.

4)միկրոօրգանիզմների (մանրէների, միաբջիջների, վարակահարուցիչների) կենսագործունեությունը, կազմությունը ու կենդանի օրգանիզմների վրա նրանց ունեցած ազդեցությունն ուսումնասիրելը, այդ թվում՝ ախտածին.

5)մարդկանց, կենդանիների և բույսերի ժառանգական հատկանիշերի ծագումը, զարգացումը և փոխանցումը հետազոտելը.

6)մարդկանց, կենդանիների և բույսերի կենսագործունեության զանազան խանգարումների ու հիվանդությունների պատճառները և բնույթն ուսումնասիրելը.

7)կենդանի օրգանիզմների, օրգանների, հյուսվածքների վրա դեղերի և այլ նյութերի ազդեցության ուսումնասիրության նպատակով փորձեր կատարելը, գոյություն ունեցող դեղերը կատարելագործելը և նորերը մշակելը.

8)ստացված գիտելիքների և արդյունքների գործնական կիրառությունը կենդանիների և բույսերի նոր տեսակներ բուծելու, մարդկանց, կենդանիների և բույսերի հիվանդությունները բուժելու, նոր կենսատեխնոլոգիական գործընթացներ մշակելու և վարելու բնագավառներում.

9)գյուղատնտեսական հումքի բաղադրության մեջ թունավոր նյութերի հայտնաբերման, անասնաբուժական-առողջարարական, սնկաբանական հետազոտու-թյունների վերլուծություններ կատարելը, սննդի, համակցված կերի և արդյունաբերության այլ ճյուղերում օգտագործելու համար դրա պիտանելիության մասին եզրակացություն պատրաստելը.

10) գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մանրէաբան.

2) կենսաֆիզիտոս.

3) կենսաքիմիկոս.

4) թունաբան.

5) դեղաբան.

6) ախտաբան:

31. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2213. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Գյուղատնտեսները և հարակից մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, կատարելագործում և մշակում են հայեցակարգեր, տեսություններ և մեթոդներ գյուղատնտեսության, հողի քիմիայի, հողագիտության, երկրագործության, բույսերի պաշտպանության բնագավառներում, ձեռք բերված գիտելիքները և արդյունքները գործնականում կիրառում են հողագործության և անասնապահության ոլորտներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գյուղատնտեսագիտության, հողի քիմիայի, հողագիտության, երկրագործության, բույսերի պաշտպանության բնագավառներում գիտական հետազոտություններ կատարելը, մշակաբույսերի աճեցման եղանակները կատարելագործելը և նոր եղանակներ մշակելը.

2)անտառավերականգնողական և անտառատնկման աշխատանքներ կատարելը, անտառային պաշարները շահագործելը.

3)բույսերի հիվանդությունների, վնասատուների ու մոլախոտերի դեմ պայքարի տեխնոլոգիաներ մշակելը և ներդնելը.

4)հողի կառուցվածքը և կազմը, հողագործության և անտառաբուծության ագրոկլիմայական շրջաններն ուսումնասիրելը, հողերի բերրիության, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման ագրոտեխնիկական միջոցառումներ մշակելը, հակաողողամոիչ (հակաէրոզիոն) և ջրատեխնիկական պարզ կառույցների շինարարությունը.

5)անասնապահության բնագավառի հիմնախնդիրներն ուսումնասիրելը, ցեղատեսակներ աճեցնելու նոր մեթոդներ մշակելը և գործողները կատարելագործելը.

6)հետազոտություններ կատարելը, վայրի բնությունը պահպանելու նոր մեթոդներ մշակելը կամ գործողները կատարելագործելը.

7)հետազոտություններ կատարելը, արոտավայրերը խնայողաբար օգտագործելու նոր մեթոդներ մշակելը կամ գործողները կատարելագործելը.

8)սերմերի բարձորակ տեսակներ և տնկանյութ աճեցնելը, սերմերի ֆոնդեր ստեծելը.

9)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գյուղատնտես.

2) գյուղատնտես՝ բույսերի պաշտպանության.

3) գիտաշխատող՝ անասնապահության բնագավառի.

4) գիտաշխատող՝ անտառատնտեսության բնագավառի.

5) հողաքիմիկոս.

6) գիտաշխատող՝ հողագործության բնագավառի:

32. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 222. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ)

1.Առողջապահության բնագավառի մասնագետները (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության) կատարում են հետազոտություններ, բարելավում կամ զարգացնում են հայեցակարգեր, տեսություններ, մեթոդներ, ձեռք բերված գիտելիքները կիրառում են բժշկության, ատամնաբուժության, անասնաբուժության, դեղագործության, ինչպես նաև առողջության պաշտպանությանն ու բարելավմանն առնչվող այլ բնագավառներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են. գիտական հետազոտություններ կատարելը և ձեռք բերված գիտելիքները մարդու և կենդանիների զանազան հիվանդությունները և դրանց բուժման եղանակներն ուսումնասիրելու ճանապարհով կիրառելը, խորհրդատվություն մատուցելը, բուժական և կանխարգելիչ միջացառումներ կիրառելը, գիտական հոդվածներ և զեկուցումներ պատրաստելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողների ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2221. Բժիշկներ.**

2)**Ստորին խումբ 2222. Ատամնաբույժներ.**

3)**Ստորին խումբ 2223. Անասնաբույժներ.**

4)**Ստորին խումբ 2224. Դեղագետներ.**

5)**Ստորին խումբ 2229. Մասնագետներ՝ առողջապահության բնագավառի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության), այլ խմբերում չներառված:**

33. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2221. ԲԺԻՇԿՆԵՐ

1.Բժիշկները կատարում են գիտական հետազոտություններ, կատարելագործում և զարգացնում են հիվանդությունների բուժման և կանխարգելման հայեցակարգեր և մեթոդներ, դրանք կիրառում են գործնական աշխատանքում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մարդու հիվանդությունների առաջացման պատճառները և ընթացքը հետազոտելը, դրանց բուժման, կանխարգելման մեթոդներ մշակելը.

2)բժշկական հետազոտություններ կատարելը և ախտորոշելը.

3)ժամանակակից դեղամիջոցներ, բուժման և վերականգնողական մեթոդներ կիրառելը.

4)վիրահատություններ կատարելը.

5)որոշակի օրգաններ պրոթեզավորելը.

6)դատաբժշկական և դատահոգեբուժական փորձաքննություն կատարելը.

7)բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովելու համար սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելը.

8)հիվանդությունների բուժման, կանխարգելման և բժշկական ապահովագրության հարցերով խորհրդատվություն մատուցելը.

9)առողջապահությանն առնչվող օրենքների և հրահանգների զարգացմանը և կիրառմանը մասնակցելը՝ առողջ ապրելակերպը պահպանելու և խրախուսելու համար.

10)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

11)միջին և կրտսեր բուժանձնակազմը ղեկավարելը.

12) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բժիշկ.

2) ակնաբույժ.

3) բժիշկ՝ համաճարակաբան.

4) մանկաբույժ.

5) բժիշկ՝ ֆիզիոթերապևտ.

6) հոգեբույժ.

7) վիրաբույժ:

33. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2222. ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺՆԵՐ

1.Ատամնաբույժները կատարում են գիտական հետազոտություններ, կատարելագործում կամ զարգացնում են հայեցակարգեր և մեթոդներ, բժշկական գիտելիքները կիրառում են ատամների և բերանի խոռոչի հիվանդությունների բուժման բնագավառում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ատամների և բերանի խոռոչի հիվանդությունների ծագման պատճառները և ընթացքը հետազոտելը, հիվանդությունների բուժման և կանխարգելման մեթոդներ մշակելը.

2)ատամնաշարը և բերանի խոռոչը ախտորոշման նպատակով զննելը.

3)ատամնաբուժության ժամանակակից մեթոդների և միջոցների օգնությամբ բուժելը.

4)ատամները պրոթեզավորելը, տարբեր նյութերից պրոթեզների պատրաստումը ղեկավարելը.

5)ատամները հեռացնելու և բերանի խոռոչն ու դիմածնոտային շրջանը բուժելու նպատակով վիրահատելը.

6)ատամների և բերանի խոռոչի հիվանդությունների կանխարգելման, առողջաբանության (սանիտարիա) պահպանման հարցերով խորհրդատվություն մատուցելը.

7)բերանի խոռոչի զննման միջոցով տարբեր տեսակի հիվանդություններ ախտորոշելը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ատամնաբույժ.

2) ատամնաբույժ՝ պրոթեզավորող.

3) ատամնաբույժ՝ վիրաբույժ.

4) ատամնաբույժ՝ թերապևտ:

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2223. ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺՆԵՐ

1.Անասնաբույժները կատարում են գիտական հետազոտություններ, մշակում և կատարելագործում են կենդանիների հիվանդությունների բուժման հայեցակարգեր, մեթոդներ, ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառում են անասնաբուժության բնագավառում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կենդանիների բուժման գիտական հետազոտություններ կատարելը, տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ մշակելը, կատարելագործելը և զարգացնելը.

2)կենդանիների հիվանդությունները և խանգարումները հետազոտելը և ախտորոշելը.

3)կենդանիների վիրաբուժական կամ թերապևտիկ բուժում կատարելը.

4)կաթնատու և այլ անասուններին թեստավորելը և հիվանդությունների դեմ պատվաստելը.

5)անասուններին կերակրելու, պահելու և դրանց վերարտադրության հարցերով խորհրդատվություն մատուցելը.

6)կենդանիների և թռչունների անասնաբուժասանիտարական փորձաքննություն կատարելը.

7)կենդանական ծագման սննդամթերքների որակը, մաքրությունը և անվտանգությունը ստուգելը, դրանց պիտանիության մասին հաշվետվություններ կազմելը.

8)գիտական զեկույցներ և հաշվետվություններ կազմելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը.

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) անասնաբույժ.

2) անասնաբույժ- համաճարակաբան:

35. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2224. ԴԵՂԱԳԵՏՆԵՐ

1.Դեղագետները կիրառում են դեղաբանական տեսություններ և մեթոդներ դեղեր պատրաստելու, բաշխելու, տարածելու կամ վաճառելու նպատակով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բժիշկների, ատամնաբույժների կամ անասնաբույժների դեղատոմսերին և պատվերներին համապատասխան՝ դեղեր պատրաստելը, դեղերի պատրաստումը ղեկավարելը, զանազան դեղամիջոցներ պատրաստելու տեխնոլոգիաներ մշակելը.

2)դեղամիջոցների չափաքանակի, ընդունման կարգի և առանձին դեղատեսակների համատեղելիության հարցերով խորհրդատվություն մատուցելը.

3)դեղերը և դեղամիջոցներն ըստ հիվանդանոցների բաշխելը կամ դրանք դեղատներում վաճառելը.

4)հոգեմետ, թունանյութեր պարունակող և կախվածություն առաջացնող դեղամիջոցներ հաշվառելը, դրանց օգտագործումը գրանցելը.

5)դեղերի բնույթը, մաքրությունը և ազդեցության արդյունավետությունը ստուգելու նպատակով դրանք փորձարկելը և դրանց պատրաստումը վերահսկելը.

6)այլ մասնագետների հետ համագործակցելը և խորհրդակցելը դեղամիջոցների պատրաստման մեթոդների և բաղադրության հարցերով, դեղագործական արտադրության զարգացման, հսկման և կարգավորման աշխատանքներին մասնակցելը.

7)դեղամիջոցներ օգտագործելու չափորոշիչների և հրահանգների մշակմանը մասնակցելը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)դեղագետ.

2)դեղագործ-քիմիկոս:

36. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2229. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ), ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խմբի մեջ ներառվում են սննդի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետ բժիշկները և բժիշկ-վիճակագիրները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բնակչության տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի, հիվանդների համար (այդ թվում՝ առողջապահության համակարգի հիմնարկներում բուժվող) սննդարկարգեր և սնվելու ռեժիմներ մշակելը.

2)սննդի և դիետիկ սննդի ընդհանուր հիմնախնդիրներին վերաբերող հարցերով դասախոսություններ կարդալը և խորհրդատվությունը, առողջապահության համապատասխան ծրագրերի մշակմանը մասնակցելը.

3)վիճակագրական դիտարկումներ և հետազոտություններ կատարելը՝ հիվանդացության միտումներն ըստ տեսակների, առանձին տարածաշրջանների, բնակչության տարիքային և մասնագիտական խմբերի դասակարգելը, բնակչության առողջության մակարդակը, շրջակա միջավայրի առողջարարական վիճակը բնորոշող ցուցանիշները գնահատելը, այդ ցուցանիշները բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

4)գործունեության ընթացքում հարակից մասնագետների հետ խորհրդակցելը.

5)գիտական զեկույցներ և հաշվետվություններ կազմելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բժիշկ-դիետաբան.

2)բժիշկ-վիճակագիր:

37. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 223. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

1.Բժշկական խնամքի և մանկաբարձության մասնագետները բժշկական հասկացություններ, սկզբունքներ և մեթոդներ են կիրառում երեխաների ծննդին, հիվանդների, վիրավորների, հաշմանդամների, ինչպես նաև մայրերի և նորածին երեխաների խնամքին առնչվող գործունեության ժամանակ:

2.Նրանց պարտականությունները ներառում են. կանխարգելիչ և բուժական միջոցառումների գործնական կիրառման ժամանակ բժիշկներին օգնելը և բժիշկների բացակայության ժամանակ հիվանդներին օգնելը. բժշկական մասնագիտական սպասարկում ապահովելը. մտավոր և ֆիզիկական արատներ ունեցողների, հիվանդների, վիրավորների և այդ կարգի այլ անձանց խնամքը և խորհրդատվությունը. օժանդակ բժշկական անձնակազմը ղեկավարելը, երեխաների ծնվելու ժամանակ օգնությունը և երեխաների խնամքի հարցերով մայրերին խորհուրդներ տալը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 2230. Մասնագետներ՝ բժշկական խնամքի և մանկաբարձության:**

38. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2230. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

1.Բժշկական խնամքի և մանկաբարձության մասնագետներն օգնում են բժիշկներին նրանց պարտականությունների կատարման ժամանակ, բժիշկների բացակայության ժամանակ հիվանդներին ցուցաբերում են շտապ բժշկական օգնություն, ընդունում են ծնունդներ կամ բժիշկներին օգնում են ծնունդներ ընդունելիս, ապահովում են հղի կանանց նախածննդյան և հետծննդյան շրջանի խնամքը և սպասարկումը, մայրերին խորհուրդներ են տալիս երեխաների խնամքին վերաբերող հարցերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հիվանդների, վիրավորների, հաշմանդամների և այցելուների, նորածինների և նրանց մայրերի մասնագիտական բժշկական խնամք և սպասարկում ապահովելը, բուժական և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելը հիվանդանոցներում, բժշկական և այլ կազմակերպություններում.

2)բժիշկներին օգնելը նրանց պարտականությունները կատարելիս, նրանց բացակայության ժամանակ բժշկական շտապ օգնություն ցուցաբերելը.

3)բժշկի հանձնարարությամբ հիվանդների կողմից ժամանակին և սահմանված քանակով դեղերի ընդունումն ապահովելը, հետվիրահատական սպասարկում կազմակերպելը, այլ բնույթի բուժօգնություն ցուցաբերելը.

4)բուժքույրերի և ոչ բժշկական անձնակազմի աշխատանքը ղեկավարելը և համակարգելը.

5)մտավոր կամ ֆիզիկական արատներ ունեցող հիվանդներին սոցիալական միջավայրին հարմարվելուն, նրանց զարգացմանը և ուսուցմանը նպաստող աշխատանքներ կազմակերպելը և այդ աշխատանքներին մասնակցելը.

6)հիվանդներին մասնագիտական բժշկական խնամք ցուցաբերելը՝ ըստ բնակության վայրի.

7)հասարակական վայրերում կամ աշխատատեղում մասնագիտական բժշկական սպասարկումը, խնամքը և խորհրդատվություն մատուցելը.

8)դպրոցներում, արդյունաբերական և այլ կազմակերպություններում մասնագիտական-խորհրդատվական օգնություն ցուցաբերելը.

9)հղի կանանց առողջական վիճակը և հղիության ընթացքը հսկելը, նրանց մասնագիտական բժշկական խնամքը և խորհրդատվություն մատուցելը.

10)երեխայի ծննունդն ընդունելը, իսկ բարդ ծննդաբերությունների ժամանակ՝ բժշկին օգնելը.

11)հետծննդյան շրջանում մայրերին այցելելը, նրանց վերականգնման ընթացքը, երեխայի աճը հսկելը, մայրերին երեխայի խնամքի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը.

12)ծննդաբերությունների վիճակագրություն վարելը, նորածինների տվյալները հաշվառելը, այդ տվյալների փոփոխությունները գնահատելը և դրանց վերաբերյալ առաջարկություններ մշակելը.

13)զեկույցներ և հաշվետվություններ կազմելը.

14) այլ աշխատողներին ղեկավարելը.

15) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մանկաբարձ.

2) ավագ բուժքույր.

3) մասնագետ՝ հիվանդների խնամքի:

39. ԵՆԹԱԽՈՒՄԲ 23. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Կրթության բնագավառի մասնագետները հետազոտում, մշակում և կատարելագործում են հայեցակարգեր, հասկացություններ և մեթոդներ, դրանք կիրառում գիտական և գործնական գիտելիքների դասավանդման ասպարեզում, կազմում են գրքեր և դասագրքեր:

2.Այս ենթախումբ ներառված զբաղմունքներն առանձնանում են կատարվող աշխատանքների բարդության բարձր աստիճանով և պահանջում են աշխատողների բարձր որակավորում, որը բնորոշվում է բարձրագույն մասնագիտական կրթության առկայությամբ, մի շարք դեպքերում՝ նաև գիտական աստիճանով:

3.Նրանց պարտականությունները ներառում են. գիտության տարբեր բնագավառներում դասավանդելը, պարապմունքները վարելը՝ ներառյալ մասնավոր դասերը. մեծահասակների ուսուցման ծրագրերին մասնակցելը, մասնագիտական բնագավառում հայեցակարգեր, հասկացություններ և մեթոդներ մշակելու նպատակով գիտական հետազոտություններ կատարելը. դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ մշակելը, նոր ուսումնական ծրագրեր մշակելը, գործող ծրագրերը կատարելագործելը. դասավանդման և ուսուցման հարցերով խորհրդատվություն մատուցելը դասավանդողներին, սովորողներին և նրանց ծնողներին.

ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող անձանց համար ուսուցման հատուկ մեթոդներ և ուսումնական ծրագրեր մշակելը, դասավանդելը. ուսումնական հաստատությունների գործունեությունը վերահսկելը, գիտական աշխատանքներ, հոդվածներ հրատարակելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 231. Դասավանդողներ՝ համալսարանների, քոլեջների, արհեստագործական ուսումնարանների և այլ կրթական հաստատությունների.**

2)**Փոքր խումբ 232. Մանկավարժներ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների.**

3)**Փոքր խումբ 233. Մանկավարժներ՝ նախադպրոցական և հանրակրթական (տարրական ընդհանուր) ուսումնական հաստատությունների.**

4)**Փոքր խումբ 234. Մանկավարժներ՝ հատուկ կրթության բնագավառի.**

5)**Փոքր խումբ 235. Մասնագետներ՝ այլ, կրթության բնագավառի:**

40. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 231. ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ, ՔՈԼԵՋՆԵՐԻ, ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Համալսարանների, քոլեջների (միջին մասնագիտական ուսումնական հաստատտությունների), արհեստագործական ուսումնարանների (նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների) և այլ կրթական հաստատությունների դասավանդողները տարբեր կրթական մակարդակներում ուսուցանում են իրենց առարկաները, կատարում են հետազոտություններ, մշակում և կատարելագործում են իրենց առարկաներին վերաբերող հայեցակարգեր, տեսություններ և մեթոդներ, կազմում են դասագրքեր և ձեռնարկներ, իրականացնում են վերապատրաստման, վերաորակավորման և որակավորման բարձրացման դասընթացներ:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. ուսումնական ծրագրեր մշակելը և բարեփոխելը. դասախոսություններ կարդալը և գործնական պարապմունքներ անցկացնելը. մանկավարժական մեթոդներ ուսումնասիրելը և դրանց կիրառման հրահանգներ պատրաստելը. համալսարաններում և այլ կրթական հիմնարկներում ուսուցման և դասավանդման մեթոդներին վերաբերող որոշումներ կայացնելուն մասնակցելը. իրենց մասնագիտությանն առնչվող գիտական հետազոտություններ կատարելը, նոր հայեցակարգեր, մեթոդներ, տեսություններ մշակելը, կատարելագործելը, դրանք արդյունաբերության տարբեր ոլորտներում կիրառելու վերաբերյալ առաջարկություններ պատրաստելը. ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, գիտական աշխատություններ մշակելը և հրատարակելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 2310. Դասավանդողներ՝ համալսարանների, քոլեջների, արհեստագործական ուսումնարանների և այլ կրթական հաստատությունների:**

41. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2310. ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ, ՔՈԼԵՋՆԵՐԻ, ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Համալսարանների, քոլեջների (միջին մասնագիտական ուսումնական հաստատտությունների), արհեստագործական ուսումնարանների (նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների) և այլ կրթական հաստատությունների դասավանդողները տարբեր կրթական մակարդակներում ուսուցանում են իրենց առարկաները, հետազոտություններ են կատարում, մշակում, կատարելագործում են ինչպես մանկավարժական, այնպես էլ իրենց մասնագիտությանն առնչվող հայեցակարգեր, հասկացույթուններ և մեթոդներ, կազմում են ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, գիտական աշխատություններ և հրատարակում դրանք, իրականացնում են վերապատրաստման, վերաորակավորման և որակավորման բարձրացման դասընթացներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պահանջներին համապատասխան՝ ուսումնական և առարկայական ծրագրեր մշակելը և կատարելագործելը.

2)դասախոսություններ կարդալը, խորհրդատվությունը, սեմինարներ և լաբորատոր պարապմունքներ անցկացնելը, ուսուցման գործընթացը ղեկավարելը.

3)ուսանողներին քննարկումներին մասնակից դարձնելը, նրանց ինքնուրույն մտածողության, ստեղծագործական մտքի զարգացմանը նպաստող մեթոդներ կիրառելը.

4)քննական հարցաշարեր և տոմսեր մշակելը, քննական աշխատանքների և թեստերի արդյունքները գնահատելը.

5)ուսանողների փորձնական և գործնական աշխատանքներին հետևելը, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

6)մանկավարժական մեթոդներ և ուսուցողական նյութեր ուսումնասիրելը, դրանց կիրառման վերաբերյալ ցուցումներ պատրաստելը.

7)իրենց մասնագիտությանն առնչվող հարցերով գիտական հետազոտություններ կատարելը.

8)ասպիրանտների, հայցորդների գիտական հետազոտությունները ղեկավարելը.

9)արդյունաբերության և այլ բնագավառներում կիրառելու համար հայեցակարգեր, տեսություններ և մեթոդներ մշակելը.

10)ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, գիտական աշխատություններ, հոդվածներ մշակելը և հրատարակելը.

11)գիտաժողովների և սեմինարների մասնակցելը.

12)կրթական հաստատության գործունեության ընթացքում բյուջետային, գիտական և այլ հարցերի առնչվող որոշումների կայացմանը մասնակցելը.

13)ուսանողական գիտական ընկերություններ, ստեղծագործական միություններ, արտածրագրային միջոցառումներ ղեկավարելը և դրանց աջակցելը.

14)այլ աշխատողներին ղեկավարելը.

15)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) պրոֆեսոր.

2) դոցենտ.

3) ավագ դասախոս.

4) ընթերակա.

5) դասախոս.

6) վարպետ՝ արտադրական ուսուցման.

7) դասավանդող՝ լրացուցիչ կրթության:

42. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 232. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժները կրթական կամ մասնագիտական նպատակներով մեկ կամ մի քանի առարկաներ են դասավանդում տարբեր կրթական մակարդակներում. սկսած տարրական ընդհանուր կրթության ավարտից՝ մինչև քոլեջում կամ բուհում ուսուցումը սկսելը:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. տարբեր առարկաների ուսումնական ծրագրեր մշակելը, փոփոխելը և կատարելագործելը. ընդհանուր կամ մասնագիտական կրթության նպատակով դասավանդելը, գործնական պարապմունքներ անցկացնելը՝ օգտագործելով ուսուցման տարբեր մեթոդներ, եղանակներ ու ձևեր՝ ներառյալ մասնավոր պարապմունքները. մեծահասակներին ուսուցանելը. ուսումնական գործընթացներ նախապարտրաստելը, դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելը. մանկավարժական գործունեությանն առնչվող հաշվետվություններ և փաստաթղթեր պատրաստելը. ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, գիտական աշխատություններ և հոդվածներ պատրաստելը, դրանք հրատարակելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 2320. Մանկավարժներ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների:**

43. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2320. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավավարժները կրթական կամ մասնագիտական նպատակներով մեկ կամ մի քանի առարկաներ են դասավանդում տարբեր կրթական մակարդակներում. սկսած տարրական ընդհանուր կրթության ավարտից՝ մինչև քոլեջում կամ բուհում ուսուցումը սկսելը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գործող պահանջներին համապատասխան՝ ուսումնական, առարկայական ծրագրեր մշակելը, փոփոխելը և կատարելագործելը.

2)մեկ կամ մի քանի առարկաներ դասավանդելը, գործնական պարապմունքներ անցկացնելը՝ ներառյալ մասնավոր պարապմունքները.

3)ուսուցման տարբեր մեթոդներ, ձևեր, եղանակներ կիրառելը, անհատական պարապմունքներ, ինքնուրույն աշխատանք կազմակերպելը և հսկելը.

4)առարկայի յուրացման մակարդակը ստուգելու համար ստուգարքներ և քննություններ անցկացնելը, գնահատելը.

5)ուսուցման ընթացքում մասնագիտական ունակություններ և հմտություններ ձևավորելը, արտադրական գործնական պարապմունքների ժամանակ աշխատանքի անվտանգության պայմաններ ապահովելը.

6)ուսումնական և ստուգողական վարժություններ պատրաստելը.

7)ուսումնական գործընթացի կազմակերպմանը և մեթոդական աշխատանքներին, կրթական հաստատությանը վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելը.

8)մեծահասակների ուսուցման ծրագրեր իրագործելը.

9)աշակերտների ծնողների կամ նրանց փոխարինող անձանց հետ կապեր պահպանելն, ուսուցման վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

10)սովորողների արտադպրոցական գործունեությունը կազմակերպելը, մասնավորապես՝ գրական-գեղարվեստական և այլ բնույթի ակումբների աշխատանքներին աջակցելը.

11)մանկավարժական գործունեությանն առնչվող հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ուսուցիչ՝ միջնակարգ կրթության.

2) դասավանդող՝ մեծահասակների կրթության.

3) դասավանդող՝ աշխատանքի ուսուցման:

44. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 233. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ (ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Հանրակրթական (տարրական ընդհանուր) և նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները դասավանդում են առարկաներ և կրթական գործունեություն են կազմակերպում նախադպրոցական և դպրոցական հասակի երեխաների համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են. ուսումնական ծրագրեր պատրաստելը և տարրական կրթության առարկաներ ուսուցանելը, երեխաների կողմից լեզվի, ֆիզիկական և սոցիալական հմտությունների յուրացումը հեշտացնելու համար նախատեսված գործունեություն ծրագրելը և կազմակերպելը, զեկուցումներ պատրաստելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2331. Մանկավարժներ՝ հանրակրթական (տարրական ընդհանուր) ուսումնական հաստատությունների.**

2)**Ստորին խումբ 2332. Մանկավարժներ՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների:**

45. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2331. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ (ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Հանրակրթական (տարրական ընդհանուր) ուսումնական հաստատությունների մանկավարժներն ուսուցանում են նախնական կրթության մեկ կամ մի քանի առարկաներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ուսուցման ծրագրեր պատաստելը, մաթեմատիկական, ընթերցանության, գրելու և այլ ունակություններ զարգացնող առարկաներ դասավանդելը՝ համաձայն հաստատված կամ երաշխավորված ծրագրերի.

2)աշակերտների ուսուցման վերահսկման և առաջադիմության գնահատման համար թեստեր, խնդիրներ և այլ հանձնարարականներ պատրաստելը, հանձնարարելը և արդյունքները ստուգելը, թույլ տրված սխալների վերաբերյալ քննարկումներ կազմակերպելը և խորհուրդներ տալը.

3)աշակերտների արտադասարանական աշխատանքներ կազմակերպելը և հսկելը.

4)աշակերտների անհատական զարգացումը խրախուսելը, դրան վերաբերող հարցերը ծնողների և ուսումնական մասի ղեկավարի հետ քննարկելը.

5)աշակետներին դասարանում և դպրոցի այլ տարածքներում հետևելը.

6)հաշվետվություններ կազմելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակ է. ուսուցիչ՝ տարրական ընդհանուր կրթության:

46. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2332. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները խաղերի կամ ուսուցման միջոցով կազմակերպում են խմբակային կամ անհատական կրթություն՝ երեխաների ֆիզիկական, մտավոր և սոցիալական զարգացումն ապահովելու նպատակով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)երեխաների ֆիզիկական, մտավոր, էմոցիոնալ և սոցիալական զարգացումը խրախուսող աշխատանքներ ծրագրելը և կազմակերպելը.

2)երեխաների լեզվական կարողությունների զարգացումը խրախուսելը՝ պատմվածքներ պատմելու, երգերի, պարերի, զրույցներ և քննարկումներ վարելու միջոցով.

3)երեխաների զարգացմանը հետևելը, դրա միտումները վերլուծելը և արդյունքները ծնողների հետ քննարկելը.

4)երեխաների անվտանգությունն ապահովելու, ծագած հակասությունները լուծելու նպատակով նրանց հսկելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակ է. ուսուցիչ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության:

47. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 234. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Հատուկ կրթության բնագավառի մանկավարժներն ուսուցանում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական, մտավոր, հոգեկան զարգացման արատներով) երեխաներին, անչափահասներին և մեծահասակներին, ինչպես նաև նրանց, ովքեր դժվարություններ են ունենում կրթության որոշակի փուլերում:

2.Նրանց պարտականությունները ներառում են. ուսումնական ծրագրերը ֆիզիկական կամ մտավոր արատներ ունեցող երեխաներին, անչափահասներին և մեծահասակների առանձին խմբերին կամ ուսման մեջ դժվարացող անձանց հարմարեցնելը. մեկ կամ մի քանի առարկա դասավանդելը հատուկ եղանակների և մեթոդների միջոցով (օրինակ՝ կույրերի, խուլերի և համրերի ուսուցումը). ուսումնական գործընթացի կազմակերպմանը, հատուկ ուսուցման ծրագրերի մշակմանը և իրացմանը մասնակցելը, մանկավարժական աշխատանքին առնչվող հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 2340. Մանկավարժներ՝ հատուկ կրթության բնագավառի:**

48. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2340. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Հատուկ կրթության բնագավառի մանկավարժներն ուսուցանում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական, մտավոր, հոգեկան զարգացման արատներով) երեխաներին, անչափահասներին և մեծահասակներին, կամ նրանց, ովքեր դժվարություններ են ունենում կրթության որոշակի փուլերում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական, մտավոր, հոգեկան զարգացման արատներով) երեխաների, անչափահասների և մեծահասակների համար ուսումնական հատուկ ծրագրեր մշակելը, դրանք կատարելագործելը և իրագործելը.

2)դաստիարակչական, արտադասարանական և վերականգնողական աշխատանքներ ծրագրելը.

3)կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման առանձնահատկություններին համապատասխան խմբային և անհատական պարապմունքներ անցկացնելը.

4)սովորողների արատները և նրանց զարգացման մակարդակը հաշվի առնելով՝ շփման որոշակի ձևեր և մեթոդներ ուսուցանելը, դասարանում նրանց աշխատանքը հսկելը.

5)կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական, մտավոր, հոգեկան զարգացման արատներով) երեխաներին օգնելու հատուկ մեթոդներ և եղանակներ կիրառելու հարցերով մանկավարժներին, ծնողներին (նրանց փոխարինող անձանց) խորհրդատվություն մատուցելը.

6)ուսումնական հաստատությունների բուժաշխատողների հետ համագործակցելը, բժիշկ-մասնագետների կատարած հետազոտությունների տվյալներն աշխատանքի մեջ օգտագործելը.

7)ուսուցման գործընթացում հատուկ մեթոդներ և պատկերավոր ձեռնարկներ օգտագործելը՝ հաշվի առնելով հատուկ կրթության վերջին նվաճումները.

8)սովորողների մոտ սեփական ուժերի նկատմամբ վստահություն սերմանելը, առկա արատների հետևանքով կարողությունների սահմանափակումը հաղթահարելու նպատակով որոշակի կիրառական մեթոդների տիրապետելուն օգնելը, իրենց ձեռքբերումները գնահատելու կարողություն ուսուցանելը.

9)գործունեությանն առնչվող հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելը.

10)սովորողներին անհատական հրահանգներ տալը.

11)հաշվետվություններ կազմելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) թարգմանիչ՝ խուլերի.

2) ուսուցիչ- արատաբան.

3) ուսուցիչ- լոգոպեդ.

4) ուսուցիչ՝ կույրերի:

49. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 235. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԱՅԼ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Կրթության բնագավառի այլ մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանք, մշակում են դասավանդման մեթոդներ, ուսումնական ձեռնարկներ և մատուցում խորհրդատվություն, ստուգում են ուսուցիչների աշխատանքն ու որոշակի ուսումնական ծրագրերի կիրառման հետևանքով ստացված արդյունքները և, անհրաժեշտության դեպքում, առաջարկում են դրանցում կատարել փոփոխություններ և լրացումներ, իրականացնում են վերապատրաստման, վերաորակավորման և որակավորման բարձրացման դասընթացներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են. ուսումնական ծրագրի ընթացիկ լրացումների, դասավանդման մեթոդների և ուսումնական գործընթացի այլ կողմերի վերաբերյալ հետազոտություններ կատարելը՝ ներառյալ ուսումնական ձեռնարկները և

լրացումների ու փոփոխությունների անհրաժեշտության մասին խորհրդատվությունը, ուսումնական որոշակի ծրագրի կիրառման պարբերական ստուգումները, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ լրացումներ ու փոփոխություններ առաջարկելը, զեկուցումներ պատրաստելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2351. Մասնագետներ՝ կրթության մեթոդիկայի.**

2)**Ստորին խումբ 2352. Տեսուչներ՝ կրթական հաստատությունների.**

50. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2351. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

1.Կրթության մեթոդիկայի մասնագետները կատարում են հետազոտություններ, տարբեր ուսումնական հաստատությունների համար մշակում են ուսումնամեթոդական նյութեր, ներդնում են ուսուցման նոր մեթոդներ և միջոցներ, խորհրդատվություն են մատուցում այդ հարցերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կրթության մեթոդաբանության վերաբերյալ հետազոտական աշխատանքներ կատարելը, ուսումնական ծրագրերում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, համապատասխան լրացումների և փոփոխությունների վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

2)ուսումնամեթոդական աշխատանքն ուսումնասիրելը և վերլուծելը, այդ աշխատանքի արդյունավետությունը մեծացնելու առաջարկություններ ներկայացնելը.

3)ուսումնամեթոդական փաստաթղթերի և ձեռնարկների մշակումներ կազմակերպելը և իրագործելը, դրանք հաստատման նախապատրաստելը և տարածելը.

4)ուսումնական հաստատությունների աշխատանքի դրական փորձը, ուսուցման առաջավոր տեխնոլոգիաները և միջոցներն ուսումնասիրելը և տարածելը.

5)ուսումնական հաստատությունների մեթոդական կենտրոններ ղեկավարելը, մանկավարժներին ուսումնամեթոդական աշխատանքներում օգնելը և խորհրդատվություն մատուցելը.

6)ուսումնական հաստատությունների աշխատողների որակավորման բարձրացման միջոցառումների կազմակերպմանը մասնակցելը.

7)ուսումնական գործընթացներում տեսալսողական միջոցների և ինտերակտիվ մեթոդների ներդրմանն աջակցելը, դրանց արդյունավետությունը գնահատելը, ներդրման արդյունքները վերլուծելը և տարածելը.

8)փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մեթոդիստ՝ ուսումնական հաստատության.

2) մեթոդիստ՝ ուսումնամեթոդական կենտրոնի.

3) ղեկավար՝ ուսումնամեթոդական կենտրոնի:

51. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2352. ՏԵՍՈՒՉՆԵՐ՝ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Կրթական հաստատությունների տեսուչները ստուգում են դպրոցներում և այլ կրթական հաստատություններում որոշակի ուսումնական ծրագրեր իրագործելու ընթացքում ուսուցիչների կատարած աշխատանքը և ստացված արդյունքները, անհրաժեշտության դեպքում առաջարկում են լրացումներ և փոփոխություններ կատարել այդ ծրագրերում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)դպրոց պարբերաբար տեսչական այցեր կատարելը, դպրոցի ղեկավարության ու ուսուցչական կազմի հետ ուսումնական ծրագրերին, դասավանդման մեթոդիկային, դպրոցի նյութատեխնիկական միջոցներին վերաբերող քննարկումներ կազմակերպելը.

2)ուսուցչի աշխատանքը գնահատելու, դասավանդման մեթոդիկային ծանոթանալու նպատակով դասալսումներ կազմակերպելը.

3)ուսումնական ծրագրերում լրացումներ և փոփոխություններ կատարելու, դասավանդման մեթոդաբանությունը վերանայելու, դպրոցի նյութական միջոցները համալրելու և այլ հարցերի վերաբերյալ դպրոցի ղեկավարությանը առաջարկություններ և հաշվետվություններ ներկայացնելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակ է. տեսուչ՝ դպրոցական:

52. ԵՆԹԱԽՈՒՄԲ 24. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Ֆինանսատնտեսական, մշակույթի և այլ բնագավառի մասնագետները կատարում են հետազոտություններ, մշակում ու կատարելագործում են տեսություններ, հայեցակարգեր և մեթոդներ, ինչպես նաև կուտակած գիտելիքները գործնականում կիրառում են տեղեկատվության տարածման, ձեռնարկատիրական գործունեության, փիլիսոփայության, իրավունքի, հոգեբանության, քաղաքականության, տնտեսության, պատմության, կրոնի, սոցիոլոգիայի, այլ հասարակական գիտությունների, արվեստի և ժամանցի բնագավառներում:

2.Այս ենթախմբում ներառված զբաղմունքներն առանձնանում են կատարվող աշխատանքների բարդության բարձր աստիճանով և պահանջում են աշխատողների բարձր որակավորում, որը բնորոշվում է բարձրագույն մասնագիտական կրթության առկայությամբ, մի շարք դեպքերում՝ նաև գիտական աստիճանով:

3.Այս ենթախմբի մասնագետների պարտականությունները հիմնականում ներառում են. ձեռնարկատիրական գործունեություն կազմակերպելը և ծավալելը. կադրերի հետ աշխատանք տանելը. օրենսդրության կիրառումն ապահովելը. տեղեկատվությունը համակարգելը և պահելը. հետազոտություններ կատարելը և քաղաքական, տնտեսական, իրավաբանական, կրոնական, սոցիալական, կրթական և այլ ուսմունքների, տեսությունների, հայեցակարգերի, համակարգերի և կազմակերպությունների, նրանց պատմական և ընթացիկ հեռանկարի ուսումնասիրության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելը. մարդկանց անհատական և խմբային վարքը, լեզվի զարգացման առանձնահատկություններն ուսումնասիրելը. իրենց իրավասություններին առնչվող հարցերով խորհրդատվություն մատուցելը և կանխատեսումներ մշակելը. գրականության և արվեստի ստեղծագործություններ ստեղծելու կամ կատարելու մտահղացումներ իրագործելը. զանգվածային լրատվամիջոցներով տեղեկատվություն ստանալը և տարածելը. գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը. կրոնական հայեցակարգեր զարգացնելը և մեկնաբանելը, ծեսեր անցկացնելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 241. Մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության և կադրերի.**

2)**Փոքր խումբ 242. Մասնագետներ՝ իրավունքի բնագավառի.**

3)**Փոքր խումբ 243. Մասնագետներ՝ տեղեկատվության և հարակից մասնագիտությունների բնագավառների.**

4)**Փոքր խումբ 244. Մասնագետներ՝ հասարակական և հարակից գիտությունների բնագավառների.**

5)**Փոքր խումբ 245. Գործիչներ՝ գրականության և արվեստի.**

6)**Փոքր խումբ 246. Գործիչներ՝ կրոնական:**

53. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 241. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ

1.Ձեռնարկատիրական գործունեության և կադրերի մասնագետներն ուսումնասիրում, կատարելագործում և կիրառում են ձեռնարկատիրական գործունեության (ֆինանսահաշվապահական, առևտրային, շուկայաբանության), կադրային քաղաքականության և մասնագիտական կողմնորոշման կազմակերպմանն ու իրագործմանն առնչվող մեթոդներ:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. հաշվապահական և ֆինանսավարկային գործունեությունն ուսումնասիրելը, ծրագրելը, կազմակերպելը և իրագործելը. մասնագիտական կողմնորոշման, աշխատանքի տեղավորման, որակավորման բարձրացման, պաշտոնեական առաջխաղացման և այլ հարցերով կադրերի հետ աշխատանք տանելը. շուկայաբանության, գովազդի, նյութատեխնիկական ապահովման ոլորտներում առևտրային գործունեություն ծավալելը. պատենտային օրենսդրությունը կիրառելը. ձեռնարկատիրական գործունեությանը և կադրերի հետ տարվող աշխատանքին առնչվող բոլոր հարցերով խորհրդատվություն մատուցելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2411. Հաշվապահներ և մասնագետներ՝ ֆինանսավարկային.**

2)**Ստորին խումբ 2412. Մասնագետներ՝ կադրերի և մասնագիտական կողմնորոշման.**

3)**Ստորին խումբ 2413. Մասնագետներ՝ առևտրային գործունեության.**

4)**Ստորին խումբ 2419. Մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության և կադրերի, այլ խմբերում չներառված:**

54. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2411. ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ

1.Հաշվապահները և ֆինանսավարկային մասնագետները խորհրդատվություն են տալիս հաշվապահական և ֆինանսավարկային հարցերով, մատուցում են հաշվապահական և վերստուգման ծառայություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հաշվողական տեխնիկայով և ավտոմատացված համակարգերով հաշվապահական հաշվառում կազմակերպելը և կատարելը, համապատասխան հաշվետվություններ կազմելը, դրանք վավերացնելը՝ ղեկավարությանը ներկայացնելու համար.

2)կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունը վերլուծելը, ներտնտեսական հնարավորությունները գնահատելու և հետագա եկամուտներն ու բյուջեն կանխատեսելու և բարելավելու նպատակով առաջարկություններ պատրաստելը.

3)ֆինանսական փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը, դրամական միջոցների հաշվառման, հարկերի վճարման հավաստիությունը վերահսկելու նպատակով ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգելը.

4)անվճարունակության, սնանկության, կեղծումների կասկածի դեպքում ֆինանսական ուսումնասիրություններ կատարելը.

5)ֆինանսավարկային գործունեություն ծավալելը (բանկային, արժութային գործարքներ, խնայողական և ապահովագրական գործի կազմակերպում և այլն).

6)հաշվապահական հաշվառման, հարկման, ֆինանսավարկային գործունեության հարցերով խորհրդատվություն մատուցելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) հաշվապահ.

2) աուդիտոր.

3) հաշվապահ-փորձագետ:

55. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2412. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԿԱԴՐԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ

1.Կադրերի և մասնագիտական կողմնորոշման մասնագետները մասնագիտական ծառայություններ են մատուցում ձեռնարկատիրական գործունեության բնագավառում, որն առնչվում է կադրային քաղաքականությանը (աշխատողներին վարձելը, նրանց պաշտոնեական առաջխաղացումը, ուսուցումը, վերապատրաստումը, զբաղվածության վերլուծությունը, մասնագիտական կողմնորոշումը և այլն):

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կադրերի ընտրության, տեղաբաշխման, որակավորման բարձրացման, խրախուսման, պաշտոնեական առաջխաղացման և այդօրինակ այլ հարցերով կազմակերպություններում կադրերի հետ տարվող աշխատանք կազմակերպելը և կատարելը.

2)երիտասարդության և մեծահասակների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի տեղավորման աշխատանքներ կազմակերպելը և կատարելը, թեստավորելը՝ հաշվի առնելով տարիքային և հոգեֆիզիկական հատկանիշերը, զանազան տեղեկատուներ մշակելը և տարածելը.

3)կադրերի վերապատրաստում, որակավորման բարձրացում և վերաորակավորում կազմակերպելը.

4)մասնագիտական կողմնորոշման, զբաղվածության բնագավառներում գիտահետազոտական աշխատանքներ կատարելը, մասնագիտությունների դասակարգման, տեղեկագրերի, կադրերի պատրաստման և օգտագործման բարելավման մեթոդական ուղեցույցներ մշակելը.

5)մասնագիտական կողմնորոշման, որակավորման բարձրացման, կադրերի վերապատրաստման, որակավորման բարձրացման, վերաորակավորման և այլ հարցերով խորհրդատվություն մատուցելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մասնագետ՝ կադրերի վերապատրաստման.

2) վերլուծաբան՝ մասնագիտական զբաղվածության.

3) խորհրդատու՝ մասնագիտական կողմնորոշման:

56. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2413. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1.Առևտրային գործունեության մասնագետները մասնակցում են նյութատեխնիկական մատակարարման, արտադրանքի սպառման, ծառայությունների իրացման գործընթացներ կազմակերպելուն և իրագործելուն, կատարում են շուկայաբանական հետազոտություններ և խորհրդատվություն են մատուցում այդ հարցերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)նյութատեխնիկական մատակարարման ծրագրմանը և կազմակերպմանը մասնակցելը, պայմանագրային պարտավորությունների կատարման, հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի և սարքավորումների ստացման և իրացման վերահսկողություն ապահովելը.

2)նյութական միջոցներին և պատրաստի արտադրանքին ներկայացվող պահանջները և չափորոշիչներին, տեխնիկական պայմաններին, պայմանագրերին և մյուս նորմատիվային փաստաթղթերին դրանց որակի համապատասխանությունը որոշելը, մատակարարված անորակ ապրանքների վերաբերյալ բողոքներ կազմելը, պատվիրատուների բողոքների պատասխանները պատրաստելը.

3)ապրանքների իրացումն ընդլայնելու, սպառողական պահանջարկի վրա ազդելու նպատակով ապրանքների և ծառայությունների շուկայի համալիր ուսումնասիրությունը.

4)որոշակի ապրանքների (ծառայությունների) արտադրության և դրանց գների ծրագրման վերաբերյալ առաջարկություններ պատրաստելը՝ շուկայում իրավիճակի փոփոխությանը համապատասխան.

5)ապրանքի (ծառայության) իրացման կազմակերպմանը (տեղափոխմանը, պահեստավորմանը, սպառողին հասցնելուն) մասնակցելը.

6)սպասարկման ծրագրմանը և կազմակերպմանը մասնակցելը.

7)գովազդային միջոցառումներ մշակելը.

8)շուկայաբանության և ձեռնարկատիրական գործունեության այլ հատվածներում առկա հարցերով խորհրդատվությունը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մասնագետ՝ շուկայաբանության.

2) մասնագետ՝ գովազդի.

3) ապրանքագետ:

57. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2419. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբը ներառում է այն մասնագետներին, ովքեր զբաղված են գյուտերի մասին հայտերի ուսումնասիրությամբ, պատենտների ձևակերպմամբ, տնային տնտեսություն վարելու հարցերով խորհրդատվությամբ, հասարակության հետ կապեր հաստատելու աշխատանքներով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պատենտավորման հարցերով խորհրդատվություն մատուցելը, գյուտերի մասին հայտերը և փաստաթղթերը ձևակերպելը.

2)արտահանվող արտադրանքի պատենտային մաքրությունն ապահովելը և դրա իրավական պաշտպանությունը.

3)գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների լիցենզիաների գնման կամ վաճառքի վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով պատենտավորման հետազոտություններ կատարելը.

4)տնային տնտեսությունը խնայողաբար վարելու հարցերով խորհրդատվություն մատուցելը.

5)հասարակության հետ կապերի վերաբերյալ ծրագրեր կազմելը և իրագործելը, որոնք կներառեն կազմակերպությունների կապերն առանձին անձանց կամ հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես նաև լրատվամիջոցների հետ գովազդ ստեղծելու նպատակով կապեր հաստատելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ճարտարագետ՝ պատենտավորման և գյուտարարական աշխատանքների.

2) տնտեսագետ՝ տնային տնտեսության վարման.

3) մասնագետ՝ հասարակության հետ կապերի:

58. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 242. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Իրավունքի բնագավառի մասնագետներն իրավաբանական գիտությունների ոլորտում կատարում են հետազոտություններ՝ նպաստելով իրավական համակարգի զարգացմանը, օրենսդրության և իրավունքի իրացման բարելավմանը. իրականացնում են օրինականության իրազեկման աշխատանքներ՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ. ներկայացնում են վստահորդի (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց) շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, դատարաններում, հետաքննության կամ նախաքննության մարմիններում, վարում են դատական գործընթացներ. աջակցում են հասարակության մեջ իրավունքի գերակայության գաղափարի հաստատմանը և իրավական գիտելիքների տարածմանը:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. իրավասու պետական մարմիններին օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը. դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ, պայմանագրեր և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր կազմելը, տարբեր իրավախախտումների մասին քննչական, դատական, դատախազական մարմիններին ներկայացնելու համար նյութեր նախապատրաստելը, հանրությանը իրավական ծառայություններ մատուցելը, քննարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական փորձագիտական եզրակացություն տալը. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց շահերը ներկայացնելը կամ պաշտպանելը, քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին մասնակցելը: Որոշ դեպքերում նրանց պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2421. Իրավաբաններ.**

2)**Ստորին խումբ 2422. Դատավորներ.**

3)Ստորին խումբ 2429. Մասնագետներ՝ իրավունքի բնագավառի, այլ խմբերում չներառված:

59. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2421. ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐ

1.Իրավաբաններն իրավաբանական գիտությունների ոլորտում կատարում են հետազոտություններ՝ նպաստելով իրավական համակարգի զարգացմանը, օրենսդրության և իրավունքի իրացման բարելավմանը, աջակցում են հասարակության մեջ իրավունքի գերակայության գաղափարի հաստատմանը, իրավական գիտելիքների տարածմանը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)իրավասու պետական մարմիններին օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

2)դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ, պայմանագրեր և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր կազմելը.

3)քննարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական փորձագիտական եզրակացություն տալը.

4)տարբեր իրավախախտումների մասին քննչական, դատական, դատախազական մարմիններին ներկայացնելու համար նյութեր նախապատրաստելը.

5)հանրությանը իրավական ծառայություններ մատուցելը.

6)քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին մասնակցելը.

7)քրեական գործերով որպես պետական մեղադրող հանդես գալը.

8)դատարանում քրեական գործերով պաշտպանություն իրականացնելը.

9)դատարանում և վեճեր լուծող այլ մարմիններում՝ որպես ներկայացուցիչ կամ պաշտպան հանդիսանալը.

10)օրենքով սահմանված կարգով վստահորդի շահերից բխող ապացույցներ ձեռք բերելը եւ ներկայացնելը.

11)մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ օրինականության իրազեկման աշխատանքներն իրականացնելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) փաստաբան.

2) իրավաբան:

60. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2422. ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

1.Դատավորները մասնակցում են դատաիրավական համակարգին վերաբերող օրենսդրության զարգացմանն ուղղված գործընթացին, ուսումնասիրում և վերահսկում են քննության մեջ կամ բողոքարկման փուլում գտնվող գործը. պաշտոնական մարմինների բաց լսումներում, այդ մարմինների պաշտոնատար անձանց խնդրանքով, հանդես են գալիս իրավունքի, իրավական համակարգի, արդարադատության իրականացման հարցերին առնչվող խորհրդատվությամբ՝ այն չափով, որքանով դա կընդունվի որպես դատավորի իրավաբանական գիտելիքների և փորձի օգտագործում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)օրենքով սահմանված կարգով դատական նիստեր վարելը.

2)գործեր քննության առնելը, հայցվորից, պատասխանողից, վկաներից և դատավարության այլ մասնակիցներից բացատրություններ ու ցուցմունքներ ստանալը.

3)ապացույցների հետազոտում կատարելը.

4)Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում եւ սահմաններում, որոշումներ, վճիռներ, դատավճիռներ (դատական ակտեր) կայացնելը.

5)իրավունքի, իրավական համակարգի, արդարադատության իրականացման հարցերին առնչվող խորհրդատվությամբ հանդես գալը.

6)մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ օրինականության քարոզչություն իրականացնելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) դատավոր.

2) դատարանի անդամ.

3) նախագահ՝ դատական նիստի:

61. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2429. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբը ներառում է այն մասնագետներին, ովքեր հիմնարկներում և կազմակերպություններում իրագործում են իրավական բնույթի աշխատանքների մեթոդական ղեկավարումը, իրավական գործընթացների ուսումնասիրումը, վերլուծությունը, իրավական ակտերի նախագծերի մշակումը, գործերի քննությունը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հիմնարկներում և կազմակերպություններում իրավական բնույթի աշխատանքների մեթոդական ղեկավարումն իրագործելը, կառուցվածքային ստորաբաժանումներին, հասարակական կազմակերպություններին իրավական հարցերով խորհրդատվություն տրամադրելը.

2)դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ, պայմանագրեր և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր կազմելը.

3)իրավասու պետական մարմիններին օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

4)գողության, գերածախսերի, անորակ արտադրանքի և այլ իրավախախտումների վերաբերյալ նյութեր նախապատրաստելը և դրանք իրավապահ մարմիններին փոխանցելը.

5)վարույթում գտնվող դատական գործեր հաշվառելը և պահպանելը.

6)համապատասխան մարմնի գործունեությանը վերաբերող իրավական ակտերի հավաքման և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կիրառման աշխատանքների կազմակերպումը.

7)հիմնարկի, կազմակերպության կողմից մշակված կամ հիմնարկի, կազմակերպության քննարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական փորձագիտական եզրակացության պատրաստման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

8)վարչական, տնտեսական և իրավական այլ հարցերով խորհրդատվական բնույթի ծառայություններ մատուցելը.

9)քաղաքացիական և քրեական գործերով քննություն կատարելը.

10)փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով նոտարական գործողություններ իրականացնելը.

11)նոտարական գործողություններ իրականացնելիս անձանց օգնություն ցույց տալը, նրանց իրավունքները եւ օրինական շահերը իրականացնելու նպատակով նրանց իրավունքները եւ պարտականությունները պարզաբանելը.

12)կողմերին՝ նրանց ներկայացրած գործարքների նախագծերի իմաստն ու նշանակությունը պարզաբանելը եւ դրանց բովանդակության համապատասխանությունը կողմերի իրական մտադրությանը ստուգելը.

13) այլ աշխատողներին ղեկավարելը.

14)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) նոտար.

2) քննիչ.

3) իրավախորհրդատու:

62. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 243. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Տեղեկատվության և հարակից մասնագիտությունների բնագավառների մասնագետները հավաքում, պահպանում և սպասարկում են արխիվների, գրադարանների, թանգարանների, գեղարվեստական պատկերասրահների և այդօրինակ այլ կազմակերպությունների հավաքածուները, ինչպես նաև պաշտոնական փաստաթղթերը:

2.Նրանց հիմնական պարտականություններն են. հետազոտություններ կատարելը, պատմական, գիտական և գեղարվեստական արժեք ներկայացնող արխիվային փաստաթղթերը, նմուշները հավաքելը, գնահատելը և դրանց պահպանումն ապահովելը. թանգարաններում և այդօրինակ հաստատություններում ցուցահանդեսներ, ցուցադրումներ կազմակերպելը. ձեռագիր և հրապարակված նյութերի պարբերական հավաքածուներ մշակելը և պահպանելը, ընթերցողների համար գրադարանների մատչելիությունն ապահովելը. պաշտոնական փաստաթղթերը համակարգելը: Որոշ դեպքերում պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողների ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 2431. Արխիվագետներ, թանգարանագետներ և մասնագետներ՝ հարակից.**

2)**Ստորին խումբ 2432. Գրադարանավարներ, մատենագետներ և մասնագետներ՝ հարակից:**

63. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2431. ԱՐԽԻՎԱԳԵՏՆԵՐ, ԹԱՆԳԱՐԱՆԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Արխիվագետները, թանգարանագետները և հարակից մասնագետները կատարում են հետազոտություններ, հավաքում, գնահատում են պատմական, գիտական կամ գեղարվեստական արժեք ներկայացնող առարկաներ ու փաստաթղթեր և ապահովում դրանց պահպանությունը, իրականացնում են փաստաթղթերի համալրման, փորձագիտական արժեքավորման գիտագործնական հարցերին նվիրված մեթոդական փաստաթղթերի մշակումը և պատրաստումը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արխիվագիտության և թանգարանային գործի բնագավառում գիտական հետազոտություններ կատարելը, գիտական զեկույցներով և դասախոսություններով հանդես գալը, գիտական աշխատություններ, հոդվածներ, ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ գրախոսելը.

2)գրադարանային, թանգարանային և արխիվային գործին վերաբերող խորհրդատվություն մատուցելը.

3)փաստաթղթերը, արվեստի ստեղծագործությունները, մյուս ցուցանմուշները և ֆոնդերը գիտականորեն նկարագրելը, համակարգելը, դրանց հաշվառումը և պահպանումն ապահովելը.

4)պատմական և գեղարվեստական նշանակության թանգարանային և արխիվային ցուցանմուշների և ֆոնդերի փորձագիտական գնահատում կատարելը.

5)վերականգնման ենթակա ցուցանմուշներ հայտնաբերելը, ֆոնդերի պահպանությունն ապահովող կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելը.

6)պահուստարանի աշխատանքները կազմակերպելուն մասնակցելը, վերականգնողական աշխատանքների կատարման ժամանակացույց նախապատրաստելը, անհրաժեշտ նյութեր և սարքեր ստանալու հայտեր կազմելը.

7)ֆոնդերի պահպանության կանոնների և կարգի մշակմանը մասնակցելը, դրանց սպասարկման համար մեթոդական ուղեցույցներ ստեղծելը.

8)տեղեկատվական զանազան նյութեր և փաստաթղթեր մշակելը, դրանք տպագրության պատրաստելը.

9)ցուցահանդեսներ և ցուցադրություններ կազմակերպելը.

10) թանգարանային մենեջմենթ, գովազդ և մարքեթինգ իրականացնելը.

11) գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

12) այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) արխիվագետ.
2) պահոցի՝ ֆոնդերի.
3) պահոցի՝ ցուցանմուշների.
4) փորձագետ՝ թանգարանային և ցուցահանդեսային նմուշների:

64. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2432. ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐ, ՄԱՏԵՆԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Գրադարանավարները, մատենագետները և հարակից մասնագետները հավաքում, համակարգում և սպասարկում են գրառված ու հրապարակված նյութերը և կառավարչական փաստաթղթերը, զբաղվում են դրանց վերականգնմամբ և տեղեկատվություն են ապահովում՝ ըստ հայտերի:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տարբեր նյութական կրիչներով տպագիր նյութեր համալրելը, գրանցելը, հաշվառելը, մշակելը, դասակարգելը, գրացուցակագրելը, բաշխելը, սպասարկելը և պահպանելը.

2)տեղեկատու մատենագիտական աշխատանքներ կազմակերպելը, տեղեկույթ որոնելը, ընտրելը և վերլուծելը, դրանք ավանդական կամ էլեկտրոնային եղանակով տրամադրելը.

3)համակարգչային տեխնիկայով տպագիր արտադրանք և փաստաթղթային տեղեկատվություն մշակելը, տեղեկատվության մշակման նորագույն տեխնոլոգիաներ ներդնելը.

4)գրադարանային գործընթացների ավտոմատացմանը, ավտոմատացված տեղեկատվական համակարգերի շահագործմանը, կիրառմանը և տեղեկատվական ապահովման մասով դրանց կատարելագործմանը մասնակցելը.

5)գիտական հետազոտություններ կատարելը, դասախոսություններ կարդալը, գիտագործնական սեմինարներ, խորհրդակցություններ, կոնֆերանսներ, գիտաժողովներ կազմակերպելը և անցկացնելը, դրանց մասնակցելը.

6)մատենագրության, տեղեկատվության, գործավարության բնագավառների մեթոդական ձեռնարկներ մշակելը, փաստաթղթերի միասնականացման, չափորոշիչների մշակման աշխատանքներ կատարելը.

7)գրադարանների և գիտատեխնիկական տեղեկատվության մարմինների զարգացման ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, դրանց գործունեության համակարգմանը մասնակցելը.

8)գրադարաններից և այլ տեղեկատվական ֆոնդերից օգտվողներին սպասարկելը, նրանց համար տեղեկանքներ, վերլուծություններ և այլ փաստաթղթեր կազմելը, նրանց հետաքրքրող տեղեկատվության առկայությանը և ստացմանը, ֆոնդերից օգտվելու կանոններին վերաբերող խորհրդատվություն մատուցելը.

9)գիտամեթոդական աշխատանքներ կազմակերպելը, խորհրդատվություն մատուցելը, գրականագիտական և մատենագիտական նյութերի ձեռնարկներ կազմելը, խմբագրելը, հրատարակելը.

10)տպագիր նյութերի մշակված օրինակներ վերականգնելը, զտելը, օտարելը.

11)գրադարանային ծառայություններից օգտվողների՝ հատկապես մանկապատանեկան տարիքի շահառուների հակումների, հմտությունների, կարողությունների զարգացմանը նպաստող խմբակների և ստուդիաների աշխատանքներին մասնակցելը.

12)գրադարանային կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման աշխատանքներին մասնակցելը.

13) այլ աշխատողներին ղեկավարելը.

14)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) մատենագետ.
2) գրադարանավար.
3) փաստաթղթավար.
4) ճարտարագետ՝ գիտատեխնիկական տեղեկատվության:

65. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 244. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Հասարակական և հարակից գիտությունների բնագավառների մասնագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, մշակում և կատարելագործում են հայեցակարգեր և մեթոդներ, իրենց գիտելիքները գործնականում կիրառում են տնտեսագիտության, սոցիոլոգիայի, պատմության, մարդաբանության, փիլիսոփայության, հոգեբանության, լեզվաբանության բնագավառներում և մատուցում են սոցիալական ծառայություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են. իրավիճակը վերլուծելը և տնտեսության ու քաղաքականության մեջ, հասարակական հարաբերությունների բնագավառում գործընթացները կանխատեսելը, համապատասխան հիմնախնդիրները լուծելու նախագծեր ու ծրագրեր մշակելը. հասարակության սոցիալական կառուցվածքը, մարդկության ծագումը և զարգացումը հետազոտելը և նկարագրելը. մարդկանց անհատական և խմբային վարքագիծն ուսումնասիրելը. անցյալի իրադարձությունները և գործունեությունը, սոցիալ-տնտեսական կառուցվածքների, մշակութային և քաղաքական ինստիտուտների և շարժումների զարգացումը հետազոտելը և նկարագրելը. լեզուների զարգացումն ուսումնասիրելը և տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջև հնարավոր կապ կազմակերպելը. սոցիալական ծառայություններ մատուցելը. գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1) **Ստորին խումբ 2441. Տնտեսագետներ.**

2) **Ստորին խումբ 2442. Հասարակագետներ, մարդաբաններ և մասնագետներ՝ հարակից.**

3) **Ստորին խումբ 2443. Փիլիսոփաներ, պատմաբաններ և քաղաքագետներ.**

4) **Ստորին խումբ 2444. Բանասերներ և թարգմանիչներ.**

5) **Ստորին խումբ 2445. Հոգեբաններ.**

6) **Ստորին խումբ 2446. Մասնագետներ՝ սոցիալական բնագավառի:**

66. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2441. ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐ

1.Տնտեսագետները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ, կատարելագործում և զարգացնում են տնտեսագիտական տեսություններ և մեթոդաբանություններ, դրանք գործնականում կիրառում են ազգային տնտեսության կառավարման բնագավառում, այդ հարցերով մատուցում են խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տնտեսագիտական տեսության, ազգային և միջազգային տնտեսության համալիր խնդիրների, շուկայի, բյուջեի եկամուտների և ծախսերի, գնագոյացման, առևտրի, աշխատանքի տնտեսագիտության, գյուղատնտեսության, բնօգտագործման և այլ բնագավառներում գիտական հետազոտություններ կատարելը.

2)հետազոտությունների արդյունքները, վիճակագրական տվյալները վերլուծելը, տնտեսության վրա արդյունավետ ազդեցության ծրագրեր և առաջարկություններ, սպասվող փոփոխությունների ու տնտեսական միտումների զարգացման կանխատեսումներ մշակելը և դրանք կառավարությանը ներկայացնելը.

3)հիմնարկներում և կազմակերպություններում տնտեսագիտական աշխատանքներ կատարելը, նյութական, աշխատանքային և ֆինանսական ծախսեր հաշվարկելը, կատարվող աշխատանքների արդյունավետությունը որոշելը.

4) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծություն կատարելը.

5)հիմնարկների, կազմակերպությունների կառավարմանը և տնտեսական փաստաթղթերի կատարելագործմանը, զարգացման ծրագրերի և կանխատեսումների մշակմանը մասնակցելը.

6)տնտեսագիտական տեսությունների և զանազան վիճակագրական մեթոդների կիրառմամբ տնտեսական տվյալներ հավաքելը, վերլուծելը և մեկնաբանելը.

7)հաշվի առնելով անցյալի, ներկայի և ապագայի տնտեսագիտական գործոնները և միտումները՝ տնտեսական քաղաքականության ընտրության, տնտեսական զարգացումների վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

9) այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) խորհրդատու՝ տնտեսագիտական հարցերով.

2) էկոնոմետրիստ.

3) տնտեսագետ.

4) փորձագետ՝ տնտեսագիտական հարցերի:

67. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2442. ՀԱՍԱՐԱԿԱԳԵՏՆԵՐ, ՄԱՐԴԱԲԱՆՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1. Հասարակագետները, մարդաբանները և հարակից մասնագետները հետազոտում և նկարագրում են հասարակության սոցիալական կառուցվածքը, մարդկության ծագումն ու զարգացումը, շրջակա միջավայրի և մարդու փոխադարձ կապը, գործնականում կիրառում են ստացված գիտելիքները և այդ հարցերով մատուցում են խորհրդատվություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մարդկային հասարակության ծագման, առանձին սոցիալական ինստիտուտների, սոցիալական խմբերի և հանրույթների ձևավորման և պատմական զարգացման, անհատի և հասարակության հարաբերությունների, մարդկանց զանգվածային վարքագծի օրինաչափությունների և այլ հարցերով հետազոտություններ կատարելը.

2)մշակութային և սոցիալական ինստիտուտների փոփոխվող բնութագրերն ուսումնասիրելու միջոցով մարդկության ծագմանը և զարգացմանը հետևելը.

3)անցյալի նյութական մնացորդները (բնակարաններ, տաճարներ, գործիքներ, իրեր, դրամ, զենք կամ քանդակներ) ուսումնասիրելու միջոցով մարդկության զարգացման ընթացքն ուսումնասիրելը.

4)տարածաշրջանների և գոտիների ֆիզիկական ու կլիմայական կողմերն ուսումնասիրելը, տնտեսական, սոցիալական և մշակութային գործունեության հետ այդ գործոնների կապը սահմանելը.

5)բնակչության խմբերի և տարածաշրջանների համար, ինչպես նաև շուկայի զարգացմանն ուղղված տնտեսական և սոցիալական քաղաքականություն ձևավորելիս՝ ստացված արդյունքների գործնական կիրառման հարցերով խորհրդատվություն մատուցելը.

6)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

7) այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մարդաբան.

2) հնէաբան.

3) աշխարհագրագետ.

4) հասարակագետ:

68. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2443. ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐ, ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐ

1.Փիլիսոփաները, պատմաբանները և քաղաքագետները գիտական հետազոտություններ են կատարում փիլիսոփայության, պատմության, մշակութային և քաղաքական ինստիտուտների ու շարժումների զարգացման բնագավառներում, ձեռք բերված գիտելիքները պետական ներքին և արտաքին քաղաքական որոշումների համար դարձնում մատչելի, խորհրդատվություն են մատուցում այդ հարցերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)փիլիսոփայական տեսությունների, հայեցակարգերի և սկզբունքների բնագավառում հետազոտություններ կատարելը (հիմնականում դատողությունների միջոցով), դրանք

զարգացնելը և հասարակության զարգացման արդի փուլին համապատասխան մեկնաբանելը.

2)պատմական գրառումների, փաստաթղթերի, հնագիտական և մարդաբանական գտածոների և այլնի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա մարդկային հասարակության, առանձին երկրների պատմական զարգացումը հետազոտելը՝ ներառյալ տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ բնագավառները.

3)պատմական կամ հնագիտական նյութեր հայթայթելը, դրանց իսկությունը ստուգելը, որոշակի ժամանակաշրջանի, երկրի, տարածաշրջանի կամ զարգացումների (տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն) պատմությունը հետազոտելը և նկարագրելը.

4)ժամանակակից քաղաքական ինստիտուտներն ուսումնասիրելը և դրանց մասին տարբեր աղբյուրներից տվյալներ հավաքելը՝ ներառյալ կառավարության և քաղաքական կուսակցությունների պաշտոնատար, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց հետ զրույցները.

5)գյուտերը և եզրակացությունները պետական քաղաքական կուսակցությունների կամ այլ կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց՝ հրատարակելու կամ օգտագործելու համար տրամադրելը.

6)արտաքին և ներքին քաղաքականության մշակմանը վերաբերող խորհրդատվություն մատուցելը.

7)փիլիսոփայությանը, պատմությանը և քաղաքականությանը վերաբերող խորհրդատվություն մատուցելը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ կազմելը.

9) այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) պատմաբան.

2) փիլիսոփա.

3) քաղաքագետ:

69. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2444. ԲԱՆԱՍԵՐՆԵՐ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ

1.Բանասերները և թարգմանիչներն ուսումնասիրում են լեզվի ծագումը, զարգացումն ու կառուցվածքը, ինչպես նաև գրավոր և բանավոր թարգմանություններ են կատարում մեկ լեզվից մյուսը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հին լեզուների և ժամանակակից լեզվախմբերի փոխադարձ կապերը, բառերի, քերականական և լեզվական ձևերի ծագումն ու զարգացումն ուսումնասիրելը, ստացված արդյունքները ներկայացնելը.

2)լեզուների, քերականությունների, բառարանների լեզվական դասակարգումների համակարգերի ուսումնասիրության գիտական աշխատանքներ, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ մշակելը, գրախոսելը և հրատարակման պատրաստելը.

3)մեկ լեզվից մյուսը գրավոր թարգմանություն կատարելը, բնագրի ճշգրիտ նշանակությունը պահպանելը, իրավաբանական, տեխնիկական, հասարակական-քաղաքական, տնտեսական, գիտական և այլ աշխատանքներ, գրական ստեղծագործություններ ճիշտ թարգմանելը, արտահայտությունների, տերմինների, բնագրի ոգու և ոճի հնարավորինս ճշգրիտ փոխանցումն ապահովելը.

4)թարգմանությունների արդյունավետությունն ու որակը բարձրացնելու և կատարելագործելու նպատակով համակարգիչներ և տեխնիկական այլ միջոցներ օգտագործելու մեթոդիկաներ մշակելը և զարգացնելը, մեքենայական լեզուների մշակմանը մասնակցելը.

5)մեկ լեզվից մյուսը բանավոր թարգմանություն կատարելը, հատկապես պաշտոնական հանդիպումների, խորհրդակցությունների, նիստերի և այդ կարգի այլ միջոցառումների ժամանակ, բնագրի նշանակության և ոգու հնարավորինս ճշգրիտ փոխանցում ապահովելը.

6)գիտության, տեխնիկայի, տնտեսության և այլ բնագավառներում սահմանումներ և հասկացություններ կատարելագործելը, տերմինները միասնականացնելու աշխատանքներ կատարելը.

7)լեզվագիտական զանազան հարցերով խորհրդատվությունը.

8)գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

9) այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) լեզվաբան.

2) թարգմանիչ.

3) բանասեր:

70. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2445. ՀՈԳԵԲԱՆՆԵՐ

1.Հոգեբանները կատարում են գիտահետազոտական աշխատանքներ և ուսումնասիրում են հոգեկան գործընթացներ և մարդկանց (առանձին անձանց և խմբերի) վարքագիծը, մատուցում են խորհրդատվություն և ձեռք բերված գիտելիքները կիրառում սոցիալական, կրթական և մասնագիտական գործընթացներ կարգավորելու և անհատի զարգացումն ապահովելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հոգեկան, ֆիզիկական և այլ բնութագրեր (ինչպիսիք են՝ մտածողությունը, հնարավորությունները, հակումները, ընդունակությունները և այլն) որոշելու համար թեստեր ծրագրելը և թեստավորելը, արդյունքները գնահատելը և մեկնաբանելը.

2)անհատի մտածողության և վարքի վրա ժառանգականության, սոցիալական, մասնագիտական և այլ գործոնների ազդեցությունը վերլուծելը.

3)առանձին անձանց ու խմբերի հետ բուժական զրույցներ անցկացնելը և այդօրինակ ծառայություններ ու խորհրդատվություն մատուցելը.

4)անհրաժեշտ շփումներ պահպանելը (օրինակ՝ ընտանիքի անդամների, ուսումնական հաստատությունների ղեկավարների, գործատուների հետ), ինչպես նաև հիմնախնդիրների հնարավոր լուծմանը և կարգավորմանը վերաբերող խորհուրդներ տալը.

5)ախտորոշման ժամանակ հոգեբանական գործոններն ուսումնասիրելը, հոգեկան հիվանդությունները, ինչպես նաև հուզական և անձնական խանգարումները կանխարգելելը և բուժելը, հարակից մասնագետների հետ այդ հարցերով խորհրդակցելը.

6)կրթական հաստատություններում սովորողների առողջ հոգեբանության ապահովման աշխատանքներ կատարելը, նրանց հոգեբանական զարգացմանը և հոգեբանության շտկմանը նպաստող ուսումնական ծրագրեր մշակելը և իրագործելը, ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող երեխաներին հոգեբանասոցիալական աջակցություն ցուցաբերելը.

7)կրթական հաստատություններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող աշխատանքներ կատարելը.

8)աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու բարենպաստ աշխատանքային պայմաններ ստեղծելու նպատակով աշխատողների աշխատանքային գործունեության վրա տնտեսական, կազմակերպչական և այլ գործոնների հոգեբանական ազդեցությունն ուսումնասիրելը.

9)աշխատողների հոգեբանական բնութագրեր կազմելը, նրանց հոգեբանական համատեղելիության վերաբերյալ կազմակերպության ղեկավարներին առաջարկություն ներկայացնելը.

10) գիտական փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելը.

11) այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակ է՝ հոգեբան (ըստ բնագավառների՝ մանկավարժություն, բժշկություն և այլն):

71. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2446. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Սոցիալական բնագավառի մասնագետներն ուսումնասիրում են սոցիալական օգնության կարիք ունեցող մարդկանց խմբերը, ծրագրում, կազմակերպում և մատուցում են սոցիալական ծառայություններ:

2. Նրանց պարտականությունները ներառում են.

1)բնակչության՝ սոցիալական օգնության կարիք ունեցող խմբերի (կենսաթոշակառուների, հաշմանդամների, անապահով ընտանիքների և այլն) սոցիալական պաշտպանության պետական քաղաքականություն վարելը.

2)անձնական և սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում առանձին անհատներին և ընտանիքներին օգնելը.

3)շահառուներին անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելը և իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ նրանց խորհրդատվություն մատուցելը.

4)շահառուների վիճակը վերլուծելը և նրանց խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ առաջարկելը.

5)գործերը դատարան կամ իրավական այլ ատյաններ տալու համար փաստաթղթեր հավաքելը և զեկույցներ կազմելը.

6)սոցիալական ապահովության ծառայություններ ծրագրելը, գնահատելը, կատարելագործելը և զարգացնելը.

7)օրինախախտումների աճի կանխարգելման, պատիժ կրող (կրած) անձանց սոցիալական հարմարեցման, երիտասարդական ակումբներում, հասարակական կենտրոններում և այդօրինակ այլ կազմակերպություններում վերականգնողական և կրթական գործունեություն ծավալելը.

8)հոգեկան կամ ֆիզիկական արատներ ունեցող մարդկանց օգնելը՝ անհրաժեշտ բուժում ստանալու և հասարակությանն ինտեգրվելու գործընթացը բարելավելու նպատակով.

9)տանը ծառայությունների մատուցումը ծրագրելը և կազմակերպելը.

10)միայնակ, ծեր և անաշխատունակ քաղաքացիներին բացահայտելը, նրանց անհրաժեշտ աջակցության բնույթը և ծավալը որոշելը, այդ աջակցությունը կազմակերպելը և հսկելը.

11)ոչ բարենպաստ ընտանիքների հետ աշխատանքներ տանելը, այդ ընտանիքների՝ օգնության կարիք ունեցող երեխաներին բացահայտելը, նրանց իրավունքները պաշտպանելը, անհրաժեշտության դեպքում խնամակալական կազմակերպություններում նրանց տեղավորելը և հոգեբանախորհրդատվական աջակցություն ցուցաբերելը.

12)վարքագծի շեղումներ ունեցող երեխաներին հատուկ կրթական հիմնարկներում դաստիարակելը և ուսուցանելը.

13) այլ աշխատողներին ղեկավարելը.

14)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) սոցիալական աշխատող՝ մանկատան.

2) սոցիալական աշխատող՝ կազմակերպության:

72. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 245. ԳՈՐԾԻՉՆԵՐ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ

1.Գրականության և արվեստի գործիչները ստեղծում կամ կատարում են գրական, դրամատիկական, երաժշտական և արվեստի այլ ստեղծագործություններ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. գրական աշխատանք կատարելը. գրական և արվեստի այլ ստեղծագործությունների արժանիքները գնահատելը. ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկատվություն հավաքելը և դրանք նկարագրելը. արձաններ, գեղանկարներ, փորագրություններ և ծաղրանկարներ ստեղծելը. գեղանկարներ վերականգնելը. երաժշտություն հեղինակելը և կատարելը. ներկայացումներ, պարեր, ֆիլմեր բեմադրելը, դրանց մասնակցելը: Պարտականությունները կարող են ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1) **Ստորին խումբ 2451. Գրողներ, լրագրողներ և այլ մասնագետներ.**

2) **Ստորին խումբ 2452. Քանդակագործներ, նկարիչներ և մասնագետներ՝ հարակից.**

3) **Ստորին խումբ 2453. Կոմպոզիտորներ, երաժիշտներ և երգիչներ.**

4) **Ստորին խումբ 2454. Բեմադրողներ՝ պարերի և պարողներ.**

5) **Ստորին խումբ 2455. Ռեժիսորներ ու դերասաններ՝ կինոյի և թատրոնի, և մասնագետներ՝ հարակից:**

73. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2451. ԳՐՈՂՆԵՐ, ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ

1.Գրողները, լրագրողները և այլ մասնագետները ստեղծում են գեղարվեստական ստեղծագործություններ՝ հրատարակելու կամ թատերական ներկայացումներ բեմադրելու համար, գնահատում են գրականության և արվեստի այլ ստեղծագործությունների ու գեղարվեստական աշխատանքների արժանիքները, ինչպես նաև գրառում և խմբագրում են նորություններ, պատմվածքներ և մեկնաբանություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հրապարակման կամ թատերական բեմադրությունների համար գեղարվեստական գործեր մտահղանալը և ստեղծելը.

2)զանազան սցենարներ ստեղծելը և թատրոնում, կինոյում, ռադիոյում ու հեռուստատեսությունում բեմադրելու համար ծրագրեր պատրաստելը.

3)գրական, երաժշտական և արվեստի այլ ստեղծագործությունների արժանիքները, ինչպես նաև դերասանների աշխատանքը գնահատելը և նկարագրելը.

4)նորությունների և ընթացիկ գործերի մասին մեկնաբանություններ և հաղորդագրություններ կազմելը՝ թերթերում, պարբերականներում հրապարակելու, ռադիոյով կամ հեռուստատեսությամբ հաղորդելու համար.

5)քաղաքական և հասարակական այլ գործիչների հետ հարցազրույց վարելը՝ ներառյալ հեռուստատեսության կամ ռադիոյի համար ձայնագրված անհատական հարցազրույցները.

6)առաջնորդող հոդվածներ գրելը և քննարկման համար ներկայացված հոդվածներ ու այլ նյութեր ընտրելը, ուղղելը, խմբագրելը՝ թերթերում և պարբերականներում հրատարակելու համար.

7)հրատարակելու համար գրքի ձևով ներկայացված ձեռագրեր գնահատելը, դրանց վերաբերյալ երաշխավորություններ կազմելը և խմբագրելը կամ նյութերի խմբագրումը ղեկավարելը.

8)որոշակի արտադրատեսակների կամ ծառայությունների համար գովազդային հայտարարություններ կազմելը.

9)կազմակերպությունների մասին գովազդային նյութեր ընտրելը և պատրաստելը՝ մամուլում հրատարակելու, ռադիո, հեռուստատեսություն կամ զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացնելու համար.

10)գրքույկներ, տեղեկատուներ և այդօրինակ հատուկ հրատարակություններ մշակելը և ստեղծելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մեկնաբան.

2) թղթակից.

3) գրող.

4) գրականագետ.

5) գրաքննադատ.

6) խմբագիր.

7) լրագրող:

74. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2452. ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐ, ՆԿԱՐԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Քանդակագործները, նկարիչները և հարակից մասնագետները ստեղծում են քանդակներ, գեղանկարներ, նկարներ, ծաղրանկարներ, փորագրություններ և այդօրինակ այլ ստեղծագործություններ, կատարում են դրանց վերականգնման և գեղարվեստական ձևավորման աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կերպարվեստի ստեղծագործություններ (գունանկար և գծանկար, իրական կամ վերացական պատկերներ և այլն) և քանդակներ (ծավալային, հարթ և այլն) ստեղծելը՝ օգտագործելով տարբեր նյութեր (փայտ, քար, կավ, մետաղ, կտոր, թուղթ և այլն).

2)մեծակերտ և զարդարական կիրառական արվեստի գործեր ստեղծելը.

3)մուլտիպլիկացիոն ֆիլմեր ձևավորելը.

4)հեռուստատեսային ծրագրերի պատկերավոր-գեղարվեստական լուծումներ ապահովելը.

5)սցենարների հիման վրա՝ ներկայացումների գեղարվեստական ձևավորում կատարելը, ռեժիսորի մտահղացմանը համապատասխան՝ ուրվագծեր, բեմանկարներ, բեմազգեստներ, բեմական կահույք, այլ պարագաներ ստեղծելը, ինչպես նաև գովազդներ, բուտաֆորական (շինծու) իրեր, ազդագրեր, հրավիրատոմսեր պատրաստելը.

6)արվեստի գործեր վերականգնելը.

7)հագուստի և կոշիկի նոր ինքնատիպ նմուշօրինակներ մշակելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) քանդակագործ.

2) նկարիչ-ձևավորող.

3) փորագրող՝ փայտի.

4) նկարիչ- բեմադրող.

5) նկարիչ- վերականգնող.

6) խեցեգործ.

7) ոսկերիչ:

75. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2453. ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ, ԵՐԱԺԻՇՏՆԵՐ ԵՎ ԵՐԳԻՉՆԵՐ

1.Կոմպոզիտորները, երաժիշտները և երգիչները գրում կամ վերամշակում են երաժշտական ստեղծագործություններ, կատարում դրանք կամ ղեկավարում դրանց կատարումը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)երաժշտական ստեղծագործություններ հեղինակելը.

2)որոշակի երաժշտական խմբերի կամ երաժշտական գործիքների համար երաժշտություն մշակելը կամ գործիքավորելը.

3)որպես մենակատար կամ նվագախմբի անդամ՝ երաժշտական ստեղծագործությունը մեկ կամ մի քանի երաժշտական գործիքով կատարելը.

4)դերերգ կատարելը՝ որպես մենակատար կամ երգչախմբի անդամ.

5) նվագախումբ կամ երգչախումբ ղեկավարելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) դիրիժոր՝ նվագախմբի.

2) դիրիժոր՝ երգչախմբի.

3) գործիքավորող.

4) խմբավար.

5) երգիչ:

76. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2454. ԲԵՄԱԴՐՈՂՆԵՐ՝ ՊԱՐԵՐԻ, ԵՎ ՊԱՐՈՂՆԵՐ

1.Պարեր բեմադրողները և պարողները, իրենց մտահղացումներին համապատասխան, ընտրում են թեմա, բեմադրում և կատարում են պարային ստեղծագործություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ընտրված թեմային և մտահղացումներին համապատասխան՝ պարային ստեղծագործություններ (ներկայացումներ, համարներ) բեմադրելը և կատարելը՝ օգտագործելով պարարվեստի բոլոր տարրերը (պարի ոգին, թեմայի բովանդակությունը, սյուժեն շարժումներով հաղորդելը).

2)որպես մենակատար, զուգընկեր կամ պարախմբի անդամ՝ պարային ստեղծագործություն նախապատրաստելը և կատարելը.
3)այլ աշխատողներին ղեկավարելը.
4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) պարող.
2) դերասան՝ պարախմբի.
3) պարարվեստագետ.
4) պարուսույց:

77. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2455. ՌԵԺԻՍՈՐՆԵՐ ՈՒ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ՝ ԿԻՆՈՅԻ ԵՎ ԹԱՏՐՈՆԻ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Կինոյի և թատրոնի ռեժիսորներն ու դերասանները և հարակից մասնագետները բեմադրում են հեռուստառադիոներկայացումներ և թատերական ներկայացումներ, նկարահանում կինոնկարներ և այդ ստեղծագործություններում կատարում դերեր:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)բեմում, հեռուստատեսությամբ, ռադիոյով դրամատիկական ներկայացումների կամ նկարահանումների ժամանակ դերեր կատարելը, տեքստեր մտապահելը և կարդալը.
2)գրական ստեղծագործություններ ասմունքելը, բանաստեղծություններ արտասանելը, բեմում, հեռուստատեսությամբ կամ ռադիոյով ելույթ ունենալը.
3)ուսուցման կամ հանդիսատեսին զվարճացնելու նպատակով պատմություններ պատմելը, գրական ստեղծագործությունները բարձրաձայն կարդալը.
4)ներկայացման, կինոնկարի ստեղծման արտադրական գործընթաց կազմակերպելը, ներկայացումների մեջ օգտագործվող նյութի հեղինակային մտահղացումն իրագործելը, գեղարվեստական որակը և հավաստիությունն ապահովելը.
5)դրվագային (էպիզոդիկ), խմբային և զանգվածային տեսարանների դերասաններ և մասնակիցներ ընտրելը, դերասանների հետ փորձեր կատարելը.
6)դերասանների և նկարահանումների մասնակիցների հետ կնքված պայմանագրերի կատարումն ապահովելը.
7)գովազդներ ստեղծելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) դերասան.
2) ռեժիսոր՝ կինոյի.
3) ռեժիսոր՝ թատրոնի.
4) ռեժիսոր՝ բեմադրող:

78. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 246. ԳՈՐԾԻՉՆԵՐ՝ ԿՐՈՆԱԿԱՆ

1.Կրոնական գործիչները կատարում են հետազոտական աշխատանքներ, զարգացնում և մեկնաբանում են կրոնական տեսություններ և հասկացություններ, խորհրդատվություն են մատուցում պաշտամունքին առնչվող զանազան հարցերով, ծավալում են կրոնական գործունեություն:
2.Կրոնական գործիչների հիմնական պարտականություններն են. կրոնական զանազան տեսություններ և հասկացություններ շարադրելը, մեկնաբանելը. կրոնական ծիսակատարություններ, պաշտամունքային այլ ծեսեր կատարելը. կրոնական կազմակերպության շրջանակներում վարչական և հասարակական զանազան պարտականություններ կատարելը. հոգևոր և բարոյական աջակցությունը՝ դավանվող կրոնին համապատասխան. կրոնական բնույթի գիտական աշխատություններ ստեղծելը, զեկույցներ, հաշվետվություններ կազմելը: Որոշ դեպքերում նրանց պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:
3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.
1)**Ստորին խումբ 2460. Գործիչներ՝ կրոնական:**

79. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 2460. ԳՈՐԾԻՉՆԵՐ՝ ԿՐՈՆԱԿԱՆ

1.Կրոնական գործիչները կատարում են հետազոտական աշխատանքներ, զարգացնում և մեկնաբանում են կրոնական տեսություններ և հասկացություններ, խորհրդատվություն են մատուցում տարբեր պաշտամունքների առնչվող զանազան հարցերով, ծավալում են կրոնական գործունեություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հետազոտություններ կատարելը, կրոնական տեսություններ և հասկացություններ ուսումնասիրելը, շարադրելը, մեկնաբանելը.

2)հոգևոր ավանդույթներ, գործունեություն և հավատքի դավանանքներ պահպանելը.

3)կրոնական պաշտոնների ձեռադրման և այլ ծեսեր ու արարողություններ կատարելը.

4)տարատեսակ վարչական և հասարակական պարտականություններ կատարելը՝ ներառյալ եկեղեցական կազմակերպությունների ժողովներ և կոմիտեներ այցելելը.

5)հոգևոր և բարոյական ղեկավարություն իրագործելը՝ դավանվող կրոնին համապատասխան.

6) կրոնական քարոզչություն ծավալելը.

7)հավատքի դավանանքներ և հոգևոր սովորույթներ պահպանելը, դրանք ուսուցման միջոցով տարածելը.

8) կրոնական աշխատանքներ և հաշվետվություններ կազմելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) քահանա.

2) աստվածաբան.

3) սարկավագ.

4) վարդապետ:

ԲԱԺԻՆ 3
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 3. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Միջին որակավորման մասնագետներն առավելապես կատարում են տեխնիկական և բովանդակությամբ կից պարտականություններ, որոնք առնչվում են գիտական, սոցիալական, պետական, առևտրային կամ գեղարվեստական հայեցակարգերի, սկզբունքների, կանոնների և մեթոդների կիրառմանը և մշակմանը, ինչպես նաև ուսուցմանը՝ որոշակի կրթական մակարդակներին համապատասխան: Այս պարտականությունների կատարումը ենթադրում է որոշակի տեսական պատրաստվածության և մասնագիտական գիտելիքների բնագավառի սկզբունքների և մեթոդների գործնական կիրառման հմտությունների առկայություն:

2.Սույն հիմնական խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն և հետագա մասնագիտական ուսուցում:

3.Միջին որակավորման մասնագետների պարտականությունները ներառում են. մեքենաներ, մեխանիզմներ, կայաններ, հարմարանքներ և տեխնիկական այլ սարքավորումներ մշակելուն և դրանց բնականոն գործունեությունն ապահովելուն մասնակցելը՝ օգտագործելով տեխնիկական և բնական գիտությունների, այդ թվում՝ ֆիզիկայի և քիմիայի, մեթոդները և սկզբունքները. շենքերի շինությունների, տրանսպորտային միջոցների, տեխնոլոգիական գործընթացների և իրերի արտադրության անվտանգության պայմաններ վերահսկելը. գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար, առողջապահության և առողջաբանության (հիգիենայի) պահպանման, մարդկանց և կենդանիների խնամքի հարցերում մասնագիտական խորհրդատվություն և օգնություն ցուցաբերելը. երեխաներին նախնական դպրոցում և նախադպրոցական հիմնարկներում ուսուցանելը. հաշմանդամներին ուսուցանելը. պետական և կառավարման

այլ ոլորտներում, առևտրի, ֆինանսների և արվեստի բնագավառներում որոշակի աշխատանքներ կատարելը. մարդկանց և բեռներ փոխադրելը հսկելը, այդ թվում՝ արտերկրներ. սոցիալական հարցերում խորհրդատվություն և օգնություն ցուցաբերելը. մարզական միջոցառումներ կազմակերպելը և անցկացնելը. կրոնական գործունեություն ծավալելը. այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Միջին որակավորման մասնագետների գործունեությունը կարող են ղեկավարել հիմնարկների, կազմակերպությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և հմուտ մասնագետները:

5.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1)**Ենթախումբ 31. Մասնագետներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների.**

2)**Ենթախումբ 32. Մասնագետներ (օժանդակ անձնակազմ)՝ բնական գիտությունների և առողջապահության բնագավառների.**

3)**Ենթախումբ 33. Մասնագետներ՝ կրթության բնագավառի.**

4)**Ենթախումբ 34. Աշխատողներ՝ ֆինանսատնտեսագիտական, վարչական և սոցիալական բնագավառների:**

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 31. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների մասնագետները զբաղվում են ֆիզիկական գիտությունների, համակարգչային և այլ տեխնիկայի բնագավառներում հայեցակարգերի ու շահագործման մեթոդների մշակմանը և կիրառմանն առնչվող տեխնիկական խնդիրներով: Նրանք հսկում և շահագործում են տեխնիկական սարքավորումները, տրանսպորտային միջոցները, զբաղվում են արտադրական և այլ գործընթացների, ինչպես նաև արտադրվող արտադրանքի անվտանգության հարցերով:

2.Այս պարտականությունների կատարումը պահանջում է համապատասխան տեսական պատրաստվածություն և մասնագիտական գիտելիքների բնագավառի սկզբունքների ու մեթոդների գործնական կիրառման փորձ: Սույն ենթախմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական, իսկ որոշ դեպքերում՝ բարձրագույն մասնագիտական կրթություն կամ գործնական աշխատանքի հետկրթական զգալի փորձ:

3.Այս ենթախմբում ներառված մասնագետների պարտականությունները հիմնականում ներառում են. ֆիզիկական գիտությունների, համակարգչային և այլ տեխնիկայի բնագավառում տեխնիկական աշխատանք կատարելը. օպտիկական, էլեկտրոնային և դրանց առնչվող սարքավորումներ ու համակարգեր հսկելը և շահագործելը. օդանավեր և նավեր վարելը և կառավարելը, շինարարական և արտադրական գործընթացների սարքավորումներ շահագործելը և արտադրանքի օգտագործման ու արտադրության անվտանգության կանոնների և չափորոշիչների կիրառումը հսկելը:

4.Նրանց գործունեությունը կարող են ղեկավարել հիմնարկների, կազմակերպությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կամ հմուտ մասնագետները:

5.Սույն ենթախմբի մասնագետները կարող են իրենց պարտականությունները կատարել ինքնուրույնաբար: Դրանք կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

6.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 311. Տեխնիկներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների.**

2)**Փոքր խումբ 312. Աշխատողներ՝ օժանդակ, համակարգչային սարքավորումների սպասարկման.**

3)**Փոքր խումբ 313. Տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների.**

4)**Փոքր խումբ 314. Հսկիչներ և տեխնիկ-մասնագետներ՝ նավերի և օդանավերի.**

5)**Փոքր խումբ 315. Տեսուչներ և որակի հսկիչներ՝ շինարարության, հրշեջ ծառայության, տրանսպորտային միջոցների, արտադրական գործընթացների, արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 311. ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների տեխնիկները լուծում են տնտեսության տարբեր ճյուղերում ճարտարագիտանախագծային մշակումների գործնական կիրառմանն առնչվող գիտական հայեցակարգերի և սկզբունքների մշակման, տեխնիկական միջոցների և շինությունների շահագործման, արտադրական գործընթացների տնտեսական արդյունավետության գնահատման տեխնիկական խնդիրներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. քիմիայի, ֆիզիկայի, երկրաբանության, հիդրոօդերևութաբանության, աստղագիտության, ինչպես նաև ինժեներական գործի, տեխնիկական նախագծումների, արտադրական գործընթացների տնտեսական արդյունավետության բնագավառներում տեխնիկական աշխատանքներ կատարելը: Նրանց գործունեությունը կարող են ղեկավարել հիմնարկների, կազմակերպությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կամ հմուտ մասնագետները: Այն կարող է ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 3111. Տեխնիկներ՝ քիմիայի և ֆիզիկայի բնագավառների.**

2)**Ստորին խումբ 3112. Տեխնիկներ՝ արդյունաբերական և քաղաքացիական շինարարության.**

3)**Ստորին խումբ 3113. Տեխնիկ-էլեկտրագետներ.**

4)**Ստորին խումբ 3114. Տեխնիկ-էլեկտրոնիկներ և տեխնիկներ՝ հեռահաղորդակցության.**

5)**Ստորին խումբ 3115. Տեխնիկ-մեքենագետներ.**

6)**Ստորին խումբ 3116. Տեխնիկներ՝ քիմիական մեքենաշինության.**

7)**Ստորին խումբ 3117.Տեխնիկներ՝ արդյունահանման և մետաղագործության բնագավառների.**

8)**Ստորին խումբ 3118. Գծագրողներ.**

9)**Ստորին խումբ 3119. Տեխնիկներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների, այլ խմբերում չներառված:**

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3111. ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Քիմիայի և ֆիզիկայի բնագավառների տեխնիկները լուծում են քիմիայի, ֆիզիկայի, երկրաբանության, երկրաֆիզիկայի, հիդրոօդերևութաբանության և աստղագիտության բնագավառների հետազոտություններին, ինչպես նաև արդյունաբերական, բժշկական, ռազմական և այլ ոլորտների հետազոտությունների արդյունքների գործնական կիրառմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:

2. Նրանց պարտականությունները ներառում են.

1)ելակետային տվյալներ, նմուշներ և տիպօրինակներ հավաքելը, մշակելը և կուտակելը, հետազոտությունների, փորձերի և վերլուծությունների համար նյութեր և սարքավորումներ նախապատրաստելը.

2)հետազոտություններ և փորձեր կատարելուն, դրանց արդյունքները վերլուծելուն և մշակելուն մասնակցելը.

3)նախագծերի իրացման համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի ծավալներ որոշելը.

4)հետազոտությունների և փորձերի ընթացքում ծագող խնդիրները լուծելու համար տեխնիկական գիտելիքներ կիրառելը.

5)սարքավորումների սպասարկում և նորոգում կազմակերպելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ-քիմիկոս.

2) տեխնիկ-երկրաբան.

3) տեխնիկ-օդերևութաբան.

4) տեխնիկ-ֆիզիկոս.

5) տեխնիկ-երկրաֆիզիկոս.

6) տեխնիկ-ջրամեքենագետ (հիդրոմեխանիկ):

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3112. ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1.Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության տեխնիկները կատարում են շինարարության ոլորտում գիտական հետազոտություններին և դրանց գործնական կիրառմանը, շենքերի և շինությունների, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, կամուրջների, թունելների, ճանապարհների, օդանավակայանների, պատնեշների, ջրատեխնիկական և ստորգետնյա կառույցների նախագծմանը, շինարարությանը, շահագործմանը և վերանորոգմանն առնչվող տեխնիկական աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շինարարական նյութերի և հողերի նմուշների լաբորատոր ու դաշտային ստուգումներ կատարելը կամ դրանց օգնելը.

2)շենքերի և այլ կառույցների շինարարությանը, հետազոտություններին և դրանց հաշվետվությունների պատրաստմանն առնչվող տեխնիկական օգնություն ապահովելը.

3)տիպային նախագծեր, գիտատեխնիկական տեղեկատվություն, տեղեկատու և մասնագիտական գրականություն ուսումնասիրելը.

4)աշխատանքային փաստաթղթերի ձևավորման տեխնիկական աշխատանքներ, նյութերի գծագրական ձևավորում կատարելը.

5)մշակվող նախագծերի նկարագրություններ կազմելը՝ գործող նորմատիվային-տեխնիկական փաստաթղթերին համապատասխան, նախագծային մանրօրինակներ (մակետներ) պատրաստելուն մասնակցելը.

6)ճարտարապետներին և շինարար-ճարտարագետներին շինարարական տեղամասերում ներկայացնելը՝ նախագծային մասնագրերի համաձայնեցում ապահովելու համար, նյութերի և աշխատանքի պահանջվող չափորոշիչներ ապահովելը.

7)շինարարության բնագավառի տեխնիկական գիտելիքները, սկզբունքները և փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար կիրառելը.

8)պարզ նախագծերի մշակմանը մասնակցելը, մասնագրեր և այլ տեխնիկական փաստաթղթեր կազմելը, պարզագույն հաշվարկներ կատարելը.

9)նախագծերի իրացման համար անհրաժեշտ աշխատանքային և նյութական ծախսերի քանակն ու արժեքը մասնագրերին համապատասխան որոշելուն օգնելը.

10) շահագործում և վերանորոգում կազմակերպելը,

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) աշխղեկ՝ շինարարության.

2) տեխնիկ-շինարար.

3) տեխնիկ-տեղագրագետ.

4) տեխնիկ-նախագծող:

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3113. ՏԵԽՆԻԿ - ԷԼԵԿՏՐԱԳԵՏՆԵՐ

1.Տեխնիկ-էլեկտրագետները լուծում են էլեկտրատեխնիկայի ոլորտի հետազոտություններին, ինչպես նաև էլեկտրական սարքավորումներ և բաշխիչ համակարգեր նախագծելուն, պատրաստելուն, հավաքելուն, կառուցելուն, շահագործելուն և նորոգելուն առնչվող տեխնիկական խնդիրներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)էլեկտրական սարքերի ու սարքավորումների հետազոտմանը և կատարելագործմանը, ինչպես նաև փորձնական նմուշների փորձարկմանն առնչվող տեխնիկական օգնություն ապահովելը.

2)էլեկտրական սարքավորումների գծագրեր և ուրվագծեր մշակելն ու պատրաստելը՝ մասնագրերին համապատասխան.

3)սարքավորումներ պատրաստելու և տեղակայելու համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի քանակը և արժեքը որոշելը՝ մասնագրերին համապատասխան.

4)էլեկտրական սարքավորումների և համակարգերի ճիշտ շահագործումը հսկելը, սարքավորումների անսարքությունների պատճառները բացահայտելը և դրանք վերացնելը.

5)էլեկտրասարքավորումներից և սարքերից օգտվող աշխատողներին դրանց շահագործման կանոնների մասին հրահանգավորելը.

6)էլեկտրական համակարգերի և սարքավորումների պատրաստման, տեղակայման, շահագործման և նորոգման տեխնիկական հսկողություն ապահովելը՝ աշխատանքների որակով կատարումն ապահովելու համար՝ գործող կանոններին և մասնագրերին համապատասխան.

7)էլեկտրատեխնիկայի բնագավառի տեխնիկական գիտելիքները, սկզբունքները, ինչպես նաև գործնական փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար կիրառելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) էլեկտրատեխնիկ.

2) տեխնիկ՝ էլեկտրական էներգիայի հաղորդման.

3) տեխնիկ-էլեկտրագետ՝ արտադրամասի:

7. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3114. ՏԵԽՆԻԿ-ԷԼԵԿՏՐՈՆԻԿՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

1.Տեխնիկ-էլեկտրոնիկները և հեռահաղորդակցության տեխնիկները լուծում են էլեկտրոնային և հեռահաղորդակցման տեխնիկայի բնագավառի հետազոտություններին, ինչպես նաև էլեկտրոնային սարքավորման, էլեկտրոնային և էլեկտրամեխանիկական հեռահաղորդակցման համակարգերի մշակմանը, պատրաստմանը, հավաքմանը, շահագործմանը, նորոգմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)էլեկտրոնային և հեռահաղորդակցման սարքավորումների հետազոտությունների և կատարելագործման, ինչպես նաև փորձնական նմուշների փորձարկման բնագավառում տեխնիկական օգնություն ապահովելը.

2)էլեկտրոնային սարքավորումների գծագրեր և ուրվագծեր մշակելն ու պատրաստելը՝ մասնագրերին համապատասխան.

3)էլեկտրոնային և հեռահաղորդակցության սարքավորումներ պատրաստելու և տեղակայելու համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի քանակը և արժեքը որոշելը՝ մասնագրերին համապատասխան.

4)էլեկտրոնային սարքավորումների աշխատանքի ցուցանիշների և ռեժիմների, տեխնիկական փաստաթղթերի հաշվառում վարելը.

5)սարքավորումներն աշխատանքի նախապատրաստելը, անսարքությունները հայտնաբերելու նպատակով թեստային ստուգումներ կատարելը, առանձին տարրեր և կառուցահատվածներ (բլոկներ) կարգաբերելը.

6)էլեկտրոնային սարքավորումների և հեռահաղորդակցման համակարգերի ճիշտ շահագործումը հսկելը, կանխարգելիչ զննումներ և նորոգում կատարելը.

7)աշխատանքների որակն ապահովելու համար էլեկտրոնային սարքավորումների և հեռահաղորդակցության համակարգերի պատրաստման, կարգաբերման, շահագործման և նորոգման տեխնիկական հսկողություն ապահովելը՝ գործող կանոններին և մասնագրերին համապատասխան.

8)էլեկտրոնային և հեռահաղորդակցության տեխնիկայի բնագավառի տեխնիկական գիտելիքները, սկզբունքները և գործնական փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար կիրառելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ էլեկտրոնային համակարգեր.

2) տեխնիկ՝ հեռահաղորդակցության համակարգերի:

8. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3115. ՏԵԽՆԻԿ - ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ

1.Տեխնիկ-մեքենագետները լուծում են մեքենաշինության բնագավառի հետազոտություններին, ինչպես նաև սարքավորումների, մեխանիկական համակարգերի և մեքենաների մշակմանը, պատրաստմանը, հավաքմանը, գործարկմանը, պահպանմանը և նորոգմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մեքենաների և մեխանիկական համակարգերի, սարքավորումների և բաղադրամասերի հետազոտությունների կատարմանը և կատարելագործմանը, ինչպես նաև փորձնական նմուշների փորձարկմանն առնչվող տեխնիկական օգնություն ապահովելը.

2)մեքենաների մանրօրինակներ (մակետներ) և մեխանիկական համակարգեր, սարքավորումներ և բաղադրամասեր նախագծելը և ստեղծելը՝ մասնագրերին համապատասխան.

3)սարքավորումներ պատրաստելու և տեղակայելու համար անհրաժեշտ աշխատանքային և նյութական ծախսերի քանակն ու արժեքը որոշելը՝ մասնագրերին համապատասխան.

4)մեքենաները և մեխանիզմները աշխատանքի նախապատրաստելը, առանձին հանգույցներ և մանրամասեր (դետալներ) կարգաբերելը.

5)սարքավորումների աշխատանքի, պարապուրդների պատճառների և տևողության հաշվառում վարելը, նորոգման համար անհրաժեշտ նյութեր, պահեստամասեր, մանրամասեր (դետալներ) և գործիքներ ստանալու հայտեր կազմելը.

6)աշխատանքների որակն ապահովելու համար սարքավորումների, մեխանիկական համակարգերի և մեքենաների պատրաստման, տեղակայման, շահագործման և նորոգման տեխնիկական հսկողություն ապահովելը՝ գործող կանոններին և մասնագրերին համապատասխան.

7)մեքենաշինության բնագավառի տեխնիկական գիտելիքները, սկզբունքները և գործնական փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները լուծելու համար կիրառելը.

8)տրանսպորտային միջոցների պատրաստման, բեռնման-բեռնաթափման, բեռի ամրացման տեսչական ստուգումների ժամանակ անվտանգության կանոնների և չափորոշիչների պահպանումը հսկելը.

9)տրանսպորտային միջոցներ նորոգող, ներկող, մաքրող բանվորների աշխատանքը համակարգելը և հսկելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ-մեքենագետ՝ ինքնաթիռաշինության.

2) տեխնիկ -մեքենագետ՝ նավաշինության.

3) տեխնիկ-մեքենագետ՝ ավտոմեքենաշինության.

4) տեխնիկ-մեքենագետ՝ մեքենաշինության ոլորտի:

9. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3116. ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ

1.Քիմիական մեքենաշինության տեխնիկները լուծում են բնագավառի հետազոտություններին, ինչպես նաև քիմիական սարքավորումների մշակմանը, պատրաստմանը, կառուցմանը, շահագործմանը, պահպանմանը և նորոգմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արդյունաբերական քիմիական գործընթացների, մեքենաների և սարքավորումների հետազոտմանը և կատարելագործմանը, ինչպես նաև փորձնական նմուշների փորձարկմանն առնչվող տեխնիկական օգնություն ապահովելը.

2)քիմիական սարքավորումների ուրվագծեր (սխեմաներ) մշակելը և պատրաստելը՝ մասնագրերին համապատասխան.

3)սարքավորումներ պատրաստելու և կարգաբերելու համար անհրաժեշտ աշխատանքային և նյութական ծախսերի քանակն ու արժեքը որոշելը՝ մասնագրերին համապատասխան.

4)սարքավորումներն աշխատանքի նախապատրաստելը, անսարքությունները բացահայտելը և վերացնելը.

5)քիմիական սարքավորումների աշխատանքի ցուցանիշների և ռեժիմների, այլ տեխնիկական փաստաթղթերի հաշվառում վարելը.

6)աշխատանքների որակն ապահովելու համար քիմիական սարքավորումների կառուցման, կարգաբերման, շահագործման և նորոգման աշխատանքներում տեխնիկական հսկողություն ապահովելը՝ գործող կանոններին և մասնագրերին համապատասխան.

7)քիմիական մեքենաշինության բնագավառում տեխնիկական գիտելիքները և սկզբունքները, ինչպես նաև գործնական փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար կիրառելը.

8)քիմիական սարքավորումների և տեխնոլոգիական համակարգերի կանխարգելիչ ստուգումներ և վերանորոգման աշխատանքներ կատարելը.

9)որոշակի նյութերի և ապրանքների արտադրության գործընթացների տեխնոլոգիական խնդիրներին վերաբերող տեխնիկական օգնություն ապահովելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ քիմիական մեքենաշինության.

2) տեխնիկ՝ քիմիական գործընթացների.

3) տեխնիկ՝ նավթի և նավթամթերքների վերամշակման.

4) տեխնիկ՝ էլեկտրաքիմիական պաշտպանության:

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3117. ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Արդյունահանման և մետաղագործության բնագավառների տեխնիկները լուծում են մետաղագործության բնագավառի հետազոտություններին, օգտակար հանածոների, նավթի և գազի արդյունահանման մեթոդների կատարելագործմանը, ինչպես նաև հանքերի, հանքահորերի և հանքերի սարքավորումների, նավթի և բնական գազի փոխադրման ու պահպանման համակարգերի, հանքաքարից մետաղի արդյունահանման և մետաղի մաքրման սարքավորումների նախագծմանը, կառուցմանը, շահագործմանը և նորոգմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մետաղների ու նրանց խառնուրդների հատկությունների որոշման գործընթացների հետազոտությունների և կատարելագործման, բնական գազի, նավթի, պինդ հանքանյութերի արդյունահանման ավելի կատարյալ մեթոդների որոնման, ինչպես նաև փորձնական նմուշների, բնական գազի և նավթի տեղափոխման ու պահպանման ժամանակ տեխնիկական օգնություն ապահովելը.

2)երկրաբանական և տեղագրական հետազոտություններում, փոխադրման համակարգերի, ինչպես նաև նավթի, բնական գազի և հանքաքարի արդյունահանման համակարգերի, հանքանյութերի և մետաղների մշակման ու արդյունահանման սարքավորումների մշակման և գծանշման գործում տեխնիկական օգնություն ապահովելը.

3)հանքանյութերի, նավթի և բնական գազի շահագործմանն ու փոխադրմանն առնչվող նախագծեր, ինչպես նաև դրանց արդյունահանման, մաքրման և մշակման գործարանների նախագծեր իրագործելու համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի արժեքը և քանակը որոշելը՝ մասնագրերին համապատասխան.

4)աշխատանքների որակն ապահովելու համար հանքային հումքի, նավթի և բնական գազի հետախուզման, արդյունահանման, փոխադրման և պահպանման սարքավորումների կառուցման, կարգաբերման, շահագործման և նորոգման, ինչպես նաև հանքանյութերի մշակման գործարանների գործունեության տեխնիկական հսկողություն ապահովելը՝ գործող կանոններին և մասնագրերին համապատասխան.

5)սարքավորումների կանխարգելիչ զննումներ կատարելը, անսարքությունները բացահայտելը և դրանք վերացնելը, փոքր նորոգումներ կատարելը.

6)արդյունահանող և մետաղագործական սարքավորումներ սպասարկող աշխատողներին դրանց շահագործման կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի կանոնների և նորմերի մասին հրահանգավորելը.

7)հանքանյութերի, նավթի, բնական գազի արդյունահանման, պահպանման, փոխադրման բնագավառի տեխնիկական գիտելիքները, ինչպես նաև մետաղագործության մեջ գործնական աշխատանքի փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները հայտնաբերելու և լուծելու համար կիրառելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ հանքավայրի հետախուզման աշխատանքների.

2) տեխնիկ՝ հորատման աշխատանքների.

3) տեխնիկ՝ նավթի և գազի արդյունահանման.

4) տեխնիկ՝ նավթի և գազի նախապատրաստման և փոխադրման.

5) տեխնիկ՝ նավթամուղների շահագործման.

6) տեխնիկ՝ գազային օբյեկտների սարքավորումների շահագործման.

7) տեխնիկ-մետաղագործ:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3118. ԳԾԱԳՐՈՂՆԵՐ

1.Գծագրողները չափումների և այլ հատուկ տվյալների հիման վրա ձեռքով կամ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ պատրաստում են տեխնիկական գծագրեր և ուրվագծեր (էսքիզներ), ուրվագծերից կամ բնօրինակներից՝ համապատասխան գծագրեր, մշակում քարտեզներ, պատճենահանում տարբեր բնույթի գծագրեր և նկարներ՝ դրանք նախապատրաստելով զանգվածային տպագրության:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)աշխատանքային գծագրեր պատրաստելը և ստուգելը՝ ըստ սարքավորումների և մեքենաների պատրաստման, կարգաբերման և տեղակայման կամ շենքերի, ամբարտակների, կամուրջների, ճանապարհների և ճարտարապետական ու ճարտարագիտական այլ կառույցների շինարարության, վերակառուցման, շահագործման և նորոգման համար ճարտարագետների և նախագծողների պատրաստած մասնագրերի և ուրվագծերի, կամ բնօրինակներից համանման գծագրեր պատրաստելը.

2)դժվար պատճենահանվող և թվային տվյալներ պարունակող աշխատանքային գծագրեր, քարտեզներ ստեղծելու և փոփոխելու, թվային տեղեկատվություն պարունակող այլ կորագծեր մշակելու համար համակարգչային սարքավորումներ կամ փոխարկման աղյուսակներ օգտագործելը.

3)համանման կամ թվային տեսքով տեղագրական տվյալներ, ինչպես նաև տեղագրական, ջրագրական, հեռահաղորդակցական և թեմատիկ այլ քարտեզներ պատրաստելու և ստուգելու համար տվյալներ ստանալու նպատակով ծավալագործիքներ օգտագործելը.

4)մեքենաների և այլ սարքավորումների ու իրերի հավաքման, կարգաբերման, գործարկման և նորոգման տեղեկատվական հրատարակությունների, գրքույկների և տեխնիկական տեղեկատուների համար նկարներ և գծագրեր պատրաստելը և ստուգելը.

5)գծագրեր պատճենահանելը և տպագրելու համար պատկերները կաղապարների վրա փոխադրելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գծագրող.

2) գծագրող՝ ճարտարապետության բնագավառի.

3) գծագրող՝ քարտեզագրության բնագավառի.

4) գծագրող՝ քաղաքացիական շինարարության բնագավառի.

5) գծագրող-նկարազարդող:

12. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3119. ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբը ներառում է ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների տեխնիկներին, ովքեր չեն ներառվել փոքր խումբ 311-ի («Տեխնիկներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների») այլ ստորին խմբերում:

2.Այս խմբին դասվում են նրանք, ովքեր արտադրության գործընթացում կամ արժեքային հաշվարկներ պատրաստելու և հաշիվներ կազմելու ժամանակ օգնում են ճարտարագետներին:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արտադրության պլանավորման մեթոդներ մշակելիս, անձնակազմը, նյութերը, սարքավորումներն օգտագործելու արդյունավետությունը, անվտանգությունը և տնտեսական նպատակահարմարությունը որոշելիս, աշխատանքի մեթոդները և գործառնությունների հաջորդականությունն ուսումնասիրելիս, դրանց կիրառումը հսկելիս, ժամանակին և շարժմանը վերաբերող աշխատանք կազմակերպելիս, գործարանի կամ կազմակերպության աշխատանքը տնտեսապես արդյունավետ կազմակերպելիս տվյալներ հավաքելը և տեխնիկական օգնություն ապահովելը.

2)դժբախտ պատահարների սպառնալիքների հայտնաբերման և անվտանգության միջոցների ու կանոնների ներդրման աշխատանքին մասնակցելը.

3)շինարարության համար արժեքային հաշվարկներ կատարելիս և շինարարության ու ճարտարապետական նախագծերի համար հաշիվներ դուրս գրելիս տվյալներ հավաքելը և տեխնիկական օգնություն ապահովելը.

4)զանազան լաբորատոր հետազոտություններ կատարելը, այդ հետազոտությունների և արտադրվող արտադրանքի որակը վերահսկելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

4. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ արտադրության արդյունավետության գնահատման.

2) տեխնիկ՝ արտադրողականության հաշվարկման.

3) տեխնիկ՝ աշխատաժամանակի հաշվառման.

4) տեխնիկ-նորմավորող.

5) տեխնիկ-օդերևութաբան.

6) տեխնիկ-ջերմատեխնիկ.

7) տեխնիկ-լաբորանտ:

13. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 312. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՕԺԱՆԴԱԿ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1.Համակարգչային սարքավորումների սպասարկման օժանդակ աշխատողներն օգնում են համակարգչային սարքավորումներից և տիպային ծրագրային ապահովության համակարգերից օգտվողներին, հսկում են համակարգիչների և ծայրամասային սարքավորումների աշխատանքը և շահագործում են դրանք, ինչպես նաև կատարում են ծրագրային և սարքային ապահովության մուտքագրմանը և սպասարկմանն առնչվող ծրագրավորման սահմանափակ պարտականություններ:

2.Իրականացվող պարտականությունները հիմնականում ներառում են. համակարգչային սարքավորումներից և ծրագրային ապահովության տիպային համակարգերից օգտվողներին օգնելը մուտքագրման հարցերով կամ որևէ խնդիր ծագելու դեպքում. որոշակի սարքային ապահովությանը և համակարգերի գործող փոխդասավորությանը տիպային համակարգչային ծրագրեր և նոր ծայրամասային սարքեր միացնելը. գործող ծրագրերի մեջ ոչ մեծ փոփոխություններ և ճշգրտումներ կատարելը՝ մուտքագրելու, կատարելագործելու և սպասարկելու նպատակով. համակարգիչների և ծայրամասային կառուցվածքների աշխատանքը վերահսկելը և դրանք շահագործելը. համակարգչային սարքավորումներով կատարվող աշխատանքներ կազմակերպելը. համակարգչային գործառնությունների մատյան վարելը. կրկնօրինակվող գործառնություններ կատարելը. հատուկ խնդիրներ լուծելու համար արդյունաբերական ռոբոտներ գործարկելն ու ծրագրավորելը և դրանց աշխատանքը վերահսկելը: Նրանց գործունեությունը կարող են

ղեկավարել հիմնարկների, կազմակերպությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կամ բարձր որակավորում ունեցող մասնագետները: Այն կարող է նաև ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 3121. Տեխնիկներ և օպերատորներ՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (էՀՄ-ի) սպասարկման.**

2)**Ստորին խումբ 3122. Տեխնիկներ և օպերատորներ՝ համակարգչային սարքավորումների սպասարկման**.

3)**Ստորին խումբ 3123. Տեխնիկներ և օպերատորներ՝ արդյունաբերական ռոբոտների սպասարկման:**

14. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3121. ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ (ԷՀՄ-ի) ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1.էլեկտրոնային հաշվիչ մեքենաների սպասարկման տեխնիկները և օպերատորները էլեկտրոնային հաշվիչ մեքենաներից և տիպային ծրագրային ապահովության համակարգերից օգտվողներին օգնում են ծրագրերի մուտքագրման հարցերով կամ, որևէ խնդիր ծագելու դեպքում, որոշակի սարքային ապահովության և գործող փոխդասավորության համակարգերում մուտքագրում են նոր ծրագրեր, գործող ծրագրերը սպասարկում և կատարելագործում են նրանց մեջ ոչ մեծ փոփոխություններ կատարելու միջոցով՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների ղեկավարությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)էլեկտրոնային հաշվիչ մեքենաներից և ծրագրային ապահովության համակարգերից օգտվողներին մուտքագրման հարցերով և որևէ խնդիր ծագելու դեպքում օգնելը.

2)որոշակի սարքային ապահովությանը և գործող փոխդասավորության համակարգերին նոր համակարգչային ծրագրեր միացնելը.

3)նոր ծայրամասային կառուցվածքներ գործարկելը և գործող համակարգերի ցուցանիշներում (պարամետրերում) անհրաժեշտ ճշգրտումներ կատարելը.

4)համակարգչային ծրագրերը ոչ մեծ փոփոխություններ և շտկումներ կատարելու միջոցով կատարելագործելը, սպասարկելը և մուտքագրելը՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների ղեկավարությամբ.

5)համակարգչային ծրագրերի և դրանց մուտքագրման փաստաթղթեր վարելը և կատարելագործելը.

6)իրենց աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և ծրագրավորման բնագավառի տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը.

7) էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ շահագործելը և դրանց աշխատանքը հսկելը.

8)հաշվողական գործառնություններ կազմակերպելը և արդյունավետորեն կատարելը.

9)էլեկտրոնային հաշվիչ մեքենաները աշխատանքի նախապատրաստելը, տեղեկավության մշակման սխեմաներ, խնդիրների լուծման ոչ բարդ ծրագրեր և ալգորիթմներ կազմելը.

10)սարքավորումներ կարգավորելը, կարգաբերելը և նորոգելը, դրանց տեխնիկական սպասարկում, թեստային ստուգումներ, կանխարգելիչ զննումներ կատարելը.

11)կատարվող աշխատանքների ծավալների, մեքենայական ժամանակի օգտագործման, մեքենաների աշխատանքի նկատվող թերությունների հաշվառում վարելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների սպասարկման.

2) օպերատոր՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների:

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3122. ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1.Համակարգչային սարքավորումների սպասարկման տեխնիկները և օպերատորները գործարկում են համակարգչային ու ծայրամասային սարքավորումները, հսկում դրանց

աշխատանքը՝ դրանք օգտագործելով թվային տվյալները գրանցելու, պահպանելու, հաղորդելու, մշակելու և թվային, տառային և գծագրական արտացոլմամբ էկրանի, թղթի կամ այլ կրիչի վրա փոխադրելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պատվիրատուների պահանջներին համապատասխան՝ համակարգչային և ծայրամասային սարքավորումները գործարկելը և դրանց աշխատանքը հսկելը՝ դրանք օգտագործելով թվային տվյալները գրանցելու, պահպանելու, հաղորդելու, մշակելու և թվային, տառային և գծագրական արտացոլմամբ էկրանի, թղթի կամ այլ կրիչի վրա փոխադրելու նպատակով.

2)օգտագործողների պահանջներին համապատասխան՝ համակարգչային սարքավորումների աշխատանքները կազմակերպելը և դրանք ժամանակին, անվտանգ և արդյունավետորեն կատարելը.

3)մեքենայական ընթերցման և պահպանման համար ընդունելի տեսքով տեղեկատվությունը գրանցելու և մշակելու համար համապատասխան կրիչներ տեղադրելը, դրանց պահպանելը.

4)համակարգչային գործառնությունների մատյան վարելը.

5)կրկնօրինակման աշխատանքներ կատարելը՝ սովորական ընթացակարգերին համապատասխան.

6)համակարգչային և ծայրամասային սարքավորումներն աշխատանքի նախապատրաստելը, կարգավորելը, կարգաբերելը, դրանց ոչ բարդ նորոգումներ, տեխնիկական սպասարկում, թեստային ստուգումներ, կանխարգելիչ զննումներ կատարելը.

7)էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և ծայրամասային սարքավորումների բնագավառի տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը՝ դրանց օգտագործման, ոչ մեծ նորոգում, ճշտումներ կատարելու ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) օպերատոր՝ համակարգչային սարքերի սպասարկման.

2) տեխնիկ՝ համակարգչային սարքերի սպասարկման:

16. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3123. ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՌՈԲՈՏՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1.Արդյունաբերական ռոբոտների սպասարկման տեխնիկները և օպերատորները գործարկում են դրանք, ծրագրավորում և վերածրագրավորում հատուկ խնդիրներ լուծելու համար, հսկում դրանց աշխատանքը, ապահովում հիմնական սպասարկումը և անհապաղ ճշգրտումներ կատարելը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արդյունաբերական ռոբոտներ ծրագրավորելը և վերածրագրավորելը՝ դրանց հնարավորությունների սահմաններում հատուկ խնդիրներ լուծելու համար.

2)արդյունաբերական ռոբոտներ գործարկելը.

3)արդյունաբերական ռոբոտների անխափան աշխատանքն ապահովելը և հսկելը.

4)արդյունաբերական ռոբոտների ստուգումներ և կանխարգելիչ զննումներ կատարելը՝ անսարքությունները ժամանակին հայտնաբերելու և վերացնելու նպատակով.

5)ռոբոտների աշխատանքների մեջ անհապաղ ճշգրտումներ կատարելը.

6)արդյունաբերական ռոբոտների առանձին կառուցվածքներ, հանգույցներ և կառուցահատվածներ (բլոկներ) կարգավորելը և կարգաբերելը.

7)կանխարգելիչ կամ ընթացիկ ոչ մեծ նորոգում կատարելը.

8)արդյունաբերական ռոբոտների առանձին սարքավորումներ և հանգույցներ կարգավորելն ու կարգաբերելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) հսկիչ՝ արդյունաբերական ռոբոտների աշխատանքի.

2) տեխնիկ՝ արդյունաբերական ռոբոտների սպասարկման.

3) տեխնիկ-ծրագրավորող՝ արդյունաբերական ռոբոտների սպասարկման.
4) օպերատոր՝ արդյունաբերական ռոբոտների սպասարկման.
5)օպերատոր՝ հաստոցների և կայանքների ավտոմատ և կիսաավտոմատ գծերի:

17. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 313. ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՕՊՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների տեխնիկներն ու օպերատորները կատարում են լուսանկարահանումներ, հսկում են կինոխցիկների, տեսախցիկների և պատկերի ու ձայնի գրանցման և մոնտաժման այլ սարքերի, ռադիոհեռարձակման և հեռուստահեռարձակման, հեռավոր կապի համակարգերի և սարքերի, ինչպես նաև ախտորոշման ու բուժման համար օգտագործվող բժշկական սարքավորումների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. լուսանկարներ կատարելը. կինոխցիկների, տեսախցիկների և պատկերների ու ձայնի գրանցման և մոնտաժման այլ սարքերի աշխատանքը հսկելը. ռադիոհեռարձակման և հեռուստահեռարձակման, հեռավոր կապի համակարգերի սարքերի աշխատանքը հսկելը. հիվանդությունները և խանգարումները կանխարգելելու և բուժելու համար օգտագործվող տեխնիկական սարքավորումների աշխատանքը հսկելը:

3.Օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների տեխնիկները և օպերատորներն աշխատում են բարձր որակավորում ունեցող մասնագետների և կազմակերպությունների ու դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հսկողությամբ: Այն կարող է նաև ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

4. Այս փոքր խմբի զբաղմունքները մտնում են հետևյալ ստորին խմբերի մեջ.

1)**Ստորին խումբ 3131. Լուսանկարիչներ, տեխնիկներ և օպերատորներ՝ տեսագրման և ձայնագրման սարքերի.**

2)**Ստորին խումբ 3132. Տեխնիկներ և օպերատորներ՝ ռադիոհեռուստահեռարձակման և հեռուստակապի սարքերի.**

3)**Ստորին խումբ 3133. Տեխնիկներ և օպերատորներ՝ բժշկական սարքերի սպասարկման.**

4)**Ստորին խումբ 3139. Տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքերի, այլ խմբերում չներառված:**

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3131. ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ, ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՏԵՍԱԳՐՄԱՆ ԵՎ ՁԱՅՆԱԳՐՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ

1.Տեսագրման և ձայնագրման սարքերի լուսանկարիչները, տեխնիկները և օպերատորները կատարում են լուսանկարահանումներ, հսկում են կինոխցիկների ու տեսախցիկների և ձայնի ու պատկերի գրանցման և մոնտաժման այլ սարքերի աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գովազդի, առևտրային, արտադրական, գիտական և այլ նպատակներով նյութերը թերթերում, ամսագրերում և այլ հրատարակություններում ցուցադրելու համար լուսանկարահանումներ կատարելը.

2)առանձին անձանց և անձանց խմբերի լուսանկարահանումներ կատարելը.

3)կինոխցիկներ և տեսախցիկներ, մանրանկարահանումների, օդանկարահանումների և պատկերների գրանցման այլ հատուկ խցիկներ և այլ սարքավորումներ շահագործելը և կարգաբերելը.

4)կինոնկարների, տեսաժապավենների, սկավառակների, ձայնագրման ժապավենների, թվային տեղեկատվության սկավառակների, ուղիղ եթերի և այլ նպատակների համար ձայնագրող և տեսագրող սարքերի աշխատանքը հսկելը.

5)ձայնագրող և տեսագրող սարքավորումների, դրանց կրիչների վրա գրանցելը, գրառելը վերահսկելը.

6)պատկերի ու ձայնի գրանցումների մոնտաժման սարքավորումներ կարգաբերելը և դրանց աշխատանքը հսկելը՝ անհրաժեշտ որակ և արտահայտչական ու ձայնային հատուկ ազդեցություններ ապահովելու նպատակով.

7)ձայնի և պատկերի գրանցման բնագավառի տեսական և գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրառելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) օպերատոր՝ կինոխցիկի.
2) օպերատոր՝ ձայնագրող սարքավորման.
3) օպերատոր՝ հեռուստահեռարձակման.
4) լուսանկարիչ:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3132. ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱԿԱՊԻ ՍԱՐՔԵՐԻ

1.Ռադիոհեռուստահեռարձակման և հեռուստակապի սարքերի տեխնիկներն ու օպերատորները հսկում են պատկերը և ձայնը տեսագրմամբ կամ ուղիղ եթերով հաղորդող ռադիոհեռարձակման, հեռուստահեռարձակման, ինչպես նաև ցամաքում, ծովում և օդում հեռուստակապի ազդանշանների այլ տեսակների հաղորդման սարքերի ու սարքավորումների աշխատանքը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)հաղորդման և հեռարձակման, ինչպես նաև արբանյակային կապի համակարգերի աշխատանքները հսկելը՝ ռադիոծրագրերի և հեռուստածրագրերի հաղորդման համար.
2)ցամաքում, ծովում և օդում ռադիոկապի, արբանյակային ծառայությունների և բազմակի գործողության համակարգերի աշխատանքը հսկելը.
3)կինոպրոեկցիոն սարքերի աշխատանքը հսկելը.
4)հեռարձակման, հեռուստակապի և հաղորդման համակարգերի տերմինալների աշխատանքի բնագավառի տեսական և գործնական գիտելիքները կիրառելը՝ աշխատանքի ընթացքում և սարքերի սպասարկման ժամանակ ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար.
5) գործառնությունների մատյան վարելը,
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) օպերատոր՝ ռադիոհեռարձակման սարքավորման,
2) օպերատոր՝ հեռահաղորդակցության սարքավորման,
3) օպերատոր՝ հեռուստահեռարձակման սարքավորման,
4) ռադիոտեխնիկ,
5) տեխնիկ՝ վերգետնյա ռադիոհեռախոսային սարքավորումների սպասարկման:

20. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3133. ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1.Բժշկական սարքերի սպասարկման օպերատորները, տեխնիկները հսկում են տեխնիկական սարքավորումների աշխատանքը, որոնք օգտագործվում են հիվանդությունները և խանգարումները ախտորոշելու և բուժելու համար:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)լսողությանը, սրտի գործունեությանը, երիկամներին, նյարդային համակարգին առնչվող հիվանդություններն ու խանգարումներն ախտորոշելու և բուժելու համար, ինչպես նաև անզգայաբանության և ճառագայթալուսանկարման բնագավառներում օգտագործվող սարքերի աշխատանքը հսկելը.
2)բժշկական սարքավորումների բնագավառի տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը՝ սարքավորումների սպասարկման և աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար.
3)անսարքությունները ժամանակին հայտնաբերելու և վերացնելու նպատակով բժշկական սարքավորումների ստուգումներ և կանխարգելիչ զննումներ կատարելը.

4)սարքավորումների հանգույցներ կամ առանձին համակարգեր կարգավորելը, կարգաբերելը և ենթակարգաբերելը.
5)այլ աշխատողներին ղեկավարելը.
6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) օպերատոր՝ համակարգչային ախտորոշման.
2) օպերատոր՝ ռենտգենային հետազոտման սարքի.
3) օպերատոր՝ ուլտրաձայնային հետազոտության սարքավորման.
4) տեխնիկ՝ սրտագրման սարքավորման.
5) տեխնիկ՝ էլեկտրաուղեղագրիչ սարքավորման:

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3139. ՏԵԽՆԻԿՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՕՊՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների տեխնիկներին և օպերատորներին, ովքեր ներառված չեն փոքր խումբ 313-ի («Տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների») այլ ստորին խմբերում:

22. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 314. ՀՍԿԻՉՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿ-ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՆԱՎԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԵՐԻ

1.Նավերի և օդանավերի հսկիչները և տեխնիկ-մասնագետները կատարում են նավերի և օդանավերի ղեկավարմանն ու կառավարմանը, դրանց երթևեկության անվտանգությանը և շահագործման արդյունավետությանն առնչվող տեխնիկական գործառույթներ:
2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. նավերի կամ օդանավերի մեխանիկական, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների աշխատանքը հսկելը, նավերի և օդանավերի հրամանատարությունը և կառավարումը, դրանց շարժումը կազմակերպելը և հսկելը, անվտանգությունն ապահովելը: Նավերի և օդանավերի հսկիչները և տեխնիկ-մասնագետներն իրենց պարտականությունները կատարում են ինքնուրույնաբար կամ ղեկավարների և բարձր որակավորման մասնագետների հսկողությամբ: Այն կարող է նաև ներառել այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն:
3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.
1) **Ստորին խումբ 3141. Մեքենագետներ՝ նավերի.**
2) **Ստորին խումբ 3142. Նավապետի օգնականներ՝ հերթափոխային, և նավատարներ.**
3) **Ստորին խումբ 3143. Օդաչուներ՝ ինքնաթիռների, և մասնագետներ՝ հարակից.**
4) **Ստորին խումբ 3144. Ավիակարգավարներ (ավիադիսպետչերներ).**
5) **Ստորին խումբ 3145. Տեխնիկներ՝ ինքնաթիռների շարժման անվտանգության.**
6) **Ստորին խումբ 3146. Կարգավարներ (բացի օդագնացականից):**

23. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3141. ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ՝ ՆԱՎԵՐԻ

1.Նավերի մեքենագետները մեխանիկական, էլեկտրական, էլեկտրոնային սարքավորումները և մեխանիզմները հսկում, շահագործում, սպասարկում և նորոգում են նավում կամ այդօրինակ օժանդակ գործառույթներ են կատարում ափին:
2.Նրանց պարտականությունների ներառում են.
1)նավի մեխանիկական և էլեկտրական սարքավորումների ու մեխանիզմների շահագործումը, սպասարկումը և նորոգումը հսկելը և դրանց մասնակցելը.
2)մեքենաների բաժանմունքի համար վառելանյութ և այլ պաշարներ պատվիրելը և գործառնությունների հաշվառում վարելը.
3)նավի մեքենաների և մեխանիզմների տեղակայման, սպասարկման և նորոգման տեխնիկական հսկողություն կատարելը՝ մասնագրերին և կանոններին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով.

4)նավի սարքավորումներին վերաբերող տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը՝ աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար.
5)այլ աշխատողներին ղեկավարելը.
6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) մեքենագետ՝ նավի.
2) մեքենագետ՝ նավահանգստային նավատորմի.
3) մեքենագետ՝ նավի համակարգերի.
4) մեքենագետ՝ ստորջրյա սարքի:

24. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3142. ՆԱՎԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐ՝ ՀԵՐԹԱՓՈԽԱՅԻՆ, ԵՎ ՆԱՎԱՏԱՐՆԵՐ

1.Նավապետի հերթափոխային օգնականները և նավատարները ղեկավարում և կառավարում են նավերը, հրամանատարական գործառույթներ են կատարում ափին:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ծովում և ներքին ջրային ուղիներում նավեր ղեկավարելը և կառավարելը.
2)տախտակամածային և ընթացային հերթափոխի կատարումը հսկելը.
3)նավեր կառավարելը՝ նավահանգիստ մտնելիս և դուրս գալիս, ջրանցքներով, նեղուցներով և ջրային այլ ուղիներով անցնելիս, ինչի համար պահանջվում են հատուկ գիտելիքներ.
4)բեռների անվտանգ բեռնումը և բեռնաթափումը, անձնակազմի և ուղևորների կողմից անվտանգության կանոնների և նորմերի պահպանումն ապահովելը.
5)նավի կառուցման, սպասարկման և նորոգման տեխնիկական հսկողություն կատարելը՝ մասնագրերին և կանոններին դրա համապատասխանությունն ապահովելու նպատակով.
6)նավերի շահագործման և կառավարման բնագավառի տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը՝ աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար.
7)նավերի համար անհրաժեշտ պաշարներ պատվիրելը, անձնակազմ հավաքագրելը և գործառնությունների հաշվառում վարելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) օգնական՝ նավապետի.
2) նավատար՝ նավի:

25. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3143. ՕԴԱՉՈՒՆԵՐ՝ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Ինքնաթիռների օդաչուները և հարակից մասնագետները հսկում և կառավարում են ինքնաթիռների մեխանիկական, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումները՝ ուղևորներ, փոստ և բեռներ տեղափոխելու համար, կատարում են նախապատրաստական աշխատանքներ թռիչքից առաջ և հսկում անվտանգությունը թռիչքի ընթացքում:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)թռիչքի ընթացքում ինքնաթիռ կառավարելը՝ հսկման և շահագործման սահմանված ընթացակարգերին համապատասխան.
2)թռիչքի ծրագիր պատրաստելը և հաստատելը, թռիչքի տիպային ծրագիր քննարկելը կամ փոփոխելը՝ կախված թռիչքի պայմաններից.
3)մեխանիկական, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների աշխատանքը հսկելը և կառավարման բոլոր գործիքների ու համակարգերի ճիշտ աշխատանքն ապահովելը.
4)թռիչքային գործի բնագավառի տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը՝ աշխատանքի ընթացքում ծագող խնդիրներ բացահայտելու և լուծելու համար.
5)այլ աշխատողներին ղեկավարելը.
6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մեքենագետ՝ օդանավի.
2) ղեկապետ՝ օդանավի.
3) օդաչու՝ ինքնաթիռի.
4) օդաչու-փորձարկող:

26. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3144. ԱՎԻԱԿԱՐԳԱՎԱՐՆԵՐ (ԱՎԻԱԴԻՍՊԵՏՉԵՐՆԵՐ)

1.Ավիակարգավարները (ավիադիսպետչերներ) ղեկավարում են ինքնաթիռների երթևեկությունը օդային տարածությունում, ցամաքի և ջրի վրա՝ օգտագործելով ռադիոհամակարգեր, ռադիոտեղորոշման և լուսային համակարգեր, և տեղեկատվություն են ներկայացնում թռիչքների վերաբերյալ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ինքնաթիռների թռիչքը ղեկավարելը, օդանավակայանին մոտենալիս, օդանավակայանից թռչելիս, ինչպես նաև գետնի վրա ինքնաթիռների շարժումը հսկելը.

2)օդային տարածության որոշակի հատվածում գտնվող ինքնաթիռների թռիչքը կառավարելը և հսկելը.

3)թռիչքների ծրագրեր քննարկելը և հաստատելը.

4)եղանակային պայմանների, սարքավորումների աշխատանքի, թռիչքների ծրագրերի և ինքնաթիռների թռիչքի վերաբերյալ անձնակազմին տեղեկատվություն տրամադրելը.

5)ինքնաթիռների թռիչքի հսկողության բնագավառի տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը՝ աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար.

6)անհրաժեշտության դեպքում՝ վթարային և որոնողական-փրկարարական ծառայությունների գործողությունները կազմակերպելը և համակարգելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) կարգավար՝ օդանավակայանի.
2) կարգավար՝ թռիչքների.
3) կարգավար՝ օդանավակայանի կարգավարական կետի.
4) կարգավար-հրահանգիչ՝ երթևեկության ծառայության:

27. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3145. ՏԵԽՆԻԿՆԵՐ՝ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

1.Ինքնաթիռների շարժման անվտանգության տեխնիկները կատարում են օդանավագնացության և ինքնաթիռների երթևեկության հսկողության համակարգեր մշակելուն, նախագծելուն, տեղադրելուն, շահագործելուն և նորոգելուն առնչվող տեխնիկական պարտականություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)օդանավագնացության համակարգերի էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների մշակմանն առնչվող տեխնիկական խնդիրներ լուծելը, նախատիպեր փորձարկելը.

2)օդանավագնացության և ինքնաթիռների հայտնաբերման համակարգերի փոխգործակցության համակարգեր և թռիչքի ուղղություններ նախագծելու և մշակելու գործում տեխնիկական օգնություն տրամադրելը.

3)ինքնաթիռների երթևեկության անվտանգության ապահովման և հսկողության սարքավորումների նախահաշիվներ, տեխնիկական նկարագրեր պատրաստելուն աջակցելը.

4)վերգետնյա օդահաղորդակցության սարքավորումների ստեղծման, տեղակայման, շահագործման, սպասարկման և նորոգման տեխնիկական հսկողությանն աջակցելը.

5)աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար ինքնաթիռների շարժման անվտանգության բնագավառի տեսական և գործնական գիտելիքներ կիրառելը.

6)գոյություն ունեցող վերգետնյա օդահաղորդակցության սարքավորումները կատարելագործելը,

7)թռիչքի, վայրէջքի առավելագույն ճշտություն և անվտանգություն ապահովելու նպատակով վերգետնյա օդահաղորդակցության սարքեր հսկելը և կարգավորելը,

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ օդային փոխադրամիջոցի անվտանգության.

2) տեխնիկ՝ թռիչքների լուսատեխնիկական և էլեկտրատեխնիկական ապահովման.

3) տեխնիկ՝ օդանավակայանային ծառայության.

4) տեխնիկ՝ օդանավագնացության տեղեկատվության:

28. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3146. ԿԱՐԳԱՎԱՐՆԵՐ (ԲԱՑԻ ՕԴԱԳՆԱՑԱԿԱՆԻՑ)

1.Կարգավարները (բացի օդագնացականից) օպերատիվորեն կարգավորում են արտադրության ընթացքի, շարժման գործընթացի և արդյունաբերական, տրանսպորտի և կապի կազմակերպությունների այլ բնույթի հիմնական գործունեությունը՝ օգտագործելով կարգավարական կապի հատուկ միջոցներ, տրամադրում են անհրաժեշտ տեղեկություն հիմնական գործունեության ընթացքի, ժամկետների, փուլերի և այլնի մասին:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արտադրական, տրանսպորտային և հիմնական գործունեության այլ տեսակներն օպերատիվորեն կարգավորելը, առաջադրանքների կատարման ժամկետները հսկելը.

2)նյութերով, սարքավորումներով, համալրող իրերով, տրանսպորտով, բեռնման-բեռնաթափման միջոցներով և այլնով ապահովված լինելու համար ծավալվող գործունեության բնականոն ընթացքը հսկել.

3)արտադրական, տրանսպորտային և հիմնական գործունեության այլ տեսակների ընթացքի խախտումների, կատարված խախտումների հետևանքների վերացման միջոցառումներ իրագործելը.

4)գործերի վիճակի, առաջադրանքների կատարման փուլերի և ժամկետների, սարքավորման աշխատանքի մասին անհրաժեշտ տեղեկություն տրամադրելը.

5)կարգավարական մատյան վարելը, հերթապահության մասին հաշվետվություններ կազմելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակ է կարգավար՝ արտադրական գործընթացի:

29. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 315. ՏԵՍՈՒՉՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԻ ՀՍԿԻՉՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐՇԵՋ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ, ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

1.Շինարարության և անվտանգության (հրշեջ, տրանսպորտային միջոցների, արտադրական գործընթացների և արտադրանքի) տեսուչները հսկում են հրդեհների և այլ վտանգների կանխմանը, մասնագիտական անվտանգությանը, առողջապահությանը և շրջակա միջավայրի պահպանությանը, արտադրական գործընթացների, արտադրվող, իրացվող կամ սպառվող ապրանքների և ծառայությունների անվտանգությանը, ինչպես նաև որակին վերաբերող նորմերի և կանոնների կատարումը:

2.Կատարվող պարտականությունները ներառում են՝ շենքերի և այլ կառույցների շինարարության որակը վերահսկելը. հակահրդեհային պաշտպանության համակարգերի վերաբերյալ խորհրդատվությունը և դրանց տեսչական ստուգումը. հրդեհների վայրերի տեսչական ստուգումը՝ դրանց պատճառները որոշելու նպատակով. արդյունաբերական և այլ ձեռնարկությունների տեսչական ստուգումը մասնագիտական անվտանգության, արտադրական գործընթացների և արտադրվող, իրացվող կամ սպառվող ապրանքների անվտանգության տեսանկյունից. առողջապահության և շրջակա միջավայրի պահպանության նորմերի և կանոնների պահպանում ապահովելը. արտադրողների կողմից մասնագրերի և որակի չափորոշիչների պահպանում ապահովելը. կազմակերպություններին և հասարակությանը խորհրդատվություն մատուցելը՝ համապատասխան հրահանգները, իրավական ակտերը ճիշտ հասկանալու և պահպանելու նպատակով:

3.Շինարարության և անվտանգության (հրշեջ, տրանսպորտային միջոցների, արտադրական գործընթացների և արտադրանքի) տեսուչներն իրենց պարտականությունները կատարում են բարձր աստիճանի ինքնուրույնությամբ՝ ղեկավարվելով գոյություն ունեցող օրենսդրությամբ և վերադաս մարմինների հրահանգներով: Դրանք կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն:

4. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 3151. Տեսուչներ՝ շինարարության և հրշեջ ծառայության.**

2)**Ստորին խումբ 3152. Տեսուչներ՝ անվտանգության, առողջապահության և որակի հսկման:**

30. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3151. ՏԵՍՈՒՉՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐՇԵՋ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1.Շինարարության և հրշեջ ծառայության տեսուչները կատարում են նոր կամ գոյություն ունեցող բնակելի տների, արդյունաբերական ձեռնարկությունների, հյուրանոցների և այլ շենքերի ու կառույցների տեսչական ստուգում՝ շինարարության որակը, աշխատանքի պայմանները, արտադրության անվտանգությունը, մասնագրերի և չափորոշիչների, հակահրդեհային անվտանգության կանոնների և այլ նորմատիվների պահպանումն ապահովելու նպատակով, հետազոտում են հրդեհների վայրերը՝ այրման պատճառները որոշելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շինարարության, աստիճանավորման և գոտիների մասին օրենքները, ինչպես նաև շենքերի անվտանգությանը և որակին վերաբերող նորմատիվային մյուս փաստաթղթերը ճիշտ ընկալելու և պահպանելու հարցերով խորհրդատվությունը շենքեր ու շինություններ կառուցող անձանց.

2)շինարարական-մոնտաժային աշխատանքների որակի, շինարարական կանոնների և նորմերի, աշխատանքների կատարման տեխնիկական պայմանների և տեխնոլոգիայի պահպանումը, նյութերի ու ապրանքների որակը, սահմանված չափորոշիչներին և տեխնիկական պայմաններին դրանց համապատասխանությունը հսկելը.

3)շինարարության ընթացքում կամ նրա ավարտին շենքերի և կառույցների տեսչական ստուգում կատարելը՝ շինարարության, աստիճանավորման, գոտիների և անվտանգության մասին օրենքների և այլ իրավական ակտերի, մասնագրերի և չափորոշիչների, ինչպես նաև շենքերի անվտանգությանը և որակին վերաբերող այլ նորմատիվների պահպանում ապահովելու նպատակով.

4)գոյություն ունեցող շենքերի և կառույցների տեսչական ստուգում կատարելը՝ պատշաճ շահագործման բացակայության դեպքերը, վտանգավորությանն առնչվող խախտումները և պայմանները հայտնաբերելու համար.

5)արդյունաբերական կազմակերպությունների, հյուրանոցների, կինոթատրոնների և այլ շենքերի ու հաստատությունների տեսչական ստուգում կատարելը՝ հրդեհների առաջացման վտանգը հայտնաբերելու և վերացնելու համար.

6)հրդեհի ազդանշանային սարքերի և հրդեհի մարման ցայտաջրմուղ համակարգերի տեղադրման, շենքերի շինարարության ժամանակ նյութերի և փոխադրամիջոցների օգտագործման հարցերով խորհրդատվությունը՝ հրդեհ ծագելու ռիսկը, հրդեհ ծագելու դեպքում վնասը և վտանգը փոքրացնելու նպատակով.

7)այրման պատճառները որոշելու համար հրդեհների վայրերը հետազոտելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)տեսուչ՝ շենքերի տեխնիկական պահպանության հսկողության.

2)տեսուչ՝ հակահրդեհային անվտանգության:

31. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3152. ՏԵՍՈՒՉՆԵՐ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ

ԵՎ ՈՐԱԿԻ ՀՍԿՄԱՆ

1.Անվտանգության, առողջապահության և որակի հսկման տեսուչները պետության, արդյունաբերական կամ այլ կազմակերպությունների անունից կատարում են աշխատատեղերի տեսչական ստուգում մասնագիտական անվտանգության, ինչպես նաև արտադրական գործընթացների ու արտադրվող, իրացվող կամ սպառվող ապրանքների անվտանգության տեսանկյունից, ապահովում են առողջապահության ու շրջակա միջավայրի պահպանության նորմերն ու կանոնները, ինչպես նաև արտադրողների կողմից մասնագրերը և որակի չափորոշիչները պահպանելը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)իրավական ակտերի և աշխատանքի պաշտպանությանն ու պայմաններին վերաբերող այլ կանոններ պահպանելու (կատարելու) հարցերով խորհրդատվությունը գործատուների և աշխատողների ներկայացուցիչներին.

2)աշխատատեղերի տեսչական ստուգում կատարելը և հարցումների, դիտարկումների և այլ մեթոդների օգնությամբ աշխատանքի, դրա պայմանների և դժբախտ պատահարների մասին տվյալներ ստանալը՝ անվտանգության կանոններին և նորմերին դրանց համապատասխանությունը որոշելու համար.

3)աշխատատեղերի տեսչական ստուգում կատարելը պետական և այլ նորմերին, կանոններին և չափորոշիչներին աշխատանքի պայմանների, մեխանիզմների և սարքավորումների համապատասխանությունն ապահովելու համար.

4)արտադրական գոտիների, արտադրական գործընթացների, տրանսպորտի, առևտրի, պահեստային տնտեսության և ապրանքների մանրածախ վաճառքի տեսչական ստուգում կատարելը՝ պետական և այլ նորմերին, կանոններին և չափորոշիչներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով.

5)վերջնական արդյունքների կամ դրանց տարրերի տեսչական ստուգում կատարելը՝ տեխնիկական պահանջներին և չափորոշիչներին դրանց համապատասխանությունը որոշելու համար.

6)առողջաբանությանը, առողջարարությանը, առաջնային արդյունքների, սննդամթերքի, դեղամիջոցների, դիմահարդարման և այդօրինակ պատրաստվածքների մաքրությանը և որակին վերաբերող պետական և այլ նորմերի ու կանոնների կատարման նպատակով ձեռներեցներին և հասարակայնությանը խորհրդատվություն մատուցելը.

7)փոխադրամիջոցների տեխնիկական չափորոշիչներին և տեխնիկական պայմաններին վերաբերող պետական և այլ նորմերի ու կանոնների կատարման առիթով արտադրողներին, օպերատորներին, ինչպես նաև ինքնաթիռների, մեքենաների և այլ մոտոտրանսպորտային միջոցների սպասարկմամբ զվաղված անձանց խորհրդատվություն մատուցելը.

8)փոխադրամիջոցների և դրանց պահպանման և նորոգման համար նախատեսված վայրերի տեսչական ստուգում կատարելը, տեխնիկական չափորոշիչներին, պետական և այլ նորմատիվներին այդ միջոցների համապատասխանության երաշխիքներ ապահովելը.

9)արտադրվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների որակը վերահսկելը.

10)արտադրվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ բողոքները քննարկելը, դրանց վերացման վերաբերյալ առաջարկություններ մշակելը.

11)այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների, տրամադրվող արտադրանքի որակի վերահսկելը, դրանց անհամապատասխանության դեպքում բողոքարկման աշխատանքները համակարգելը.

12)տեսչական ստուգումների և որակի վերահսկման վերաբերյալ խորհրդատվություն մատուցելը.

13)կազմակերպությունների տեսչական ստուգում կատարելը՝ վնասակար նյութերին և վնասակար թափոնների հեռացման հարցերին վերաբերող պետական և այլ նորմերին ու կանոններին դրանց համապատասխանության երաշխիքները ապահովելու նպատակով.

14)այլ աշխատողներին ղեկավարելը.

15)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեսուչ՝ մասնագիտական անվտանգության.

2) տեսուչ՝ արտադրանքի որակի հսկողության.

3) տեսուչ՝ սպառողների շահերի պաշտպանության.

4) տեսուչ՝ շրջակա միջավայրի պաշտպանության.
5) տեսուչ՝ պայթյունավտանգ արտադրության.
6) տեսուչ՝ էներգատեսչության.
7) տեսուչ՝ ճանապարհային.
8) մասնագետ՝ որակի վերահսկման.
9)վերահսկիչ՝ բողոքարկման:

32. ԵՆԹԱԽՈՒՄԲ 32. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ (ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ)՝ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Բնական գիտությունների և առողջապահության բնագավառների մասնագետները կատարում են տեխնիկական պարտականություններ, որոնք առնչվում են բնական գիտությունների, գյուղատնտեսության և անտառային տնտեսության, առողջարարության (սանիտարիայի), բժշկության, անասնաբուժության, դեղագործության և հարակից բնագավառներում հայեցակարգերի, սկզբունքների և մեթոդների մշակմանը և գործնական կիրառմանը, ինչպես նաև օգնություն են ցուցաբերում բժշկական խնամքի, ոչ ավանդական բժշկության, մանկաբարձության և ներշնչանքի ու աղոթքների օգնությամբ բուժման հարցերով:

2.Սույն ենթախմբի զբաղմունքների պարտականությունները հիմնականում ներառում են. հետազոտություններ անցկացնելու ընթացքում տեխնիկական աշխատանք կատարելը, որն առնչվում է բնական գիտություններին, գյուղատնտեսությանը և անտառային տնտեսությանը, առողջարարությանը, բժշկությանը, անասնաբուժությանը, դեղագործությանը և հարակից բնագավառներին. բժշկական խնամքի, ոչ ավանդական բժշկության, մանկաբարձության և ներշնչանքով և աղոթքներով բուժման հարցերով օգնություն ցուցաբերելը:

3.Բնական գիտությունների և առողջապահության բնագավառի մասնագետների գործունեությունը կարող են ղեկավարել բարձր որակավորման մասնագետները, ինչպես նաև հիմնարկների, կազմակերպությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

4.Սույն ենթախմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն և գործնական աշխատանքի զգալի փորձ: Բացի դրանից, բուժարարները և ոչ ավանդական բժշկությամբ բուժողները պետք է ունենան բնածին ընդունակություններ և գործնական աշխատանքի ընթացքում ձեռք բերված մասնագիտական մեծ փորձ: Սույն ենթախմբի աշխատողները կարող են իրենց պարտականությունները կատարել ինքնուրույնաբար, ինչպես նաև ղեկավարել այլ աշխատողներին:

5.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 321. Մասնագետներ՝ բնական գիտությունների բնագավառի.**

2)**Փոքր խումբ 322. Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ միջին բժշկական անձնակազմի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության).**

3)**Փոքր խումբ 323. Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ բժշկական խնամքի և մանկաբարձության.**

4)**Փոքր խումբ 324. Բուժարարներ և բուժողներ՝ ոչ ավանդական բժշկության:**

33. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 321. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Բնական գիտությունների բնագավառի մասնագետները կատարում են տեխնիկական պարտականություններ, որոնք առնչվում են բնական գիտությունների (ինչպիսիք են՝ բուսաբանությունը, կենսաբանությունը, կենդանաբանությունը, մանրէաբանությունը, կենսաքիմիան և այլն), ինչպես նաև գյուղատնտեսական գիտությունների բնագավառի հայեցակարգեր, սկզբունքներ և մեթոդներ մշակելուն և կիրառելուն:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. բնական գիտությունների բնագավառի հետազոտություններին կամ դրանց հայեցակարգերի, սկզբունքների և մեթոդների կիրառմանն առնչվող տեխնիկական աշխատանքներ կատարելը՝ հատկապես կենսաբանության, գյուղատնտեսության, անտառային տնտեսության բնագավառներում:

3.Նրանց գործունեությունը կարող են ղեկավարել առավել բարձր որակավորման մասնագետները և ղեկավարները: Այն կարող է ընդգրկել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն:

5. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 3211. Մասնագետներ՝ բնական գիտությունների.**

2)**Ստորին խումբ 3212. Մասնագետներ՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության.**

3)**Ստորին խումբ 3213. Խորհրդատուներ՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության:**

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3211. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Բնական գիտությունների մասնագետները կատարում են տեխնիկական պարտականություններ, որոնք առնչվում են կենսաբանության և բնական այլ գիտությունների բնագավառների հետազոտություններին, ինչպես նաև արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում, բժշկությունում, առողջապահությունում հետազոտությունների արդյունքների գործնական կիրառմանը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գիտափորձերի, փորձարկումների և վերլուծությունների համար նյութեր և սարքավորումներ նախապատրաստելը.

2)գիտափորձերի, փորձարկումների և վերլուծությունների համար բուսական, կենդանական և մարդկային բջիջներ, հյուսվածքներ կամ օրգաններ հավաքելը և նախապատրաստելը,

3)մասնագիտացման իր բնագավառում ընթերակայելը և գիտափորձեր, փորձարկումներ և վերլուծություններ կատարելը.

4)նախագծեր կազմելու համար տվյալներ հավաքելը և պահանջվող նյութերի և աշխատանքի ծավալն ու արժեքը որոշելը.

5)տեսական և գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրառելը.

6)հետազոտական սարքավորումների սպասարկում և կանխարգելիչ վերանորոգում կատարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ մանրէաբանության.

2) տեխնիկ՝ կենսաքիմիայի.

3) տեխնիկ՝ դեղագործ.

4) տեխնիկ՝ շիճուկաբանության.

5) տեխնիկ՝ կենսաբանության:

35. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3212. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

1.Գյուղատնտեսության և անտառային տնտեսության մասնագետները կատարում են տեխնիկական պարտականություններ, որոնք առնչվում են գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառների հետազոտություններին, ինչպես նաև հետազոտությունների արդյունքները գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում մշակելուն և կիրառելուն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գիտափորձերի, փորձարկումների և վերլուծության համար նյութեր և սարքավորումներ նախապատրաստելը.

2)գիտափորձերի, փորձարկումների և վերլուծության համար բուսական, կենդանական և մարդկային բջիջներ, հյուսվածքներ և օրգաններ նախապատրաստելը և նմուշներ հավաքելը.

3)մասնագիտացման իր բնագավառում ընթերակայելը և գիտափորձեր, փորձարկումներ և վերլուծություններ կատարելը.

4)սերմերի նմուշների որակի, մաքրության և աճելու արագության վերլուծություն կատարելը.

5)նախագծեր կազմելու համար տվյալներ հավաքելը և պահանջվող նյութերի և աշխատանքի ծավալն ու արժեքը որոշելը.

6)տեսական և գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրառելը.

7)հետազոտական սարքավորումների սպասարկում և վերանորոգում կատարելը.

8)սերմացուի և տնկանյութի միջատաբուսաախտաբանական վիճակի, գյուղատնտեսական և անտառային բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կատարման հսկողություն ապահովելը.

9)հիվանդություններով կամ վնասատուներով վարակվածության տարածքը և աստիճանը բացահայտելու համար գյուղատնտեսական և անտառային հանդակների հետազոտություններ, պաշտպանության քիմիական, կենսաբանական և այլ միջոցներ կիրառելու աշխատանքներ կատարելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեխնիկ՝ գյուղատնտեսության.

2) տեխնիկ՝ անտառային տնտեսության.

3) տեխնիկ՝ հողագիտության.

4) տեխնիկ-անտառագետ.

5) տեխնիկ-որսորդագետ.

6) հողաքիմիկոս.

7) հողագետ:

36. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3213. ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

1.Գյուղատնտեսության և անտառային տնտեսության խորհրդատուները ցուցաբերում են տեխնիկական օգնություն, մատուցում են գյուղատնտեսության և անտառային տնտեսության խնդիրներին ու մեթոդներին առնչվող խորհրդատվություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում կիրառվող ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին վերաբերող խորհրդատվություն մատուցելը.

2)արտադրանքի որակի, բերքատվության բարձրացման եղանակների, գործողությունների արդյունավետության բարձրացման և բնական պաշարների ու շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին առնչվող խորհրդատվություն մատուցելը,

3)գյուղատնտեսական վնասատուների և հողի քայքայման դեմ պայքարի խնդիրներին առնչվող խորհրդատվություն մատուցելը.

4)նախագծեր կազմելու համար տվյալներ հավաքելը և պահանջվող նյութերի և աշխատանքի ծավալն ու արժեքը որոշելը.

5)կատարելագործված մեթոդների և տեխնոլոգիաների յուրացումն ապահովելու նպատակով ցուցադրություններ կազմակերպելը, դասախոսություններ կարդալը և նյութերը բաշխելը.

6)տեսական և գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրառելը,

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) խորհրդատու՝ գյուղատնտեսության բնագավառի.

2) խորհրդատու՝ անտառաբուծության բնագավառի.

3) ընթերակա-խորհրդատու՝ գյուղատնտեսական ագարակի (ֆերմայի):

37. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 322. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ (ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ)՝ ՄԻՋԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ)

1.Միջին բժշկական անձնակազմի աշխատողները (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության) կատարում են տեխնիկական պարտականություններ, որոնք առնչվում են բժշկության, անասնաբուժության, ատամնաբուժության, դեղագործության, առողջարարության, առողջապահության և կից բնագավառների հայեցակարգերի, սկզբունքների և մեթոդների մշակմանը և գործնական կիրառմանը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. բժշկության, ատամնաբուժության, անասնաբուժության բնագավառներում խորհրդատվության, ախտորոշման, կանխարգելման և բուժման սահմանափակ թվով պարտականություններ կատարելը. առողջարարական և առողջաբանական պայմանների բարելավման հարցերով խորհրդատվությունը. արդյունավետ սնման և դիետայի (սննդակարգի) մեթոդներ մշակելը և կիրառելը. տեսողությունը հետազոտելը և ակնոց ու հպման (կոնտակտային) ոսպնյակներ նշանակելը, ոսկրային և մկանային համակարգերի խանգարումների կանխարգելմանը և բուժմանն առչվող խորհրդատվությունը. դեղեր և դեղագործական այլ ապրանքներ պատրաստելու և բաշխելու գործում օգնությունը. հոմեոպաթիկ բուժում (նմանաբուժություն) կամ խոսքային և այլ խանգարումների բուժում կիրառելը: Նրանց գործունեությունը կարող են ղեկավարել առողջապահության բնագավառի բարձր որակավորման մասնագետները (բացառությամբ բժշկական խնամքի): Այն կարող է ընդգրկել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1) **Ստորին խումբ 3221. Բուժակներ.**

2) **Ստորին խումբ 3222. Առողջաբաններ (հիգիենիստներ).**

3) **Ստորին խումբ 3223. Դիետաբաններ և մասնագետներ՝ ռացիոնալ սնման.**

4) **Ստորին խումբ 3224. Օպտիկներ և օպտոչափագրողներ.**

5) **Ստորին խումբ 3225. Տեխնիկ-ատամնաբույժներ.**

6) **Ստորին խումբ 3226. Ֆիզիոթերապևտներ և օժանդակ աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

7) **Ստորին խումբ 3227. Բուժակներ և տեխնիկ-անասնաբույժներ.**

8) **Ստորին խումբ 3228. Դեղագործներ.**

9)**Ստորին խումբ 3229. Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ միջին բժշկական անձնակազմի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության), այլ խմբերում չներառված:**

38. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3221. ԲՈՒԺԱԿՆԵՐ

1.Բուժակները կատարում են խորհրդատվությանը, ախտորոշմանը, կանխարգելմանը և բուժմանն առնչվող բժշկական պարտականություններ, որոնք ունեն առավել սահմանափակ ոլորտ և բարդություն, քան այն պարտականությունները, որոնք կատարում են բժիշկները: Նրանք հիմնարկներում կամ դաշտային պայմաններում աշխատում են ինքնուրույնաբար կամ բժիշկների հսկողությամբ և ղեկավարությամբ՝ հանդիսանալով առողջապահության հասարակական ծառայության բաղադրիչ մասը, և կարող են գործ ունենալ հիմնականում այն հիվանդությունների և խանգարումների հետ, որոնք տարածված են իրենց տարածաշրջանում, կամ կիրառել բուժման յուրահատուկ ձևեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)առավել հաճախակի հանդիպող հիվանդությունների բնորոշ դեպքերը ախտորոշելը, սուր հիվանդությունների և դժբախտ պատահարների դեպքում առաջին անհետաձգելի բուժօգնություն ցուցաբերելը, հիվանդների ընդհանուր խնամքը իրականացնելը.

2)առողջաբանության (հիգիենայի), դիետիկ սնման կարգավորման հարցերի և բժշկական այլ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ բնակչության խմբերին կամ առանձին անձանց խորհրդատվություն մատուցելը.

3)ախտորոշելու կամ առավել բարդ դեպքերում բժիշկների մոտ ուղարկելու համար բժշկական հետազոտություններ կատարելը.

4)դեղեր նշանակելը և ախտորոշմամբ հաստատված հիվանդություններ, խանգարումներ և վնասվածքներ բուժելը.

5) ոչ բարդ վիրաբուժական վիրահատություններ կատարելը.

6) լաբորատոր պարզագույն հետազոտություններ կատարելը.
7)ընթացիկ առողջարարական հսկողություն կատարելը, հակահամաճարակային միջոցառումներ կազմակերպելը և անցկացնելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) բուժակ.
2) բուժակ-լաբորանտ:

39. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3222. ԱՌՈՂՋԱԲԱՆՆԵՐ (ՀԻԳԻԵՆԻՍՏՆԵՐ)

1.Առողջաբանները (հիգիենիստները) հսկում են առողջարարական (սանիտարական) պայմանների ու նորմերի պահպանումը, ցուցաբերում են օգնություն առողջարարական պայմանների և շրջակա միջավայրի պաշտպանության, խորհրդատվություն են մատուցում առողջաբանության և առողջարարության հարցերով:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)շրջակա միջավայրի առողջարարական վիճակի ապահովմանն առնչվող խնդիրների և մեթոդների հարցերով տեսչական ստուգում կատարելը և խորհրդատվություն մատուցելը.
2)առողջարարական վիճակը պահպանելու կամ բարելավելու, ջրի, օդի, սննդամթերքի կամ հողի աղտոտումը կանխելու միջոցառումներ ձեռնարկելը.
3)կանխարգելիչ կամ չեզոքացնող միջոցառումներ ձեռնարկելը, ինչպիսիք են՝ հիվանդություններ փոխանցող օրգանիզմների կամ օդում վնասակար նյութերի քանակ վերահսկելը, սննդամթերքը վերամշակելիս առողջարարական նորմերը պահպանելը, թափոններ տեղավորելը և հասարակական վայրերի մաքրությունը վերահսկելը.
4)առողջաբանության, առողջարարության, շրջակա միջավայրի պաշտպանության կատարյալ մեթոդների և տեխնոլոգիաների տարածումն ապահովելու նպատակով ցուցադրություններ կազմակերպելը, դասախոսություններ կարդալը և նյութերը բաշխելը.
5)նախագծեր կազմելու համար տվյալներ հավաքելը և պահանջվող նյութերի և աշխատանքի ծավալն ու արժեքը որոշելը.
6)առողջաբանության, առողջարարության ոլորտի տեսական և գործնական գիտելիքները աշխատանքի ընթացքում առաջացող խնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրառելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) տեսուչ՝ առողջաբանության.
2) մասնագետ՝ առողջաբանության:

40. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3223. ԴԻԵՏԱԲԱՆՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՌԱՑԻՈՆԱԼ ՍՆՄԱՆ

1.Դիետաբանները և ռացիոնալ սնման մասնագետները կատարում են հետազոտություններ, մշակում և կատարելագործում են մեթոդներ և սկզբունքներ, որոնք վերաբերում են սննդակարգը (դիետան) ընդհանուր և թերապևտիկ նպատակներով կիրառելուն:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ռացիոնալ սնման և սննդակարգի մեթոդներ մշակելը և դրանք փորձարկելը.
2)կլինիկաներում գտնվող առանձին անձանց, խմբերի կամ որոշակի ոլորտների աշխատողների համար թերապևտիկ և այլ սննդակարգերի մշակում ծրագրելը և ղեկավարելը.
3)ռացիոնալ սնման ուսուցմանը և ռացիոնալ սնման վերականգնողական ազդեցությանը վերաբերող ծրագրերին մասնակցելը.
4)դիետիկ և ռացիոնալ սնման հարցերին և առողջապահական ծրագրերի իրագործմանը վերաբերող խորհրդատվություն մատուցելը.
5)ռացիոնալ և դիետիկ սնման սկզբունքների և մեթոդների մշակման ոլորտի նվաճումներին հետևելը և համապատասխան բարձր որակավորման մասնագետների հետ մշտական շփումներ պահպանելը.

6)ռացիոնալ և դիետիկ սնման թեմաներով զրույցներ վարելը և դասախոսություններ կարդալը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) դիետաբան.
2) խորհրդատու՝ ռացիոնալ սնման:

41. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3224. ՕՊՏԻԿՆԵՐ ԵՎ ՕՊՏՈՉԱՓԱԳՐՈՂՆԵՐ

1.Օպտիկները և օպտոչափագրողներն ընտրում են ակնոց ու հպման (կոնտակտային) ոսպնյակները և խորհրդատվություն են մատուցում դրանք կամ տեսողությունը լավացնող այլ միջոցներ օգտագործելու, ինչպես նաև աշխատելու և կարդալու ժամանակ ճիշտ լուսավորության վերաբերյալ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)տեսողությունը զննելը և ակնոց, հպման ոսպնյակներ կամ տեսողությունը լավացնող այլ միջոցներ նշանակելը, բժշկական միջամտության անհրաժեշտության դեպքում հիվանդներին բժիշկների մոտ ուղարկելը.
2)ակնոցի կամ հպման ոսպնյակների ճիշտ օգտագործմանը, աշխատելու և կարդալու ժամանակ ճիշտ լուսավորությանը և տեսողությունը լավացնող այլ միջոցներին առնչվող հարցերով խորհրդատվություն մատուցելը.
3)ոսպնյակները շրջանակի մեջ դնելը և ակնոցներ կամ հպման ոսպնյակներ ընտրելու գործում հաճախորդներին օգնելը.
4)այլ աշխատողներին ղեկավարելը.
5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) օպտիկ՝ ակնոցներ նշանակող.
2) օպտիկ՝ աչքի.
3) օպտոչափագրող:

42. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3225. ՏԵԽՆԻԿ - ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺՆԵՐ

1.Տեխնիկ-ատամնաբույժները ատամնաբուժության ոլորտում կատարում են խորհրդատվությանը, ախտորոշմանը, կանխարգելմանը և բուժմանն առնչվող բժշկական պարտականություններ, որոնք ունեն առավել սահմանափակ ոլորտ և բարդություն, քան այն պարտականությունները, որոնք կատարում են բժիշկ-ստոմոտոլոգները, և օգնում են բժիշկ-ստոմոտոլոգներին՝ նախապատրաստելով և սարքին պահելով գործիքները, սարքավորումները, նյութերը, ինչպես նաև օգնում են հիվանդներին՝ նախապատրաստվել զննմանը ու բուժմանը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)դիետիկ սնման, բերանի խոռոչի առողջաբանության և այլ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ բնակչության խմբերին և առանձին անձանց խորհրդատվություն մատուցելը.
2)ախտորոշելու համար ատամնաբուժական հետազոտություններ կատարելը՝ առավել բարդ դեպքերում, եթե դա անհրաժեշտ է, հիվանդներին բժիշկ-ատամնաբույժի մոտ ուղարկելը.
3)ատամները մաքրելը, ատամի խոռոչը նախապատրաստելը և ատամնալիցք կատարելը.
4)որոշակի տեսակների պրոթեզներ, օրթոդոնտիկ և դիմածնոտային կառուցվածքներ, արհեստական ատամնապսակներ, բույթային ատամներ պատրաստելը, որոշ ոչ բարդ վիրաբուժական վիրահատություններ կատարելը.
5)գործիքներն ու սարքերը նախապատրաստելը և սարքին վիճակում պահելը.
6)ատամնաբուժական նյութեր նախապատրաստելը.
7)ատամնաբուժական հիվանդություններ ախտորոշելը, միջին բարդության հիվանդություններ բուժելը, հիվանդներին օգնելը և զննման ու բուժման նախապատրաստելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. տեխնիկ-ատամնաբույժը:

43. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3226. ՖԻԶԻՈԹԵՐԱՊԵՎՏՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Ֆիզիոթերապևտները և հարակից զբաղմունքների օժանդակ աշխատողները ձեռքով (մանուալ), անդրձայնային (ուլտրաձայնային), ջերմային, լազերային և թերապիայի այլ մեթոդներով կատարում են ոսկրամկանային, արյունատար և նյարդային համակարգերի խախտումների բուժում, ինչպես նաև ֆիզիոթերապիան և թերապիայի այդօրինակ տեսակները կիրառում են հոգեկան հիվանդություններով տառապող կամ հոգեկան շեղումներ ունեցող մարդկանց բուժելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բնակչության խմբերին կամ առանձին անձանց խորհրդատվություն մատուցելը աշխատանքի ժամանակ մարմնի ճիշտ դիրքի, վնասվածքներից ու ավելորդ լարվածությունից խուսափելու և մկանային համակարգն ամրապնդելու վերաբերյալ.

2)բուժզննում կատարելը՝ ոսկրամկանային, արյունատար կամ նյարդային համակարգերի խանգարումներն ախտորոշելու և պահանջվող բուժումը նշանակելու համար՝ անհրաժեշտության դեպքում ուղարկելով բժիշկների մոտ.

3)ոսկրամկանային, արյունատար կամ նյարդային համակարգերի խանգարումները ձեռքով բուժման մեթոդներով կամ անդրձայնային (ուլտրաձայնային), ջերմային, լազերային և այդօրինակ այլ մեթոդների օգտագործմամբ բուժելը.

4)արյան շրջանառությունը լավացնելու, նյարդային համակարգը հանգստացնելու կամ խթանելու, օրգանիզմից խարամները դուրս մղելու, հոդացավերի նվազեցմանը օժանդակելու և թերապևտիկ այլ արդյունքների հասնելու նպատակով հաճախորդներին մերսելը.

5)ֆիզիկական արատներ և շեղումներ ունեցող հաճախորդների բուժզննումը՝ նրանց պրոթեզավորման ուղարկելու համար, պրոթեզները յուրացնելու և օգտագործելու գործում նրանց օգնելը.

6)հոգեկան հիվանդություններ կամ շեղումներ ունեցող անձանց դեմքը բուժելու համար ֆիզիոթերապևտիկ և այդօրինակ մեթոդներ կիրառելը.

7)ֆիզիոթերապևտիկ բուժման սարքավորումների սարքինությունը հսկելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ֆիզիոթերապևտ.

2) ֆիզիոթերապևտ՝ մանկաբույժ.

3) բուժակ-մերսող:

44. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3227. ԲՈՒԺԱԿՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿ - ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺՆԵՐ

1.Բուժակները և տեխնիկ–անասնաբույժները կատարում են խորհրդատվական, ախտորոշման, կանխարգելման և բուժման պարտականություններ, որոնք ունեն ավելի սահմանափակ ոլորտ և բարդություն, քան բժիշկ-անասնաբույժներինը, և օգնում են բժիշկ-անասնաբույժներին՝ սարքերը և գործիքները նախապատրաստելով և սարքին վիճակում պահելով, նյութերը և կենդանիներին ստուգման և բուժման նախապատրաստելով: Նրանք աշխատում են ինքնուրույնաբար կամ բժիշկների և անասնաբույժների ղեկավարությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կենդանիների, նրանց հիվանդությունների և վնասվածքների բուժման հարցերով խորհրդատվություն մատուցելը բնակչության խմբերին և առանձին անձանց.

2)ախտորոշելու համար կենդանիների բուժզննում կատարելը և առավել բարդ դեպքերում, եթե դրա անհրաժեշտությունը կա, բժիշկ-անասնաբույժի մոտ ուղարկելը.

3)կենդանիների բուժման համար օգտագործվող գործիքները և սարքավորումները նախապատրաստելը և սարքին վիճակում պահելը.

4)կենդանիների արհեստական բեղմնավորման տեխնիկական պարտականություններ կատարելը.

5)կենդանիներին զննման ու բուժման նախապատրաստելը և բուժման ժամանակ, անհրաժեշտության դեպքում, նրանց անշարժությունն ապահովելը.

6)շինությունների, կերերի և սարքավորումների առողջարարական վիճակը հսկելը, դրանց առողջարարական մշակում կատարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բուժակ՝ անասնաբույժ.

2) տեխնիկ՝անասնաբույժ.

3) տեխնիկ՝ արհեստական բեղմնավորման.

4) մասնագետ՝ պատվաստման:

45. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3228. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ

1.Դեղագործները դեղատներում, կլինիկաներում և առողջապահական այլ հիմնարկներում դեղագետների ղեկավարությամբ պատրաստում և բաշխում են դեղամիջոցներ, թրջոցներ, դեղալուծույթներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)դեղագետների ղեկավարությամբ դեղամիջոցներ և բուժական այլ բաղադրամիջոցներ պատրաստելը.

2)դեղամիջոցներ ստուգելը և բաշխելը, բժիշկների, բժիշկ-անասնաբույժների կամ լիազորված այլ աշխատողների հանձնարարականներին համապատասխան՝ դրանց կիրառման վերաբերյալ հիվանդներին գրավոր կամ բանավոր ձևով հրահանգավորելը.

3)դեղեր և դեղագործական բաղադրություններ պատրաստելու և բաշխելու համար օգտագործվող տարաները և սարքավորումները լվանալը և նախապատրաստելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. բուժակ՝ դեղագործը:

46. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3229. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ (ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ)՝ ՄԻՋԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ), ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խմբում ընդգրկվում են միջին բժշկական անձնակազմի այն աշխատողները, ովքեր ներառված չեն փոքր խումբ 322-ի («Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ միջին բժշկական անձնակազմի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության)») այլ ստորին խմբերում:

2.Այս ստորին խմբում ներառվում են այն անձինք, ովքեր բուժման համար կիրառում են նմանաբուժությունը (հոմեոպաթիան), ծրագրում և իրականացնում են հոգեբանական ու ֆիզիկական շեղվածություն, լեզվական թերություններ ունեցող անձանց բուժօգնություն, տեսողությունը մարզելու և շտկելու համար կիրառում են ֆիզիկական վարժություններ կամ զբաղվում են կույրերի կողմնորոշման խնդիրներով:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)նմանաբուժության (հոմեոպաթիայի) մեթոդներով հիվանդություններ բուժելը.

2)հոգեկան հիվանդություններով տառապող կամ ֆիզիկական շեղումներ ունեցող մարդկանց թերապևտիկ օգնություն ցուցաբերելը նրանց ուսուցման, այլ գործունեության կամ հանգստի ժամանակ.

3)արտասանության արատներ շտկելը.

4)արտասանության հնչողություն շտկելը.

5) աչքի մկանները մարզելու օգնությամբ տեսողություն շտկելը.

6) կույրերի կողմնորոշման խնդիրներ լուծելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) նմանաբույժ (հոմեոպաթ).
2) մասնագետ՝ արտասանության արատների շտկման.
3) մասնագետ՝ արտասանության հնչողության շտկման.
4) մասնագետ՝ տեսողության շտկման:

47. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 323. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ (ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ)՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

1.Մանկաբարձության և բժշկական խնամքի օժանդակ աշխատողները զբաղվում են ծնունդների ընդունմանը և հիվանդների, վիրավորների կամ հաշմանդամների, ինչպես նաև մայրերի և նորածինների խնամքին վերաբերող գիտական հայեցակարգերի, սկզբունքների և մեթոդների գործնական կիրառմամբ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. բժշկական խնամքի և մանկաբարձության ոլորտի բժիշկներին և բարձր որակավորում ունեցող մասնագետներին կանխարգելման և բուժման բժշկական գիտելիքների գործնական կիրառման գործում օգնելը. խնամքի հարցերով օգնություն, ծառայություն և խորհրդատվություն մատուցելը. ծնունդ ընդունելը կամ ծնունդ ընդունելու գործում օգնելը. մայրերին նորածինների խնամք ուսուցանելը:

3. Մանկաբարձության և բժշկական խնամքի անձնակազմն աշխատում է բժիշկների և մանկաբարձության և բժշկական խնամքի այլ մասնագետների ղեկավարությամբ: Նրանց գործունեությունը կարող է ներառել նաև այլ աշխատողների ղեկավարելը: Սույն փոքր խմբի մասնագիտությունները պահանջում են պարտադիր միջնակարգ մասնագիտական կրթություն:

4. Այս փոքր խմբի զբաղմունքները մտնում են հետևյալ ստորին խմբերի մեջ.
1) **Ստորին խումբ 3231. Անձնակազմ՝ բժշկական խնամքի.**
2) **Ստորին խումբ 3232. Մանկաբարձներ:**

48. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3231. ԱՆՁՆԱԿԱԶՄ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ

1.Բժշկական խնամքի անձնակազմը բժշկական խնամքի հարցերով օգնում է հիվանդներին, վիրավորներին և այլ անձանց, ովքեր այդպիսի խնամքի կարիք ունեն, և ճգնաժամային իրավիճակներում աշխատանք է կատարում բժիշկների բացակայության դեպքում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հիվանդներին, վիրավորներին, հաշմանդամներին և խնամքի կարիք ունեցող այլ անձանց խնամքի հարցերով օգնություն ցուցաբերելը, բուժելը կամ խորհրդատվություն մատուցելը.

2)իրենց պարտականությունների կատարման գործում բժիշկներին օգնելը, դեղորայքով ապահովելը, վիրակապելը և այլ օգնություն ցուցաբերելը՝ բժիշկների ցուցումներին համապատասխան.

3)ճգնաժամային դեպքերում առաջին բուժօգնություն ցուցաբերելուն օժանդակելը,

4)հոգեկան հիվանդություններով տառապող հիվանդներին ֆիզիկական կամ հոգեկան բուժման նախապատրաստելուն օգնելը.

5)ֆիզիկական կամ հոգեկան շեղումներ ունեցող անձանց սոցիալական հարմարողականությանը, զարգացմանը և կրթությանը նախապատրաստելուն օգնելը.

6)հիվանդներին տանը բժշկական օգնություն ցուցաբերելը.

7)անալիզներ և գործիքների, վիրակապական միջոցների ու հիվանդների խնամքի առարկաների մանրէազերծելը.

8)առողջապահական գիտելիքների տարածման աշխատանք կատարելը, լաբորատոր հետազոտությունների համար նյութեր վերցնելը.

9)բժշկական նշանակումները խնամառուի կողմից ճիշտ կատարելն ապահովելը.

10)դեղամիջոցների ծախսը հսկելը, դրանք հաշվառելը և պահպանելը.

11)բնակչության որոշակի խմբերին բժշկական խնամքի հարցերով օգնություն, խորհրդատվություն և ծառայություններ մատուցելը.
12)այլ աշխատողներին ղեկավարելը.
13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) բուժքույր՝ հիվանդի խնամքի.
2) բուժքույր՝ տանը բժշկական խնամքի.
3) բուժքույր՝ երեխաների խնամքի.
4) բուժքույր -անզգայացնող:

49. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3232. ՄԱՆԿԱԲԱՐՁՆԵՐ

1.Մանկաբարձներն ընդունում են ծնունդներ կամ ծնունդներ ընդունելու գործում օգնում են բժիշկներին և մանկաբարձության բարձր որակավորման մասնագետներին, ծնողներին ուսուցանում են նորածինների խնամք, ցուցաբերում են նախածննդյան և ետծննդյան օգնություն:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ապագա մայրերին դիետիկ սնման, ֆիզիկական վարժությունների և հղիության շրջանում ու ծննդաբերության ժամանակ վարքագծի հարցերով խորհրդատվություն մատուցելը, նրանց ընդհանուր վիճակին և հղիության ու ծննդաբերության ընթացքին հետևելը.
2)ծնունդներ ընդունելը կամ բժիշկ-մանկաբարձներին և բարձր որակավորում ունեցող այլ մասնագետներին ծնունդներ ընդունելիս օգնելը.
3)մանկաբարձական և գինեկոլոգիական վիրահատությունների ժամանակ ընթերակայելը.
4)ետծննդյան ժամանակահատվածում մայրերին այցելելը՝ նրանց վիճակին, երեխայի զարգացմանը հետևելու համար, և ծնողներին երեխաների խնամք ուսուցանելը.
5)հղիության կանխարգելման մեթոդներին առնչվող խորհրդատվությունը և դրանց կիրառման հարցերով օգնություն ցուցաբերելը.
6)բուժքրոջ պարտականություններ կատարելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է մանկաբարձը:

50. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 324. ԲՈՒԺԱՐԱՐՆԵՐ ԵՎ ԲՈՒԺՈՂՆԵՐ՝ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ

1.Ոչ ավանդական բժշկության բուժարարները և բուժողները բուժում են ներշնչմամբ և աղոթքներով, խորհրդատվություններ են մատուցում առողջության պահպանման և բարելավման մեթոդներին առնչվող հարցերով և հոգեկան ու ֆիզիկական հիվանդությունները բուժում են ոչ ավանդական եղանակներով, ինչն արտահայտվում է օրգանիզմին օգնելով և նրա գործունեությունը խթանելով, կամ ներշնչանքի, աղոթքի և ձեռքը դնելու միջոցով:
2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ճիշտ սննդակարգի հարցերով խորհրդատվություններ մատուցելը՝ նպատակ ունենալով պահպանել և վերականգնել հոգեկան և ֆիզիկական ուժն ու առողջությունը. հիվանդներին ոչ ավանդական եղանակներով բուժելը, ինչն արտահայտվում է օրգանիզմին օգնելով և նրա գործունեությունը խթանելով. հիվանդությունները հոգեկան ազդեցության, ներշնչանքի, աղոթքի, ձեռնադրման միջոցով բուժելը: Ոչ ավանդական բժշկության բուժարարները և բուժողները, որպես կանոն, աշխատում են ինքնուրույն: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են բնածին ընդունակություններ և գործնական աշխատանքի ընթացքում ձեռք բերվող մասնագիտական մեծ փորձ: Նրանց գործունեությունը կարող է ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:
3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.
1) **Ստորին խումբ 3241. Բուժողներ՝ ոչ ավանդական բժշկության.**
2) **Ստորին խումբ 3242. Բուժարարներ:**

51. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3241. ԲՈՒԺՈՂՆԵՐ՝ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ

1.Ոչ ավանդական բժշկության բուժողները հոգեկան ու ֆիզիկական հիվանդությունները բուժում են խոտաբույսերի, դեղաբույսերի օգնությամբ և ժողովրդի կողմից ավանդաբար օգտագործվող ու օրգանիզմի կենսագործունեությունը խթանող այլ մեթոդներով և խորհրդատվություններ են մատուցում ինքնազգացողությունն ու առողջությունը պահպանելուն և բարելավելուն առնչվող հարցերով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հիվանդություններ և վնասվածքներ բուժելը խոտաբույսերի, դեղաբույսերի, միջատների և այլ միջոցներով, որոնք ավանդաբար օգտագործվում են ժողովրդի կողմից և ենթադրում են ապաքինում՝ օրգանիզմին օգնելու և դրա գործունեությունը խթանելու միջոցով.

2)ճիշտ սնմանը և վարքագծին առնչվող հարցերով խորհրդատվություն մատուցելը առանձին անձանց և բնակչության խմբերին՝ ինքնազգացողությունն ու առողջությունը պահպանելու և բարելավելու նպատակով.

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բուժակ՝ բուսաբույժ.

2) բնաբույժ:

52. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3242. ԲՈՒԺԱՐԱՐՆԵՐ

1.Բուժարարները հոգեկան և ֆիզիկական հիվանդությունները բուժում են հոգեկան ներազդմամբ, ներշնչանքով, աղոթքներով և «ձեռքը դնելով»:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հոգեկան և ֆիզիկական հիվանդությունները ներշնչանքով, հոգեկան ներազդմամբ, աղոթքներով և ձեռքը դնելով բուժելը.

2)ճիշտ վարքագծին և հավատքին առնչվող հարցերով խորհրդատվություն մատուցելը առանձին անձանց և բնակչության խմբերին՝ ինքնազգացողությունն ու առողջությունը պահպանելու և բարելավելու նպատակով,

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակ է. բուժարար՝ ներշնչանքով և աղոթքներով բուժողը:

53. ԵՆԹԱԽՈՒՄԲ 33. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Կրթության բնագավառի մասնագետները երեխաներին ուսուցանում և դաստիարակում են հանրակրթական նախնական դպրոցում և նախադպրոցական հիմնարկներում, կրթական գործունեություն են կազմակերպում և ուսուցանում հոգեկան ու ֆիզիկական շեղումներ ունեցող մեծահասակներին և երեխաներին: Այդ գործառույթները պահանջում են հատուկ պատրաստվածություն և ուսուցման ու դաստիարակության բնագավառում գործնական աշխատանքի հմտություններ:

2.Սույն ենթախմբում ներառված զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հենքի վրա մասնագիտական այլ պատրաստվածություն:

3.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. նախադպրոցական և հանրակրթական տարրական դպրոցի ուսումնական նյութեր մշակելը և մի շարք առարկաներ ուսուցանելը. լեզվական, ֆիզիկական, հաղորդակցման հմտությունների զարգացմանը նպաստող գործունեություն ծրագրելը և կազմակերպելը. ուսումնական ծրագիրը հոգեկան կամ որոշակի ֆիզիկական շեղումներ ունեցող երեխաներին հարմարեցնելը և նրանց ուսուցման ժամանակ Բրայլի տառեր, շրթունքների շարժումները կարդալու տեխնիկա և ուսուցման այլ հատուկ միջոցներ օգտագործելը. ուսուցման այլ գործունեություն ծավալելը՝ ներառելով ինքնաթիռ կամ ավտոմեքենա և այլ մեքենաներ վարելը: Նրանց գործունեությունը կարող է ներառել այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 331. Մանկավարժներ՝ տարրական կրթության.**

2)**Փոքր խումբ 332. Մանկավարժներ՝ նախադպրոցական դաստիարակության և կրթության.**

3)**Փոքր խումբ 333. Մանկավարժներ՝ հատուկ կրթության.**

4)**Փոքր խումբ 334. Դասավանդողներ՝ փոխադրամիջոցների ղեկավարում ուսուցանող:**

54. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 331. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

1.Տարրական կրթության մանկավարժներն ուսուցանում են տարրական կրթության մեկ կամ մի քանի առարկաներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ուսուցման ծրագրեր մշակելը, տարրական կրթության մեկ կամ մի քանի առարկաներ ուսուցանելը և որոշակի կրթական գործունեություն կազմակերպելը, զեկուցումներ նախապատրաստելը: Տարրական կրթության դասավանդողներն աշխատում են տարրական և նախադպրոցական ուսուցման բարձր որակավորում ունեցող մասնագետների մեթոդական ղեկավարությամբ: Նրանց պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 3310. Մանկավարժներ՝ տարրական կրթության:**

55. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3310. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

1.Տարրական կրթության մանկավարժներն ուսուցանում են տարրական կրթության մեկ կամ մի քանի առարկաներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ուսուցման ծրագրեր մշակելը, տարրական կրթության մեկ կամ մի քանի առարկաներ ուսուցանելը և որոշակի կրթական գործունեություն կազմակերպելը, զեկուցումներ նախապատրաստելը: Դրանք կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ուսուցման ծրագրեր մշակելը և լրամշակելը, ընթերցանություն, ուղղագրություն, մաթեմատիկա և այլ առարկաներ ուսուցանելը՝ հանձնարարված կամ երաշխավորված ծրագրի սահմաններում.

2)ստուգողական աշխատանքներ և խնդիրներ նախապատրաստելը, անցկացնելը և գնահատելը՝ սովորողների հմտությունները մարզելու և նրանց հաջողությունները որոշելու համար, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ պարապմունքներ անցկացնելը.

3)սովորողների՝ ուսումնական ծրագրից դուրս գործունեությունը կազմակերպելը և նրանց հսկելը.

4)ուսումնադաստիարակչական գործընթաց կազմակերպելը և անցկացնելը.

5)սովորողների անձնական հաջողությունները խրախուսելը և նրանց ձեռքբերումները ծնողների և ուսումնական մասի վարիչի հետ քննարկելը, ծնողների հետ համատեղ դաստիարակչական միջոցառումներ մշակելը.

6)սովորողներին դասարանում և դպրոցի այլ տարածքներում հսկելը.

7)զեկուցումներ պատրաստելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. ուսուցիչ՝ տարրական կրթության:

56. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 332. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

1.Նախադպրոցական դաստիարակության և կրթության մանկավարժները կազմակերպում են նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակությանը և կրթությանն առնչվող գործունեություն:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են լեզվական, ֆիզիկական, հաղորդակցման հմտությունների զարգացմանը նպաստող գործունեություն ծրագրելը և կազմակերպելը: Նախադպրոցական դաստիարակության և կրթության դասավանդողներն աշխատում են նախադպրոցական ուսուցման բարձր որակավորում ունեցող մասնագետների ղեկավարությամբ: Նրանց գործունեությունը կարող է ներառել

նաև այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 3320. Մանկավարժներ՝ նախադպրոցական դաստիարակության և կրթության:**

57. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3320. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

1.Նախադպրոցական դաստիարակության և կրթության մանկավարժները կազմակերպում են նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական և մտավոր զարգացումը, հաղորդակցման հմտություններն ապահովելուն և դրանց աջակցելուն առնչվող խմբային ու անհատական խաղեր և ուսուցողական գործունեություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)երեխաների ֆիզիկական և հաղորդակցման հմտությունների զարգացմանը նպաստող գործունեություն ծրագրելը և կազմակերպելը.

2)պատմություններ պատմելու, դերախաղերի, երգեցողության, արտասանության, ոչ պաշտոնական զրույցների և քննարկումների միջոցով լեզվական հմտությունների զարգացմանն աջակցելը.

3)երեխաների գործունեությանը հետևելը՝ նրանց հաջողությունները գնահատելու համար, և ծնողների հետ նրանց ձեռքբերումներն ու հնարավոր խնդիրները քննարկելը.

4)երեխաների վարքը հսկելը՝ նրանց անվտանգությունն ապահովելու և հակասությունները լուծելու նպատակով.

5)յուրաքանչյուր երեխայի առողջական վիճակի և դրա ամրապնդման, երեխաների համար սահմանված ապրելակարգի կատարումը հսկելը.

6)ընտանիքում երեխաների դաստիարակության հարցերով ծնողներին օգնելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) դաստիարակ՝ մանկամսուրի.

2) դաստիարակ՝ մանկապարտեզի.

3) ուսուցիչ՝ նախադպրոցական կրթության.

4) տեսուչ՝ նախադպրոցական կրթության:

58. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 333. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ

1.Հատուկ կրթության մանկավարժները որոշակի կրթական մակարդակում ուսուցանում են երեխաներին, երիտասարդ մարդկանց կամ մեծահասակներին, ովքեր ունեն հոգեկան կամ ֆիզիկական շեղումներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ուսումնական ծրագրերը ֆիզիկական կամ հոգեկան շեղումներ ունեցող անձանց որոշակի խմբի հարմարեցնելը. մեկ կամ մի քանի առարկաներ ուսուցանելը, օրինակ՝ խուլ կամ կույր մարդկանց՝ օգտագործելով Բրայլի տառերը կամ շրթունքների շարժումները կարդալու տեխնիկան և այլ հատուկ միջոցներ ու մեթոդներ. զեկուցումներ նախապատրաստելը: Հատուկ կրթության դասավանդողները աշխատում են բարձր որակավորում ունեցող մասնագետների ղեկավարությամբ: Նրանց պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 3330. Մանկավարժներ՝ հատուկ կրթության:**

59. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3330. ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ

1.Հատուկ կրթության մանկավարժները որոշակի կրթական մակարդակում ուսուցանում են երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին, ովքեր ունեն հոգեկան կամ ֆիզիկական շեղումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ուսումնական ծրագրեր մշակելը և կատարելագործելը, պահանջներին համապատասխան՝ պարապմունքներ ու միջոցառումներ նախապատրաստելը.

2)ուսուցման հատուկ միջոցներ ու մեթոդներ օգտագործելով ուսուցանելը, ինչպիսիք են՝ Բրայլի տառերը կամ շրթունքների շարժումները կարդալու տեխնիկան, որոնք ընդունելի են զանազան շեղումներ ունեցող սովորողների համար, դասարանում կատարվող աշխատանքը հսկելը.

3)իրենց ուժերի նկատմամբ վստահություն ձեռք բերելու նպատակով սովորողներին խրախուսելը, շեղումներով սահմանափակված հնարավորությունները մեծացնելու նպատակով նոր մեթոդներ գտնելու և յուրացնելու գործում նրանց օգնելը, սեփական հաջողությունները գիտակցելու գործում աջակցելը.

4)ստուգողական աշխատանքներ անցկացնելը, յուրաքանչյուր սովորողի հաջողությունները որոշելն ու գնահատելը, ուսուցման արդյունքները ծնողների, ուսումնական մասի վարիչի, բժիշկների, սոցիալական բնագավառի աշխատողների հետ քննարկելը և այլն.

5) անհատական ուսուցում կազմակեպելը.

6) հաշվետվություններ պատրաստելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ուսուցիչ՝ արատաբան.

2) ուսուցիչ՝ կույրերի կրթության.

3) ուսուցիչ՝ մտավոր արատներ ունեցող անձանց կրթության.

4) ուսուցիչ՝ ֆիզիկական արատներ ունեցող անձանց կրթության.

5) ուսուցիչ՝ խուլուհամրերի կրթության:

60. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 334. ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐ՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ

1.Փոխադրամիջոցների ղեկավարում ուսուցանող դասավանդողները ծավալում են տրանսպորտային միջոցները վարելու և կառավարելու հմտությունները սովորողների մոտ զարգացնելու գործունեություն:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ինքնաթիռներ, ավտոմեքենաներ, ինչպես նաև երկաթուղային գնացքներ և այլ փոխադրամիջոցներ վարել և կառավարել ուսուցանելը: Փոխադրամիջոցների վարում և կառավարում ուսուցանողներն աշխատում են բարձր որակավորում ունեցող մասնագետների և ղեկավարների հսկողությամբ կամ ինքնուրույնաբար: Նրանց պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն և գործնական աշխատանքի զգալի փորձ:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 3340. Դասավանդողներ՝ փոխադրամիջոցների ղեկավարում ուսուցանող:**

61. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3340. ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐ՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ

1.Փոխադրամիջոցների ղեկավարում ուսուցանող դասավանդողները ծավալում են տրանսպորտային միջոցները վարելու և կառավարելու հմտությունները սովորողների մեջ զարգացնելու գործունեություն:

2.Նրանք կարող են, օրինակ, ուսուցանել ինքնաթիռներ, ավտոմեքենաներ, երկաթուղային գնացքներ, մետրոպոլիտենի գնացքներ և այլ փոխադրամիջոցներ վարելը և կառավարելը:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)օդային և ցամաքային փոխադրամիջոցների գործողությունների և կառավարման սկզբունքներ բացատրելը.

2)ուսումնական թռիչքների, ուղևորությունների ժամանակ աշակերտներին ուղեկցելը և համապատասխան խնդիրներ բացատրելը.
3)օդային և ցամաքային փոխադրամիջոցների երթևեկության կանոնները բացատրելը.
4)այլ աշխատողներին ղեկավարելը.
5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) հրահանգիչ՝ ավտոմեքենայի վարման.
2) հրահանգիչ՝ թռիչքների ղեկավարման.
3) հրահանգիչ՝ պարաշյուտային ծառայության.
4) օդաչու-հրահանգիչ:

62. ԵՆԹԱԽՈՒՄԲ 34. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Ֆինանսատնտեսական, վարչական և սոցիալական բնագավառների աշխատողները կատարում են տեխնիկական պարտականություններ, գործնականում կիրառում են իրենց գիտելիքները ֆինանսների, վաճառքի, առևտրի, կազմակերպությունների կառավարման, հաշվապահական հաշվառման, իրավաբանական, վիճակագրական և այլ բնագավառներում, մաքսատանը, ճանապարհորդություններին, հարկմանը, սոցիալական ապահովությանը, կադրերի տեղաբաշխմանը, լիցենզիաների տրամադրմանը, ոստիկանությանը առնչվող պետական ծառայություններ կատարելիս, ինչպես նաև սոցիալական հիմնախնդիրների, զվարճությունների, սպորտի և կրոնի ոլորտներին:
2.Նշված գործառույթների կատարումն ենթադրում է որոշակի տեսական պատրաստվածություն և հատուկ գիտելիքների բնագավառի սկզբունքների և մեթոդների իրացման գործնական փորձ: Սույն ենթախմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն և հետագա մասնագիտական ուսուցում: Որոշ զբաղմունքներ պահանջում են որոշակի բնածին ընդունակություններ:
3.Սույն ենթախմբի աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են. արժեթղթերին, ապահովագրությանը և սեփականությանն առնչվող հատուկ առևտրային գործունեություն ծավալելը. ճանապարհորդություններ կազմակերպելը. տեխնիկական և այլ ապրանքների մեծածախ առևտրով զբաղվելը. աճուրդավարների և գնահատողների գործառույթներ կատարելը. առևտրային ծառայություններ մատուցելը՝ որպես առևտրի գործակալներ և բրոքերներ, վարձու գործակալներ. կազմակերպությունների կառավարմանը, հաշվապահական հաշվառմանը, իրավաբանական, վիճակագրական և այլ ծառայություններին առնչվող գործունեությունը. պետական գործունեությունը տարբեր բնագավառներում, ինչպիսիք են՝ կադրերի տեղաբաշխումը, սահմանային հսկողությունը, մաքսատուրք գանձելը, սոցիալական ապահովությունը, կադրերի նշանակումը, լիցենզիաների տրամադրումը և այլն. սոցիալական բնագավառի աշխատանքը. արդյունաբերական դիզայնի և ինտերյերների ձևավորման աշխատանքը, զվարճությունների և մարզական բնագավառի գործունեությունը. կրոնին առնչվող որոշակի գործունեություն ծավալելը: Դրանք կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:
4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.
1) **Փոքր խումբ 341. Աշխատողներ՝ ֆինանսների և առևտրի բնագավառների.**
2) **Փոքր խումբ 342. Գործակալներ՝ առևտրական-առևտրային ծառայությունների.**
3) **Փոքր խումբ 343. Աշխատողներ՝ վարչակառավարչական.**
4) **Փոքր խումբ 344. Աշխատողներ՝ պետական ծառայությունների.**
5) **Փոքր խումբ 345. Աշխատակիցներ՝ ոստիկանության, և խուզարկուներ.**
6) **Փոքր խումբ 346. Աշխատողներ՝ սոցիալական ոլորտի.**
7)**Փոքր խումբ 347. Աշխատողներ՝ արվեստի, զվարճությունների և մարզական բնագավառների.**
8)**Փոքր խումբ 348. Աշխատողներ՝ օժանդակ, կրոնական կազմակերպությունների, հոգևոր աստիճան չունեցող:**

63. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 341. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Ֆինանսների և առևտրի բնագավառների աշխատողները գնում և վաճառում են զանազան արժեթղթեր, արտարժույթ, ապահովագրության տարբեր տեսակներ, անշարժ գույք, մատուցում ճանապարհորդություններին առնչվող և առևտրային այլ ծառայություններ, հանդես գալիս որպես մեծածախ գնորդ կամ վաճառող, կազմակերպության անունից գնահատում են ապրանքի, անշարժ կամ այլ գույքի արժեքը և դրանք վաճառում աճուրդով:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. արժեթղթերի, արտարժույթի, ապրանքների և անշարժ գույքի շուկայի միտումների վերլուծությունը և դրանք իր կամ հաճախորդի անունից գնելը կամ վաճառելը. խորհրդատվությունը և ապահովագրություն վաճառելը. անշարժ գույքի սեփականության իրավունքի և ֆինանսական փաստաթղթերի հաշվառում ապահովելը, ճանապարհորդություններին վերաբերող ծառայություններ կազմակերպելը, վաճառելը և դրանց առնչվող հարցերով խորհրդատվությունը. արտադրողի կամ ներմուծողի անունից զանազան ապրանքների մեծածախ վաճառքը՝ ներառյալ տեխնիկական սարքերն ու սարքավորումները. կազմակերպությունների անունից ապրանքներ կամ ծառայություններ գնելը. ապրանքների, անշարժ կամ այլ գույքի արժեքը գնահատելը և դրանք աճուրդով վաճառելը: Նրանց գործունեությունը կարող են ղեկավարել կառավարիչները կամ բարձր որակավորում ունեցող մասնագետները: Այն կարող է ներառել այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն և հետագա մասնագիտական նախապատրաստություն:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1) **Ստորին խումբ 3411.Դիլերներ և բրոքերներ՝ արժեթղթերի և ֆինանսական փաստաթղթերի վաճառքի.**

2) **Ստորին խումբ 3412. Գործակալներ՝ ապահովագրական.**

3) **Ստորին խումբ 3413.Գործակալներ՝ գույքի վաճառքի.**

4) **Ստորին խումբ 3414. Կազմակերպիչներ՝ ճանապարհորդությունների.**

5) **Ստորին խումբ 3415. Գործակալներ՝ տեխնիկական և առևտրային վաճառքի**.

6) **Ստորին խումբ 3416. Գործակալներ՝ գնման.**

7) **Ստորին խումբ 3417. Գնահատողներ և աճուրդավարներ.**

8) **Ստորին խումբ 3419. Աշխատողներ՝ ֆինանսների և առևտրի բնագավառների, այլ խմբերում չներառված:**

64. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3411. ԴԻԼԵՐՆԵՐ ԵՎ ԲՐՈՔԵՐՆԵՐ՝ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

1.Արժեթղթեր և ֆինանսական փաստաթղթեր վաճառող դիլերները և բրոքերները գնում և վաճառում են արժեթղթեր, բաժնետոմսեր, փոխառության տոմսեր և ֆինանսական այլ փաստաթղթեր, կանխիկ ապրանքների կամ շտապ վաճառքի շուկայում՝ իրենց սեփական ընկերությունների անունից կամ հաճախորդների հանձնարարությամբ գնում և վաճառում են արտարժույթ կամ հանձնարարում են կատարել այդ գործարքները հաճախորդներին կամ ավագ գործավարներին:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հաճախորդների և ընկերությունների (որոնցում կարող են կատարվել ներդրումներ) նյութական վիճակի մասին տեղեկատվություն ստանալը.

2)արժեթղթերի, բաժնետոմսերի, փոխառությունների և ֆինանսական այլ փաստաթղթերի (ներառյալ արտարժույթը) շուկայի միտումների վերլուծությունը.

3)շուկայի վիճակի և հեռանկարների մասին ապագա գնորդներին տեղեկատվություն տրամադրելը.

4)ֆինանսական շուկայում վարկերի տրամադրման և բաժնետոմսերի ու փոխառությունների տեղաբաշխման կազմակերպմանը և պայմանների քննարկմանը մասնակցելը և խորհրդատվությունը՝ հաճախորդների կապիտալն ավելացնելու նպատակով.

5)արժեթղթերի, բաժնետոմսերի, փոխառությունների և ֆինանսական այլ փաստաթղթերի, ինչպես նաև արտարժույթի գնման և վաճառքի հրամանաթղթեր հաշվառելը և տրամադրելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բրոքեր՝ արտարժույթի փոխանակման.

2) բրոքեր՝ արժեթղթերի.

3) բրոքեր՝ բաժնետոմսերի և փոխառությունների.

4) դիլեր:

65. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3412. ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ՝ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ

1.Ապահովագրական գործակալները նոր կամ նախկին հաճախորդներին խորհրդատվություն են մատուցում ապահովագրությանն առնչվող հարցերով և վաճառում են ապահովագրության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են կյանքի ապահովագրությունը, դժբախտ դեպքերից ապահովագրությունը, մեքենաների ապահովագրությունը, երաշխիքների ապահովագրությունը, խառը ապահովագրությունը, հրդեհից ապահովագրությունը, ծովային ապահովագրությունը և այլն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հաճախորդների նյութական վիճակի մասին տեղեկատվություն ստանալը, որն անհրաժեշտ է ապահովագրության պահանջվող տեսակը և դրա պայմանները որոշելու համար.

2)կյանքի ապահովագրության, դժբախտ դեպքերից ապահովագրության, տան կամ ավտոմեքենայի ապահովագրության, խառը ապահովագրության, երեխաների, ճանապարհորդությունների, ավանդների ապահովագրության և այլ ապահովագրությունների պայմանագրեր կնքելը և ձևակերպելը.

3)ապահովագրության տեսակը, չափը և պայմանները որոշելու համար հաճախորդների հետ բանակցություններ վարելը.

4)վերաապահովագրության պայմանագրեր տեղաբաշխելը և պայմանները քննարկելը.

5)մեծածավալ կամ հատուկ նախագծերի, կայանքների և ռիսկերի ապահովագրության պայմանագրեր տեղաբաշխելը և պայմանները քննարկելը, խորհրդատվություն մատուցելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գործակալ՝ ապահովագրության.

2) բրոքեր՝ ապահովագրության.

3) ապահովագրող:

66. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3413. ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ՝ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ

1.Գույքի վաճառքի գործակալները զբաղվում են անշարժ գույք գնելով, վաճառելով, վարձակալելով, վարձակալման վճարները վճարելով՝ սովորաբար հաճախորդների անունից և նրանց հանձնարարությամբ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վաճառվող կամ վարձակալությամբ տրվող գույքի, դրա տիրոջ նյութական վիճակի և ապագա գնորդների կամ վարձակալների պահանջների մասին տեղեկատվություն ստանալը.

2)ապագա գնորդներին կամ վարձակալներին վաճառվող կամ վարձակալությամբ տրվող գույքը ցուցադրելը և վաճառքի ու վարձակալության պայմանները բացատրելը,

3)վարձակալության և սեփականության իրավունքի փոխանցման մասին պայմանագրերի կնքում կազմակերպելը.

4)տիրոջ անունից վարձավճար և փոխառություններով դրամագումարներ գանձելը և մինչև վարձակալությունը, վարձակալության ընթացքում և դրա ժամկետի ավարտից հետո գույքը զննելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) գործակալ՝ անշարժ գույքի վաճառքի.
2) գործակալ՝ ունեցվածքի վաճառքի.
3) վաճառող՝ սեփականության:

67. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3414. ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ՝ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Ճանապարհորդությունների կազմակերպիչները ծրագրում են ճանապարհորդության երթուղին և կազմում չվացուցակը, կազմակերպում են գործնական միջոցառումների կամ հանգստի ուղևորությունների տոմսերի և ուղեգրերի վաճառքը, ուղևորներին հյուրանոցներում տեղավորելը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)տրանսպորտի տարբեր տեսակների և ուղևորներին տեղավորելու համար բնակատեղերի առկայության, արժեքի և հարմարավետության մասին տեղեկատվություն ստանալը և շրջագայությանն առնչվող կազմակերպչական հարցերով խորհրդատվություն մատուցելը.
2)ճանապարհորդությունների և էքսկուրսիաների երթուղիներ մշակելը և ճանապարհորդություններ ու էքսկուրսիաներ կազմակերպելը.
3)տոմսեր և հյուրանոցային սենյակներ պատվիրելը և նախօրոք տրված պատվերները հաստատելը, ուղևորներին տոմսեր ու կտրոններ տալը և վճար գանձելը.
4)հանգստի կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար լրիվ խմբային շրջագայություններ կազմակերպելը և դրանք առանձին անձանց կամ անձանց խմբերին վաճառելը.
5)ճանապարհորդության համար անհրաժեշտ փաստաթղթեր և վկայականներ ստանալու գործում ուղևորներին օգնելը.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) խորհրդատու՝ ճանապարհորդությունների.
2) կազմակերպիչ՝ ճանապարհորդությունների.
3) տեսուչ՝ զբոսաշրջության.
4) էքսկուրսավար:

68. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3415. ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ

1.Տեխնիկական և առևտրային վաճառքի գործակալները կատարում են տարբեր ապրանքների և ծառայությունների մեծածախ վաճառք՝ ներառյալ կայանքներ, սարքավորումներ և տեխնիկական այլ արտադրանքներ, տրամադրում են դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)պատվերներ ստանալը և մեծածախ, մանրածախ, արդյունաբերական և այլ կազմակերպությունների ապրանքներ և ծառայություններ վաճառելը.
2)ապրանքների, սարքավորումների և ծառայությունների վաճառքի համար անհրաժեշտ փաստաթղթեր ձևակերպելը.
3)տեխնիկական սարքավորումները, արտադրանքը և դրանց առնչվող ծառայությունները առևտրի կազմակերպություններին կամ առանձին անձանց վաճառելը.
4)սարքավորումների բնութագրերի և աշխատանքի մասին ապագա գնորդներին ընդհանուր և հատուկ տեղեկատվություն տրամադրելը և սարքավորումների աշխատանքը ցուցադրելը.
5) արտադրողին հաճախորդի պահանջները և կարծիքը հաղորդելը.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) խորհրդատու՝ վաճառքից հետո երաշխավորված սպասարկման.
2) գործակալ՝ շրջիկ, առևտրական.

3) գործակալ՝ առևտրային.
4) վաճառող՝ տեխնիկական:

69. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3416. ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ՝ ԳՆՄԱՆ

1.Գնման գործակալները ապրանքներ և ծառայություններ են գնում արդյունաբերական, առևտրի և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անունից:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բանակցություններ վարելը և արդյունաբերական, հասարակական և այլ կազմակերպությունների համար սարքավորումներ, հումք և արտադրանք գնելու մասին պայմանագրեր կնքելը և վերավաճառքի համար ապրանքներ գնելը.

2)պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ձևակերպելը.

3)պահանջարկի, առկա պաշարների մասին տեղեկություն ստանալը և ձեռք բերած ապրանքների որակն ու քանակը, դրանց արժեքը, առաքման ժամկետները և պայմանագրի մյուս պայմանները որոշելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գնորդ.
2) գնորդ՝ ապրանքների, մանրածախ առևտրի.
3) գնորդ՝ ապրանքների, մեծածախ առևտրի.
4) գործակալ՝ գնումների.
5) գործակալ՝ մատակարարումների:

70. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3417. ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԱՎԱՐՆԵՐ

1.Գնահատողները և աճուրդավարները գնահատում են գույքը և զանազան ապրանքներ, ինչպես նաև ապահովագրությունը հատուցելիս կրած վնասը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վաճառքի կամ ապահովագրության համար ներկայացված հումքի, ինչպես նաև անշարժ գույքի, արդյունաբերական սարքավորումների, անձնական և տան գույքի, թանկարժեք քարերի և այլ իրերի որակը և արժեքը որոշելը.

2)վնասի կամ կորուստների չափը և ապահովագրությունը հատուցելիս պատճառած վնասը փոխհատուցելու համար ապահովագրական կազմակերպությունների և ապահովագրողների պատասխանատվությունը որոշելը.

3) անհրաժեշտ փաստաթղթեր ձևակերպելը.

4)սեփականության տարբեր տեսակներ, մեքենաներ, ապրանքներ, տնային կենդանիներ, մշակութային արժեքներ, ոսկերչական իրեր և այլ ապրանքներ աճուրդով վաճառելը.

5) աճուրդային վաճառքների օրինականությունը և ճշտությունը հսկելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գնահատող.
2) գնահատող՝ ապահովագրական.
3) փորձագետ-խորհրդատու՝ վնասների փոխհատուցման հայցերով.
4) փորձագետ-խորհրդատու՝ ապահովագրության.
5) փորձագետ-գնահատող.
6) աճուրդավար:

71. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3419. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է ֆինանսների և առևտրի բնագավառների աշխատողներին, ովքեր ներառված չեն փոքր խումբ 341-ի («Անձնակազմ՝ ֆինանսների և առևտրի բնագավառների») այլ ստորին խմբերում:

72. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 342. ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ-ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Առևտրական-առևտրային ծառայությունների գործակալները կապ են ստեղծում գնորդի և վաճառողի միջև, գնում և վաճառում են մեծ քանակությամբ ապրանքներ, կատարում են մաքսազերծման գործողություններ և ապահովում են ապահովագրական և ներմուծման ու արտահանման լիցենզիաների պատշաճ ձևակերպումը, աշխատանք փնտրողների համար ազատ աշխատատեղեր են ընտրում, կնքում են որոշակի աշխատանքների կատարման աշխատանքային պայմանագրեր և վաճառում առևտրային այլ ծառայություններ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. մեծ քանակությամբ ապրանքներ գնելը և վաճառելը. մաքսազերծման գործողություններ կատարելը և ապահովագրության և ներմուծման ու արտահանման լիցենզիաների պատշաճ ձևակերպում ապահովելը. աշխատանք փնտրողների համար ազատ աշխատատեղեր ընտրելը. որոշակի աշխատանքների կատարման աշխատանքային պայմանագրեր կնքելը. առևտրային այլ ծառայություններ վաճառելը, ինչպիսիք են, օրինակ, զանգվածային լրատվամիջոցներում գովազդի տեղը, տրանսպորտային ծառայությունները, վարկը և առևտրային այլ տեղեկատվությունը. դերասանների ելույթների, գրքեր հրատարակելու, ներկայացումներ բեմադրելու, երաժշտական ստեղծագործություններ ձայնագրելու և երաժշտական արտադրանք վաճառելու պայմանագրեր կնքելը: Նրանց գործունեությունը կարող են ղեկավարել կառավարիչները կամ բարձր որակավորում ունեցող մասնագետները: Այն կարող է ներառել այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն և համապատասխան վերապատրաստում:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 3421. Բրոքերներ՝ առևտրային.**

2)**Ստորին խումբ 3422. Գործակալներ՝ առևտրական-առևտրային, և առաքիչներ.**

3)**Ստորին խումբ 3423. Մասնագետներ՝ կադրային ծառայությունների և զբաղվածության կազմակերպությունների.**

4)**Ստորին խումբ 3429. Աշխատողներ՝ առևտրական-առևտրային, այլ խմբերում չներառված:**

73. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3421. ԲՐՈՔԵՐՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

1.Առևտրային բրոքերներն ապրանքահումքային շուկաներում, բորսաներում, աճուրդներում կամ շտապ վաճառքի շուկայում գնում և վաճառում են ապրանքի մեծածախ խմբաքանակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապրանք վաճառողների և գնորդների միջև կապեր հաստատելը.

2)հաճախորդի պահանջները քննարկելը (մասնավորապես՝ գնմանը, վաճառքին առնչվող), ինչպես նաև համապատասխան խորհրդատվություն մատուցելը.

3)ապրանքահումքային շուկայում ձևավորվող իրավիճակի վերաբերյալ հաճախորդներին տեղեկատվություն տրամադրելը.

4)աճուրդային գրացուցակներ (կատալոգներ) ներկայացնելը, ելակետային գներ նշանակելը, կանխիկ ապրանքների կամ շտապ վաճառքի շուկայի աճուրդներ այցելելը և աճուրդում հաճախորդի անունից գին ավելացնելը.

5)աճուրդում չվաճառված ապրանքները մասնավոր պայմանագրերով գնելու (վաճառելու) մասին բանակցություններ վարելը.

6)բեռնատեղեր ստանալը, տարանցման արժեքը սահմանելը և հաճախորդից այն գանձելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բրոքեր՝ սպառման ապրանքների.

2) բրոքեր՝ բեռնափոխադրումների.

3) բրոքեր՝ առևտրային.

4) բրոքեր՝ նավերի վարձակալման:

74. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3422. ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ-ԱՌԵՎՏՐԱՅԻՆ, ԵՎ ԱՌԱՔԻՉՆԵՐ

1.Առևտրական-առևտրային գործակալները և առաքիչները կատարում են մաքսազերծման աշխատանքներ և ապահովում են ապահովագրության, ներմուծման և արտահանման լիցենզիաների և այլ փաստաթղթերի պատշաճ ձևակերպումը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ներմուծմանը և արտահանմանն առնչվող մաքսազերծման աշխատանքներ կատարելը.

2)ապահովագրական փաստաթղթերը պատշաճորեն ձևակերպելը.

3)ներմուծման և արտահանման լիցենզիաների և այլ փաստաթղթերի պատշաճ ձևակերպում ապահովելը.

4)բեռնագրեր, առևտրական-առևտրային այլ անհրաժեշտ փաստաթղթեր ձևակերպելը, տրամադրելը և ստորագրելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գործակալ՝ մաքսազերծման.

2) առաքիչ.

3) առաքիչ՝ բեռնափոխադրումների:

75. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3423. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԿԱԴՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Կադրային ծառայությունների և զբաղվածության կազմակերպությունների մասնագետներն աշխատանք փնտրող անձանց համար ընտրում են ազատ աշխատատեղեր, գործատուների համար փնտրում են աշխատողներ, պետական և այլ հիմնարկությունների խնդրանքով կնքում են աշխատանքային պայմանագրեր՝ որոշակի աշխատանքներ կատարելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)աշխատանք փնտրող անձանց համար պետական հաստատություններում վարձակալական հիմունքներով ազատ աշխատատեղեր ընտրելը կամ մասնագիտական վերապատրաստման ծրագրերով խորհրդատվություն մատուցելը.

2)աշխատանք փնտրողների համար գործատուի հանձնարարությամբ ազատ աշխատատեղեր որոնելը.

3)վարձու կամ պայմանագրով աշխատող աշխատողների որակավորման անհրաժեշտ պահանջները և այլ բնութագրեր հիմնարկների ու կազմակերպությունների հետ քննարկելը.

4)որոշակի որակավորում ունեցող աշխատողներ որոնելը, նրանց աշխատանքի ընդունվելը, այլ աշխատանքի տեղափոխվելը և աշխատանքից ազատվելը աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխան ձևակերպելը.

5)աշխատանքային պայմանագրերը ստորագրելը.

6) անձնակազմի հաշվառում և սահմանված կադրային այլ փաստաթղթեր վարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գործակալ՝ աշխատանքային պայմանագրերի կնքման.

2) տեսուչ՝ կադրերի.

3) ծառայող՝ զբաղվածության գործակալության.

4) գործակալ՝ աշխատանքի տեղավորման:

76. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3429. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ-ԱՌԵՎՏՐԱՅԻՆ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է առևտրային ծառայությունների գործակալներին և առևտրական բրոքերներին, ովքեր կատարում են կարգադրողական աշխատանքներ և չեն ներառվում փոքր խումբ 342-ի («Գործակալներ՝ առևտրական-առևտրային գործունեության և ծառայությունների») այլ ստորին խմբերում:

2.Այս խմբում ներառվում են այն անձինք, ովքեր կազմակերպում են գործարար շփումներ, վաճառում են առևտրային ծառայություններ, ինչպիսիք են զանգվածային լրատվամիջոցներում գովազդային տեղերը, տրանսպորտային ծառայությունները, վարկը և առևտրային այլ տեղեկատվությունը, պայմանագրեր են կնքում դերասանների ու մարզիկների ելույթների, ինչպես նաև գրքեր հրատարակելու, ներկայացումներ բեմադրելու, երաժշտական ստեղծագործություններ կատարելու, դրանք ձայնագրելու և երաժշտական արտադրանքը վաճառելու մասին:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապագա գնորդների կարիքների և վաճառվող ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալը.

2)գնորդի կամ վաճառողի անունից բանակցություններ վարելն ու պայմանագրեր կնքելը և վաճառքի ու վճարման պայմանները հաճախորդին բացատրելը.

3)գնորդի կամ վաճառողի անունից համաձայնագրեր, պայմանագրեր ստորագրելը և դրանց պայմանների կատարումն ապահովելը.

4)ձեռք բերված տեղեկատվությունը պայմանավորված ձևով և պայմանավորված ժամանակին գնորդի կողմից ստանալն ապահովելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գործակալ՝ հեղինակային իրավունքի.

2) գործակալ՝ երաժշտական միջոցառումների.

3) գործակալ՝ մարզական միջոցառումների.

4) գործակալ՝ թատերական միջոցառումների.

5) գործակալ՝ գովազդային.

6) գործակալ՝ առևտրային ծառայությունների վաճառքի.

7) գործակալ՝ տրանսպորտային ծառայությունների վաճառքի:

77. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 343. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ

1.Վարչակառավարչական աշխատողները ծավալում են տեղեկատվական կապերի ապահովմանը, որևէ կազմակերպչական ստորաբաժանման փաստաթղթերի վարմանը և ներքին վարչական համակարգմանն առնչվող գործունեություն և ապահովում են տարբեր կազմակերպչական ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակումը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ տեղեկատվական կապերի ապահովմանը, որևէ կազմակերպչական ստորաբաժանման փաստաթղթերի վարմանը և ներքին վարչական համակարգմանն առնչվող գործունեություն ծավալելը՝ ստորաբաժանման ղեկավարին և մյուս աշխատակիցներին օգնելու նպատակով. նիստերի արձանագրություններ կազմելը. իրավաբանական փաստաթղթեր ուսումնասիրելը և ամփոփելը, ֆինանսական բոլոր գործառնությունների ամբողջական հաշվառումը. մաթեմատիկական, վիճակագրական և ակտուարական տվյալներ հավաքելը, մշակելը և տրամադրելը: Նրանց գործունեությունը կարող են ղեկավարել կառավարիչները կամ բարձր որակավորում ունեցող մասնագետները: Այն կարող է ներառել այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն և համապատասխան վերապատրաստում:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 3431. Աշխատողներ՝ վարչակառավարչական.**

2)**Ստորին խումբ 3432. Աշխատողներ՝ իրավաբանության.**

3)**Ստորին խումբ 3433. Հաշվապահներ.**

4)**Ստորին խումբ 3434. Աշխատողներ՝ տեղեկատվության-վիճակագրության.**

5)Ստորին խումբ 3439. Աշխատողներ՝ վարչակառավարչական, այլ խմբերում չներառված:

78. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3431. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ

1.Վարչակառավարչական աշխատողները ծավալում են տեղեկատվական կապերի ապահովմանը, որևէ կազմակերպչական ստորաբաժանման փաստաթղթերի վարմանը և ներքին վարչական համակարգմանն առնչվող գործունեություն՝ նպատակ ունենալով օգնել ստորաբաժանման ղեկավարին և մյուս աշխատակիցներին, ինչպես նաև կազմում են նիստերի արձանագրությունները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վարչակառավարչական գրագրություն և արձանագրություններ վարելը.

2)զանազան միջոցառումների և դրանց հնարավոր հետաձգումների ժամկետները համաձայնեցնելը և այդ ժամկետների պահպանման նկատմամբ հսկողությունը.

3)նիստերի համար հայտեր հավաքելը, նիստեր ծրագրելը և կազմակերպելը, ստորաբաժանումների ղեկավարների և մյուս աշխատակիցների այցերը կազմակերպելը.

4)բյուջեի նախագծեր պատրաստելուն օգնելը, ծախսերը վերահսկելը, պայմանագրերի և գնման պատվերների նախագծեր պատրաստելը.

5)վարչակառավարչական կամ կազմակերպչական բնույթի տեղեկանքներ ստանալու գործում ստորաբաժանման ղեկավարին և մյուս աշխատակիցներին օգնելը.

6)կողմնակի այցելուների կամ աշխատակիցների ընդունելություն կազմակերպելու գործում ստորաբաժանման ղեկավարին օգնելը.

7)օրենսդիր մարմիններում, դատարաններում և այլ վայրերում գումարվող նիստերի արձանագրությունները վարելը՝ կիրառելով սղագրություն և այլ միջոցներ.

8)գործնական, տեխնիկական և այլ գրագրություն վարելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) քարտուղար՝ վարչական.

2) արխիվագետ.

3) արխիվավար.

4) ընթերակա.

5) սղագրող:

79. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3432. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Իրավունքի բնագավառի աշխատողները ղեկավարներին, գլխավոր կառավարիչներին, դատապաշտպաններին, ինչպես նաև իրավագիտության բարձր որակավորում ունեցող տարբեր մասնագետներին օգնում են իրավաբանական գործերում՝ ներառյալ ապահովագրության պայմանագրերին, վարկեր տրամադրելուն և ֆինանսական այլ գործարքներին առնչվող ձևակերպումները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)իրավաբանական և այդօրինակ այլ փաստաթղթեր ուսումնասիրելը կամ դրանց ուսումնասիրությունը կազմակերպելը.

2)իրավաբանական վիճակներ բնութագրող զեկուցագրեր պատրաստելը կամ ապահովագրության և վարկեր տրամադրելու պայմանները շարադրելը.

3)որոշակի գործերի առնչվող իրավաբանական կամ տեխնիկական հարցերով խորհրդատվություն մատուցելը հաճախորդներին կամ գործակալներին.

4)անշարժ գույքի փոխանցմանը, բաժնետոմսերին և այլ գործերի վերաբերող փաստաթղթեր պատրաստելը, որոնց համար պահանջվում է ձևական գրանցում.

5)փաստաթղթերի օրինականությունը ստուգելը և դրանք ժամանակին կազմակերպության գրանցման գրասենյակներ առաքելը.

6)դատական և արբիտրաժային մարմիններին հանձնելու համար հայցային նյութեր կազմելը, դատական և արբիտրաժային գործեր հաշվառելը և պահպանելը.

7)տնտեսական պայմանագրերը և ֆինանսական գործարքներն իրավաբանորեն ձևակերպելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)կատարածու՝ դատական.
2)ծառայող՝ գրասենյակային, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ձևակերպման.
3)ծառայող՝ գրասենյակային, դատարանի.
4)իրավախորհրդատու.
5)քարտուղար՝ դատական կոլեգիայի.
6)քարտուղար՝ դատական նիստի.
7)կարգադրիչ՝ դատական:

80. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3433. ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐ

1.Հաշվապահները վարում են կազմակերպության ֆինանսական գործառնությունների լրիվ հաշվառումը, կազմում են համապատասխան հաշվապահական փաստաթղթեր, ստուգում դրանք ձևակերպելու ճշտությունը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)կազմակերպության ֆինանսական գործառնությունների ամբողջական հաշվառումը՝ հաշվապահական հաշվառման ընդհանուր սկզբունքներին համապատասխան, գլխավոր հաշվապահի անմիջական ղեկավարությամբ.
2)սկզբնական հաշվապահական փաստաթղթեր նախապատրաստելը.
3)ֆինանսական հաշվետվություններ կազմելը.
4)դրամական վճարումներին, մուտքերին և ֆինանսական այլ գործառնությունների վերաբերող փաստաթղթերը կազմելու ճշտությունը ստուգելը.
5)հաշվապահական հաշվառման բնագավառի տեսական ու գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող հիմնախնդիրները բացահայտելու և լուծելու, ինչպես նաև բուն հաշվառման ձևերը և մեթոդները կատարելագործելու համար կիրառելը.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)հաշվապահ.
2)հաշվապահ-հաշվետար:

81. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3434. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ-ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

1.Տեղեկատվության-վիճակագրության աշխատողները կատարում են մաթեմատիկական, վիճակագրական կամ ակտուարական տվյալներ հավաքելու, մշակելու և տրամադրելու աշխատանքներ, օգնում են այդ աշխատանքները ծրագրելու գործում:
2.Նրանց գործունեությունը հիմնականում ղեկավարում են բարձր որակավորում ունեցող մաթեմատիկոսները, վիճակագիրները և հարակից այլ մասնագիտությունների աշխատողներ:
3.Նրանց պարտականությունները ներառում են.
1)մաթեմատիկական, ակտուարական, վիճակագրական տվյալներ հավաքելը, մշակելը և ձևակերպելը, տվյալների հավաքման աշխատանքների ծրագրմանն օգնելը.
2)վիճակագրական հաշվեգրման և հետազոտությունների պահանջներին համապատասխան՝ նյութերի և աշխատանքի արժեքների ու ծավալների մանրակրկիտ գնահատում պատրաստելը.
3)հաշվեգրման և հետազոտությունների համար հաշվիչ մեքենաներ և սամպլինգային համակարգեր տեղադրելու, օգտագործելու և սպասարկելու ընթացքում տեխնիկական պարտականություններ կատարելը.
4)տվյալների հավաքմանն ու հաշվեգրմանը և հետազոտությունների որակի վերահսկմանն առնչվող տեխնիկական պարտականություններ կատարելը.
5)ակտուարական, վիճակագրական, մաթեմատիկական հաշվարկների և դրանց առնչվող հաշվումներ կատարելու համար էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ծրագրային ապահովության ստանդարտ համալիրներ օգտագործելը.

6)գրաֆիկական կամ աղյուսակային տեսքով արդյունքներ ներկայացնելու համար մաթեմատիկական, ակտուարական, վիճակագրական, հաշվարկային և այլ տվյալներ նախապատրաստելը.

7)կից բնագավառներում մաթեմատիկական, ակտուարական, վիճակագրական, հաշվապահական հաշվարկներ կատարելու, բնագավառի տեսական և գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող հիմնախնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրառելը.

8)հաճախորդների կամ ձեռնարկատերերի անունից գնվող կամ վաճառվող արժեթղթերի հաշվառման գրքեր վարելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) օգնական՝ հաշվապահ-հաշվետարի.

2) օգնական՝ ակտուարի.

3) օգնական՝ մաթեմատիկոսի.

4) օգնական՝ վիճակագրի.

5) վիճակագիր.

6) սակադիր:

82. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3439. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբն ընդգրկում է վարչակառավարչական այն աշխատողներին, ովքեր ներառված չեն փոքր խումբ 343-ի («Աշխատողներ՝ վարչակառավարչական») այլ ստորին խմբերում:

2.Այս ստորին խմբում ընդգրկվում են այն անձինք, ովքեր կատարում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հիմնարկներում և կազմակերպություններում ծառայողների և պատասխանատու քարտուղարների պարտականություններ, զբաղվում են քարտադարանների և տեղեկատվության այլ աղբյուրների վերլուծությամբ և պատասխանատու կառավարիչների համար կազմում են հաշվետվություններ, մատուցում խորհրդատվություն քաղաքականության, կառավարչական ծրագրերի, առկա հիմնախնդիրների և այլնի վերաբերյալ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հյուպատոսական ծառայողների պարտականություններ կատարելը.

2)նախարարություններում պատասխանատու քարտուղարների պարտականություններ կատարելը.

3)պետական կոմիտեներում պատասխանատու քարտուղարների պարտականություններ կատարելը.

4)քարտադարանների և տեղեկատվության այլ աղբյուրների օգնությամբ հետազոտություններ կատարելը և պատասխանատու կառավարիչների համար հաշվետվություններ կազմելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)քարտուղար՝ գործադիր.

2)պաշտոնյա՝ հյուպատոսական.

3)քարտուղար՝ պատասխանատու:

83. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 344. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Պետական ծառայությունների աշխատողներն ապահովում են պետական սահմանների, հարկմանը, սոցիալական ապահովության վճարումներին վերաբերող օրենքների և որոշումների կատարումը, վերահսկում, ապահովում և հաշվառում են մարդկանց մուտք ու ելքը երկիր, ապրանքների ներմուծումը և արտահանումը,

տրամադրում են լիցենզիաներ, որոնք առնչվում են առևտրաարդյունաբերական կազմակերպությունների գործունեության կազմակերպմանը և պետական կարգավորմանը ենթակա այլ գործընթացներին:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. պետական սահմանների պահպանությունը, անձանց և տրանսպորտային միջոցներ, փաստաթղթեր, սահմանով տեղափոխվող ապրանքներ ստուգելը. հարկային հայտարարագրեր ստուգելը՝ հարկերի չափը որոշելու համար, որոնք գանձվում են անձանցից և կազմակերպություններից. սոցիալական ապահովության և օգնության վճարումներին վերաբերող խնդրանքներ քննարկելը և որոշումներ կայացնելը. մարդկանց երկիր մուտք ու ելքը, ապրանքների ներմուծման և արտահանման ընթացքը վերահսկելը, ապահովելն ու հաշվառելը. շենքերի կառուցման, կազմակերպությունների գործունեության կամ պետական կարգավորմանը ենթակա այլ գործընթացների համար անհրաժեշտ լիցենզիաներ տրամադրելուն վերաբերող խնդրանքներ քննարկելը և որոշումներ կայացնելը. նրանց գործունեությունը կարող են ղեկավարել ավագ պետական ծառայողները կամ կառավարիչները: Այն կարող է ընդգրկել այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կրթություն կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն և համապատասխան վերապատրաստում:

4. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 3441. Տեսուչներ՝ մաքսային և սահմանապահ ծառայությունների.**

2)**Ստորին խումբ 3442. Ծառայողներ՝ հարկային.**

3)**Ստորին խումբ 3443. Ծառայողներ՝ պետական սոցիալական և կենսաթոշակային ապահովության.**

4)**Ստորին խումբ 3444. Ծառայողներ՝ պետական լիցենզավորման.**

5)**Ստորին խումբ 3449. Անձնակազմ՝ պետական ծառայությունների, այլ խմբերում չներառված:**

84. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3441. ՏԵՍՈՒՉՆԵՐ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Մաքսային և սահմանապահ ծառայությունների տեսուչները ստուգում են պետական սահմանը հատող անձանց և տրանսպորտային միջոցները՝ համապատասխան օրենքների, որոշումների և իրավական այլ ակտերի պահպանումն ապահովելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պետական սահմանը պահպանելը, անօրինական՝ երկիր մտած կամ երկրից դուրս եկող և նույն կերպ տարադրամ և ապրանքներ տեղափոխող անձանց ձերբակալելը.

2)պետական սահմանը հատող անձանց փաստաթղթեր ստուգելը՝ անհրաժեշտ թույլտվության առկայությունը հաստատելու նպատակով.

3)պետական սահմանը հատող անձանց բեռներ ստուգելը՝ ապրանքների և տարադրամի ներմուծմանն ու արտահանմանն առնչվող իրավական ակտերի պահանջներն ապահովելու նպատակով.

4)պետական սահմանը հատող տրանսպորտային միջոցների և բեռների փաստաթղթերը ստուգելը՝ բեռնափոխադրումներին առնչվող իրավական ակտերի պահանջն ապահովելու նպատակով.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեսուչ՝ սահմանապահ կետի.

2) տեսուչ՝ մաքսատան.

3) ծառայող՝ անձնագրերի ստուգման.

4) ծառայող՝ ներգաղթային ծառայության:

85. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3442. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ՀԱՐԿԱՅԻՆ

1.Հարկային ծառայողները ստուգում են հարկային հայտարարագրերը, գրավադրման և այլ փաստաթղթեր՝ հարկերի, տուրքերի տեսակը և ֆիզիկական ու իրավաբանական

անձանցից գանձվող գումարները որոշելու նպատակով, և առավել կարևոր գործերը հանձնում են ավագ պետական ծառայողներին կամ կառավարիչներին:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կազմակերպություններին, հիմնարկներին և հասարակությանը, հարկեր, տուրքեր որոշելուն և գանձելուն, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին ու պարտականություններին առնչվող օրենքների, որոշումների և իրավական այլ ակտերի ճիշտ ընկալման հարցերով խորհրդատվություն մատուցելը.

2)հարկային հայտարարագրեր, գրավադրման և համապատասխան այլ փաստաթղթեր ստուգելը՝ հարկերի, տուրքերի և այլ գանձումների տեսակն ու գումարը որոշելու նպատակով.

3)առավել կարևոր, բարդ և վիճելի գործերն ավագ պետական ծառայողներին կամ կառավարիչներին հանձնելը՝ տրամադրելով համապատասխան փաստաթղթեր.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեսուչ՝ հարկային.

2) վերահսկիչ-տեսուչ՝ հարկային.

3) տեսուչ՝ գումարների հավաքման և տեղափոխման:

86. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3443. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ

1.Սոցիալական և կենսաթոշակային ապահովության պետական ծառայողները քննարկում են այն խնդրանքները, որոնք վերաբերում են սոցիալական ապահովության համակարգից տրվող օգնությանը (բնամթերքով կամ կանխիկ դրամով) և պետական կենսաթոշակային ապահովությանը՝ այդպիսի օգնության կամ կենսաթոշակի իրավունքը և դրա չափը որոշելու համար, և բացառիկ, առավել կարևոր կամ վիճելի գործերն ուղարկում են ավագ պետական ծառայողներին կամ կառավարիչներին:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սոցիալական և կենսաթոշակային ապահովության ծրագրերին և վճարումների գումարներին, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին ու պարտականություններին առնչվող օրենքների, որոշումների և իրավական այլ ակտերի ճիշտ ընկալման հարցերով խորհրդատվություն մատուցելն առանձին անձանց և կազմակերպություններին.

2)խնդրանքները և համապատասխան այլ փաստաթղթեր ուսումնասիրելը՝ առանձին անձանց տրվող կենսաթոշակի կամ սոցիալական ապահովության վճարումների, կամ օգնության տեսակը և չափը որոշելու համար.

3)սոցիալական օգնությանը կամ կենսաթոշակի վճարումներին վերաբերող բացառիկ կամ առավել կարևոր, կամ վիճելի գործերն ավագ պետական ծառայողներին կամ կառավարիչներին ուղարկելը:

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծառայող՝ սոցիալական ապահովության բնագավառի.

2) ծառայող՝ կենսաթոշակային ապահովության բնագավառի.

3) ծառայող՝ սոցիալական ապահովագրության բնագավառի.

4) տեսուչ՝ սոցիալական ապահովության ծառայության:

87. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3444. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1.Պետական լիցենզավորման ծառայողները քննարկում են ապրանքներ ներմուծելու և արտահանելու, կազմակերպություններին որոշակի գործունեության իրավունք տալու, կամ պետական կարգավորմանը ենթակա այլ գործունեություն ծավալելու մասին խնդրանքները և կայացնում են համապատասխան որոշումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)լիցենզիաների տեսակներին և դրանք տալու պայմաններին վերաբերող օրենքները, որոշումները և կարգերը ճիշտ ընկալելուն, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին ու

պարտականություններին առնչվող հարցերով առանձին անձանց խորհրդատվություն մատուցելը.

2)խնդրանքները և համապատասխան այլ փաստաթղթեր քննարկելը՝ լիցենզիաներ տալու հնարավորությունը և պայմանները որոշելու համար.

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծառայող՝ լիցենզավորման.

2) տեսուչ՝ լիցենզավորման:

88. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3449. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է մաքսատուրքերի, հարկման և պետական հարակից այլ գործունեությամբ զբաղված այն անձնակազմը, որը ներառված չէ փոքր խումբ 344-ի («Աշխատողներ՝ պետական ծառայությունների») այլ ստորին խմբերում:

2.Այս ստորին խմբում ներառվում են նրանք, ովքեր տեսչական ստուգում են կատարում առևտրային գործունեության վայրերում՝ նպատակ ունենալով ապահովել առևտրում ճիշտ չափի միավորներ և կշեռքներ կիրառելը, և հսկում են գներին և աշխատավարձին վերաբերող կանոնները պահպանելը՝ բացառիկ կամ առավել կարևոր գործերն ուղարկելով ավագ պետական ծառայողներին կամ կառավարիչներին:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)առևտրային գործունեության վայրերի տեսչական ստուգում կատարելը՝ նպատակ ունենալով առևտրում ապահովել ճիշտ չափի միավորներ և կշեռքներ կիրառելը.

2)գներին վերաբերող կանոնները պահպանելու նկատմամբ հսկողությունը.

3) աշխատավարձին վերաբերող կանոնները պահպանելու նկատմամբ հսկողությունը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեսուչ՝ գների.

2) տեսուչ՝ աշխատավարձի.

3) տեսուչ՝ կշեռքների և չափի միավորների:

89. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 345. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ, ԵՎ ԽՈՒԶԱՐԿՈՒՆԵՐ

1.Ոստիկանության աշխատակիցները և խուզարկուները քննում են կատարված հանցագործությունները և ձեռք են բերում անձանց ու կազմակերպություններին վերաբերող տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել հանցագործությունները կանխելու համար, ինչպես նաև տրամադրում են քաղաքացիներին անձնագրեր, կատարում դրանցում օրենքով նախատեսված նշումներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. կատարված հանցագործությունների փաստերը և հանգամանքները քննելը՝ հանցագործներին բացահայտելու նպատակով. անձանց և կազմակերպությունների մասին տեղեկատվություն հավաքելը, որը կարող է կանխել հանցագործությունը. կազմակերպություններում, խանութներում և հասարակական այլ վայրերում դրսևորվող կասկածելի վարքագծի դեպքերը հետաքննելը. ձերբակալելը, եթե կա թույլտվություն. դատարանում հանդես գալը, ինչպես նաև քաղաքացիներին անձնագրեր տրամադրելը և դրանցում օրենքով սահմանված նշումներ կատարելը: Իրավապահ և հասարակական կարգի պահպանության մարմինների միջին անձնակազմը և խուզարկուները գործում են բարձր որակավորում ունեցող մասնագետների և ղեկավարների ղեկավարությամբ: Նրանց գործունեությունը կարող է ներառել այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են առնվազն միջնակարգ մասնագիտական կրթություն:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1) **Ստորին խումբ 3450. Աշխատակիցներ՝ ոստիկանության, և խուզարկուներ:**

90. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3450. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ, ԵՎ ԽՈՒԶԱՐԿՈՒՆԵՐ

1.Ոստիկանության աշխատակիցները և խուզարկուները հետաքննում են կատարված հանցագործությունների փաստերն ու հանգամանքները, հանցագործությունները կանխելու նպատակով ձեռք են բերում որոշակի, դժվար, մատչելի տեղեկատվություն անձերի, կազմակերպությունների ու հիմնարկների վերաբերյալ, ինչպես նաև տրամադրում են քաղաքացիներին անձնագրեր, կատարում դրանցում օրենքով նախատեսված նշումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հանցագործությունները կանխելու կամ հանցագործներին բացահայտելու նպատակով շփումներ հաստատելը և մտադրված կամ արդեն կատարված հանցագործություններին առնչվող տեղեկատվության աղբյուրներ գտնելը.

2)ապացույցներ ստանալու և հանցագործներին բացահայտելու համար իրադարձություններ և հանգամանքներ հետաքննելը, որոնք, ըստ կասկածների, կրում են քրեական բնույթ.

3)հանցագործությունները կանխելու նպատակով շփումներ հաստատելը և տեղեկատվության աղբյուրներ գտնելը, ինչը կարող է ուղեկցվել հանգամանքներին և անձերի, կազմակերպությունների ու հիմնարկների վարքագծին առնչվող դժվարություններով.

4)ապրանքների, գումարների կամ առևտրային կազմակերպություններից տեղեկատվության հնարավոր գողության կամ հաճախորդների և ծառայողների հակաօրինական վարքագծին առնչվող գործեր հետաքննելը.

5)իրավապահ մարմինների կամ պատվիրատուների անունից տարաբնույթ հանգամանքներ ուսումնասիրելը, անձանց և կազմակերպությունների վարքագիծը հետաքննելը, ապացույցներ հավաքելը.

6)կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ հավաքելը, քննություն վարելը, հանցագործությանն առնչվող անձանց և կազմակերպությունների շրջանակը ճշտելը.

7)ձերբակալելը կամ ձերբակալելուն աջակցելը, եթե դրա համար կան լիազորություններ.

8)դատարանում հանդես գալը կամ վերադաս մարմիններին և պատվիրատուներին հետաքննության հանգամանքների և արդյունքների մասին ծանուցելը.

9)քաղաքացիներին անձնագրեր տրամադրելը, դրանցում օրենքով սահմանված կարգով նշումներ կատարելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) գործակալ՝ ոստիկանության.

2) խուզարկու.

3) տեսուչ՝ հետաքննության.

4) քննիչ:

91. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 346. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ

1.Սոցիալական ոլորտի աշխատողներն այցելուներին օգնում են սոցիալական և դրան առնչվող հարցերը լուծելու գործում՝ նրանց հնարավորություն տալով հայտնաբերել և օգտագործել իրենց ռեսուրսները՝ որոշակի դժվարություններ հաղթահարելու և որոշակի նպատակների հասնելու համար:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. անձնական և սոցիալական խնդիրները լուծելու գործում առանձին անձանց և ընտանիքներին օգնելը. առանձին անձանց կամ անձանց խմբերի սոցիալական գործունեությունը կազմակերպելը. անչափահասների իրավախախտումների աճը կանխելու նպատակով նրանց նկատմամբ հսկողություն սահմանելը և իրավախախտողներին վերադաստիարակելը. անհրաժեշտ բուժում ստանալու գործում ֆիզիկական կամ հոգեկան շեղումներ ունեցող անձանց օգնելը և հասարակությանը նրանց ինտեգրվելու հնարավորությունները կատարելագործելը:

3.Սոցիալական աշխատողները գործում են իրենց անմիջական ղեկավարների կամ առավել բարձր որակավորման մասնագետների ղեկավարությամբ: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն:

4.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին ծումբ 3460. Աշխատողներ՝ սոցիալական ոլորտի:**

92. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3460. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ

1.Սոցիալական ոլորտի աշխատողներն այցելուներին օգնում են սոցիալական և դրան առնչվող հարցերը լուծելու գործում՝ նրանց հնարավորություն տալով հայտնաբերել և օգտագործել իրենց ռեսուրսները՝ որոշակի դժվարություններ հաղթահարելու և որոշակի նպատակների հասնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)անձնական և սոցիալական խնդիրները լուծելու գործում առանձին անձանց և ընտանիքներին օգնելը.

2)հաճախորդների կարիքներին վերաբերող տեղեկատվություն հավաքելը և իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ նրանց խորհրդատվություն մատուցելը.

3)իրավիճակը վերլուծելը, որում հայտնվել է հաճախորդը, և խնդիրը լուծելու զանազան մոտեցումներ առաջադրելը.

4)օգնության կարիք ունեցող և անապահով ընտանիքների մասին նյութեր հավաքելը՝ դատարանի կամ դատական գործերի համար.

5)սոցիալական ապահովության ծառայություններ ծրագրելը, գնահատելը, կատարելագործելը և զարգացնելը.

6)անչափահասների օրինախախտումների աճը կանխելու, իրավախախտողներին վերադաստիարակելու գործունեություն ծավալելը, նրանց նկատմամբ հսկողություն սահմանելը.

7)անհրաժեշտ բուժում ստանալու և հասարակության մեջ իրենց գործառույթները կատարելու հնարավորությունները զարգացնելու գործում ֆիզիկական կամ հոգեկան շեղումներ ունեցող անձանց օգնելը.

8)տնային աշխատողների ծառայությունները ծրագրելը և կազմակերպելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) տեսուչ՝ սոցիալական ծառայության.

2) տեսուչ՝ ոստիկանության մանկական սենյակի:

93. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 347. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՐՎԵՍՏԻ, ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Արվեստի, զվարճության և սպորտի բնագավառների աշխատողները զբաղվում են ապրանքների դիզայնով և ինտերյերի ձևավորմամբ, տեղեկատվություն են ներկայացնում զանգվածային լրատվության միջոցներով, զվարճացնում են հանդիսատեսին՝ բեմում, երաժշտական սրահներում, փողոցում, կրկեսում, մարզադաշտերում՝ զվարճալի ներկայացումներ ցուցադրելով, և որոշ դեպքերում զբաղվում են այդօրինակ գործունեություն ծավալողներ պատրաստելով և նրանց ղեկավարելով:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. արդյունաբերական դիզայնի կամ ինտերյերների ձևավորման աշխատանքները. զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվություն ներկայացնելը. բեմում կամ փողոցում ներկայացումներով հանդիսատեսին զվարճացնելը. հետաքրքրաշարժ հնարքներ կատարելը, աճպարարություններ ցուցադրելը, բարդ մարմնամարզական հնարքներ կատարելը, մարզական մրցույթներին մասնակցելը: Արվեստի, զվարճության և մարզական բնագավառների անձնակազմը գործում է պրոդյուսերների, մենեջերների ղեկավարությամբ կամ ինքնուրույնաբար: Նրանց պարտականությունները կարող են ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը: Սույն փոքր խմբի զբաղմունքները պահանջում են միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, ինչպես նաև զգալի գործնական փորձ:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1) **Ստորին խումբ 3471. Դիզայներներ և ձևավորողներ.**

2) **Ստորին խումբ 3472. Հաղորդավարներ՝ ռադիոյի և հեռուստատեսության.**
3) **Ստորին խումբ 3473. Երաժիշտներ, երգիչներ և պարողներ.**
4) **Ստորին խումբ 3474. Դերասաններ՝ կրկեսի.**
5) **Ստորին խումբ 3475. Մարզիկներ:**

94. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3471. ԴԻԶԱՅՆԵՐՆԵՐ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ

1.Դիզայներները և ձևավորողներն օգտագործում են գեղարվեստական մեթոդներ՝ արտաքին և ներքին ձևավորման աշխատանքներ կատարելու և ապրանքների սպառումը խթանելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արդյունաբերական և առևտրային արտադրանքի դիզայնը, հագուստի և այլ պարագաների նոր ձևեր և ոճեր ստեղծելը, գեղարվեստական լուծումները և տեխնիկական ու այլ պահանջներ համադրելու փորձեր կատարելը.

2)բնակելի և հասարակական շենքերի ինտերյերների ձևավորման ու հարդարման, տրանսպորտային միջոցների արտաքին ձևավորման նախագծեր մշակելը.

3)թատերական բեմանկարներ ստեղծելը.

4)հաճախորդի պատվերով մարմնի վրա գեղարվեստական դաջվածքներ կատարելը.

5)ցուցափեղկերի կամ ապրանքների ցուցադրման այլ վայրերի գեղարվեստական ձևավորման աշխատանքներ կատարելը՝ ապրանքների սպառումը խթանելու նպատակով.

6)արդյունաբերական և պարենային ապրանքների փաթեթավորման նոր տեսակներ և կառուցվածքային ձևեր մշակելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ձևավորող՝ ցուցադրման սրահի.
2) ձևավորող՝ ինտերյերի.
3) նախագծող-ձևավորող՝ հագուստի.
4) նախագծող-ձևավորող՝ արդյունաբերական արտադրանքի.
5) նախագծող՝ հագուստի.
6) նախագծող՝ կոշիկի.
7) նկարիչ-ձևավորող:

95. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3472. ՀԱՂՈՐԴԱՎԱՐՆԵՐ՝ ՌԱԴԻՈՅԻ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ

1.Ռադիոյի և հեռուստատեսության հաղորդավարներն ընթերցում են լուրերի տեսությունը, վարում են հարցազրույցներ և անում հայտարարություններ, անձանց ներկայացնում են ռադիոյով, հեռուստատեսությամբ, թատրոնում և այլ վայրերում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ռադիոյով և հեռուստատեսությամբ լուրերի տեսություններ և այլ հայտարարություններ հստակ և արտահայտիչ կարդալը, դրանց իմաստային բովանդակությունը ունկնդիրներին և ակնդիրներին հասցնելը.

2)ելույթ ունեցող դերասաններին կամ հարցազրույց տվող անձանց ներկայացնելը և ռադիոյով, հեռուստատեսությամբ, թատրոնում, երաժշտական սրահներում, գիշերային ակումբներում և այլ վայրերում համապատասխան հայտարարություններ անելը.

3)անձանց հետ հրապարակային հարցազրույցներ վարելը, հատկապես ռադիոյով և հեռուստատեսությամբ.

4)լեզվական կանոնների և արտասանության նորմերի իմացությունը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) հաղորդավար՝ ռադիոյի.
2) հաղորդավար՝ հեռուստատեսության.
3) ելույթավար.
4) մեկնաբան.
5) հարցազրուցավար:

96. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3473. ԵՐԱԺԻՇՏՆԵՐ, ԵՐԳԻՉՆԵՐ ԵՎ ՊԱՐՈՂՆԵՐ

1.Երաժիշտները, երգիչները և պարողները նվագում են երաժշտական գործիքներ, երգում կամ պարում են երաժշտական սրահներում, փողոցներում, գիշերային ակումբներում, կրկեսներում և այդօրինակ այլ վայրերում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մեկ կամ մի քանի երաժշտական գործիքներով մենանվագելը կամ երաժշտական նվագախմբի կազմում նվագելը.

2)ստեղծագործությունները մենակատարելը կամ երգչախմբի կամ երաժշտախմբի կազմում կատարելը.

3)մենապարելը, զուգընկերոջ հետ պարելը կամ պարային խմբի կազմում պարելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ղեկավար՝ ջազային նվագախմբի.

2) պարող՝ գիշերային ակումբների.

3) երաժիշտ.

4) երգիչ.

5) նվագակցող:

97. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3474. ԴԵՐԱՍԱՆՆԵՐ՝ ԿՐԿԵՍԻ

1.Կրկեսի դերասանները հանդիսատեսին զվարճացնում են կրկեսում և այլ վայրերում՝ ցուցադրելով զանազան ներկայացումներ կամ անհատական համարներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1) զվարճալի հնարքներ կատարելը և հետաքրքրաշարժ պատմություններ պատմելը.

2) աճպարարություններ, ձեռքերի ճարպկություն և հիպնոսի արվեստ ցուցադրելը.

3) բարդ մարմնամարզական և ձեռնածուական հնարքներ կատարելը.

4) կենդանիներ վարժեցնելը և նրանց հետ ելույթ ունենալը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մարմնամարզիկ՝ կրկեսի,

2)ծաղրածու.

3)հիպնոսող.

4)աճպարար.

5)ձեռնածու:

98. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3475. ՄԱՐԶԻԿՆԵՐ

1.Մարզիկները և հարակից զբաղմունքների անձինք մասնակցում են մարզական մրցումներին, մարզում են մարզիկներին և կազմակերպում են մարզական միջոցառումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մարզական մրցումներին և միջոցառումներին մասնակցելը.

2)մարզիկներ մարզելը՝ սպորտում նրանց կարողությունները և հմտությունները զարգացնելու համար.

3)մարզական մրցումներ և միջոցառումներ կազմակերպելը, դրանց մասնակցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մարզիկ.

2)մարզիչ.

3)կազմակերպիչ՝ մարզական մրցումների.

4)ծառայող՝ մարզական բնագավառի:

99. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 348. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՕԺԱՆԴԱԿ, ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈԳԵՎՈՐ ԱՍՏԻՃԱՆ ՉՈՒՆԵՑՈՂ

1.Կրոնական կազմակերպությունների՝ հոգևոր աստիճան չունեցող օժանդակ աշխատողները կատարում են կամ օգնում են կատարել կրոնական ծեսեր, մասնակցում են կրոնական ծիսակատարություններին և արարողություններին, քարոզում ու տարածում են կրոնական ուսմունքներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ընդգրկում են կրոնական ծեսերին և տոնական միջոցառումներին մասնակցելը, դրանց անցկացմանն օգնելը. բնակչության շրջանում հավատք քարոզելը. կրոնական կազմակերպություն այցելած քաղաքացիների հետ հավատքի վերաբերյալ զրույց վարելը:

3.Կրոնական կազմակերպությունների՝ հոգևոր աստիճան չունեցող օժանդակ աշխատողները գործում են հոգևոր աստիճան ունեցող հոգևորականների ղեկավարությամբ: Նրանց գործունեությունը կարող է ընդգրկել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 3480. Աշխատողներ՝ օժանդակ, կրոնական կազմակերպությունների, հոգևոր աստիճան չունեցող:**

100. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 3480. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՕԺԱՆԴԱԿ, ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈԳԵՎՈՐ ԱՍՏԻՃԱՆ ՉՈՒՆԵՑՈՂ

1.Կրոնական կազմակերպությունների՝ հոգևոր աստիճան չունեցող օժանդակ աշխատողները կատարում են կամ օգնում են կատարել կրոնական ծեսեր, մասնակցում են կրոնական ծիսակատարություններին և արարողություններին, քարոզում ու տարածում են կրոնական ուսմունքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հոգևոր աստիճան ունեցող սպասավորներին կրոնական ծիսակատարություններ, արարողություններ կատարելու և կրոնական ժողովներ անցկացնելու ժամանակ օգնելը.

2)մեկուսացած կրոնական ընկերակցությունում ապրելը՝ պահպանելով ընկերակցության նորմերն ու կանոնները.

3)որոշակի կրոնական ուսմունքներ քարոզելը և տարածելը, կրոնական պարապմունքներ անցկացնելը.

4)կրոնական ուխտեր պահպանելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) կուսակրոն.

2) միանձնուհի.

3) ժամկոչ:

ԲԱԺԻՆ 4

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 4. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Այս հիմնական խմբի ծառայողները նախապատրաստում են տեղեկատվությունը, ձևակերպում, հաշվառում և սպասարկում փաստաթղթերը, կատարում գրառումներ, կազմակերպում, պահպանում ու համակարգիչ են մուտքագրում և գտնում անհրաժեշտ տեղեկատվություն, կատարում են դրամարկղային գործառնություններին, ճանապարհորդությունների կազմակերպմանը, գործնական հանդիպումների տեղեկատվությանը և կազմակերպմանն առնչվող որոշակի գրասենյակային գործառույթներ, հաշվառում են ապրանքանյութական արժեքները: Նրանց պարտականությունները ենթադրում են համապատասխան մասնագիտական փորձի կամ գործնական պատրաստվածության առկայություն:

2.Այս հիմնական խմբի զբաղմունքների մեծ մասի համար որակավորումը ձեռք է բերվում անհատական ուսուցման կամ հատուկ պատրաստվածության ճանապարհով՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիման վրա սահմանված ծրագրով: Այս հիմնական խմբի մեջ մտնող մի շարք մասնագիտական խմբեր անհրաժեշտ որակավորումը ստանում են նախնական մասնագիտական կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու ընթացքում:

3.Գրասենյակների ծառայողների պարտականությունները հիմնականում ներառում են. սղագրելը, մեքենագրելը, համակարգչով՝ տեքստերի խմբագրման ծրագրերով, կամ այլ կազմտեխնիկայով աշխատելը, զանազան տեղեկատվություններ համակարգիչ մուտքագրելը, սովորական եղանակով կամ համակարգչով տարբեր թվային տվյալներ գրառելը. գույքագրմանը, արդյունաբերությանը և տրանսպորտին առնչվող գրառումներ կատարելը. արտադրական գործընթացների ընթացիկ հսկողություն կատարելը. ապրանքանյութական արժեքների և տրանսպորտային փոխադրումների հաշվառում վարելը. գրադարաններում գրասենյակային պարտականություններ կատարելը. փաստաթղթերը գործին կցելը. փոստային առաքումների պարտականություններ կատարելը. տպագրման համար նյութեր ստուգելը և նախապատրաստելը. գրագիտություն չունեցող անձանց հանձնարարությամբ գրություններ պատրաստելը. փաստաթղթերի հետ տարվող ընթացակարգային աշխատանքների միասնականությունն ապահովելը. դրամարկղային գործառնություններ, ճանապարհորդությունների կազմակերպմանն առնչվող պարտականություններ կատարելը. հաճախորդին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը և գործնական հանդիպումներ կազմակերպելը. հեռախոսային փոխարկիչով (կոմուտատորով) աշխատելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

4.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1) ենթախումբ 41. Ծառայողներ՝ գրասենյակների.

2) ենթախումբ 42. Ծառայողներ՝ սպասարկման ոլորտի:

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 41. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ

1.Տեղեկատվություն նախապատրաստելով և մշակելով, փաստաթղթեր ձևակերպելով ու հաշվառելով զբաղված ծառայողները գրառում, կազմակերպում, պահպանում և գրառումների մեջ գտնում են անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև համակարգչի օգնությամբ մշակում են ֆինանսական, վիճակագրական և այլ թվային տվյալներ, վարում են ապրանքանյութական և տրանսպորտային փոխադրումների հաշվառում, կատարում արտադրական գործընթացների նկատմամբ ընթացիկ հսկողություն, ապահովում բնակչությանը գրադարանային և փոստային ծառայություններով սպասարկելը:

2.Այս ենթախմբի զբաղմունքների մեծ մասի համար որակավորման անհրաժեշտ մակարդակը ձեռք է բերվում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիման վրա՝ սահմանված ծրագրով հատուկ պատրաստվածության կամ աշխատատեղում անհատական ուսուցման ճանապարհով:

3.Ենթախմբում ընդգրկված մի շարք զբաղմունքների համար պահանջվող որակավորումը ձեռք է բերվում նախնական մասնագիտական կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալիս:

4.Այս ենթախմբի աշխատողի պարտականությունները հիմնականում ներառում են. տեղեկատվության փոխանակման միջազգային և ազգային այլ ցանցերի միջոցով կազմակերպության գործունեության առումով հետաքրքրություն ներկայացնող նյութեր և այլ տեղեկություններ մշտապես հավաքելը, այդ տեղեկությունները նախնական-ամբողջական, ինչպես նաև ամփոփ-վերլուծական տեսքով ղեկավարությանը տրամադրելը. սղագրելը և մեքենագրելը, տեքստերի խմբագրման սարքավորումներով աշխատելը, թվային տվյալներ մուտքագրելը, համակարգչային տեխնիկայի և այլ կազմտեխնիկայի օգնությամբ հաշվելը և հաշվարկելը. մեթոդական նյութերի տեխնիկական ձևավորում, համակարգիչ մուտքագրում, վերլուծության համար անհրաժեշտ աղյուսակների, հիստոգրամների կազմում և այլն իրականացնելը. քարտուղարական պարտականություններ կատարելը. փաստաթղթերի հետ տարվող ընթացակարգային աշխատանքների միասնականությունն ապահովելը. հաշվապահական հաշվառման,

վիճակագրական, ֆինանսական և այլ թվային տվյալների սովորական կամ համակարգչով գրառումը. արտադրված, պահեստավորված, պատվիրված և բեռնաթափված ապրանքներ հաշվառելը, զանազան տվյալներ հաշվառելը և մարդատար ու բեռնատար փոխադրումների շարժը համակարգելը. գրադարաններում գրասենյակային աշխատանքներ կատարելը. փաստաթղթերը գործին կցելը. փոստային առաքումների գծով պարտականություններ կատարելը. տպագրության համար նյութեր նախապատրաստելը և ստուգելը. գրագիտություն չունեցող անձանց հանձնարարությամբ գրություններ պատրաստելը. գրասենյակային աշխատանքի լայն շրջանակի պարտականություններ կատարելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

5.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1) **Փոքր խումբ 411. Օպերատորներ՝ ստեղնային մեքենաների, և քարտուղարներ.**

2) **Փոքր խումբ 412. Ծառայողներ՝ թվային տեղեկատվություն մշակող.**

3) **Փոքր խումբ 413. Ծառայողներ՝ զբաղված նյութեր և տրանսպորտ հաշվառելով.**

4)**Փոքր խումբ 414. Աշխատողներ՝ գրադարանների, փոստային և այլ ծառայությունների.**

5)**Փոքր խումբ 419. Ծառայողներ՝ այլ, գրասենյակների:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 411. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՍՏԵՂՆԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ

1.Քարտուղարները և ստեղնային մեքենաների օպերատորները բանավոր կամ գրավոր տեղեկատվությունը գրառում են թղթի վրա կամ տեխնիկայի օգնությամբ՝ հետագա ընթերցանության համար, աշխատում են հաշվիչ-հաշվողական մեքենաներով, խմբագրում և ընդունված չափորոշիչներին համապատասխան ձևավորում են փաստաթղթերն ու թղթակցությունները, կատարում են քարտուղարական այլ գործառույթներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. թելադրվող և այլ նյութեր սղագրության տեսքով գրառելը. զանազան տեղեկատվություններ (տվյալներ) համակարգիչ մուտքագրելը, մեթոդական նյութերի տեխնիկական ձևավորման, համակարգիչ մուտքագրման, վերլուծության համար անհրաժեշտ աղյուսակների, հիստոգրամների կազմում և այլն կատարելը. տպիչով տպելը. հաշվիչ-հաշվողական մեքենաներով աշխատելը. թղթակցությունները և փաստաթղթերը ընդունված չափանիշներին համապատասխան խմբագրելը և ձևավորելը. քարտուղարական զանազան պարտականություններ կատարելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 4111. Սղագրողներ և մեքենագրողներ.**

2)**Ստորին խումբ 4112.Օպերատորներ՝ տեքստերի խմբագրման և համանման աշխատանքների կատարման սարքավորումների.**

3)**Ստորին խումբ 4113. Օպերատորներ՝ զանազան տեղեկատվության մուտքագրման սարքավորումների.**

4)**Ստորին խումբ 4114. Օպերատորներ՝ հաշվիչ մեքենայի.**

5)**Ստորին խումբ 4115. Քարտուղարներ:**

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4111. ՍՂԱԳՐՈՂՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱԳՐՈՂՆԵՐ

1.Սղագրողները և մեքենագրողները կատարում են կազմակերպությունների (հաստատությունների) կամ դրանց ենթաբաժինների ղեկավարների արդյունավետ աշխատանքն ապահովելուն առնչվող տեխնիկական գործառույթներ, վարում և վերծանում են սղագրական գրառումներ և կատարում զանազան մեքենագրական աշխատանքներ՝ պահպանելով ուղղագրական և կետադրական կանոնները, ինչպես նաև կազմակերպակարգադրական փաստաթղթերի չափորոշիչներն ու միասնականացված համակարգերը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)զեկույցներ, դասախոսություններ, ելույթներ, նիստերի և խորհրդակցությունների արձանագրություններ, օրակարգեր և այլ տեղեկատվություն սղագրելը.

2)թելադրված, հեռախոսով հաղորդված կամ տեղեկատվական կրիչների վրա գրանցված տեքստեր սղագրելը և վերծանելը.

3)սղագրությունները, ինչպես նաև ձեռագիր և տպված բնօրինակները (այդ թվում՝ օտարալեզու) տպելը՝ պահպանելով ուղղագրական և կետադրական կանոնները, ինչպես նաև կազմակերպակարգադրական փաստաթղթերի չափորոշիչները և միասնականացված համակարգը.

4)տեղեկատվության մուտքագրման, տպող և կրիչ սարքերի շահագործման կանոնները պահպանելը.

5)մեթոդական նյութերի տեխնիկական ձևավորման, համակարգիչ մուտքագրման, վերլուծության համար անհրաժեշտ աղյուսակների, հիստոգրամների կազմում և այլն կատարելը.

6)գրասենյակային աշխատանքներ կատարելը՝ փաստաթղթեր ընդունելը, հաշվառելը, պատճենահանելը, պահպանելը, արխիվացնելը, գործին կցելը և այլն.

7)փաստաթղթերի հետ տարվող ընթացակարգային աշխատանքների միասնականությունն ապահովելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)սղագրող.

2)մեքենագրող.

3)մեքենագրող՝ օտարալեզու տեքստերով աշխատող:

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4112. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՏԵՔՍՏԵՐԻ ԽՄԲԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Տեքստերի խմբագրման և համանման աշխատանքների կատարման սարքավորումների օպերատորները հեռատիպով, հեռաֆաքսով և այլ սարքավորումներով տպագրում, խմբագրում, ուղարկում և ստանում են տեղեկատվություն ու փաստաթղթեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թղթակցություններ, գործնական փաստաթղթեր և այլ նյութեր համակարգչով տպելը.

2)ձևաչափ որոշելը և տեղադրելը, եթե այն նախապես տեղադրված չէ, տեքստ ձևավորելը.

3)մուտքագրվող տեքստի ձևը, կառուցվածքը և խմբագրությունը փոփոխելը.

4)մեթոդական նյութերի տեխնիկական ձևավորման, համակարգիչ մուտքագրման, վերլուծության համար անհրաժեշտ աղյուսակների, հիստոգրամների կազմում և այլն կատարելը.

4)համակարգչի հետ միացված տպիչով աշխատելը.

5)հեռատիպով, հեռաֆաքսով և տեխնիկական այլ սարքավորումներով տեղեկատվություն և փաստաթղթեր ուղարկելը և ստանալը.

6)աշխատանքի արդյունքները տպող սարքի վրա արտածելը.

7)գրասենյակային որոշ աշխատանքներ կատարելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) օպերատոր՝ հեռաֆաքսի.

2) օպերատոր՝ հեռատպիչի.

3) օպերատոր՝ հեռահաղորդիչի:

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4113. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Զանազան տեղեկատվության մուտքագրման սարքավորումների օպերատորները էլեկտրոնային մեքենա են մուտքագրում թվային և այլ տեղեկատվություն՝ նախատեսված տեղեկատվության մուտքագրման, տվյալների մշակման և փոխանցման համար, տվյալները պահպանում զանազան կրիչների վրա:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)էլեկտրոնային հաշվիչ մեքենա տվյալներ մուտքագրելուն առնչվող նախապատրաստական գործողություններ կատարելը.

2)տեղեկատվության կրիչներից կամ կապի ուղիներից թվային և այլ տեղեկատվություն համակարգիչ մուտքագրելը և այնտեղից դա արտածելը.

3)մեքենայով ստացված հաշվարկային տվյալները կապուղիներով հաղորդելը՝ հետագա գործառնությունների համար.

4)տվյալների նախապատրաստման սարքերով տեղեկատվության տեխնիկական կրիչներ պատրաստելը.

5)տեղեկատվությունը գրառելը, ընթերցելը, մի կրիչից մյուսը վերագրառելը.

6)տեղեկատվության տեխնիկական կրիչների հսկողությունը.

7)տեղեկատվության մշակման ընթացքն ապահովելը՝ աշխատանքային ծրագրերին համապատասխան.

8)համակարգչի աշխատանքին հետևելը, տեղեկատվության մշակման ընթացքում աշխատանքի խափանման պատճառները բացահայտելը.

9)կատարված աշխատանքների արդյունքները ձևակեպելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ տվյալների մուտքագրման.

2)օպերատոր՝ հեռաֆաքսով տվյալների հաղորդման:

7. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4114. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՅԻ

1.Հաշվիչ մեքենայի օպերատորներն աշխատում են հաշվիչ մեքենաներով, կատարում սկզբնական փաստաթղթերի թվաբանական մշակում (գումարում, միտողանի և բազմատողանի փաստաթղթերի գնահատում, տոկոսների, տոկոսային հարաբերությունների հաշվում, աստիճանի բարձրացում, արմատից հանում, հիշողության սարքերում թվերի և տեղեկատվության կուտակում և այլն):

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հաշվիչ մեքենայով կատարված գործարքներ հաշվառելը.

2)էլեկտրոնային հաշվիչ մեքենաներով հաշվարկներ կատարելը.

3)մեքենայացված մշակման համար տեղեկատվություն նախապատրաստելը և ստուգող գործողություններ կատարելը.

4)մշակման ընդունված փաստաթղթերի արտաքինը ստուգելը՝ մշակվող տվյալների ծածկագրերի առկայության, փաստաթղթերը հստակ լրացնելու և դրանք պատշաճորեն ձևավորելու առումով.

5)հաշվիչ մեքենաներով մշակված տեղեկատվությունը կրիչների վրա փոխանցելը, տեղեկատվության փոխանցումը վերահսկելը, կրիչների կրկնօրինակներ պատրաստելը, տեղեկատվություն վերարտադրելը և աղյուսակավորելը.

6)առաջնային փաստաթղթերից տեղեկատվության փոխադրման ճշգրտությունը ստուգելը.

7)մեքենայացված եղանակով կազմված աղյուսակներ ստուգելը, դրանց գումարային տվյալները ստուգող թվերի հետ համեմատելը.

8)կատարված աշխատանքների արդյունքները ձևավորելը՝ հրահանգներին համապատասխան.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. օպերատոր՝ հաշվիչ մեքենայի:

8. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4115. ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ

1.Քարտուղարները կատարում են կազմակերպության ղեկավարի աշխատանքի ապահովման և սպասարկման տեխնիկական գործառույթներ՝ օգտագործելով համակարգիչ, կազմտեխնիկա և տեխնիկական այլ միջոցներ:

2.Նրանց պարտականությունների ներառում են.

1)թղթակցություններ, արձանագրություններ և զեկուցումներ խմբագրելը և ձևավորելը, թելադրությամբ կամ գրավոր նյութեր օգտագործելով աշխատելը՝ սահմանված չափորոշիչներին համապատասխան, համակարգչով աշխատելը.

2)փաստաթղթերի հետ տարվող ընթացակարգային աշխատանքների միասնականությունն ապահովելը.

3)մտից և ելից փաստաթղթերի գրանցումը, ելից փաստաթղթերի հիմքերի վարումը.

4)փոստը, թղթակցությունները և փաստաթղթերը ընդունելը, գրանցելը, հաշվառելն ու պահպանելը.

5)բանակցությունների և հանդիպումների մասին խնդրանքներ գրանցելը և դրանց կազմակերպմանն օգնելը.

6)արձակուրդները և աշխատողների կողմից օգտագործվող արտոնությունները գրանցելը և աշխատողների հաճախումները հաշվառելը.

7)գործավարության համակարգը կազմակերպելը և այդ համակարգի գործունեության համար պատասխանատվությունը,

8)խորհրդակցությունների, հանդիպումների անցկացման համար անհրաժեշտ նյութեր նախապատրաստելը.

9)իր լիազորությունների սահմաններում որոշ փաստաթղթեր պատրաստելը և ստորագրմանը ներկայացնելը.

10)ղեկավարի աշխատանքների տեխնիկական սպասարկման և ապահովման գործառույթներ կատարելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) քարտուղար.

2) քարտուղար-մեքենագրող.

3) քարտուղար-սղագրող:

9. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 412. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԹՎԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՂ

1.Թվային տեղեկատվություն մշակող ծառայողները ստանում, կազմակերպում և համակարգիչ են մուտքագրում հաշվապահական գործառնությունների, հաշվառման, վիճակագրության, ֆինանսական և այլ թվային տեղեկատվություն, հաշվառում են կանխիկ վճարով գործարքները, մշակում մուտքագրված տեղեկատվությունը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. հաշվապահական և հաշվողական տվյալներ մշակելը. արտադրվող ապրանքի մեկ միավորի արժեքը հաշվարկելը. աշխատավարձ հաշվարկելը, որոշ դեպքերում՝ աշխատավարձի դրամական գումարները նախապատրաստելը և վճարելը. կանխիկ գումարներով կատարվող գործառնություններ հաշվառելը. զանազան վիճակագրական տեղեկատվություն հավաքելը, մշակելը և մուտքագրելը. բանկերի և այլ կազմակերպությունների դրամական գործարքներին առնչվող գրասենյակային պարտականություններ կատարելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 4121. Ծառայողներ՝ հաշվապահական գործառնությունների և հաշվառման.**

2)**Ստորին խումբ 4122. Ծառայողներ՝ վիճակագրական և ֆինանսական տեղեկատվության մշակման:**

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4121. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1.Հաշվապահական գործառնությունների և հաշվառման ծառայողներն օգնում են վարել գրառումները և հաշվապահական գործառնություններին ու հաշվառումներին վերաբերող հաշվարկները, զբաղվում են արտադրության ինքնարժեքի և աշխատավարձի հաշվարկներով, ինչպես նաև վճարումներ են կատարում կանխիկ դրամով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հաշվապահական գործառնություններին և հաշվառմանը վերաբերող գրառումներ վարելը, փաստաթղթեր ձևակերպելը.

2)մեկ միավոր ապրանքի արտադրության ինքնարժեքի հաշվարկներ կատարելը.

3)աշխատած ժամերի կամ յուրաքանչյուր աշխատողի կատարած աշխատանքի տվյալների հիման վրա հասանելիք աշխատավարձը հաշվարկելը.

4)կանխիկ միջոցներով կատարվող աշխատանքը և կանխիկ հաշվարկներով կատարվող գործարքներ հաշվառելը, աշխատավարձ բաշխելը և վճարելը.

5)ընթացիկ հաշվառման գրառումներ և փաստաթղթեր ձևակերպելը, օրինակ՝ պատրաստի արտադրանքի ծավալ, նյութերի, վառելիքի, էլեկտրաէներգիայի ծախս հաշվարկելը և այլն.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հաշվետար.

2)ծառայող՝ գրասենյակի, ինքնարժեք հաշվարկող.

3)ծառայող՝ գրասենյակի, աշխատավարձ հաշվարկող.

4)հաշվառող:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4122. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ

1.Վիճակագրական և ֆինանսական տեղեկատվության մշակման ծառայողները հաշվողական տեխնիկայի միջոցների օգնությամբ ստանում, հավաքագրում և հաշվում են վիճակագրական զանազան տեղեկատվություններ, վարում են վիճակագրական փաստաթղթերի և արժեթղթերի հաշվարկներ, ինչպես նաև մասնակցում են կազմակերպության արտադրական և ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությանը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սովորական կամ հատուկ աղբյուրներից ստացվող զանազան վիճակագրական տեղեկատվություններ ստանալը և ընտրելը.

2)վերջնական գումարներ, ապահովագրությանն առնչվող վնասների գումարներ, ըստ տոկոսների գումարներ և այլ գումարներ հաշվարկելը, հաշվարկներն անհրաժեշտ աղյուսակների տեսքով տրամադրելը.

3)ֆինանսական փաստաթղթեր կազմելը, կապիտալի վրա եկած տոկոսներ, բրոքերային պարգևատրումներ, դրոշմատուրքեր հաշվարկելը.

4)ֆոնդային բաժնետոմսեր և այլ արժեթղթեր հաշվառելը, որոնք վաճառվել կամ գնվել են կազմակերպության ղեկավարի կամ հաճախորդի հանձնարարությամբ.

5)առաջնային փաստաթղթեր հավաքելը, ստացված տվյալների ճշտությունը, նախորդ ժամանակահատվածների տվյալների հետ դրանց համապատասխանությունը ստուգելը՝ ըստ առանձին ստորաբաժանումների.

6)թվային տվյալներ համակարգելը և մշակելը (դրանք խմբավորելը, արդյունքները հաշվելը, տարբեր ցուցանիշներ հաշվարկելը և այլն).

7)վիճակագրական տվյալների հիման վրա զանազան տեղեկանքներ և ֆինանսական փաստաթղթեր պատրաստելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծառայող՝ գրասենյակային, ապահովագրական վիճակագրության.

2) ծառայող՝ գրասենյակային, արժեթղթերի հաշվառման.

3) ծառայող՝ գրասենյակային, հարկերի հաշվառման:

12. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 413. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԶԲԱՂՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՀԱՇՎԱՌԵԼՈՎ

1.Նյութերի և տրանսպորտի հաշվառմամբ զբաղված ծառայողները կատարում են այնպիսի գործառույթներ, որոնք առնչվում են արտադրված, գնված, պահեստավորված,

առաքված ապրանքներին, ինչպես նաև արտադրական ծրագրերը կատարելու համար որոշակի ժամանակահատվածում անհրաժեշտ հումքին և նյութերին, հաշվառում է արտադրության տեխնոլոգիայի որոշ տվյալներ, կարգավորում մարդատար և բեռնատար տրանսպորտի շարժը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. արտադրված, պահեստավորված, պատվիրված և առաքված ապրանքները, արտադրության համար որոշակի ժամանակահատվածում անհրաժեշտ, ստացված և արտադրության պահեստում բեռնաթափված նյութերը հաշվառելը, դրանց քանակի վերաբերյալ տվյալներ հաշվարկելը. արտադրական ժամանակացույցներ կազմելուն և դրանց կատարումը հսկելուն օգնելը. արտադրության տեխնոլոգիային վերաբերող որոշ տվյալներ հաշվառելը. մարդատար և բեռնատար տրանսպորտի շարժը կարգավորելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1) Ստորին խումբ 4131. Ծառայողներ՝ գրասենյակների, պահեստների.

2) Ստորին խումբ 4132. Ծառայողներ՝ արտադրանքի հաշվառման.

3) Ստորին խումբ 4133. Ծառայողներ՝ տրանսպորտի հաշվառման:

13. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4131. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ, ՊԱՀԵՍՏՆԵՐԻ

1.Պահեստների, գրասենյակների ծառայողները հաշվարկում են զանազան նյութական արժեքներ՝ պատրաստի արտադրանք, ստացված, կշռված, առաքված, բեռնաթափված և պահեստավորված նյութեր, կիսապատրաստվածքներ, հումք, վառելիք, գործիքներ և այլն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պահեստավորված ապրանքները հաշվառելը, հանձնումը ստուգելը, պահանջմունքներ որոշելը և նոր ապրանքներ ստանալու պատվերներ կազմելը.

2)գործիքներ, պահեստամասեր, զանազան սարքավորումներ ստանալը, պահեստավորելը և համապատասխան հաշվառում վարելը.

3)ապրանք ընդունելը, բեռնաթափում կազմակերպելը և դրա նկատմամբ հսկողությունը, բեռներ կշռելը, դրանց արտաքինը զննելը, փաթեթավորումների անվնասությունը ստուգելը, համապատասխան հաշվառում վարելը.

4)նյութերի և արտադրանքի պահպանում կազմակերպելը, դրանց փչացումն ու կորուստը կանխարգելելը.

5)բեռները նշանակման վայր ուղեկցելը, տեղափոխման ժամանակ դրանց պահպանման անհրաժեշտ ռեժիմ ապահովելը.

6)անսարք գործիքների, սարքավորումների թերությունների ամփոփաթերթ կազմելը, դրանց նորոգման և դուրսգրման, ինչպես նաև պակասորդների և փչացուների արձանագրություններ կազմելը.

7)գույքագրման աշխատանքներին մասնակցելը.

8)սահմանված կարգով հաշվետվություններ պատրաստելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծառայող՝ գրասենյակային, բեռնման-բեռնաթափման աշխատանքների հաշվառման.

2) ծառայող՝ գրասենյակի, առաքման աշխատանքների հաշվառման.

3) ծառայող՝ գրասենյակի, պահեստում հաշվառման և գրանցման.

4) ծառայող՝ գրասենյակի, կշռված ապրանքի հաշվառման:

14. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4132. ԾԱՌԱՅՈՂ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1.Արտադրանքի հաշվառման ծառայողները հաշվարկում են արտադրական ծրագրերը կատարելու համար անհրաժեշտ նյութերի քանակը, կազմում են արտադրական ժամանակացույցներ և վերահսկում դրանց կատարումը, վարում են արտադրական գործընթացի և հիմնական գործունեության այլ տեսակների հաշվառում, ընդունում և հաղորդում են փոխադրամիջոցների շարժի մասին տեղեկատվություն, կարգավորում են տրանսպորտային փոխադրումները, վարում են ընթացիկ հաշվառում և պատրաստում համապատասխան հաշվետվություն:

2.Նրանց պարտավորությունները ներառում են.

1)արտադրության համար անհրաժեշտ նյութերի քանակը հաշվառելը՝ նշելով դրանց տեսակները և որակական ցուցանիշները.

2)գնորդների պատվերների, արտադրական հզորությունների և արտադրության գործունեության հիման վրա արտադրական ժամանակացույցներ կազմելը կամ դրանք կազմելուն օգնելը, անհրաժեշտ հաշվառում վարելը.

3)պահեստներում առկա նյութական պահուստների քանակը հաշվառելը, մատակարարումներ կազմակերպելը, ուշացումների պատճառները բացահայտելը.

4)փոխադրամիջոցներով տեղափոխելու համար անհրաժեշտ առաջնային փաստաթղթերի ճշտությունը ստուգելը.

5)փոխադրամիջոցների շարժի մասին տեղեկատվություն ստանալը և հաղորդելը.

6)բեռներ ստացողներին բեռներն իրենց հասցեով տեղ հասնելու ժամանակի մասին ծանուցելը.

7)աշխատողների կողմից փոխադրամիջոցների շարժի ժամանակացույցները պահպանելու նկատմամբ հսկողությունը.

8)ընթացիկ հաշվետվություն վարելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծառայող՝ գրասենյակի, նյութերի մատակարարման.

2) ծառայող՝ գրասենյակի, արտադրության ծրագրավորման.

3) ծառայող՝ գրասենյակի, նյութական արժեքների ծախսի պլանավորման.

4) ծառայող՝ գրասենյակի, գույքագրման.

5) օպերատոր՝ կարգավարական ծառայության.

6) հերթապահ՝ երթևեկության ծառայության:

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4133. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1.Տրանսպորտի հաշվառման ծառայողները վարում են տրանսպորտի աշխատանքին առնչվող հաշվառում, համակարգում են երկաթուղային, ավտոմոբիլային, օդագնացական մարդատար և բեռնատար տրանսպորտի շարժը, տեղեկատվություն են պատրաստում ղեկավարության համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տրանսպորտի աշխատանքը հաշվառելը և մարդատար ու բեռնատար տրանսպորտի շարժը համակարգելը.

2)որոշակի երկաթուղային գոտու շրջանակներում գնացքների շարժը որոշելը, համապատասխան հաշվառում կատարելը.

3)երկաթուղային պահեստներում բեռների մշակման ձևը որոշելը, վերահսկելը և հաշվառելը.

4)ավտոտրանսպորտին առնչվող աշխատանքները հաշվառելը և համակարգելը, օրինակ՝ վարորդների աշխատանքի և մեքենաների շարժի ժամանակացույց կազմելը, մեքենաներ բեռնելը և բեռնաթափելը, ապրանքները ճանապարհին պահպանելը.

5)մարդատար և բեռնատար օդագնացական տրանսպորտին առնչվող աշխատանքները հաշվառելը և համակարգելը, օրինակ՝ տեղեր պատվիրելը, ուղևորների ցուցակներ և բեռների հայտարարագրեր կազմելը.

6)տրանսպորտային միջոցների և փոխադրումների հաշվառման համար անհրաժեշտ առաջնային փաստաթղթերի ճշտությունը ստուգելը.

7)տրանսպորտային միջոցների առկայության, շարժման, տեխնիկական սպասարկման, նորոգման հաշվառում կատարելը.

8)տրանսպորտային միջոցների և տրանսպորտային փոխադրումների հաշվառման ոչ բարդ հաշվարկներ կատարելը.

9)առաջնային և փոխադրման փաստաթղթերով սակագին որոշելը, արդյունքները հաշվելը՝ ըստ յուրաքանչյուր փաստաթղթի.

10) հաշվառման համար գրառումներ կատարելը և տեղեկատվություն պատրաստելը.

11) սահմանված կարգով հաշվետվություններ պատրաստելը.

12) այլ աշխատողներին ղեկավարելը.
13) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) կարգավար՝ գրասենյակի, նավերի.
2) կարգավար՝ գրասենյակի, ավտոբուսների.
3) կարգավար՝ գնացքների.
4) կարգավար՝ բեռնատար փոխադրումների.
5) օպերատոր՝ վագոնային դեպոյի.
6) օպերատոր՝ վագոնների անցումների հաշվարկման բյուրոյի:

16. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 414. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ, ՓՈՍՏԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Գրադարանների, փոստային և այլ ծառայությունների աշխատողները գրադարաններում և փոստային բաժանմունքներում կատարում են գրասենյակային աշխատանք, ձևավորում փաստաթղթեր, մշակման համար նախապատրաստում տեղեկատվություն, ստուգում հրատարակման ենթակա նյութերը և գրառումներ կատարում ղեկավար անձանց հանձնարարությամբ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. գրքեր ձեռք բերելուն, հանձնելուն և վերադարձնելուն առնչվող տեղեկատվությունը գրառելը. զանազան փաստաթղթեր կազմելը և դասակարգելը. փոստային ստորաբաժանումներից փոստը բերելը և գրանցելը, ծածկագրելը. գրասենյակային զանազան աշխատանքներ կատարելը. շարվածասյուներ սրբագրելը և գրություններ պատրաստելը՝ գրագիտություն չունեցող անցանց հանձնարարությամբ: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1) Ստորին խումբ 4141. Աշխատողներ՝ գրադարանի և քարտադարանի.
2) Ստորին խումբ 4142. Տարածողներ և տեսակավորողներ՝ փոստի.
3) Ստորին խումբ 4143. Ծածկագրողներ, սրբագրիչներ և մասնագետներ՝ հարակից.
4) Ստորին խումբ 4144. Գրագիրներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների:

17. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4141. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ՔԱՐՏԱԴԱՐԱՆԻ

1.Գրադարանի և քարտադարանի աշխատողները դասակարգում, հաշվառում, լրակազմում և պահպանում են գրադարանի և քարտադարանի նյութերը, անց են կացնում գրադարանների և արխիվների այցելուների որակյալ սպասարկման միջոցառումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գրքեր և այլ հրատարակություններ հաշվառելուն, ձեռք բերելուն, հանձնելուն և վերադարձնելուն առնչվող գրադարանային գրառումներ կատարելը.

2)գրականության, պարբերականների և տարբեր նյութերի սպասարկումն իրականացնելը.

3)սահմանված կարգով արխիվային փաստաթղթերը տրամադրելը.

4)ֆոնդերի պահպանման կանոնների, դրանց սպասարկման կարգի ու մեթոդական ուղեցույցերի ստեղծման աշխատանքներին մասնակցելը.

5)կարգային և այբբենական գրացուցակ կազմելը.

6)գործերի անվանացուցակներ մշակելը, ծածկագրելը, համակարգելը և տեղաբաշխելը, դրանք հաշվառելը.

7)գրականության քարոզման նպատակով՝ թեմատիկ ցուցահանդեսների, գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպմանը մասնակցելը.

8)փաստաթղթեր և այլ գրառումներ պատճենահանելը.

9)փաստաթղթեր, հավաքածուներ և այլ գրառումներ համակարգելը և դասակարգելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծառայող՝ գրասենյակի, փաստաթղթեր համակարգող.
2) ծառայող՝ գրասենյակի, քարտադարանի սպասարկման.

3) արխիվավար.
4) գրադարանավար:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4142. ՏԱՐԱԾՈՂՆԵՐ ԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂՆԵՐ՝ ՓՈՍՏԻ

1.Խումբ 4142-ը հաշվի առնել խումբ 7521-ում:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4143. ԾԱԾԿԱԳՐՈՂՆԵՐ, ՍՐԲԱԳՐԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Ծածկագրողները, սրբագրիչները և հարակից մասնագետները ծածկագրում են տեղեկատվությունը, կարդում և ուղղում են տեքստեր, խմբագրված ձեռագրեր և տպագրության համար նախատեսված այլ նյութեր, վերահսկում են տպագրված փորձնական օրինակները, կատարում են գրասենյակային զանազան աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տեղեկատվությունը ծածկագրելը, հետագա մշակման համար ըստ ծածկագրերի դասակարգելը.

2)պատճենահանման համար պատրաստված տեքստերի շարվածասյուները և լրացուցիչ նյութերը բնօրինակների հետ համեմատելը, սխալներն ընդգծելը՝ սահմանված կանոններին համապատասխան շտկելու նպատակով,

3)ձևաթղթերը տեսակավորելը և համապատասխան համարներով համարակալելը.

4)գործերը կազմակերպելու և ստուգելու համար փաստաթղթեր տեսակավորելը.

5)խմբագրված ձեռագիր տեքստ ընթերցելը, փորձնական տպագրական օրինակը դրա հետ համադրելը՝ տարբեր տարրերի, գրաֆիկական և բառային միատեսակությունն ապահովելու նպատակով, նկատված ուղղագրական, կետադրական և այլ բնույթի անհամապատասխանություններն ուղղելը՝ պահպանելով շարվածքի տեխնիկական կանոնները, ինչպես նաև բովանդակային և ոճական բնույթի թերություններ շտկելը.

6)ձեռագրերի լրակազմությունն ու գլխացանկում ենթաբաժինների կարգային համարակալումը ստուգելը, եզրերի (տերմինների), պայմանանշանների, չափման միավորների և այլ գրառումների միասնականություն ու գրման ճշտություն ապահովելը.

7)տեքստի շարվածքի ճշտությունը ստուգելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծածկագրող.

2) սրբագրիչ:

20. ՍՏՈՐԻՆ ԽՈՄԲ 4144. ԳՐԱԳԻՐՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Գրագիրները և հարակից զբաղմունքների աշխատողները գրագիտություն չունեցող անձանց հանձնարարությամբ ձևակերպում են նամակներ և լրացնում տարբեր ձևաթղթեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գրագիտություն չունեցող անձանց համար նամակներ և այլ գրություններ կարդալը, դրանց վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներ և լրացուցիչ տեղեկատվություններ տալը.

2)գրագիտություն չունեցող անձանց հանձնարարությամբ նամակներ և գրություններ, փաստաթղթեր ձևակերպելը, ձևաթղթեր լրացնելը.

3)անհատ քաղաքացիներին նամակներ գրելու, պետական և այլ տեսակի ձևաթղթեր լրացնելու ժամանակ օգնություն ցուցաբերելը և խորհրդատվություն մատուցելը.

4) այլ աշխատողներին ղեկավարելը.

5) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է գրագիրը:

21. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 419. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԱՅԼ, ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ

1.Գրասենյակային այլ աշխատանքներով զբաղված ծառայողները կատարում են զանազան գրառումներ վարելուն առնչվող՝ լայն շրջանակի գրասենյակային պարտականություններ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ աշխատողների հասցեների ցուցակներ վարելը. փաստաթղթերը ցրելու նպատակով հասցեների ցուցակներ վարելը. աշխատողների և այլ ցուցակներ վարելը. այնպիսի գրասենյակային աշխատանքներ կատարելը, ինչպիսիք են փաստաթղթեր կարելը, պատճենահանելը և այլն. կադրային տարբեր հարցերով հաշվառում կատարելը, աշխատողների հաճախումները հաշվառելը և այլն: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1) **Ստորին խումբ 4190. Ծառայողներ՝ այլ, գրասենյակային:**

22. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4190. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԱՅԼ, ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ

1.Գրասենյակային այլ աշխատանքներով զբաղված ծառայողները կատարում են լայն շրջանակի գրասենյակային պարտականություններ՝ զանազան գրառումներ վարելու միջոցով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կազմակերպության բոլոր աշխատողների վերաբերյալ գրառումներ վարելը՝ նշելով ազգանունները, անունները, հասցեներն ու այլ տվյալներ.

2)աշխատողների ցուցակային կազմի հաշվառում վարելը, կազմակերպությունում բանվորների և ծառայողների գտնվելու, աշխատանքի ներկայանալու, ինչպես նաև՝ աշխատանքի ավարտման կապակցությամբ աշխատանքի վայրից հեռանալու ժամերը հաշվառելը.

3)աշխատողներին արձակուրդներ տրամադրելու և այլ հարցերի վերաբերյալ գրառումներ վարելը.

4)ծառայողական հասցեներ և հեռախոսահամարներ կազմելը և պարբերաբար նորացնելը,

5) փոստը ցրելու նպատակով ցուցակներ կազմելը և պարբերաբար նորացնելը.

6) բնակչությանն անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկանքներ ձևակերպելը և հանձնելը.

7) այլ աշխատողներին ղեկավարելը.

8) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) ծառայող՝ գրասենյակի, տեղեկատվության հավաքագրման.

2) ծառայող՝ գրասենյակի, ցուցակների վարման.

3) ծառայող՝ գրասենյակի անձնակազմի հաշվառման.

4) անձնագրավար:

23. ԵՆԹԱԽՈՒՄԲ 42. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ

1.Սպասարկման ոլորտի ծառայողներն անմիջականորեն աշխատում են հաճախորդների հետ՝ դրամարկղային գործառույթների, ճանապարհորդությունների կազմակերպման, տեղեկատվության փոխանցման, գործարար հանդիպումների կազմակերպման, հեռահաղորդակցման ժամանակ: Այս պարտականությունների կատարումը պահանջում է համապատասխան մասնագիտական փորձ կամ գործնական պատրաստվածություն:

2.Այս ենթախմբի զբաղմունքների մեծ մասի համար որակավորման անհրաժեշտ մակարդակը ձեռք է բերվում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիման վրա՝ սահմանված ծրագրով հատուկ պատրաստվածության կամ աշխատատեղում անհատական ուսուցման ճանապարհով:

3.Ենթախմբում ներառված մի շարք զբաղքունքների համար պահանջվող որակավորումը ձեռք է բերվում նախնական մասնագիտական կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալիս:

4.Այս ենթախմբում ներառված աշխատողի պարտականությունները հիմնականում ներառում են. խաղադրույքներ, գնված կամ գրավ դրված ապրանքների դիմաց՝ գումարներ, ծառայությունների համար՝ վճարումներ ընդունող բանկերում, փոստի բաժանմունքներում, կազմակերպություններում՝ դրամարկղային գործառնություններ կատարելը. ճանապարհորդություններ, գործնական հանդիպումներ կազմակերպելը. հաճախորդին անհրաժեշտ ֆինանսատնտեսական, առևտրային և այլ տեղեկատվություն տրամադրելը. մարզական և այլ միջոցառումներում, խաղատներում խաղադրույքներ ձևակերպելը և ըստ

դրանց վճարումներ կատարելը, իրերի, ունեցվածքի կամ արժեթղթերի գրավի դիմաց դրամական գումարներ տալը, հեռահաղորդակցման կետերում աշխատելը, հասարակական վայրերում հասարակական կարգ պահպանելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

5.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1) **Փոքր խումբ 421. Գանձապահներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

2) **Փոքր խումբ 422. Ծառայողներ՝ զբաղված հաճախորդների իրազեկմամբ:**

24. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 421. ԳԱՆՁԱՊԱՀՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Գանձապահները և հարակից զբաղմունքների աշխատողները դրամարկղային գործառնություններ են կատարում խանութներում և այլ կազմակերպություններում՝ ներառյալ խաղադրույքներ, գրավներ ընդունող, ինչպես նաև պարտքեր հավաքող կազմակերպությունները:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ գնված ապրանքների և ծառայությունների դիմաց հաճախորդից վճարումներ ստանալը. բանկերի և փոստային բաժանմունքների շահառուների հետ դրամական և փոստային գործառնությունների գծով աշխատանքը. մարզական մրցումներում խաղադրույքներ ընդունելը և ըստ դրանց վճարումներ կատարելը, խաղագումարով մոլախաղեր վարելը. գրավ դրված ապրանքների և արժեթղթերի դիմաց դրամական գումարներ տալը, պարտքերի գումարներ և այլ վճարներ հավաքելը: Այստեղ կարելի է ներառել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 4211. Գանձապահներ և տոմսավաճառներ.**

2)**Ստորին խումբ 4212. Գանձապահներ՝ բանկերի, աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

3)**Ստորին խումբ 4213. Բուքմեյքերներ և խաղավարներ.**

4)**Ստորին խումբ 4214. Գործակալներ՝ իրերի գրավադրման և փոխառությունների տրման.**

5)**Ստորին խումբ 4215. Աշխատողներ՝ հաշիվներով վճարներ, ժամկետանց և այլ կանխիկ գումարներ ստացող:**

25. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4211. ԳԱՆՁԱՊԱՀՆԵՐ ԵՎ ՏՈՄՍԱՎԱՃԱՌՆԵՐ

1.Գանձապահները և տոմսավաճառներն անմիջականորեն հաճախորդից ընդունում են վճարներ՝ գնված ապրանքների և խանութներում, տոմսարկղերում մատուցած ծառայությունների դիմաց, հաշվառում, վճարում և պահպանում են դրամական միջոցները և արժեթղթերը, կատարում պարզագույն բանկային գործարքներ, ինչպես նաև դրամական գումարները հանձնում են բանկերին և հարակից կազմակերպություններին:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)խանութներում, տոմսարկղերում և այդօրինակ այլ վայրերում կանխիկ, կտրոններով, քարտերով վճարներ ստանալը և ստուգելը.

2)գումարի մնացորդ և վճարումների ընդունման մասին անդորրագրեր տալը.

3)տոմսարկղերում տոմսեր տալը և համապատասխան վճարներ ընդունելը.

4)ազատ տեղերի մասին ուղևորներին տեղյակ պահելը.

5)փոխադրական և ուղևորական փաստաթղթեր ձևակերպելը և վաճառելը.

6)վճարման, վարկային հանձնարարագրերով կամ տարադրամ փոխանակելու կապակցությամբ բանկերում կանխիկ գումարներ հանձնելը, անդորրագրեր ստանալը.

7)հաշվառում վարելը և դրամարկղային մնացորդներով հաշվեկշիռ կազմելը.

8)կազմակերպություններից կանխիկ գումարներ կամ արժեթղթեր ստանալը, դրանք փաստաթղթերով ստուգելը, բանկ հանձնելու համար պատրաստելը.

9)կազմակերպության աշխատողներին աշխատավարձ վճարելը.

10)դրամարկղային սարքերով աշխատելը.

11)դրամարկղային գործարքների վերաբերյալ հաշվետվություն պատրաստելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)գանձապահ՝ խանութի.
2)տոմսավաճառ՝ կինոթատրոնի.
3)տոմսավաճառ՝ ավտոկայարանի:

26. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4212. ԳԱՆՁԱՊԱՀՆԵՐ՝ ԲԱՆԿԵՐԻ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Բանկերի գանձապահները և հարակից զբաղմունքների աշխատողներն աշխատում են անմիջականորեն բանկերի և փոստային բաժանմունքների հաճախորդների հետ՝ գումարներ ընդունելու, փոխանակելու և վճարելու, ինչպես նաև փոստային ծառայություններ մատուցելու ժամանակ:
2. Նրանց պարտականությունները ներառում են.
1)հաճախորդներից գումարներ, արժեթղթեր կամ կտրոններ ստանալը և դրանք ստուգելը.
2)հաճախորդներին գումարներ վճարելը.
3)հաճախորդների հանձնարարությամբ գումարներ փոխանցելը և հաշիվներ վճարելը.
4)հաճախորդների հաշիվները վարկավորելը և պարտագրելը.
5)հաճախորդների խնդրանքով մեկ տարադրամը մյուսով փոխանակելը.
6)կատարվող գործողություններն արձանագրելը և դրանք ստուգելը՝ դրամարկղային մնացորդներին համապատասխան.
7)հաշվառում վարելը և դրամարկղային մնացորդներով հաշվեկշիռ կազմելը.
8)դրամական մնացորդների և արժեթղթերի հաշվարկ կատարելը.
9)փոստը ստանալը, դրոշմանիշներ վաճառելը և փոստային այլ աշխատանք կատարելը, օրինակ՝ հաշիվներով մուծումներ ընդունելը, դրամական փոխանցումները և այլն.
10)այլ աշխատողներին ղեկավարելը.
11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ծառայող՝ բանկային գործառնություններ կատարող.
2)ծառայող՝ փոստային գործառնություններ կատարող.
3)դրամ փոխանակող.
4)գանձապահ՝ բանկի.
5)գանձապահ՝ փոստի:

27. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4213. ԲՈՒՔՄԵՅՔԵՐՆԵՐ ԵՎ ԽԱՂԱՎԱՐՆԵՐ

1.Բուքմեյքերները և խաղավարները մարզական և այլ միջոցառումներում որոշում են խաղադրույքները, ընդունում և վճարում են գումարներն ըստ խաղադրույքների, խաղատներում վարում են մոլախաղերը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1) կազմակերպության կանոնները բացատրելը և պարզաբանելը,
2) խաղը վարելու ռիսկայնության աստիճանը որոշելը՝ խաղադրույքներն ընդունելու կամ մերժելու համար,
3) խաղադրույքների մոտավոր ցանկը կազմելը և նախապատրաստելը,
4) քարտեր բաժանելը, խաղանիշեր գցելը և պտտախաղը ղեկավարելը,
5) շահող համարները հայտարարելը, ըստ շահումների վճարելը, պարտվածներից գումարներ գանձելը,
6) այլ աշխատողների ղեկավարելը,
7) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) բուքմեյքեր,
2) խաղավար:

28. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4214. ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ՝ ԻՐԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐՄԱՆ

1.Իրերի գրավադրման և փոխառությունների տրման գործակալը գրավի, ունեցվածքի և արժեթղթերի դիմաց տրամադրում է դրամական գումարներ:

2. Նրանց պարտականությունները ներառում են.

1)գրավ դրվող իրեր, արժեթղթեր գնահատելը, տոկոսներ որոշելը և գումարներ տրամադրելը.

2)գրավ դրված կամ ի պահ ընդունված ապրանքանյութական արժեքների և արժեթղթերի փաստաթղթեր ձևակերպելը.

3)պահուստարաններում ապրանքանյութական արժեքներ պահպանելու կանոնները հսկելը.

4)գրավ դրված կամ ի պահ տրված ապրանքանյութական արժեքների մասին հաշվառում վարելը և հաշվետվություններ կազմելը.

5)գրավով տրված, ինչպես նաև ապրանքանյութական արժեքների պահպանման համար վճարված գումարների հաշվառում վարելը.

6)վարկերը մարելու դեպքում իրերը վերադարձնելը, իսկ չվճարելու դեպքում՝ գրավ դրված իրերը վաճառելը.

7)պարտքերի տեսքով վարկեր տրամադրելը՝ ապագա բերքի, նախատեսվող ծառայության դիմաց կամ այլ դեպքերում.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)վարկատու.

2)հսկիչ՝ գրավատան.

3)ապրանքագետ՝ գրավատան.

4)գնահատող՝ գրավատան:

29. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4215. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՇԻՎՆԵՐՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ, ԺԱՄԿԵՏԱՆՑ ԵՎ ԱՅԼ ԿԱՆԽԻԿ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՍՏԱՑՈՂ

1.Հաշիվներով վճարումներ, ժամկետանց և այլ կանխիկ գումարներ ստացող աշխատողները ստանում են վճարումներ և ձևակերպում դրանք:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տարբեր տեսակի ապահովագրությունների համար փաստաթղթեր ձևակերպելը և վճարումներ ընդունելը.

2)հաճախորդներին զանգահարելը և նամակներ առաքելը՝ վճարումները ստանալու կամ դրանք հետաձգելու համար.

3)հաճախորդների հասցեները բացահայտելը և նրանց այցելելը՝ վճարումները ստանալու նպատակով.

4)ստացած գումարները հաշվառելը.

5)գործերը դատարան հանձնելու մասին հարց առաջադրելը, եթե այլ կերպ հնարավոր չէ ստանալ հասանելիք գումարը.

6) բարեգործական նպատակների համար գումարներ խնդրելը և ստանալը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)գործակալ՝ ապահովագրական.

2)գանձող՝ վճարումների:

30. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 422. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԶԲԱՂՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՄԲ

1.Հաճախորդների իրազեկմամբ զբաղված ծառայողներն անմիջականորեն աշխատում են հաճախորդների հետ՝ ճանապարհորդությունների կազմակերպման, կապի ծառայությունների մատուցման, զանազան անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման, գործնական հանդիպումների կազմակերպման հարցերով՝ ներառյալ այցերը բժիշկներին և հիվանդանոցում տեղավորելը, ինչպես նաև զանազան հեռախոսազանգեր կատարելը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ այցերի ծրագրեր նախապատրաստելը. տոմսեր և հյուրանոցներ պատվիրելը. հաճախորդներին և

այցելուներին ընդունելը. զանազան տեղեկատվություն տրամադրելը և կազմակերպության հանձնարարությամբ գործնական հանդիպումներ կազմակերպելը՝ ներառյալ այցերը բժիշկներին և հիվանդանոցում տեղավորելը, փոխարկիչով (կոմուտատորով) աշխատելը, տարբեր հասարակական վայրերում կարգ ու կանոն ապահովելը և այլն: Այստեղ կարող է ներառվել նաև այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 4221. Ծառայողներ՝ զբոսաշրջության և տրանսպորտային գործակալությունների.**

2)**Ստորին խումբ 4222. Ծառայողներ՝ զբաղված հաճախորդների ընդունելությամբ և իրազեկմամբ.**

3)**Ստորին խումբ 4223.Հեռախոսավարներ.**

4)**Ստորին խումբ 4224. Ծառայող՝ զբաղված տնտեսական սպասարկմամբ:**

31. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4221. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Զբոսաշրջության և տրանսպորտային գործակալությունների ծառայողներն անհրաժեշտ տեղեկատվություն են տալիս հաճախորդներին, առաջարկում ճամփորդությունների երթուղիներ, պահեստավորում տոմսեր և հյուրանոցային համարներ, պատվերներ են ընդունում բեռների առաքման, փոխադրման փաստաթղթերի ձեռքբերման համար, հսկողություն են սահմանում ճանապարհորդությունների ծրագրերի կատարման և զբոսաշրջային խմբերի սպասարկման պայմանների ապահովման նկատմամբ:

2.Նրանց պարտականությունները ներառու են.

1)ճանապարհորդությունների երթուղիների և ուղևորությունների ձևերի վերաբերյալ հաճախորդներին խորհուրդներ տալը.

2)երթուղիներ կազմելը և ուղեգրեր վաճառելը.

3)հյուրանոցային համարներ պահեստավորելը, երթևեկության տոմսերը տեղ հասցնելը, ուղեբեռը տեղափոխելը.

4)տոմսեր, վաուչերներ և այլ փաստաթղթեր տրամադրելը.

5)անհրաժեշտության դեպքում մուտքի թույտվություններ ստանալը.

6)հաշիվներ դուրսգրելը և դրամներ ընդունելը.

7)ստացված պատվերները ժամանակին և որակով կատարելը.

8)սահմանված կարգով հաշվետվություններ պատրաստելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)գործակալ՝ տոմսերի պատվեր ընդունող.

2)գործակալ՝ տրանսպորտային կազմակերպության.

3)ծառայող՝ գրասենյակային, զբոսաշրջության գործակալության.

4)ծառայող՝ գրասենյակային, ուղեբեռի ուղեկցման:

32. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4222. ԾԱՌԱՅՈՂՆԵՐ՝ ԶԲԱՂՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՄԲ

1.Հաճախորդների ընդունելությամբ և իրազեկմամբ զբաղված ծառայողները ընդունում և տրամադրում են տեղեկատվություն, կազմակերպում են գործնական հանդիպումներ անհատ անձանց և զանազան կազմակերպությունների պատվերով՝ ներառյալ հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և բժիշկներին այցելությունները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հաճախորդներին և այցելուներին ընդունելը, հարցադրումները գրառելը, համապատասխան տեղեկատվություն տրամադրելը.

2)հաճախորդների և այցելուների համար գործնական հանդիպումներ կազմակերպելը,

3)հեռախոսով բանավոր տեղեկություններ տալը.

4)այցելուներին համապատասխան վայրեր ճանապարհելը.

5)ճանապարհորդների և հաճախորդների համար հյուրանոցներում տեղեր պահեստավորելը և պատվիրելը, հաշվառում վարելը և մեկնելու ժամանակ վճարներ ստանալը.
6)գովազդային ծրագրեր, գրքույկներ և ձևաթղթեր տրամադրելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ծառայող՝ տեղեկատվական կազմակերպության.
2)քարտուղար՝ այցելուների ընդունելության հարցերով.
3)օգնական՝ այցելուների ընդունելության հարցերով.
4)գրանցող՝ հիվանդների.
5)հաշվառող՝ բժշկական հաստատություն այցելողների:

33. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4223. ՀԵՌԱԽՈՍԱՎԱՐ

1. Խումբ 4223-ը հաշվի առնել խումբ 7521-ում:

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 4224. ԾԱՌԱՅՈՂ՝ ԶԲԱՂՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՄԲ

1.Տնտեսական սպասարկմամբ զբաղված ծառայողները ընդունում, գրանցում, տեղավորում են այցելուներին, կազմակերպում գույքի անվնաս պահպանությունն ապահովելու և տարբեր հասարակական վայրերում մաքրություն և կարգուկանոն պահպանելու աշխատանքներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)այցելուներին ընդունելը, գրանցելը և տեղավորելը.
2)բնակվելու և մատուցված ծառայությունների փոխարեն հաշվարկներ կատարելը, վճարներ ստանալը.
3)գույքը պահպանող, շենքում մաքրություն և կարգուկանոն ապահովող անձնակազմի աշխատանքը հսկելը.
4)ներքին կարգապահական կանոնների, հակահրդեհային անվտանգության և առողջարարական նորմերի պահպանումը հսկելը.
5)գույքի առկայության հաշվառում վարելը և դրա դուրսգրման արձանագրություններ կազմելը.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)պարետ՝ շենքի.
2)պարետ՝ հանրակացարանի.
3)հերթապահ՝ մոր և մանկան սենյակի.
4)հերթապահ՝ հանգստյան սենյակի:

ԲԱԺԻՆ 5
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 5. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Սպասարկման ոլորտի, բնակարանային կոմունալ տնտեսության և առևտրի կազմակերպությունների աշխատողները տարբեր անհատական ծառայություններ են մատուցում ճանապարհորդությունների ընթացքում, տնային տնտեսվարության մեջ, սպասարկման և անհատական խնամքի ոլորտներում, ունեցվածքը պաշտպանում են հրդեհից և անօրինական գործողություններից, գեղարվեստական ցուցահանդեսների ժամանակ աշխատում որպես կենդանի բնատիպար (մոդել), ապրանքներ վաճառում մեծածախ և մանրածախ առևտրի խանութներում ու այդօրինակ կազմակերպություններում, ինչպես նաև կրպակներում և շուկաներում:

2.Այս հիմնական խմբի զբաղմունքների մեծ մասի համար որակավորումը ձեռք է բերվում անհատական ուսուցմամբ կամ ընդհանուր միջնակարգ (լրիվ) կրթության հիման վրա՝ հատուկ մասնագիտական ծրագրերով վերապատրաստվելու ճանապարհով:

3.Սպասարկման ոլորտի, բնակարանային կոմունալ տնտեսության և առևտրի կազմակերպությունների աշխատողների պարտականությունները ներառում են. ճանապարհորդության ընթացքում ծառայություններ կազմակերպելը և մատուցելը. տնային տնտեսություն վարելը. սնունդ և ըմպելիքներ պատրաստելն ու մատուցելը. երեխաներին խնամելը. երեխաների, հիվանդների, հաշմանդամների և տարեցների խնամքի համար անհրաժեշտ ծառայություններ մատուցելը. համանման ծառայություններ տանը և կազմակերպություններում մատուցելը. վարսավիրանոցներում և գեղեցկության սրահներում հաճախորդներին սպասարկելը և նրանց ընկերակցելը. աստղագուշակությունը և գուշակությունը. զմռսելը, սգո արարողություն, հուղարկավորություն կազմակերպելը. հագուստ ներկելը և քիմիական եղանակով մաքրելը. սպիտակեղեն, գորգեր և այլ իրեր լվանալը. բնակարաններ, կահույք, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային սարքավորումներ, ժամացույցներ և այլ կենցաղային իրեր վերանորոգելը. քաղաքացիներին և սեփականությունը հրդեհից, հակաիրավական գործողություններից պաշտպանելը. օրենքը և կարգ ու կանոնը պահպանելը. գեղարվեստական ցուցադրումներում և ապրանքների ցուցահանդեսներում որպես կենդանի բնատիպար աշխատելը. մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպություններում ապրանք վաճառելը. գնորդներին ապրանքներ ցուցադրելը. քաղաքներում, ավաններում և այլ բնակավայրերում գազի, ջրմուղ-կոյուղու և տարածքի կանաչապատման ծառայություններ մատուցելը. գովազդային ձևավորման և վերականգնողական աշխատանքներ կատարելը:

3.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1)**Ենթախումբ 51. Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության կազմակերպությունների.**

2)**Ենթախումբ 52 .Վաճառողներ, ցուցադրողներ՝ ապրանքների և հագուստի, բնորդներ.**

3)**Ենթախումբ 53. Աշխատողներ՝ բնակարանային-կոմունալ կազմակերպությունների.**

2.ԵՆԹԱԽՈՒՄԲ 51. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Անհատական ծառայություններ մատուցող և քաղաքացիների ու սեփականության պաշտպանության կազմակերպությունների աշխատողները մատուցում են ճանապարհորդություններին, տնային տնտեսվարմանը, սպասարկմանը, անհատական խնամքի ծառայություններին, ինչպես նաև հրդեհներից և հակաիրավական գործողություններից պաշտպանելուն առնչվող ծառայություններ:

2.Սույն ենթախմբում ընդգրկված աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են. ճանապարհորդությունների ժամանակ զանազան ծառայություններ մատուցելը և զբոսաշրջիկներին ուղեկցելը. տնային տնտեսություն վարելը. սնունդ և ըմպելիքներ պատրաստելն ու մատուցելը. բժշկական կազմակերպություններում և տանը երեխաների, հիվանդների, հաշմանդամների, տարեցների խնամքի ծառայություններ մատուցելը. վարսավիրանոցներում և գեղեցկության սրահներում հաճախորդներին սպասարկելը և նրանց ընկերակցելը. աստղագուշակությունը և գուշակությունը. զմռսելը, սգո արարողություն, հուղարկավորություն կազմակերպելը. քաղաքացիներին և սեփականությունը հրդեհներից և անօրինական գործողություններից պաշտպանելը. հասարակական կարգը և օրինականությունը պահպանելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 511. Սպասարկողներ՝ ճամփորդությունների ընթացքում և հասարակական տրանսպորտում, աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

2)**Փոքր խումբ 512. Սպասարկողներ՝ տնային տնտեսության վարման ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հանրային սննդի կազմակերպությունների.**

3)**Փոքր խումբ 513. Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

4)**Փոքր խումբ 514. Աշխատողներ՝ այլ, անհատական ծառայություններ մատուցող.**

5)**Փոքր խումբ 515. Աստղագուշակներ, գուշակներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

6)**Փոքր խումբ 516. Աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 511. ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐ՝ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Ճամփորդության ընթացքում և հասարակական տրանսպորտում սպասարկողները և հարակից զբաղմունքների աշխատողները մատուցում են ինքնաթիռով, նավով, գնացքով, ավտոբուսով և տրանսպորտային այլ միջոցներով ճամփորդություններին և զբոսաշրջությանը, էքսկուրսիաների և տեսարժան վայրեր դիտելու ժամանակ առանձին մարդկանց կամ խմբերի ուղեկցելուն առնչվող տարբեր ծառայություններ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ուղևորների անվտանգություն և հարմարավետություն ապահովելը. ուտելիք և նախաճաշ բաժանելը. անհրաժեշտ կամ ուղևորների կողմից պահանջվող տեղեկատվություն տրամադրելը, ճանապարհորդությունների ժամանակ տարբեր հարցերի պատասխանելը. օդանավերում և նավերում տոմսեր ստուգելը և տալը. էքսկուրսիաների ընթացքում կամ տեսարժան վայրերը դիտելիս առանձին քաղաքացիների կամ զբոսաշրջիկների խմբերին ուղեկցելը. տարատեսակ ծառայություններ մատուցելը՝ որպես զբոսավար (գիդ), այլ աշխատողներին ղեկավարելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խնբերում.

1**) Ստորին խումբ 5111. Ուղեկցորդներ՝ տրանսպորտային միջոցների (օդանավ և նավ).**

2) **Ստորին խումբ 5112. Ուղեկցորդներ՝ հասարակական տրանսպորտի**.

3) **Ստորին խումբ 5113. Ուղեկցորդներ՝ զբոսավարներ:**

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5111. ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՕԴԱՆԱՎ ԵՎ ՆԱՎ)

1.Օդանավի և նավի ուղեկցորդներն ապահովում են ուղևորների նստեցման և իջեցման անվտանգությունը, հարմարավետություն և անվտանգություն ապահովելու համար օդանավում, նավում կամ օդանավակայանում մատուցում են անհատական տարբեր ծառայություններ, մատուցում են ուտելիք և ըմպելիք կամ զբոսաշրջիկներին սպասարկում են նավախցիկներում և օդանավի սրահում՝ դրանցում ապահովելով մաքրություն, կարգ ու կանոն, ինչպես նաև կատարում են զբոսաշրջիկների զվարճանքները կազմակերպելու աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տրանսպորտային միջոցի մուտքի մոտ ուղևորներին դիմավորելը և մինչև նստատեղ ուղեկցելը, երթևեկության տոմսերին համապատասխան՝ նրանց տեղավորելը, ուղևորների կողմից անվտանգության պայմանների պահպանումը վերահսկելը.

2)փրկարար միջոցներից օգտվելու կանոններ բացատրելը, ինչպիսիք են, օրինակ, անվտանգության գոտիները և թթվածնային դիմակները.

3)ճանապարհին ուղևորներին սպասարկելը, անկողին նախապատրաստելը, սնունդ և խմիչք մատուցելը, խցիկները պարբերաբար մաքրելը, սպիտակեղեն փոխելը.

4)թերթեր, ամսագրեր, ականջակալներ, ծածկոցներ և նման առարկաներ բաժանելը, ինչպես նաև ուղևորների օրինական պահանջները կատարելը.

5)նախապես պատրաստված ուտելիքը և ըմպելիքը մատուցելը.

6)առանց մաքսատուրքի ապրանքներ վաճառելը.

7)անհրաժեշտության դեպքում ուղևորներին առաջին բժշկական օգնություն ցուցաբերելը.

8)չնախատեսված իրադրություններ առաջանալու կամ դժբախտ պատահարների դեպքում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելը.

9)օդանավակայանում ուղևորներին սպասարկելը.

10) այլ աշխատողներին ղեկավարելը.

11) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ուղեկցորդ՝ օդանավակայանի.
2)ուղեկցորդ՝ նավի.
3)մատուցող՝ նավի.
4)ուղեկցորդ՝ օդանավի:

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5112. ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ

1.Հասարակական տրանսպորտի ուղեկցորդները վաճառում կամ ստուգում են տոմսերը, գնացքներում, տրամվայներում, ավտոբուսներում և հասարակական այլ տրանսպորտում ապահովում անվտանգություն և երթևեկության հարմարավետ պայմաններ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)տոմսեր, անցաթղթեր կամ ուղեվարձ հավաքելը և հանձնելը կամ նախօրոք գնված տոմսերն ստուգելը.
2)մարդատար գնացքների ննջավագոններ սպասարկելը՝ ներառյալ ուղևորների տոմսերն ստուգելը, նրանց անվտանգությունը և տեղեկացվածությունն ապահովելը.
3)ուղևորների կողմից անվտանգության պահանջների պահպանում ապահովելը.
4)կանգառների և տեղափոխումների վերաբերյալ ուղևորներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը.
5)մեքենավարի հետ համագործակցելը՝ չվացուցակը պահպանելու նպատակով.
6)անակնկալ իրադարձությունների և դժբախտ պատահարների դեպքում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ուղեկցորդ՝ ավտոբուսի.
2)ուղեկցորդ՝ ճոպանուղի.
3)ուղեկցորդ՝ գնացքի.
4)ուղեկցորդ՝ տրամվայի.
5)հսկիչ՝ երթուղային տրանսպորտի:

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5113. ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐ, ԶԲՈՍԱՎԱՐՆԵՐ

1.Զբոսավարները զբոսաշրջիկների խմբին ուղեկցում են տեսարժան վայրեր դիտելիս կամ էքսկուրսիաների ժամանակ, ծանոթացնում տեսարժան վայրերին և զբոսաշրջիկների համար ապահովում հարմարավետություն:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)զբոսաշրջիկներին ուղեկցելը և նրանց համար հարմարավետություն ապահովելը.
2)տեսարժան վայրերը դիտելիս զբոսաշրջիկներին ուղեկցելը և հետաքրքիր վայրերի մասին նրանց տեղեկություն հաղորդելը.
3)թանգարաններ, ցուցահանդեսներ այցելելիս զբոսաշրջիկներին ուղեկցելը և դրանց վերաբերյալ տեղեկություն տրամաադրելը.
4)զբոսաշրջիկների խմբին կազմակերպություններ և այդօրինակ այլ վայրեր ուղեկցելը, դրանց վերաբերյալ տեղեկություն տրամադրելը.
5)էքսկուրսիաների, լեռնագնացության, որսորդության, ձկնորսության ժամանակ զբոսաշրջիկներին ուղեկցելը.
6)թանգարաններում, տեսարժան վայրերում, կազմակերպություններում էքսկուրսիաների ընթացքում թարգմանչական աշխատանք կատարելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)զբոսավար.
2)զբոսավար՝ ճանապարհորդության.
3)զբոսավար՝ էքսկուրսիաների.
4)զբոսավար՝ գեղարվեստական պատկերասրահի.
5)զբոսավար-թարգմանիչ:

7.ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 512. ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐ՝ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Տնային տնտեսության վարման ծառայություններ մատուցող սպասարկողները և հանրային սննդի կազմակերպության աշխատողներն առևտրական կազմակերպություններում, բժշկական հիմնարկներում կամ մասնավոր տներում կազմակերպում, ղեկավարում և կատարում են տնտեսությունը վարելուն առնչվող տարբեր գործառույթներ կամ առևտրական տարբեր կազմակերպություններում, բժշկական հիմնարկներում, մասնավոր տներում, նավերի վրա և գնացքներում կատարում են սննդի պատրաստման, սննդի և ըմպելիքի մատուցման աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները հիմնականում ներառում են. տարբեր ճաշատեսակներ և խոհարարական արտադրանք պատրաստելը. ընդունված բաղադրատոմսերով տարբեր խմիչքներ պատրաստելը և դրանք չափաբաժինների բաժանելը. օգտագործմանը պատրաստ ոգելից խմիչքներով, հրուշակային և այլ արտադրանքներով հաճախորդներին սպասարկելը. զանազան կոկտեյլներ, սառը և տաք նախուտեստներ պատրաստելը. հաճախորդներին դիմավորելը և նրանց առկա ճաշատեսակներին ու խմիչքներին ծանոթացնելը. սեղաններին սպասք դնելը, այցելուներից պատվերներ ընդունելը և նրանց հետ վերջնահաշվարկ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 5121. Օգնականներ՝ տնային տնտեսության վարման, և տնտեսուհիներ.**

2)**Ստորին խումբ 5122. Խոհարարներ.**

3)**Ստորին խումբ 5123. Մատուցողներ, բարմեններ և բուֆետապաններ:**

8.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5121. ՕԳՆԱԿԱՆՆԵՐ՝ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ, ԵՎ ՏՆՏԵՍՈՒՀԻՆԵՐ

1.Տնային տնտեսության վարման օգնականները և տնտեսուհիները հյուրանոցներում, ակումբներում, գիշերօթիկ դպրոցներում, առողջապահական և այլ կազմակերպություններում, այդ թվում՝ մասնավոր տներում, կազմակերպում, ղեկավարում և կատարում են տնտեսություն վարելուն առնչվող տարբեր գործառույթներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տնտեսություն վարելու համար աշխատողներ ընդունելը, նրանց ուսուցանելը կամ աշխատանքից հեռացնելը, աշխատանքները կազմակերպելը և ղեկավարելը.

2)մթերքներ և սպառման այլ ապրանքներ ձեռք բերելը կամ ձեռքբերման աշխատանքները վերահսկելը.

3)տնտեսություն վարելու ընթացքում ապրանքների պահուստները վերահսկելը, մթերքներ և սպառման այլ ապրանքներ տրամադրելը.

4)պատվիրատուների համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ և գործունեության ռեժիմ ապահովելը.

5)թեթև վնասվածքների դեպքում առաջին օգնություն ցուցաբերելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կառավարիչ՝ տնային տնտեսության.

2)քույր - տնտեսվար՝ բժշկական հաստատության.

3)տնտեսվար:

9. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5122. ԽՈՀԱՐԱՐՆԵՐ

1.Խոհարարները հյուրանոցում, ռեստորանում և հանրային սննդի այլ վայրերում, նավերում, գնացքներում և մասնավոր տներում ծրագրում, կազմակերպում, նախապատրաստում և պատրաստում են սնունդ, խմիչքներ և խոհարարական այլ արտադրանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ճաշացուցակ կազմելը.
2)զանազան տաք ճաշատեսակներ, սառը ուտեստներ, սոուսներ, սառը և տաք խմիչքներ, խմորեղեն և հրուշակեղեն պատրաստելը.
3)ճաշատեսակների չափաբաժիններ սահմանելը և բաժանելը, ինչպես նաև պատվիրված և ֆիրմային ճաշատեսակներ մատուցելը.
4)խոհանոցում աշխատողներին ղեկավարելը, աշխատանքը համակարգելը, կիսապատրաստվածքների և մթերքների հայտեր կազմելը.
5)այլ աշխատողներին ղեկավարելը.
6)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)խոհարար.
2)խոհարար՝ ավագ.
3)պատրաստող՝ կաթնային կոկտեյլների.
4)պատրաստող՝ խմիչքների:

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5123. ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ, ԲԱՐՄԵՆՆԵՐ ԵՎ ԲՈՒՖԵՏԱՊԱՆՆԵՐ

1.Մատուցողները, բարմենները և բուֆետապանները սնունդ և ըմպելիք են մատուցում հանրային սննդի կազմակերպություններում և գինետներում, ակումբներում, բուժական հիմնարկներում, ճաշարաններում, նավերում և գնացքներում:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)սնունդ և ըմպելիք մատուցելը.
2)հաճախորդներին ընդունելը և առկա ուտեստների ու խմիչքների տեսականուն ծանոթացնելը.
3)գինիներ ընտրելու առաջարկություն անելը և դրանք մատուցելը.
4)բարում ոգելից և ոչ ոգելից խմիչքներ մատուցելը.
5)բարի սեղանը և ցուցափեղկը ձևավորելը.
6)բուֆետում բուտերբրոդներ, սառը խորտիկներ, դպրոցական նախաճաշեր, սառը և տաք խմիչքներ և այլն պատրաստելը և վաճառելը.
7)հաճախորդների հետ վերջնահաշվարկ կատարելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)բուֆետապան.
2)մատուցող.
3)մատուցող՝ ավագ.
4)մատուցողուհի՝ գինու:

11. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 513. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Անհատական ծառայություններ մատուցողները և հարակից զբաղմունքների աշխատողները խնամքի ծառայություններ են մատուցում երեխաներին, հիվանդներին, հաշմանդամներին, տարեցներին և այլոց, օգնում են երեխաների խնամքի, դպրոցականների հսկողության հարցում, կատարում հիվանդանոցներում և այլ բժշկական հիմնարկներում բժիշկներին, բուժքույրերին և բժշկական անձնակազմին նրանց պարտականությունները կատարելիս օգնելու տարբեր պարտականություններ, ապահովում բուժական խնամք տանը, իրենց պարտականությունները կատարելիս օգնում անասնաբույժներին, դեղագործներին և այդօրինակ այլ աշխատողների:
2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. երեխաներին խնամելը և դպրոցներում նախաճաշի համար նախատեսված ընդմիջման կամ դասամիջոցների, ինչպես նաև էքսկուրսիաների ժամանակ երեխաներին հսկելու գործում ուսուցիչներին օգնելը. հիվանդների խնամքի պարզ պարտականություններ կատարելը և հիվանդանոցներում, այդօրինակ բժշկական կազմակերպություններում կամ տանը նրանց անհատական ծառայություններ մատուցելը. դեղագործներին և անասնաբույժներին աշխատելու ժամանակ օգնելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 5131. Աշխատողներ՝ զբաղված երեխաների խնամքով.**

2)**Ստորին խումբ 5132. Աշխատողներ՝ խնամառուներին բուժական կազմակերպություններում անհատական ծառայություններ մատուցող.**

3)**Ստորին խումբ 5133. Աշխատողներ՝ տանը անհատական ծառայություններ մատուցող.**

4)**Ստորին խումբ 5139. Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների, այլ խմբերում չներառված:**

12.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5131. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԶԲԱՂՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔՈՎ

1.Երեխաների խնամքով զբաղված աշխատողները կատարում են գործատուի երեխաների խնամքի աշխատանքներ՝ կազմակերպելով նրանց առօրյան, կամ օգնում են ուսուցիչներին և դաստիարակներին՝ հետևելու երեխաներին:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)երեխաներին հագցնելը, լողացնելը և կերակրելը.

2)երեխաներին զբոսանքի, դպրոց, դպրոցից տուն ուղեկցելը, պարապմունքների նախապատրաստելը.

3)երեխաների հետ խաղալը, նրանց համար գրքեր ընթերցելը, հեքիաթներ և զանազան պատմություններ պատմելը.

4)երեխաների ննջարանում և մանկական սենյակում մաքրություն ապահովելը.

5)նախաճաշի, ընդմիջումների և դասամիջոցների ժամանակ աշակերտներին հսկելը.

6)էքսկուրսիաների, թանգարաններ այցելության և այդօրինակ միջոցառումների ժամանակ երեխաներին հսկելը.

7)շենքի, սարքավորումների և գույքի առողջարարական վիճակին հետևելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)դաստիարակ՝ տնային.

2)դայակ:

13. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5132. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԽՆԱՄԱՌՈՒՆԵՐԻՆ ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ

1.Բուժական կազմակերպություններում խնամառուներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողները խնամում են հիվանդներին, այցելուներին նախապատրաստում բուժզննման և բուժման, ախտահանում բժշկական պարագաները, օգնում բժիշկներին, բուժքույրերին և նրանց օգնականներին աշխատանքային պարտականությունները կատարելիս:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հիվանդներին խնամելը.

2)հիվանդներին զննման կամ բուժման նախապատաստելը, նրանց բժշկական ախտորոշման և ընթացիկ հետազոտման առանձնասենյակներ (կաբինետներ) ուղեկցելը, զանազան բժշկական և ախտորոշիչ միջոցառումների ժամանակ բժիշկներին օգնելը.

3)հագնվելու, հանվելու, լողանալու և սնվելու դժվարություններ ունեցող հիվանդներին օգնելը, սպիտակեղեն փոխելը, վիրաբուժական և այլ գործիքներ ու սարքավորումներ վարակազերծելը, հիվանդասենյակներ մաքրելը.

4)հիվանդների կողմից ներքին կարգուկանոնը պահպանելու նկատմամբ հսկողությունը.

5)անհրաժեշտ լուսավորությունը կարգավորելու հարցում ատամնաբույժին օգնելը, գործիքներ և նյութեր մատուցելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օգնական՝ հիվանդների խնամքի.

2)հիվանդապահ.

3)օգնական՝ ատամնաբույժի.

4)սանիտար՝ շտապ օգնության մեքենայի.

5)սանիտար:

14. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5133. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՏԱՆԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ

1.Տանը անհատական ծառայություններ մատուցող աշխատողներն անհրաժեշտ օգնություն են ցուցաբերում խնամառուներին, ովքեր այդպիսի խնամքի կարիք ունեն իրենց ֆիզիկական և հոգեկան հիվանդությունների, հաշմանդամության, տարիքային հիվանդությունների հետևանքով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տարեցներին և հիվանդներին տանը խնամելը, ուտելիք պատրաստելը, մատուցելը և օգնության կարիք ունեցողներին կերակրելը, սպասք լվանալը և հավաքելը, սպիտակեղեն և հագուստ փոխելը.

2)խնամառուների կողմից անհրաժեշտ դեղորայք ընդունելն ապահովելը.

3)խնամառուների առողջական վիճակին հետևելը, բուժող բժշկին կամ սոցիալական պաշտպանության ծառայությունների աշխատակիցներին խնամառուի առողջության վատացման նշանների մասին տեղեկացնելը.

4)հիվանդի խնդրանքով նրան կենցաղային զանազան ծառայություններ մատուցելը.

5)արդյունաբերական ապրանքներ, մթերքներ և դեղորայք գնելը, սպիտակեղենը՝ լվանալու, հագուստը՝ քիմմաքրման, կոշիկները նորոգման տալը, բնակարանը մաքրելը և այլ ծառայություններ մատուցելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օգնական՝ տանը խնամքի.

2)խնամակալ.

3)աշխատող՝ կենցաղային ծառայությունների:

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5139. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է անհատական ծառայություններ մատուցող աշխատողներին և հարակից մասնագետներին, ովքեր այլ խմբեր չեն ներառվել և չեն ընդգրկվել «Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների» փոքր խումբ 513-ի այլ ստորին խմբերում:

2.Այստեղ ներառվում են նրանք, ովքեր օգնում են անասնաբույժներին, դեղագործներին և նրանց օգնականներին իրենց աշխատանքը կատարելու ժամանակ:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կենդանիներին լողացնելը և կերակրելը.

2)կենդանիներին ուղեկցելը կամ բուժական առանձնասենյակ (կաբինետ) հասցնելը և բուժման ընթացքում նրանց պահելը.

3)անասնաբուժական վիրահատական գործիքներ վարակազերծելը և մաքրելը.

4)դեղորայք և դեղամիջոցներ, քիմիական և այլ դեղագործական պատրաստուկներ պիտակավորելը և դարակների վրա դրանց պաշարները լրացնելը.

5)շշեր, չափանոթներ և այլ սարքավորումներ վարակազերծելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օգնական՝ դեղագործի.

2)օգնական՝ անասնաբույժի:

16. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 514. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՅԼ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ

1.Անհատական ծառայություններ մատուցող այլ աշխատողները կատարում են տարբեր պարտականություններ՝ այցելուների արտաքին տեսքի բարելավման նպատակով, ծառայում են որպես ընկերակից կամ հետևում գործատուի հագուստին և անձնական այլ

իրերի, զմռսում են դիակներ և կազմակերպում հուղարկավորություններ, ընդունում են հագուստի քիմմաքրման և ներկման, սպիտակեղենի լվացման պատվերներ, մատուցում են անհատական ծառայություններ և նորոգում հագուստ, կոշիկ, բնակարան, կահույք, էլեկտրական, էլեկտրոնային սարքավորում, ժամացույց և այլն, պատրաստում լուսանկարներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. մազեր կտրելը և հարդարելը, սափրելը. դեմքը և վիզը մերսելը. սնուցող դիմակներ դնելը, դիմահարդարելը. եղունգների առողջարարական մաքրում կատարելը և դրանք լաքով ծածկելը. գործատուին անհատական ծառայություններ մատուցելը. դիակներ զմռսելը, սգո արարողություններ և հուղարկավորություններ կազմակերպելը. հագուստի քիմմաքրման և ներկման, լվացքի և արդուկման պատվերներ ընդունելը. հագուստի, կոշիկի անհատական պատվերներ ընդունելը, դրանք կարելը և նորոգելը. բնակարանի, կահույքի, ժամացույցի, կենցաղային էլեկտրական պարագաների, հեռուստասարքավորման, ռադիոսարքավորման և կենցաղային այլ պարագաների ու սարքավորումների նորոգման աշխատանքներ կատարելը, հաճախորդներին նկարելն ու լուսանկարներ պատրաստելը և այլն:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 5141. Վարսավիրներ՝ կանանց և տղամարդկանց, դիմահարդարներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

2)**Ստորին խումբ 5142. Ընկերակիցներ և ծառաներ.**

3)**Ստորին խումբ 5143. Աշխատողներ՝ ծիսական ծառայությունների.**

4)**Ստորին խումբ 5144. Աշխատողներ՝ գործվածքի քիմիական մաքրման և ներկման.**

5)**Ստորին խումբ 5145. Աշխատողներ՝ լվացքատան.**

6)**Ստորին խումբ 5149. Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, այլ խմբերում չներառված:**

17. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5141. ՎԱՐՍԱՎԻՐՆԵՐ՝ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ, ԴԻՄԱՀԱՐԴԱՐՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Կանանց և տղամարդկանց վարսավիրները, դիմահարդարները և հարակից զբաղմունքների աշխատողները կտրում և հարդարում են մազերը, սափրում և հավասարեցնում են մորուքը, մատուցում են գեղարարական ծառայություններ, գեղադեղեր (կոսմետիկա) և գրիմ են դնում, կատարում են այլ տեսակի աշխատանքներ՝ այցելուի արտաքին տեսքը բարելավելու համար, կատարում են եղունգների առողջարարական մաքրում և լաքապատում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մազեր լվանալը, կտրելը, ներկելը և չորացնելը.

2)դեմքը սափրելը, մորուքը հարդարելը, սափրելը կամ կարճացնելը.

3)գլխի մաշկը մերսելը.

4)այցելուի խնդրանքով կեղծամ հարմարեցնելը.

5)մաշկը մաքրելը, դեմքին և մարմնի այլ մասերին քսուքներ, մաքրող հեղուկներ և այդօրինակ այլ նյութեր քսելը.

6)դեմքը և մարմինը մերսելը.

7)գեղեցկության սրահում գրիմավորելը.

8)դերասաններին և մյուս կատարողներին գրիմավորելը.

9)ձեռքի և ոտքի եղունգներ խարտելը, մաքրելը, ձևավորելը, ոտքերի մաշկի և եղունգների այնպիսի թեթև հիվանդություններ բուժելը, ինչպիսիք են կոշտուկները, կոշտացումները, եղունգների ձևախեղումը.

10)բաղնիքում այցելուին օգնելը և հասարակ մերսում կատարելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բաղնիսպան.

2)սափրիչ.

3)գեղարար.

4)մատնահարդար.

5)ոտնամատնահարդար.
6)վարսավիր:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5142. ԸՆԿԵՐԱԿԻՑՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՆԵՐ

1.Ընկերակիցները և ծառաներն ընկերակցում են գործատուին և նրան անհատական ծառայություններ մատուցում:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)գործատուին տարբեր վայրեր ուղեկցելը, ընթերցելը, զրույց վարելը, նրա հետ զանազան միջոցառումներին մասնակցելը, օրինակ՝ մարզական.
2)գործատուի տանը հյուրեր ընդունելուն օգնելը.
3)գործատուի զգեստապահարանի և անձնական այլ իրերի նկատմամբ հոգածությունը.
4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ընկերակից.
2)ծառա:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5143. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԾԻՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Ծիսական ծառայությունների աշխատողները կատարում են դիակների թաղմանն առնչվող զանազան պարտականություններ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)հուղարկավորություն, դիակիզում և թաղում կազմակերպելն ու կատարելը.
2)հանգուցյալի մարմինը զմռսելը՝ քայքայումը կանխարգելելու նպատակով, վարսավիրական և գեղարարական (կոսմետիկ) ծառայություններ մատուցելը.
3)հանգուցյալին հագցնելը և դագաղի մեջ դնելը.
4)ծիսական պարագաները նշանակման վայր հասցնելը.
5)դագաղը դիակառքում տեղադրելը և թաղման կամ դիակիզման վայրում դիակառքից դուրս բերելը.
6)դագաղը գերեզման իջեցնելը կամ դագաղը վերելակից ընդունելը և դիակիզարանի վառարան հանձնելը.
7)աճյունը հավաքելը և դրա վրա համապատասխան համար դնելը, գերեզմանաթմբեր ձևավորելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)զմռսող.
2)դագաղագործ.
3)աշխատող՝ ծիսական ծառայությունների.
4)մեքենավար՝ ծիսական սարքավորումների:

20. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5144. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԳՈՐԾՎԱԾՔԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ

1.Քիմիական մաքրման և ներկման աշխատողներն ընդունում են ընդունման կետերից ստացված գործվածքները, դրանց խմբաքանակները լրակազմում (կոմպլեկտավորում) քիմմաքրումից և ներկելուց առաջ, բոլոր տեսակի գործվածքները ներկում տարբեր երանգների, դրանք խոնավաջերմային մշակման ենթարկում մամլիչներով կամ շոգեմշակման սեղանների վրա, գործվածքների վրայից բծերը հեռացնում բծահանման հաստոցներով կամ ձեռքով, վերահսկում գործվածքների մշակման որակը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ընդունման կետերից փաթեթավորված գործվածքներ ընդունելը, դրանց քանակը և անվանումներն ստուգելը՝ ըստ ուղեկցող փաստաթղթերի.
2)գործվածքներն ըստ մշակման եղանակների և տեսակների տեսակավորելը՝ հաշվի առնելով գործվածքների տեսակները և գույնը, կեղտոտվածության աստիճանը.
3)գործվածքների խմբաքանակները քիմմաքրումից կամ ներկելուց առաջ լրակազմելը և հաջորդ տեխնոլոգիական գործառնությանը հանձնելը.

4)գործվածքների ներկման, տոգորման կամ խոնավաջերմային մշակման գործընթացներ վարելը.

5)գործվածքների բծերը վերացնելը և դրանք լվացամիջոցների ջրային լուծույթներով մշակելը.

6)գործվածքներ չորացնելը.

7)գործվածքներ զննելը և մշակման որակը ստուգելը, թերություններ ունեցող գործվածքներն ընտրելը և խոտանի պատճառները որոշելը,

8)ներկող, քիմիական, տոգորող և լվացող լուծույթներ պատրաստելը՝ ըստ սահմանված բաղադրության.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)լրակազմող (կոմպլեկտավորող)՝ գործվածքների.

2)ներկող՝ գործվածքների.

3)շոգեմշակող-մամլորդ՝ գործվածքների.

4)հսկիչ՝ գործվածքների մշակման որակի.

5)չորացնող՝ գործվածքների:

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5145. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԼՎԱՑՔԱՏԱՆ

1.Լվացքատան աշխատողները լվանալուց առաջ լրակազմում (կոմպլեկտավորում) են սպիտակեղենը՝ ըստ սարքավորման թողունակության, այն լվանում և չորացնում, նախապատրաստում արդուկման և արդուկում, դասավորում մաքուր սպիտակեղենը, վերահսկում սպիտակեղենի տեխնոլոգիական մշակումը, մաքրության որակը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սպիտակեղենն ըստ մշակման եղանակների և տեսակների տեսակավորելը՝ հաշվի առնելով գործվածքների տեսակները և գույնը, կեղտոտվածության աստիճանը.

2)լվացող և մշակող լուծույթներ պատրաստելը.

3)սպիտակեղենը ձեռքով և մեքենայով լվանալը.

4)արդուկման ենթակա սպիտակեղեն փռելը, խոնավացնելը, շոգեմշակելը և արդուկելը.

5)մաքուր սպիտակեղենն ըստ նշանակարերի դասավորելը և ըստ ուղեկցող անդորրագրերի այն տեսակավորելը.

6)սպիտակեղենի տեխնոլոգիական մշակումը, մաքրության որակը վերահսկելը և բացահայտված շեղումները վերացնելու միջոցներ ձեռնարկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)լրակազմող՝ սպիտակեղենի.

2)արդուկող՝ սպիտակեղենի.

3)արդուկող.

4)պատրաստող՝ լվացքափոշիների լուծույթների:

22. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5149. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս խմբին դասվում են անհատական ծառայություններ մատուցող և այլ խմբերում չներառված աշխատողները, ովքեր չեն ներառվել «Այլ աշխատող՝ անհատական ծառայություններ մատուցող» փոքր խումբ 514-ի այլ ստորին խմբերում:

2.Այստեղ ներառվում են նրանք, ովքեր աշխատում են որպես պարի զուգընկեր կամ որպես ուղեկցող՝ տարբեր զվարճալի միջոցառումների ժամանակ, կամ էլ որպես վարձատրվող զուգընկեր՝ ակումբներում կամ գիշերային ակումբներում ծառայություններ մատուցելու համար:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)այցելուներին ռեստորաններ և զվարճության այլ վայրեր ուղեկցելը.

2)այցելուներին ուղեկցելը՝ որպես պարերի զուգընկեր.

3)գիշերային ակումբներում այցելուներին դիմավորելը և նրանց համար զվարճություններ ապահովելը.
4)այլ աշխատողներին ղեկավարելը.
5)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)զուգընկեր՝ զվարճությունների վայրեր ուղեկցող.
2)զուգընկեր՝ վճարովի, գիշերային ակումբի.
3)զուգընկերուհի՝ վճարովի, գիշերային ակումբի.
4)զուգընկեր՝ պարի:

23. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 515. ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿՆԵՐ, ԳՈՒՇԱԿՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Աստղագուշակները, գուշակները և հարակից զբաղմունքների աշխատողները աստղագուշակության մեթոդներով կամ այլ եղանակներով կանխագուշակում են այցելուների կյանքի գալիք իրադարձությունները, նախազգուշացնում կամ խորհուրդներ են տալիս այն մասին, թե ինչպես պետք է իրեն պահել:
2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. գալիք իրադարձությունները կանխագուշակելը՝ հիմնված որոշակի ժամանակում աստղերի և մոլորակների դիրքերի, այցելուի ափի գծերի, խաղաքարտերի, բաժակի մեջ սուրճի թանձրուկի կամ թեյի տերևի դասավորության, կամ այդօրինակ այլ մեթոդների վրա. անբարենպաստ ազդեցություններից խուսափելու համար այցելուին նախազգուշական միջոցառումներ ձեռնարկելու մասին խորհուրդներ տալը:
3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.
1)**Ստորին խումբ 5150. Աստղագուշակներ, գուշակներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների**:

24. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5150. ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿՆԵՐ, ԳՈՒՇԱԿՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Աստղագուշակները, գուշակները և հարակից զբաղմունքների աշխատողները աստղագուշակության կամ այդօրինակ մեթոդներով կանխագուշակում են այցելուների կյանքի գալիք իրադարձությունները, նախազգուշացնում կամ խորհուրդներ են տալիս այն մասին, թե ինչպես պետք է իրեն պահել:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)այցելուների բախտացույցեր (հորոսկոպներ) կազմելը՝ ծնվելիս կամ դրանից հետո, որպեսզի տեղեկություն տան անցյալի մասին և կանխատեսեն այցելուների կյանքի ապագա իրադարձություններն ու պայմանները.
2)մարդկային գործունեության տարբեր տեսակների համար ամենալավ ժամանակը որոշելը, ինչպիսիք են երդման արարողությունը, ամուսնությունը, ճանապարհորդությունը, կրոնական և այլ արարողություններ.
3)այցելուների կյանքի և կենսական տարբեր իրավիճակների վրա համաստեղությունների, աստղերի և այլ արտակարգ երևույթների (ֆենոմենների) ազդեցությունն ուսումնասիրելը.
4)անբարենպաստ ազդեցությունից խուսափելու համար նախազգուշական միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին այցելուին խորհուրդներ տալը.
5)այցելուի ափի բնորոշ գծերը վերծանելը, նրա հանած խաղաքարտերը, բաժակում թեյի տերևի դիրքը և սուրճի թանձրուկի դասավորությունը, մեռած կենդանիների ոսկորների ուրվապատկերները և նկարները մեկնաբանելը և այլն.
6)այդ մեկնաբանությունների հիման վրա ապագայի իրադարձություններ գուշակելը.
7)հնարավոր վարքագծի մասին այցելուին նախազգուշացնելը և խորհուրդներ տալը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)աստղագուշակ.
2)գուշակ:

25. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 516. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների աշխատողները քաղաքացիներին և սեփականությունը պաշտպանում են հրդեհներից, գողությունից, կողոպուտից և այլ վտանգներից, պահպանում են հասարակական կարգը և ապահովում օրենքների ու հրահանգների կատարումը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. հրդեհը կանխարգելելը, հրդեհի դեմ պայքարելը և դա մարելը. քաղաքացիներին, նրանց ունեցվածքը և նյութական արժեքները հրդեհ մարելու կամ այլ վտանգների ժամանակ և դրանից հետո փրկելը. իրավակարգը պահպանելը. քաղաքացիներին և ունեցվածքը վտանգներից և անօրինական գործողություններից պաշտպանելը. օրենքը խախտելու համար մարդկանց ձերբակալելը. ճանապարհային երթևեկությունը կառավարելը. դժբախտ պատահարների ժամանակ գործողություններ ղեկավարելը. ուղղիչ հաստատություններում դատապարտյալների շրջանում կարգ ու կանոն և կարգապահություն պահպանելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 5161. Հրշեջներ.**

2)**Ստորին խումբ 5162. Ոստիկաններ.**

3)**Ստորին խումբ 5163. Աշխատողներ՝ քրեակատարողական հիմնարկների.**

4)**Ստորին խումբ 5169. Աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների, այլ խմբերում չներառված:**

26. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5161. ՀՐՇԵՋՆԵՐ

1.Հրշեջները կանխարգելում են հրդեհը, պայքարում դրա դեմ, ջանքեր գործադրում հրդեհը մարելու համար, քաղաքացիներին և նյութական արժեքները փրկում հրդեհի ժամանակ, դա մարելուց և աղետներից հետո:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հրդեհ կանխարգելելը, մարելը, դրա դեմ պայքարելը.

2)արդյունաբերական կազմակերպությունում տարբեր պատճառներից առաջացած հրդեհի դեմ պայքարելը՝ օգտագործելով հատուկ սարքավորումներ.

3)վթարի ենթարկված ինքնաթիռում հրդեհը կանխելը և մարելը, անձնակազմին և ուղևորներին փրկելը.

4)քաղաքացիներին, ունեցվածքը և նյութական արժեքները հրդեհի և աղետի ժամանակ ու դրանից հետո փրկելը.

5)դժբախտ պատահար կամ հրդեհ առաջանալու դեպքում վնասակար նյութերի տարածումը կանխարգելելը և սահմանափակելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հրշեջ.

2)հրշեջ՝ օդային տրանսպորտում հրդեհ մարող.

3)հրշեջ՝ անտառային հրդեհներ մարող.

4)փրկարար:

27.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5162. ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

1.Ոստիկաններն ապահովում են իրավակարգը և քաղաքացիների կողմից օրենքներն ու հրահանգները կատարելը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)փողոցում և հասարակական վայրերում կարգուկանոն պահպանելը.

2)քաղաքացիներին և նրանց սեփականությունը վտանգներից և անօրինական գործողություններից պաշտպանելը.

3)օրինախախտ անձանց ձերբակալելը.

4)ձերբակալված երեխաների և անչափահասների հետ աշխատանք տանելը.

5)ճանապարհային երթևեկությունը կարգավորելը և դժբախտ պատահարների ժամանակ գործողություններ ղեկավարելը.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ոստիկան.
2)ոստիկան՝ թաղային.
3)տեսուչ՝ մանկական սենյակի.
4)կարգավորող՝ ճանապարհային երթևեկության:

28. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5163. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ

1.Քրեակատարողական հիմնարկների աշխատողները հսկում են դատապարտյալներին, կարգապահություն են պահպանում ուղղիչ հաստատություններում:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ընդունվող դատապարտյալներին խուզարկելը, նրանց պատկանող արժեքավոր իրերը պահասենյակ հանձնելը, բանտախուց ուղեկցելը, բանտախուցը փակելը.
2)դատապարտյալների վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելը, նրանց մոտ գտնվող արգելված առարկաները առգրավելը.
3)դատապատյալների իրերը զննելը, ուղղիչ հիմնարկությունում նրա կացարանը խուզարկելը.
4)ուղղիչ հիմնարկությունում դատապարտյալների կացարանները պարբերաբար ստուգելը.
5)դատապարտյալներին աշխատանքի և զբոսանքի ժամանակ հսկելը, ուղղիչ հիմնարկության տարածքը հսկելը՝ փախուստները և այլ խախտումներ կանխելու նպատակով.
6)դատապարտյալներին իրենց աշխատատեղ ուղեկցելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)պահակ՝ բանտի.
2)բանտապահ:

29. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5169. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է այլ ծառայությունների աշխատողների, ովքեր պաշտպանում են քաղաքացիներին ու նրանց սեփականությունը և չեն ընդգրկվում «Աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների» փոքր խումբ 516-ի այլ ստորին խմբերում:
2.Այստեղ ներառվում են նրանք, ովքեր պարեկություն են կատարում շենքերում կամ տարածքներում՝ անօրինական թափանցումներ, գողություններ, բռնարարքներ և հակաօրինական այլ հնարավոր գործողություններ կանխելու նպատակով և, եթե անհրաժեշտ է, ուժ են գործադրում, ձերբակալում են օրինազանցներին: Այս խումբ ներառվում են նաև նրանք, ովքեր աշխատում են որպես թիկնապահներ, փրկարարներ և եգերներ (պրոֆեսիոնալ որսորդ):
3.Նրանց պարտականությունները ներառում են.
1)վերահսկվող օբյեկտներ այցելող անձանց փաստաթղթերը և անցագրերն ստուգելը.
2)ներս բերվող և դուրս տարվող նյութական միջոցներ ստուգելը, անհրաժեշտության դեպքում ուժ կիրառելու իրավունքն օգտագործելը և խախտում կատարողներին ձերբակալելը.
3)որպես թիկնապահ՝ պարտականություններ կատարելը.
4)արգելանոցների, անտառային զանգվածների և հանդերի պարեկությունը.
5)ծովափի և լողավազանների պարեկությունը՝ դժբախտ պատահարները կանխելու և խեղդվողներին փրկելու նպատակով.

6)քաղաքացիներին հարձակումներից պաշտպանելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
4.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)թիկնապահ.
2)փրկարար՝ ջրային տարածքում.
3)պահապան՝ անվտանգության ծառայության.
4)եգեր:

30. ԵՆԹԱԽՈՒՄԲ 52. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ, ՑՈՒՑԱԴՐՈՂՆԵՐ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱԳՈՒՍՏԻ, ԲՆՈՐԴՆԵՐ

1.Ապրանքներ և հագուստ վաճառողները, ցուցադրողները, ինչպես նաև բնորդները մեծածախ ու մանրածախ առևտրի խանութներում և այդօրինակ կազմակերպություններում, ինչպես նաև կրպակներում և շուկաներում ցուցադրում և վաճառում են ապրանքներ, գեղարվեստական ցուցադրումներում հանդես են գալիս որպես բնօրինակ (մոդել) կամ բնորդ:
2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. գովազդման ժամանակ որպես բնօրինակ, հագուստներ և սանրվածքներ ցուցադրելիս որպես մանեկեն, նկարիչների արվեստանոցներում և գեղարվեստի ուսումնարաններում որպես բնորդ հանդես գալը. մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպություններում կամ որոշակի վայրերում տեղադրված կրպակներում և շուկաներում ապրանք վաճառելը. հնարավոր գնորդներին ապրանք ցուցադրելը:
3.Սույն ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.
1) **Փոքր խումբ 521. Մանեկեններ և կենդանի այլ բնօրինակներներ.**
2) **Փոքր խումբ 522. Վաճառողներ՝ խանութների, և ցուցադրողներ՝ ապրանքների**.
3) **Փոքր խումբ 523. Վաճառողներ՝ տաղավարների և շուկաների:**

31. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 521. ՄԱՆԵԿԵՆՆԵՐ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԱՅԼ ԲՆՕՐԻՆԱԿՆԵՐ

1.Մանեկենները և կենդանի այլ բնօրինակները վաճառքի համար ցուցադրում են հագուստ և հագուստի տարբեր պարագաներ կամ գովազդի համար աշխատում են որպես կենդանի բնօրինակներ և հանդես գալիս որպես բնորդներ:
2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ցուցադրման սրահներում, մեծածախ և մանրածախ առևտրի սրահներում կամ հագուստի նմուշների ցուցահանդեսներում գնորդներին հագուստ և տարբեր պարագաներ ցուցադրելը, լուսանկարիչների, քանդակագործների և նկարիչների համար, ինչպես նաև լուսանկարների և կինոնկարների համար գովազդային նպատակներով որպես բնորդ կամ բնատիպար աշխատելը:
3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.
1) Ստորին խումբ 5210. Մանեկեններ և կենդանի այլ բնօրինակներ:

32. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5210. ՄԱՆԵԿԵՆՆԵՐ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԱՅԼ ԲՆՕՐԻՆԱԿՆԵՐ

1.Մանեկենները և այլ կենդանի բնօրինակները ցուցադրում են հագուստ, սանրվածքներ՝ մրցույթների, սեմինարների, կոնգրեսների, նորաձևության ցուցադրման, ցուցահանդեսային սեանսների ժամանակ և այլ ցուցահանդեսներում: Աշխատում են գովազդի նպատակով, ինչպես նաև գեղարվեստի ուսումնարանում ուսանողներին ուսուցանելու համար, գեղարվեստական աշխատանքներ ստեղծելու ժամանակ կեցվածք են ընդունում նկարիչների, քանդակագործների, լուսանկարիչների առաջ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)մրցույթների, սեմինարների, նորաձևության կոնգրեսների, ցուցասրահներում սեանսների, ցուցահանդեսների և այլ դիտումների ժամանակ նոր հագուստի կամ նորաձև հագուստի օրինակներ, սանրվածքներ ցուցադրելը.
2)քայլելը, շրջադարձելը և հագուստի ցուցադրման այլ ոճաձևեր կիրառելը՝ դրա առավել գրավիչ կողմերը ցուցադրելու նպատակով.

3)նկարիչների, լուսանկարիչների, քանդակագործների. գեղանկարիչների առաջ և նկարահանումների ժամանակ, ուսանողներին ուսուցանելու համար բնորդի կեցվածք ընդունելը.

4)լուսանկարների և գովազդային բնույթի կինոնկարների համար որպես բնատիպար (մոդել) կեցվածք ընդունելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը.

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բնատիպար՝ գովազդային.

2)բնորդ.

3)բնատիպար՝ նորաձևության.

4)ցուցադրող՝ հագուստի.

5)ցուցադրող՝ սանրվածքների:

33. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 522. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ՝ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՂՆԵՐ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1.Խանութի վաճառողները և ապրանքներ ցուցադրողները վաճառում են ապրանքը մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպություններում, ցուցադրում են ապրանքները, դրանց աշխատանքը և նկարագրում որակը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. մեծածախ առևտրի կազմակերպություններում առևտրականներին, մանրածախ և խոշոր խմբաքանակի ապրանքներ սպառողներին կամ մանրածախ առևտրի խանութների գնորդներին ապրանք վաճառելը. ապրանքները, դրանց աշխատանքը և որակը ցուցադրելը. ապրանքի ընտրության հարցում օգնելը. ապրանքի արժեքը հաշվարկելը և վճարման կտրոն գրելը. ապրանքի քանակը վաճառակետում վերահսկելը. չիրացված ապրանքը և տարաները հավաքելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 5220. Վաճառողներ՝ խանութների, և ցուցադրողներ՝ ապրանքների:**

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5220. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ՝ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՂՆԵՐ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1.Խանութների վաճառողները և ապրանքներ ցուցադրողները մեծածախ առևտրի կազմակերպություններում, մանրածախ վաճառողներին և մեծ խմբաքանակով ապրանքներ սպառողներին կամ մանրածախ առևտրի խանութներում գնորդներին ցուցադրում և վաճառում են ապրանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վաճառքի ենթակա ապրանքը պահեստից դահլիճ փոխադրելը, դրանք ցուցափեղկում դասավորելը.

2)գնորդի պատվիրած ապրանքի տեսակը և որակը որոշելը.

3)գնորդին ապրանք գնելիս օգնելը.

4)գնորդին գներին, վարկի և զեղչի պայմաններին ծանոթացնելը.

5)ապրանք փաթեթավորելը և ապրանքն ըստ պահանջի տեղ հասցնելը կազմակերպելը.

6)հաշիվներ, ապրանքագրեր, անդորրագրեր, ստացականներ ձևակերպելը.

7)գանձապահի ստացած գումարն անհրաժեշտության դեպքում ստուգելը.

8)վաճառքում գտնվող ապրանքներ ցուցադրելը՝ դրանց բնութագրերի և օգտագործման վերաբերյալ գնորդներին տեղեկացնելու, ինչպես նաև գնորդի շահագրգռվածությունը խրախուսելու նպատակով.

9)ապրանքների քանակը վերահսկելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ցուցադրող.

2)վաճառող՝ մանրածախ առևտրի կազմակերպության.

3)վաճառող՝ մեծածախ առևտրի կազմակերպության:

35. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 523. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ՝ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՇՈՒԿԱՆԵՐԻ

1.Տաղավարների և շուկաների վաճառողները վաճառում են տարբեր ապրանքներ, ինչպիսիք են՝ կաշվից, մանածագործվածքից պատրաստված գեղարվեստական իրեր, փորագրված փայտյա իրեր, ասեղնագործված իրեր, ժանյակներ, թերթեր, պարբերական հրատարակություններ, բացիկներ, ծխախոտներ, շոկոլադ, պաղպաղակ, որոնք համաձայն լիցենզիայի (գործունեության թույլտվություն)՝ դրվում են փողոցների որոշակի տեղերում կամ այլ բաց հրապարակներում, կամ շուկաներում վաճառում են մրգեր, բանջարեղեն և այլ՝ հիմնականում շուտ փչացող սննդամթերք:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. վերը նշված և այդօրինակ այլ ապրանքներ գնելն ու կրպակներում, փողոցների որոշակի տեղերում կամ այլ բաց տարածքներում խմբավորված տաղավարներում վաճառելը՝ համաձայն տեղական մարմինների թույլատվության. շուկաներում մրգեր, բանջարեղեն և շուտ փչացող այլ մթերքներ վաճառելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)Ստորին խումբ 5230. Վաճառողներ՝ տաղավարների և շուկաների:

36. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5230. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ՝ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՇՈՒԿԱՆԵՐԻ

1.Տաղավարների և շուկաների վաճառողները, տեղական իշխանությունների թույլտվությամբ, սովորաբար փողոցի որոշակի տեղերում կամ այլ բաց տարածքներում տեղադրված կրպակներում վաճառում են տարբեր ապրանքներ՝ կաշվից և մանածագործվածքից պատրաստված գեղարվեստական արհեստագործական իրեր, ասեղնագործ իրեր, ժանյակներ, թերթեր, պարբերական հրատարակություններ, բացիկներ, ծխախոտ, շոկոլադ, պաղպաղակ և այլն, կամ շուկայում վաճառում են մրգեր, բանջարեղեն և շուտ փչացող այլ սննդամթերք:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տեղական իշխանություններից թույլտվություն ստանալը՝ փողոցի կամ այլ բաց տարածության որոշակի տեղում տաղավարներ բացելու համար.

2)վաճառքի ենթակա այնպիսի տարբեր մթերքներ գնելը կամ դրանց կանոնավոր մատակարարման մասին պայմանագիր կնքելը, ինչպիսիք են կաշվից և մանածագործվածքից պատրաստված գեղարվեստական արհեստագործական արտադրանքը, փորագրված փայտյա իրերը, ասեղնագործությունները, ժանյակները, որոնք վաճառողը ցուցադրում է տաղավարում, սահմանում է գինը և վաճառում.

3)թերթեր, պարբերական հրատարակություններ, բացիկներ, ծխախոտ, շոկոլադ, պաղպաղակ գնելը կամ դրանց կանոնավոր մատակարարման մասին պայմանագիր կնքելը և դրանք տաղավարներում վաճառելը.

4)մեծածախ շուկաներում կամ անմիջականորեն ագարակատերերից (ֆերմերներից) թարմ միրգ կամ բանջարեղեն, կամ շուտ փչացող մթերքներ գնելը և դրանք շուկաներում վաճառելը.

5)վաճառքի համար նախատեսված ապրանք բեռնելը և բեռնաթափելը.

6)վաճառված ապրանքի դիմաց գումարներ ստանալը և դրանք հաշվառելը.

7)ապրանքի քանակը և տեսականին վերահսկելը.

8)տաղավարի և նրա շրջակա տարածքի մաքրությունը պահպանելը.

9) այլ աշխատողներին ղեկավարելը.

10) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)վաճառող՝ կրպակի.

2)վաճառող՝ շուկայի.

3)վաճառող՝ տաղավարի:

37. ԵՆԹԱԽՈՒՄԲ 53. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Բնակարանային-կոմունալ կազմակերպությունների աշխատողները կատարում են գազի, ջրմուղ-կոյուղու և էլեկտրաէներգիայի մատակարարման վթարային-վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կանաչապատման աշխատանքներ:

2.Սույն ենթախմբի աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են՝ գազի, ջրմուղ-կոյուղու և էլեկտրտրաէներգիայի մատակարարման սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքներ կատարելը. այգիների արահետներ, սիզամարգեր (գազոններ), ծաղկաթմբեր ձևավորելը. հասարակ գործիքների և հարմարանքների միջոցով կանաչ գոտիներ խնամելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 531. Աշխատողներ՝ քաղաքների և բնակավայրերի գազի մատակարարման կազմակերպությունների.**

2)**Փոքր խումբ 532. Աշխատողներ՝ ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների.**

3)**Փոքր խումբ 533. Աշխատողներ՝ կանաչապատման կազմակերպությունների.**

4)**Փոքր խումբ 534. Աշխատողներ՝ էներգամատակարարման կազմակերպությունների:**

38. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 531. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Քաղաքների և բնակավայրերի գազի մատակարարման կազմակերպությունների աշխատողները գործող գազամուղներում կատարում են վթարային-վերանորոգման աշխատանքներ, կենցաղային գազօջախների և գազային ջրատաքացուցիչների փոխարինման փականագործական աշխատանքներ, իրականացնում են բնակարանների ծխատարները ժամանակին մաքրելու նկատմամբ վերահսկողություն:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. գործող ցածր, միջին և բարձր ճնշման գազամուղներում վթարային-վերանորոգման աշխատանքներ կատարելը. կենցաղային գազասարքերի վերանորոգման աշխատանքներ կատարելը. գազային ջրատաքացուցիչների և կենցաղային գազօջախների փոխարինման փականագործական աշխատանքներ կատարելը. գազի գլանանոթներ (բալոններ) փոխելը, գազի սարքերի օգտագործման կանոնների վերաբերյալ բաժանորդներին հրահանգավորելը. պինդ, հեղուկ և գազանման վառելիքով ջեռուցվող վառարանների և սալօջախների ծխատարները ժամանակին մաքրելու նկատմամբ վերահսկողությունը. ծխատարների և վառարանների տեխնիկական վիճակի մասին սահմանված ձևի արձանագրություն կազմելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 5310. Աշխատողներ՝ քաղաքների և բնակավայրերի գազի մատակարարման կազմակերպությունների:**

39. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5310. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Քաղաքների և բնակավայրերի գազի մատակարարման կազմակերպությունների աշխատողները կատարում են գործող գազամուղների վթարային-վերանորոգման, գազային ջրատաքացուցիչների և կենցաղային գազօջախների փոխարինման փականագործական, վառարանների և ծխատարներ ժամանակին մաքրելու նկատմամբ վերահսկողության և այլ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գործող ցածր, միջին և բարձր ճնշման գազամուղներում վթարային-վերանորոգման աշխատանքներ կատարելը.

2)կենցաղային գազի սարքերի վերականգնման և նորոգման, գազային ջրատաքացուցիչների և կենցաղային գազօջախների փոխարինման փականագործական աշխատանքներ կատարելը, գազի գլանանոթներ (բալոններ) փոխելը.

3)գազասարքերի օգտագործման կանոնների վերաբերյալ բաժանորդներին հրահանգավորելը.

4)պինդ, հեղուկ և գազանման վառելիքով ջեռուցվող վառարանների և սալօջախների ծխանցքերը ժամանակին մաքրելու նկատմամբ վերահսկողությունը.

5)ծխատարների և վառարանների տեխնիկական վիճակի մասին արձանագրություն կազմելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փականագործ՝ գազի տնտեսությունում վթարային-վերանորոգման աշխատանքների.

2)փականագործ՝ գազի սարքավորման վերանորոգման և շահագործման:

40. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 532. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների աշխատողները սպասարկում են ջրաճնշիչ պոմպերը և ջրամբարները, բնակչությանը ջուր են բաց թողնում ջրառման կետերից, վարում ջրի օզոնավորման տեխնոլոգիական գործընթացը, չափում ջրամբարի ջրի մակարդակը, սպասարկում ջրմուղ-կոյուղու կառուցվածքային ստորաբաժանումները, կարգավարական կետից կատարում ջերմամատակարարման և ջրամատակարարման աշխատանքի ավտոմատ վերահսկողություն, կատարում ջրմուղ-կոյուղու համակարգերի նորոգման վթարային-վերանորոգման աշխատանքներ, զննում ջրմուղ-կոյուղու ցանցերը՝ դրանց անսարքությունները հայտնաբերելու նպատակով:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ ջրաճնշիչ պոմպեր և ջրամբարներ սպասարկելը. ջրի մատակարարումը կարգավորելը՝ ըստ առանձին տարածաշրջանների. ջրի օզոնավորման տեխնոլոգիական գործընթացը վարելը՝ ըստ սարքերի ցուցմունքերի, օզոնարար կայանի աշխատանքը կարգավորելը՝ տրված ռեժիմին համապատասխան. ջրամբարներում ջրի մակարդակը չափելը և այն կարգավորելը. ջրմուղ ցանցերի նորոգման աշխատանքներ կատարելը. կոյուղու ցանցերը մաքրելը և աղտոտումը վերացնելը. ջրանցքեր և փոսորակներ փորելը և դրանք ամրացնելը. ջերմամատակարարման և ջրամատակարարման համակարգերի աշխատանքը կարգավարական կետից վերահսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 5320. Աշխատողներ՝ ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների:**

41. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5320. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների աշխատողները սպասարկում են ջրաճնշիչ պոմպերը և ջրամբարները, բնակչությանը ջուր են բաց թողնում ջրառման կետերից, կատարում ջրի օզոնավորում, չափում ջրամբարների ջրի մակարդակը, սպասարկում ջրմուղ-կոյուղու կառույցները, կատարում ջերմամատակարարման և ջրահեռացման աշխատանքների ավտոմատ վերահսկողություն, ջրմուղ-կոյուղու համակարգերի վթարային-վերանորոգման աշխատանքներ, շրջանցում և զննում ջրմուղ-կոյուղու ցանցերը՝ դրանց անսարքությունները հայտնաբերելու նպատակով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ջրաճնշիչ պոմպեր և ջրամբարներ սպասարկելը.

2)ջրի մատակարարումը կարգավորելը՝ ըստ առանձին տարածաշրջանների.

3)ջրի օզոնավորման տեխնոլոգիական գործընթացը վարելը՝ ըստ սարքերի ցուցմունքների, և օզոնարար կայանի աշխատանքը կարգավորելը՝ տրված ռեժիմներին համապատասխան.

4)ջրմուղ-կոյուղու ցանցերը զննելը և ոչ մեծ անսարքությունները վերացնելը.

5)ջրմուղ ցանցերի վերանորոգման, կոյուղու ցանցերի մաքրման և աղտոտման վերացման աշխատանքներ կատարելը.

6)ջերմամատակարարման և ջրամատակարարման համակարգերի աշխատանքը հեռակառավարմամբ վերահսկելը.

7)այլ աշխատողների ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ջրաբաշխորդ՝ ջրաբաշխական կայանի.

2)շրջանցորդ՝ ջրմուղ-կոյուղու ցանցի.

3)օզոնավորող.

4)փականագործ՝ վթարային-վերանորոգման աշխատանքների:

42. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 533. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Կանաչապատման կազմակերպությունների աշխատողներն զբաղվում են այգիներում, ծաղկաթմբերում, ջերմոցներում հող մշակելով և տնկիներ, ծառեր, թփեր և ծաղկաբույսեր տնկելով, սիզամարգեր (գազոններ) և ծաղկանոցներ մշակելով, ծառերի պսակներ էտելով:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. հող մշակելը. տնկիներ, սերմնաբույսեր տնկելը. ախտահանիչ միջոցներով բույսերը սրսկելը. սիզամարգեր և ծաղկանոցներ մշակելը, ծառերի պսակներ և թփուտներ էտելը. ծաղկաբույսերը ձեռքով ոռոգելը, պարզ գործիքների և սարքերի միջոցով կանաչ գոտիներ խնամելը. ջերմոցային տնտեսություն կազմակերպելը և վարելը. պուրակներում և այգիներում բնահողային, խճային արահետներ նորոգելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 5330. Աշխատողներ՝ կանաչապատման կազմակերպությունների:**

43. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5330. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Կանաչապատման կազմակերպությունների աշխատողները զբաղվում են այգիներում, ծաղկաթմբերում, ջերմոցներում հող մշակելով և տնկիներ, ծառեր, թփեր ու ծաղկաբույսեր տնկելով, սիզամարգեր ու ծաղկանոցներ մշակելով, ծառերի պսակներ էտելով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հող մշակելը.

2)հողը պարարտացնելը.

3)տնկիներ, սերմեր, ծառեր, թփեր և ծաղկաբույսեր տնկելը.

4)բույսերը ախտահանիչ միջոցներով սրսկելը.

5)սիզամարգեր և ծաղկանոցներ մշակելը, ծառերի պսակներ և թփուտներ էտելը.

6)ծաղկաբույսեր և ծառեր ոռոգելը.

7)պուրակներում և այգիներում բնահողային, կոճղային և խճային արահետներ նորոգելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կանաչապատող.

2)այգեպան:

44. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 534. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Էներգամատակարարման կազմակերպությունների աշխատողները սպասարկում են էլեկտրաէներգիա սպառողներին, վերահսկում էլեկտրաէներգիա հաշվառող սարքերի աշխատանքը և հայտնաբերում առանց հաշվառման էլեկտրաէներգիայի օգտագործման դեպքերը, փոխում անսարք էլեկտրահաշվիչներ և չափիչ հոսանքափոխարկիչներ (տրանսֆորմատորներ), վերանորոգում և փոխարինում էներգամատակարարման սարքերը:

2.Այս փոքր խմբի աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են՝ սպառողների էլեկտրաէներգիան անջատելն ու միացնելը և նրանց սպասարկելը. անսարք էլետրահաշվիչները և չափիչ հոսանքափոխարկիչները փոխելը. հաշվառման սարքերի վիճակը հսկելը և դրանց ճիշտ շահագործումն ապահովելը, էլեկտրաէներգիայի հաշվառման խախտումների դեպքում հաշվարկներ կատարելը, էլեկտրահաշվիչների ցուցմունքները գրանցելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 5340. Աշխատողներ՝ էներգամատակարարման կազմակերպությունների:**

45. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 5340. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Էներգամատակարարման կազմակերպությունների աշխատողները սպասարկում են էլեկտրաէներգիա սպառողներին, վերահսկում էլեկտրաէներգիա հաշվառող սարքերի աշխատանքը և հայտնաբերում առանց հաշվառման էլեկտրաէներգիայի օգտագործման դեպքերը, փոխում անսարք էլեկտրահաշվիչներ և չափիչ հոսանքափոխարկիչներ (տրանսֆորմատորներ), վերանորոգում և փոխարինում էներգամատակարարման սարքերը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)սպառողների էլեկտրաէներգիան անջատելն ու միացնելը և նրանց սպասարկելը.
2)անսարք էլեկտրահաշվիչներ և չափիչ հոսանքափոխարկիչներ փոխելը.
3)էլեկտրաէներգիայի ծախսի հաշվառման սարքերի վիճակը հսկելը.
4)էներգամատակարարման սարքեր վերանորոգելը և փոխարինելը.
5)այլ աշխատողներին ղեկավարելը.
6)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. էլեկտրափականագործ՝ մատակարարման կազմակերպության:

ԲԱԺԻՆ 6
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 6. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ, ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների որակավորված աշխատողներն աճեցնում և հավաքում են դաշտային մշակաբույսերի, ծառերի և թփերի բերքը, վայրի պտղատու ծառերի պտուղները, խնամում և բազմացնում են ընտանի կենդանիներ և թռչուններ, հետևում վայրի կենդանիներին և որսում նրանց, աճեցնում, պահպանում և շահագործում անտառներ, բազմացնում և որսում ձկներ, աճեցնում և հավաքում ջրային բուսական և կենդանական աշխարհի այլ տեսակներ՝ իրենց և իրենց ընտանիքի անդամներին սննդով, կացարանով և եկամտով ապահովելու համար:
2.Սույն աշխատանքներն ենթադրում են գործնական փորձի և հատուկ գիտելիքների առկայություն, որոնք ձեռք են բերվում մասնագիտական ուսուցման գործընթացում՝ հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիման վրա:
3.Գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների որակավորված աշխատողների պարտականությունները ներառում են՝ հողը նախապատրաստելը, ցանելը, տնկելը, ոռոգելը, պարարտացնելը. դաշտային մշակաբույսերի բերքը հավաքելը. բանջարաբոստանային մշակաբույսեր, մրգեր ու հատապտուղներ աճեցնելը և դրանց բերքը հավաքելը. վայրի բույսեր և պտուղներ հավաքելը. միս, կաթ, հավկիթ, բուրդ, մորթի, աղվափետուր, կաշի ստանալու համար ընտանի կենդանիներ խնամելը և բազմացնելը. վայրի կենդանիներ որսալը. մեղվաբուծական և շերամաբուծական արտադրանք ստանալու համար մեղուներ և շերամի որդեր խնամելը և աճեցնելը. անտառներ աճեցնելը, պահպանելը և շահագործելը. ձկներ բազմացնելը և որսալը. ջրային բուսական և կենդանական աշխարհի այլ տեսակներ հավաքելը և աճեցնելը. արտադրանքի նախնական մշակում կատարելը և այն պահպանելը. արտադրանքը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելը, մթերող կամ սպառող կազմակերպություններին հանձնելը, շուկայում իրացնելը, այլ աշխատողներին ղեկավարելը:
4.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.
1)**Ենթախումբ 61. Աշխատողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող՝ գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների.**
2)**Ենթախումբ 62. Աշխատողներ՝ անձնական սպառման համար, գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող:**

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 61. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Շուկայական կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների աշխատողները կատարում են դաշտային մշակաբույսերի, ծառերի և թփերի բերքն աճեցնելու ու հավաքելու համար անհրաժեշտ աշխատանքներ, բազմացնում և խնամում են ընտանի կենդանիներ և թռչուններ, արտադրում անասնապահական մի շարք արտադրանքներ, հետևում վայրի կենդանիներին և զբաղվում դրանց որսով, աճեցնում, պահպանում և շահագործում անտառներ, բազմացնում և որսում ձուկ, աճեցնում և հավաքում ջրային բուսական և կենդանական աշխարհի այլ տեսակներ, արտադրանքը վաճառում գնորդներին կամ մատակարարում կազմակերպություններին:

2.Շուկայական կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների աշխատողների պարտականությունները ներառում են՝ հող նախապատրաստելը, ցանելը, տնկելը, ոռոգելը, պարարտացնելը. դաշտային մշակաբույսերի բերքը հավաքելը. ծառերի և թփերի մրգերը և հատապտուղները հավաքելը, միս, կաթ, հավկիթ, բուրդ, մորթի, կաշի և անասնապահական այլ արտադրանքներ ստանալու համար ընտանի կենդանիներ և թռչուններ բազմացնելը և խնամելը. մեղվաբուծական և շերամաբուծական արտադրանք ստանալու համար մեղուներ և շերամի որդեր խնամելը և բազմացնելը. անտառներ աճեցնելը, պահպանելը և շահագործելը. ձկներ բազմացնելը և որսալը. ջրային բուսական և կենդանական այլ տեսակներ աճեցնելն ու հավաքելը. արտադրանքը նախնական մշակման ենթարկելը և պահպանելը. արտադրանքը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելը, մթերող կամ սպառող կազմակերպություններին հանձնելը կամ շուկայում իրացնելը, այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 611. Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, բանջարանոցային, պտղատու և դաշտային մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների.**

2)**Փոքր խումբ 612. Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անասնապահական ապրանքներ արտադրող կազմակերպությունների.**

3)**Փոքր խումբ 613. Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների, և անասնաբույծներ.**

4)**Փոքր խումբ 614. Աշխատողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անտառային և փայտամթերման կազմակերպությունների, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.**

5)**Փոքր խումբ 615. Աշխատողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների, որսորդ-հրաձիգներ և որսորդ-թակարդ դնողներ:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 611. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ, ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ, ՊՏՂԱՏՈՒ ԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Բանջարանոցային, պտղատու և դաշտային մշակաբույսեր արտադրող՝ շուկայական կողմնորոշում ունեցող կազմակերպությունների աշխատողները կատարում են դաշտային և բանջարանոցային մշակաբույսերի, ծառերի և թփերի մրգերի, դեղաբույսերի և այլ բույսերի աճեցման անհրաժեշտ աշխատանքներ, պտղաբուծարաններում աճեցնում են այգեգործական մշակաբույսեր, աճեցված արտադրանքը վաճառում գնորդներին կամ մատակարարում կազմակերպություններին.

2.Կատարվող պարտականությունները ներառում են. ցանքի կամ տնկման համար հողը նախապատրաստելը, աճեցնելու համար ցանկալի դաշտային, բանջարանոցային և այգեգործական մշակաբույսերի տեսակներն ու քանակը որոշելը՝ ներառյալ պտղաբուծարանների արտադրանքը, սերմեր, տնկիներ, կոճղեզներ գնելը կամ աճեցնելը, պարարտանյութեր գնելը, տարբեր մշակաբույսերի բերքը հավաքելը և պահպանելը, աշխատող կենդանիներ խնամելը, գյուղատնտեսական կառույցները, մեքենաները և սարքավորումներն սպասարկելը, աճեցված արտադրանքը նախնական մշակման ենթարկելը, վաճառելը կամ մթերման կազմակերպություններին հանձնելը, այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 6111. Դաշտավարներ և բանջարաբույծներ.**

2)**Ստորին խումբ 6112. Այգեգործներ.**

3)**Ստորին խումբ 6113. Այգեպաններ, այգեգործներ և այլ աշխատողներ՝ պտղաբուծարանների.**

4)**Ստորին խումբ 6114. Արտադրողներ՝ գյուղատնտեսական խառը արտադրանքի:**

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6111. ԴԱՇՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ԲԱՆՋԱՐԱԲՈՒՅԾՆԵՐ

1.Դաշտավարները և բանջարաբույծները ծրագրում և կատարում են հողի ցանքը, բույսերի տնկման, տարբեր տեսակի դաշտային մշակաբույսերի (ցորեն և այլ հացազգիներ, բրինձ, շաքարեղեգ, գետնանուշ, ծխախոտ, խոշոր ցողունավոր խոտեր և այլն), ինչպես նաև բանջարաբույսերի (կարտոֆիլ, բազուկ, կաղամբ և այլ) բերքը աճեցնելու և հավաքելու, դրանք մթերման կազմակերպություններին մատակարարելու, մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու կամ շուկայում իրացնելու նախապատրաստական աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)աճեցնելու համար ցանկալի պտղատու ծառերի և թփերի տեսակները և քանակը որոշելը.

2)ցանքի և տնկման համար հողը նախապատրաստելը (վարել, փորել, տափանել, փխրեցնել, պարարտացնել և այլն).

3)սերմեր, տնկիներ, պարարտանյութեր և այլ ապրանքներ գնելը.

4)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.

5)ցանքսը և տնկիներն աճեցնելը և խնամելը.

6)բույսերը վնասատուներից պաշտպանելը.

7)բերքը հավաքելը, հավաքած բերքը պահեստավորելը.

8)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

9)աշխատող կենդանիներին խնամելը, գյուղատնտեսական շինությունների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում կատարելը և դրանք սպասարկելը.

10)արտադրանքը մթերման կազմակերպություններին մատակարարելը կամ սպառողներին վաճառելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)գյուղատնտեսական որակավորված բանվոր՝ դաշտային մշակաբույսերի արտադրության.

2)ագարակապան (ֆերմեր)՝ հացահատիկային բույսերի արտադրության.

3)ագարակապան (ֆերմեր)՝ դաշտային մշակաբույսերի արտադրության:

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6112. ԱՅԳԵԳՈՐԾՆԵՐ

1.Այգեգործները կատարում են մրգատու, ընկուզազգիների ծառերի, հատապտուղների թփերի, խաղողի վազերի և այլ ծառերի ու թփերի բերքը աճեցնելու և հավաքելու անհրաժեշտ աշխատանքներ՝ բերքը մեծածախ գնորդներին վաճառելու, վաճառահանման կազմակերպություններին կանոնավորապես մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Պտուղներ աճեցնող այգեգործները ծրագրում և կատարում են մրգատու ծառեր, ընկուզազգիների ծառեր, հատապտուղների թփեր, խաղողի վազեր և այլ ծառեր ու թփեր մշակելու և աճեցնելու աշխատանքներ, հավաքում դրանց բերքը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին կանոնավորապես մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տնկման համար հողը նախապատրաստելը (վարել, տափանել, փխրեցնել, փորել, պարարտացնելը և այլն).

2)աճեցնելու համար ցանկալի պտղատու ծառերի և թփերի տեսակները և քանակը որոշելը.

3)սերմեր, տնկիներ, պարարտանյութեր և այլ ապրանքներ գնելը.

4)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.

5)տնկիներ աճեցնելը և խնամելը.

6)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

7)ծառերը և թփերը վնասատուներից պաշտպանելը.

8)աշխատող կենդանիներին խնամելը, գյուղատնտեսական կառույցները, մեքենաները և սարքավորումներն ընթացիկ նորոգման ենթարկելը և սպասարկելը.

9) արտադրանքը վաճառելը կամ մթերման կազմակերպություններին մատակարարելը.

10) այլ աշխատողներին ղեկավարելը.

11) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)գյուղատնտեսական որակավորված բանվոր՝ մրգատու թփեր մշակող.

2)ագարակապան (ֆերմեր)՝ մրգեր արտադրող.

3)ագարակապան (ֆերմեր)-գինեգործ.

4)պտղաբույծ.

5)խաղողագործ:

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6113. ԱՅԳԵՊԱՆՆԵՐ, ԱՅԳԵԳՈՐԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՊՏՂԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ

1.Այգեպանները, այգեգործները և պտղաբուծարանների այլ աշխատողները ձեռք են բերում բույսերի սերմեր և տնկիներ, ծրագրում և կատարում են առավել արդյունավետ տեխնոլոգիաների մեթոդով բանջարեղեն աճեցնելու անհրաժեշտ աշխատանքներ, աճեցնում են ծառեր, թփեր, ծաղիկներ և այլ բույսեր, տնկիներ, կոճղեզներ, սերմեր՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին կանոնավորապես մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բանջարանոցային, այգեգործական, պտղաբուծական արտադրանքի տեսակները և քանակը որոշելը.

2)սերմեր, տնկիներ, պարարտանյութեր և այլ ապրանքներ գնելը.

3)ցանքի և տնկման համար հողը նախապատրաստելը.

4)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.

5)ծաղիկներ, ծառեր և թփեր աճեցնելը և խնամելը.

6)առավել արդյունավետ տեխնոլոգիայի մեթոդով բանջարեղեն, տնկիներ և սերմեր աճեցնելը.

7)տնկիներ և սերմեր արտադրելը.

8)զբոսայգիներում կամ այգիներում ծաղիկներ, թփեր և այլ բույսեր աճեցնելը.

9)ցուցահանդեսների կամ դեղեր պատրաստելու համար բույսեր աճեցնելը.

10)բույսերը վնասատուներից պաշտպանելը.

11)արտադրանքը վաճառելը կամ պատվիրատուներին մատակարարելը.

12)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

13)բանող կենդանիներին խնամելը, գյուղատնտեսական շինությունների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում կատարելը և դրանք սպասարկելը.

14) այլ աշխատողների ղեկավարելը.

15)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)սնկաբույծ.

2)այգեգործ.

3)բանվոր՝ որակավորված, պտղաբուծարանի.

4)բուսաբույծ՝ պտղաբուծարանի:

7. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6114. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՌԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ

1.Գյուղատնտեսական խառը արտադրանք արտադրողները ծրագրում և կատարում են զանազան դաշտային, հացահատիկային և բանջարանոցային մշակաբույսերի, ծառերի և թփերի վրա աճող, այգեգործական մշակաբույսերի և պտղաբուծարանների արտադրանքի աճեցման ու հավաքման անհրաժեշտ աշխատանքներ՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին կանոնավորապես մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)աճեցնելու համար ցանկալի մշակաբույսերի տեսակները և քանակը որոշելը.

2)սերմեր, պարարտանյութեր և այլ ապրանքներ ձեռք բերելը.

3)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.

4)ցանքի և տնկման համար հողը նախապատրաստելը, ծառերը և թփերը խնամելը, բերք աճեցնելը և հավաքելը.

5)առավել արդյունավետ տեխնոլոգիայի մեթոդով բանջարեղեն, տնկիներ, կոճղեզներ և սերմեր աճեցնելը.

6)զբոսայգիների, այգիների ծաղիկներ, ծառեր, թփեր և այլ բույսեր աճեցնելը.

7)ցուցահանդեսների կամ դեղեր պատրաստելու համար բույսեր աճեցնելը.

8)աշխատող կենդանիներին խնամելը, գյուղատնտեսական կառույցների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում կատարելը և դրանք սպասարկելը.

9)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

10)արտադրանքը պահեստներ փոխադրելը.

11)արտադրանքը վաճառելը կամ պատվիրատուներին և մթերման կազմակերպություններին մատակարարելը.

12)այլ աշխատողների ղեկավարելը.

13) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բանվոր՝ որակավորված, համակցված մշակաբույսերի արտադրության.

2) ագարակապան (ֆերմեր)՝ համակցված մշակաբույսերի արտադրության:

8. ՓՈՔՐ ԽՈՒԲ 612. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ, ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Անասնապահական ապրանքներ արտադրող՝ շուկայական կողմնորոշում ունեցող կազմակերպությունների արտադրողները ծրագրում և կատարում են խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, խոզերի, այծերի, ձիերի և այլ կենդանիների, ընտանի թռչունների, օձերի, մուշտակամորթ գազանների, մեղուների և շերամի որդերի բազմացման, աճեցման և խնամքի անհրաժեշտ աշխատանքներ՝ անասնապահական արտադրանքը գնորդներին վաճառելու կամ կազմակերպություններին մատակարարելու համար:

2.Կատարվող պարտականությունները ներառում են. անասունների, ընտանի թռչունների, որսի կենդանիների, օձերի, մեղուների, շերամի որդերի և բազմացման համար ցանկալի այլ կենդանիների տեսակը, քանակը որոշելը. կենդանիների կեր և այլ ապրանքներ գնելը. հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը. գյուղատնտեսական այնպիսի աշխատանքներ կատարելը, ինչպիսիք են՝ անասուններ, ընտանի թռչուններ և այլն բուծելն ու բազմացնելը. անասնապահական տարբեր մթերքներ արտադրելը, արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը. գյուղատնտեսական կառույցների, մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգում կատարելը և դրանք սպասարկելը. գյուղատնտեսական արտադրանք մատակարարելը և վաճառելը, անասունները հանձնելու և ընդունելու ժամանակ փաստաթղթերը ձևակերպելը, այլ աշխատողներին ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 6121. Արտադրողներ՝ կաթի, կաթնամթերքների և անասնապահական ապրանքների.

2)Ստորին խումբ 6122. Թռչնաբույծներ.

3)Ստորին խումբ 6123. Մեղվաբույծներ և շերամապահներ.

4)Ստորին խումբ 6124. Արտադրողներ՝ անասնապահական խառը ապրանքների.

5)Ստորին խումբ 6129. Արտադրողներ՝ անասնապահական ապրանքների, այլ խմբերում չներառված:

9. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6121. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ՝ ԿԱԹԻ, ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԱՊԱՆՔՆԵՐԻ

1.Կաթի, կաթնամթերքների և անասնապահական ապրանքների արտադրության աշխատողները ծրագրում և կատարում են խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ, խոզեր, այծեր, ձիեր, ճագարներ, շներ կամ կատուներ բուծելու, բազմացնելու և խնամելու անհրաժեշտ աշխատանքներ, արտադրում են կաթ, կաթնամթերքներ և անասնապահական մի շարք ապրանքներ և այդ արտադրանքը վաճառում մեծածախ կամ մանրածախ գնորդներին, կանոնավորապես մատակարարում մթերման կազմակերպություններին կամ իրացնում շուկայում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բազմացման ենթակա անասունների և անասնաբուծական արտադրանքի տեսակներն ու քանակը որոշելը.

2)խնամվող կենդանիների համար պահանջվող կերի քանակը որոշելը.

3)անասուններ գնելը, կերեր և այլ մթերքներ աճեցնելն ու գնելը.

4)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, բանող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.

5)անասունների բուծմանը, բազմացմանը և խնամքին առնչվող խնդիրներ լուծելը.

6)առողջարարական-կանխարգելիչ աշխատանքներ կատարելը, կենդանիներ պահելու վայրերը մաքրելը.

7)կենդանիների մթերատվությունը հաշվառելը (կենդանիներ կշռելը, կաթի յուղայնությունը որոշելը և այլն).

8)կենդանիներ կթելը և ոչխարներ խուզելը.

9) կաթը մշակելը և կաթնամթերքներ (պանիր, կարագ, թթվասեր և այլն) պատրաստելը.

10)կենդանիներ մորթելը, մաշկելը, փորոտիքը հանելը և փոխադրելու համար փաթեթավորելը.

11)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

12)գյուղատնտեսական կառույցների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգումը և դրանք սպասարկելը.

13)արտադրանքը մատակարարելը կամ վաճառելը.

14)այլ աշխատողներին ղեկավարելը.

15) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ընտրասերիչ ՝ կատուների բազմացման.

2)ընտրասերիչ՝ շների բազմացման.

3)գյուղատնտեսական որակավորված բանվոր՝ ընտանի անասունների բազմացման.

4)ագարակապան (ֆերմեր)՝ կաթի և կաթնամթերքների արտադրության.

5)ագարակապան (ֆերմեր)՝ ոչխարների բազմացման.

6)ագարակապան (ֆերմեր)՝ ոչխարի բրդի արտադրության.

7)անասնաբույծ.

8)ձիաբույծ.

9)խոզաբույծ.

10)եղջերաբույծ.

11)արտադրող՝ կենդանիների կերի:

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6122. ԹՌՉՆԱԲՈՒՅԾՆԵՐ

1.Թռչնաբույծները ծրագրում և կատարում են ընտանի թռչունների բուծման, բազմացման և խնամքի աշխատանքներ՝ ձուն, միսը, փետուրը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ընտանի թռչունների և թռչնաբուծական արտադրանքի տեսակն ու քանակը որոշելը.

2)ընտանի թռչուններ բուծելը, բազմացնելը և խնամելը (կեր պատրաստելը և բաժանելը, կերակրելը).

3)թռչուններ պահելու վայրերում օդի ջերմաստիճանը, խոնավությունը և օդափոխության սահմանված կարգը պահպանելը.

4)տարածքները մաքրելը.

5)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, բանող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.

6)ձու հավաքելը, տեսակավորելը, պիտակավորելը և առաքելու համար փաթեթավորելը.

7)վաճառքի համար թռչուններ մորթելը, մաքրելը, փաթեթավորելը.

8)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

9)գյուղատնտեսական կառույցների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգումը և դրանք սպասարկելը.

10)թռչնամթերքը պատվիրատուին, վերամշակման կազմակերպություններին մատակարարելը և սպառողներին վաճառելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բանվոր՝ որակավորված, ընտանի թռչնի մսի արտադրության.

2) ագարակապան (ֆերմեր)՝ ընտանի թռչունների բազմացման.

3) թռչնաբույծ:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6123. ՄԵՂՎԱԲՈՒՅԾՆԵՐ ԵՎ ՇԵՐԱՄԱՊԱՀՆԵՐ

1.Մեղվաբույծները և շերամապահները ծրագրում և կատարում են մեղուների ու շերամի որդերի բուծման, բազմացման և խնամքի անհրաժեշտ աշխատանքներ՝ մեղրը, մեղրամոմը, շերամի բոժոժները և շերամաբուծության ու մեղվաբուծության այլ արտադրանքներ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին մատակարարելու և շուկայում իրացնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բազմացման ենթակա միջատների տեսակը և քանակը որոշելը.

2)մեղուներ բազմացնելը և խնամելը, մեղուներին կերակրելը, մայր մեղուներին դուրս բերելը և փոխարինելը, նոր ընտանիքներ ստեղծելը.

3)շերամի որդ բուծելը և խնամելը, թրթուրներին կերակրելու համար թթենու տերևներ պատրաստելը, կերը բաժանելը, ինկուբատորում անհրաժեշտ ջերմաստիճան և խոնավություն պահպանելը, ինկուբատորները մաքրելը և բոժոժները դասավորելը.

4)մեղր և մեղրամոմ հավաքելը.

5)բոժոժների բերքը հավաքելը և տեսակավորելը.

6)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

7)մեղվաբուծական և շերամաբուծական արտադրանքը փաթեթավորելը.

8)արտադրանքը սպառողներին վաճառելը կամ մթերման կազմակերպություններ առաքելը.

9)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.

10)գյուղատնտեսական կառույցների, մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգումը և դրանք սպասարկելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) մեղվաբույծ.
2) բանվոր՝ որակավորված, մեղվաբուծական արտադրության.
3) շերամաբույծ:

12. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6124. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԽԱՌԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1.Անասնապահական խառը ապրանքներ արտադրողները ծրագրում և կատարում են խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ, խոզեր, այծեր, ձիեր և կենդանիներից կազմված խառը հոտ բուծելու, բազմացնելու և խնամելու անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև բազմացնում են ընտանի թռչուններ և մեղուներ ու շերամատու որդեր՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններ առաքելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)խառը հոտ կազմելուն վերաբերող որոշումներ կայացնելը.
2)անասունների, ընտանի թռչունների, մեղուների և շերամատու որդերի տեսակն ու քանակը որոշելը.
3)անասուններ գնելը, խոտ և կերի այլ տեսակներ արտադրելը և գնելը.
4)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, բանող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով արոտավայրեր վարձակալելը կամ կապիտալ ներդնելը.
5)խառը հոտի մեջ մտնող որոշակի տեսակի կենդանիներ, ընտանի թռչուններ և միջատներ բուծելը, բազմացնելը և խնամելը.
6)կենդանիներ կթելը և ոչխարներ խուզելը.
7)կենդանիներ մորթելը, մաշկելը և փորոտիքը հանելը, կենդանիներ և կենդանական մթերքներ շուկա ուղարկելը.
8)ձու, մեղր, բոժոժ և այլ մթերքներ հավաքելը.
9)անասուններ, թռչուններ կամ միջատներ պահելու վայրերի առողջարարական մշակում կատարելը և մաքրելը.
10)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.
11)գյուղատնտեսական կառույցների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգումը և դրանք սպասարկելը.
12)արտադրանքը սպառողներին վաճառելը կամ մթերման կազմակերպություններ առաքելը.
13)այլ աշխատողներին ղեկավարելը.
14)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) բանվոր՝ որակավորված, անասնաբուծական խառը ապրանքներ արտադրող.
2) ագարակապան (ֆերմեր)՝ անասնաբուծական խառը ապրանքներ արտադրող:

13. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6129. ԱՐՏԱԴՐՈՂ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբ ներառված են այն անասնապահական ապրանքներ արտադրողները, ովքեր ընդգրկված չեն փոքր խումբ 612՝ «Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անասնապահական ապրանքներ արտադրող, կազմակերպությունների»:

2.Այստեղ ներառվել են նրանք, ովքեր զբաղվում են վայրի կենդանիների որսով, անտառային թռչունների, մուշտակամորթ գազանների, օձերի, ինչպես նաև լաբորատոր փորձերի համար օգտագործվող տարբեր միջատների ու կենդանիների բուծմամբ, բազմացմամբ և խնամքով՝ կենդանիներին կամ դրանց արտադրանքը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին, կենդանաբանական այգիներին, կրկեսներին կամ շուկաներին կանոնավորապես մատակարարելու, շուկայում իրացնելու համար:

3.Այս խմբին դասվում են նաև նրանք, ովքեր խնամում են կենդանիներին կամ մարզում են նրանց որսորդական արգելանոցներում, ախոռներում, կենդանաբանական այգիներում,

գիտական կազմակերպություններում, կենդանիների ապաստարաններում և այդօրինակ հիմնարկներում:

4.Նրանց պարտականությունները ներառում են.

1) կենդանիների տեսակները և քանակը որոշելը.

2) կերի պահանջվող քանակը որոշելը.

3) կեր պատրաստելը և բաժանելը.

4)կենդանիներ գնելը, կեր աճեցնելը և գնելը, անհրաժեշտ այլ ապրանքներ գնելը.

5)կենդանիներ բուծելը, բազմացնելը, կերակրելը և խնամելը.

6)անասնանոցները, մեծավանդակները, վանդակները մաքրելը, կենդանիներ պահելու վայրերում անհրաժեշտ ջերմաստիճան, խոնավություն և լուսավորվածություն պահպանելը.

7)կենդանիների առողջարարական մշակում կատարելը և շինություններ ախտահանելը.

8)օձերի, այլ թունավոր սողունների և միջատների հետ շփման անվտանգության կանոներ պահպանելը՝ խնամելու, փոխադրելու, թույնը հավաքելու, կերակրելու ժամանակ.

9)կենդանիներ մորթելը, մաշկելը և փորոտիքը հանելը, դրանք կամ արտադրանքը շուկայում իրացնելու համար նախապատրաստելը.

10)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը.

11)կենդանիներին պաշտպանելը՝ հատկապես որսորդական արգելանոցներում.

12)կենդանիներ մարզելը՝ արշավների, կրկեսներում ելույթ ունենալու և այդօրինակ այլ նպատակների համար.

13) արտադրանք առաքելը կամ վաճառահանելը.

14)այլ աշխատողներին ղեկավարելը.

15)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)աշխատող՝ որակավորված, վայրի թռչուններ բազմացնող.

2)աշխատող՝ որակավորված, վայրի կենդանիներ բազմացնող.

3)աշխատող՝ որակավորված, լաբորատոր կենդանիներ բազմացնող.

4)ագարակապան (ֆերմեր)՝ մուշտակավոր կենդանիների բուծման.

5)աշխատող որակավորված՝ որսարգելոցի.

6)գազանաբույծ.

7)գազանաբույծ՝ կենդանաբանական այգու.

8)լաբորանտ՝ սերպենտարիումի.

9)բանվոր որակավորված՝ կենդանիների խնամքի:

14. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 613. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՆԵՐ

1.Շուկայական ուղղվածություն ունեցող՝ գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների արտադրողները և անասնապահները ծրագրում և կատարում են գյուղատնտեսական խառը արտադրանքի արտադրության աշխատանքներ, երբ միաժամանակ արտադրում են գյուղատնտեսական մշակաբույսեր և անասնաբուծական մթերքներ կամ համանման արտադրանք՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին կանոնավորապես մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. աճեցնելու համար ցանկալի մշակաբույսերի և բազմացնելու համար նպատակահարմար կենդանիների տեսակները և քանակը որոշելը. սերմեր, պարարտանյութեր, կերեր և այլ ապրանքներ գնելը. հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը՝ հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով. հողը նախապատրաստելու, ցանելու, բերքը աճեցնելու և հավաքելու գյուղատնտեսական աշխատանքներ կատարելը. կենդանիներ բուծելը, բազմացնելը և խնամելը. անասնաբուծական մթերքներ արտադրելը. գյուղատնտեսական կառույցների, մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկում և ընթացիկ նորոգում կատարելը. արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը. գյուղատնտեսական արտադրանք մատակարարելը և վաճառելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 6130. Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների, և անասնապահներ:**

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6130. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՆԵՐ

1.Շուկայական ուղղվածություն ունեցող՝ գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների արտադրողները և անասնապահները ծրագրում ու կատարում են դաշտային, բանջարանոցային և այգեգործական մշակաբույսերի, ծառերի և թփերի բերքը աճեցնելու և հավաքելու անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև բուծում, բազմացնում և խնամում են կենդանիներ, արտադրում են անասնաբուծական և թռչնաբուծական տարբեր մթերքներ՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին կանոնավորապես մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար այլ աշխատողներին ղեկավարելը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մշակաբույսերի և կենդանիների տեսակներ և քանակ որոշելը,

2)սերմեր, տնկիներ, կերեր, պարարտանյութեր և այլ ապրանքներ գնելը,

3)հողը ցանքին կամ տնկման համար նախապատրաստելը,

4)հացազգիներ, բանջարանոցային և այգեգործական մշակաբույսեր ցանելը և տնկելը,

5)աճեցված բերքը հավաքելը,

6)հողը բարելավելու և մշակելու, գյուղատնտեսական շինություններ կառուցելու, աշխատող կենդանիներ, սարքավորումներ և մեքենաներ ձեռք բերելու նպատակով հող վարձակալելը կամ կապիտալ ներդնելը,

7)միս, կաթ, ձու, բուրդ, աղվափետուր, կաշի և անասնապահական այլ մթերքներ ստանալու նպատակով կենդանիներ և թռչուններ բազմացնելը, աճեցնելը և խնամելը,

8)կենդանիներ մորթելը, մաշկելը, փորոտիք հանելը և կենդանիները կամ անասնապահական մթերքները շուկայի համար նախապատրաստելը,

9)արտադրանքը պահպանելը և նախնական մշակման ենթարկելը,

10) արտադրանքը առաքելը և սպառելը,

11) գյուղատնտեսական կառույցների, մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգումը և դրանք սպասարկելը,

13) այլ աշխատողներին ղեկավարելը.

12) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) բանվոր՝ որակավորված, գյուղատնտեսական խառը ապրանքների արտադրության,

2) ագարակապան (ֆերմեր)՝ գյուղատնտեսական խառը ապրանքների արտադրության:

16. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 614. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՓԱՅՏԱՄԹԵՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1. Շուկայական կողմնորոշում ունեցող անտառային և փայտամթերման կազմակերպությունների և հարակից զբաղմունքների աշխատողները ծրագրում և կատարում են անտառների աճեցման, պաշտպանության և շահագործման անհրաժեշտ աշխատանքներ՝ անտառանյութը մթերող կամ սպառող կազմակերպություններին վաճառելու կամ մատակարարելու համար:

2. Կատարվող պարտականությունները ներառում են. անտառատնկումներ կատարելը և տնկված անտառամաս խնամելը, կտրելու ենթակա ծառերը որոշելը և բնափայտի պաշարները գնահատելը. ծառեր կտրելը և դրանք գերանների վերածելը. չորացած ճյուղեր և ծառերի կատարներ կտրելը և դրանք սղոցելը. գերաններ չորացնելը, կտրելու համար գերանները նախապես մշակելը, գերանները դարսակներով դասավորելը, դրանք տրանսպորտային միջոցներին մատակարարելը, բեռնելը. բնափայտը փայտածուխի վերածող կամ բևեկնախեժ արտադրող վառարաններ կառավարելը. հրդեհները

կանխարգելելու միջոցառումներ ձեռնարկելը, հրդեհ մարելու գործողություններին մասնակցելը. բնափայտը, փայտածուխը և անտառային այլ արտադրանքներ մթերման կազմակերպություններին վաճառելը կամ մատակարարելը, այլ աշխատողներ ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 6141. Աշխատողներ՝ անտառային և փայտամթերման կազմակերպությունների**.

2)**Ստորին խումբ 6142. Աշխատողներ՝ փայտածուխ արտադրող կազմակերպությունների, և բանվորներ՝ հարակից զբաղմունքների:**

17. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6141. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՓԱՅՏԱՄԹԵՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Անտառային և փայտամթերման՝ շուկայական կողմնորոշում ունեցող կազմակերպությունների աշխատողները ծրագրում և կատարում են անտառների աճեցման, պաշտպանության և շահագործման աշխատանքներ՝ անտառանյութը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տնկված անտառամաս ստեղծելը և խնամելը.

2)ծառահատման վայրերը որոշելը և բնափայտի պաշարներ գնահատելը.

3)չորացած ճյուղեր, ծառերի կատարներ կտրելը, դրանք վայր գցելը և գերաններ սղոցելը.

4)անտառահատման տեղում գերանները նախնական մշակման ենթարկելը.

5)գերանները դարսակներով դասավորելը, տրանսպորտային միջոցներին մատակարարելը, բարձելը և առաքելը.

6)փայտը միջանկյալ պահեստներ փոխադրելը.

7)փայտը տեսակավորելը.

8)տնկված անտառամասը պաշտպանելը և խնամելը՝ հրդեհների կանխարգելման նպատակով, հակահրդեհային գործողություններին մասնակցելը.

9)անտառանյութը մատակարարելը կամ վաճառելը.

13)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մթերող՝ անտառանյութի.

2)փայտահատ.

3)աշխատող՝ որակավորված, անտառաբուծության բնագավառի.

4)անտառահատ.

5)դարսող՝ փայտանյութի.

6)բանվոր՝ որակավորված, փայտանյութի բեռնման:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6142. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՓԱՅՏԱԾՈՒԽ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Փայտածուխ արտադրող՝ շուկայական կողմնորոշում ունեցող կազմակերպությունների աշխատողները և հարակից զբաղմունքների բանվորները կատարում են եղեգ մշակելու, բնափայտը փայտածուխի վերածելու կամ բևեկնախեժ ստանալու անհրաժեշտ աշխատանքներ՝ օգտագործելով հատուկ տեխնիկա:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թրծման կավե վառարաններ կառավարելը՝ դանդաղ այրման ընթացքում բնափայտը փայտածուխի վերածելու համար.

2)փայտածուխ մարելը՝ դրա ստացումից հետո.

3)ածուխ տեսակավորելը և պահեստավորելը.

4)ավտոկլավը կամ թորիչը արտահանման ժամանակ կառավարելը՝ բևեկնախեժ ստանալու, խոնավությունը հեռացնելու և մաքրելու համար.

5)եղեգ հնձելը, խրձեր կապելը, դարսելը.

6)խրձեր կապելու համար լարան նախապատրաստելը.
13)այլ աշխատողներին ղեկավարելը.
12) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1) այրող՝ փայտածուխի արտադրության.
2) հավաքող՝ խեժի.
3) մթերող՝ եղեգի:

19. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 615. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ՝ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՍՈՐԴ-ՀՐԱՁԻԳՆԵՐ ԵՎ ՈՐՍՈՐԴ-ԹԱԿԱՐԴ ԴՆՈՂՆԵՐ

1.Շուկայական կողմնորոշում ունեցող՝ ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների աշխատողները, որսորդ-հրաձիգները և որսորդ-թակարդ դնողները որսում, բազմացնում և աճեցնում են ձկներ, կակղամորթեր և ջրային բույսերի ու կենդանիների այլ տեսակներ, հրազենով կամ թակարդներով որսում են վայրի կենդանիներ և թռչուններ, ոչնչացնում են վնասատու և հիվանդ կենդանիներին, ձկնաբուծական և որսորդական արտադրանքները վաճառում կամ մատակարարում են կազմակերպություններին կամ իրացնում շուկայում:

2.Կատարվող պարտականությունները ներառում են՝ ցանցեր և ձկնորսական այլ սարքեր ու սարքավորումներ պատրաստելը. ձկնորսական նավերը մինչև որսի վայրը, հետադարձ ճանապարհին և որսի վայրերում կառավարելը. խայծ դնելը, նետելը և ձկնորսական սարքեր քաշելը. ձուկ մաքրելը, սառեցնելը, աղ դնելը՝ նավի վրա կամ ափին. ձկների, ոստրեների, մյուս կակղամորթերի կամ ջրային բույսերի ու կենդանիների այլ տեսակներ բազմացնելը. հրազենով կամ թակարդներով վայրի կենդանիներ և թռչուններ որսալը, այլ աշխատողների ղեկավարելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները մտնում են հետևյալ ստորին խմբերի մեջ.

1)Ստորին խումբ 6151. Աշխատողներ՝ ձկներ և ծովային այլ կենդանիներ բազմացնող.

2)Ստորին խումբ 6152. Աշխատողներ՝ ներքին ջրամբարներում և ափամերձ գոտիներում ձուկ որսացող.

3)Ստորին խումբ 6153. Աշխատողներ՝ խորջրյա գոտիներում ձուկ որսացող.

4)Ստորին խումբ 6154. Որսորդ-հրաձիգներ և որսորդ-թակարդ դնողներ:

20. ՍՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6151. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՁԿՆԵՐ ԵՎ ԾՈՎԱՅԻՆ ԱՅԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԲԱԶՄԱՑՆՈՂ

1.Ձկներ և ծովային այլ կենդանիներ բազմացնող աշխատողները բազմացնում և աճեցնում են ձուկ, կակղամորթեր, ոստրեներ և ջրային բույսերի ու կենդանիների այլ տեսակներ՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ափամերձ կառուցվածքներ, արհեստական լճերի, բնական լճերի սահմանափակ տարածքներ, մեքենաներ և սարքավորումներ վարձակալելը կամ գնելը.

2)ձկնորսական գույք, հանդերձանք և ջրավազաններ նախապատրատելը.

3)կեր, հանքային պարարտանյութեր և այլ անհրաժեշտ ապրանքներ գնելը.

4)ձկներ, ուտելի կակղամորթեր, ոստրեներ, ջրային բույսերի ու կենդանիների այլ տեսակներ բազմացնելը, աճեցնելը և խնամելը.

5)արտադրանքը փոխադրման համար նախապատրաստելը, տեսակավորելը և փաթեթավորելը.

6)ձուկը մաքրելը, սառեցնելը, աղ դնելը.

7)կառույցներ, մեքենաներ և սարքավորումներ սպասարկելը և նորոգելը.

8)խառը կերեր պատրաստելը, կենդանի կեր աճեցնելը.

9)ջրային տարածքներում անհրաժեշտ բնակլիմայական (ջերմաստիճան, լուսավորություն և այլն) և սանիտարահիգենիկ (մաքրություն, հիվանդությունների բուժում, կանխարգելում և այլն) պայմաններ ապահովելը.

10)ձկներին կերակրելը և ջրաբույսերը սնուցելը.

11)արտադրանքը մթերման կազմակերպություններին կամ մեծածախ գնորդներին մատակարարելը կամ վաճառելը, դրանք շուկայում իրացնելը.
12)այլ աշխատողներին ղեկավարելը.
13)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)աշխատող՝ որակավորված, ձկնաբուծական կազմակերպության.
2)աշխատող՝ որակավորված, ծովային կենդանիներ բազմացնող.
3)ագարակապան (ֆերմեր)՝ ձկնաբույծ.
4)ագարակապան (ֆերմեր)՝ ոստրեներ բազմացնող.
5)ագարակապան (ֆերմեր)՝ ծովային մթերքներ արտադրող:

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6152. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՓԱՄԵՐՁ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՁՈՒԿ ՈՐՍԱՑՈՂ

1. Ներքին ջրամբարներում և ափամերձ գոտիներում ձուկ որսացող աշխատողները որսում են ձուկ կամ հավաքում ջրային բույսերի ու կենդանիների տարբեր տեսակներ՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին մատակարարելու կամ շուկայում իրացնելու համար:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ձկնորսական նավեր, ցանցեր, այլ սարքեր ու սարքավորումներ նախապատրաստելը և նորոգելը.
2)որսի վայր գնալու և հետադարձ ճանապարհին, ինչպես նաև որսի վայրում ձկնորսական նավեր կառավարելը.
3)ձկնորսության վայրում խայծ դնելը, ձկնորսական սարքերը ջուրը նետելը և դուրս քաշելը.
4)ափամերձ տարածքներից և ծանծաղուտներից տարատեսակ ջրային բույսեր ու կենդանիներ հավաքելը, դրանք նախնական մշակման ենթարկելը.
5)նավի վրա կամ ափին որսը մաքրելը, սառեցնելը, աղ անելը.
6)որսը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելը, մթերման կազմակերպություններին մատակարարելը կամ շուկայում իրացնելը.
7)ձկնորսական սարքերը և հանդերձանքը որսից հետո մաքրելը, վերանորոգելը և պահեստավորելը.
8)այլ աշխատողներին ղեկավարելը.
9)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ձկնորս՝ սպունգներ հավաքող.
2)ձկնորս՝ ներքին ջրամբարներում որս անող.
3)ձկնորս՝ ափամերձ գոտում որս անող:

22. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6153. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԽՈՐՋՐՅԱ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՁՈՒԿ ՈՐՍԱՑՈՂ

1.Խորջրյա գոտիներում ձկնորսությամբ զբաղված աշխատողները որսում և վերամշակում է խոր ջրերի ձուկը՝ մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելու, մթերման կազմակերպություններին մատակարարելու կամ շուկաներում իրացնելու համար:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ձկնորսական նավեր, ցանցեր, այլ սարքեր ու սարքավորումներ նախապատրաստելը.
2)որսի վայր գնալու և հետադարձ ճանապարհին, ինչպես նաև որսի վայրում ձկնորսական նավեր կառավարելը.
3)ձկնորսության վայրում խայծ դնելը, ձկնորսական սարքերը ջուրը նետելը և դուրս քաշելը.
4)նավի վրա կամ ափին ձուկը մաքրելը, սառեցնելը, աղ անելը.
5)ձուկը մեծածախ կամ մանրածախ գնորդներին վաճառելը, մթերման կազմակերպություններին մատակարարելը կամ շուկայում իրացնելը.
6)ձկնորսական սարքերը և հանդերձանքը որսից հետո մաքրելը, վերանորոգելը և պահեստավորելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. ձկնորս՝ խոր ջրերում որս անողը:

23. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6154. ՈՐՍՈՐԴ-ՀՐԱՁԻԳՆԵՐ ԵՎ ՈՐՍՈՐԴ-ԹԱԿԱՐԴ ԴՆՈՂՆԵՐ (ԹԱԿԱՐԴՈՎ ՈՐՍԱՑՈՂՆԵՐ)

1.Որսորդ հրաձիգները և որսորդ-թակարդ դնողները հրազենով և թակարդով որսում են գազաններ, վայրի կենդանիներ և թռչուններ՝ միս, մորթի, փետուր և այլ արտադրանք ստանալու համար, որը նրանք վաճառում են մեծածախ կամ մանրածախ գնորդներին, մատակարարում մթերման կազմակերպություններին կամ իրացնում շուկայում:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)վայրի կենդանիներ, թռչուններ, սողուններ որսալու համար թակարդ տեղադրելը, թակարդ ընկած կենդանիներ սպանելը կամ կենդանի վիճակում փոխադրման նախապատրաստելը.
2)հրազենով վայրի կենդանիներ, թռչուններ, սողուններ որսալը.
3)որսը մորթելը, մաքրելը և տեղափոխման համար նախապատրաստելը.
4)որսորդական զենք և թակարդներ քանդելը, մաքրելը և հավաքելը.
5)թակարդով բռնված գազանները, կենդանիները, թռչունները և սողունները կենդանի վիճակում գնորդներին վաճառելը.
6)սպանված գազաններ, կենդանիներ, թռչուններ և սողուններ գնորդներին վաճառելը կամ մթերման կազմակերպություններին մատակարարելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)որսորդ՝ հրազենով.
2)որսորդ՝ թակարդ դնող:

24. ԵՆԹԱԽՈՒՄԲ 62. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ, ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ

1.Անձնական սպառման համար գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող աշխատողներն աճեցնում և հավաքում են բանջարեղենի, մրգերի, հատապտուղների և ծաղիկների բերքը, հավաքում վայրի պտուղներ ու բույսեր, խնամում ընտանի կենդանիներ և թռչուններ, որսում վայրի կենդանիներ, անտառում կատարում ծառահատումներ, բազմացնում և խնամում մեղուներ, որսում ձուկ և հավաքում ջրային բույսերի ու կենդանիների տարբեր տեսակներ՝ իրենց և իրենց ընտանիքի անդամներին սննդով, կացարանով և դրամական եկամտով ապահովելու համար:
2.Անձնական սպառման համար գյուղատնտեսական անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող աշխատողների պարտականությունների մեջ ներառվում են՝ հողը նախապատրաստելը, պարարտացնելը, ցանելը, տնկելը. դաշտային մշակաբույսեր խնամելը, բերքը հավաքելը, մրգեր, բանջարեղեն, այլ մշակաբույսեր աճեցնելը և հավաքելը. կենդանիներ խնամելը, կերակրելը և որսալը՝ միս, կաթ, կաշի, բուրդ և այլ մթերքներ ստանալու համար. կենցաղային կարիքների համար փայտ հավաքելը. ձկներ որսալը և ջրային բույսերի ու կենդանիների այլ տեսակներ հավաքելը. կացարան շինելը. տնային տնտեսության համար հասարակ գործիքներ, հագուստ, ամանեղեն պատրաստելը. տեղական շուկաներում արտադրանքը վաճառելը կամ փոխանակելը:
3.Անհրաժեշտ որակավորումը՝ շրջակա միջավայրին և կենդանիներին առնչվող գիտելիքները, հմտություններն ու ունակությունները ագարակապանը (ֆերմերը) ձեռք է բերում ընտանիքի մյուս անդամների հետ համատեղ աշխատելու արդյունքում:
4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբում.
1)**Փոքր խումբ 621. Աշխատողներ՝ անձնական սպառման համար, գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող:**

25. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 621. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ

1.Անձնական սպառման համար գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող աշխատողներն աճեցնում և հավաքում են բանջարեղենի, մրգերի, հատապտուղների, ծաղիկների և այլ մշակաբույսերի բերքը, բազմացնում և խնամում ընտանի կենդանիներ և թռչուններ, որսում վայրի կենդանիներ և թռչուններ, հավաքում վայրի պտուղներ ու բույսեր, անտառում կատարում ծառահատումներ, հավաքում վառելափայտ, բազմացնում և խնամում մեղուներ, որսում ձուկ և հավաքում ջրային բուսական ու կենդանական աշխարհի այլ տեսակներ, որպեսզի իրենց և իրենց ընտանիքներին ապահովեն սննդով, կացարանով և անհրաժեշտ դրամական եկամտով:

2.Կատարվող պարտականությունները ներառում են՝ հողը բանջարաբոստանային և այգեգործական մշակաբույսեր տնկելուն նախապատրաստելը, պարարտացնելը, ցանելը, տնկելը. բանջարաբուծական, բուսաբուծական և այգեգործական մթերքների բերքը հավաքելը. վայրի պտուղներ, սնկեր և դեղաբույսեր հավաքելը. միս, կաթ, հավկիթ, բուրդ, կաշի և անասնաբուծական այլ մթերքներ ստանալու համար ընտանի կենդանիներ ու թռչուններ բազմացնելը և խնամելը. մեղվաբուծական մթերքներ ստանալու համար մեղուներ բազմացնելը և խնամելը. վայրի կենդանիներ ու թռչուններ որսալը. կացարանը տաքացնելու և վերանորոգելու համար փայտ և ցախ հավաքելը. ջուրը տեղ հասցնելը. ձուկ և ջրային բույսեր ու կենդանիների այլ տեսակներ որսալը. կացարան շինելը. տնային տնտեսությունում օգտագործելու համար պարզ գործիքներ, հագուստ, ամանեղեն պատրաստելը. արտադրված արտադրանքը պահպանելը, վերամշակելը և շուկայում վաճառելը կամ փոխանակելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 6210. Աշխատողներ՝ անձնական սպառման համար, գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող:**

26. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 6210. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ

1.Անձնական սպառման համար գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող աշխատողներն աճեցնում և հավաքում են բանջարեղենի, մրգերի, հատապտուղների, ծաղիկների և այլ մշակաբույսերի բերքը, բազմացնում և խնամում ընտանի կենդանիներ և թռչուններ, որսում վայրի կենդանիներ և թռչուններ, հավաքում վայրի պտուղներ և դեղաբույսեր, բազմացնում և խնամում մեղուներ, որսում ձուկ և հավաքում ջրային բուսական ու կենդանական աշխարհի այլ տեսակներ, որպեսզի իրենց և իրենց ընտանիքների անդամներին ապահովեն սննդով, կացարանով և անհրաժեշտ դրամական եկամտով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բանջարաբոստանային, հատապտղային մշակաբույսեր և ծաղիկներ տնկելու համար հողը նախապատրաստելը.

2)հողը պարարտացնելը, բանջարաբուծական, բուսաբուծական, այգեգործական մշակաբույսեր տնկելը, դրանց բերքը և ծաղիկներ հավաքելը.

3)միս, կաթ, հավկիթ, բուրդ, աղվափետուր և անասնաբուծական այլ մթերքներ ստանալու համար ընտանի կենդանիներ և թռչուններ բազմացնելը և խնամելը.

4)մեղր, մեղրամոմ և մեղվաբուծական այլ մթերքներ ստանալու համար մեղուներ բազմացնելը և խնամելը.

5)վայրի պտուղներ, դեղաբույսեր և սնկեր հավաքելը.

6)միս, կաշի, մորթի և այլ մթերքներ ստանալու համար վայրի կենդանիներ և թռչուններ որսալը.

7)կացարանը տաքացնելու և վերանորոգելու համար փայտ հավաքելը.

8)ձուկ որսալը, ջրային բույսերի ու կենդանիների այլ տեսակներ հավաքելը.

9)մթերքները պահպանելը և մշակելը.
10)կացարաններ, տնային տնտեսության համար պարզ գործիքներ, հագուստ, կահկարասի պատրաստելը.
11)արտադրանքը շուկայում վաճառելը կամ փոխանակելը.
12)այլ աշխատողներին ղեկավարելը.
13)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)բանվոր՝ որակավորված, բնատնտեսության.
2)ագարակապան (ֆերմեր)՝ - բնատնտես.
3)ագարակապան (ֆերմեր)՝ անձնական սպառման արտադրանք արտադրող:

ԲԱԺԻՆ 7
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 7. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Արդյունաբերական կազմակերպությունների, գեղարվեստական արհեստների, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետախուզման որակավորված բանվորները, օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքներն ու վարպետությունը, արդյունահանում և վերամշակում են հումքը, կառուցում և վերանորոգում են շենքեր և շինություններ, կատարում դրանց տեխնիկական սպասարկման աշխատանքներ, կարգաբերում, սպասարկում և նորոգում են մեքենաներ, մեխանիզմներ, սարքավորումներ ու գործիքներ, կատարում են տպագրական աշխատանքներ, մշակում և արտադրում են սննդամթերք, թողարկում են արտադրատեսակներ՝ մանածագործվածքից (տեքստիլից), փայտից, մետաղից և այլ նյութերից, ներառյալ ժողովրդական արհեստագործության արտադրատեսակները և այլն:

2.Աշխատանքը կատարվում է ձեռքով՝ առանց մեքենաների և մեխանիզմների, կամ մեքենաներով ու մեխանիզմներով, որոնք օգտագործվում են ֆիզիկական ջանքերը նվազեցնելու և որոշակի խնդիրների լուծման համար պահանջվող ժամանակը կրճատելու, ինչպես նաև թողարկվող արտադրանքի որակը բարելավելու համար: Այս խմբի բանվորների պարտականությունները պահանջում են ունենալ արտադրական գործընթացի կազմակերպման գիտելիքներ, իմանալ օգտագործվող նյութերի ու գործիքների գործողության սկզբունքները և վերջնական արդյունքի նշանակությունը:

3.Այս հիմնական խմբի զբաղմունքների բանվորների պարտականությունները ներառում են. հանքանյութեր արդյունահանելը և վերամշակելը. շենքերի և շինությունների շինարարությունը, դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը. մետաղ ծուլելը, զոդելը, ձևավորելը. ծանր մետաղական, երկաթբետոնե և փայտե կառուցվածքներ, բազմաճախարակներ և այդօրինակ սարքավորումների տեղակայելը. մետաղյա գործիքներ, մեխանիզմներ, սարքավորումներ և այլ արտադրատեսակներ պատրաստելը. տարբեր մեխանիկական հաստոցներ և սարքավորումներ կարգաբերելը, շահագործելը. տրանսպորտային միջոցներ, շարժիչներ, արդյունաբերական սարքավորումներ և մեքենաներ տեղակայելը և նորոգելը. էլեկտրական և էլեկտրոնային մեքենաներ ու սարքավորումներ, գործիքներ հավաքելը, մոնտաժելը և նորոգելը. ճշգրիտ գործիքներ, զարդեր, տնային գործածության իրեր, թանկարժեք մետաղներից արտադրատեսակներ, կավե, ապակե և այդօրինակ այլ իրեր, ժողովրդական արհեստների գեղարվեստական իրեր պատրաստելը. տպագրական աշխատանքներ կատարելը, սննդամթերք և փայտից, մանածագործվածքից (տեքստիլից), կաշվից և այդօրինակ նյութերից տարբեր արտադրատեսակներ պատրաստելը: Այստեղ կարող է ներառվել նաև այլ բանվորների ղեկավարելը:

4.Վերը նշված աշխատանքները ենթադրում են հատուկ գիտելիքների առկայություն՝ ձեռք բերված հիմնական ընդհանուր կրթության բազայի վրա մասնագիտական ուսուցմամբ

և գործնական փորձով: Այս հիմնական խմբի մի շարք զբաղմունքների համար բավարար է նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթությամբ ձեռք բերված որակավորումը:

5.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1)**Ենթախումբ 71. Բանվորներ՝ լեռնային, լեռնահիմնական, շինտեղակայման և շինվերանորոգման աշխատանքների.**

2)**Ենթախումբ 72. Բանվորներ՝ մետաղամշակման և մեքենաշինական արդյունաբերության.**

3)**Ենթախումբ 73. Բանվորներ՝ ճշգրիտ գործիքների և սարքերի պատրաստման, գեղարվեստական արհեստների և գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրությունների, բանվորներ՝ պոլիգրաֆիկական արտադրության.**

4)**Ենթախումբ 74. Բանվորներ՝ այլ մասնագիտությունների, արդյունաբերական կազմակերպությունների.**

5)**Ենթախումբ 75. Բանվորներ՝ տրանսպորտի և կապի բնագավառների.**

6)**Ենթախումբ 76. Բանվորներ՝ երկրաբանության և ընդերքի հետախուզման:**

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 71. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԼԵՌՆԱՅԻՆ, ԼԵՌՆԱՀԻՄՆԱԿԱՆ, ՇԻՆՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Լեռնային, լեռնահիմնական, շինտեղակայման և շինվերանորոգման աշխատանքների բանվորները ստորգետնյա կամ բաց հանքահորերից ու հանքերից արդյունահանում են օգտակար հանածոներ կամ շինանյութեր և վերամշակում դրանք, շինարարության և այլ նպատակների համար տաշում և հղկում են քարեր, կառուցում և նորոգում են շենքեր ու շինություններ, իրականացնում են դրանց տեխնիկական սպասարկումը, կատարում են հարդարման աշխատանքներ, կառուցում են հանքահորեր, հանքեր, թունելներ և հատուկ նշանակության ստորգետնյա կառույցներ: Աշխատանքը կատարվում է ձեռքով՝ առանց մեքենաների և մեխանիզմների, և մեքենաներով ու մեխանիզմներով, որոնք օգտագործվում են ֆիզիկական ջանքերը նվազեցնելու և որոշակի խնդիրների լուծման համար պահանջվող ժամանակը կրճատելու, ինչպես նաև թողարկվող արտադրանքի որակը բարելավելու համար: Այս ենթախմբի բանվորների պարտականությունները պահանջում են ունենալ արտադրական գործընթացի կազմակերպման գիտելիքներ, իմանալ կիրառվող մեքենաների ու մեխանիզմների, օգտագործվող նյութերի ու գործիքների գործողության սկզբունքները և վերջնական արդյունքի նշանակությունը:

2.Սույն ենթախմբի աշխատողների պարտականությունները ներառում են. ստորգետնյա կամ բաց հանքահորերից ու հանքերից օգտակար հանածոներ կամ շինանյութեր արդյունահանելը. հանքահորերում կամ քարհանքերում, շինարարական հրապարակներում պայթուցիկ նյութեր տեղադրելը և պայթեցնելը. շինարարության և համանման նպատակների համար քարեր կամ քարաբլոկներ կտրելն ու տաշելը. շենքերի ու կառույցների շինարարությունը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը. պատեր և այլ մակերևույթներ ներկելը, ինչպես նաև ներքին պատերը պաստառապատելը կամ գործվածքապատելը. շենքերի և այլ կառույցների խողովակներ ու ներքին պանելներ մաքրելը. տանիքը ծածկապատելը. մեկուսանյութեր տեղադրելը. սանիտարատեխնիկական սարքավորումներ, խողովակներ և էլեկտրացանցեր տեղակայելը. ծանր մետաղական կառուցվածքներ և այլ սարքավորումներ տեղակայելը, հանքահորերի, հանքերի, մետրոպոլիտենների, թունելների և հատուկ նշանակության ստորգետնյա կառույցների շինարարությունը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 711. Լեռնագործներ, բանվորներ՝ ստորգետնյա և բաց եղանակներով օգտակար հանածոների արդյունահանման, պայթեցնողներ, քարտաշներ, քար մշակողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

2)**Փոքր խումբ 712. Շինարար–տեղակայողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

3)**Փոքր խումբ 713. Բանվոր–հարդարողներ՝ շինարարական և շինվերանորոգման աշխատանքների, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

4)**Փոքր խումբ 714. Ներկարարներ, բանվորներ՝ շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման ու հարդարման, մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

5)**Փոքր խումբ 715. Բանվորներ՝ հանքահորերի (հանքերի), բացահանքերի (կտրվածքների), թունելների և հատուկ նշանակության ստորգետնյա կառույցների շինարարության:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 711. ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐ՝ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՎ ԲԱՑ ԵՂԱՆԱԿՈՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ, ՊԱՅԹԵՑՆՈՂՆԵՐ, ՔԱՐ ՄՇԱԿՈՂՆԵՐ՝ ՁԵՌՔՈՎ ԿԱՄ ՄԵՔԵՆԱՅՈՎ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Ստորգետնյա և բաց եղանակներով օգտակար հանածոների արդյունահանման լեռնագործները, պայթեցնողները, քար կտրողներն ու տաշողները և հարակից այլ մասնագիտությունների բանվորները ստորգետնյա կամ բաց հանքահորերից, հանքերից, քարհանքերից արդյունահանում են օգտակար հանածոներ, տեղադրում են պայթուցիկ նյութեր ու թափոնակույտի համար պայթեցնում են ապար, մշակում են պինդ օգտակար հանածոներ՝ շինարարության և արդյունաբերության մեջ դրանց հետագա օգտագործման համար:

2.Սույն փոքր խմբի բանվորների պարտականությունները ներառում են. հանքահորերում, հանքերում, քարհանքերում օգտակար հանածոներ արդյունահանելը. շինարարական հրապարակներում պայթուցիկ նյութեր տեղադրելը և պայթեցնելը. քարեր կամ քարաբլոկներ կտրելը, տաշելը, ձեռքով կամ գործիքներով մշակելը՝ շինարարության և այլ նպատակների համար, այդ աշխատանքների ժամանակ կիրառվող մեքենաները և մեխանիզմները կառավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7111. Լեռնագործներ՝ ստորգետնյա և բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանման, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

2)**Ստորին խումբ 7112. Պայթեցնողներ.**

3)**Ստորին խումբ 7113. Քարտաշներ և քար մշակողներ:**

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7111. ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐ՝ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՎ ԲԱՑ ԵՂԱՆԱԿՈՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Լեռնագործները, ստորգետնյա և բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահամանման այլ մասնագիտությունների բանվորները ստորգետնյա կամ բաց հանքահորերից, հանքերից, քարհանքերից արդյունահանում են օգտակար հանածոներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ածուխ, հանքաքարեր և այլ պինդ հանքանյութեր, գրանիտ, կրաքար, թերթաքար, կավ, կոպիճ, ավազ և այլ շինանյութեր արդյունահանելը.

2)հանքահորերի աշխատանքային հանքախորշերում հետախուզահորեր հատելու, հանքահորերի կամ քարհանքերի հանքախորշերում պայթուցիկ նյութեր տեղադրելու համար պայթանցքեր հորատող մեքենաներ կարգաբերելը և կառավարելը.

3)կամարների և պատերի ամրացման համար փայտյա կամ մետաղյա հենարաններ և կամարներ տաշելը, հարմարեցնելը և ստորգետնյա հանքահորերում ու հանքերում տեղադրելը.

4)լաբորատոր վերլուծության համար ածխի կամ հանքաքարերի նմուշներ հավաքելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)լեռնագործ.

2)լեռնագործ՝ ստորգետնյա.

3)լեռնագործ՝ մաքրման հանքախորշի.

4)ամրակապող.

5)անցահատող.

6)հանքափոր.

7)բանվոր՝ քարհանքի:

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7112. ՊԱՅԹԵՑՆՈՂՆԵՐ

1.Պայթեցնողները որոշում են պայթյունի տեղը և ուժը, հանքահորերում կամ քարհանքերում, շինարարական հրապարակներում և այդօրինակ այլ վայրերում լցաշարում և պայթեցնում լիցք՝ ածխի շերտերի, հանքային ապարների կամ այլ պինդ հանքանյութերի ճեղքման, տեղաշարժման համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)անվտանգության կանոններն ապահովելը և պահպանելը.

2)լիցքերի լցաշարման տեղը որոշելը և պայթանցքերի հորատումը հրահանգավորելը.

3)պայթուցիկ նյութերն անհրաժեշտ քանակին և դրանց լցաշարմանն առնչվող որոշումներ կայացնելը, պայթյունի տեղը նախապատրաստելը.

4) լիցքեր պայթեցնելը.

5) պայթեցման աշխատանքներ կատարելուց հետո տեղը զննելը և չպայթած լիցքերը ոչնչացնելը.

6) այլ աշխատողներին ղեկավարելը.

7) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) պայթեցնող.

2) բաշխող՝ պայթուցիկ նյութերի:

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7113. ՔԱՐՏԱՇՆԵՐ ԵՎ ՔԱՐ ՄՇԱԿՈՂՆԵՐ

1.Քարտաշները և քար մշակողները ձեռքով կամ մեքենաների ու մեխանիզմների օգնությամբ քարը սղոցում, կտրում և բաժանում են սալիկների կամ բլոկների, տաշում, հղկում և ողորկում են քարեր՝ շինարարական, զարդարական նպատակներով, հուշարձաններ կառուցելու և այլ նպատակների համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)քարի մեջ հատած սեպեր խփելը կամ քարը սալիկների կամ բլոկների բաժանելը.

2)գրանիտից, մարմարից կամ այլ քարերից սալիկներ ու բլոկներ ընտրելը և տեսակավորելը.

3)շինարարական նպատակներով և հուշարձանների համար գրանիտե, մարմարե և այլ տեսակի բնական և արհեստական քարեր կտրելը, տաշելը, հղկելը, այլ մշակումներ կատարելը՝ ձեռքով կամ մեքենաներով.

4)ձեռքով կամ մեքենաներով մշակելու համար քար չափանշելը.

5)քարի վրա մակագրություններ, նկարներ, զարդանախշեր կատարելը, դրանք պատվանդաններին ամրացնելը՝ հուշարձանների, տապանաքարերի, շենքերի ճակատների ձևավորման համար.

6)հուշարձաններ կանգնեցնելու և տապանաքարեր տեղադրելու համար քարե շինվածքներ պատրաստելը.

7)քար մշակող մեքենաների ընթացիկ սպասարկումը, ոչ բարդ անսարքություններ վերացնելը, քար մշակող գործիք սրելը կամ փոխելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փորագրող-ֆրեզերող՝ քարի.

2)քարտաշ.

3)սղոցող՝ քարի.

4)հղկող-ողորկող՝ քարե իրերի.

5)որմնադիր՝ հուշարձանների.

6)մասնատող՝ քարե բլոկների:

7. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 712. ՇԻՆԱՐԱՐ-ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Շինարար-տեղակայողները և հարակից մասնագետները կատարում են շենքերի և շինությունների կառուցման շինարարական-մոնտաժային աշխատանքներ, շինարարական օբյեկտներում կատարում են սանիտարատեխնիկական համակարգերի, սարքավորումների և խողովակաշարերի տեղակայման աշխատանքներ:

2.Սույն փոքր խմբի բանվորների պարտականությունները ներառում են. մեծ և փոքր շենքեր և այլ շինություններ կառուցելն այնպիսի շինարարական նյութերի օգտագործմամբ, ինչպիսիք են տուֆը, ֆելզիտը, ինչպես նաև հավաքովի բետոնե, երկաթբետոնե, մետաղական և փայտե կառուցվածքները. սանիտարատեխնիկական համակարգերի տեղակայման համար մանրամասեր (դետալներ) և իրեր լրակազմելը (կոմպլեկտավորելը), ընտրելը և տեղակայելը, խողովակաշարերի անցկացման տեղեր չափանշելը՝ ըստ մոնտաժային նախագծերի, խողովակաշարեր տեղակայելը, ատաղձագործական, հյուսնի և տանիքագործական աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7121. Շինարարներ՝ շենքերի և շինությունների կառուցման.**

2)**Ստորին խումբ 7122. Որմնադիրներ և սալագործներ.**

3)**Ստորին խումբ 7123. Բետոն փռողներ, բետոն հարդարողներ և խճանկարողներ.**

4)**Ստորին խումբ 7124. Ատաղձագործներ, հյուսներ և տանիքագործներ.**

5)**Ստորին խումբ 7129. Շինարար-տեղակայողներ և բանվորներ՝ հարակից մասնագիտությունների, այլ խմբերում չներառված:**

8. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7121. ՇԻՆԱՐԱՐՆԵՐ՝ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

1.Շենքերի և շինությունների կառուցման շինարարները կառուցում են շենքեր ու շինություններ, շինարարական օբյեկտներում տեղակայում սանիտարատեխնիկական համակարգեր, սարքավորումներ և խողովակաշարեր, բարեկարգում կառուցված շենքերի և շինությունների շրջակա տարածքը՝ ըստ շինարարական նախագծերի:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շենքեր կամ այլ շինություններ կառուցելու համար հրապարակներ նախապատրաստելը.

2)անհրաժեշտ նյութեր ընտրելը՝ ըստ շինարարական նախագծի.

3)շինհրապարակներում կամ մասնագիտացված արտադրամասերում բետոն և շինարարական շաղաղներ պատրաստելը, դրանք տրանսպորտային միջոցներին մատակարարելը, ընդունելը, բետոնե ու երկաթբետոնե միաձույլ կառուցվածքներ բետոնելը.

4)բետոնե, երկաթբետոնե, մետաղական և փայտե հավաքովի կառուցվածքներ տեղակայելը.

5)հիմքեր, քարե կամ տուֆե շենքեր ու շինություններ կառուցելը և սալիկներով երեսպատելը, խճանկարային որմնաքանդակ հավաքելը՝ ըստ ուրվապատկերների.

6)սանիտարատեխնիկական համակարգեր, տեխնոլոգիական և արտաքին խողովակաշարեր տեղակայելը.

7)տանիքների ծածկը պահող հենակետային մասեր կառուցելը, պատեր շարելը և դրանք տարբեր նյութերով երեսպատելը.

8)ծպեղներ տեղակայելը և դրանց տանիքները ծածկելը.

9)հատակներ պատրաստելը.

10)շենքերի, շինությունների տեխնիկական սպասարկումը և տարբեր կառույցներ նորոգելը.

11)շինարարության ավարտից հետ շենքերի, շինությունների շրջակա տարածքները մաքրելը և բարեկարգելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ամրանագործ.

2)բետոնագործ.

3)ցեմենտագործ.

4)գաջեգործ.

5)որմնադիր.
6)տեղակայող՝ երկաթբետոնե ու մետաղական կառուցվածքների.
7)տեղակայող՝ սանիտարատեխնիկական համակարգերի և սարքավորումների.
8)տեղակայող՝ տեխնոլոգիական սարքավորումների.
9)տեղակայող՝ արտաքին խողովակաշարերի.
10)փականագործ-սանտեխնիկ:

9. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7122. ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐ ԵՎ ՍԱԼԱԳՈՐԾՆԵՐ

1.Ստորին խումբ 7122-ը հաշվի առնել ստորին խումբ 7121-ում:

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7123. ԲԵՏՈՆ ՓՈՌՈՂՆԵՐ, ԲԵՏՈՆ ՀԱՐԴԱՐՈՂՆԵՐ ԵՎ ԽՃԱՆԿԱՐՈՂՆԵՐ

1.Ստորին խումբ 7123-ը հաշվի առնել ստորին խումբ 7121-ում:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7124. ԱՏԱՂՁԱԳՈՐԾՆԵՐ, ՀՅՈՒՍՆԵՐ ԵՎ ՏԱՆԻՔԱԳՈՐԾՆԵՐ

1.Ատաղձագործները, հյուսները և տանիքագործները կտրում, ռանդում, հավաքում, կառուցում են փայտյա շինություններ ու սարքավորումներ և իրականացնում են դրանց տեխնիկական սպասարկումն ու նորոգումը, ինչպես նաև կատարում են տանիքագործական աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հյուսնի դազգահով կամ շինարարական հրապարակում կառուցվածքների փայտե տարրեր և այլ շինվածքներ պատրաստելը, ձևափոխելը և նորոգելը.

2)շինարարական հրապարակներում փայտե ծանր հիմնակմախքներ կառուցելը և տեղակայելը.

3)շենքերի այնպիսի ներքին և արտաքին տարրեր հարմարեցնելը, ընտրելը և փոփոխելը, ինչպիսիք են պատերը, դռները, դռների և պատուհանների շրջանակները, կողվածքերը, պանելները.

4)թատերական բեմադրությունների, կինոնկարների կամ հեռուստատեսային ներկայացումների համար բեմանկարներ պատրաստելը, նորոգելը, տեղադրելը.

5)երկաթուղային վագոններում, ինքնաթիռներում, նավերում և այլ փոխադրամիջոցներում փայտե կահավորանք և փայտե տարրեր հավաքելը, փոխելը, նորոգելը.

6)դազգահով փայտե մանրամասեր կտրելը, ռանդելը, հարմարեցնելը և հավաքելը.

7)տանիքի ծածկ կառուցելը՝ գլանափաթեթավոր, հատավոր և մետաղական նյութերի օգտագործմամբ.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ատաղձագործ.

2)հյուսն.

3)ատաղձագործ՝ նավաշինական.

4)տանիքագործ:

12. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7129. ՇԻՆԱՐԱՐ - ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է շինարար-տեղակայողների և հարակից մասնագիտությունների բանվորների, ովքեր չեն մտնում «Շինարար–տեղակայողներ և մասնագետներ՝ հարակից» փոքր խումբ 712-ի այլ ստորին խմբեր: Այստեղ ներառվում են նրանք, ովքեր կատարում են շինարարության և կառույցների տեխնիկական սպասարկման հատուկ մասնագիտացված աշխատանքներ, ինչպես նաև ստորջրյա խողովակաշարեր, մալուխներ և դյուկերներ տեղադրող ջրասուզակներին:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շենքերի, շինությունների, կառույցների տեխնիկական սպասարկմանն առնչվող զանազան աշխատանքներ կատարելն այնպիսի շինություններում, ինչպիսիք են տարբեր հիմնարկներ, բնակելի շենքեր և այդօրինակ այլ օբյեկտներ՝ դրանք բարվոք վիճակում պահելու նպատակով.

2)մեծ բարձրության վրա, բարձր ջերմաստիճանի կամ ճառագայթման պայմաններում տեխնիկական սպասարկում, նորոգում կամ շինարարական աշխատանքներ կատարելը.

3)շինհրապարակներում ժամանակավոր մետաղյա կամ փայտյա մածեր պատրաստել-մոնտաժելը և ապամոնտաժելը.

4)շենքեր և այլ կառույցներ քանդելը.

5)ստորջրյա խողովակաշարեր, մալուխներ, դյուկերներ տեղադրելը.

6)ջրի տակ տախտակամածեր տեղակայելը և քանդելը.

7)ջրատեխնիկական կառույցների ստորջրյա հատվածներ, ստորջրյա խրամների մեջ տեղադրված խողովակաշարեր ու մալուխներ հետազոտելը և նորոգելը.

8)ճեղքերի, առձգիչների և ձգալարերի վրա ամրան տեղակայելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր՝ շենքերի քանդման.

3)բանվոր՝ շինարարության.

4)մոնտաժող՝ շինարարական փայտամածի.

5)բանվոր՝ վերնաշխատ.

6)ջրասուզակ:

13. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 713. ԲԱՆՎՈՐ-ՀԱՐԴԱՐՈՂՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Շինարարական և շինվերանորոգման աշխատանքների բանվոր-հարդարողները և հարակից զբաղմունքների մասնագետները նախապատրաստում, հավաքում և տեղակայում են սանտեխնիկական սարքավորումներ, կատարում են դրանց տեխնիկական սպասարկում և նորոգում, ինչպես նաև նորոգում են տանիքներ, հատակներ, պատեր, մեկուսիչ համակարգեր, ապակեպատում են պատուհանի և այլ շրջանակներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. մեկ կամ մի քանի նյութերով տանիք ծածկելը. փայտասալիկով կամ այլ նյութերով հատակ երեսարկելը, ինչպես նաև հատակի և պատերի հախճասալապատումը կամ խճանկարային պանելապատումը. պատեր և առաստաղ սվաղելը. պատերը, հատակը և առաստաղը մեկուսիչ նյութերով պատելը. պատուհաններ և այլ որմնանցքեր պարուրակելը, հարմարեցնելը, ապակեպատելը. սանիտարատեխնիկական սարքավորումներ ու խողովակներ տեղադրելը, էլեկտրացանցեր և այլ սարքավորումներ մոնտաժելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7131. Տանիքագործներ.**

2)**Ստորին խումբ 7132. Փայտասալիկագործներ և հատակապատողներ.**

3)**Ստորին խումբ 7133. Ծեփագործներ.**

4)**Ստորին խումբ 7134. Տեղադրողներ՝ ջերմամեկուսացման և ձայնամեկուսացման նյութերի.**

5)**Ստորին խումբ 7135. Ապակեգործներ.**

6)**Ստորին խումբ 7136. Տեղակայողներ և փականագործներ՝ սանիտարատեխնիկական սարքավորումների, և փականագործ – խողովակաշարողներ.**

7)**Ստորին խումբ 7137. Փականագործներ, էլեկտրափականագործներ՝ շինարարական, էլեկտրատեղակայողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

8)**Ստորին խումբ 7138. Ներկարարներ, բանվորներ՝ շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների:**

14. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7131. ՏԱՆԻՔԱԳՈՐԾՆԵՐ

1. Ստորին խումբ 7131-ը հաշվի առնել ստորին խումբ 7124-ում:

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7132. ՓԱՅՏԱՍԱԼԻԿԱԳՈՐԾՆԵՐ ԵՎ ՀԱՏԱԿԱՊԱՏՈՂՆԵՐ

1.Փայտասալիկագործները և հատակապատողները տեղակայում են փայտասալիկ և հատակի այլ ծածկույթներ, կատարում դրանց ընթացիկ և հիմնական նորոգում կամ հատակները, պատերը և այլ մակերևույթներ երեսպատում են սալիկով կամ խճանկարային պանելներով՝ զարդարական կամ այլ նպատակներով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հատակը փայտասալիկով, սալիկով կամ այլ նյութերով երեսարկման նախապատրաստելը.

2)փայտասալիկ, սալիկ կամ այլ նյութեր ընտրելը և հատակի վրա հավաքված բլոկներ երեսարկելը՝ ըստ ուրվապատկերների և այլ հրահանգների.

3)պատերը զարդարական կամ այլ (օրինակ՝ ձայնամեկուսացման) նպատակներով սալիկապատելուն կամ այլ նյութերով ծածկելուն նախապատրաստելը.

4)պատեր սալիկապատելը, ինչպես նաև պատերի, հատակի և այլ մակերևույթների վրա խճանկարային պանելներ ստեղծելը և տեղադրելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փայտասալիկագործ.

2)դարսող՝ մարմարե սալիկների.

3)դարսող՝ հախճասալերի.

4)փայլեցնող՝ հատակի:

16. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7133. ԾԵՓԱԳՈՐԾՆԵՐ

1.Ծեփագործները տեղակայում և նորոգում են ծեփագործական ցանցը և ծեփում շենքի պատերն ու առաստաղները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ծեփագործական ցանցեր տեղակայելը և նորոգելը, վերնասվաղային շերտի ստեղծման համար շենքերի ներքին պատերն ու առաստաղները մեկ կամ ավելի շերտերով ծեփապատելը.

2)զարդարական գիպսե պանելներ կաղապարելը և տեղակայելը, զարդարական գիպսե կամարներ հատելը և լցակաղապարելը.

3)ցեմենտով, ծեփով և համանման նյութերով շենքերի արտաքին մակերևույթների զարդարական և պաշտպանիչ ծածկապատում կատարելը.

4)ապակեթելով ամրանավորած գիպսից զարդարական գիպսե մանրամասեր պատրաստելը և տեղակայելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ծեփագործ.

2)ծեփագործ՝ զարդարական աշխատանքների.

3)ծեփագործ՝ արտաքին (ներքին) աշխատանքների:

17.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7134. ՏԵՂԱԴՐՈՂՆԵՐ՝ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԵՎ ՁԱՅՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

1.Ջերմամեկուսացման և ձայնամեկուսացման նյութեր տեղադրողները մեկուսիչ նյութեր են տեղադրում տներում, շինություններում և կայանքներում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շենքերի պատերին, հատակին և առաստաղներին սալիկներ, ջերմամեկուսիչ շերտեր և ձայնամեկուսիչ նյութեր տեղակայելը.

2)շենքերի պատերի, հատակի և առաստաղների միջև առկա դատարկ տարածությունների մեջ մեխանիզմների օգնությամբ ջերմամեկուսիչ և ձայնամեկուսիչ նյութեր լցնելը և տոփանելը.

3)սարքավորումների բաց մակերևույթների վրա մեկուսիչ նյութեր տեղակայելը.

4)սառեցնող կայանքներ և օդափոխման համակարգեր մեկուսացնելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.
6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)մեկուսացնող.
2)մեկուսացնող՝ ձայնամեկուսացման.
3)մեկուսացնող՝ ջերմամեկուսացման.
4)մեկուսացնող՝ ջրամեկուսացման.
5)մեկուսացնող՝ շոգեկաթսաների և խողովակների.
6)մեկուսացնող՝ սառեցնող կայանների և օդափոխիչների:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7135. ԱՊԱԿԵԳՈՐԾՆԵՐ

1.Ապակեգործները կտրում, հարմարեցնում և ապակեպատում են պատուհանները, դռները, խանութների ճակատները և այլ որմնանցքեր:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ապակիներ ընտրելը և չափանշումով դրանք կտրելը՝ պատուհաններ, շենքեր, դռներ և միջնորմեր ապակեպատելու համար.
2)լսողական պատուհանների ապակիներ ամրակցելը՝ առանց մածիկ օգտագործելու.
3)խանութների ճակատներին, պտտվող դռներին, ցուցափեղկերին, լուսանցույցներին և այլ որմնանցքերի վրա հարթ և կոր ապակիներ տեղադրելը.
4)պղնձե կամ այլ մետաղական շրջանակներում զարդարական պատուհաններ և պանելներ պատրաստելու համար ապակու կտորներ կտրելը, ընտրելը և տեղադրելը.
5)պատուհաններին, դռներին ու մեքենաներին սովորական և չկոտրվող ապակիներ տեղադրելը.
6)ապակե մածիկներ պատրաստելը և մածիկով կամ սոսնձային խտանյութով ապակիներ ամրացնելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ապակեգործ.
2)ապակեգործ՝ տանիքի.
3)ապակեգործ՝ մեքենաների սրահների:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7136. ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾՆԵՐ՝ ՍԱՆԻՏԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐՈՂՆԵՐ

1.Փականագործ-խողովակաշարողները, սանիտարատեխնիկական սարքավորումներ տեղակայողները և փականագործները հավաքում, հարմարեցնում, տեղադրում և նորոգում են սանտեխնիկական սարքավորումները, խողովակները և խողովակաշարերը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)խողովակներ, ամրանների և կոյուղու մանրամասեր, ջեռուցման, ջրմուղի և սանիտարատեխնիկական ամրաններ կտրատելը, պարուրակելը, ծռելը, հոդավորելը, հավաքելը, տեղադրելը, դրանք նորոգելը.
2)շենքերում և այլ կառույցներում խողովակաշարեր հավաքելը, մոնտաժելը, դրանք նորոգելը.
3)խրամափոսերում կավե, ցեմենտե, թուջե, պլաստմասսե և այլ նյութերից պատրաստված խողովակներ շարելը՝ ջրահեռացման և ջրամատակարարման համակարգ ստեղծելու համար, ինչպես նաև այլ նպատակներով.
4)այլ աշխատողներին ղեկավարելը.
5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)փականագործ-խողովակաշարորդ.
2)տեղադրող՝ խողովակի.
3)փականագործ՝ սանիտարատեխնիկական սարքավորումների:

20.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7137. ՓԱԿԱՆԱԳՈՐԾՆԵՐ, ԷԼԵԿՏՐԱՓԱԿԱՆԱԳՈՐԾՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Շինարարական փականագործները, էլեկտրափականագործները, էլեկտրատեղակայողները և հարակից մասնագետները կատարում են սարքավորումների ընթացիկ և կապիտալ նորոգման զանազան փականագործական աշխատանքներ, տեղակայում էլեկտրակառուցվածքներ, մալուխային ցանցեր, լուսավորության հաղորդագծեր և ցանցեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հարմարանքներ պատրաստելը.

2) սարքավորումներ, մեխանիզմներ, մեքենաներ և շարժիչներ նորոգելը.

3)լուսավորման ամրանի տակ մալուխներ, բարձակներ ամրակապելը, պաշտպանական պատյանների, ցանցավոր ցանկապատերի և այլնի տեղակայման համար կառուցվածքներ ամրակապելը.

4)բարձրավոլտ կայանքներ, սարքավորումներ և չափիչ սարքեր տեղակայելը.

5)խրամուղիներում, անցուղիներում, թունելներում և շենքերի ներսում մալուխ անցկացնելը.

6)հողակցման ցանցեր և գետնանցման սարքեր տեղակայելը.

7)մալուխների և հաղորդալարերի համար լուսավորության տուփեր տեղակայելը.

8)լուսավորության հաղորդագծեր անցկացնելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)էլեկտրիկ.

2)էլեկտրիկ՝ շենքերի նորոգման.

3)էլեկտրափականագործ՝ շինարարական աշխատանքների.

4)էլեկտրատեղակայող՝ մալուխային ցանցերի.

5)էլեկտրատեղակայող՝ լուսավորության ցանցերի:

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7138. ՆԵՐԿԱՐԱՐՆԵՐ, ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Ներկարարները, շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման բանվորները և հարակից մասնագետները ներկալուծույթով, ներկով, լաքերով և այլ նյութերով ներկում են շենքերի և շինությունների արտաքին ու ներքին մակերևույթները, շենքերի պատերին և առաստաղներին սոսնձում պաստառներ, թաղանթներ և այլ նյութեր, մաքրում շենքերի և շինությունների արտաքին մակերևույթները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շենքերի պատերը և ներկվող այլ մակերևույթներ մաքրելը և խածատելը.

2)մակերևույթները մածիկով հավասարեցնելը.

3)ներկակազմ ընտրելը և ներկեր, լաքեր, նախաներկեր կազմելը՝ ըստ տրված բաղադրատոմսերի.

4)մակերևույթները մածիկի և նախաներկերի շերտերը քսելուց հետո ներկելը.

5)պաստառներ և թաղանթներ ընտրելը՝ ըստ նկարի, և դրանք պատերին ու առաստաղներին սոսնձելը.

6)շենքերի և շինությունների մակերևույթները ավազաշիթային սարքով մաքրելը.

7)ներկելու և շենքերի ու շինությունների մակերևույթները մաքրելու աշխատանքներ կատարելու ժամանակ կիրառվող մեխանիզմները կարգաբերելը.

8)շենքերի, կամուրջների պողպատե հիմնակմախքներ և մետաղական կառուցվածքներ ներկելը՝ գլանիկով, վրձնով կամ ներկացրիչով.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ներկարար՝ շինարարության.

2)պաստառագործ.
3)լաքապատող՝ արդյունաբերական շինությունների.
4)ավազաշիթագործ:

22. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 714. ՆԵՐԿԱՐԱՐՆԵՐ, ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Փոքր խումբ 714-ը հաշվի առնել ստորին խումբ 7138-ում:

23. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 715. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՆՔԱՀՈՐԵՐԻ (ՀԱՆՔԵՐԻ), ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ (ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ), ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1.Հանքահորերի (հանքերի), բացահանքերի (կտրվածքների), թունելների և հատուկ նշանակության ստորգետնյա կառույցների շինարարության բանվորները կատարում են թունելների, մետրոպոլիտենի կայարանների և հատուկ նշանակության կառույցների՝ բաց եղանակով շինարարական հորատանցման, դրանց ջրամեկուսացման աշխատանքներ, մոնտաժում և ապամոնտաժում մետաղական կառուցվածքներ և էլեկտրամեխանիկական սարքեր ու սարքավորումներ, հանքահորային մակերևույթին և բաց եղանակով կառուցվող թունելներում մոնտաժում, ապամոնտաժում, նորոգում և կարգաբերում ստորգետնյա լեռնահորատանցման սարքավորումների մեխանիկական և էլեկտրական մասերը:

2.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)Ստորին խումբ 7150. Բանվոր՝ հանքահորերի (հանքերի), բացահանքերի (հանքակտրվածքների), թունելների և հատուկ նշանակության ստորգետնյա կառույցների շինարարության:

24. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7150. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՆՔԱՀՈՐԵՐԻ (ՀԱՆՔԵՐԻ), ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ (ՀԱՆՔԱԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ), ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1.Հանքահորերի (հանքերի), բացահանքերի (կտրվածքների), թունելների և հատուկ նշանակության ստորգետնյա կառույցների շինարարության բանվորը կատարում է թունելների, մետրոպոլիտենի կայարանների և հատուկ նշանակության կառույցների՝ բաց եղանակով շինարարական հորատանցման, դրանց ջրամեկուսացման աշխատանքներ, մոնտաժում և ապամոնտաժում մետաղական կառուցվածքներ և էլեկտրամեխանիկական սարքեր ու սարքավորումներ, հանքահորային մակերևույթին և բաց եղանակով կառուցվող թունելներում մոնտաժում, ապամոնտաժում, նորոգում և կարգաբերում ստորգետնյա լեռնահորատանցման սարքավորումների մեխանիկական և էլեկտրական մասերը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հանքահատման մուրճերով բնահող մշակելը.
2)հետախուզահորերի ամրակապ, փոսորակներ, խրամուղիներ նորոգելը.
3)միաձույլ բետոնե և երկաթբետոնե ամրակներ կանգնեցնելը.
4)հենապատ և ցամաքուրդ (դրենաժ) կառուցելը.
5)ամրակների անցքերի և կարերի մեկուսացվող մակերևույթները մաքրելը և չորացնելը.
6)ջրամեկուսացման աշխատանքների համար նյութեր նախապատրաստելը, թունելներ ու մետրոպոլիտենների կայարաններ և հատուկ նշանակության կառույցներ ջրամեկուսացնելը.
7)ցցաթմբերի, հորատանցման համալիրների, հանքահորային ամբարձիչների և լեռնային այլ սարքավորումների կառուցվածքներ ու հանգույցներ մոնտաժելը և ապամոնտաժելը.
8)մոնտաժված սարքավորումները կարգաբերելը և փորձարկելը.
9)բարձրավոլտ էլեկտրասարքավորման, չափման, կառավարման և պաշտպանության սարքեր տեղակայելը.
10)ստորգետնյա լեռնահորատանցման սարքավորումների մեխանիկական և էլեկտրական մասեր մոնտաժելը, ապամոնտաժելը, նորոգելը և կարգաբերելը.
11)կանթեղներ, անջատիչներ, փոխարկիչներ և խրոցակի վարդակներ տեղակայելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.
13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)հորատանցող՝ մակերևութային աշխատանքների.
2)մեկուսացնող.
3)մոնտաժող՝ լեռնային սարքավորումների.
4)էլեկտրափականագործ-մոնտաժող՝ ստորգետնյա լեռնահորատանցման սարքավորման:

25. ԵՆԹԱԽՈՒՄԲ 72. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Մետաղամշակման և մեքենաշինական արդյունաբերության բանվորները պատրաստում են մետաղը լցակաղապարելու կաղապարներ և կաղապարածողեր, եռակցում, կտրում և կաղապարում մետաղ, տեղադրում և նորոգում ծանր մետաղական կառուցվածքներ, տարբեր գործիքների, մեքենաների և իրերի արտադրության համար կռում պողպատ և այլ նյութեր, մետաղից և այլ նյութերից պատրաստում կտրող և չափիչ գործիքներ ու հարմարանքներ, մանրամասեր (դետալներ), պատրաստում, կարգաբերում և նորոգում տեխնոլոգիական սարքավորումներ, կատարում փոխադրամիջոցների, շարժիչների, էլեկտրոնային կամ էլեկտրատեխնիկական սարքավորումների տեխնիկական սպասարկում և նորոգում, հավաքում ու նորոգում ռադիոէլեկտրոնային սարքեր ու սարքավորումներ, պատրաստում տարբեր նշանակության օպտիկական մանրամասեր և սարքեր, հղկանյութային իրեր, ստանում սինթետիկ ալմաստներ ու գերկարծր նյութեր և դրանցից արտադրում արտադրատեսակներ:

2.Աշխատանքը կատարվում է ձեռքով՝ առանց մեքենաների և մեխանիզմների, և մեքենաներով ու մեխանիզմներով, որոնք օգտագործվում են ֆիզիկական ջանքերը նվազեցնելու և որոշակի խնդիրների լուծման համար պահանջվող ժամանակը կրճատելու, ինչպես նաև թողարկվող արտադրանքի որակը բարելավելու համար: Այս ենթախմբի բանվորների պարտականությունները պահանջում են ունենալ արտադրական գործընթացի կազմակերպման գիտելիքներ, իմանալ օգտագործվող նյութերի ու գործիքների գործողության սկզբունքները և վերջնական արդյունքի նշանակությունը:

3.Սույն ենթախմբի բանվորների պարտականությունները ներառում են՝ մետաղի լցակաղապարման համար կաղապարներ ու կաղապարածողեր պատրաստելը. մետաղ եռակցելը, կտրելը և կաղապարելը. գլոցվածքից իրեր պատրաստելը և նորոգելը. ծանր մետաղական կառուցվածքներ, բազմաճախարակներ և այդօրինակ սարքավորումներ տեղակայելը, կանգնեցնելը, սպասարկելը և նորոգելը, համանման աշխատանքները ջրի տակ կատարելը. տարբեր մետաղական գործիքների և մանրամասների արտադրության և նորոգման համար պողպատ և այլ մետաղներ կռելը, մամլելը և կաղապարելը. կտրող և չափիչ գործիքներ ու հարմարանքներ պատրաստելը, նորոգելը, կարգավորելը և չափաբերելը. արդյունաբերական մեքենաներ և մեխանիզմներ՝ ներառյալ շարժիչները, շարժիչավոր տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև էլեկտրական և էլեկտրոնային սարքեր և այլ սարքավորումներ պատրաստելը, սպասարկելը, նորոգելը և կարգաբերելը. տարբեր հաստոցներով մետաղից և այլ նյութերից մանրամասներ պատրաստելը և մշակելը. մետաղական մակերևույթներ հղկելը, սրելը և չափաբերելը՝ հսկիչ-չափիչ սարքերով չափերը ճշտելով:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 721.Կաղապարողներ, եռակցողներ, դարբիններ, գրտնակողներ, նախապատրաստողներ՝ կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

2)**Փոքր խումբ 722. Գործիքագործ-փականագործներ, հաստոցավարներ, կարգաբերողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների.**

3)**Փոքր խումբ 723. Մեքենագետներ՝ սարքավորումների, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ.**

4)**Փոքր խումբ 724. Փականագործ-հավաքողներ՝ էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրոնային սարքերի.**

5)**Փոքր խումբ 725. Բանվորներ՝ արծնապատման, մետաղապատման և ներկման.**

6)**Փոքր խումբ 726. Բանվորներ՝ օպտիկամեխանիկական արտադրության և հատուկ արտադրությունների.**

7)**Փոքր խումբ 727. Բանվորներ՝ հղկանյութերի, սինթետիկ ալմաստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների և բնական ալմաստների արտադրության.**

8)**Փոքր խումբ 728. Բանվորներ՝ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրությունների:**

26.ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 721. ԿԱՂԱՊԱՐՈՂՆԵՐ, ԵՌԱԿՑՈՂՆԵՐ, ԴԱՐԲԻՆՆԵՐ, ԳՐՏՆԱԿՈՂՆԵՐ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ՝ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆ) ՄԵՏԱՂԻ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղ կաղապարողները, եռակցողները, դարբինները, գրտնակողները, նախապատրաստողները և հարակից զբաղմունքների մասնագետները մետաղի լցակաղապարման համար պատրաստում են կաղապարներ և կաղապարաձողեր, եռակցում և կտրում են մետաղական և ոչ մետաղական մանրամասեր (դետալներ), կռում և մամլում են հեծաններ, կաղապարաձողեր և կոճղակաղապարներ, գլոցվածքից արտադրում են արտադրատեսակներ և նորոգում դրանք, տեղակայում, կանգնեցնում, սպասարկում և նորոգում են ծանր մետաղական կառուցվածքներ, բազմաճախարակներ, ճոպանային ճանապարհներ և այդօրինակ կառույցներ, համանման աշխատանքներ են կատարում ջրի տակ:

2.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7211. Կաղապարողներ և ձողագործներ.**

2)**Ստորին խումբ 7212 . Եռակցողներ և գազակտրողներ.**

3)**Ստորին խումբ 7213. Գրտնակողներ.**

4)**Ստորին խումբ 7214. Նախապատրաստողներ՝ կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի, և փականագործ-տեղակայողներ.**

5)**Ստորին խումբ 7215. Բանվոր–մասնագետներ՝ փոխադրասարքերի (տակելաժնիկներ).**

6)**Ստորին խումբ 7216. Զրասուզակներ.**

27. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7211. ԿԱՂԱՊԱՐՈՂՆԵՐ ԵՎ ՁՈՂԱԳՈՐԾՆԵՐ

1.Կաղապարողները և ձողագործները մետաղի լցակաղապարման համար պատրաստում են կաղապարներ և կաղապարաձողեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ձեռքով կամ օժանդակ մեխանիզմների օգնությամբ, կամ հաստոցներով կաղապարներ պատրաստելը.

2)մետաղական կաղապարներում կաղապարաձողեր պատրաստելը.

3)կաղապարներ և կաղապարաձողեր չորացնելը և շիկացնելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ձողագործ՝ մեքենայական կաղապարման.

2)ձողագործ՝ ձեռքի կաղապարման.

3)կաղապարող՝ մեքենայական կաղապարման.

4)կաղապարող՝ ձեռքի կաղապարման.

5)կաղապարող՝ հալվող մոդելներով.

6)չորացնող՝ կաղապարաձողերի, կաղապարների և կաղապարային նյութերի:

28. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7212. ԵՌԱԿՑՈՂՆԵՐ ԵՎ ԳԱԶԱԿՏՐՈՂՆԵՐ

1.Եռակցողները և գազակտրողները գազային հրածորանների, էլեկտրական աղեղի և ջերմության այլ աղբյուրների օգնությամբ կտրում են մետաղական մանրամասեր՝ մետաղ հալելու և կտրելու կամ հալելու և եռակցելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մետաղական մանրամասեր եռակցելը՝ օգտագործելով գազային հրածորաններ, էլեկտրական աղեղ, թերմիտային կամ այլ մեթոդներ.
2)մանրամասերի և հանգույցների աղեղնային, հպումային (մամլիչ), գազային, էլեկրոնաճառագայթային, թերմիտային, պլազմային եռակցում կատարելը, եռակցման սարքավորումներ և մեքենաներ ղեկավարելն ու սպասարկելը.
3)զոդալամպով զոդման աշխատանքներ կատարելը.
4)գազագեներատորային կայանքներ լիցքավորելը և լիցքաթափելը.
5)սպասարկվող մեխանիզմները և սարքավորումները ենթակարգաբերելը.
6)եռակցման և կտրման թերությունները բացահայտելը, վերացնելը և կանխելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)զոդող՝ կարծր զոդանյութով.
2)գազակտրող.
3)գազաեռակցող.
4)էլեկտրագազաեռակցող.
5)էլեկտրաեռակցող՝ ձեռքով եռակցման.
6)եռակցող՝ դիֆուզային-եռակցման կայանքի.
7)եռակցող՝ լազերային եռակցման կայանքի.
8)եռակցող՝ հպումային եռակցման կայանքի:

29. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7213. ԳՐՏՆԱԿՈՂՆԵՐ

1.Գրտնակողները տարբեր մետաղների գլոցվածքից արտադրում, տեղակայում և նորոգում են շինվածքներ կամ շինվածքի մասեր:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)կտրելու և ձևավորելու համար գլոցվածք չափանշելը.
2)կենցաղային իրեր, արտադրական շինվածքներ, ինչպես նաև զարդարական առարկաներ և դրանց բաղադրամասեր արտադրելը և նորոգելը.
3)կաթսաներ, գլանատակառներ (ցիստեռններ), բաքեր և այդօրինակ այլ բեռնարկղեր պատրաստելը և նորոգելը.
4)նրբաթերթ մետաղից պատրաստված շարժիչավոր տրանսպորտային միջոցների և թռչող սարքերի մասեր պատրաստելը և նորոգելը.
5)տարբեր գրտնակներով և մամլիչներով թերթավոր և ձողավոր մետաղից պատրաստված մանրամասեր և իրեր գրտնակելը, սրելը, սառը և տաք վիճակով ճկելը.
6)գրտնակներ ենթակարգաբերելը և գրտնակման համար մետաղի տաքացման ռեժիմ կարգավորելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)դարբին՝ ստվարաթերթ մետաղի.
2)պղնձագործ.
3)գրտնակող.
4)գրտնակող՝ ասեղների.
5)գրտնակող՝ ասեղնած և գնդիկավոր հոլովակների.
6)գրտնակող՝ սառը մետաղի.
7)թիթեղագործ.
8)կաթսայագործ:

30. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7214. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ՝ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆ) ՄԵՏԱՂ , ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ - ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ

1.Կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղ նախապատրաստողները և փականագործ-տեղակայողները չափանշում, հավաքում և տեղակայում են մետաղական ձողակառույցներ (ֆերմաներ) և հաստ թերթային նյութեր՝ կառուցվածքների հիմնակմախքները ձևավորելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մետաղական մասեր չափանշելը հետագա կտրման, գայլիկոնման և ձևավորման համար՝ նպատակ ունենալով դրանք օգտագործել շենքերի, շինությունների և այլ կառույցների շինարարության ժամանակ.

2)արտադրամասում կառուցվածքային պողպատ գայլիկոնելը, կտրելը և կաղապարելը.

3)շենքերի, կամուրջների և այլ կառույցների շինարարության ժամանակ կառուցվածքների մետաղական բաղադրամասեր մոնտաժելը.

4)շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների (նավ, ինքնաթիռ, ավտոբուս և այլն) հիմնակմախքներ, այլ մետաղական մասեր հավաքելն ու կարգաբերելը, դրանց մակերևույթները մետաղական և այլ կոմպոզիցիոն նյութերից պատրաստված թերթերով ձևավորելը.

5)կառուցվածքների մետաղական բաղադրամասերը ձեռքով, մեքենայով կամ օդամղիչ մուրճով գամելը.

6)գամային միացությունների փորձարկումների ժամանակ հայտնաբերված թերությունները վերացնելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)չափանշող՝ գլոցվածքի.

2)փականագործ-տեղակայող՝ մետաղական կառուցվածքների.

3)գամող:

31. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7215. ԲԱՆՎՈՐ-ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՓՈԽԱԴՐԱՍԱՐՔԵՐԻ (ՏԱԿԵԼԱԺՆԻԿՆԵՐ)

1.Փոփադրասարքերի բանվոր–մասնագետները (տակելաժնիկները) տեղակայում են բազմաճախարակներ՝ բարձրացման և քարշարկման համար, շինարարական հրապարակներում, նավթի և գազի արդյունահանման հորատային կայանքներում, նավերում, թռչող սարքերում և այլ վայրերում, կատարում են ճոպանի ու մետաղաճոպանի տեխնիկական սպասարկում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ուղևորներ, բանվորներ, նյութեր, մեքենաներ և այլ ծանր բեռներ փոխադրելու համար լեռնային շրջաններում, խոր կիրճերի կամ ծովախորշերի վրայով, արտադրամասերում, նավաշինարաններում և այլ վայրերում տարբեր տեսակի վանդակներ, ճոպանաքարշ երկաթուղիներ, ճոպանուղիներ, շարժվող հարթակներ, բազմաճախարակներ և այլ բեռնամբարձիչ սարքեր տեղակայելը.

2)մետաղաճոպաններին, կանեփաթելի ճոպաններին տարբեր հարմարանքներ միացնելը, նորոգելը և հարմարեցնելը.

3)նավերում և թռչող սարքերում ճոպաններ, մետաղաճոպաններ տեղակայելը և նորոգելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր-մասնագետներ՝ փոխադրասարքի (տակելաժնիկ).

2)բանվոր՝ փոխադրասարք տեղակայող:

32. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7216. ՋՐԱՍՈՒՋԱԿՆԵՐ

1.Ջրասուզակները աշխատում են ջրի տակ՝ հատուկ հանդերձանքներով, զննում, հավաքում, փորում, պայթեցում, ջրային տարածքի հատակը, տեղակայում սարքեր և կառուցվածքներ, ջրից հանում ջրասույզ իրեր և մարդկանց:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ջրային տարածքի հատակը զննելը.

2)ջրի տակ հիմքեր, հիմնատակեր, խողովակաշարեր և ստորջրյա այլ կառույցներ տեղակայելը.

3)ստորջրյա պայթեցումներ նախապատրաստելը և կատարելը՝ խստորեն պահպանելով անվտանգության կանոնները.

4)ձեռքով կամ մեքենայական սարքավորումների կիրառմամբ ստորջրյա արգելքներ վերացնելը.

5)փրկարարական աշխատանքներ կատարելը՝ ջրասույզ եղած մարդկանց և նյութական միջոցները ջրից հանելու համար.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ջրասուզակ.

2)ջրասուզակ՝ փրկարար:

33. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 722. ԳՈՐԾԻՔԱԳՈՐԾ-ՓԱԿԱՆԱԳՈՐԾՆԵՐ, ՀԱՍՏՈՑԱՎԱՐՆԵՐ, ԿԱՐԳԱԲԵՐՈՂՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Գործիքագործ-փականագործները, հաստոցավարները, կարգաբերողները և հարակից զբաղմունքների մասնագետները մեխանիկական մշակման համար չափանշում են մանրամասեր (դետալներ) և իրեր, դրանք մեխանիկական մշակման են ենթարկում մետաղամշակման տարբեր հաստոցներով, պատրաստում ու նորոգում են տարբեր գործիքներ, սարքավորումներ և այլ իրեր, պատրաստում են մետաղական մոդելներ, կարգաբերում և կառավարում տարբեր հաստոցներ, հղկում և սրում մետաղական և ոչ մետաղական մակերևույթներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ մեխանիկական մշակման համար մանրամասեր և իրեր չափանշելը, խառատային, ֆրեզերային, գայլիկոնման, հղկման, ողորկման և մետաղամշակման այլ հաստոցներով դրանք մեխանիկական մշակման ենթարկելը՝ կիրառելով տարբեր հարմարանքներ և չափերը ճշտելով տարբեր հարթությունների վրա. մետաղամշակման հաստոցներ կարգաբերելը և կառավարելը՝ ներառյալ թվային ծրագրային կառավարմամբ հաստոցները. տարբեր բարդության գործիքներ, հարմարանքներ, ձևանմուշներ, սարքեր պատրաստելը, սրելը, կարգավորելն ու նորոգելը և շահագործման ընթացքում դրանք ստուգելը. գործիքների մետաղական մակերևույթներ հղկելը և սրելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7221. Դարբիններ՝ ձեռքով, մուրճերով և մամլիչներով աշխատող.**

2)**Ստորին խումբ 7222. Գործիքագործ-փականագործներ, սրողներ՝ գործիքների, մոդելագործներ՝ մետաղե մոդելների, և նշագրողներ՝ մետաղի վրա.**

3)**Ստորին խումբ 7223. Հաստոցավարներ և կարգաբերողներ՝ մետաղամշակման հաստոցների և սարքավորումների.**

4)**Ստորին խումբ 7224. Հղկողներ, ողորկողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների:**

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7221. ԴԱՐԲԻՆՆԵՐ՝ ՁԵՌՔՈՎ, ՄՈՒՐՃԵՐՈՎ ԵՎ ՄԱՄԼԻՉՆԵՐՈՎ ԱՇԽԱՏՈՂ

1.Ձեռքով, մուրճերով և մամլիչներով աշխատող դարբինները կռում և մամլում են հեծաններ, կաղապարաձողեր, կոճղակաղապարներ և երկաթի, պողպատի և այլ նյութերի ու համաձուլվածքների թերթեր՝ տարբեր գործիքներ, մետաղական իրեր, սարքավորման մանրամասեր և հանգույցներ պատրաստելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մետաղը կռելու համար տաքացման ռեժիմներ ընտրելը.

2)դարբնոցային վառարաններում մետաղ տաքացնելը.

3)զնդանների վրա, մուրճերով, մամլիչներով և մեքենաներով մանրամասեր և իրեր կռածգելը, ճկելը, կտրելը, կռելը և դրոշմելը.

4)դրոշմված իրեր և մանրամասեր ուղղելը.

5)դարբնոցային աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ պատրաստելը.

6)մամլիչներ, մուրճեր, մեքենաներ և ամբարձիչ-տրանսպորտային մեխանիզմներ կառավարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)դարբին՝ ձեռքով մետաղ կռող.
2)դարբին՝ մուրճով և մամլիչով աշխատող.
3)դարբին-դրոշմող.
4)դարբին-դրոշմող՝ ռոտացիոն մեքենայով աշխատող:

35. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7222. ԳՈՐԾԻՔԱԳՈՐԾ-ՓԱԿԱՆԱԳՈՐԾՆԵՐ, ՍՐՈՂՆԵՐ՝ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ, ՄՈԴԵԼԱԳՈՐԾՆԵՐ՝ ՄԵՏԱՂԵ ՄՈԴԵԼՆԵՐԻ, ԵՎ ՆՇԱԳՐՈՂՆԵՐ՝ ՄԵՏԱՂԻ ՎՐԱ

1.Գործիքագործ-փականագործները, գործիք սրողները, մետաղե մոդելների մոդելագործները և մետաղի վրա նշագծողները պատրաստում, սրում և նորոգում են գործիքներ, դրոշմներ, մոդելներ և մետաղից պատրաստված այլ իրեր՝ օգտագործելով ձեռքի գործիքներ և մետաղամշակման տարբեր տեսակի հաստոցներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ձեռքի գործիքներով և տարբեր տեսակի հաստոցներով դրոշմներ, ձևանմուշներ, կորաքանոններ և ամրաններ պատրաստելը, դրանք սպասարկելը և նորոգելը.
2)շարժիչների, մեքենաների բաղկացուցիչ և պահեստային մասեր ու մեխանիզմներ պատրաստելը.
3)կորաքանոնի, մանրամասերի, ձևանմուշների արտադրության և նորոգման համար մասեր հարմարեցնելը և հավաքելը.
4)ձուլակաղապարների պատրաստման համար մետաղական մոդելներ արտադրելը և նորոգելը.
5)մետաղական նախապատրաստվածք գծանշելն այն աշխատողների համար, ովքեր կատարում են հետագա մշակում՝ կտրում են, շրջատաշում, ֆրեզում, հղկում մետաղը.
6)տաբեր իրեր, այդ թվում՝ սպորտային զենքեր, փականներ և այլ բարդ մեխանիզմներ վերանորոգելը, հավաքելը և տեղակայելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)գործիքագործ.
2)նշագծող.
3)սրող.
4)էլեկտրասրող.
5)մոդելագործ՝ մետաղե մոդելների:

36. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7223. ՀԱՍՏՈՑԱՎԱՐՆԵՐ ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՈՂՆԵՐ՝ ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՍՏՈՑՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մետաղամշակման հաստոցների և սարքավորումների հաստոցավարները և կարգաբերողները խառատային, ֆրեզերային, գայլիկոնման, ատամնահատ, պարուրակաֆրեզերային և մետաղամշակման այլ հաստոցներով մշակում են մանրամասեր ու իրեր՝ չափաբերելով դրանք մի քանի հարթությունների վրա, կիրառելով տարբեր հարմարանքներ, կտրող և չափիչ գործիքներ՝ կարգաբերում են հաստոցներ, կիսաավտոմատներ, ավտոմատներ և այլ սարքավորումներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)տիպային մետաղական կառուցվածքների արտադրության օպերատորների համար մեկ կամ մի քանի տեսակի հաստոցներ կարգաբերելը.
2)մետաղամշակման համար որոշակի հաստոցներ կարգաբերելը և կառավարելը, ինչպիսիք են խառատային, ֆրեզերային, ռանդող, ներտաշման, գայլիկոնման, հղկման, հոնինգային և այլ հաստոցները՝ ներառյալ ունիվերսալ թվային ծրագրային կառավարմամբ հաստոցները, դրանցով մանրամասեր, գործիքներ և այլ իրեր պատրաստելը.
3)պլաստմասսայի և մետաղի փոխանյութերի մեքենայական մշակման ժամանակ համանման առաջադրանքներ կատարելը.

4)մանրամասերի և հանգույցների ներքին ու արտաքին գլանային, կոնային և գնդային մակերևույթներ չափաբերելը ու կիպահղկելը՝ կիրառելով ունիվերսալ և հատուկ հարմարանքներ.

5)հաստոցները աշխատանքի ժամանակ ենթակարգաբերելը, փորձնական մանրամասներ մշակելը.

6)ավտոմատ և կիսաավտոմատ մետաղամշակման հաստոցներ, մանիպուլյատորներ և արդյունաբերական ռոբոտներ կարգավորելը և կառավարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)խառատ.

2)խառատ՝ կիսաավտոմատ հաստոցի.

3)ֆրեզող.

4)գայլիկոնող.

5)չափաբերող-կիպահղկող.

6)ատամնահատող.

7)կարգաբերող՝ մետաղահատ հաստոցի.

8)կարգաբերող՝ ավտոմատ և կիսաավտոմատ հաստոցների.

9)կարգաբերող՝ ավտոմատ գծերի և ագրեգատային հաստոցների.

10)կարգաբերող՝ ատամնահատ և պարուրակաֆրեզերային հաստոցների.

11)կարգաբերող՝ ծրագրային կառավարմամբ հաստոցների և մանիպուլյատորների.

12)հաստոցավար՝ գայլիկոնման հաստոցի.

13)հաստոցավար՝ հղկման հաստոցի:

37. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7224. ՀՂԿՈՂՆԵՐ, ՈՂՈՐԿՈՂՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Հղկողները, ողորկողները և հարակից զբաղմունների մասնագետները տարբեր տեսակի և կառուցվածքների հղկման հաստոցներով կամ ձեռքով հղկում, ողորկում և չափաբերում են մանրամասեր և գործիքներ, ողորկման սկավառակներով, փոկերով, թմբուկներով գրտնակում և սոսնձում են հղկանյութերը, կառավարում և կարգաբերում են հղկման և ողորկման հաստոցներ, սրում են գործիքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մանրամասեր ու գործիք հղկելը և չափաբերելը.

2)մանրամասեր տեղադրելը և մի քանի հարթությունների վրա ճշտելը.

3)տարբեր քայլի և ծրագծի պարուրակ, ատամներ և ատամնանիվներ հղկելը.

4)մանրամասեր ողորկելը, ողորկման համար մածուկներ կազմելը և պատրաստելը՝ ըստ բաղադրատոմսերի.

5)ողորկման սկավառակներով, փոկերով, թմբուկներով հղկանյութ գրտնակելը և սոսնձելը.

6)հղկանյութեր ընտրելը, լուծույթներ, սոսինձներ պատրաստելը.

7)հղկման և ողորկման հաստոցներ կարգաբերելը, հղկման և ողորկման ռեժիմներ ու տեխնոլոգիական հաջորդականություն որոշելը.

8)կտրող գործիքներ և հարմանքներ սրելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հղկող.

2)ատամնահղկող.

3)պարուրակահղկող.

4)ողորկող.

5)գրտնակող՝ ողորկման սկավառակների.

6)սրող՝ կտրող գործիքների և հարմարանքների:

38. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 723. ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ՝ ՍԱՐՔԱՎՈՐԱՆՔԻ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՆՈՐՈԳՈՂՆԵՐ

1.Սարքավորանքի մեքենագետները, փականագործ-հավաքողները և փականագործ-նորոգողները հարմարեցնում և հավաքում են շարժիչներ, տրանսպորտային միջոցներ, թռչող սարքեր, գյուղատնտեսական կամ արդյունաբերական մեքենաներ ու մեխանիկական սարքավորումներ, սպասարկում և նորոգում են դրանք՝ կատարելով տարբեր բարդության փականագործական աշխատանքներ, կարգավորում ու փորձարկում են սարքավորումներ և իրեր, հսկում դրանց տեխնիկական վիճակը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ շարժիչներ, տրանսպորտային միջոցներ, թռչող սարքեր, գյուղատնտեսական կամ արդյունաբերական մեքենաներ ու մեխանիկական սարքավորումներ հարմարեցնելը, հավաքելը, դրանք սպասարկելը և նորոգելը. հավաքվող և նորոգվող մեքենաներ ու սարքավորանք կարգավորելը, կարգաբերելը և փորձարկելը. փորձարկման վահանակներ մոնտաժելը և ապամոնտաժելը. թերությունների ցուցակներ կազմելը և ընդունման-հանձնման փաստաթղթեր ձևակերպելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7231. Փականագործ-մեքենագետներ, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ՝ մոտոտրանսպորտային միջոցների.**

2)**Ստորին խումբ 7232. Փականագործ-մեքենագետներ, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ՝ թռչող սարքերի և նավերի.**

3)**Ստորին խումբ 7233. Փականագործ-մեքենագետներ, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ՝ արդյունաբերական և գյուղատնտեսական սարքավորումների:**

39. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7231. ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՆՈՐՈԳՈՂՆԵՐ՝ ՄՈՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.Մոտոտրանսպորտային միջոցների փականագործ-մեքենագետները, փականագործ-հավաքողները և փականագործ-նորոգողները հավաքում, տեղակայում, կարգաբերում, նորոգում և փորձարկում են մարդատար և բեռնատար մեքենաների, մոտոցիկլետների և մոտոտրանսպորտային այլ միջոցների հանգույցները և շարժիչները, հսկում և ստուգում են դրանց տեխնիկական վիճակը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մոտոտրանսպորտային միջոցների շարժիչներ հարմարեցնելը, զննելը, փորձարկելը և սպասարկելը.

2)շարժիչի մասերը կամ ամբողջ շարժիչը փոխարինելը.

3)մոտոտրանսպորտային միջոցների՝ թերություններ ունեցող մեխանիկական մանրամասեր հարմարեցնելը, զննելը, կարգաբերելը, կարգավորելը, վերականգնելը և փոխարինելը.

4)մոտոտրանսպորտային միջոցների շարժիչը, արգելակման սարքերը, ղեկային համակարգը և այլ համակարգեր ու մանրամասեր տեղակայելն ու հարմարեցնելը.

5)մոտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը շահագործումից, տեխնիկական սպասարկումից և նորոգումից հետո ստուգելը.

6)նորոգման կամ անսարքությունների վերացման տեխնիկական փաստաթղթեր ձևակերպելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փականագործ՝ մեքենահավաքման աշխատանքների.

2)փականագործ՝ ավտոմեքենաների նորոգման.

3)հսկիչ՝ ավտոմոտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի:

40. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7232. ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՆՈՐՈԳՈՂՆԵՐ՝ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՆԱՎԵՐԻ

1.Թռչող սարքերի և նավերի փականագործ-մեքենագետները, փականագործ-հավաքողները և փականագործ-նորոգողները հավաքում, կարգաբերում, փորձարկում, սպասարկում, նորոգում և արատորոշում են տարբեր տեսակի թռչող սարքեր ու նավեր, ինչպես նաև դրանց վրա տեղակայված սարքավորումներ, ագրեգատներ, սարքեր, համակարգեր, մեքենաներ ու մեխանիզմներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թռչող սարքերի ավիաշարժիչների, ագրեգատների, սարքերի հանգույցներ ու մեխանիզմներ հավաքելը և կարգաբերելը.

2)տարբեր տեսակի թռչող սարքեր հավաքելը.

3)ավիաշարժիչների, ագրեգատների, սարքերի, մեխանիզմների հավաքման թերություններ բացահայտելը և վերացնելը.

4)թռչող սարքերի մանրամասեր և հանգույցներ նորոգելը.

5)նորոգված հանգույցները կայանքների վրա փորձարկելը.

6)թռչող սարքերի ավիաշարժիչների, հանգույցների և մեխանիզմների նորոգման ու փորձարկման համար կիրառվող հարմարանքներ, սարքեր ու վահանակներ սպասարկելը, սարքաբերելը, կարգավորելը և նորոգելը.

7)փայտե նավերի (մակույկների, բարկասների, յալերի) բաժանմունքների մանրամասեր հավաքելը, տեղակայելը, հարմարեցնելը, չափանշելը և ամրակելը.

8)երկաթբետոնե և պլաստմասսե նավերի բաժանմունքներ և բլոկներ մոնտաժելը.

9)արտադրամասերում կամ նավարաններում մետաղական նավեր կառուցելիս դրանց իրանները բաժանմունքներից, բլոկ-բաժանմունքներից և մեծածավալ բաժանմունքներից ձևավորելը՝ կատարելով եռակցելու, գամելու և դրոշմահատելու աշխատանքներ և ջրաբաշխական (հիդրավլիկ) փորձարկման ենթարկելով իրանի կառուցվածքները.

10)նավի սարքավորումների ամրակման մանրամասեր և հանգույցներ, կառուցվածքներ, հարմարանքներ, բաքեր, տարողություններ, գլանատակառներ (ցիստեռններ), նավային կահույք, օդաորակավորման համակարգեր պատրաստելը, հավաքելը, ուղղելը, չափանշելը, տեղակայելը և ապամոնտաժելը.

11)նավի սենյակներ ձևավորելը և կահավորելը.

12)նավերը ջրարկման նախապատրաստելը.

13)նավի սարքավորումների, կայանքների, սարքերի և համակարգերի փորձարկումներ կատարելը, դրանք փորձարկման խցիկների և վահանակների օգնությամբ կարգավորելը և կարգաբերելը.

14)նավի մեխանիզմներ, սարքեր, ամրակներ, շոգեմեքենաներ, դիզելներ, հարմարանքներ և այլն քանդելը, արատորոշելը, նորոգելը և մոնտաժելը.

15)այլ աշխատողներին ղեկավարելը.

16)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փականագործ-հավաքող՝ թռչող սարքերի.

2)փականագործ-հավաքող՝ շարժիչների.

3)փականագործ-հավաքող՝ օդագնացական սարքերի.

4)փականագործ-մեքենագետ՝ օդագնացական սարքերի նորոգման.

5)փականագործ՝ օդագնացական շարժիչների նորոգման.

6)փականագործ՝ ագրեգատների նորոգման.

7)փականագործ՝ թռչող սարքերի նորոգման.

8)էլեկտրամեքենագետ՝ էլեկտրասարքավորանքի փորձարկման և նորոգման.

9)հավաքող՝ փայտե նավերի.

10)հավաքող՝ երկաթբետոնե և պլաստմասսե նավերի.

11)հավաքող՝ մետաղական նավերի.

12)փականագործ–մեքենագետ՝ սարքերի և կայանքների.

13)փականագործ–նավավերանորոգող.

14)նորոգող՝ նավահիրանների.

15)փականագործ-մեքենագետ՝ սարքավորումների փորձարկման:

41. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7233. ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՆՈՐՈԳՈՂՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Արդյունաբերական և գյուղատնտեսական սարքավորումների փականագործ-մեքենագետները, փականագործ-հավաքողները և փականագործ-նորոգողները հավաքում, մոնտաժում, կարգավորում և փորձարկում են սարքավորումների հանգույցներ ու մեխանիզմներ, ագրեգատներ, մեքենաներ, հաստոցներ, էլեկտրասարքավորումներ, կայանքներ, հսկիչ-չափիչ սարքեր, կառավարման վահանակներ, սարքեր և արդյունաբերական այլ սարքավորումներ, հսկում են դրանց տեխնիկական վիճակը, ստուգում, նորոգում և հարմարեցնում են դրանք:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սարքավորումների հանգույցներ և մեխանիզմներ, ագրեգատներ, մեքենաներ, հաստոցներ, էլեկտրասարքավոումներ, կայանքներ, հսկիչ-չափիչ սարքեր, կառավարման վահանակներ, սարքեր և արդյունաբերական այլ սարքավորումներ հավաքելը, մոնտաժելը, կարգավորելը, փորձարկելը, նորոգելը և հարմարեցնելը.

2)հավաքման գործընթացում տարբեր բարդության մանրամասերի ու հանգույցների փականագործական մշակում կատարելը, դրանք հարմարեցնելը, կիպահղկելը, չափանշելը, քերանելը, զոդելը, հավաքման և նորոգման համար անհրաժեշտ տարբեր բարդության հարմարանքներ պատրաստելը.

3)սարքավորումների շահագործման և նորոգման ժամանակ թերություններ բացահայտելը և վերացնելը, հանգույցներ, շփվող մասեր յուղելը.

4) նոր սարքավորումներ գործարկելը, լրահավաքելը, դրանք համապատասխան քսայուղերով, հովացման հեղուկներով և այլ նյութերով հագեցնելը.

5) վերանորոգված սարքավորումները բեռնավորված վիճակում ստուգելը և փորձարկելը.

6) սարքավորումների թերություններին և վերանորոգմանն առնչվող փաստաթղթեր կազմելը.

7) այլ աշխատողներին ղեկավարելը.

8) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) փականագործ՝ մեքենահավաքման աշխատանքների.

2) փականագործ-էլեկտրամոնտաժող.

3) փականագործ-էլեկտրագետ՝ էլեկտրասարքավորումների նորոգման.

4) փականագործ-նորոգող:

42. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 724. ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ

1.Էլեկտրական և էլեկտոնային սարքերի մեքենագետները և տեղակայողները հավաքում, կարգավորում, տեղակայում, նորոգում և փորձարկում են էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրոնային սարքերը՝ համակարգիչներ, ձայնագրման և տեսագրման սարքավորումներ, հեռուստահաղորդակցման համակարգեր, ստեղծում, անցկացնում և նորոգում են էլեկտրահաղորդման գծեր և միակցում են մալուխներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. էլեկտրամեխանիկական սարքավորումներ ու մեքենաներ, համակարգիչներ և էլեկտրոնային այլ սարքավորումներ հավաքելը, կարգավորելը, սպասարկելն ու նորոգելը. ռադիոընդունիչներ, հեռուստացույցներ, երաժշտական կենտրոններ սպասարկելը և նորոգելը. հեռագրային ու հեռախոսային սարքավորումներ տեղակայելը, սպասարկելը և նորոգելը. էլեկտրահաղորդման գծեր տեղակայելն ու նորոգելը և մալուխներ միակցելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7241. Մեքենագետներ և տեղակայողներ՝ էլեկտրական սարքերի.**

2)**Ստորին խումբ 7242. Տեղակայողներ՝ էլեկտրոնային սարքերի.**

3)**Ստորին խումբ 7243. Մեքենագետներ՝ էլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման.**

4)**Ստորին խումբ 7244. Տեղակայողներ՝ հեռագրային և հեռախոսային սարքավորումների և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

5)**Ստորին խումբ 7245. Տեղակայողներ և նորոգողներ՝ էլեկտրահաղորդագծերի, մալուխագործ-զոդողներ:**

43. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7241. ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ

1.Էլեկտրական սարքերի մեքենագետները և տեղակայողները տներում, կազմակերպություններում, արտադրամասերում և այլ վայրերում հավաքում, կարգավորում, տեղակայում, նորոգում և փորձարկում են էլեկտրամեխանիկական սարքավորումներ և այլ էլեկտրասարքեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տարբեր տեսակի էլեկտրամեխանիկական սարքավորումներ և շարժիչներ, գեներատորներ, բաշխիչ սարքեր, հսկիչ–չափիչ սարքեր, սարքերի կամ էլեկտրաբարձիչի էլեկտրամեխանիկական մասեր ու համանման սարքավորումներ հավաքելը, կարգաբերելը և նորոգելը.

2)տնային գործածության իրեր, արդյունաբերական մեքենաներ և այլ սարքեր, նավերի ու մոտոտրանսպորտային միջոցների էլեկտրական սարքեր հավաքելը, կարգաբերելը և նորոգելը.

3)արդյունաբերական նշանակության էլեկտրական և էլեկտրամեխանիկական սարքավորումներ զննելը և փորձարկելը.

4)էլեկտրաչափիչ սարքեր աստիճանավորելը.

5)տարբեր բարդության էլեկտրական սխեմաներ հավաքելը.

6)էլեկտրական սարքավորումների հավաքման ժամանակ անհրաժեշտ պարզ հաշվարկներ կատարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող՝ էլեկտրաչափիչ սարքերի.

2)հավաքող՝ տրանսֆորմատորների.

3)հավաքող՝ էլեկտրական մեքենաների և սարքերի.

4)հավաքող՝ սնդիկային ուղղիչի.

5)էլեկտրատեղակայող՝ գեներատորի.

6)էլեկտրամեքենագետ:

44. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7242. ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ

1.Էլեկտրոնային սարքեր տեղակայողները հավաքում և կարգաբերում են ռադիոէլեկտրոնային սարքեր, կապի սարքեր, համակարգիչներ, ինչպես նաև ձայնագրման և տեսագրման սարքավորումներ, հեռուստահաղորդակցման համակարգեր և էլեկտրոնային այլ սարքավորումներ, վերացնում են հավաքման ու փորձարկման ժամանակ բացահայտված թերությունները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)համակարգիչներ, ձայնագրման և տեսագրման սարքավորումներ ու հաղորդիչներ, ռադարներ, երաժշտական գործիքների և բժշկական սարքավորումների էլեկտրոնային մասեր, արդյունաբերական սարքավորումներ և կապի համակարգեր հավաքելն ու կարգավորելը.

2)հավաքման հանձնվող մանրամասերի (դետալների) ու հանգույցների գաբարիտային չափերը և որակը ստուգելը.

3)հավաքման աշխատանքներին վերաբերող անհրաժեշտ պարզ հաշվարկներ կատարելը.

4)հավաքման հարմարանքներ պատրաստելը.

5)տարբեր բարդության սխեմաներ հավաքելը՝ կիրառելով գրտնակում, մամլակցում, զոդում,

6)ռադիոէլեկտրոնային սարքավորումներ զննելը և փորձարկելը.

7)ռադիոէլեկտրոնային սարքեր, սարքավորումներ, մեխանիզմներ, համակարգեր, հաղորդալարային կապի սարքեր մոնտաժելը.
8)մոնտաժման թերություններ հայտնաբերելը և վերացնելը.
9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)հավաքող-փականագործ՝ ռադիոէլեկտրոնային սարքերի ու սարքավորումների.
2)փականագործ-մեքենագետ՝ ռադիոէլեկտրոնային սարքերի.
3)հավաքող՝ ռադիոմասերի.
4)հավաքող՝ կիսահաղորդիչ սարքերի.
5)հավաքող՝ միկրոսխեմաների.
6)տեղակայող՝ ռադիոէլեկտրոնային սարքերի ու սարքավորումների.
7)տեղակայող՝ համակարգչային տեխնիկայի.
8)տեղակայող՝ հեռահաղորդակցման սարքավորումների:

45. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7243. ՄԵՔԵՆԱԳԵՏՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1.էլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման մեքենագետները վերանորոգում և սպասարկում են ռադիոընդունիչներ, հեռուստացույցներ, ձայնագրման, տեսագրման, վերարտադրման և համանման այլ սարքավորումներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ռադիոընդունիչներ, հեռուստացույցներ, ձայնագրման, տեսագրման, վերարտադրման և համանման այլ սարքավորումներ զննելը, թերությունները բացահայտելը և վերացնելը.
2)ռադիոընդունիչների, հեռուստացույցների, ձայնագրման, տեսագրման, վերարտադրման և համանման այլ սարքավորումների համար հեռարձակման և ընդունման սարքեր պատրաստելը և տեղակայելը.
3)այլ աշխատողներին ղեկավարելը.
4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)տեղակայող՝ ալեհավաքների.
2)մեքենագետ՝ ձայնագրման, տեսագրման, վերարտադրման և համանման այլ սարքավորումների.
3)վերանորոգող՝ հեռուստացույցների և ռադիոընդունիչների:

46. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7244. ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ՝ ՀԵՌԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Հեռագրային և հեռախոսային սարքավորումներ տեղակայողները և հարակից զբաղմունքների բանվորները կապի հանգույցներում, կազմակերպություններում, մասնավոր բնակարաններում և այլ վայրերում տեղակայում, սպասարկում, վերանորոգում և փորձարկում են հեռագրային և հեռախոսային սարքավորումներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)կապի հանգույցներում, կազմակերպություններում, մասնավոր բնակարաններում և այլ վայրերում հեռագրային և հեռախոսային սարքավորումներ տեղակայելը, սպասարկելը, վերանորոգելը և փորձարկելը.
2)կազմակերպություններում ներքին հեռախոսային ցանց և հեռախոսային կայան ձևավորելը և սպասարկելը.
3)այլ աշխատողներին ղեկավարելը.
4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)տեղակայող՝ հեռախոսային սարքավորումների.
2)տեղակայող՝ հեռագրային սարքավորումների.
3)վերանորոգող՝ հեռախոսային սարքավորումների.
4)վերանորոգող՝ հեռագրային սարքավորումների.
5)սպասարկող՝ կազմակերպության հեռախոսային կայանի:

47. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7245. ՏԵՂԱԿԱՅՈՂՆԵՐ ԵՎ ՆՈՐՈԳՈՂՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴԱԳԾԵՐԻ, ՄԱԼՈՒԽԱԳՈՐԾ-ՁՈԴՈՂՆԵՐ

1.Էլեկտրահաղորդագծեր տեղակայողները և նորոգողները, մալուխագործ-զոդողները տեղակայում և վերանորոգում են էլեկտրահաղորդագծեր, դրանք զոդմամբ միացնում իրար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վերգետնյա և ստորգետնյա էլեկտրահաղորդալարեր տեղակայելը և վերանորոգելը.

2)վերգետնյա և ստորգետնյա հեռագրային և հեռախոսային կապի հաղորդալարեր տեղակայելը և վերանորոգելը.

3)վերգետնյա և ստորգետնյա մալուխները և հաղորդալարերը զոդմամբ իրար միացնելը.

4)մալուխների չափումներ կատարելը, դրանց անվտանգությունը և քայքայումից պաշտպանվածությունը գնահատելը.

5)մալուխաորոնիչի օգնությամբ մալուխների մայրուղիներ որոշելը և դրանք արձանագրելը.

6)մալուխային մայրուղիների ուղեգծեր զննելը և վնասվածքներ վերացնելը.

7)էլեկտրալարերի խաչավորում մոնտաժելը և վերափոխելը.

8)կապի գծերի հիմնական էլեկտրական ցուցանիշեր չափելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մալուխագործ՝ հեռագրային կապի.

2)մալուխագործ.

3)մալուխագործ՝ հեռախոսային կապի.

4)վերանորոգող՝ մալուխի:

48. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 725. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԱՐԾՆԱՊԱՏՄԱՆ, ՄԵՏԱՂԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ

1.Արծնապատմամբ, մետաղապատմամբ և ներկմամբ զբաղված բանվորները կատարում են գալվանապատման, մանրամասերի և իրերի մակերևույթների մետաղապատման, ներկման, արծնապատման, խողովակների և թիթեղների լաքապատման աշխատանքներ և հարակից գործառնություններ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. էլեկտրոլիտիկ լուծույթներ պատրաստելը և մանրամասերի մակերևույթներ գալվանապատելը. մանրամասերի մակերևույթները դժվարահալ նյութերով և փոշենյութերով գազոթերմիկ, էլեկտրաաղեղնային, պլազմային, վակուումային և այլ եղանակներով մետաղապատելը. մանրամասերի և իրերի մակերևույթները ներկելը, լաքապատելը և արծնապատելը, ներկերը և լաքերը իրար խառնելը, անհրաժեշտ գունային երանգներ ստանալը. օգտագործվող սարքեր և սարքավորումներ կառավարելը, տեխնոլոգիական գործընթացների ռեժիմներ կարգավորելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1) Ստորին խումբ 7250. Բանվորներ՝ արծնապատման, մետաղապատման և ներկման:

49. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7250. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԱՐԾՆԱՊԱՏՄԱՆ, ՄԵՏԱՂԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ

1.Արծնապատմամբ, մետաղապատմամբ և ներկմամբ զբաղված բանվորները կատարում են գալվանապատում, մանրամասերի և իրերի մակերևույթների մետաղապատում, ներկում, արծնապատում, խողովակների և թիթեղների լաքապատում և հարակից գործառնություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մանրամասերի և իրերի մակերևույթներ մետաղապատելը, ներկելը, լաքապատելը.

2)էլեկտրոլիտներ պատրաստելը, գալվանապատման գործընթացը կարգավորելը.

3)մանրամասերը և իրերը փոշենյութերով և դժվարահալ նյութերով գազաջերմային, էլեկտրաաղեղային, պլազմային, վակուումային և այլ եղանակներով մետաղապատելը՝ կարգավորելով մետաղապատման սարքերի ու կայանքների աշխատանքի ռեժիմները.

4)թիթեղները և խողովակները ձեռքով կամ մեքենաներով լաքապատելը, համապատասխան սարքավորումները կառավարելը և կարգաբերելը.

5)իրերը թաթախման, ջրցողման, հեղուկացրիչով և այլ եղանակով արծնապատելը՝ լրակարգաբերելով սարքավորումը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)գալվանապատող.

2)մետաղապատող.

3)ներկարար.

4)արծնապատող:

50. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 726. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՕՊՏԻԿԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Օպտիկամեխանիկական արտադրության և հատուկ արտադրությունների բանվորները պատրաստում են օպտիկական իրերի մանրամասեր, կատարում են դրանց մեխանիկական և փականագործական մշակում ու սոսնձում, հավաքում են օպտիկական հանգույցներ և սարքեր՝ կատարելով դրանց կենտրոնադրումը և ճշտադրումը, հավաքում և կարգավորում են զենքի ու ռազմամթերքի հանգույցներ, կատարում են արտադրատեսակների նշանափորձում, իրականացնում են մանրամասերի և արտադրատեսակների վերահսկողություն և ընդունում, կատարում են զինամթերքի և զենքերի փորձարկում, նորոգում են տարբեր զինատեսակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են. օպտիկական ապակուց, բյուրեղներից ու կերամիկայից մանրամասեր պատրաստելը, դրանց մեխանիկական և փականագործական մշակումը ու սոսնձումը. օպտիկական հանգույցներ և սարքեր հավաքելը՝ օպտիկական ու մետաղական մանրամասերի հարմարեցմամբ, դրանց գրտնակմամբ և կենտրոնադրմամբ. ոսպնյակների, օպտիկական սարքերի, աստղադիտակային համակարգերի, լուսանկարչական և առաջնգական (պրոեկցիոն) սարքերի կենտրոնադրումը, օպտիկական սարքերի ու հանգույցների ճշտադրումը. տարբեր զինատեսակների հանգույցների ագրեգատների հավաքումը, կարգաբերումը և փորձարկումը, դրանց որակի վերահսկումը և ընդունումը մեխանիկական և փականագործական մշակումներից հետո. փորձարկման սարքերի նախապատրաստումը և փորձարկումների իրականացումը համաձայն սահմանված պահանջների. պայթուցիկ նյութերի փորձարկումը. տարբեր զինատեսակների քանդումը, վերանորոգումը և հավաքումը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 7260. Բանվորներ՝ զբաղված օպտիկամեխանիկական արտադրությունում և հատուկ արտադրություններում:**

51. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7260. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՕՊՏԻԿԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Օպտիկամեխանիկական արտադրության և հատուկ արտադրությունների բանվորները պատրաստում են օպտիկական իրերի մանրամասեր, կատարում են դրանց մեխանիկական և փականագործական մշակում ու սոսնձում, հավաքում են օպտիկական հանգույցներ և սարքեր՝ կենտրոնադրելով և ճշտադրելով դրանք, հավաքում ու կարգավորում են զենքի և ռազմամթերքի հանգույցներ, կատարում են արտադրատեսակների նշանափորձում, իրականացնում են մանրամասերի ու իրերի վերահսկողություն և ընդունում, կատարում են զինամթերքի և զենքերի փորձարկում, նորոգում են տարբեր զինատեսակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)օպտիկական ապակուց, բյուրեղներից և կերամիկայից մանրամասեր պատրաստելը, դրանց մեխանիկական և փականագործական մշակումը ու սոսնձումը.

2)օպտիկական հանգույցներ և սարքեր հավաքելը՝ օպտիկական և մետաղական մանրամասեր հարմարեցնելով, դրանք գրտնակելով ու կենտրոնադրելով.

3)ոսպնյակներ, օպտիկական սարքեր, աստղադիտակային համակարգեր, լուսանկարչական սարքեր կենտրոնադրելը.

4)օպտիկական սարքեր և հանգույցներ ճշտադրելը, տարբեր զինատեսակների հանգույցներ և ագրեգատներ հավաքելն ու կարգավորելը, դրանք նշանափորձելը.

5)մեխանիկական և փականագործական մշակումից ու վերջնական հավաքումից հետո զինատեսակները և դրանց մանրամասները վերահսկելը և ընդունելը.

6)փորձարկման սարքերի վահանակներ, կառավարման կետեր, այլ սարքավորումներ նախապատրաստելը, զինատեսակներ փորձարկելը՝ ըստ տրված ծրագրի.

7)պայթուցիկ նյութեր, վառոդ, ռազմամթերքներ փորձարկելը.

8)զենքի տարբեր տեսակներ քանդելը, վերանորոգելը և հավաքելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպտիկ.

2)օպտիկ–մեքենագետ.

3)սոսնձող՝ օպտիկական մանրամասերի.

4)կենտրոնադրող՝ օպտիկական մանրամասերի.

5)ճշտադրող՝ օպտիկական մանրամասերի.

6)ֆրեզերող՝ օպտիկական մանրամասերի.

7)ողորկող՝ օպտիկական մանրամասերի.

8)գայլիկոնող՝ օպտիկական մանրամասերի:

52. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 727. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀՂԿԱՆՅՈՒԹԵՐԻ, ՍԻՆԹԵՏԻԿ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ, ԳԵՐԿԱՐԾՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Հղկանյութերի, սինթետիկ ալմաստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների ու բնական ալմաստների արտադրության բանվորները, հղկանյութային իրերի արտադրության համար նախապատրաստում են հղկանյութային զանգված, պատրաստում և հավաքում են այդ իրերը, վերահսկում և ընդունում են հղկող գործիքներ, գերկարծր նյութերից և բնական ալմաստներից հավաքում են հարմարանքներ ու գործիքներ, հավասարակշռում են հղկասկավառակներ և այն փորձարկում հատուկ սարքավորմամբ, կարգաբերում և վերանորոգում են ալմաստների ու գերկարծր նյութերի սինթեզի կայանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են. հղկանյութի զանգվածը նախապատրաստելը և խառնող մեքենաներին մատակարարելը. հղկման և ողորկման գործիքներ պատրաստելը և հավաքելը. հղկման գործիքները մեխանիկական մշակումից հետո վերահսկելը և ընդունելը. փորձարկման սարքավորումներով հղկման, ողորկման գործիքների ամրություն որոշելը. արհեստական ալմաստից և գերկարծր մետաղներից գործիքներ պատրաստելու համար անհրաժեշտ բաղադրանյութեր նախապատրաստելը, խառնելը և կաղապարների մեջ լցնելը. արհեստական և բնական ալմաստներից, գերկարծր մետաղներից մեխանիկական մշակման տարբեր գործիքներ պատրաստելը և հավաքելը. գործիքներ փորձարկելը, հիմնական երկրաչափական ցուցանիշեր ստուգելը. արհեստական ալմաստի և գերկաձր մետաղների սինթեզի կայանքներ և սարքավորումներ կարգաբերելը, գործարկելը և վերանորոգելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 7270. Բանվորներ՝ հղկանյութերի, սինթետիկ ալմաստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների և բնական ալմաստների արտադրության:**

53. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7270. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀՂԿԱՆՅՈՒԹԵՐԻ, ՍԻՆԹԵՏԻԿ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ, ԳԵՐԿԱՐԾՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Հղկանյութերի, սինթետիկ ալմաստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների ու բնական ալմաստների արտադրության

բանվորները, հղկանյութային իրերի արտադրության համար նախապատրաստում են հղկանյութային զանգված, պատրաստում և հավաքում են այդ իրերը, վերահսկում և ընդունում են հղկող գործիքներ, գերկարծր նյութերից և բնական ալմաստներից հավաքում են հարմարանքներ ու գործիքներ, հավասարակշռում են հղկասկավառակներ և գործիքը փորձարկում հատուկ սարքավորմամբ, կարգաբերում և վերանորոգում են ալմաստների ու գերկարծր նյութերի սինթեզի կայանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տարբեր տեսակի կապակցիչներ, էպոքսիդային խեժեր և հղկանյութային զանգված նախապատրաստելը, չափաքանակ որոշելը, տեղափոխելը և բեռնելը խառնիչ մեքենաներ.

2)ողորկման իրեր, հղկասկավառակներ, հղկող գործիքներ պատրաստելը և հավաքելը.

3)հղկող գործիքը մեխանիկական մշակումից հետո վերահսկելն ու ընդունելը և դրա կարծրությունը որոշելը.

4)իրերի ամրությունը որոշելու նպատակով՝ փորձարկման սարքավորումներով մեխանիկական փորձարկում կատարելը.

5)բովախառնուրդի և ալմաստների խառնուրդ պատրաստելը, դա կշռելը և մամլակաղապարի մեջ լցնելը.

6)բնական և սինթետիկ գերկարծր նյութերից իրեր ու հատուկ գործիքներ հավաքելը.

7)ալմաստային գայլիկոններ, ֆրեզներ, սկավառակային սղոցներ և մեխանիկական մշակման այլ գործիքներ պատրաստելը՝ ալմաստների գլոցման մեթոդով.

8)հղկասկավառակներ հավասարակշռելը և դրանք ուղղելը.

9)ալմաստներից և գերկարծր նյութերից պատրաստված գործիքներ փորձարկելը ունիվերսալ և հատուկ հաստոցներով՝ կարծրության, անհարթության, մակակոփվածքի և այլ հատկանիշերի ստուգման համար.

10)գործիքների երկրաչափական չափերը վերահսկելը, մանրափոշիների խառնուրդներում հիմնական բաղադրիչի և խոնավության պարունակությունը հսկելը.

11)ալմաստների և գերկարծր նյութերի սինթեզի համար ավտոմատ և կիսաավտոմատ կայանքներ կարգաբերելը, վերանորոգելը, աշխատանքային ռեժիմի ընտրությունը և կայանքների փորձնական գործարկումը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)նախապատրաստող՝ հղկանյութային զանգվածի.

2)նախապատրաստող՝ բակելիտային, ռետինային և էպոքսիդային զանգվածների.

3)պատրաստող՝ հղկասկավառակների.

4)պատրաստող՝ հղկաթղթե իրերի.

5)հսկիչ՝ հղկանյութերի և իրերի.

6)հավաքող՝ ալմաստե գործիքների.

7)հավասարակշռող՝ ալմաստներից և գերկարծր նյութերից պատրաստված գործիքների.

8) փորձարկող՝ ալմաստներից և գերկարծր նյութերից պատրաստված գործիքների.

9)հսկիչ՝ ալմաստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող իրերի արտադրությունների.

10)կարգաբերող՝ ալմաստների և գերկարծր նյութերի սինթեզի կայանքների:

54.ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 728. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրությունների բանվորները պատրաստում են ասեղապլատինային արտադրատեսակներ, էլեկտրոդներ, մետաղացանցեր, նստոցներ և փափուկ կահույքի այլ բաղադրամասեր, մալուխային և ավտոմոբիլային հիմնակմախքների ցանցեր, մետաղաշղթաներ, թիթեղագլանային իրերի պարկուճներ և պատյաններ, փորձարկում են պատրաստի արտադրատեսակներ, վերահսկում և ընդունում դրանք, կարգաբերում և կարգավորում են համապատասխան սարքավորումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են. ասեղապլատինային արտադրատեսակների սառը դրոշմում կատարելը, սրելը, վերջնամշակելը. ավտոմատ և

կիսաավտոմատ հաստոցներով խողովակներ և թիթեղագլանային իրերի պարկուճներ և պատյաններ պատրաստելը. էլեկտրոդների ծածկաշերտ պատրաստելը, էլեկտրոդները ծածկապատելը և ջերմամշակելը. մետաղական ցանց գործելը, նստոցներ, փափուկ կահույքի այլ մասեր, փոխակրիչների ժապավեններ, մալուխային և ավտոմոբիլային հիմնակմախքներ պատրաստելը. մամլիչներով շղթաների կիսաօղակներ ճկելը, մետաղական ճոպաններ և շղթաներ փորձարկելը. պատրաստի արտադրատեսակներ ստուգելը և ընդունելը՝ ըստ տեխնիկական պահանջների. օգտագործվող սարքավորումներ կարգավորելը և կարգաբերելը:

3. Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 7280. Բանվորներ՝ զբաղված մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրություններում:**

55.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7280. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԶԲԱՂՎԱԾ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1.Մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրություններում զբաղված բանվորները պատրաստում են ասեղապլատինային արտադրատեսակներ, թիթեղագլանային իրերի պարկուճներ և պատյաններ, փոխակրիչների ժապավեններ, էլեկտրոդներ, մետաղյա ցանցեր, փափուկ կահույքի բաղադրամասեր, մետաղյա շղթաներ և այլն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ասեղապլատինային իրերի սառը դրոշմում, սրում և չափաբերում կատարելը.

2)թիթեղագլանային իրերի պարկուճներ, իրաններ և նախապատրաստվածքներ պատրաստելը ավտոմատ և կիսաավտոմատ հաստոցներով.

3)էլեկտրոդների պատվածքի համար ծածկաշերտ պատրաստելը, էլեկտրոդներ ծածկապատելը և դրանք վառարաններով ջերմամշակելը.

4)մետաղացանցեր, ներքնակներ, նստոցներ և փափուկ կահույքի այլ բաղադրամասեր հյուսելը.

5)փոխակրիչների ժապավեններ, մալուխային և ավտոմոբիլային հիմնակմախքների համար ցանցեր պատրաստելը.

6)շղթաների կիսաօղակները մամլիչներով ճկելը.

7)մետաղական ճոպաններ և շղթաներ փորձարկելը՝ ըստ խզման.

8)տեխնիկական պայմաններին պատրաստի արտադրատեսակների համապատասխանությունը վերահսկելը և դրանք ընդունելը.

9)կիրառվող սարքավորումները կարգաբերելը և կարգավորելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ավտոմատագործ՝ ասեղապլատինային իրերի.

2)հսկիչ՝ ասեղապլատինային իրերի.

3)կարգաբերող՝ ասեղնային արտադրության սարքավորումների.

4)հաստոցավար՝ թիթեղագլանային սարքավորման.

5)բրիկետավորող.

6)էլեկտրոդավորող.

7)հսկիչ՝ էլեկտրոդային արտադրության.

8)պատրաստող՝ ժապավենների և մետաղացանցերի.

9)շղթայագործ.

10)փորձարկող՝ մետաղական շղթաների և ճոպանի.

11)կարգաբերող՝ մետաղական ճոպանների, ցանցերի, զսպանակների, խոզանակների և շղթաների արտադրության սարքավորումների.

12)սրող՝ ասեղնապլատինային իրերի:

56. ԵՆԹԱԽՈՒՄԲ 73. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԶԲԱՂՎԱԾ ՃՇԳՐԻՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՄԲ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Ճշգրիտ գործիքների և սարքերի պատրաստմամբ, գեղարվեստական արհեստների ու գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրություններում զբաղված բանվորները, պոլիգրաֆիական արտադրության բանվորները արտադրում և նորոգում են ճշգրիտ գործիքներ, երաժշտական գործիքներ, տարբեր արտադրատեսակներ, ինչպիսիք են թանկարժեք քարերով զարդերը, թանկարժեք մետաղներից, խեցեղենից պատրաստված արտադրանքը, ճենապակե սպասքը, ապակին, ինչպես նաև փայտից, կտորից, կաշվից և այլ նյութերից պատրաստված՝ժողովրդական արհեստների գեղարվեստական իրերը, կատարում են տպագրական և կազմարարական աշխատանքներ:

2.Աշխատանքը կատարվում է ձեռքով՝ առանց մեքենաների և մեխանիզմների կամ մեքենաներով ու մեխանիզմներով, որոնք օգտագործվում են ֆիզիկական ջանքերը նվազեցնելու և որոշակի խնդիրների լուծման համար պահանջվող ժամանակը կրճատելու, ինչպես նաև թողարկվող արտադրանքի որակը բարելավելու համար: Այս ենթախմբի բանվորների պարտականությունները պահանջում են ունենալ արտադրական գործընթացի կազմակերպման գիտելիքներ, իմանալ կիրառվող մեքենաների ու մեխանիզմների, օգտագործվող նյութերի ու գործիքների գործողության սկզբունքները, հատկությունները և վերջնական արդյունքի նշանակությունը:

3.Սույն ենթախմբի աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են՝ նավագնացության, օդերևութաբանական, օպտիկական, ճշգրիտ գործիքներ ու սարքավորումներ արտադրելը և նորոգելը. երաժշտական գործիքներ պատրաստելը և նորոգելը. թանկարժեք քարերից զարդեր ու արժեքավոր մետաղներից սպասքի առարկաներ պատրաստելը. կավե իրեր, ճենապակե սպասք, խեցեղեն և ապակեղեն պատրաստելը. տարբեր իրեր նկարազարդելն ու զարդարելը. մետաղից, փայտից, մորթուց, կաշվից, ոսկորից, մանածագործվածքից և այլ նյութերից գեղարվեստական արհեստների ստեղծագործություններ պատրաստելը. տառաշար շարելը, տպագրական տառամայր (մատրիցա) պատրաստելը, հրատարակություններ տպագրելը և դրանք կազմելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 731. Բանվորներ՝ մետաղի և համանման այլ նյութերի վրա ճշգրիտ աշխատանքների.**

2)**Փոքր խումբ 732. Բրուտներ, մամլողներ, կաղապարողներ՝ ապակուց, խեցուց, ճենապակուց և այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների, բանվորներ՝ հարակից մասնագիտությունների.**

4)**Փոքր խումբ 733. Բանվորներ՝ գեղարվեստական արհեստների և գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրությունների, բանվորներ՝ մետաղից, փայտից, մանածագործվածքից և այլ նյութերից արտադրատեսակների պատրաստման և վերականգնման.**

5)**Փոքր խումբ 734. Բանվորներ՝ գրահրատարակչական արտադրության:**

57. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 731. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄԵՏԱՂԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՎՐԱ ՃՇԳՐԻՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Մետաղի և համանման այլ նյութերի վրա ճշգրիտ աշխատանքներ կատարող բանվորները պատրաստում և նորոգում են ճշգրիտ գործիքներ, երաժշտական գործիքներ, թանկարժեք քարերից զարդեր, տնային գործածության իրեր և գեղարվեստական արհեստների արտադրատեսակներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ մեխանիկական ժամացույցներ, նավագնացության, օդերևութաբանության, օպտիկայի, վիրաբուժության, ատամնաբուժության, օրթոպեդիկ և այլ ճշգրիտ գործիքներ ու սարքավորումներ պատրաստելը և նորոգելը. երաժշտական գործիքներ պատրաստելը և նորոգելը. թանկարժեք քարեր հղկելը, տեղադրելը, ինչպես նաև թանկարժեք քարերից իրեր ու թանկարժեք մետաղյա սպասք, գեղարվեստական արհեստների արտադրատեսակներ պատրաստելը և նորոգելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7311. Բանվորներ՝ ճշգրիտ գործիքների և սարքերի պատրաստման և նորոգման.**

2)**Ստորին խումբ 7312. Պատրաստողներ, լարողներ և վերականգնողներ՝ երաժշտական գործիքների.**

3)**Ստորին խումբ 7313. Բանվորներ՝ թանկարժեք մետաղներից և քարերից ոսկերչական զարդերի պատրաստման և վերականգնման, ինչպես նաև ժողովրդական արհեստների գեղարվեստական իրերի պատրաստման:**

58. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7311. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՃՇԳՐԻՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ

1.Ճշգրիտ գործիքների և սարքերի պատրաստման և նորոգման բանվորները պատրաստում և նորոգում են ձեռքի, պատի, գրպանի և սեղանի մեխանիկական ժամացույցներ, նավագնացության, օդերևութաբանության, օպտիկայի, վիրաբուժության, ատամնաբուժության, օրթոպեդիկ և այլ ճշգրիտ գործիքներ ու սարքավորումներ, կատարում են պատրաստված իրերի վերահսկողություն, սպասարկում, փորձարկում և կարգաբերում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ձեռքի, պատի, գրպանի ու սեղանի մեխանիկական ժամացույցներ պատրաստելը, կարգավորելը և նորոգելը.

2)ժամացույցների մանրամասերի մեխանիկական մշակում կատարելը և դրանց վրա պարույրներ փորագրելը.

3)տեխնիկական քարեր ողորկելը և գայլիկոնելը.

4)վիրաբուժական գործիքներ և այլ բժշկական սարքավորումներ պատրաստելը, հավաքելը ու նորոգելը.

5)վիրաբուժական գործիքների մանրամասերի չափաբերման ճշտությունը հսկելը, դրանք սրելը.

6)նավագնացության և օդերևութաբանական գործիքներ ու սարքավորումներ պատրաստելը, կարգավորելը և նորոգելը.

7)օպտիկական սարքեր պատրաստելը, կարգավորելը և նորոգելը.

8)բժշկական, օրթոպեդիկ և ատամնաբուժական հարմարանքներ ու պրոթեզներ պատրաստելը և նորոգելը.

9)իրերի մեխանիկական մշակումից և հավաքումից հետո դրանք հսկելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող՝ ժամացույցների.

2)ատամնաողորկող՝ ժամացույցների մանրամասերի.

3)ատամնաֆրեզող՝ ժամացույցների մանրամասերի.

4)պարուրակող՝ ժամացույցների մանրամասերի.

5)ողորկող՝ տեխնիկական քարերի.

6)գայլիկոնող՝ տեխնիկական քարերի.

7)հսկիչ՝ ժամացույցի արտադրության.

8)կարգաբերող՝ հավաքման ավտոմատների, կիսաավտոմատների և ավտոմատ գծերի.

9)հավաքող՝ վիրաբուժական գործիքների և սարքերի.

10)սրող՝ բժշկական գործիքների.

11)հսկիչ՝ բժշկական սարքավորումների և իրերի.

12)մեքենագետ՝ պրոթեզաօրթոպեդիկ իրերի.

13)էլեկտրամեքենագետ՝ բժշկական սարքավորանքի նորոգման և սպասարկման.

14)էլեկտրամեքենագետ՝ բժշկական օպտիկական սարքերի նորոգման և սպասարկման.

15)էլեկտրամեքենագետ՝ էլեկտրոնային բժշկական սարքերի նորոգման և սպասարկման.

16)օպտիկ- մեքենագետ.

17)հավաքող՝ քվանտային սարքերի.

18)ճշտադրող՝ մանրամասերի և սարքերի:

59. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7312. ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ, ԼԱՐՈՂՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐ՝ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

1.Երաժշտական գործիքներ պատրաստողները, լարողներն ու վերականգնողները ձեռքով կամ մեխանիկական գործիքներով պատրաստում, նորոգում, կարգավորում և լարում են ստեղնավոր, լարային, աղեղնավոր, կսմիթահար, լեզվակավոր, փողային և հարվածային գործիքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)երաժշտական գործիքների մանրամասեր ու հանգույցներ հավաքելը և մոնտաժելը՝ գործիքները կարգաբերելով և ձայնը կարգավորելով՝ մինչև որոշակի տոնայնության և հնչերանգի հասնելը, երաժշտական գործիքների նվագի որակն ստուգելով և հավաքման գործընթացում մանրամասեր փոխարինելով, փոքր թերություններ վերացնելով.

2)երաժշտական գործիքներ լարելն ու կարգավորելը և դրանց լարումն ստուգելը՝ առանձին երաժշտական ստեղծագործություններ կատարելու և լսելու միջոցով.

3)լարման ճշտության վրա ազդող թերություններ բացահայտելը և վերացնելը.

4)նորոգման կամ վերականգնման հանձնվող երաժշտական գործիքներ զննելը, նորոգման կամ վերականգնման ձևը և տեսակը որոշելը.

5)երաժշտական գործիքներ քանդելը, վերականգնման ենթակա հանգույցների գծագրեր կատարելը, դրան պատրաստելը.

6)նորոգումից կամ վերականգնումից հետո երաժշտական գործիքները հավաքելը, դրանց հնչողությունն ստուգելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող-մոնտաժող՝ երաժշտական գործիքների.

2)լարող՝ երաժշտական գործիքների.

3)նորոգող՝ երաժշտական գործիքների:

60. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7313. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ԵՎ ՔԱՐԵՐԻՑ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՄԲ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՄԲ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1.Թանկարժեք մետաղներից և քարերից ոսկերչական զարդերի պատրաստմամբ և վերականգնմամբ, ինչպես նաև ժողովրդական արհեստների ավանդույթներով բարձրարժեք գեղարվեստական արտադրատեսակների պատրաստմամբ (լաքային մանրանկար, գեղարվեստական որմնանկարչություն մետաղի և խեցեղենի վրա) զբաղված բանվորները թանկարժեք մետաղներից ու քարերից պատրաստում և նորոգում են ոսկերչական ու գեղարվեստական իրեր, կատարում են փորագրման և նրբարվեստ աշխատանքներ, երեսակում են ալմաստները, ամրակցում են թանկարժեք քարեր, նորոգում են ոսկերչական և գեղարվեստական իրեր, կատարում են մետաղից, փայտից և խեցեղենից պատրաստված իրերի գեղարվեստական որմնանկարչություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թանկարժեք մետաղներից ու քարերից ոսկերչական և գեղարվեստական իրեր պատրաստելը՝ փորագրելով և նրբարվեստ աշխատանքներ կատարելով.

2)գունավոր մետաղներից զարդեր և այլ իրեր ձեռքով ձուլելը.

3)ոսկերչական զարդեր՝ մատանիներ, կրծքազարդեր, ապարանջաններ պատրաստելը.

4)թանկարժեք քարեր հղկելը և երեսակելը, դրանք ոսկերչական իրերի վրա տեղադրելը.

5)ոսկերչական և գեղարվեստական իրեր նորոգելը.

6)թանկարժեք մետաղներից սպասք պատրաստելը և նորոգելը.

7)թանկարժեք մետաղներ գլոցելը և կռելը.

8)ոսկերչական զարդերի և թանկարժեք մետաղից պատրաստված սպասքի վրա փորագրություններ կատարելը.

9)փայտից բարձրարժեք արտադրատեսակներ հավաքելը, դրանք փայլեցնելը և տարբեր գույներով երանգավորելը.

10)մետաղից, փայտից և խեցեղենից պատրաստված իրերի գեղարվեստական որմնանկարչությունը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.
12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ոսկերիչ.
2)երեսակող՝ ոսկերչական և գեղարվեստական իրերի ագույցներ.
3)երեսակող՝ ալմաստների.
4)մշակող՝ փայտե գեղարվեստական իրերի.
5)արծնապատող՝ ոսկերչական իրերի.
6)ոսկերիչ-մանրանկարիչ:

61. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 732. ԲՐՈՒՏՆԵՐ, ՄԱՄԼՈՂՆԵՐ, ԿԱՂԱՊԱՐՈՂՆԵՐ՝ ԱՊԱԿՈՒՑ, ԽԵՑՈՒՑ, ՃԵՆԱՊԱԿՈՒՑ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Ապակուց, խեցուց, ճենապակուց և այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների բրուտները, մամլողները, կաղապարողներն ու հարակից մասնագիտությունների բանվորները արտադրում են աղյուսներ, կղմինդրներ, կավե իրեր, ճենապակե սպասք, ապակի, կատարում են փորագրություն և ապակե իրերի վրա փորագրում են նախշեր, նկարազարդում և զարդարում են ապակիներ, խեցեղեն և այլ իրեր:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. բրուտագործական իրեր, ճենապակյա սպասք, աղյուսներ, կղմինդր, հղկանյութային շրջանակ, ապակե իրեր պատրաստելը. սպասարկվող սարքավորումներ կարգավորելը և ենթակարգաբերելը. ապակե իրեր փորագրելը և դրանց վրա նախշեր խածատելը. ապակե և կերամիկական իրեր զարդարելը, ներկով և այդօրինակ այլ նյութերով տարբեր իրերի զարդարական ներկում կատարելը կամ գովազդային և այլ ցուցանակների վրա տառեր կամ նախշեր գծագրելը. ապակե իրերի քիմիական ողորկում և խածատում կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7321. Բրուտներ, մամլողներ, կաղապարողներ՝ ճենապակյա և հղկանյութային արտադրատեսակների.**

2)**Ստորին խումբ 7322. Կաղապարողներ, մամլողներ, հղկողներ, ողորկողներ և փչողներ՝ ապակի.**

3)**Ստորին խումբ 7323. Փորագրողներ և խածատողներ՝ ապակու և այլ նյութերի վրա.**

4)**Ստորին խումբ 7324. Նկարազարդողներ՝ ապակու և խեցեղենի, նկարիչներ՝ զարդարական որմնանկարչության, նկարիչ – ձևավորողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների:**

62. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7321. ԲՐՈՒՏՆԵՐ, ՄԱՄԼՈՂՆԵՐ, ԿԱՂԱՊԱՐՈՂՆԵՐ՝ ՃԵՆԱՊԱԿՅԱ ԵՎ ՀՂԿԱՆՅՈՒԹԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ

1.Ճենապակյա և հղկանյութային արտադրատեսակների բրուտները, մամլողները, կաղապարողները ձեռքով կամ հաստոցներով պատրաստում են կավե իրեր, ճենապակե սպասք, աղյուսներ, կղմինդր և հղկանյութային շրջանակներ, կարգաբերում օգտագործվող հաստոցները և կատարում դրանց պարզագույն վերանորոգումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կավե և ճենապակե իրեր պատրաստելը.

2)կավե կամ գիպսե կաղապարներ պատրաստելը.

3)կավագործական շրջանակով սպասք կաղապարելը՝ ձեռքով կամ ներքին և արտաքին կաղապարող սարքեր ու գործիքներ օգտագործելով.

4)կիսահեղուկ կավը գիպսե կաղապարներ լցնելու միջոցով իրեր պատրաստելը.

5)ձեռքով հատուկ ձևի աղյուս և կղմինդր պատրաստելը.

6)պլաստիկ կավը կաղապարներում ձեռքով մամլելու միջոցով սպասք պատրաստելը.

7)պտուտակավոր կամ ջրաբաշխական (հիդրավլիկ) մամլիչ կառավարելը՝ կավե փոշուց արտադրանք պատրաստելու համար.

8)խոնավ կավի արտաճզմման մեքենա կառավարելը՝ հետագա մշակման համար.

9)հղկանյութային խառնուրդը կաղապարելու և մամլելու ճանապարհով հղկանյութային շրջանակներ պատրաստելը.

10)հաստոցներ, կիսաավտոմատներ, մամլիչներ և հարմարանքներ կարգավորելն ու փոքր նորոգում կատարելը.

11)շինարարական և էլեկտրակերամիկական պատրաստվածքներ կաղապարելը և մամլելը պլաստիկ կավից կամ կավի փոշուց.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բրուտ.

2)մամլող՝ շինարարական կերամիկական իրերի.

3)կաղապարող՝ շինարարական կերամիկական իրերի.

4)մամլող՝ էլեկտրակերամիկական իրերի.

5)կաղապարող՝ էլեկտրակերամիկական իրերի.

6)կաղապարող՝ կավե և հախճապակե սպասքի.

7)կաղապարող՝ հղկանյութերի.

8)լցակաղապարող՝ կավե սպասքի և հախճապակու:

63. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7322. ԿԱՂԱՊԱՐՈՂՆԵՐ, ՄԱՄԼՈՂՆԵՐ, ՀՂԿՈՂՆԵՐ, ՈՂՈՐԿՈՂՆԵՐ ԵՎ ՓՉՈՂՆԵՐ՝ ԱՊԱԿԻ

1.Կաղապարողները, մամլողները, հղկողները, ողորկողները և ապակի փչողները փչամաքրում, կաղապարում, մամլում և գլդոնում են հալված ապակին, երեսակում, հղկում և ողորկում են այն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապակեփչման խողովակի միջոցով հալված ապակի կաղապարելը, ձեռքով կաղապարելը, տաքացնելը և շտկելը.

2)ոսպնյակների նախապատրաստվածքների համար օպտիկական ապակիներ տաքացնելը, կաղապարելը և մամլելը.

3)ոսպնյակների նախապատրաստվածքներ հղկելը և ողորկելը.

4)ապակիների շեղատված եզրեր հղկելը և մշակելը.

5)ձեռքի գործիքների օգնությամբ թերթավոր ապակիներ կտրելը, օպտիկական ապակիների բլոկներից հատվածակողմեր (պրիզմաներ) և այլ երկրաչափական ձևերի իրեր սղոցելը.

6)մամլման և կաղապարման ռեժիմներ ընտրելը և պահպանելը.

7)ապակեփչման եղանակով ապակու տարբեր տեսակներից մանրամասեր և իրեր պատրաստելը հրածորանի բոցի վրա.

8)սպասարկվող սարքավորանքը կարգավորելը և ենթակարգաբերելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մամլող՝ տաք ապակու.

2)կաղապարող՝ ապակյա մանրամասերի.

3)հղկող՝ ապակու և ապակյա իրերի.

4)ողորկող՝ ապակու և ապակյա իրերի.

5)մամլող՝ ապակեկապոցների.

6)մամլող՝ ապակեփոշե իրերի.

7)մամլող՝ օպտիկական ապակյա իրերի.

8)փչող՝ ապակու.

9)կտրող՝ ապակու.

10)վերջնամշակող՝ ապակու.

11)շրջատաշող՝ ապակու:

64. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7323. ՓՈՐԱԳՐՈՂՆԵՐ ԵՎ ԽԱԾԱՏՈՂՆԵՐ՝ ԱՊԱԿՈՒ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ

1.Փորագրողները և խածատողները ապակյա և այլ նյութերից պատրաստված իրերի վրա փորագրում և խածատում են նախշեր և նկարներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապակուց, մետաղից, պլաստմասսայից և այլ նյութերից պատրաստված իրերի ու մանրամասերի վրա ձեռքով կամ հաստոցներով նախշեր, նկարներ փորագրելը.

2)հատուկ գործիք պատրաստելը, դա խածատելը և ջերմամշակելը.

3)ձեռքով և խածատելով նախշակաղապարներ, խարաններ, դրոշմակներ, նշաններ ու թվանշաններ պատրաստելը.

4)ապակե իրերի վրա զարդարական նախշեր, տրամաչափիչ գծանշումներ և այլ պատկերներ խածատելը, դրանք քիմիական եղանակով ողորկելը.

5)խածատման լուծույթներ պատրաստելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կտրող՝ բյուրեղապակու.

2)փորագրող.

3)փորագրող՝ ապակու.

4)խածատող՝ ապակու:

65. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7324. ՆԿԱՐԱԶԱՐԴՈՂՆԵՐ՝ ԱՊԱԿՈՒ ԵՎ ԽԵՑԵՂԵՆԻ, ՆԿԱՐԻՉՆԵՐ՝ ԶԱՐԴԱՐԱԿԱՆ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ, ՆԿԱՐԻՉ- ՁԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Ապակի և խեցեղեն նկարազարդողները, զարդարական որմնանկարչության նկարիչները, նկարիչ–ձևավորողները և հարակից մասնագետները զարդարում են փայտե, մետաղե, մանածագործական, ապակե, խեցե և այլ նյութերից պատրաստված իրեր, գովազդային և այլ ցուցանակների համար կատարում են ուրվագծեր, նշում և նկարում են տառեր ու նախշեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վրձնի կամ փոշեցրիչի օգնությամբ իրեր նախշանկարելը կամ նախշակաղապարի, ռետինե դրոշմի և այլ միջոցների օգնությամբ իրերի վրա նախշեր փոխադրելը.

2)գեղանկարչական նպատակներով իրերի վրա ներկեր, ջնարակ, արծն, խածատանյութ, լաք կամ այդօրինակ հեղուկներ քսելը՝ փոշեցրելու կամ դրանց մեջ իրերն ընկղմելու միջոցով.

3)ապակի սնդկազոդելը.

4)գովազդային և այլ ցուցանակների պատրաստման համար տառեր ու նախշեր գծանշելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)գեղանկարիչ.

2)արծնապատող՝ ապակու.

3)նկարիչ՝ նախշազարդող.

4)նկարիչ՝ մետաղի զարդարական նկարազարդման.

5)նկարիչ՝ փայտի նկարազարդման.

6)նկարիչ՝ արծնի նկարազարդման.

է)կատարող՝ գեղարվեստական - ձևավորման աշխատանքների:

66. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 733. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄԵՏԱՂԻՑ, ՓԱՅՏԻՑ, ՄԱՆԱԾԱԳՈՐԾՎԱԾՔԻՑ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

1.Գեղարվեստական արհեստների և գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրությունների բանվորները, մետաղից, փայտից, մանածագործվածքից և այլ նյութերից արտադրատեսակների պատրաստմամբ և վերականգնմամբ զբաղված բանվորները անձնական կարիքների համար կամ սպառման նպատակով փայտից, ծառարմատներից, կեչակեղևից և այդօրինակ նյութերից պատրաստում են

արտադրատեսակներ, հավաքում և հարդարում են մանածագործվածքից, կաշվից, մորթուց պատրաստված գեղարվեստական արտադրատեսակներ, գեղարվեստական արտադրատեսակներ են պատրաստում մետաղից, ոսկորից, եղջյուրից, սաթից և այդօրինակ նյութերից, պատրաստում են ճարտարապետական մանրամասերի և քանդակագործական ստեղծագործությունների մանրակերտներ, վերականգնում են գեղարվեստական արհեստների ստեղծագործություններ և արտադրատեսակներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ժողովրդական գեղարվեստական արհեստների արտադրատեսակների համար նյութեր նախապատրաստելն ու մշակելը և այդ արտադրատեսակները փայտից, ծառարմատներից, կեչակեղևից, մանածագործվածքից, կաշվից, մորթուց, մետաղից, ոսկորից, եղջյուրից, սաթից պատրաստելը. ճարտարապետական մանրամասերի և քանդակագործական ստեղծագործությունների մանրակերտներ պատրաստելը. ճարտարապետական մանրամասեր և քանդակագործական ստեղծագործություններ փառապատելն ու երանգավորելը և դրանք իրենց տեղերում տեղադրելը. ժողովրդական գեղարվեստական արհեստների ստեղծագործություններ և արտադրատեսակներ վերականգնելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7331. Պատրաստողներ և վերականգնողներ՝ փայտից, ծառարմատներից, կեչակեղևից և այդօրինակ նյութերից պատրաստված գեղարվեստական իրերի.**

2)**Ստորին խումբ 7332. Պատրաստողներ և վերականգնողներ՝ մանածագործվածքից, կաշվից, մորթուց պատրաստված գեղարվեստական իրերի.**

3)**Ստորին խումբ 7333. Պատրաստողներ և վերականգնողներ՝ մետաղից (բացառությամբ թանկարժեք մետաղների) պատրաստված գեղարվեստական իրերի.**

4)**Ստորին խումբ 7334. Պատրաստողներ և վերականգնողներ՝ ոսկորից, եղջյուրից, սաթից և այդօրինակ նյութերից պատրաստված գեղարվեստական իրերի.**

5)**Ստորին խումբ 7335. Պատրաստողներ և վերականգնողներ՝ բնական քարերից (գրանիտ, մարմար և այլն) պատրաստված գեղարվեստական իրերի:**

67. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7331. ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐ՝ ՓԱՅՏԻՑ, ԾԱՌԱՐՄԱՏՆԵՐԻՑ, ԿԵՉԱԿԵՂԵՎԻՑ ԵՎ ԱՅԴՕՐԻՆԱԿ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ

1.Փայտից, ծառարմատներից, կեչակեղևից և այդօրինակ նյութերից գեղարվեստական իրեր պատրաստողները և վերականգնողները նախապատրաստում և մշակում են փայտ, կոճղափայտ, կեչակեղև, ծառարմատներ, դրանցից պատրաստում են գեղարվեստական արտադրատեսակներ, վերականգնում դրանք:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)փայտ, կոճղափայտ, կեչակեղև, ծառարմատներ նախապատրաստելը, փայտանյութ ընտրելը՝ ըստ կազմվածքի.

2)կոճղափայտ և ծառարմատներ մշակելը, կոճղեր, ծառարմատներ շոգեմշակելը՝ խառնուկների հեռացման համար, կեչակեղև մաքրելը, ուղղելը, չորացնելը և ձևելը.

3)փայտից գեղարվեստական արտադրատեսակներ պատրաստելը՝ դրանց վրա փորագրություն կատարելով.

4)կեչակեղևից և ծառարմատներից գեղարվեստական արտադրատեսակներ պատրաստելը՝ կեչակեղևի վրա փորագրություն կատարելով.

5)փայտից, ծառարմատներից կեչակեղևից և համանման այլ նյութերից գեղարվեստական կոմպոզիցիաներ ձևավորելը՝ օգտագործելով կավե, մետաղե և այլ նյութերից պատրաստված իրեր.

6)գեղարվեստական արտադրատեսակներ վերականգնելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)պատրաստող՝ փայտից գեղարվեստական արտադրատեսակների.

2)պատրաստող՝ կեչակեղևից գեղարվեստական արտադրատեսակների.

3)նախապատրաստող՝ փայտից, կեչակեղևից, ծառարմատներից գեղարվեստական արտադրատեսակների համար նյութերի.

4)շոգեհանող՝ ծառարմատների:

68. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7332. ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐ՝ ՄԱՆԱԾԱԳՈՐԾՎԱԾՔԻՑ, ԿԱՇՎԻՑ, ՄՈՐԹՈՒՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ

1.Մանածագործվածքից, կաշվից, մորթուց գեղարվեստական իրեր պատրաստողները և վերականգնողները պատրաստում են մանածագործվածքե, կաշվե, մորթե գեղարվեստական արտադրատեսակներ, դրանց վրա կատարում են գեղարվեստական որմնանկար, ասեղնագործություն, վերականգնում են գեղարվեստական արտադրատեսակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)զարդանկարային և թեմատիկ կոմպոզիցիաների, շենքի ներսակողմի (ինտերիերի), թատերական վարագույրների և այլ նպատակներով օգտագործելու համար մանածագործվածքից գեղարվեստական-զարդարական իրեր պատրաստելը.

2)կաշվե գեղարվեստական արտադրատեսակներ պատրաստելը՝ նկարներ և զարդանախշեր դրոշմադրվագելով, դրանց ներկելով.

3)ձևանմուշներ պատրաստելը և կաշի ու մորթի ձևելը, կաշվից և մորթուց գեղարվեստական արտադրատեսակներ հավաքելը ու դրանք մեքենաներով կցակարելը, կաշվից և մորթուց գեղարվեստական արտադրատեսակներ հյուսվածապատելը, կաշվից և մորթուց պատրաստված արտադրատեսակների գեղարվեստական ասեղնագործություն կատարելը.

4)մանածագործվածքից, կաշվից, մորթուց պատրաստված գեղարվեստական արտադրատեսակներ վերականգնելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)պատրաստող՝ գեղարվեստական նկարազարդմամբ մանածագործվածքե արտադրատեսակների.

2)պատրաստող՝ կաշվե գեղարվեստական արտադրատեսակների.

3)հավաքող՝ կաշվե և մորթե արտադրատեսակների.

4)ասեղնագործող՝ կաշվի և մորթու արտադրատեսակների.

5)բանվոր-արհեստավոր՝ գորգեր պատրաստող:

69. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7333. ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐ՝ ՄԵՏԱՂԻՑ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ) ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ

1.Մետաղից (բացառությամբ թանկարժեք մետաղների) գեղարվեստական իրեր պատրաստողները և վերականգնողները գեղարվեստական իրեր են պատրաստում մետաղից՝ ժողովրդական գեղարվեստական արհեստների ավանդույթներին համապատասխան, դրանք տեղակայում են, սոսնձում, հարդարում և վերականգնում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մետաղից գեղարվեստական իրեր պատրաստելը՝ դրանց մեջ ժողովրդական ավանդույթները, զարդանկարները և ձևերն արտացոլելով.

2)մետաղի քիմիական-ջերմային մշակում, զոդում, դարբնոցային և ողորկման աշխատանքներ կատարելը.

3)իրեր մոնտաժելը՝ գամվածքի, բույթերի և պարուրակավոր միացքների օգնությամբ, մանրամասեր սոսնձելը, իրեր փորագրելը և դրանք արծնապատելը, սոսինձներ պատրաստելը՝ ըստ տրված բաղադրատոմսերի.

4)գեղարվեստական իրեր վերականգնելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)պատրաստող՝ մետաղյա գեղարվեստական իրերի.

2)սոսնձող՝ մետաղյա իրերի:

70. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7334. ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐ՝ ՈՍԿՈՐԻՑ, ԵՂՋՅՈՒՐԻՑ, ՍԱԹԻՑ ԵՎ ԱՅԴՕՐԻՆԱԿ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ

1.Ոսկորից, եղջյուրից, սաթից և այդօրինակ նյութերից գեղարվեստական իրեր պատրաստողները և վերականգնողները պատրաստում են իրեր ոսկորից, եղջյուրներից, սաթից և այդօրինակ նյութերից՝ ժողովրդական գեղարվեստական արհեստների ավանդույթներին համապատասխան, վերականգնում են դրանք:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սաթ մխելը, սղոցելը և հղկելը՝ դրան ավարտական ձև տալու նպատակով.

2)ժողովրդական ավանդույթներով սաթե գեղարվեստական իրեր պատրաստելը, դրանք երեսարկելը, ողորկելը և փայլեցնելը.

3)սաթե իրեր հավաքելը և դրանք մետաղական մանրամասերով մոնտաժելը.

4)ոսկորից և եղջյուրից պատրաստված գեղարվեստական իրեր մշակելը խառատային, ֆրեզերային, գայլիկոնման հաստոցներով.

5)սնամեջ իրեր պատրաստելը, հաստոցների աշխատանքը կարգավորելը.

6)ոսկորի և եղջյուրի վրա գեղարվեստական փորագրում կատարելը, իրեր մոնտաժելը, հավաքելը, մանրամասեր և հանգույցներ ամրակելը, սոսնձելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)պատրաստող՝ սաթե գեղարվեստական իրերի.

2)հավաքող՝ սաթե իրերի.

3)վերամշակող՝ ոսկորից և եղջյուրից պատրաստված իրերի.

4)փորագրող՝ ոսկորի և եղջյուրի իրերի:

71.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7335. ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐ՝ ԲՆԱԿԱՆ ՔԱՐԵՐԻՑ (ԳՐԱՆԻՏ, ՄԱՐՄԱՐ ԵՎ ԱՅԼՆ) ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ

1.Բնական քարերից (գրանիտ, մարմար և այլն) գեղավեստական իրեր պատրաստողները և վերականգնողները պատրաստում են ճարտարապետական լուծման հուշարձանների մանրակերտներ և տեքստով հուշատախտակների մոդելներ, ծեփում են ճարտարապետական մանրամասերի ծավալային մոդելներ՝ հետագայում դրանք կարծր նյութի վերածելու համար, փառապատում, երանգավորում և տեղադրում են քանդակագործական ստեղծագործություններ ու ճարտարապետական մանրամասեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գիպսից ճարտարապետական լուծման հուշարձանների մանրակերտներ և տեքստով հուշատախտակների մոդելներ պատրաստելը՝ ըստ գծագրերի և ձևանմուշների.

2)ըստ նկարների և ձևանմուշների՝ կավից և պլաստիլինից ճարտարապետական մանրամասերի ծավալային մոդելներ ծեփելը՝ հետագայում դրանք կարծր նյութի վերածելու համար.

3)քանդակագործական ստեղծագործություններ և ճարտարապետական մանրամասեր փառապատելը և երանգավորելը.

4)կոթողային քանդակագործական ստեղծագործությունների սնամեջ ձևերը բետոնե խառնուրդով լցնելը պատվանդանի վրա դրանց կառուցման տեղում, բետոնե խառնուրդ պատրաստելը.

5)քանդակագործական ստեղծագործություններ և ճարտարապետական մանրամասեր տեղադրելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ծեփող՝ քանդակագործական ստեղծագործությունների.

2)մոդելագործ՝ քանդակագործական ստեղծագործությունների.

3)փառապատող:

72. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 734. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Գրահրատարակչական արտադրության բանվորները ձեռքով կամ լուսաշարվածքային և այլ մեքենաներով հավաքում և դասավորում են տառերը, հավաքած տառերից պատրաստում են տպագրական ձուլամայր (մատրիցա), փորագրում են վիմագրական քարեր, տպագրական ձուլամայր, գլանիկ և տպաձևեր, պատրաստում են նախշակաղապարներ, տպագրում են թղթի և այլ նյութերի վրա, կազմում և ձևավորում են գրքեր:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ ձեռքով կամ լուսաշարվածքային և այլ մեքենաներով տառեր շարելը և դասավորելը. հավաքված տառերից տպագրական ձուլամայր պատրաստելը. վիմագրական քարեր, տպագրական ձուլամայր, գլանիկ, դրոշմ և բլոկներ փորագրելը. թուղթը, ներկը և տպագրական շրջանակները տպագրության նախապատրաստելը. թղթի և այլ նյութերի վրա տպագրելը. գրքեր կազմելը և դրանց վերջնական պատրաստման աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7341. Գրաշարներ և տպագրիչներ.**

2)**Ստորին խումբ 7342. Ծավալագրողներ և էլեկտրագրողներ.**

3)**Ստորին խումբ 7343. Փորագրողներ և խածատողներ՝ տպագրական շրջանակների.**

4)**Ստորին խումբ 7344. Լուսանկարիչներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

5)**Ստորին խումբ 7345. Կազմարարներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

6)**Ստորին խումբ 7346. Բանվորներ՝ մետաքսագրության, փայտափորագրման, մետաղագրության, և նախշակաղապարողներ՝ կտորի:**

72. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7341. ԳՐԱՇԱՐՆԵՐ ԵՎ ՏՊԱԳՐԻՉՆԵՐ

1.Գրաշարները և տպագրիչները գրաշարային-տպագրական մեքենաներով հավաքում և դասավորում են տառերը՝ ձեռքով կամ մեքենայի օգնությամբ, բազմագույն տպագրության համար ստանում են փորձնական դրոշմվածքներ, կատարում են տպագրության պատրաստման, շարվածքի հարդարման, տարբեր տեսակի մեքենաներով տպագրման աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տպատառերը՝ ձեռքով, տպագրական դրոշմատիպերը՝ հասարակ մեքենայով հավաքելը.

2)բնօրինակ ձևերից փորձնական դրոշմատիպեր ստանալը՝ գունավոր տպագրության համար.

3)գույնի ընտրության ժամանակ ներկերի բաժնաչափ հաշվարկելը.

4)տարբեր տեսակի մեքենաներ և ավտոմատներ տպագրության պատրաստելը, շարվածքը հարդարելը և տպագրելը.

5)տողաշար մեքենա, մենատիպ և տառաձուլման գրաշարային մեքենա կառավարելը.

6)էջի ձևավորման համար շարվածքը դասավորելը և նյութեր ու նկարազարդման բլոկներ զետեղելը.

7)էջերը տպագրման համար անհրաժեշտ հերթականությամբ դասավորելը.

8)լուսանկարչական տպագրական ձևերի պատրաստման համար տառերը թաղանթի կամ լուսազգայուն թղթի վրա վերարտադրող լուսաշարվածքային մեքենա կառավարելը.

9)սպասարկվող սարքավորանքը կարգավորելը, անսարքությունները վերացնելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)գրաշար՝ ձեռքով.

2)գրաշար՝ մեքենաների.

3)գրաշար՝ շարող-տպող մեքենաների.

4)գրաշար՝ շարող տողակաղապարման մեքենաների.

5)տպագրիչ՝ բարձր տպագրության.

6)տպագրիչ՝ խոր տպագրության.

7)տպագրիչ՝ հարթ տպագրության:

73. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7342. ԾԱՎԱԼԱԳՐՈՂՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԳՐՈՂՆԵՐ

1.Ծավալագրողները և էլեկտրագրողները հավաքված տպատառերից ծավալագրման կամ էլեկտրագրման եղանակով պատրաստում են տպագրական շրջանակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տպագրական համաձուլվածքից և պլաստմասսաներից տպագրական շարվածքի մետաղե կամ ռետինե պատճեններ պատրաստելը.

2)տպագրական տառամայրեր պատրաստելը՝ թղթազանգվածից կամ իրենց վրա տպատառերի հետքեր ունեցող այլ նյութերից պատրաստված կաղապարներում մետաղ լցնելու կամ տառերի արտադրության համար կաղապարների գալվանաստերեոտպման մեթոդով պատրաստված թաղանթները մետաղական ծածկույթով պատելու միջոցով.

3)սպասարկվող սարքավորումների անսարքությունները բացահայտելը և վերացնելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)էլեկտրագրող.

2)ծավալագրող:

74. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7343. ՓՈՐԱԳՐՈՂՆԵՐ ԵՎ ԽԱԾԱՏՈՂՆԵՐ՝ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ

1.Տպագրական շրջանակներ փորագրողները և խածատողները տարբեր մեթոդներով փորագրում են վիմագրական քարեր և տպագրական տառամայրեր, գլանիկներ, դրոշմներ և բլոկներ, ստուգում են տպագրության բոլոր եղանակների համար պատրաստված շրջանակների որակը, խածատում են շրջանակներ և վերախածատման միջոցով վերացնում դրանց թերությունները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վիմագրական քարերի մակերևույթներին վերադրված թաղանթներից նկարներ կտրելը.

2)պողպատե և պղնձե թիթեղների, գլանիկների, դրոշմերի և փայտե, ռետինե ու լինոլեումե բլոկները ձեռքով փորագրելը.

3)մեքենայով մետաղական թիթեղներ և գլանիկներ փորագրելը.

4) մետաղական թիթեղներին վիմագրական քարերից նկարներ փոխադրելը.

5)տպագրական տառամայրերի պատրաստմանն առնչվող բոլոր կամ որոշ պարտականություններ կատարելը՝ լուսափորագրության միջոցով.

6)մետաղական թիթեղները և գլանիկները թթվով խածագծելը և ռետուշելը.

7)տպագրության բոլոր եղանակների համար պատրաստված շրջանակների որակն ստուգելը.

8)խածատման համար լուծույթներ կազմելը՝ ըստ բաղադրատոմսերի.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փորագրող՝ շրջանակների.

2)փորագրող՝ տառաշարի.

3)խածատող՝ խոր տպագրության շրջանակների.

4)լուսափորագրող:

75. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7344 ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Լուսանկարիչները և հարակից զբաղմունքների բանվորները երևակում և մշակում են լուսանկարահանման ժապավենը, պատրաստում են լուսանկարներ և սլայդներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սևանկարներ կամ թափանցիկ լուսանկարներ ստանալու համար սև-սպիտակ և գունավոր լուսաժապավեններ և թիթեղներ երևակելը.

2)սև-սպիտակ կամ գունավոր լուսանկարներ տպելը.

3)տպագրական սարքեր ղեկավարելը և աշխատանքի ժամանակ փոքր անսարքություններ վերացնելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.
5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)երևակող՝ սև-սպիտակ կամ գունավոր ժապավենների.
2)տպող՝ սև-սպիտակ կամ գունավոր լուսանկարների:

76. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7345. ԿԱԶՄԱՐԱՐՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Կազմարարները և հարակից զբաղմունքների բանվորները կազմում են տպագրական հրատարակություններ, գրքերի կազմերի վրա դրոշմատպում մակագրություններ ու նկարներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)տպագրական հրատարակություններ և ազդանմուշային օրինակներ կազմելը.
2)ձևավորման տարրեր ներսոսնձելը և սոսնձելը, թերթեր ծալակցելը.
3)տպագրական հրատարակություններ կազմելու համար նյութեր նախապատրաստելը, դրանք ձևելը և կազմակողերի համար կտրելը, տարբեր նյութերից կազմակողեր պատրաստելը, կազմակողի մեջ բլոկ կազմադրելը և մամլելը.
4)գրքերի կազմակողերին մակագրություններ ու նկարներ դրոշմատպելը.
5)դրոշմատպման որակն ստուգելը.
6)կազմարարական մեքենաներ կարգաբերելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)կազմարար.
2) տպագրիչ-դրոշմատպիչ:

77. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7346. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄԵՏԱՔՍԱԳՐՈՒԹՅԱՆ, ՓԱՅՏԱՓՈՐԱԳՐՄԱՆ, ՄԵՏԱՂԱԳՐՈՒԹՅԱՆ, ԵՎ ՆԱԽՇԱԿԱՂԱՊԱՐՈՂՆԵՐ՝ ԿՏՈՐԻ

1.Մետաքսագրության, փայտափորագրման, մետաղագրության բանվորները և կտոր նախշակաղապարողները կտրում են ձևաններ՝ մետաքսագրության մեջ օգտագործելու, մետաքսե նախշակաղապարների, ռետինե և այլ նյութերից պատրաստված բլոկների միջոցով թղթի, մետաղի, մանածագործվածքի և այլ նյութերի վրա տպագրելու համար, կամ փորագրում են տպագրական գլանիկներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)մետաքսագրության համար ձևաններ կտրելը.
2)մետաքսագրության մեթոդով թղթի, մետաղի, մանածագործվածքի և այլ նյութերի վրա տպագրելը.
3)գործվածքի կամ պաստառի վրա նախշեր ու նկարներ տպելը՝ փորագրման բլոկներով կամ փորագրման գլանիկներով սարքավորված մեքենաներով.
4)այլ աշխատողներին ղեկավարելը.
5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)եզրահատող՝ նախշակաղապարի.
2)նախշակաղապարող.
3)տպագրող՝ մետաղագրական դրոշմվածքների.
4)տպագրող՝ մետաքսատպության.
5)տպագրող՝ գործվածքի:

78. ԵՆԹԱԽՈՒՄԲ 74. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Արդյունաբերական կազմակերպությունների այլ զբաղմունքների բանվորներն առնչվում են գյուղատնտեսական հումքը, ինչպես նաև ձկնորսության ու ձկնաբուծական արտադրանքները սննդամթերքի և այլ մթերքների վերածելու համար դրանք մշակելուն ու վերամշակելուն, փայտից, մանածագործվածքից, մորթուց, կաշվից և այդօրինակ նյութերից պատրաստված իրերի արտադրությանն ու նորոգմանը, բետոնե և ասբեստացեմենտային

շինվածքների, կապակցող նյութերից ու որմնանյութերից իրեր արտադրելուն, պատրաստում են ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ նյութեր, խաղալիքներ և ուսումնադիտողական պիտույքներ:

2.Աշխատանքը կատարվում է ձեռքով՝ առանց մեքենաների և մեխանիզմների, կամ մեքենաներով ու մեխանիզմներով, որոնք օգտագործվում են ֆիզիկական ջանքերը նվազեցնելու և որոշակի խնդիրների լուծման համար պահանջվող ժամանակը կրճատելու, ինչպես նաև թողարկվող արտադրանքի որակը բարելավելու համար: Այս ենթախմբի բանվորների պարտականությունները պահանջում են ունենալ արտադրական գործընթացի կազմակերպման գիտելիքներ, իմանալ կիրառվող մեքենաների, մեխանիզմների և գործիքների գործողության սկզբունքները, օգտագործվող նյութերի հատկությունները և վերջնական արդյունքի նշանակությունը:

3.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. միս, ձուկ, հացահատիկ, միրգ, բանջարեղեն, այդօրինակ այլ սննդամթերք ու ծխախոտ մշակելը և վերամշակելը. սննդամթերք ու խմիչքներ համտեսելը և տեսակայնություն որոշելը. բնական թել մշակելն ու վերամշակելը. կաշի և մորթի մշակելը և վերամշակելը. կահույք և փայտե իրեր պատրաստելն ու նորոգելը, հետագա օգտագործման համար կաշի և մորթի մշակելը. մանածագործվածքային իրեր, հագուստ, գլխարկներ, կոշիկ և այդօրինակ իրեր պատրաստելը և նորոգելը. ասբեստացեմենտային շինվածքներ պատրաստելը. կապակցող նյութեր և որմնանյութեր, ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ նյութեր պատրաստելը. խաղալիքներ նկարելը, ձևավորելը և պատրաստելը, ուսումնադիտողական պիտույքներ մոդելավորելը և նմուշներ նախապատրաստելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 741. Բանվորներ՝ սննդի արդյունաբերության.**

2)**Փոքր խումբ 742. Բանվորներ՝ փայտամշակման արդյունաբերության.**

3)**Փոքր խումբ 743. Բանվորներ՝ մանածագործական արդյունաբերության.**

4)**Փոքր խումբ 744. Մորթեգործներ, կաշեգործներ և կոշկարներ.**

5)**Փոքր խումբ 745. Բանվորներ՝ շինարարական նյութերի արդյունաբերության.**

6)**Փոքր խումբ 746. Բանվորներ՝ խաղալիքների և ուսումնադիտողական պիտույքների արտադրության:**

79. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 741. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Սննդի արդյունաբերության բանվորները մորթում են անասուններ, թռչուններ, որսում են ձկներ, մշակում և նախապատրաստում դրանք՝ մարդկանց ու կենդանիների սպառման համար, արտադրում են հաց, շաքար, հրուշակեղեն, խմորեղեն, կաթնամթերք, ոգելից և ոչ ոգելից խմիչքներ, պահածոներ և այլ սննդամթերքներ, պատրաստում են ծխախոտ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. անասուններ և թռչուներ մորթելը. ձուկ որսալը. անասունների, թռչնի, ձկան միս մշակելը և դրանից մթերքներ, այդ թվում՝ պահածոներ արտադրելը. հաց, հացաբուլկեղեն, հրուշակեղեն, շաքար, ծխախոտ արտադրելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքների ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7411. Բանվորներ՝ մսի, ձկան և պահածոների արդյունաբերության.**

2)**Ստորին խումբ 7412. Բանվորներ՝ հացաթխման, մակարոնեղենի, հրուշակեղենի և շաքարի արտադրության.**

3)**Ստորին խումբ 7413. Բանվորներ՝ կաթի և կաթնամթերքների արտադրության.**

4)**Ստորին խումբ 7414. Բանվորներ՝ ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտադրության.**

5)**Ստորին խումբ 7415. Համտեսողներ, որոշողներ՝ սննդամթերքի և խմիչքների տեսակայնություն.**

6)**Ստորին խումբ 7416. Բանվորներ՝ ծխախոտի և խմորման արտադրության:**

80. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7411. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄՍԻ, ՁԿԱՆ ԵՎ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Մսի, ձկան և պահածոների արդյունաբերության բանվորները մորթում են անասուններ, թռչուններ, մշակում և վերամշակում, կենդանիների մսից պատրաստում են կիսապատրաստվածքներ, երշիկների, կոտլետների և պահածոների պատրաստման համար

պատրաստում են ֆարշ (ծեծած, աղացած կամ մանրացված միս), մշակում ձկներ, աղ դնում և պահածոյացնում, ձկից և ծովային մթերքներից պատրաստում են կիսապատրաստվածքներ, պահածոյացման համար հումք են նախապատրաստում մսից, մրգերից, բանջարեղենից, հատապտուղներից և պահածոյացնում դրանք:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կենդանիներ և թռչուններ մորթելը.

2)միս մշակելը, կտրատելը և առանձնացնելը՝ վաճառքի կամ հետագա վերամշակման համար.

3)կտրող, խառնող և կաղապարող հասարակ մեքենաներով երշիկի և այդօրինակ մթերքների պատրաստման համար բաղադրամասեր նախապատրաստելը.

4)ձուկ և ձկնամթերքներ մշակելը ու հանձնելը.

5)ձուկ սառեցնելը և աղ դնելը, ձկից և ծովային մթերքներից կիսապատրաստվածքներ պատրաստելը.

6)միս, ձուկ և այլ մթերքներ մթերելը՝ որպես պաշար.

7)մսի, ձկան և այլ սննդամթերքների ապխտման համար անհրաժեշտ ապխտման խուցեր կամ վառարաններ կառավարելը.

8)միս, ձուկ և համապատասխան սննդամթերքներ եփելը և ջերմամշակելը՝ վաճառքի համար.

9)մսի, ձկան, մրգերի, բանջարեղենի, հատապտուղների պահածոյացման համար հումք նախապատրաստելը, դրանք տարողությունների մեջ տեղադրելը և համեմունքներ լցնելը.

10)բանջարեղեն և սնկեր աղադրելը՝ ըստ տրված բաղադրատոմսերի աղային լուծույթներ պատրաստելով.

11)զանազան մրգերից հյութեր պատրաստելը.

12)զանազան հատիկներից, հատապտուղներից և բույսերից բուսական յուղ ստանալը.

13)այլ աշխատողներին ղեկավարելը.

14)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մորթող՝ անասունների.

2)ջլազերծող՝ մսի.

3)նախապատրաստող՝ մսե կիսապատրաստվածքների.

4)մշակող՝ մսային ապուխտների.

5)կազմող՝ լցոնների.

6)մշակող՝ ձկների.

7)նախապատրաստող՝ պահածոյացման համար սննդային հումքի.

8)աղ դնող՝ բանջարեղենի.

9)տեղադրող՝ պահածոյացման մթերքների:

81. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7412. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՑԱԹԽՄԱՆ, ՄԱԿԱՐՈՆԵՂԵՆԻ, ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԻ ԵՎ ՇԱՔԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Հացաթխման, մակարոնեղենի, հրուշակեղենի և շաքարի արտադրության բանվորները պատրաստում են խմոր, ձևավորում և թխում են հացաբուլկեղեն, պատրաստում են մակարոնեղենի կիսապատրաստվածքներ, տարբեր տեսակի թխվածքաբլիթներ, քաղցրաբլիթներ, տորթեր, այլ խմորեղեններ, կոնֆետներ, կարամել, շոկոլադ, շաքարի արտադրության համար նախապատրաստում են ճակնդեղի տաշեղ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)խմոր պատրաստելը՝ կարգավորելով շաղախման և խմորի ու թթխմորի խմորման գործընթացները.

2)հաց, հացաբուլկեղեն և հրուշակեղեն ձևավորելը և թխելը.

3)պատրաստի արտադրանք խոտանելը և արկղերի մեջ տեղադրելը.

4)մամլման մեթոդով մակարոնեղենի կիսապատրաստվածքներ պատրաստելը.

5)տարբեր տեսակի թխվածքաբլիթներ, քաղցրաբլիթներ, տորթեր, այլ խմորեղեն պատրաստելը՝ ըստ բաղադրատոմսերի.

6)կարամել պատրաստելը՝ կարամելի զանգվածի մեջ ներկանյութեր, թթուներ, բնահյութեր ներածելով.

7)ճակնդեղի տաշեղ ստանալու համար ճակնդեղ կտրատելը, դիֆուզային սարքեր ճակնդեղի մատակարարումը կարգավորելը.
8)շաքարահումք և շաքարավազ զտելը.
9)այլ աշխատողներին ղեկավարելը.
10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)հացթուխ.
2)պատրաստող՝ խմորի.
3)մամլող՝ մակարոնեղենի կիսապատրաստվածքների.
4)ձևավորող՝ խմորի.
5)հրուշակագործ.
6)կարամելագործ.
7)կոնֆետագործ.
8)զտող՝ շաքարի.
9)պատրաստող՝ շոկոլադի:

82. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7413. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԿԱԹԻ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Կաթի և կաթնամթերքների արտադրության բանվորները զատում են կաթ, թան, շիճուկ, արտադրում են կարագ, թթվասեր, կաթնաշոռ, պանիր և այլ կաթնամթերքներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)կաթ տաքացնելը, կաթից սերուցք անջատելը (զատելը), կարագ ստանալու համար սերուցք հարելը.
2)տարբեր տեսակի կարագապատրաստիչներով կարագ արտադրելը, կարագը նորմալացնելը՝ ըստ խոնավության.
3)թթվասեր և կաթնաշոռ պատրաստելը՝ դրանք մինչև տրված յուղայնության հասցնելով, կշռաբաշխելը, փաթեթավորելը և տարայի մեջ տեղադրելը.
4)պանիր պատրաստելը՝ կաթնային խառնուրդի յուղայնության կարգավորմամբ, մակարդի, ֆերմենտների և քիմիկատների ներմուծմամբ.
5)կաթի մակարդման գործընթացը կարգավորելը, մակարդուկի պատրաստվածություն որոշելը, դա կտրտելը, կտորները աղ դնելը.
6)պաղպաղակ արտադրելը, ձևավորելը և փաթեթավորելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)զատող՝ կաթի և կաթնային հումքի.
2)պատրաստող՝ թթվասերի.
3)պատրաստող՝ կաթնաշոռի.
4)պանրագործ.
5)պատրաստող՝ կարագի:

83. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7414. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՈԳԵԼԻՑ ԵՎ ՈՉ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտադրության բանվորները ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտադրության համար մշակում են հումք և պատրաստում են գինի, կոնյակ, շամպայն, գարեջուր, հյութեր, մրգային ջրեր և այլ արտադրանք:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)խաղողի և պտղային-հատապտղային հումք տեսակավորելը, դրա մեջ շաքարի, թթվի և այլ բաղադրամասերի պարունակությունը որոշելը, հումքից հյութ, քաղցրահյութ, չեչ ստանալը.
2)օղելիկյորային խմիչքների, մրգային ջրերի և խտանյութերի համար խմորիչներ (կուպաժներ) պատրաստելը.
3)հյութի, քաղցրահյութի, չեչի խմորման գործընթաց վարելը, հյութեր և քաղցրահյութ պարզեցնելը, խմորիչների մաքուր տեսակ բազմացնելը և խմորիչային բաշխակայանք պատրաստելը՝ շամպայնի և գինիների արտադրության համար.

4)կոնյակի սպիրտներ հասունացնելը, մշակելը և խնամելը, կոնյակներ պատրաստելը և դրանք տակառների մեջ լցնելը.
5)գարեջրի արտադրության մեջ գարու ծլեցման գործընթացը կարգավորելը, ածիկ թրջելը, տրորելը և չորացնելը.
6)չոր գարեջրի խմորիչների արտադրության գործընթացը կարգավորելը և դրանք կշռածարելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)տեսակախառնող՝ ոչ ոգելից խմիչքների.
2)մշակող՝ գինու հումքի.
3)մշակող՝ կոնյակի սպիրտների և կոնյակների.
4)մշակող՝ հյութերի և քաղցրահյութի.
5)պատրաստող՝ շամպայնի հումքի.
6)ածիկագործ.
7)պատրաստող՝ գարեջրի չոր խմորիչների:

84. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7415. ՀԱՄՏԵՍՈՂՆԵՐ, ՈՐՈՇՈՂՆԵՐ՝ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ

1.Համտեսողները, սննդամթերքի և խմիչքների տեսակայնություն որոշողները ստուգում են գյուղատնտեսական տարբեր արտադրանքների, սննդամթերքների և խմիչքների համը և տեսակները:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)գյուղատնտեսական արտադրանք, սննդամթերք և խմիչքներ զննելը, ստուգելը, համտեսելը՝ պատրաստման տարբեր փուլերում որակը, տեսակայնությունը և համապատասխան դասի պատկանելիությունը որոշելու համար.
2)այլ աշխատողներին ղեկավարելը.
3)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)տեսակավորող՝ սննդամթերքի.
2)տեսակավորող՝ ծխախոտի.
3)համտեսող՝ սննդամթերքի.
4)համտեսող՝ լիկյորի.
5)համտեսող՝ գինու.
6)տեսակախառնող՝ ծխախոտի:

85. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7416. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԾԽԱԽՈՏԻ ԵՎ ԽՄՈՐՄԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Ծխախոտի և խմորման արտադրության բանվորները մթերում են ծխախոտի տերևներ և պատրաստում են ծխախոտային արտադրանք:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)խմորման ենթարկված ծխախոտի տերևների տեսակայնություն որոշելը և դրանք ըստ որակի, տեսակի և աճման տեղի բաժանելը.
2)համապատասխան բույրով խառնուրդ ստանալու համար ծխախոտի տերևներ խառնելը՝ պատրաստման բաղադրատոմսին համապատասխան.
3)հետագա վերամշակման նպատակով ծխախոտի խոնավացման համար վակուումային սարքավորումներ սպասարկելը.
4)ծխախոտի տերևներից գլխավոր ջիղերը ու տերևակոթիկները հեռացնելը և ծխախոտը մանրացնելը.
5)ամբողջական սիգարներ, ծխախոտ, քթախոտ և ծխախոտային այլ արտադրանք պատրաստելը ձեռքով կամ հասարակ մեքենաներով.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)տեսակավորող՝ ծխախոտի.

2)տեսակախառնող՝ ծխախոտի.
3)պատրաստող՝ սիգարի.
4)պատրաստող՝ գլանակի.
5)բուրավետացնող՝ ծխախոտի:

86. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 742. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Փայտամշակման արդյունաբերության բանվորները տարբեր եղանակներով մշակում են փայտանյութը և դրանից պատրաստված իրերը, հասարակ գործիքներով և փայտամշակման հաստոցներով պատրաստում և նորոգում են փայտե կահույք, փայտե մանրամասեր, ձևանմուշներ ու մոդելներ, կարգավորում կամ կարգաբերում ու կառավարում են փայտամշակման հաստոցները, պատրաստում են հյուսած կահույք և այդօրինակ իրեր, զարդարում ու նորոգում են փայտե իրերը և տարբեր իրերի փայտե մանրամասերը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. տարբեր եղանակներով փայտանյութ չորացնելը և մշակելը. փայտե կահույք պատրաստելը, զարդարելը և նորոգելը. ամբողջական փայտե սայլակների կամ դրանց մասերի, փայտե մոդելների, այնպիսի տարբեր իրերի ձևանմուշներ և մոդելներ պատրաստելը, զարդարելը և նորոգելը, ինչպիսիք են խողովակները, փայտե դահուկները, կոշիկը կամ մարզական իրերը. փայտամշակման սղոցող, ձևավորող կամ կտրող հաստոցներ կարգավորելը կամ կարգաբերելն ու սպասարկելը. հյուսած կահույք, զամբյուղներ և այդօրինակ իրեր պատրաստելը. ցախավելներ ու խոզանակներ հավաքելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7421. Բանվորներ՝ փայտանյութի սկզբնական մշակման.**

2)**Ստորին խումբ 7422. Կարմրափայտագործներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

3)**Ստորին խումբ 7423. Կարգաբերողներ՝ փայտամշակման սարքավորումների.**

4)**Ստորին խումբ 7424. Զամբյուղագործներ, կահույքագործներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների:**

87. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7421. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ

1.Փայտանյութի սկզբնական մշակման բանվորները տարբեր եղանակներով (սղոցում, ռանդում, պրոֆիլավորում և այլն) չորացնում և մշակում են փայտանյութը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գերաններից կոճղափայտերից և չորսուներից սղոցանյութեր ու նախապատրաստվածքներ սղոցելը, սղոցանյութերը ձևման արդյունավետ սխեմայով տրված կտորների ձևելը.

2)տախտակները, սղոցանյութերը նախապատրաստվածքների համար չափանշելը՝ ըստ ձևանմուշների և փայտանյութի թելերի ուղղության.

3)նախապատրաստվածքները երաժշտական գործիքների համար չափանշելը՝ ապահովելով ձայնային որակները.

4)նախապատրաստվածքներ ռանդելը, պրոֆիլավորելը, խառատային, ֆրեզերային և փայտամշակման այլ հաստոցներով աշխատանքներ կատարելը.

5)հականեխիչ լուծույթներով, պարաֆինով, խեժով և այլ բաղադրություններով փայտանյութ տոգորելը՝ տոգորման լուծույթները պատրաստելով ըստ տրված բաղադրատոմսերի.

6)նախապատրաստվածքներ շոգեհարելը և եռման ջրով մշակելը ռեժիմների ընտրությամբ՝ կախված նախապատրաստվածքների չափերից և փայտանյութի տեսակից.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հաստոցավար-սղոցող.

2)չափանշող՝ փայտի.

3)հաստոցավար՝ փայտամշակման հաստոցների.

4)տոգորող՝ փայտանյութերի և փայտե արտադրատեսակների.

5)շոգեհարող-եփող՝ փայտի:

88. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7422. ԿԱՐՄՐԱՓԱՅՏԱԳՈՐԾՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Կարմրափայտագործները և հարակից զբաղմունքների բանվորները, գործիքներով և փայտամշակման մեքենաներով, ըստ գծագրերի և ուրվագծերի, պատրաստում են կահույք, հարդարում, երեսպատում և նորոգում այն, պատրաստում են տրանսպորտային միջոցների փայտե մասեր, ձևանմուշներ, հարմարանքներ և այլ իրեր, հսկում են որակը և ընդունում փայտյա իրեր ու մանրամասեր, վերանորոգում և վերականգնում են կահույք և այլ փայտյա իրեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)փայտամշակման հաստոցներով և ձեռքի գործիքներով կահույք պատրաստելը՝ ըստ գծագրերի և ուրվագծերի, կահույքի երեսպատված մանրամասեր ու հանգույցներ մաքրամշակելը և հղկելը, առանձին մասեր հարմարեցնելը, մետաղական մասեր ամրացնելը.

2)կահույքի եզրերը, մանրամասերը և հանգույցները տարբեր նյութերով երեսպատելը, կահույքի տարրեր երեսքաշելը և սոսնձելը.

3)փայտից պատրաստված արտադրատեսակներ ու հանգույցներ լաքապատելը, արծնե և լաքե պատվածքների չոր և խոնավ հղկում կատարելը, մանրամասեր ու իրեր ողորկելը, դրանք ներկելը.

4)փայտե արտադրատեսակներ հավաքելը, սոսնձելը, ամրակելը և երեսելը՝ մետաղական ամրանի հարմարեցմամբ և ամրակմամբ.

5)փայտե ձևանմուշներ, հարմարանքներ, անկյունաքանոններ և այլ իրեր պատրաստելը՝ ըստ գծագրերի և ուրվագծերի.

6)կահույք և փայտե ներդրվագման մանրամասեր զարդարելը, նրբատախտակով երեսպատելը.

7)տրանսպորտային միջոցների փայտյա մասեր պատրաստելը և վերանորոգելը.

8)յուրաքանչյուր գործառնությունից հետո որակը հսկելը և փայտյա իրեր ու մանրամասեր ընդունելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հյուսն–կարմրափայտագործ.

2)հարդարող՝ փայտից արտադրատեսակների.

3)պաստառագործ՝ կահույքի.

4)երեսպատող՝ կահույքի.

5)հավաքող՝ փայտից արտադրատեսակների.

6)հսկիչ՝ փայտամշակման արտադրության.

7)պատրաստող՝ ձևանմուշների:

89. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7423. ԿԱՐԳԱԲԵՐՈՂՆԵՐ՝ ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Փայտամշակման սարքավորումներ կարգաբերողները կարգաբերում, կարգավորում և կառավարում են փայտամշակման սարքավորումները, ինչպիսիք են՝ բարձր ճշտության սղոցող, ձևավորող, ռանդող, ներտաշող, խառատային և փայտի փորագրման հաստոցները, մասնակցում են դրանց ընթացիկ նորոգմանը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)զանազան սարքավորումներ կարգաբերելը և կարգավորելը՝ աշխատանքի ընթացքում կտրող գործիք տեղադրելով և փոխարինելով.

2)աշխատանքի ընթացքում ավտոմատ և կիսաավտոմատ գծեր ու կայանքներ կարգաբերելը և կարգավորելը.

3)կարգաբերման գործընթացում անհրաժեշտ հաշվարկներ կատարելը.

4)սպասարկվող սարքավորումների ընթացիկ նորոգմանը մասնակցելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կարգաբերող՝ փայտամշակման սարքավորումների.
2)կարգաբերող-օպերատոր՝ փայտամշակման հոսքային գծի:

90. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7424. ԶԱՄԲՅՈՒՂԱԳՈՐԾՆԵՐ, ԿԱՀՈՒՅՔԱԳՈՐԾՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Զամբյուղագործները, կահույքագործները և հարակից մասնագիտությունների բանվորները հյուսում են կահույք, զամբյուղներ, խոզանակներ, ավելներ և զանազան այլ արտադրատեսակներ, հավաքում են հյուսած մանրամասեր և հանգույցներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վազից, եղեգնից, ծողերից և արհեստական կամ բնական այլ նյութերից մանրամասեր, իրեր, կահույք, զամբյուղներ հյուսելը.

2)կահույքի հյուսած մանրամասեր ու հանգույցներ հավաքելը մետաղական և փայտե հիմնակմախքների վրա՝ ըստ գծագրերի ու ուրվագծերի, նկարներ հարմարեցնելով ու մաքրամշակելով.

3)խոզանակի արտադրության համար անհրաժեշտ նյութեր (կոշտ մազ, նեյլոն, ամրալար և այլն) նախապատրատելը, խոզանակի հիմք հավաքելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հյուսող՝ կահույքի.

2)հյուսող՝ զամբյուղների.

3)հավաքող՝ հյուսած կահույքի.

4)հյուսող՝ խոզանակի արտադրության:

91. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 743. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Մանածագործական արդյունաբերության բանվորները մանածագործական թել պատրաստելու համար նախապատրաստում են հումք, դրանից պատրաստում են թել և մանվածք, ջուլհակության, հյուսման ճանապարհով և այլ միջոցներով պատրաստում են գործվածքներ, հյուսում են իրեր, պատրաստում են ցանցեր, թաղեգործական իրեր և բամբակ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. հումք նախապատրաստելը՝ բամբակի, վուշի, մետաքսի, բրդի, կանեփաջուրի թելեր պատրաստելու համար. թելեր ու մանվածք պատրաստելը. գործվածքների՝ ձեռքով ջուլհակությունը և տրիկոտաժե պաստառներ ու իրեր հյուսելը. ցանցեր, թաղեգործական իրեր և բամբակ պատրաստելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7431. Բանվորներ՝ թելերի և բամբակի արտադրության.**

2)**Ստորին խումբ 7432. Ջուլհակներ, հյուսողներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

3)**Ստորին խումբ 7433. Դերձակներ, կարողներ՝ տղամարդկանց, կանանց հագուստների և գլխարկների.**

4)**Ստորին խումբ 7434. Մորթեգործներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

5)**Ստորին խումբ 7435. Պատրաստողներ՝ ձևանների, և ձևարարներ՝ մանածագործվածքից, կաշվից և այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների.**

6)**Ստորին խումբ 7436. Կարողներ, ասեղնագործողներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

7)**Ստորին խումբ 7437. Պաստառագործներ՝ կահույքի, և բանվորներ՝ հարակից զբաղմունքների.**

8)**Ստորին խումբ 7438. Բանվորներ՝ թաղեգործական արտադրության:**

92. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7431. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԹԵԼԵՐԻ ԵՎ ԲԱՄԲԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Թելերի և բամբակի արտադրության բանվորները թելը նախապատրաստում են փաթաթման և մանման, լվանում են, գզում, հեռացնում են կողմնակի խառնուկները,

տեսակավորում են, պատրաստում են մանվածք և հսկում արտադրված մանվածքի որակը, արտադրում են բամբակ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վուշի թել գզելը, կողմնակի խառնուկներ հեռացնելը, ձեռքի սանրերով թելը վերջնամշակելը և տեսակավորելը՝ ըստ գույնի և համարների.

2)անլվա բուրդ տեսակավորելը՝ որոշելով բրդի տեսակը, երկարությունը, բարակությունը, վիճակը.

3)բուրդ լվանալը՝ լվացող մեքենաների և ագրեգատների մեջ լվացող լուծույթ պատրաստելով և դրա ջերմաստիճանն ու խտությունը կարգավորելով.

4)կարպետների, գորգերի արտադրության համար ձեռքով հենք պատրաստելը, հենքի որակը հսկելը.

5)այլ տեսակի մանածագործական թել տեսակավորելը և մշակելը.

6)մանող, մանող-ոլորող մեքենաներով մանվածք արտադրելը, ժապավենի, հաստաթելի և մանվածքի խզվածքներ վերացնելը, արտադրված մանվածքը հանելը.

7)արտադրվող մանվածքի որակը հսկելը.

8)բամբակ մշակելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մշակող՝ թելի, մանածագործական արտադրության.

2)պատրաստող՝ թելի, մանածագործական արտադրության.

3)վերջնամշակող՝ թելի, մանածագործական արտադրության.

4)գզող՝ թելի, մանածագործական արտադրության.

5)կորզանող՝ թելի, մանածագործական արտադրության.

6)վարպետ՝ հաստաթելերի արտադրության, մանածագործական արտադրության.

7)տեսակավորող՝ անլվա բրդի.

8)լվացող՝ բրդի.

9)մանող.

10)հինող.

11)կշռաբաշխող՝ բամբակի:

93. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7432. ՋՈՒԼՀԱԿՆԵՐ, ՀՅՈՒՍՈՂՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Մանածագործական արդյունաբերության ձեռքի աշխատանքի ջուլհակները, հյուսողները և հարակից զբաղմունքների բանվորները ձեռքով կամ ձեռքի հաստոցներով պատրաստում են զարդարական հատային և այլ արտադրատեսակներ՝ հյուսում են գորգեր, գլխաշորեր, թիկնոցներ, գուլպաներ, գլխարկներ, ցանցեր և այլ արտադրատեսակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ձեռքով ոլորաթել մանելը և կծկելը.

2)հենքը ձեռքով հաստոցի մեջ միջաձգելը.

3)ջուլհակային հաստոցների միջոցով միագույն և գունավոր, զարդարական գործվածքներ, ժանյակներ և այլ իրեր պատրաստելը.

4)հանգույցների հյուսման մեթոդով գորգեր պատրաստելը.

5)ձեռքով կամ ձեռքի մեքենաներով հագուստ և այլ իրեր հյուսելը.

6)հելունով հյուսելը կամ ձեռքով երիզներ պատրաստելը.

7)ձեռքով կամ մեքենաներով ցանցապաստառներ ու ցանցեր հյուսելը, ցանցապաստառը առանձին ցանցերի կտրելը, ցանցեր դասավորելը, ծգելը, անցքեր հավասարեցնելը.

8)ցանցերի համար վերևի և ներքևի ցանցապարաններ ու լծօղակներ պատրաստելը.

9)արտադրատեսակների որակը վերահսկելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հյուսող՝ տրիկոտաժե իրերի և պաստառի.

2)հյուսող՝ տեքստիլ արդուզարդեղենի.

3)ոլորող՝ թելի և ոլորաթելի.
4)ջուլիակ՝ ձեռքի ջուլիակության.
5)գործող՝ ցանցի.
6)վերանորոգող՝ ցանցաիրերի:

94. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7433. ԴԵՐՁԱԿՆԵՐ, ԿԱՐՈՂՆԵՐ՝ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ, ԿԱՆԱՆՑ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ԳԼԽԱՐԿՆԵՐԻ

1.Տղամարդկանց ու կանանց հագուստներ և գլխարկներ կարողները և դերձակները մանածագործվածքից, կաշվից կամ այլ նյութերից (բացի մորթուց) պատրաստում, վերանորոգում և հարմարեցնում են հագուստներ և գլխարկներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)անհատական պատվերներով վերարկու, կոստյում, շրջազգեստ, ներքնաշորեր և հագուստի այլ տեսակներ կարելը.
2)պատրաստի հագուստներ նախապատրաստելուն մասնակցելը.
3)գլխարկներ պատրաստելը.
4)հագուստ և գլխարկներ վերանորոգելը, նորացնելը և վերածևելը.
5)թատերական և ցուցադրման համար նախատեսված հագուստ և գլխարկներ պատրաստելը և խնամելը.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)դերձակ՝ տղամարդկանց հագուստի.
2)մոդելավորող՝ հագուստի.
3)դերձակ՝ կանացի հագուստի.
4)կարող՝ գլխարկների:

95. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7434. ՄՈՐԹԵԳՈՐԾՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1. Մորթեգործները և հարակից զբաղմունքների բանվորները պատրաստում, վերածևում, վերանորոգում և նորացնում են մորթուց պատրաստված հագուստը և այլ իրեր, մասնակցում պատրաստի մորթե հագուստը օգտագործման նախապատրաստելուն:

2. Նրանց պարտականությունները ներառում են.

1) պատվիրատուի պատվերով մորթուց հագուստ կամ այլ իրեր ձևելու համար մորթի ընտրելը, ծգելը և կտրելը.
2) վերարկուներ և մորթե այլ հագուստ կամ իրեր պատրաստելը.
3) պատրաստի մորթե հագուստը օգտագործման նախապատրաստելուն մասնակցելը.
4) հին մորթե և կաշվե հագուստ վերանորոգելը՝ առանձին կտորներ սոսնձելով և կտրելով վերածևելով.
5) մորթե հագուստ և այլ իրեր նորոգելը, վերածևելը և նորացնելը.
6) այլ աշխատողներին ղեկավարելը.
7) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մորթեգործ.
2) վերանորոգող՝ մորթե հագուստի:

96. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7435. ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐ՝ ՁԵՎԱՆՆԵՐԻ, ՁԵՎԱՐԱՐՆԵՐ՝ ՄԱՆԱԾԱԳՈՐԾՎԱԾՔԻՑ, ԿԱՇՎԻՑ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ

1.Ձևաններ պատրաստողները, մանածագործվածքից, կաշվից և այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների ձևավարարները պատրաստում են ձևաններ, հագուստի, ձեռնոցների և տարատեսակ այլ իրերի արտադրության համար նշագծում և ձևում են մանածագործվածքից, կաշվից և այլ նյութերից պատրաստված նախապատրաստվածքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կոստյումներ, շրջազգեստներ, վերնաշապիկներ և հագուստի այլ տեսակներ կարելու համար ձևաններ պատրաստելը.

2)կարելու նպատակով ձևան տեղափոխելը կտորի, կաշվի կամ համանման այլ նյութերի վրա.

3)ձևանին համապատասխան՝ նախապատրաստվածքից հագուստ ձևելը.

4)հագուստի տեսակ չհանդիսացող իրերի ձևաններ պատրաստելը, կտոր ձևելը և կարելը (օրինակ՝ անձրևանոցներ, վրաններ, պարաշյուտ և այլն):

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)պատրաստող՝ ձևանների.

2)ձևարար՝ հագուստի.

3)ձևարար՝ հագուստի և այլ իրերի:

97. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7436. ԿԱՐՈՂՆԵՐ, ԱՍԵՂՆԱԳՈՐԾՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Կարողները, ասեղնագործները և հարակից զբաղմունքների բանվորները կարում, վերանորոգում և զարդարում են հագուստ և մանածագործվածքից, կաշվից և այլ նյութերից պատրաստված արտադրատեսակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մանածագործվածքից, կաշվից և այլ նյութերից արտադրատեսակներ պատրաստելու, վերանորոգելու և ձևափոխելու ժամանակ կարելու տարաբնույթ աշխատանքներ կատարելը.

2)հագուստի, կտորի և այլ նյութերի վրա զարդարարական նախշեր ասեղնագործելը.

3)հագուստի տեսակ չհանդիսացող իրեր կարելը և զարդարելը (օրինակ՝ անձրևանոցներ, վրաններ, պարաշյուտ և այլն).

4)հագուստի տեսակ չհանդիսացող իրեր հավաքելը (օրինակ՝ անձրևանոցի կտորը մետաղական մասին ամրացնելը, պարաշյուտին պարաններ ամրացնելը և այլն).

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կարող՝ հագուստի.

2)ասեղնագործող՝ հագուստի.

3)արտադրող՝ անձրևանոցի:

98. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7437. ՊԱՍՏԱՌԱԳՈՐԾՆԵՐ՝ ԿԱՀՈՒՅՔԻ, ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Կահույքի պաստառագործները և հարակից զբաղմունքների բանվորները պաստառապատում են կահույք, պատրաստում են ներքնակներ, մանածագործվածքից, կաշվից և համանման այլ նյութերից պատրաստում և տեղակայում են բնակարանների ներքին հարդարման իրեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կահույքի, տրանսպորտային միջոցների (ավտոմեքենա, գնացք, ինքնաթիռ և այլն) նստատեղերի շրջանակի վրա զսպանակներ և տակդիրներ կամ առաձգական նյութերից պատրաստված միջադիրներ տեղակայելը, ձգելը և ամրացնելը.

2)ներքնակներ պատրաստելը.

3)բնակարանների ներքին հարդարման համար փափուկ կտորներից, թղթից կամ կաշվից իրեր պատրաստելը, ամրացնելը, հարմարեցնելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)պատրաստող՝ ներքնակների.
2)պաստառագործ՝ կահույքի.
3)պաստառագործ՝ տրանսպորտային միջոցի նստատեղի:

99. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7438. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԹԱՂԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Թաղեգործական արտադրության բանվորները լմում, թաղիքադրում, մամլում, ձևավորում և հարդարում են կոշիկ և գլխարկներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)լմող մեքենաներով կոշիկ և գլխարկներ լմելը.

2)թաղիքե կոշիկը հաստոցով երկարաձգելը և հարթելը՝ մինչև պահանջվող ձևին հասնելը.

3)գլխարկներ, թաղիքներ, թաղիքե սկավառակներ մամլելը մամլիչներով՝ վերահսկելով իրերի ձևն ու խտությունը.

4)թաղիքե գլխարկներ, կոշիկներ և թաղեգործական այլ իրեր մեքենաներով թաղիքադրելը՝ կարգավորելով տեխնոլոգիական գործընթացը և հսկելով թաղիքադրման որակը.

5)ձեռքով և մեքենաներով գլխարկներ ձևավորելը, դրանք սոսնձային լուծույթով մշակելը, ձևավորված գլխարկները չորացնելը.

6)թաղեգործական իրեր հարդարելը՝ մակերևույթի վրա թավշակաշվի (զամշի) և այլ տպավորություններ ստեղծելով.

7)իրերի հարդարման որակը հսկելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)թաղիքագործ.

2)մամլող՝ թաղեգործական իրերի.

3)թաղիքադրող.

4)հարթող՝ թաղեգործական իրերի.

5)ձևավորող՝ թաղիքե գլխարկների.

6)հարդարող՝ թաղեգործական իրերի:

100. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 744. ՄՈՐԹԵԳՈՐԾՆԵՐ, ԿԱՇԵԳՈՐԾՆԵՐ ԵՎ ԿՈՇԿԱԿԱՐՆԵՐ

1.Մորթեգործները, կաշեգործները և կոշկակարները մշակում են մորթե արտադրատեսակներ, մորթուց ստանում կաշի, պատրաստում և վերանորոգում են բնական կամ արհեստական կաշվից պատրաստված կոշիկներ և այլ իրեր, բացառությամբ հագուստի տեսակների, ինչպես նաև կաշվից կամ համանման այլ նյութերից պատրաստում են տարատեսակ այլ իրեր:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ կաշվի հումք և կիսապատրաստվածքներ ձևելը. կաշիներ, մորթիներ, մորթե կաշիներ մշակելը. կաշիներ ու մորթիներ ներկելը. կոշիկ արտադրելը. կաշվե արդուզարդեղեն և այլ իրեր կարելը, հավաքելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7441. Բանվորներ՝ կաշվի, կաշվեհումքի և մորթեղենի արտադրության.**

2)**Ստորին խումբ 7442. Բանվորներ՝ կոշկեղենի և կաշվե այլ արտադրատեսակների արտադրության:**

101. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7441. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԿԱՇՎԻ, ԿԱՇՎԻ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՄՈՐԹԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Կաշվի, կաշվի հումքի և մորթեղենի արտադրության բանվորները ձևում են կաշվի հումքը, մշակում են կաշիներ, մորթիներ, մորթե կաշիներ, ներկում են կաշի և մորթի, հարթեցնում, գլոցում և լաքապատում են կաշի, հսկում են կաշվի հումքի, կաշիների ու մորթիների ձևման, մշակման որակը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կիսապատրաստվածքներ, հում կաշիներ, խոշոր եղջեղավոր անասունների կաշիներ ձևելը.
2)մորթու և կաշվի տեսակը և դասը որոշելը.
3)կաշիները մազազրկման խառնուրդով մշակելը՝ խառնուրդի պատրաստմամբ.
4)մորթե կաշիներ մշակելը, կաշիների հյուսվածքի թելերը տրորել-փխրեցնելը, մորթե կաշիների մազածածկույթը խուզելը.
5)կաշիներ և մորթիներ ներկելը, չեզոքացնելը, ճարպատոգորելը և լվանալը՝ քիմիական նյութերի, ճարպերի և ներկերի լուծույթներ պատրաստելով և դրանք սարքերում մասնաբաժանելով.
6)ծալքերի ու կնճիռների վերացման նպատակով կաշիներ հարթեցնելը, գլոցամեքենաներով կաշիներ գլոցելը՝ դրանց պահանջվող կոշտություն, դիմացկունություն և փայլ տալու համար.
7)լայնական ուղղությամբ կաշվի երկատման մեքենա կառավարելը.
8)կաշիներ լաքապատելը՝ մինչև դրանց փայլելը.
9)կաշվի հումքի և կիսապատրաստվածքների մշակման որակը յուրաքանչյուր գործառնությունից հետո հսկելը.
10)կաշվե կիսապատրաստվածքների զգայարանական հսկողությունը.
11)այլ աշխատողներին ղեկավարելը.
12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ձևարար՝ կաշվի հումքի.
2)մշակող՝ կաշիների, մազահանման խառնուրդով.
3)գլոցող՝ կաշիների.
4)հարթեցնող՝ կաշիների.
5)ներկող՝ կաշիների.
6)լաքապատող՝ կաշիների.
7)հսկիչ՝ հումքի և կիսապատրաստվածքների.
8)մշակող՝ մորթե կաշիներ.
9)դաբաղող:

102. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7442. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԿԱՇՎԵ ԿՈՇԿԵՂԵՆԻ ԵՎ ԿԱՇՎԵ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Կաշվե կոշկեղենի և կաշվե այլ արտադրատեսակների արտադրության բանվորները հավաքում են կոշիկի ներքնամասի ու երեսի մանրամասեր և կոշիկն ամբողջությամբ, պատրաստում են կոշիկի առանձին մանրամասեր, կարում, հավաքում և նկարազարդում են կաշվե այլ իրեր՝ պայուսակներ, թղթապանակներ, գոտիներ, սանձեր, թամբեր և այլն:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)կոշիկի ներքնամասի և ոտնամանի երեսի մանրամասեր հավաքելը՝ մանրամասեր միացնելու եղանակով.
2)կոշիկ հավաքելը՝ մանրամասերի չափսափորձմամբ, հարմարեցմամբ և ամրակցմամբ.
3)սիլիկոնային ձուլամայրերի ձուլման համար կոշիկի երեսի նախապատրաստվածքների մանրակերտներ, կոշիկի ներքնամասի մանրամասեր պատրաստելը՝ ձուլման և տաք ռետինացման եղանակներով.
4)կարի մեքենաներով կաշվե պայուսակներ, թղթապանակներ, գոտիներ, սանձեր, թամբեր և այլ իրեր կարելը.
5)սոսնձի, օժանդակ նյութերի օգնությամբ կաշվե արդուզարդեղենի իրեր և դրանց առանձին տարրեր հավաքելը ձեռքով կամ մեքենաներով.
6)ցանցավոր ձևանմուշների և կլիշեների օգնությամբ կաշվե արդուզարդեղենի իրերը ներկերով նկարազարդել-խավավորելը՝ համապատասխան երանգի ներկեր ընտրելով.
6)այլ աշխատողներին ղեկավարելը.
7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)հավաքող՝ կոշիկի.
2)պատրաստող՝ ձուլամայրերի մանրակերտների.

3)կարող՝ կաշվե իրերի.
4)հավաքող՝ կաշվե իրերի.
5)նկարազարդող՝ կաշվե իրերի:

103. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 745. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Շինանյութերի արդյունաբերության բանվորները արտադրում են ցեմենտ, ասբեստացեմենտային և ասբեստասիլիտային իրեր, երկաթբետոնե և բետոնե իրեր ու կառուցվածքներ, որմնանյութեր և կապակցող նյութեր, ջերմամեկուսիչ նյութեր, ասֆալտային մածիկ և սալիկ, փափուկ տանիքածածկ և ջրամեկուսիչ նյութեր, շինարարական խեցեգործության իրեր, մշակում են փայլար:

2.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 7450. Բանվորներ՝ շինանյութերի արդյունաբերության:**

104. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7450. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Շինարարական նյութերի արդյունաբերության բանվորները արտադրում են տարատեսակ շինարարական նյութեր՝ վարելով շինարարական նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների տեխնոլոգիական գործընթացները, վերահսկում են ստացված արտադրատեսակների և շինարարական նյութերի որակը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ցեմենտի, ասբեստացեմենտի, ասբեստասիլիտային իրերի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ վարելը.
2)երկաթբետոնե իրերի ու կառուցվածքների մետաղական հիմնակմախքների հավաքման, բետոնավորման, ջերմամշակման տեխնոլոգիական գործընթացները վարելը.
3)որմնանյութերի և կապակցող նյութերի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ վարելը, համապատասխան ջերմային ռեժիմներ և հավելանյութեր ընտրելը.
4)ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ նյութերի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ վարելը.
5)ասֆալտային մածիկի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ վարելը.
6)կավի մշակման և կերամիկական շինարարական իրերի պատրաստման տեխնոլոգիական գործընթացներ վարելը.
7)տանիքային նյութերի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ վարելը.
8)փայլար մշակելը և վերամշակելը.
9)արհեստական կոմպոզիցիոն նյութերից շինարարական արտադրատեսակներ պատրաստելու տեխնոլոգիական գործընթացներ վարելը.
10)շինարական նյութերի և դրանցից պատրաստված արտադրատեսակների որակը վերահսկելը.
11)այլ աշխատողներին ղեկավարելը.
12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բաժնավորող՝ հումքի.
2)կաղապարող՝ ասբեստացեմենտային արտադրատեսակների.
3)հավաքող՝ ասբեստացեմենտային սալերի.
4)պատրաստող՝ աղյուսե բլոկների և պանելների.
5)կաղապարող՝ ջերմամեկուսիչ արտադրատեսակների.
6)ջարդող՝ ջերմամեկուսիչ արտադրատեսակների արտադրության հումքի.
7)եփող՝ ասֆալտե մածիկի.
8)նախաներկող՝ ասբեստացեմենտային և ասբեստասիլիկատային իրերի.
9)բաժնավորող՝ բետոնի խառնուրդների բաղադրամասերի.
10)կաղապարող՝ երկաթբետոնե իրերի և շինվածքների.
11)հավաքող՝ երկաթբետոնե շինվածքների.
12)կաղապարող՝ որմնանյութերի և կապակցող նյութերի արտադրության.
13)ջարդող՝ ջերմամեկուսիչ հումքի.
14)գրտնակող՝ ջրամեկուսիչ նյութերի.

15)ձուլող՝ երեսպատման սալիկների.
16)կաղապարող՝ շինարարական կերամիկական իրերի.
17)թրծող՝ շինարարական կերամիկական իրերի.
18)ջարդող՝ փայլարի.
19)դրոշմող՝ փայլարե իրերի:

105. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 746. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԻՏՈՂԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Խաղալիքների և ուսումնադիտողական պիտույքների արտադրության բանվորները կատարում են տարբեր նյութերից խաղալիքների մանրամասեր պատրաստելու և դրանք լրակազմելու աշխատանքներ, նախօրոք հավաքված մանրամասերից և հանգույցներից հավաքում են խաղալիքներ՝ ըստ գծագրերի և ուրվագծերի, կատարում են խաղալիքների ձևավորման աշխատանքներ, նախապատրաստում են բուսաբանության, հյուսվածաբանության (գիստոլոգիայի), բջջաբանության (ցիտոլոգիայի), սաղմնաբանության (էմբրիոլոգիայի) բլոկներ և երկրաբանական նմուշներ, տարբեր նյութերից պատրաստում են մոդելներ, ձուլում, մշակում և նկարում են կաղապարվածքներ, ընտրում և լրակազմում են հավաքածուներ:

2.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 7460. Բանվորներ՝ խաղալիքների և ուսումնադիտողական պիտույքների արտադրության:**

106. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7460. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԻՏՈՂԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

1.Խաղալիքների և ուսումնադիտողական պիտույքների արտադրության բանվորները կատարում են տարբեր նյութերից խաղալիքների մանրամասեր պատրաստելու, լրակազմելու, հավաքելու և ձևավորելու, ինչպես նաև ուսումնադիտողական պիտույքներ պատրաստելու աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ստվարաթղթից, թղթից, բամբակից, փայտից, պլաստմասսայից և այլ նյութերից ձեռքով, հաստոցների դրոշմներով կամ հարմարանքներով խաղալիքների մանրամասեր նախապատրաստելը.

2)խաղալիքների մանրամասեր ու հանգույցներ լրակազմելը՝ ընտրելով նյութերը, գույնը և տեսակները, դրանց չափերն ըստ գծագրերի և ուրվագծերի ստուգելով.

3)տարբեր նյութերից խաղալիքներ հավաքելը, մանրամասեր ընտրելը, հավասարեցնելը և չափափորձելը, հավաքված խաղալիքների որակն ստուգելը.

4)խաղալիքներ ձևավորելը, առանձին մասերը սոսնձելը, տակդիրներ պատրաստելը, դրանց վրա պատկերներ ամրացնելը.

5)բուսաբանության, հյուսվածաբանության, բջջաբանության, սաղմնաբանության ոլորտներին վերաբերող ոսումնադիտողակտն պիտույքներ պատրաստելը՝ դրանք պարաֆինով կամ ցելոիդինով մշակելով, ջրազերծելով, սևեռակելով և տոգորելով.

6)բնական հումքից երկրաբանական նմուշներ նախապատրաստելը և պատրաստելը, հանքանյութը և լեռնային ապարները կտորների բաժանելը, քարացուկներ մշակելը.

7)մածիկից, թղթազանգվածից, պլաստիկ զանգվածից, մոմից և այլ նյութերից ուսումնադիտողական պիտույքների մոդելներ պատրաստելը.

8)մածիկ և տարբեր զանգվածներ պատրաստելը՝ ըստ տրված բաղադրատոմսերի, մոդելների մասեր հավաքելը և սոսնձելը.

9)տարբեր նյութերից կաղապարվածքներ ձուլակաղապարելը, դրանց մաքրամշակում, քանդակագործական մշակում և գեղարվեստական նկարազարդում կատարելը, կաղապարվածքներ ընտրելը՝ ըստ թեմաների և տեսականու.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)նախապատրաստող՝ խաղալիքների մանրամասերի և նյութերի.

2)լրակազմող՝ խաղալիքների մանրամասերի.

3)հավաքող՝ խաղալիքների.
4)ձևավորող՝ խաղալիքների հավաքածուների.
5)նախապատրաստող՝ բուսաբանության (հյուսվածաբանության, բջջաբանության, սաղմնաբանության) ուսումնադիտողակտն պիտույքների.
6)նախապատրաստող՝ երկրաբանական նմուշների.
7)մոդելագործ՝ ուսումնադիտողական պիտույքների.
8)ձևավորող՝ հավաքածուների:

107. ԵՆԹԱԽՈՒՄԲ 75. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1.Տրանսպորտի և կապի բնագավառների բանվորները սպասարկում, նորոգում և կարգաբերում են երկաթուղային տրանսպորտի գծային մեքենաներ և մեխանիզմներ, զննում և նորոգում են վագոններ, սպասարկում և նորոգում են մետրոպոլիտենի, ծովային ու գետային նավերի, ավտոմոտոտրանսպորտային միջոցների սարքավորումներ, սպասարկում և շահագործման են նախապատրաստում թռչող սարքեր, տեղակայում, սպասարկում և նորոգում են հեռախոսային ու հեռագրային սարքավորումներ:

2.Աշխատանքը կատարվում է ձեռքով՝ առանց մեքենաների և մեխանիզմների, կամ մեքենաներով ու մեխանիզմներով, ինչը պահանջում է ունենալ սպասարկվող սարքավորումների և տրանսպորտային միջոցների կառուցվածքային առանձնահատկությունների իմացություն, թերությունների հայտնաբերման և վերացման ունակություն, չափող, գրանցող և ստուգող գործիքներից օգտվելու հմտություն:

3.Սույն ենթախմբի բանվորների պարտականությունները ներառում են՝ գծային մեքենաներ ու մեխանիզմներ սպասարկելը, նորոգելը և կարգաբերելը. վագոններ ու գնացքաքարշեր (լոկոմոտիվներ) զննելը, դրանց տեխնիկական սպասարկում և նորոգում կատարելը. մետրոպոլիտենի կայարանների և թունելների սարքավորումներ, շարժասանդուղքներ սպասարկելը և նորոգելը. ծովային և գետային նավեր, ավտոտրանսպորտային միջոցներ սպասարկելը և նորոգելը. ինքնաթիռների և ուղղաթիռների տեխնիկական սպասարկումը՝ ներառյալ դրանց մեջ գտնվող էլեկտրասարքավորումը և ռադիոսարքավորումը, դրանք շահագործման նախապատրաստելը. պարաշյուտային-արգելակային համակարգերի տեխնիկական սպասարկումը. թռիչքի գոտու խնամքի աշխատանքներ կատարելը. հեռախոսային, հեռագրային սարքեր, ռադիոսարքավորում ու հեռուստասարքավորում սպասարկելը և նորոգելը կապի հանգույցներում կամ օգտագործման վայրում:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 751. Բանվորներ՝ տրանսպորտի բնագավառի.**

2)**Փոքր խումբ 752. Բանվորներ՝ կապի բնագավառի:**

108. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 751. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Տրանսպորտի բնագավառի բանվորներն սպասարկում, նորոգում և կարգաբերում են գծային մեքենաներ, մեխանիզմներ և երկաթուղային տրանսպորտի, մետրոպոլիտենի, ավտոտրանսպորտային միջոցների սարքավորումներ, սպասարկում և նորոգում են ծովային ու գետային նավերի սարքավորումներ, կատարում են թռչող սարքերի տեխնիկական սպասարկում և դրանք նախապատրաստում են շահագործման:

2.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7511. Բանվորներ՝ երկաթուղային տրանսպորտի գծային մեքենաների և մեխանիզմների սպասարկման և նորոգման.**

2)**Ստորին խումբ 7512. Բանվորներ՝ մետրոպոլիտենի սարքավորումների սպասարկման և նորոգման.**

109. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7511. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳԾԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ

1.Երկաթուղային տրանսպորտի գծային մեքենաների և մեխանիզմների սպասարկման և նորոգման բանվորները զննում, ստուգում և նորոգում են վագոններ, երկաթուղային գծեր, արհեստական կառույցներ, գնացքաքարշեր (լոկոմոտիվներ) և վագոններ, կարգավորում և

կարգաբերում են կայարանային հանգույցների և գծային մեքենաների ու մեխանիզմների կառավարման համակարգեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)անսարքությունները հայտնաբերելու համար վագոնների տեխնիկական զննում կատարելը.

2)թափքերը, շարժական մասերը, արգելակները և լծակավոր փոխանցիչները, էլեկտրասարքավորումը, ռադիոսարքավորումը և այլ սարքեր առանց անջատելու նորոգելը.

3)բեռնարկղերի տեխնիկական զննում և նորոգում կատարելը.

4)երկաթուղի, արհեստական կառույցներ, կամուրջների թռիչքների հենման մասեր, գծային, ազդանշանային և թունելային նշաններ, հակահրդեհային գույք և այլ սարքավորումներ ու կառույցներ զննելը.

5)գնացքաքարշերի մեխանիկական, էլեկտրական և օդաճնշիչ սարքավորումներ, հանգույցներ և մանրամասեր ստուգելը և նորոգելը, դրանց տեխնիկական վիճակը զննելը.

6)գծային մեքենաների և մեխանիզմների, շարժական էլեկտրակայանների, ներքին այրման շարժիչների և այլ մեքենաների ու մեխանիզմների հանգույցներ ու կառավարման համակարգեր կարգաբերելը և կարգավորելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)զննող–նորոգող՝ վագոնների.

2)շրջանցող՝ երթուղային ճանապարհների և արհեստական կառույցների.

3)փականագործ՝ գնացքաքարշերի զննման և նորոգման.

4)կարգաբերող՝ գծային մեքենաների և մեխանիզմների:

110. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7512. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ

1.Մետրոպոլիտենի սարքավորումների սպասարկման և նորոգման բանվորները սպասարկում, նորոգում, կառավարում և սարքին վիճակում են պահում թունելային և նախասրահային փականները, պաշտպանիչ սարքերը, տեղադրում են մալուխներ և դրանք միացնում սարքավորումներին: Կատարում են էլեկտրաշարժիչների և այլ մեխանիզմների, մեքենաների, սարքավորումների, սարքերի մոնտաժում, ապամոնտաժում և նորոգում, շարժասանդուղքների ընթացիկ և կանխարգելիչ նորոգում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կայարանի, թունելի և նախասրահի փականներ սպասարկելը, նորոգելը, կառավարելը և սարքին վիճակում պահելը.

2)ավտոմատիկայի և պաշտպանիչ սարքեր նորոգելը, կարգավորելն ու փորձարկելը, պնևմահիդրավլիկ կուտակիչներ լիցքավորելը, ճանապարհի կառուցվածքների հետ փականների կցորդումն ստուգելը.

3)պոմպերի, օդափոխիչների, կափույրների տեխնիկական սպասարկումը, նորոգումը և կարգաբերումը, մալուխներ տեղադրելը և միացնելը.

4)ավտոմատ կառավարման սխեմաներ նորոգելը, կարգավորելը և կարգաբերելը, էլեկտրաշարժիչների և ճոպանասարքերի փաթույթներ փորձարկելը.

5)էլեկտրաշարժիչներ, գործարկման սարքավորումներ, էլեկտրահաղորդագծեր և այլ մեխանիզմներ մոնտաժելը, ապամոնտաժելը, նորոգելը.

6)մաքրող–հավաքող մեքենաները, օդորակիչները (կոնդիցիոներները), ավտոմատ ենթալիցքավորման կայանքները և այլ սարքավորումներ սարքին վիճակում պահելը.

7)սպասարկվող սարքավորումների և հեռաավտոմատիկայի սարքերի էլեկտրական բնութագրերի չափումներ կատարելը.

8)շարժասանդուղքների ընթացիկ և կանխարգելիչ նորոգման ժամանակ էլեկտրամոնտաժային և փականագործական աշխատանքներ կատարելը, շարժասանդուղքների էլեկտրասարքավորում նորոգելը և վերստուգելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փականագործ-էլեկտրագետ՝ մետրոպոլիտենի մետաղական կառուցվածքների սպասարկման և նորոգման.

2)փականագործ-էլեկտրագետ՝ մետրոպոլիտենի սարքավորումների սպասարկման և նորոգման.

3)փականագործ-էլեկտրագետ՝ մետրոպոլիտենի կայարանային և թունելային սարքավորումների սպասարկման և նորոգման.

4) փականագործ-էլեկտրագետ՝ շարժասանդուղքների սպասարկման և նորոգման:

111. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 752. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ

1.Կապի բնագավառի բանվորները սպասարկում և նորոգում են հեռախոսային ու հեռագրային սարքավորումները, կատարում են կապի գծային կառույցների և կայանի սարքավորումների սպասարկման ու նորոգման աշխատանքներ:

2.Սույն փոքր խմբի բանվորների պարտականությունները հիմնականում ներառում են. հեռախոսային կապի սպասարկման աշխատանքներ կատարելը. հեռագրեր ընդունելը և հաղորդելը. օդային գծեր, ավտոմատ և կիսաավտոմատ հեռախոսակապի խմբային սարքավորումներ, հսկողության և ազդանշանային համակարգեր սպասարկելը և նորոգելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 7521. Հեռախոսավարներ, հեռագրիչներ և բանվորներ՝ հարակից զբաղմունքների:**

2)**Ստորին խումբ 7522. Բանվորներ՝ կապի գծային կառույցների և կայանի սարքավորումների սպասարկման և նորոգման:**

112. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7521. ՀԵՌԱԽՈՍԱՎԱՐՆԵՐ, ՀԵՌԱԳՐԻՉՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Հեռախոսավարները և հեռագրիչները և հարակից զբաղմունքների բանվորները կատարում են բոլոր տեսակների հեռախոսային կապ սպասարկելու, տարբեր տեսակի սարքերի միջոցով հեռագրեր ընդունելու և հաղորդելու, փոստային առաքումներ, ծանրոցներ, պարբերական մամուլ և այլ թղթակցություն ընդունելու, մշակելու, առաքելու, տեղ հասցնելու, հանձնելու և տեսակավորելու աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բոլոր տեսակների հեռախոսակապեր սպասարկելը (մայրագծային, ներմարզային, միջքաղաքային և այլն).

2)խոսակցության կետում խցիկային փոխարկիչ (կոմուտատոր) սպասարկելը.

3)տեղեկատու քարտարանով աշխատելը և հարցումներին ճշգրիտ պատասխաններ տալը.

4)տպիչ սարքեր սպասարկելը և կարգաբերելը.

5)տարբեր տեսակի սարքերի միջոցով հեռագրեր ընդունելը և հաղորդելը.

6)հեռագրեր ձևակերպելը և տեսակավորելը.

7)նամակներ, ծանրոցներ և այլ թղթակցություն ընդունելը, մշակելը, առաքելը և հանձնելը.

8)դրամ ընդունել և վճարելը՝ ըստ փոխանցումների.

9)փոստային վագոնների, նավերի, ինքնաթիռների և ավտոտրանսպորտային միջոցների հետ փոստ փոխանակելը.

10)փոստային առաքումներ, պարբերական մամուլ, դրամ ստանալը և դրանք հասցեատերերին հասցնելը.

11)էլեկտրաէներգիայի, հեռախոսի և կենցաղային այլ ծառայությունների դիմաց վճարներ ընդունելը.

12)փոստային առաքումներ և տպագրական մամուլ տեսակավորելը, դրանք պարկերի կամ տուփերի մեջ փաթեթավորելը, կնքելը և սահմանված վայրեր առաքելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հեռախոսավար.

2)հեռագրավար.

3)օպերատոր՝ կապի.
4)տեսակավորող՝ փոստային առաքումների և տպագիր մամուլի:

113. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7522. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԿԱՊԻ ԳԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ

1.Կապի գծային կառույցների և կայանի սարքավորումների սպասարկման և նորոգման բանվորները կատարում են մալուխների, օդային գծերի, ավտոմատ և կիսաավտոմատ հեռախոսակապի խմբային սարքավորումների, ընդունող-հաղորդող սարքավորումների, հսկողության և ազդանշանային համակարգերի, հեռագրային կապի սարքավորումների, սարքերի և այլ սարքավորումների շահագործման-տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բոլոր տեսակի հեռախոսային սարքերի վնասվածքներ վերացնելը.

2)միջքաղաքային ավտոմատ և կիսաավտոմատ հեռախոսակապի խմբային սարքավորումների, քաղաքային և գյուղական հեռախոսակապի սարքավորումների շահագործման-տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարելը.

3)հեռախոսակապի վնասված տեղամասերը բացահայտելը, վնասվածքների բնույթը որոշելը և դրանք վերացնելը.

4)ընդունիչ-հաղորդիչ սարքավորումների, հսկողության և ազդանշանային համակարգերի տեխնիկական սպասարկում ու նորոգում, էլեկտրաչափումներ կատարելը.

5)անսարք հեռախոսային և հեռագրային սարքավորումներ բացահայտելն ու կարգավորելը.

6)հեռագրային և հեռախոսային կապ սպասարկող սարքավորման կանխարգելիչ նորոգում կատարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)էլեկտրամոնտյոր՝ հեռախոսակապի գծային կառույցների.

2)էլեկտրամոնտյոր՝ հեռախոսակայանի սարքավորումների.

3)էլեկտրամոնտյոր՝ կապի գծերի կայանի սարքավորումների.

4)էլեկտրամոնտյոր՝ հեռագրակայանի սարքավորումների:

114. ԵՆԹԱԽՈՒՄԲ 76. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ

1.Երկրաբանության և ընդերքի հետախուզման բանվորները կատարում են երկրաբանահետախուզական և տեղագրական-երկրաբաշխական աշխատանքներ, ընտրում և լվանում են երկրաբանական նմուշներ, կատարում են երկրաբանական-նկարահանման և որոնողական աշխատանքներ, սպասարկում և կարգաբերում են երկրաֆիզիկական սարքեր:

2.Աշխատանքները կատարվում են ձեռքով՝ առանց մեքենաների ու մեխանիզմների, կամ մեքենաներով ու մեխանիզմներով, և պահանջում են ունենալ տեղագրական-երկրաբաշխական և մարկշեյդերական աշխատանքների հմտություն, երկրաբաշխական և մարկշեյդերական նշանների կառուցվածքների, ապարների և նմուշների ընտրման ունակություն, լվացման, փաթեթավորման և տեղափոխման կանոնների, երկրաֆիզիկական կայանների, սարքերի կառուցվածքի սխեմայի և քանդման-հավաքման եղանակների իմացություն:

3.Սույն ենթախմբի բանվորների պարտականությունները ներառում են. տեղագրական քարտեզների բնօրինակներ պատրաստելը. տեղագրական-երկրաբաշխական և մարկշեյդերական չափումներ կատարելը. երկրաֆիզիկական սարքեր ու սարքավորումներ կարգաբերելը, կարգավորելը և նորոգելը. լեռնային հանքափորվածքներում նմուշների ընտրություն կատարելը՝ օգտակար հանածոների քանակը և որակը որոշելու համար. ապարների նմուշներ ընտրելը, փաթեթավորելը և պիտակավորելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 761. Բանվորներ՝ երկրաբանահետախուզական աշխատանքների.**

2)**Փոքր խումբ 762. Բանվորներ՝ տեղագրական - երկրաբաշխական աշխատանքների:**

115. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 761. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Երկրաբանահետախուզական աշխատանքների բանվորները լեռնային հանքափորվածքներում ընտրում են նմուշներ՝ օգտակար հանածոների քանակը և որակը որոշելու համար, լվացման տաշտակի կամ կայանքի մեջ լվանում են մանրահանքի նմուշներ, լեռնային տարբեր ապարներից պատրաստում են հղկուկներ և երեսահղկուկներ՝ նրանց ֆիզիկամեխանիկական հատկություններն ուսումնասիրելու համար, պիտակավորում և փաթեթավորում են նմուշները:

2.Սույն փոքր խմբի բանվորների պարտականությունները ներառում են՝ ակոսներից, հանքախորշերից կամ այլ հանքափորվածքներից օգտակար հանածոների նմուշներ ընտրելը. աշխատանքի համար հորատիչներ, հարվածամուրճեր և նմուշառիչներ նախապատրաստելը. պայթանցքերից, հանքափորվածքներից, հորերից և այլ տեղերից նմուշներ վերցնելը, պիտակավորելը և փաթեթավորելը, լվանալը, կավային նյութերից ազատելը, ծանր բաղադրամասերը ջրի մեջ նստեցնելը. լվացած նմուշ համարակալելը և փաթեթավորելը. ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար հղկուկներ և երեսահղկուկներ պատրաստելը. հեղկուկները մանրադիտակով ստուգելը և պիտակավորելը. բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 7610. Բանվորներ՝ երկրաբանահետախուզական աշխատանքների:**

116. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7610. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Երկրաբանահետախուզական աշխատանքների բանվորները օգտակար հանածոների որակն ու քանակը որոշելու համար հանքափորվածքներում ընտրում են նմուշներ, լվանում են սղկահանքային նմուշներ, տարբեր ապարներից պատրաստում են հղկուկներ և երեսահղկուկներ՝ դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության համար, պիտակավորում և փաթեթավորում են նմուշներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ակոսային, պայթանցքային և այլ հանքափորվածքներում նմուշներ ընտրելը.

2)նմուշառիչները, հանքահատ մուրճերը և հորատիչներն աշխատանքի նախապատրաստելը.

3)նմուշներ պիտակավորելը և փաթեթավորելը.

4)հատիկավոր նյութեր լվանալը, կավից ազատելը, ծանր բաղադրամասեր նստեցնելը.

5)լվացած նմուշներ համարակալելը և փաթեթավորելը.

6)ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար տարբեր ապարներից հղկուկներ և երեսահղկուկներ պատրաստելը.

7)հղկուկները մանրադիտակով ստուգելը և պիտակավորելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ընտրող՝ երկրաբանական նմուշների.

2)լվացող՝ երկրաբանական նմուշների.

3)հղկող՝ ապարների:

117.ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 762. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ-ԵՐԿՐԱԲԱՇԽԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Տեղագրական-երկրաբաշխական աշխատանքների բանվորները կատարում են ռելիեֆների, ջրագրության (հիդրոգրաֆիայի) և տեղագրական քարտեզի բովանդակության ստվերագծային տարրերի ուրվագծերի գծագրման ու փորագրման աշխատանքներ: Կատարում են տեղագրական-երկրաբաշխական և մարկշեյդերական չափումներ, մոնտաժում ու նորոգում, կարգաբերում, փորձարկում են փայտյա և մետաղյա երկրաբաշխական նշաններ և նորոգում երկրաֆիզիկական սարքեր ու սարքավորումներ:

2.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 7620. Բանվորներ՝ տեղագրական-երկրաբաշխական աշխատանքների:**

118. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 7620. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ-ԵՐԿՐԱԲԱՇԽԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Տեղագրական-երկրաբաշխական աշխատանքների բանվորները կատարում են ռելիեֆների, ջրագրության (հիդրոգրաֆիայի) և տեղագրական քարտեզի բովանդակության ստվերագծային տարրերի ուրվագծերի գծագրման ու փորագրման աշխատանքներ: Կատարում են տեղագրական-երկրաբաշխական և մարկշեյդերական չափումներ, մոնտաժում ու նորոգում են փայտյա և մետաղյա երկրաբաշխական նշաններ, կարգաբերում, փորձարկում և նորոգում են երկրաֆիզիկական սարքեր ու սարքավորումներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ռելիեֆների, ջրագրության և տեղագրական քարտեզի բովանդակության ստվերագծային ուրվագծեր փորագրելը և գծագրելը, որ բնորոշվում է հարթավայրային, անտառամիջյան, ճահճոտ տեղանքով, նախալեռնային շրջաններով՝ տեխնիկական մշակաբույսերի տնկադաշտերի (պլանտացիաների), այգիների, բանջարանոցների առկայությամբ և այլն.

2) շելֆի, ներքին ջրամբարների ու ծովերի նկարահանման ժամանակ տեղագրական-երկրաբաշխական և մարկշեյդերական չափումներ, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքներ կատարելը.

3)օպտիկական սարքեր տեղակայելը և ցուցմունքներ վերցնելը.

4)փայտե և մետաղական երկրաբաշխական նմուշներ մոնտաժելը, ապամոնտաժելը և նորոգելը, նշանների համար տեղեր մաքրելը, հավաքված տեսքով կամ առանձին մասերով դրանք բարձրացնելը.

5)սեյսմիկ, էլեկտրահետազոտական և երկրաֆիզիկական այլ կայաններ, սարքեր ու սարքավորումներ կարգաբերելը, կարգավորելը, փորձարկելը և նորոգելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փորագրիչ՝ տեղագրական քարտեզների բնօրինակների.

2)չափող՝ տեղագրական երկրաբաշխական և մարկշեյդերական աշխատանքներում.

3)մոնտաժող՝ երկրաբաշխական նշանների.

4)կարգաբերող՝ երկրաֆիզիկական սարքավորումների:

ԲԱԺԻՆ 8
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 8. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Մեքենաների և կայանքների մեքենավարները, օպերատորները, ապարատավարները, փականագործ-հավաքողները տեղում կամ հեռակառավարման միջոցով կառավարում ու հսկում են արդյունաբերական կայանքների, մեքենաների ու սարքավորումների, ավտոմատ ու կիսաավտոմատ հոսքագծերի, արդյունաբերական ռոբոտների աշխատանքը, առանձին մանրամասերից (դետալներից) հավաքում են պատրաստի արտադրանք, սպասարկում և վարում են տրանսպորտային տարբեր միջոցներ, կառավարում են արդյունաբերական և գյուղատնտեսական շարժական մեքենաներ և սարքավորումներ:

2.Որպես կանոն, այս աշխատանքները պահանջում են աշխատանքային փորձի և մասնագիտական գիտելիքների առկայություն, ինչը ձեռք է բերվում մասնագիտական ուսուցմամբ՝ հիմնական ընդհանուր կրթության կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիման վրա:

3.Այս հիմնական խմբի մի շարք զբաղմունքների համար անհրաժեշտ որակավորումը ձեռք է բերվում նաև միջնակարգ մասնագիտական կրթության հիման վրա:

4.Կայանքների ու մեքենաների օպերատորների, ապարատավարների և մեքենավարների, փականագործ-հավաքողների պարտականությունները ներառում են՝ լեռնային սարքավորումների, մետաղի, ապակու, խեցեղենի, փայտի, թղթի և այլ նյութերի

մշակման, ջրի վերամշակման, էլեկտրաէներգիայի արտադրության մեքենաների և սարքավորումների աշխատանքը ղեկավարելն ու հսկելը. մետաղից, հանքային հումքից, քիմիական արտադրանքից, ռետինից, պլաստիկ զանգվածից (պլաստմասսայից), փայտից, թղթից, մանածագործվածքից, կաշվից, մորթուց և այլ նյութերից ապրանքների, ինչպես նաև սննդամթերքի արտադրության մեքենաների ու սարքավորումների աշխատանքը ղեկավարելը. տպագրական հաստոցներ և կազմարարական մեքենաներ, ավտոմատ ու կիսաավտոմատ հոսքագծեր, արդյունաբերական ռոբոտներ ղեկավարելը. տրանսպորտային միջոցներ (գնացքներ, ավտոմեքենաներ, քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտ և այլն) վարելն ու ղեկավարելը. շարժական արդյունաբերական ու գյուղատնտեսական սարքավորումների աշխատանքը հսկելն ու ղեկավարելը. հանգույցներ, մեքենաներ, սարքավորումներ և կայանքներ հավաքելը՝ ըստ սահմանված տեխնոլոգիական հաջորդականության:

5.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1)**Ենթախումբ 81. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ արդյունաբերական կայանքների.**

2)**Ենթախումբ 82. Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ, փականագործ-հավաքողներ՝ անշարժ սարքավորումների.**

3)**Ենթախումբ 83. Վարորդներ և օպերատորներ՝ շարժական սարքավորումների:**

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 81. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Արդյունաբերական կայանքների օպերատորները, ապարատավարները և մեքենավարներն անմիջապես տեղում կամ հեռակառավարմամբ ղեկավարում ու հսկում են հանքաքարի արդյունահանման և հարստացման, հանքաքարի և այլ օգտակար հանածոների վերամշակման, մետաղի, ապակու, խեցեղենի, փայտի, թղթի և այլ նյութերի մշակման և դրանցից պատրաստված իրերի արտադրության, երեսպատման և կապակցող նյութերի մշակման ու արտադրության, քիմիական ու նավթաքիմիական հումքի և ջրի վերամշակման, էլեկտրաէներգիայի արտադրության և արդյունաբերական այդօրինակ այլ սարքավորումների աշխատանքը, ինչպես նաև ղեկավարում են ավտոմատ և կիսաավտոմատ հոսքագծեր ու արդյունաբերական ռոբոտներ:

2.Այս զբաղմունքները հիմնականում պահանջում են արդյունաբերական կայանքները, մեքենաներն ու սարքավորումները ղեկավարելու և հսկելու, տեխնիկական նորամուծությունները յուրացնելու, ինչպես նաև՝ նրանց աշխատանքային ռեժիմները փոփոխելու որոշակի աշխատանքային փորձ, հմտություն և ունակություն:

3.Սույն ենթախմբի բանվորների պարտականությունները ներառում են. հանքարդյունաբերական սարքավորումների, մետաղի, ապակու, խեցեղենի, փայտի, թղթի և այլ նյութերի մշակման և դրանցից պատրաստված իրերի արտադրության, երեսպատման և կապակցող նյութերի մշակման ու արտադրության, քիմիական և նավթաքիմիական հումքի մշակման ու մաքրման, ջրի վերամշակման սարքերի և կայանքների, էլեկտրակայանների սարքավորումների, էլեկտրաէներգիայի արտադրության սարքավորումների և կայանքների, արդյունաբերական այլ սարքերի ու կայանքների, ավտոմատ և կիսաավտոմատ հոսքագծերի ու արդյունաբերական ռոբոտների աշխատանքը ղեկավարելը և հսկելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 811. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ հանքաքարի արդյունահանման և հարստացման կայանքների.**

2)**Փոքր խումբ 812. Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և այլ մասնագետներ՝ մետաղահալ կայանքների.**

3)**Փոքր խումբ 813. Օպերատորներ՝ ապակու և ապակե, ճենապակե և կերամիկական իրերի, երեսպատման ու կապակցող նյութերի արտադրության ու թրծման կայանքների և վառարանների.**

4)**Փոքր խումբ 814. Օպերատորներ և ապարատավարներ՝ փայտանյութի մշակման և վերամշակման, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի և դրանցից պատրաստված իրերի արտադրության կայանքների.**

5)**Փոքր խումբ 815. Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների.**

6)**Փոքր խումբ 816. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի կայանքների.**

7)**Փոքր խումբ 817. Օպերատորներ՝ ավտոմատ հավաքման գծերի և արդյունաբերական ռոբոտների:**

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 811. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Հանքաքարի արդյունահանման և հարստացման կայանքների ապարատավարները, օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում և վերահսկում են տարբեր եղանակներով օգտակար հանածոների արդյունահանման մեքենաների ու կայանքների աշխատանքը, օգտակար հանածոների (հանքանյութերի) մշակման ու հարստացման ժամանակ սպասարկում և նորոգում են սարքավորումները:

2.Այս փոքր խմբի բանվորների պարտականությունները հիմնականում ներառում են. հանքավայրերում և քարհանքերում նշագծման, հանքաքարի արդյունահանման, կուտակման, բեռնման, բեռնաթափման և հանքի մաքրման աշխատանքների ժամանակ մղաններ (բուլդոզերներ) և էքսկավատորներ ղեկավարելը. հանքաքարի արդյունահանման և փոխադրման սարքավորումներ և մեքենաներ ղեկավարելը. հանքաքարի հարստացման ժամանակ մանրացման, խոնավացման և այլ տեխնոլոգիական գործընթացներում օգտագործվող սարքավորումներ ղեկավարելը. հորատման մեքենաներ և սարքավորումներ սպասարկելը և նորոգելը. անընդհատ գործողության հանքարդյունաբերական սարքավորումների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը. հանքաքարի ու քարի վերամշակման մեքենաներ և սարքավորումներ ղեկավարելը. հորատանցքեր ամրացնելը, լվանալը, լայնացնելը և փակելը. տորֆի արդյունահանման մեքենա ղեկավարելը. տորֆի փորձանմուշներ ընտրելը, չորացնելը, փորձարկելը և այլ աշխատանքներ:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8111. Օպերատորներ և մեքենավարներ՝ լեռնային սարքավորումների.**

2)**Ստորին խումբ 8112. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ հանքաքարի և քարի մշակման կայանքների.**

3)**Ստորին խումբ 8113.Հորատողներ՝ հորատանցքերի և հորերի, և մասնագետներ՝ հարակից.**

4)**Ստորին խումբ 8114. Ապարատավարներ և մեքենավարներ՝ տորֆի արդյունահանման և վերամշակման սարքավորումների:**

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8111. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Լեռնային սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում են օգտակար հանածոների և հանքաքարի բաց կամ ստորգետնյա եղանակներով արդյունահանման մեքենաները և կայանքները, կատարում են դրանց տեխնիկական սպասարկման աշխատանքները, աջակցում են հանքաքարի փորձարկման ու դրանում մետաղի և օգտակար հանածոների քանակի որոշման աշխատանքներին:

2. Նրանց պարտականությունները ներառում են.

1) մղանների (բուլդոզերների) աշխատանքը ղեկավարելը՝ լեռնային ապարների հումքի և այլ նյութերի տեղափոխման, հանքավայրում նշագծման աշխատանքների կատարման, ապարների հարթեցման ժամանակ, ինչպես նաև էքսկավատորների աշխատանքը ղեկավարելը՝ հանքախորշում լեռնային զանգվածի տեղաշարժման նպատակով.

2)հանքաքարի և օգտակար հանածոների արդյունահանման, մաքրամշակման, կուտակման, բեռնման և բեռնաթափման ժամանակ միաշերեփ էքսկավատորների աշխատանքը կառավարելը.

3)արդյունահանող հորատանցիչ կոմբայններ, փորող կայանքներ, ներհատող և փորող մեքենաներ կառավարելը.

4)կուտակող, ինքնագնաց վերաբեռնիչներ, կուտակված հանքաքարը դարսակող և այլ սարքավորումներ ղեկավարելը.

5)վառելիքի լիցքավորման, մալուխի և խողովակների տեղադրման, ինչպես նաև ստորգետնյա տրանսպորտային ինքնագնաց այլ մեքենաներ կառավարելը.

6)լեռնային փորվածքների հորատանցման ժամանակ թունելային մետաղե սեգմենտաձև սալեր տեղադրող մեքենաներ և հորատանցման լրացուցիչ համակարգեր կառավարելը.

7)հանքաքարեր փորձարկելը, դրանցում մետաղի առկայությունը որոշելը.

8)անընդհատ գործողության հանքարդյունաբերական սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մեքենավար՝ մղանի (բուլդոզերի).

2)մեքենավար՝ հորատող կայանքի.

3)օպերատոր՝ փորձանմուշավորող սարքավորման:

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8112. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԵՎ ՔԱՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Հանքաքարի և քարի մշակման կայանքների օպերատորները, ապարատավարները և մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են հանքաքարի ու քարի վերամշակման, այդ թվում՝ հանքաքարի հարստացման, խառնման, խոնավացան և տեխնոլոգիական այլ գործառնություններ կատարող մեքենաների ու կայանքների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)Հանքաքարը և քարը հանքից անջատման և նախնական մանրացման սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

2)դատարկ ապարների հեռացման, հանքանյութի հավաքման, լվացման, տեսակավորման, նստեցման, քամման և լուծազատման սարքավորումների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

3)հանքաքարի՝ լուծույթներով նախնական մշակման և հետագա վերամշակման նախապատրաստական աշխատանքներ կատարելը.

4)հանքանյութից մետաղի և խտանյութի անջատման, դատարկ ապարների խտացման, հանքաքարի հարստացման աշխատանքներ կատարելը.

5)հանքաքարի հարստացման տարբեր տեխնոլոգիական գործընթացներ վարելը, հարստացման համար տարբեր քիմիական նյութերի՝ ազդանյութերի լուծույթների, թթուների պատրաստման և դրանց բաժնավորման աշխատանքներ կատարելը.

6)հանքաքարից մետաղի անջատման լվացող սարքավորումներ ղեկավարելը, ելքահատվածներում և ելանցքերում լեռնային զանգվածի կուտակումներ վերացնելը.

7)խառնող թմբուկներում, այլ սարքերում խառնուրդի խառնման ընթացքը վարելը.

8)հարստացված հանքաքարի խոնավացման, բովագնդիկներ ստանալու համար տաբեր աշխատանքներ կատարելը.

9)բովախառնուրդի կտրման, մանրահատման, մշակման մեքենաներ ղեկավարելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ հանքաքարի հարստացման կայանքի.

2)մեքենավար՝ հանքային հումքի մանրացման կայանքի.

3)մեքենավար՝ հանքաքարի խառնման թմբուկների.

4)օպերատոր՝ քարի կտրման-մշակման կայանքի:

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8113. ՀՈՐԱՏՈՂՆԵՐ՝ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ, ՀՈՐԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ

1.Հորատանցքեր և հորեր հորատողները և հարակից մասնագետները տեղակայում, սպասարկում, կարգավորում, նորոգում են հորատող կայանքները և դրանց սարքավորումներն ու համակարգերը, կատարում են հորատանցքերի փորձարկման աշխատանքներ, ղեկավարում են ամբարձիչներն ու կայանքները, մասնակցում դրանց կանխարգելիչ ու ընթացիկ նորոգման աշխատանքներին, վարում ապարաշերտերի

փորձարկման գործընթացը, կատարում հորատանցքերի ամրացման ու այդօրինակ այլ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հորատման կայանքի տեղադրման և հորատման նախապատրաստական աշխատանքներ կատարելը (ամբարձիչ նախապատրաստելն ու ղեկավարելը, քսուքահովացնող ցեխ մղող պոմպ և խողովակներ փոխադրելն ու տեղակայելը, առանձին հանգույցներ միացնելը և այլն).

2)ոչ արդյունաբերական նպատակներով՝ նավթի և գազի հորատանցքերի հորատման աշխատանքներ կատարելը, հորատման համապատասխան սարքավորումներ ղեկավարելը.

3)հորատանցքերի մաքրման և սպասարկման աշխատանքներ կատարելը.

4)հորատող կայանքների ուժային ագրեգատների, շարժաբերի, ճնշման ապահովման, հովացման, յուղման, ավտոմատ անվտանգության համակարգեր սպասարկելը, կարգավորելն ու կարգաբերելը.

5)հորատող կայանքներ նորոգելը.

6)ամբարձիչներ կառավարելը, հորատանցքեր փորձարկելը, ամբարձիչ մեխանիզմների կանխարգելիչ և ընթացիկ նորոգմանը մասնակցելը.

7)հորատանցքերի ամրացման, լայնացման, խորացման, լվացման, ապարաշերտի կտրման, օգտագործված հորը փակելու աշխատանքներ կատարելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մեքենավար՝ հորատման կայանքի.

2)մեքենավար՝ ամբարձիչի.

3)օպերատոր՝ հորատանցքի փորձարկման.

4)շարժիչավար՝ հորատանցման կայանքի.

5)օպերատոր՝ հորատանցքի ամրացման.

6)մեքենավար՝ հորատանցքի ամրացման:

7. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8114. ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՏՈՐՖԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Տորֆի արդյունահանման և վերամշակման սարքավորումների ապարատավարները և մեքենավարները ղեկավարում են տորֆի արդյունահանման մեքենաները (բազմաշերեփ էքսկավատորներ և այլ սարքավորումներ), կատարում են տորֆի ընտրման, դարսման, չորացման աշխատանքներ, սպասարկում և վերանորոգում են արդյունահանման և վերամշակման մեքենաները և սարքավորումները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տորֆը կտորներով արդյունահանող մեքենաներ և սարքավորումներ ղեկավարելը, սպասարկելը և նորոգելը.

2)տրակտորներ, կցորդիչ սարքեր, օդամղիչ գլդոններ և այլ սարքեր ղեկավարելը՝ տորֆակույտից տորֆի մեքենայացված անջատման համար.

3)բազմաշերեփ էքսկավատորներ ղեկավարելը.

4)տորֆի չորացման սարքավորումներ ղեկավարելը, չորացման ռեժիմներ կարգավորելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մեքենավար՝ կտորներով տորֆի արդյունահանման և մշակման մեքենաների.

2)մեքենավար՝ շերտավոր տորֆի արդյունահանման և մշակման մեքենաների.

3)մեքենավար՝ տորֆի արդյունահանման էքսկավատորի.

4) ապարատավար՝ տորֆի չորացման:

8.ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 812. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՄԵՏԱՂԱՀԱԼ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Մետաղահալ կայանքների օպերատորները, ապարատավարներն ու այլ մասնագետները ղեկավարում և վերահսկում են ձուլման վառարանների, գլանման

հաստոցների, մետաղի ջերմային և քիմիական մշակման, մետաղի տաք մամլման կայանքների աշխատանքը, արտադրում են թուջ, պողպատ և այլ մետաղներ ու համաձուլվածքներ, վերահալում, զտում (ռաֆինացնում), ձևափոխում (մոդիֆիկացնում) և լեգիրացնում (այլ մետաղ խառնելով որակավորում) են մետաղները, ինչպես նաև հալված մետաղը ձուլակաղապարների մեջ լցնելու եղանակով ստանում մանրամասեր և նախապատրաստվածքներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ կոքս և հանքաքար խառնելը. թուջ, պողպատ և այլ մետաղներ ու դրանց համաձուլվածքներ ձուլելը. մետաղի ջարդոն վերահալելը. մետաղ զտելը, ձևափոխելը, լեգիրացնելը. սև և գունավոր մետաղների ձուլման վառարանների, ինչպես նաև՝ գլոցման հաստոցների, մետաղի տաք մամլման և ձևավորման կայանքների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը. ձուլակաղապարների մեջ ձուլման միջոցով թուջից, պողպատից ու այլ մետաղներից մանրամասեր և նախապատրաստվածքներ ստանալը. նախապատրաստվածքների ջերմային և քիմիական մշակում և գլոցում կատարելը. գերմաքուր, հազվագյուտ, դժվարահալ մետաղների ստացման տեխնոլոգիական գործընթացներ ղեկավարելը և հսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8121. Օպերատորներ՝ չմշակված հանքանյութի հալման, դոմնային, կոնվերտերային և մետաղի զտման վառարանների.**

2)**Ստորին խումբ 8122. Հալողներ, ձուլողներ և գլոցողներ.**

3)**Ստորին խումբ 8123. Օպերատորներ և մեքենավարներ՝ մետաղի և հրակայուն նյութերի ջերմամշակման կայանքների.**

4)**Ստորին խումբ 8124. Օպերատորներ՝ մամլման, գլոցման և արտամղման գործընթացների.**

5)**Ստորին խումբ 8125. Զբաղմունքներ՝ հարակից, այլ խմբերում չներառված:**

9. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8121. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՉՄՇԱԿՎԱԾ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԻ ՀԱԼՄԱՆ, ԴՈՄՆԱՅԻՆ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ, ԿՈՆՎԵՐՏԵՐՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՂԻ ԶՏՄԱՆ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ

1.Չմշակված հանքանյութի հալման, դոմնային, կոնվերտերային և մետաղների զտման վառարանների օպերատորները ղեկավարում ու հսկում են դոմնային և պողպատաձուլման, կոնվերտերային և այլ տեսակի վառարանների և կայանքների աշխատանքը, որոնք նախատեսված են պողպատի և թուջի արտադրության համար, ինչպես նաև ղեկավարում և հսկում են մետաղների զտման վառարանների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հանքանյութը բեռնավորման սարքավորումներով մետաղաձուլման վառարան և ագրեգատներ բեռնելը, կոնվերտերային վառարանի բեռնավորումը ղեկավարելը և հսկելը.

2)պողպատի արտադրության ժամանակ էլեկտրախարամային հալման, մարտենյան, զտման կամ այլ տեսակի վառարանների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

3)դոմնային վառարաններ բեռնավորելը, թուջի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ հսկելը և ղեկավարելը.

4)գունավոր մետաղների կոնվերտերային և զտման վառարանների աշխատանքը ղեկավարելը ու վերահսկելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մեքենավար՝ վառարանի բեռնավորման մեքենայի.

2)օպերատոր՝ կոնվերտերային վառարանի բեռնավորման.

3)օպերատոր՝ պողպատի ձուլման մարտենյան վառարանի.

4)օպերատոր՝ պողպատի ձուլման կոնվերտերային վառարանի.

5)պողպատագործ՝ էլեկտրավակուումային և էլեկտրական վառարանների.

6)պողպատագործ՝ վակուումային վառարանի:

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8122. ՀԱԼՈՂՆԵՐ, ՁՈՒԼՈՂՆԵՐ ԵՎ ԳԼՈՑՈՂՆԵՐ

1.Հալող, ձուլող ու գլոցող ապարատավարները ղեկավարում ու վերահսկում են մետաղի գլոցման, հանքանյութի հալման, մետաղի ջարդոնի վերահալման, մետաղի զտման և ձևափոխման վառարաններն ու ձուլման մեքենաները, կատարում մետաղի լեգիրացման աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)սև և գունավոր մետաղների հանքանյութի, բեկորաշեղջի (ագլոմերատի), խտանյութերի (կոնցենտրատների) հալման և ձուլման վառարանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը, մետաղը երկրորդական ձուլման նախապատրաստելը.

2)տարբեր տեսակի ձուլակաղապարներում ձուլման եղանակով մանրամասեր և նախապատրաստվածքներ պատրաստելը, ձուլման բազմաբնույթ տեխնոլոգիական գործընթացներ ղեկավարելը և հսկելը.

3)գերմաքուր, դժվարահալ և հազվագյուտ մետաղների ստացման գործընթաց ղեկավարելը և հսկելը.

4)վերակռումից, մամլումից, ձգումից և մետաղի հետագա մշակումից առաջ բովախառնուրդի կրկնակի տաքացման վառարաններ ղեկավարելը և վերահսկելը.

5)նախապատրաստվածքի մշակման տաք կամ սառը գլոցման մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

6)գունավոր մետաղներից գլոցման սառը կամ տաք եղանակով տարբեր ձևի մանրամասեր ստանալը, գլոցող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հալող՝ մետաղի և համաձուլվածքի.

2)հալող՝ էլեկտրախարամային եղանակով.

3)ձուլող՝ գունավոր մետաղի.

4)ձուլող՝ մետաղի և համաձուլվածքի.

5)օպերատոր՝ տաք գլոցման մեքենայի.

6)օպերատոր՝ սառը գլոցման մեքենայի.

7)օպերատոր՝ գունավոր մետաղի գլոցման մեքենայի.

8)օպերատոր՝ մետաղի հալման վառարանի.

9)օպերատոր՝ ձուլման մեքենայի:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8123. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄԵՏԱՂԻ ԵՎ ՀՐԱԿԱՅՈՒՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՋԵՐՄԱՄՇԱԿՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Մետաղի և հրակայուն նյութերի ջերմամշակման կայանքների օպերատորները և մեքենավարները ղեկավարում ու հսկում են տաքացման, սառեցման ու քիմիական մշակման ճանապարհով մետաղական իրերի ֆիզիկական բնութագրերի փոփոխման կայանքների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ներքին լարվածության նվազեցման, պլաստիկության վերականգնման, հատիկավոր կառուցվածքի բարելավման նպատակով մետաղական պատրաստվածքների տաքացման ու սառեցման վառարանների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

2)պողպատե պատրաստվածքների կոփման վառարանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)պատրաստվածքի արտաքին շերտի ամրությունը մեծացնելու, դրա միջուկի մածուցիկությունը և պլաստիկությունն ապահովելու համար քիմիական կամ ջերմային մշակման կայանքների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)պողպատե կոփված իրերի կրկնակի տաքացման համար վառարանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը՝ ներքին լարվածությունը հանելու և միջուկի մածուցիկությունն ապահովելու նպատակով.

5)գերմաքուր (պրեցեզիոն) մակնիշների պողպատ ու համաձուլվածքներ, կիսահումքից և գունավոր մետաղներից արտադրատեսակներ ու համաձուլվածքներ թրծելը և թրծաթողելը՝ ջերմային ռեժիմի կարգավորմամբ.

6)սև ու գունավոր մետաղներից պատրաստված մանրամասեր, դրանց թափոններն ու այլ արտադրատեսակներ թրծելը և չորացնելը.

7)կավից, հրակայուն կավից մամլմամբ կամ այլ եղանակներով ստացված աղյուսի և կերամիկական այլ մանրամասերի, կրաքարի, բարձր հրակայունության մետաղի օքսիդների պարունակությամբ արտադրատեսակներ ու նյութեր թրծելը կամ այլ տեսակի ջերմային մշակում կատարելը.

8)տարբեր նյութեր շիկացնելը, կրացնելը, ջրազրկելը և այլ տեսակի մշակումներ կատարելը, այդ թվում՝ հազվագյուտ մետաղներ և ճառագայթաակտիվ նյութեր ավելացնելով.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)կոփող՝ պողպատե գերմաքուր (պրեցեզիոն) համաձուլվածքի.

2)ջերմամշակող՝ մետաղի.

3)թրծող՝ կերամիկական իրերի.

4)թրծող՝ գունավոր մետաղի.

5)օպերատոր՝ մետաղի տաքացման վառարանի:

12. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8124. ԿՈՐԶԱՆՈՂՆԵՐ, ԳԼԱՆՈՂՆԵՐ, ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՐՏԱՄՂՈՂ ՄԱՄԼԻՉՆԵՐԻ

1.Մամլման, գլոցման և արտամղող մամլիչների օպերատորները ղեկավարում և վերահսկում են գլոցման, մամլման սարքավորումները՝ մետաղալարի, խողովակների ու այդօրինակ շինվածքների արտադրության ժամանակ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տաք գունավոր մետաղի նախապատրաստվածքը բեռնարկղում (կոնտեյներում) զետեղելն ու ձուլամայրի (մատրիցայի) միջով նրա արտամամլումը նախօրոք պատրաստված ձևակաղապարի մեջ.

2)մետաղալար գլոցող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)գլոցման տարբեր մեքենաներով և տարբեր մամլիչներով մետաղաթերթերի ու մետաղաձողերի տաք կամ սառը գլանվածքներից մեքենամասեր գլոցելը, ուղղելն ու ծռելը.

4)տաք գլոցման մեքենաներով տարբեր մակնիշի, ծրագծի (պրոֆիլի) և կտրվածքի մետաղների տաք գլոցում կատարելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ մամլման մեքենայի.

2)օպերատոր՝ գլոցման մեքենայի.

3)օպերատոր՝ արտամղիչ մամլիչների:

13. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8125. ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս խմբի մասնագետները կատարում են կոքսի արտադրության, երկաթի համաձուլվածքների (բացառությամբ թուջի և պողպատի) հալման և հարակից այլ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տարբեր հզորության վառարաններում երկաթի համաձուլվածքներ (բացառությամբ թուջի և պողպատի) հալելը, հալույթը կաղապարների մեջ լցնելը, հալված համաձուլվածքի բյուրեղացումը հսկելը.

2)տարբեր սարքավորումների միջոցով կոքսի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ հսկելը և կառավարելը.

3)վառարաններ գազ մատակարարող սարքավարումներ ղեկավարելը և հսկելը.

4)հանքանյութը կուտակիչից ընդունելու, տեղափոխելու, վառարաններ բեռնավորելու մեքենաներ, մեխանիզմներ, սարքեր և սարքավորումներ ղեկավարելը և հսկելը.

5)կոքսային հանքախառնուրդ ջերմամշակելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)ձուլող՝ երկաթի համաձուլվածքների (բացառությամբ թուջի և պողպատի).
2)ապարատավար՝ կոքսի արտադրության.
3)ապարատավար՝ վառարաններ գազի մատակարարման.
4)մեքենավար՝ կոքսի և հանքանյութի փոխադրման.
5)ապարատավար՝ կոքսի և հանքանյութի խառնուրդի ջեմամշակման:

14.ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 813. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՊԱԿՈՒ ԵՎ ԱՊԱԿԵ, ՃԵՆԱՊԱԿԵ ԵՎ ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ԻՐԵՐԻ, ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՊԱԿՑՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՐԾՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ

1.Ապակու և ապակե, ճենապակե և կերամիկական իրերի, երեսպատման և կապակցող նյութերի արտադրության ու թրծման կայանքների և վառարանների օպերատորները ղեկավարում ու վերահսկում են հալման, թրծման վառարանների, մեքենաների ու սարքավորումների աշխատանքը, որոնք օգտագործվում են ապակե, ճենապակե, հախճապակե, կերամիկական իրերի, երեսպատման և կապակցող նյութերի արտադրության համար:
2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ապակու արտադրության մեքենաներ, ապակե, կերամիկական, ճենապակե և հախճապակե իրերի հալման և թրծման վառարաններ և այլ սարքավորումներ ղեկավարելը և հսկելը. կաղապարման կամ փչման եղանակով ապակե և ճենապակե իրեր պատրաստելը. կաղապարների մեջ տարբեր եղանակներով կերամիկական և հախճապակե իրեր ձուլելը, երեսպատման և կապակցող նյութեր, գիպսաբետոնե սալիկներ արտադրելը, հարակից այլ աշխատանքներ:
3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.
1)**Ստորին խումբ 8131. Օպերատորներ՝ ապակու և ապակե իրերի թրծաթողման և կերամիկական իրերի թրծման վառարանների.**
2)**Ստորին խումբ 8132. Օպերատորներ՝ ապակու և ապակե իրերի արտադրության կայանքների.**
3)**Ստորին խումբ 8133. Օպերատորներ՝ կերամիկական և ճենապակե իրերի արտադրության կայանքների.**
4)**Ստորին խումբ 8134. Օպերատորներ՝ երեսպատման և կապակցող նյութերի արտադրության և թրծման կայանքների.**
5)**Ստորին խումբ 8139. Օպերատորներ՝ վառարանների և կայանքների, այլ խմբերում չներառված:**

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8131. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՊԱԿՈՒ և ԱՊԱԿԵ ԻՐԵՐԻ ԹՐԾԱԹՈՂՄԱՆ ԵՎ ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ԻՐԵՐԻ ԹՐԾՄԱՆ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ

1.Ապակու և ապակե իրերի թրծաթողման ու կերամիկական իրերի թրծման վառարանների օպերատորները ղեկավարում ու հսկում են թրծման վառարանների, այլ վառարանների, մեքենաների ու սարքավորումների աշխատանքը, որոնք օգտագործվում են ապակու, աղյուսի, կերամիկական այլ իրերի և հախճապակու արտադրությունում:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ապակու առաձգականության մեծացման և ներքին լարումների վերացման նպատակով ապակի թրծելը, թրծման վառարանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.
2)ապակե պատրաստվածքների կրկնակի թրծման աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը, կերամիկական, հախճապակյա, ճենապակյա իրեր թրծելը, ջնարակի ու նախշազարդի ամրացման նպատակով դրանք մշակելը.
3)աղյուսների և կղմինդրների պատրաստման համար թրծման վառարանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.
4)այլ աշխատողներին ղեկավարելը.
5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)օպերատոր՝ ապակու թրծման վառարանի.

2)օպերատոր՝ կերամիկական իրերի թրծման վառարանի,
3) օպերատոր՝ հախճապակու և ճենապակու թրծման վառարանի:

16. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8132. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՊԱԿՈՒ ԵՎ ԱՊԱԿԵ ԻՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Ապակու և ապակե իրերի արտադրության կայանքների օպերատորները մեքենաներով, կիսաավտոմատներով, թմբուկներով և ավտոմատ գծերով արտադրում են ապակի և ապակե արտադրատեսակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապակու հալման վառարանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

2)փչելու կամ մամլման ճանապարհով ապակե իրերի ձևավորման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)հալած ապակուց թերթավոր ապակի ձգող կամ հարթ ապակուց ապակու թերթ գլոցող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)ապակու արտադրության համար ապակե ջարդոն մշակող կայանքների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

5)ապակու մակերեսի հարթեցման, ողորկման և փայլեցման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

6)ձգելու կամ փչելու եղանակով հալած ապակուց ապակե ծողեր, խողովակներ և այլ արտադրատեսակներ պատրաստող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

7)կաղապարման միջոցով ապակե զանգվածից սնամեջ և այլ տեսակի իրեր պատրաստելը.

8)կվարցային բլոկներից տարբեր տրամագծի ապակե խողովակներ և կվարցային թիթեղներ ձգելը.

9)փրփրաբլոկներ եռակցելը և թրծելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ ապակու արտափչման կիսաավտոմատի.

2)օպերատոր՝ ապակեկաղապարման մեքենայի.

3)օպերատոր՝ ապակու արտադրության ավտոմատ գծի.

4)օպերատոր՝ ապակի եփող մեքենայի.

5)օպերատոր՝ ապակե խողովակներ ձգող մեքենայի:

17. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8133. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ԵՎ ՃԵՆԱՊԱԿԵ ԻՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Կերամիկական և ճենապակե իրերի արտադրության կայանքների օպերատորները լցակաղապարում են կերամիկական նյութ, կաղապարների մեջ ձուլում ճենապակե և հախճապակե իրեր, գլոցում ճենապակե խողովակներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)լցման, համաձուլման և համակցման եղանակներով կերամիկական նյութերից սանիտարաշինարարական իրեր լցակաղապարելը, գիպսային կաղապարները լուծաշաղախով լցնելը.

2)ճենապակե և հախճապակե իրեր ձուլելը հավաքովի կաղապարներում սեղանների վրա, փոխակրիչներով և ձուլման մեքենաներով.

3)հաստոցներով, սառը վիճակում տարբեր կտրվածքների, կտրվածքաձևերի, տրամագծերի և երկարության խողովակներ գլոցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ձուլագործ՝ սանիտարաշինարարական իրերի արտադրության.

2)լցակաղապարող՝ ճենապակե և հախճապակե իրերի.

3)գլոցող՝ խողովակների:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8134. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՊԱԿՑՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՐԾՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Երեսպատման և կապակցող նյութերի արտադրության ու թրծման կայանքների օպերատորները կառավարում են երեսպատման և կապակցող նյութերի արտադրության կայանքները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)երեսպատման և կապակցող նյութերի արտադրության տեխնոլոգիական գծի կայանքներ ղեկավարելը և հսկելը.

2) գիպսաբետոնե պանելների գլոցման մեքենայի մեխանիզմներ ղեկավարելը և հսկելը.

3)երեսպատման և կապակցող նյութերը պանելային սալիկների կաղապարների մեջ լցնելու տեխնոլոգիական գործընթաց ղեկավարելը և հսկելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ երեսպատման և կապակցող նյութերի արտադրության հոսքային գծի.

2)օպերատոր՝ գիպսաբետոնե սալերի գլոցման հաստոնի:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8139. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է ապակու, կերամիկական և ճենապակե իրերի, երեսպատման և կապակցող նյութերի արտադրության կայանքների այն օպերատորներին, ովքեր ներառված չեն փոքր խումբ 813-ի («Օպերատորներ՝ ապակու և ապակե արտադրատեսակների, կերամիկական և ճենապակե իրերի, երեսպատման և կապակցող նյութերի արտադրության ու թրծման կայանքների և վառարանների») այլ ստորին խմբեր և սպասարկում են ապակու արտադրության որոշ տեխնոլոգիական գործընթացներ:

2.Այստեղ ներառվում են այն աշխատողները, ովքեր կառավարում և վերահսկում են ապակի, կավ, ջնարակ, հղկանյութեր պատրաստելու նպատակով բաղադրամասեր խառնելու կամ հալած ապակուց ապակեթել պատրաստելու համար օգտագործվող մեքենաները և սարքավորումները:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապակու պատրաստման բաղադրամասեր խառնող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

2)կերամիկական իրերի և աղյուսի պատրաստման համար կավ վերամշակող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)ջնարակ և հղկանյութ պատրաստող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)ապակեթելերի արտադրության մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

5)ապակու ուղղագիծ ու ձևավոր թերթերի և ապակե արտադրատեսակների վրա տարբեր տեսակի հաստոցներով երեսակման նշում կատարելը.

6)ապակե նախապատրաստվածքից մազանոթային խողովակներ ձգելը և միաժամանակ հոսանքահաղորդիչ շերտով պատելը.

7)ապակե թելի կաղապարման տեխնոլոգիական սարք կառավարելը՝ կարգավորելով կաղապարման տեխնոլոգիական գործընթացի ռեժիմները.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ կավի խառնման մեքենայի.

2)օպերատոր՝ ապակու խառնման մեքենայի.

3)օպերատոր՝ ապակու կաղապարման.

4)օպերատոր՝ արտափչման կայանքի.

5)օպերատոր՝ ապակու մանրաթելի արտադրության.

6)օպերատոր՝ ապակու հղկման:

20. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 814. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ՓԱՅՏԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ԹԱՂԱՆԹԱՆՅՈՒԹԻ, ԹՂԹԻ, ՍՏՎԱՐԱԹՂԹԻ, ՖԻԲՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԵՐԻ

1.Փայտանյութի մշակման ու վերամշակման, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի և դրանցից պատրաստված իրերի արտադրության կայանքների օպերատորները և ապարատավարները ղեկավարում և վերահսկում են գերանների, շերտաձողերի, տախտակների մշակման գործընթացները, ինչպես նաև՝ սպասարկում են մանրատախտակների կտրատման, վերջնամշակման ու փաթեթավորման հաստոցներն ու կայանքները, ղեկավարում և հսկում են թղթի, ստվարաթղթի, և ֆիբրի արտադրության կայանքները, դրանցից պատրաստված իրերի արտադրության հաստոցները և կայանքները, հսկում են տեխնոլոգիական գործընթացները:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. գերանների և սղոցանյութերի մշակման տեխնոլոգիական գործընթացներ ղեկավարելը, դրանք տեսակավորելը. ճնշմամբ ստացվող փայտե իրերի արտադրության տեխնոլոգիական գործընթացներ ղեկավարելը և հսկելը. թաղանթանյութի, թղթի, ստավարաթղթի և ֆիբրի արտադրության սարքավորումներ և կայանքներ ղեկավարելը և կարգաբերելը. տեխնոլոգիական գործընթացներ հսկելը. հարակից այլ աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8141. Օպերատորներ՝ փայտասղոցման, շինարարական կոնստրուկցիաների արտադրության և այլ կայանքների.**

2)**Ստորին խումբ 8142. Օպերատորներ և ապարատավարներ՝ թաղանթանյութի և թղթի զանգվածի պատրաստման, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի և դրանցից պատրաստված իրերի արտադրության կայանքների:**

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8141. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՓԱՅՏԱՍՂՈՑՄԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Փայտասղոցման, շինարարական կոնստրուկցիաների արտադրության և այլ կայանքների օպերատորները ղեկավարում ու հսկում են փայտանյութի սղոցման, տեսակավորման և չորացման սարքավորումները և կայանքները, ղեկավարում են հեծանաձև և թաղանթաձև փայտե նախապատրաստվածքներից հավաքովի շինարարական կառուցվածքների արտադրության սարքավորումների աշխատանքը, ղեկավարում և հսկում են փայտանյութի մամլման և կաղապարման տեխնոլոգիական գործընթացը, շինարարական իրերի արտադրության աշխատանքները, կատարում են փայտյա շինարարական կառուցվածքների ատաղձագործական մշակման աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ըստ տրամագծի և փայտանյութի տեսակի՝ գերաններ տեսակավորելը, փայտամշակման հաստոցների և կայանքների վրա դրանք տեղադրելը.

2)գերանների մշակման ժամանակ սղոցման հաստոցների և կայանքների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը՝ շերտաձողեր, տախտակ և սղոցանյութ ստանալու նպատակով.

3)փայտանյութի մշակումից ստացված նախապատրաստվածքները և արտադրատեսակները վառարաններում կամ բնական եղանակով չորացնելը.

4)հեծանաձև և թաղանթաձև նախապատրաստվածքներից հավաքովի կառուցվածքների արտադրության հոսքագծեր ղեկավարելը.

5)մամլման և կաղապարման միջոցով շինարարական իրերի ստացման հոսքագծեր ղեկավարելը և վերահսկելը.

6)մանրատախտակի արտադրության հոսքագծերի աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ փայտասղոցման կայանքի.

2)օպերատոր՝ փայտամշակման կայանքի.

3)օպերատոր՝ գերանների տեսակավորման և վերամշակման հոսքագծի.

4)օպերատոր՝ սղոցանյութի վերամշակման կայանքի.
5)օպերատոր՝ փայտանյութի չորացման կայանքի.
6 օպերատոր՝ փայտանյութի մամլման և կաղապարման հոսքագծի:

22. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8142. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ԹԱՂԱՆԹԱՆՅՈՒԹԻ ԵՎ ԹՂԹԻ ԶԱՆԳՎԱԾԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԹՂԹԻ, ՍՏՎԱՐԱԹՂԹԻ, ՖԻԲՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1. Թաղանթանյութի և թղթի զանգվածի պատրաստման, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի ու դրանցից իրերի արտադրության կայանքների ապարատավարներն ու օպերատորները ղեկավարում ու հսկում են մեքենաների, սարքավորումների, կայանքների և հոսքային գծերի աշխատանքը, թաղանթանյութի, թղթի զանգվածի, տարբեր տեսակի թղթի, ստվարաթղթի, ֆիբրի, դրանցից պատրաստված իրերի արտադրության ժամանակ ղեկավարում և հսկում են տեխնոլոգիական գործընթացները և այդ գործընթացների ժամանակ երկրորդական նյութերի ստացման աշխատանքները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թաղանթանյութի լվացում, մանրացում, ջերմամեխանիկական մշակում, մաքրում, սպիտակեցում և խտացում կատարելը.

2)երկայնական ամրությամբ երկարաթել թուղթ արտադրելը.

3)թղթի հիմք ամրացնելը, բարձր ամրության թուղթ արտադրելը.

4)թղթի արտադրության տարբեր տեսակի և կառուցվածքի մեքենաների մեջ թղթի զանգված լցնելը, բարձր որակի, գրահրատարակչական, քարտեզագրական և այլ նշանակության թուղթ արտադրելը.

5)ստվարաթղթի արտադրության տարբեր տեսակի և կառուցվածքի մեքենաների մեջ ստվարաթղթի զանգված լցնելը, տարբեր որակի և նշանակության ստվարաթուղթ արտադրելը,.

6)լվացազերծված և ձևավորված թղթի զանգվածից առողջապահական նշանակության թղթե արտադրատեսակներ արտադրելը.

7)թղթի և ստվարաթղթի թափոններից երկրորդական թուղթ և ստվարաթուղթ արտադրելը.

8)թուղթ փաթեթավորելը, թուղթ և ստվարաթղթի թերթեր կտրահատելը.

9)թղթի արտադրության ժամանակ երկրորդական նյութեր՝ սկիպիդար և տարբեր յուղեր ստանալը, դրանք մշակելը և փաթեթավորելը.

10)գերանների և փայտանյութի մանրահատման հաստոցների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

11)փայտանյութից, լաթից, ծղոտից, թղթի թափոնից և նմանատիպ այլ նյութերից թղթի արտադրության ջերմախոնավային մշակման հաստոցներ ղեկավարելը և հսկելը.

10)այլ աշխատողներին ղեկավարելը.

11)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ առողջապահական թղթի կայանքի.

2)ապարատավար՝ թղթի արտադրության հոսքային գծի:

23. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 815. ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ՆԱՎԹԱՔԻՄԻԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների ապարատավարները, օպերատորները և մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են նախանշված հատկություններով նոր նյութեր ստանալու նպատակով քիմիական հումք և նյութեր վերամշակող մեքենաների ու սարքավորումների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են քիմիական նյութերը և հումքը մանրացնելը, խառնելը, թորելը կամ քամելով զտելը, տաքացնելը, ջերմամշակելը, չորացնելը, պինդ նյութերի լուծույթներ ստանալը և այդ ճանապարհով անհրաժեշտ հատկություններ ունեցող նոր նյութեր ստանալու աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 8151. Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ ջարդող, աղացող և խառնող կայանքների.

2)Ստորին խումբ 8152. Օպերատորներ՝ կրակարանի, և ապարատավարներ՝ թրծման վառարանների ու ջերմամշակման համանման կայանքների.

3)Ստորին խումբ 8153. Ապարատավարներ (օպերատորներ)՝ զտման և զատման մեքենաների.

4)Ստորին խումբ 8154. Ապարատավարներ (օպերատորներ)՝ թորիչ սարքերի և ռեակտորների.

5)Ստորին խումբ 8159. Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների, այլ խմբերում չներառված:

24.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8151. ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՋԱՐԴՈՂ, ԱՂԱՑՈՂ ԵՎ ԽԱՌՆՈՂ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Ջարդող, աղացող և խառնող կայանքների ապարատավարները, օպերատորները և մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են քիմիական նյութեր և հումք ջարդող, մանրացնող, տրորող և խառնող մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տարբեր տեսակի ջարդող սարքավորումներով քիմիական հումքի, նյութերի և կիսապատրաստվածքների չոր կամ թաց եղանակներով խոշոր, միջին և մանր ջարդման տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

2)տարբեր կառուցվածքի աղացներով քիմիական հումքը, նյութերը և կիսապատրաստվածքները տարբեր եղանակներով աղալու տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

3)տարբեր կառուցվածքի կայանքներով քիմիական հումքը, նյութերը և կիսապատրաստվածքները տարբեր եղանակներով մանրացնելու, մաղելու և տեսակավորելու տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

4)քիմիական հումքի, նյութերի և կիսապատրաստվածքների խառնման տեխնոլոգիական գործընթացներ վարելը, հավելանյութեր ավելացնելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ քիմիական նյութեր և հումք մանրացնող կայանքի.

2)օպերատոր՝ քիմիական նյութեր և հումք խառնող կայանքի.

3)օպերատոր, քիմիական նյութեր աղացող կայանքի.

4)մեքենավար՝ քիմիական հումք աղացող կայանքի.

5)ապարատավար՝ քիմիական նյութեր մաղող և տեսակավորող կայանքի:

25. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8152. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԿՐԱԿԱՐԱՆԻ, ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ԹՐԾՄԱՆ ՎԱՌԱՐԱՆԻ ՈՒ ՋԵՐՄԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՆՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Կրակարանի օպերատորները, թրծման վառարանների և ջերմամշակման համանման կայանքների ապարատավարները ղեկավարում ու հսկում են քիմիական հումքի և նյութերի տաքացման, թրծման ու այլ տեսակի ջերմային վերամշակման մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վառարանների, սարքավորումների և կայանքների աշխատանքը ղեկավարելը և հսկելը, որոնց միջոցով տաքացնում են քիմիական նյութերը և հումքը՝ մաքրելու, խառնելու, նրանց հատուկ հատկություններ տալու կամ քիմիական հատկությունները փոխելու նպատակով.

2)վառարանների սարքավորումների և կայանքների աշխատանքը ղեկավարելը և հսկելը, որոնց միջոցով թրծում են քիմիական նյութերը և հումքը՝ հատուկ հատկություններ տալու, քիմիական հատկությունները փոփոխելու կամ ոչ պիտանի այլ նյութեր հեռացնելու համար.

3)քիմիական նյութերի և հումքի չորացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, չորացման զանազան վառարանների և այլ սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ քիմիական նյութեր և հումք թրծող վառարանի.

2)օպերատոր՝ քիմիական նյութեր և հումք չորացնող վառարանի.

3)ապարատավար՝ քիմիական նյութեր և հումք չորացնող կայանքի.

4)ապարատավար՝ քիմիական նյութեր և հումք թրծող կայանքի:

26. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8153. ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՁՏՄԱՆ ԵՎ ԶԱՏՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Ձտման և զատման մեքենաների ապարատավարները և օպերատորները ղեկավարում ու հսկում են քիմիական նյութեր ու հումք զտող և զատող մեքենաների ու սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)զտման զանազան սարքավորումներով և մեքենաներով քիմիական նյութերի և հումքի զտման տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

2)զատման զանազան սարքավորումներով և մեքենաներով քիմիական նյութերի և հումքի զատման տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար (օպերատոր)՝ զտիչ մեքենայի.

2)ապարատավար (օպերատոր)՝ զատիչ մեքենայի:

27. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8154. ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ (ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ)՝ ԹՈՐԻՉ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՌԵԱԿՏՈՐՆԵՐԻ

1.Թորիչ սարքերի և ռեակտորների ապարատավարները (օպերատորները) ղեկավարում ու հսկում են քիմիական նյութեր և հումք մաքրող ու թորող սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)նյութերի կամ հումքի բարձր աստիճանի մաքրման, խառնուրդներից բազմաբաղադրիչ նյութերի բաժանման, ցնդող նյութերի հեռացման նպատակով քիմիական նյութերի և հումքի թորման տեխնոլոգիական գործընթաց վարելը, թորման սարքերի աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

2)լուծույթների և կախույթների խտացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, համապատասխան սարքերի աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ քիմիական նյութերի և հումքի թորման տեխնոլոգիական գործընթացի վարման.

2)օպերատոր՝ քիմիական նյութերի և հումքի թորման սարքավորումների:

28. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8159. ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ՆԱՎԹԱՔԻՄԻԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այս ստորին խումբը ներառում է քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման ապարատավարներին, օպերատորներին և մեքենավարներին, ովքեր չեն մտնում փոքր խումբ 815-ի («Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների») այլ ստորին խմբերում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)քիմիական արտադրության թափոնների վերամշակման տեխնոլոգիական գործընթացներ վարելը (մաքրում, այրում, շոգեհարում, գազահեռացում և այլն), ինչպես նաև համապատասխան մեքենաների և կայանքների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

2)սպիտակեցնող քիմիական հակազդակներով քիմիական լուծույթների մշակման տեխնոլոգիական գործընթաց վարելը, համապատասխան սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)հումքից ճառագայթաակտիվ նյութերի կորզման և հեռացման կամ համանման նյութերի մշակման տեխնոլոգիական գործընթացներ վարելը, համապատասխան սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ քիմիական արտադրության թափոնների վերամշակման սարքերի.

2)ապարատավար՝ քիմիական արտադրության թափոնների վերամշակման տեխնոլոգիական գործընթացների:

29. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 816. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԵՐԻ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Էլեկտրակայանների և ցանցերի կայանքների օպերատորները, ապարատավարները և մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի արտադրության և բաշխման կայանքների աշխատանքը, ղեկավարում են ջրի մաքրման և վերամշակման, ստորգետնյա արտադրական նշանակության ջրի մաքրման կայանքների աշխատանքը, կատարում են վերը նշված կայանքների ընթացիկ նորոգում և տեխնիկական սպասարկում:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. էլեկտրաէներգիայի արտադրության մեքենաների, սարքավորումների ու կայանքների (այդ թվում՝ ատոմային ռեակտորների) աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը. շոգեկաթսաներ, գազատուրբինային սարքավորումներ, էներգիայի արտադրության այլ մեքենաներ, սարքավորումներ ու կայանքներ սպասարկելը (վառելիքի բեռնավորում կամ մատակարարում, այրված վառելիքի մնացորդի հեռացում, վթարային վիճակների վերացնում և այլն). արդյունաբերական կեղտաջրերի և ճառագայթաակտիվ ջրերի մաքրման կայանքների ու պոմպային կայանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը, դրանք սպասարկելը և նորոգելը. էլեկտրական ցանցերի շահագործման ժամանակ համապատասխան տեխնիկական միջոցները ղեկավարելը, ցանցերի աշխատանքը հսկելը, դրանք սպասարկելը և նորոգելը. ջերմային էներգիայի արտադրության սարքերի, մեքենաների ու կայանքների աշխատանքը ղեկավարելը և հսկելը, ջերմային էներգիայի մատակարարման ցանցի աշխատանքը հսկելը, սպասարկելը և նորոգելը. հարակից այլ աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8161. Օպերատորներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի.**

2)**Ստորին խումբ 8162. Օպերատորներ և մեքենավարներ՝ շոգետուրբինների, շոգեկաթսաների և շոգեշարժիչների.**

3)**Ստորին խումբ 8163. Ապարատավարներ և օպերատորներ՝ ջրի մշակման կայանքների և համանման սարքավորումների:**

30. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8161. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԵՐԻ

1.Էլեկտրակայանների և ցանցերի օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում և հսկում են էլեկտրական և այլ տեսակի էներգիաների արտադրության և դրանց բաշխման սարքավորումների ու մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ջերմային և էլեկտրական էներգիայի արտադրության սարքավորումների և կայանքների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

2)էլեկտրական էներգիայի արտադրության ատոմային կայանքների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)էլեկտրական և ջերմային կայանքները (այդ թվում՝ ատոմային ռեակտորները) նոր վառելիքով բեռնելը և օգտագործված վառելիքը բեռնաթափելը.

4)հիդրոէլեկտրակայանների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

5)այլընտրանքային էներգիայի աղբյուրներ օգտագործող էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության սարքերի և կայանքների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

6)էլեկտրակայանների և ջերմակայանների արտադրած էլեկտրական և ջերմային էներգիան սպառողներին բաշխելը, արտադրական հզորությունները վերահսկելը.

7)էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության կայաններում, դրանց բաշխման ցանցերում առաջացած վթարների վերացման աշխատանքներ կատարելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ էլեկտրաէներգետիկական սարքավորման.

2)օպերատոր՝ հիդրոէներգետիկական սարքավորման.

3)օպերատոր՝ ատոմային ուժային կայանքի.

4)օպերատոր՝ արևային մարտկոցի.

5)օպերատոր՝ ջերմային ցանցերի.

6)մեքենավար՝ գազատուրբինային կայանքի:

31. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8162. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՇՈԳԵՏՈՒՐԲԻՆՆԵՐԻ, ՇՈԳԵԿԱԹՍԱՆԵՐԻ ԵՎ ՇՈԳԵՇԱՐԺԻՉՆԵՐԻ

1.Շոգետուրբինների, շոգեկաթսաների և շոգեշարժիչների օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են շոգետուրբինների, կաթսաների ու շարժիչների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տուրբինային բաժանմունքի անխափան, տնտեսապես արդյունավետ աշխատանքն ապահովելը, կարգավարական ժամանակացույցի (գրաֆիկի) փոփոխման դեպքում ագրեգատների միջև էլեկտրական և ջերմային էներգիաների ծանրաբեռնվածությունը բաշխելը, նորոգման համար սարքավորումներ տեղափոխելը.

2)ծանրաբեռնվածության ժամանակացույցին համապատասխան՝ շոգետուրբինների աշխատանքային ռեժիմը վերահսկելը, սպասարկվող սարքավորումներ գործարկելը, անջատելը, փորձարկելը, միացնելը և վերամիացնելը շոգետուրբինների ջերմային համակարգերին, ավտոմատ կարգավորիչների ու ազդանշանային համակարգի աշխատանքը վերահսկելը.

3)շոգեկաթսաների և սարքավորումների անխափան, տնտեսապես արդյունավետ աշխատանքն ապահովելը, կարգավարական ժամանակացույցի փոփոխման դեպքում բեռնվածությունը կաթսայի կայանքների միջև բաշխելը, սպասարկվող սարքավորումներ գործարկելը, անջատելը, փորձարկելը, միացնելը և վերամիացնելը շոգեկաթսաների ջերմային համակարգերին, ավտոմատ կարգավորիչների ու ազդանշանային համակարգի աշխատանքը վերահսկելը.

4)կարծր վառելիքով աշխատող ջրատաքացուցիչների և շոգեկաթսաների աշխատանքը ղեկավարելը և հսկելը, ջեռուցման ցանցեր մատակարարվող ջրի մակարդակը և ջերմաստիճանը, շոգեգոլորշու ճնշումը և ջերմաստիճանը վերահսկելը.

5) վթարներ վերացնելը.

6) այլ աշխատողներին ղեկավարելը.

7) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3. Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1) մեքենավար՝ շոգետուրբինային բաժանմունքի.

2) մեքենավար՝ շոգեկաթսայատան.

3) օպերատոր՝ շոգետուրբինի կառավարման կենտրոնական ջերմային վահանակի.

4) օպերատոր՝ շոգեկաթսայի կառավարման կենտրոնական ջերմային վահանակի.

5) մեքենավար-հնոցապան՝ շոգեկաթսայատան:

32. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8163. ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՋՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Ջրի մշակման կայանքների և համանման սարքավորումների ապարատավարներն ու օպերատորները ղեկավարում ու վերահսկում են ջրի մաքրման և մշակման, արդյունաբերական կեղտաջրերի և ճառագայթաակտիվ ջրերի մաքրման, արտադրական թափոնների արդյունահանման տեխնոլոգիական գործընթացները, պոմպային կայանները, օդային և գազային կոմպրեսորները, գոլորշեցուցիչները, տաքացուցիչները, օդափոխիչ և սառնարանային կայանքները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ջրի քիմիական և այլ եղանակներով մաքրման տեխնոլոգիական գործընթացները ղեկավարելը և հսկելը.

2)ջուր փափկեցնելը, կաթսաների աշխատանքային պայմաններին համապատասխան անհրաժեշտ այլ հատկություններ ապահովելը և ջուր մատակարարելը.

3)հեղուկ և չոր ճառագայթաակտիվ թափոնների պահեստարանները շահագործելու ընթացքում դրանք սպասարկելը.

4)արդյունաբերական կեղտաջրերի և ճառագայթաակտիվ ջրերի մաքրման տեխնոլոգիական գործընթաց ղեկավարելը և հսկելը.

5)խմելու, կենցաղային և արդյունաբերական կարիքների համար ջրի մատակարարման պոմպակայանների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

6)աղբի և արտադրական այլ թափոնների ու մնացորդների այրման մեքենաների, սարքավորումների, բարձր ջերմաստիճանային կայանքների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

7)գազային և օդային կոմպրեսորների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

8)հեղուկները, գազերը, կիսահեղուկները և սորուն նյութերը մի տեղից մյուսը փոխադրող պոմպային կայանների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

9)պահեստներում ցածր ջերմաստիճան ապահովող սարքերի և կայանքների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

10)տաքացուցիչ ու օդափոխիչ համակարգի աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

11)վթարներ վերացնելուն աջակցելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ ջրի մատակարարման պոմպակայանի.

2)օպերատոր՝ ջրի մաքրման սարքավորման.

3)ապարատավար՝ ջրի քիմիական մաքրման կայանքի.

4)ապարատավար՝ արդյունաբերական կեղտաջրերի մաքրման կայանքի.

5)օպերատոր՝ թափոնների այրման վառարանի.

6)օպերատոր՝ սառնարանային կայանքի.

7)ապարատավար՝ օդափոխության համակարգի:

33. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 817. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՎՏՈՄԱՏ ՀԱՎԱՔՄԱՆ ԳԾԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՌՈԲՈՏՆԵՐԻ

1.Ավտոմատ հավաքման գծերի և արդյունաբերական ռոբոտների օպերատորները ղեկավարում ու վերահսկում են ավտոմատ ու կիսաավտոմատ հավաքման գործընթացները, ինչպես նաև արդյունաբերական ռոբոտների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են ավտոմատ և կիսաավտոմատ հավաքման գծերի, ինչպես նաև՝ արդյունաբերական ռոբոտների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը, բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8171. Օպերատորներ՝ ավտոմատ հավաքման գծերի.**

2)**Ստորին խումբ 8172. Օպերատորներ՝ արդյունաբերական ռոբոտների:**

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8171. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՎՏՈՄԱՏ ՀԱՎԱՔՄԱՆ ԳԾԵՐԻ

1.Ավտոմատ հավաքման գծերի օպերատորները ղեկավարում և վերահսկում են ավտոմատ և կիսաավտոմատ հավաքման գործընթացները:

2.Նրանց պարտականությունների մեջ մտնում են.

1)ավտոմատ, կիսաավտոմատ հավաքման գծերի աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

2)այլ աշխատողներին ղեկավարելը.

3)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ ավտոմատ հավաքման գծի.

2)օպերատոր՝ կիսաավտոմատ հավաքման գծի:

35. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8172 ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՌՈԲՈՏՆԵՐԻ

1.Արդյունաբերական ռոբոտների օպերատորները ղեկավարում և վերահսկում են արդյունաբերական ռոբոտների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)արդյունաբերական ռոբոտների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

2)այլ աշխատողներին ղեկավարելը.

3)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ արդյունաբերական ռոբոտների.

2)վերահսկիչ՝ արդյունաբերական ռոբոտների:

36. ԵՆԹԱԽՈՒՄԲ 82. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ԱՆՇԱՐԺ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Անշարժ սարքավորումների օպերատորները, ապարատավարները, մեքենավարները և փականագործ-հավաքողները տեղում կամ հեռակառավարման միջոցով հսկում ու ղեկավարում են անշարժ սարքավորումների աշխատանքը մետաղամշակման, օգտակար հանածոների վերամշակման, քիմիական արտադրատեսակների, ռետինի, պլաստմասսայի, սինթետիկ խեժերի և այլ նյութերի, թերթերի և գրքերի արտադրության, վերջիններիս կազմարարական աշխատանքների, մանրաթելերի և գործվածքի արտադրության, կաշվից, մորթուց և կտորից ապրանքների կարման, սննդարդյունաբերության ապրանքների մշակման և վերամշակման ժամանակ օգտագործվող սարքերը, մեքենաները և կայանքները, ինչպես նաև՝ կատարում են պատրաստի արտադրանքի հավաքման աշխատանքներ՝ ըստ սահմանված տեխնոլոգիական գործընթացների պայմանների և հաջորդականության:

2.Այդպիսի աշխատանքը հիմնականում պահանջում է ղեկավարվող և հսկվող արդյունաբերական կայանքների, մեքենաների և սարքավորումների կառուցվածքի և աշխատանքի սկզբունքների վերաբերյալ գիտելիքների ու փորձի առկայություն, այդ կայանքների, մեքենաների և սարքավորումների կարգաբերման և տեխնոլոգիական ռեժիմների փոփոխման կարողություն և ունակություն, հավաքման գործընթացի կանոնների և հաջորդականության իմացություն:

3.Սույն ենթախմբի բանվորների պարտականություններն են. մետաղամշակման, հանքային հումքի վերամշակման, քիմիական նյութերի և օրգանական համադրման (սինթեզի) միջոցով ստացվող արտադրատեսակների արտադրության, ցեմենտի, ներկերի և շինարարական այլ նյութերի, ռետինի, փայտի, պլաստմասսայի և խեժերի արտադրության, մանրաթելերից, մորթուց, կաշվից և կտորից արտադրանքի արտադրության, հացահատիկի, կաթի, մսի, բանջարեղենի, ինչպես նաև՝ սննդի և համանման մթերքների վերամշակման համար օգտագործվող մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը. տպագրական հաստոցների և կազմող, փաթեթավորող ու դաջող մեքենաների աշխատանքը ղեկավարելը. պատրաստի արտադրանք հավաքելը առանձին մասերից և հանգույցներից՝ ըստ սահմանված հավաքման տեխնոլոգիական գործընթացների կանոնների ու հաջորդականության:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 821. Օպերատորներ, մեքենավարներ՝ մետաղի և հանքային հումքի վերամշակման մեքենաների և սարքավորումների.**

2)**Փոքր խումբ 822. Օպերատոներ, մեքենավարներ և ապարատավարներ՝ քիմիական արտադրանքի արտադրության մեքենաների և սարքավորումների.**

3)**Փոքր խումբ 823. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ ռետինի, պլաստմասսայի, սինթետիկ խեժի, կաուչուկի և համանման այլ իրերի արտադրության սարքավորումների.**

4)**Փոքր խումբ 824. Օպերատորներ՝ փայտամշակման սարքավորումների.**

5)**Փոքր խումբ 825. Օպերատորներ և մեքենավարներ՝ տպագրական և կազմարարական մեքենաների.**

6)**Փոքր խումբ 826. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ մանածագործվածքի (տեքստիլի), կաշվի, մորթու վերամշակման և դրանցից իրերի արտադրության սարքավորումների.**

7)**Փոքր խումբ 827. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ սննդամթերքի և համանման այլ մթերքների մշակման սարքավորումների.**

8)**Փոքր խումբ 828. Փականագործ-հավաքողներ.**

9)**Փոքր խումբ 829. Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և փականագործ - հավաքողներ՝ անշարժ սարքավորումների, այլ խմբերում չներառված:**

37.ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 821. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄԵՏԱՂԻ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մետաղների և հանքային հումքի վերամշակման սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են մետաղամշակման հաստոցների և ոչ մետաղական հանքային նյութերի վերամշակման մեքենաների, հաստոցների, սարքավորումների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. մեկ կամ մի քանի մետաղամշակման հաստոցներ (խառատային, ֆրեզերային, գայլիկոնման, հղկման և այլն), մեխանիկական մկրատներ ու սղոցներ, ինչպես նաև՝ երկաթբետոնից, ցեմենտից ու քարից ստացվող իրերի արտադրության արտամղող, կաղապարող, խառնող, հավաքող, մանրացնող, կտրող և այլ գործողություններ կատարող մեքենաներ և սարքավորումներ ղեկավարելը և հսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8211. Օպերատորներ՝ մետաղամշակման հաստոցների.**

2)**Ստորին խումբ 8212. Օպերատորներ և մեքենավարներ՝ բետոնի, ցեմենտի և այլ ոչ օրգանական նյութերի ու բետոնե կամ երկաթբետոնե իրերի արտադրության սարքավորումների:**

38. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8211. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՍՏՈՑՆԵՐԻ

1.Մետաղամշակման հաստոցների օպերատորները ղեկավարում և հսկում են մետաղամշակման ավտոմատ ու կիսաավտոմատ հաստոցներն ու համակարգերը, որոնք կատարում են բազմակի գործողություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)առանձին կամ հոսքային գծի մեջ աշխատող բոլոր տեսակի (խառատային, ֆրեզերային, գայլիկոնման, ռանդման, ներտաշման, հղկման և այլն) ավտոմատ կամ կիսաավտոմատ հաստոցներ և համակարգեր ղեկավարելը և հսկելը.

2)թվային ծրագրավորմամբ կառավարվող բազմանպատակային հաստոցներ ու մանիպուլյատորներ (ռոբոտներ) ղեկավարելը և հսկելը.

3)բոլոր տեսակի հաստոցների և համակարգերի ընթացիկ սպասարկումը, դրանք քսայուղերով և հովացնող հեղուկներով լիցքավորելը, մշակող գործիքներ տեղակայելը և փոփոխելը, այդ գործիքները սրելը կամ սրելու ուղարկելը, վերանորոգման աշխատանքներին մասնակցելը, հաստոցները և համակարգերը վերանորոգումից հետո գործարկելը և փորձարկելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)օպերատոր՝ թվային ծրագրավորմամբ կառավարվող հաստոցի.
2)օպերատոր՝ մետաղամշակման հաստոցի.
3)օպերատոր՝ մետաղամշակման մանիպուլյատորների (ռոբոտների):

39. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8212. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԲԵՏՈՆԻ, ՑԵՄԵՆՏԻ ԵՎ ՈՉ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ ԲԵՏՈՆԵ ԿԱՄ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ԻՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Բետոնի, ցեմենտի և ոչ օրգանական այլ նյութերի ու բետոնե կամ երկաթբետոնե իրերի արտադրության սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են արտամղող, կաղապարող, խառնող, հղկող, կտրող և այլ գործողություններ կատարող մեքենաների աշխատանքը:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)արտամղող, կաղապարող, հղկող, կտրող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը երկաթբետոնից ու քարից՝ այնպիսի տարբեր իրերի արտադրության ու վերջնական հարդարման համար, ինչպիսիք են սալարկման սալաքարերը, ցանկապատման սյուները, խողովակների ճկված հատվածամասերը (սեգմենտները), ջրանցքերի ճանապարհաանցումային խողովակները, պատերի ու ներքին միջնապատերի սալաքարերը, շինարարական կառուցվածքների բաղադրամասերը, մալուխային խողովակաշարերը, օդափոխիչ կայանքների խողովակները.
2)բետոնի արտադրության համար ավազի, մանրախճի, ցեմենտի և ջրի խառնման մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.
3)ցեմենտաքարն աղացներով մանրացնելը, մանրացման տեխնոլոգիական գործընթացը կարգավորելը, համապատասխան փոշեխառնուրդներ (հավելանյութեր) ավելացնելը.
4)ոչ օրգանական կապակցող նյութերի և խառնուրդների արտադրության խառնող, մանրացնող, արտամղող, մամլող մեքենաներ և սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.
5)բետոնի և երկաթբետոնի ջերմային և ջերմախոնավային մշակման տեխնոլոգիական գործընթացները և համապատասխան սարքավորումների ու մեքենաների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.
6)քարից, քարի ծուլվածքից (արհեստական քարից) իրերի պատրաստման տեխնոլոգիական գործընթացները և համապատասխան սարքավորումների ու մեքենաների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.
7)այլ աշխատողներին ղեկավարելը.
8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)օպերատոր՝ բետոնախառնիչ մեքենայի.
2)օպերատոր՝ ցեմենտաքարի մանրացման մեքենայի.
3)օպերատոր՝ բետոնի ջերմային մշակման կայանքի.
4)մեքենավար՝ քար ջարդող մեքենայի:

40. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 822. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Քիմիական արտադրանքի արտադրության մեքենաների և սարքավորումների օպերատորները, մեքենավարներն ու ապարատավարները ղեկավարում ու վերահսկում են տարբեր քիմիական նյութերի ու դրանց բաղադրամասերի վերամշակման, դեղագործական պատրաստուկների, օծանելիքների, պայթուցիկ նյութերի, լուսանկարչական թղթի և ժապավենի, ազոտական նյութերի և օրգանական սինթեզի միջոցով ստացվող ապրանքների, տպագրական ներկերի, պոլիմերային շինարարական նյութերի, օրգանական ապակու և ապակեթելերի, քիմիական մանրաթելերի, ջրամեկուսիչ ու քիմիական այլ

նյութերի արտադրության, ինչպես նաև մետաղների փայլեցման, մետաղապատման ու պաշտպանիչ շերտով պատման մեքենաների և սարքավորումների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ կաղապարման, զտման, խմորման (ֆերմենտացման), խառնման, հավելումների ավելացման և քիմիական ու այլ նյութերի մշակման մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը՝ այդ նյութերին անհրաժեշտ հատկություններ տալու, դրանք հետագայում արդյունաբերության մեջ օգտագործելու, վերջնական արտադրանք պատրաստելու նպատակով: Պարտականությունների մեջ մտնում են նաև մետաղական և ոչ մետաղական մակերևույթների քիմիական եղանակով փայլեցման, մետաղապատման և այլ պաշտպանիչ շերտերով ծածկելու տեխնոլոգիական գործընթացներ հսկելը, համապատասխան սարքավորումների և մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8221. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ դեղագործական արտադրանքի և օծանելիքի արտադրության սարքավորումների.**

2)**Ստորին խումբ 8222. Օպերատորներ և մեքենավարներ՝ զինամթերքի և պայթուցիկ նյութերի արտադրության սարքավորումների.**

3)**Ստորին խումբ 8223. Օպերատորներ՝ փայլեցման, մետաղապատման, մետաղը պաշտպանիչ շերտով պատելու կայանքների.**

4)**Ստորին խումբ 8224. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ լուսանկարչական թղթի և ժապավենի արտադրության սարքավորումների.**

5)**Ստորին խումբ 8225. Օպերատորներ, մեքենավարներ և ապարատավարներ՝ ազոտային և օրգանական սինթեզի արգասիքների արտադրության կայանքների.**

6)**Ստորին խումբ 8226. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ անիլինաներկի, տպագրական ներկերի և լաքաներկային արտադրության սարքավորումների.**

7)**Ստորին խումբ 8227. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ պոլիմերային շինարարական նյութերի, օրգանական ապակու և ապակեթելերի արտադրության սարքավորումների.**

8)**Ստորին խումբ 8228. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ քիմիական թելերի, ապակեթելային նյութերի և ջրատարրալուծական արտադրության սարքավորումների.**

9)**Ստորին խումբ 8229. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ քիմիական նյութերի արտադրության սարքավորումների, այլ խմբերում չներառված:**

41. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8221. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ՕԾԱՆԵԼԻՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1Դեղագործական արտադրանքի և օծանելիքի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են դեղագործական ու օծանելիքի արտադրության համար օգտագործվող մի շարք քիմիական և այլ նյութեր վերամշակող մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)այնպիսի մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը, որոնց օգնությամբ դեղագործական արտադրանքի ու օծանելիքի արտադրության ժամանակ կատարվում են լվացման, զտման, խմորման, տաքացման, խառնման, մանրացման, լցման ու հերմետիկ փաթեթավորման գործառնություններ, ինչպես նաև՝ արտադրում են լվացող ու համանման այլ նյութեր.

2)ջերմաստիճան, ճնշում, նյութերի հոսքի և տեխնոլոգիական գործընթացների արագություն կարգավորելը.

3)սարքավորումներ մաքրելը և ախտահանելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ լվացող միջոցների արտադրության մեքենայի.

2)օպերատոր՝ դեղագործական արտադրության մեքենայի.

3)օպերատոր՝ օծանելիքի արտադրության մեքենայի.

4)ապարատավար՝ ղեղագործական պատրաստուկների արտադրության սարքավորումների.

5)ապարատավար՝ համալիր միացությունների արտադրության կայանքի.

6)ապարատավար՝ ատամնաբուժական նյութերի արտադրության կայանքի.

7)օպերատոր՝ մամլմամբ հաբերի ստացման մամլիչի:

42. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8222. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Զինամթերքի և պայթուցիկ նյութերի արտադրության սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են զինամթերքի ու պայթուցիկ նյութերի արտադրության համար տարբեր քիմիական նյութերի ու այլ բաղադրամասերի արտադրության մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)այնպիսի սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը, որոնց միջոցով խառնվում են նյութեր, ներմուծվող բաղադրամասեր, ընթանում են քիմիական այլ գործընթացներ՝ պայթուցիկ նյութերի և դրանց բաղադրիչների արտադրության համար.

2)հրագործական (պիրոտեխնիկական) արտադրանքի և պայթուցիչների համար դետոնատորների արտադրության մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

3)արկերի, ռումբերի, հրթիռների, ականների և համանման զինամթերքների հավաքման ու լցոնման համար նախատեսված մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ զինամթերքի արտադրության մեքենայի.

2)օպերատոր՝ պայթուցիկ նյութերի արտադրության մեքենաների:

43. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8223. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՓԱՅԼԵՑՄԱՆ, ՄԵՏԱՂԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՄԵՏԱՂԸ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏՈՎ ՊԱՏԵԼՈՒ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Փայլեցման, մետաղապատման և մետաղը պաշտպանիչ շերտով պատելու կայանքների օպերատորները կառավարում ու վերահսկում են այնպիսի մեքենաներ ու սարքավորումներ, որոնց միջոցով կատարվում են փայլեցման ու մետաղապատման աշխատանքներ՝ մետաղական արտադրանքը քայքայումից պաշտպանելու, շփումների նկատմամբ դիմացկուն դարձնելու, այն զարդարական, էլեկտրական կամ մագնիսական հատկանիշներով օժտելու նպատակով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)այնպիսի սարքավորումների աշխատանքը կառավարելը և վերահսկելը, որոնց օգնությամբ կատարվում են մետաղական մակերևույթների մաքրման աշխատանքներ՝ այդ մակերևույթները հետագա գալվանապատման, գալվանացման, արծնապատման ու համանման այլ գործընթացների նախապատրաստելու համար.

2)գալվանապատող սարքավորումների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

3)մետաղի պաշտպանիչ շերտապատում (այդ թվում՝ պողպատի կամ թուջի մակերևույթը բարակ թաղանթով պատելը) կատարող սարքավորումների և մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

4)գունավոր մետաղից պատրաստված հաղորդալարերը էլեկտրամեկուսիչ շերտով պատող ավտոմատ սարքավորումների և մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

5)մետաղական արտադրանքների վրա հեղուկ մետաղի կամ այլ քիմիական նյութերի ցրցողման եղանակով դրանց մակերևույթը պաշտպանիչ կամ զարդարական շերտով պատող կամ մակերևույթի մաշված կամ վնասված մասերը վերականգնող մեքենաների և սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

6)մետաղական արտադրանքների մակերևույթը քիմիական նյութերով մշակելու կամ տաքացնելու միջոցով հակաքայքայիչ շերտով պատող սարքավորումների և մեքենաների աշխատանքը կառավարելը և հսկելը.

7)ներկող-չորացնող կայանքի միջոցով հանգույցների, մեխանիզմների, սարքերի, այլ շարժակազմերի ներկման և չորացման գործընթացներ վարելը.

8)վակուումային կայանքների միջոցով պինդ համաձուլվածքներից, դժվարահալ նյութերից, գործիքային ու կառուցվածքային պողպատներից պատրաստված գործիքների, մեքենամասերի և այլ մետաղական արտադրատեսակների մակերևույթները նիտրիդներով, բարիդներով, կարբիդներով և այլ մաշակայուն, զարդարական ու պաշտպանիչ նյութերից բաղկացած ծածկույթներով պատելու տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

9)ալյումինե ժապավենի երկկողմանի, միաշերտ և բազմաշերտ լաքապատման, փաթույթավոր թերթային մետաղի անընդմեջ խածատման ու թրծման, յուղազերծման, անոդացման, լվացման, չորացման տեխնոլոգիական գործընթացներ վարելը, համապատասխան մեքենաների և սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

10)թիթեղները և թաղանթները ջերմային ցրցողման վակուումային կայանքների միջոցով մետաղի մեկ կամ մի քանի շերտով պատելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ մետաղապատման սարքավորման.

2)օպերատոր՝ գալվանապատման ավտոմատ կամ կիսաավտոմատ գծի.

3)օպերատոր՝ ծածկապատման վակուումային սարքավորման.

4)օպերատոր՝ անընդհատ խածատման, յուղազերծման և անագապատման կայանքի.

5)օպերատոր՝ ցինկապատման և լաքապատման կայանքի.

6)օպերատոր՝ ներկող-չորացնող կայանքի:

44. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8224. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԹՂԹԻ ԵՎ ԺԱՊԱՎԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Լուսանկարչական թղթի և ժապավենի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարները և մեքենավարները ղեկավարում և հսկում են լուսանկարչական թղթի, ժապավենի, լուսակայված ժապավենի մշակման, ինչպես նաև՝ լուսանկարներ տպող սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)լուսանկարչական թղթի և ժապավենի արտադրության սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

2)լուսանկարչական ապակին լուսանկարչական հիմքի և զգայուն շերտի քսաշերտով ծածկող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

3)գունավոր ու սև-սպիտակ ժապավեններ և լուսանկարչական թիթեղներ երևակող սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը՝ սևանկարներ և պատկերներ ստանալու համար.

4)սև-սպիտակ և գունավոր լուսանկարներ տպող կամ նկարները մեծացնող ու փոքրացնող սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ լուսանկարի երևակման մեքենայի.

2)օպերատոր՝ լուսանկարի մեծացման մեքենայի.

3)օպերատոր՝ լուսանկարչական ժապավենի արտադրության մեքենայի.

4)օպերատոր՝ տպագրական մեքենայի.

5)ապարատավար-ձուլող՝ մագնիսական ժապավենի:

45. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8225. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍԻՆԹԵԶԻ ԱՐԳԱՍԻՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ

1.Ազոտական և օրգանական սինթեզի արգասիքների արտադրության օպերատորները, մեքենավարները և ապարատավարները ղեկավարում և հսկում են ազոտական միացությունների և օրգանական սինթեզի միջոցով ստացվող արտադրանքների արտադրության կայանքները և սարքերը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ազոտացման, ցիամիդացման, ցիամիդային կալցիումի և խիտ ազոտական թթվի ստացման տեխնոլոգիական գործընթացներ վարելը և համապատասխան կայանքներ ղեկավարելն ու հսկելը.

2)ազոտական, կալիումական, կալցիումական աղբորակների (սելիտրաների) ստացման տեխնոլոգիական գործընթացներ վարելը և համապատասխան կայանքների ու սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

3)օրգանական սինթեզի եղանակով ազոտի հիմքի վրա այլ քիմիական նյութերի ստացման տեխնոլոգիական գործընթացներ վարելը, համապատասխան կայանքների և սրքավորումների աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ խիտ ազոտական թթվի արտադրության կայանքի.

2)ապարատավար՝ ազոտական բորակի (սելիտրայի) արտադրության կայանքի.

3)օպերատոր՝ կալիումական բորակի (սելիտրայի) արտադրության կայանքի:

46.ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8226. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԱՆԻԼԻՆԱՆԵՐԿԻ, ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆԵՐԿԵՐԻ ԵՎ ԼԱՔԱՆԵՐԿԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Անիլինաներկի, տպագրական ներկերի և լաքաներկային արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարները և մեքենավարները կառավարում և հսկում են անալինաներկերի, տպագրական ներկերի և լաքաներկային արտադրության սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ռեակցիոն սարքերի մեջ երկու և ավելի զուգակցություններից կազմված ազոտաներկերի արտադրության տեխնոլոգիական գործընթաց վարելը.

2)ներկանյութերի համասեռ զանգված ստանալու համար ներկանյութերի խառնման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

3)լաքերի, լաքային հիմնանյութերի և խեժերի սինթեզի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, ռեակցիոն զանգվածի վիճակը և հումքի որակը հսկելը.

4)ներկերի արտադրության համար գունանյութերի մանրացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

5)խեժերի պոլիմերացման հիման վրա լաքերի, արծնների և այլ նյութերի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

6)գունանյութերի և կապակցող նյութերի շաղախների պատրաստման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

7)խտացման խեժերի հիման վրա արծնների և ջրաէմուլսիոն ներկերի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ ազոտաներկերի արտադրության կայանքի.

2)ապարատավար՝ ներկանյութերի խառնման կայանքի.

3)օպերատոր՝ խառնիչների.

4)ապարատավար՝ խեժերի պոլիմերացմամբ լաքերի և արծնների արտադրության կայանքի.

5)օպերատոր՝ շաղախների պատրաստման կայանքի.

6)ապարատավար՝ արծնների կազմման սարքավորումների:

47. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8227. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՊԱԿՈՒ ԵՎ ԱՊԱԿԵԹԵԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Պոլիմերային շինարարական նյութերի, օրգանական ապակու և ապակեթելերի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են պոլիմերային շինարարական նյութերի, օրգանական ապակու և ապակեթելի արտադրության սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պոլիստիրոլի փրփրեցման տեխնոլոգիական գործընթաց վարելը, ջերմաստիճանային ռեժիմ, ճնշում, պարբերաշրջանի (ցիկլի) տևողություն և սարքին հումք մատակարարելու հավասարաչափություն կարգավորելը.

2)լինոլեիումի և գծամետրային իրերի համար պոլիվինիլքլորիդային բաղադրանյութերի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

3)լինոլեիումի և գծամետրային իրերի ստացման տեխնոլոգիական գործընթաց ղեկավարելը, հոսքագծի բոլոր հանգույցների աշխատանքը և սարքավորումների ավտոմատ ռեժիմը կարգավորելը, պատրաստվող նյութի կառուցվածքի ձևավորման աշխատանքները հսկելը.

4)կիսաավտոմատ և ավտոմատ գործողության ռեժիմի կայանքներում օրգանական ապակու տարածական կողմնորոշման տեխնոլոգիական գործընթաց վարելը, նախապատրվածքների մեծություն հաշվարկելը՝ կախված կողմնորոշման աստիճանից, ամրացված ապակի հղկելը և փայլեցնելը.

5)մոնոմերի վակուումացման և նախապոլիմերացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, սոսնձող լաքեր և անհրաժեշտ այլ նյութեր պատրաստելը, հիմնական հումքի բաղադրամասեր բաժնավորելը և հումքը ռեակտոր բեռնելը.

6)տրված հաստության ապակեթելի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

7)տարբեր կայանքներում օպտիկական ապակեթելերի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

8)նուրբ և շտապելային կվարցային ապակեթելի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ պոլիստիրոլի փրփրեցման սարքավորման.

2)օպերատոր՝ պոլիվինիլքլորիդային բաղադրանյութի ստացման սարքավորման.

3)օպերատոր՝ լինոլեիումի արտադրության կայանքի.

4)ապարատավար՝ նախապոլիմերացման ապակեթելի անընդհատ ստացման կայանքի.

5)օպերատոր՝ օպտիկական ապակեթելի արտադրության կայանքի.

6)օպերատոր՝ կվարցային ապակեթելի արտադրության կայանքի:

48. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8228. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՔԻՄԻԱԿԱՆ ԹԵԼԵՐԻ, ԱՊԱԿԵԹԵԼԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՋՐԱՏԱՐՐԱԼՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Քիմիական թելերի, ապակեթելային նյութերի և ջրատարրալուծական արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են քիմիական թելերի և ապակեթելային նյութերի ջրատարրալուծական արտադրության սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ավտոմատ կառավարմամբ հատուկ կայանքներով ոչ գործվածքային ապակեթելային նյութերի պատրաստման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

2)հատուկ ագրեգատներով ապակեթելային նյութերը կապակցող նյութերով փոշեծածկելու տեխնոլոգիական գործընթաց վարելը.

3)ավտոմատ կարգավորման հատուկ կայանքներով ապակեգործվածքների ջերմաքիմիական մշակման, ներկման և ապակեթելի ջերմամշակման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

4)հատուկ կայանքներով ծալքավոր թերթավոր ապակեպլաստների պատրաստման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

5)ապակեպլաստից կառուցվածքների պատրաստման տեխնոլոգիական գործընթաց վարելը հատուկ կայանքներով.

6)պղնձաամոնիակային թելերի, թելանյութերի, ացետատային, վիսկոզային և սինթետիկ թելերի ու կարթաթելի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, թաց և չոր մանման եղանակներով համապատասխան անընդհատ գործողության հաստոցներով և մեքենաներով պաստառի ձևավորման գործընթաց հսկելը և ղեկավարելը.

7)քիմիական թելը մամլելու և ապամամլելու, վերամշակելու, քամելու, չորացնելու ու խոնավացնելու տեխնոլոգիական գործընթաց վարելը.

8)քիմիական թելի փաթաթման, վիսկոզային պաստառի չորացման և ոլորման տեխնոլոգիական գործընթաց վարելը անընդհատ գործողության մեքենաներով.

9)ռեակտորների մեջ ջրատարրալուծական տարաբնույթ գործընթացներ վարելը, այդ գործընթացների ժամանակ ստացվող նյութերի խոնավությունը, խտությունը և այլ պահանջվող ցուցանիշներ որոշելը.

10)ջրատարրալուծական գործընթացների միջոցով ստացված տարբեր նյութերի, դրանց հատիկների չորացման ու հարստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ չգործված ապակեթելային նյութի ստացման կայանքի.

2)ապարատավար՝ ապակեթելային նյութերի փոշեպատման սարքավորման.

3)ապարատավար՝ քիմիական թելերի ձևավորման կայանքի.

4)ապարատավար՝ քիմիական թելերի վերամշակման և չորացման կայանքի.

5)օպերատոր՝ քիմիական թելերի փաթաթման և ոլորման կայանքի:

49. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8229. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Սույն ստորին խումբը ներառում է քիմիական նյութերի արտադրության սարքավորումների օպերատորներին, ապարատավարներին և մեքենավարներին, ովքեր ներառված չեն փոքր խումբ 822-ի («Օպերատորներ, մեքենավարներ և ապարատավարներ՝ քիմիական արտադրանքի արտադրության սարքավորումների և մեքենաների») այլ ստորին խմբերում:

2.Այստեղ ներառվում են նրանք, ովքեր ղեկավարում և վերահսկում են մոմերի, հալոգենային գազերի, ծծմբական թթվի, վերականգնող տարբեր նյութերի, արգելակային և հովացնող հեղուկների, տեխնիկական ածխածնի ու համանման քիմիական այլ արտադրատեսակների արտադրության մեքենաներ և սարքավորումներ:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հպակային ծծմբական թթվի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը՝ ներառյալ գազի մաքրումը, կատալիտիկ օքսիդացումը, ծծմբային անհիդրիդի կլանումը և այլն.

2)արտադրության բոլոր փուլերում վերականգնող նյութերի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, հումքը մասնատելը, ըստ բաղադրիչների դասակարգելը, միջինացնելը, հիմնական նյութեր տեսակավորելը, վակուումային ջերմային մշակումը, պատրաստի արտադրանքի բովախառնուրդ պատրաստելը, մամլելը և ջերմամշակելը.

3)արգելակային և հովացման հեղուկների պատրաստման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

4)մետաղական նատրիումի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

5)տեխնիկական ածխածնի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

6)օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումների գործարկման ու աշխատանքային ռեժիմի բերման, նորոգման նպատակով դրանց անջատման աշխատանքներ ղեկավարելն ու վերահսկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ ծծմբական թթվի արտադրության կայանքի.
2)ապարատավար՝ վերականգնող նյութերի արտադրության կայանքի.
3)ապարատավար՝ արգելակային և հովացնող հեղուկների արտադրության կայանքի.
4)ապարատավար՝ ալկալիական մետաղների զտման կայանքի.
5)ապարատավար՝ տեխնիկական ածխածնի արտադրության կայանքի:

50. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 823. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՌԵՏԻՆԻ, ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԻ, ՍԻՆԹԵՏԻԿ ԽԵԺԻ, ԿԱՈՒՉՈՒԿԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Ռետինի, պլաստմասսայի, սինթետիկ խեժերի, կաուչուկի և համանման այլ արտադրատեսակների արտադրության սարքավորորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են ռետինի, պլաստմասսայի, սինթետիկ խեժի, կաուչուկի և համանման այլ արտադրատեսակների արտադրության մեքենաների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ ռետինի և պլաստմասսայի արտադրության մածուկների, սոսինձներից ու լատեքսներից ռետինե թելերի, ռետինե խառնուրդների պատրաստման, կապրոնային ու նայլոնային կորդերի ջերմամշակման, կաուչուկների ջերմապլաստիկացման, դողերի հավաքման ու ռետինացման (վուլկանացման) տեխնոլոգիական գործընթաց վարելը. ռետինի ճկունացման ու ռետինի լցանյութի խառնման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը, ինչպես նաև պլաստմասսե զանգվածների միասեռացման, ջերմամշակման, ռետինե ու պլաստմասսե իրերի և պատրաստվածքների արտադրության տեխնոլոգիական գործընթաց վերահսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8231. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ ռետինի արտադրության սարքավորումների.**

2)**Ստորին խումբ 8232. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ պլաստմասսաների և արհեստական խեժերի արտադրության սարքավորումների.**

3)**Ստորին խումբ 8233. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ սինթետիկ կաուչուկների, ճարպափոխարինիչների և նավթաքիմիական նյութերի արտադրության սարքավորումների:**

51. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8231. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՌԵՏԻՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Ռետինի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են ռետինի լցանյութի ու ռետինի խառնման ու շերտատման մեքենաների աշխատանքը, բնական ու արհեստական ռետինից պատրաստում են տարբեր շինվածքներ ու իրեր, ինչպես՝ ձուլած կոշիկներ, տնային տնտեսության իրեր, մեկուսացնող նյութեր, արդյունաբերական ամրաններ, հեծանիվների, ավտոմեքենաների, տրակտորների և այլ փոխադրամիջոցների դողեր և այլ իրեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ռետինի և ռետինի լցանյութի խառնման, պլաստիկացման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

2)ռետինատոգորվածքի կամ թերթավոր ռետինի արտադրության մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

3)լցոնված ռետինային խառնուրդի արտամղման և ստացված ռետինի կաղապարման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)ռետինադողերի արտադրության և հին ռետինադողերի վերականգնման և ռետինացման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ անվադողի արտադրության մեքենայի.

2)օպերատոր՝ ռետինի խառնուրդի պատրաստման կայանքի.

3)ապարատավար՝ ռետինի ռետինացման կայանքի.
4)ապարատավար՝ ռետինե իրերի սոսինձների արտադրության կայանքի.
5)ապարատավար՝ ռետինե թելերի պատրաստման կայանքի:

51. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8232. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՊԼԱՍՏՄԱՍՍԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽԵԺԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Պլաստմասսաների և արհեստական խեժերի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարները, մեքենավարները կառավարում ու վերահսկում են պլաստմասսե զանգվածի և արհեստական խեժերի արտադրության սարքավորումները պլաստմասսե տարբեր արտադրատեսակների և դրանց մանրամասերի արտադրական գործընթացների ժամանակ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)պլաստմասսաների ստացման համար լցանյութերի խառնման և միացման սարքավորումների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

2)պլաստիկ զանգվածի միասեռացման մեքենայի ջերմային գոտիներ ջերմաչափաբերելը, ըստ սահմանված տեխնոլոգիական ռեժիմի՝ միասեռացման գործընթաց վարելը, պլաստիկ զանգվածի՝ առաջադրված հատկանիշերը ապահովելու նպատակով.

3)պլաստմասսայի՝ կաղապարման, արտամղման, կտրման և այլ եղանակներով մշակման մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

4)պլաստիկ զանգվածի և պլաստիկ զանգվածով ներծծված նյութերի մակաշերտման մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ պլաստմասսայի կաղապարման մեքենայի.

2)օպերատոր՝ պլաստմասսայի արտադրության կայանքի.

3)ապարատավար՝ պլաստմասսայի զանգվածի միասեռացման կայանքի:

52. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8233. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՍԻՆԹԵՏԻԿ ԿԱՈՒՉՈՒԿՆԵՐԻ, ՃԱՐՊԱՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԵՎ ՆԱՎԹԱՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Սինթետիկ կաուչուկների, ճարպափոխարինիչների և նավթաքիմիական նյութերի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են նշված արտադրությունների սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ժապավենի տեսքով սինթետիկ կաուչուկների ստացման և լվացման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

2)պարբերական ստուգումների և վերլուծությունների միջոցով միավինիլացետիլենի հիդրոքլորավորման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

3)ավտոմատացված չորացման կայանքներում սինթետիկ կաուչուկների չորացման և խոնավազերծման տեխնոլոգիական գործընթաց վարելը՝ կայանքի առանձին հանգույցների հավասարաչափ բեռնման ապահովմամբ.

4)ացետիլենից միավինիլացետիլենի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, անհրաժեշտ կատալիզատորներ պատրաստելը, ռեակցիայի հետևանքով ստացված գազերի բաժանումը և սառեցումը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ սինթետիկ կաուչուկի չորացման կայանքի.

2)ապարատավար՝ սինթետիկ կաուչուկի ստացման կայանքի.

3)ապարատավար՝ սինթետիկ կաուչուկի հիդրոքլորավորման կայանքի.

4)ապարատավար՝ սինթետիկ կաուչուկի դիմերացման կայանքի:

53. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 824. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Փոքր խումբ 824-ը հաշվի առնել փոքր խումբ 814-ում:

54. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 825. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Տպագրական և կազմարարական մեքենաների օպերատորներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են տարբեր տեսակի տպագրական ու բազմացնող սարքավորումների, կազմող ու կազմի վրա դաջող մեքենաների, ինչպես նաև՝ թղթից ու ստվարաթղթից տարբեր իրեր պատրաստող մեքենաների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները ներառում են բոլոր տեսակի տպագրող, բազմացնող, կազմող, կազմի վրա դաջող մեքենաների, թղթից, ստվարաթղթից ու համանման նյութերից տարբեր իրերի արտադրության մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8251. Օպերատորներ և մեքենավարներ՝ տպագրական մեքենաների.**

2)**Ստորին խումբ 8252. Օպերատորներ և մեքենավարներ՝ կազմարարական մեքենաների.**

3)**Ստորին խումբ 8253. Օպերատորներ՝ թղթե և ստվարաթղթե իրերի արտադրության սարքավորումների:**

55. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8251. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Տպագրական մեքենաների օպերատորները և մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են թղթի, ստվարաթղթի, պոլիէթիլենային տոպրակների, մետաղական թիթեղների և այլ նյութերի վրա տպագրական աշխատանքներ կատարող տարբեր տեսակի մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ճնշագլանիկների, տիգելային, ռոտացիոն, օֆսեթային, վիմատպող, պաստառներ պատրաստող և այլ տեսակի մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

2)այլ աշխատողներին ղեկավարելը.

3)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է օպերատոր՝ օֆսեթ եղանակով տպագրական հաստոցի:

56. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8252. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱԶՄԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Կազմարարական մեքենաների օպերատորները և մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են գրքեր կազմող ու կազմերի վրա դաջող մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կազմարարական մեքենաների աշխատանքը ղեկավարելն ու վերահսկելը.

2)գրքերի շապիկների վրա նկարներ և վերնագրեր դաջող մամլիչների աշխտանքը ղեկավարելն ու վերահսկելը.

3)գունավոր թղթի և կազմի տեխնիկական գործվածքի սոսնձման, եզրահատման ու կազմերի պատրաստման ավտոմատ համակարգի աշխատանքը ղեկավարելը և հսկելը.

4)գրքի բլոկներ մշակող ագրեգատների աշխատանքը ղեկավարելը և հսկելը, ագրեգատի մեխանիզմներ կարգավորելը՝ այլ ձևաչափի և ծավալի բլոկների մշակման համար.

5)գրքի բլոկներ կազմադրելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ գրքի կազմման մեքենայի.

2)օպերատոր՝ գրքի դաջման մեքենայի.
3)մեքենավար՝ գրքի սոսնձման մեքենայի.
4)մեքենավար՝ գրքի վերջնահավաքման ավտոմատ գծի.
5)մեքենավար՝ գրքի բլոկների վերջնամշակման ագրեգատի:

57. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8253. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԹՂԹԵ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՂԹԵ ԻՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Ստորին խումբ 8253-ը հաշվի առնել ստորին խումբ 8143-ում:

58. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 826. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄԱՆԱԾԱԳՈՐԾՎԱԾՔԻ, ԿԱՇՎԻ, ՄՈՐԹՈՒ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մանածագործվածքի, կաշվի, մորթու վերամշակման և դրանցից արտադրատեսակների արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են թելի և մանվածքի արտադրության, վերամշակման, մանման ու փաթաթման, մորթու և կաշվի վերամշակման, տեքստիլ, մորթե ու կաշվե արտադրատեսակների, այդ թվում՝ կոշիկի մաքրման ու արտադրության մեքենաների ու սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց հիմնական պարտականություններն ընդգրկում են՝ բամբակե, վուշե, մետաքսե և այլ թելերի ու մանվածքի պատրաստման ու մշակման, կտորի, գորգերի ժապավենների, տրիկոտաժե այլ արտադրանքի ստացման սարքավորումների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը. տեքստիլ, մորթե ու կաշվե հագուստեղեն կարող, գործվածքի վրա զարդարական նախշեր գործող սարքավորումների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը. թելը, գործվածքը և տեքստիլ արտադրանքը սպիտակեցնող, ներկող, լվացող սարքավորումների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը. մորթու և կաշվի վերամշակման սարքավորումների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը, կոշիկի արտադրության մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը, տեքստիլ, կաշվե ու մորթե այլ արտադրանքի արտադրության սարքավորումների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8261. Օպերատորներ և ապարատավարներ՝ մանրաթելերի արտադրության, մանման, փաթաթման մեքենաների և սարքավորումների.**

2)**Ստորին խումբ 8262. Օպերատորներ՝ մանածագործական գործող և հյուսող մեքենաների.**

3)**Ստորին խումբ 8263. Օպերատորներ և մեքենավարներ՝ կարի և ասեղնագործության սարքավորումների.**

4)**Ստորին խումբ 8264. Օպերատորներ և ապարատավարներ՝ սպիտակեցման, ներկման և մաքրման սարքավորումների.**

5)**Ստորին խումբ 8265. Օպերատորներ և մեքենավարներ՝ մորթու և կաշվի մշակման սարքավորումների.**

6)**Ստորին խումբ 8266. Օպերատորներ և մեքենավարներ՝ կոշկեղենի և համանման այլ արտադրանքի պատրաստման սարքավորումների.**

7)**Ստորին խումբ 8269. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ տեքստիլ, մորթե և կաշվե արտադրանքի արտադրության սարքավորումների, այլ խմբերում չներառված:**

59. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8261. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ՄԱՆՐԱԹԵԼԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՄԱՆՄԱՆ, ՓԱԹԱԹՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մանրաթելերի արտադրության, մանման, փաթաթման մեքենաների և սարքավորումների օպերատորները և ապարատավարները կառավարում ու վերահսկում են տարբեր տեսակի մանրաթելերի և մանվածքների արտադրության ու մշակման սարքավորումները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բամբակի, վուշի և մանրաթելերի արտադրության համար հումք հանդիսացող այլ նախապատրաստվածքների մշակման տեխնոլոգիական գործընթաց վարելը և համապատասխան մեքենաներ ու սարքավորումներ ղեկավարելը և հսկելը, դրանք կարգաբերելը.

2)փաթաթող, ոլորող մեքենաների զետեղիչներում մանվածքի բաշխման գործընթաց վարելը՝ մանվածքի գծային խտությանը և փաթույթների չափերին համապատասխան, տարբեր տեսակի և խտության բնական ու քիմիական մանրաթելերի ու մանվածքների փաթաթման գործընթաց վարելը՝ փաթաթող ու վերափաթաթող մեքենաներով ու ավտոմատներով, մանվածքի ռելաքսացիայի ու շոգեհարման գործընթաց վարելը՝ համապատասխան կայանքի միջոցով, բնական և քիմիական մանրաթելերից մանվածքի և թելերի ոլորման գործընթաց վարելը՝ ոլորող մեքենաների միջոցով.

3)մանվածքի շոգեհարման գործընթաց վարելը, առանց գունավորման կամ ներկված բամբակե մանվածք ալկալիացնելը, քիմիական կախույթներով մանվածքի ներծծման, թրջման, լվացման, օճառման, լեղակման, փափկացման ու այլ տեսակի մշակումներ կատարելը հատուկ մեքենաների ու կայանքների միջոցով.

4)թելը մաքրող և փարթամացնող, սանրող, առաջին ձգման համար առավել հաստ մանվածք ձևավորող, մանվածքները ժապավենաձև միակցող, այնուհետև մի քանի մանվածք անհրաժեշտ որակի ու քաշի մեկ թելում ոլորող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

5)մեքենաներով և կայանքներով հաստաթելի մշակման գործընթաց վարելը.

6)թել մանող կամ հաստաթելից մանվածք պատրաստող, երկու և ավելի թելեր կոճի վրա փաթաթող, երկու և ավելի մանվածքից կամ թելից առավել հաստ ու ծանր թել ոլորող, մանվածքը կամ թելը մեկ փաթույթից մյուսի վրա վերակծկող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ թելի կամ մանվածքի հումքի մշակման ագրեգատի.

2)օպերատոր՝ թել կամ մանվածք կծկող ավտոմատի.

3)օպերատոր՝ թել կամ մանվածք ոլորող սարքավորման.

4)օպերատոր՝ հաստաթելի ստացման սաքավորման.

5)ապարատավար՝ թելի կամ մանվածքի շոգեհարման ագրեգատի.

6)ապարատավար՝ թելի կամ մանվածքի ջերմամշակման:

60. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8262. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԵՎ ՀՅՈՒՍՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Մանածագործական գործող և հյուսող մեքենաների օպերատորները ղեկավարում ու վերահսկում են գործվածքների, գորգերի, ժապավենների, տրիկոտաժե ու այլ արտադրանքի արտադրության սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հարթ կամ ձևավոր գործվածքների, դրապե կտորների, ժանյակների, գորգերի, հագուստների, գուլպաների և այլ տեսակի կտորների ու իրերի արտադրության մանածագործական կամ գործող մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

2)ներմուծվող հումքի որակը, գործվածքի կամ կտորի խտությունը հսկելը, կտորի հիմքը կազմող թելերի ձգվածությունը հսկելը և կարգավորելը, հիմքերի կտրված թելերը հեռացնելը, միջնաթելելն ու քուղավորելը, մաքոք բեռնավորելն ու փոխելը, կանխարգելիչ աշխատանքներ կատարելը՝ հիմքերի թելերի խզումը (կտրվելը) ու գործվածքի թերությունները կանխելու նպատակով, հաստոցների անխափան աշխատանքն ապահովելը և այլ աշխատանքներ կատարելը.

3)մանածագործական և գործող հաստոցների օժանդակ մեխանիզմների, սարքերի աշխատանքը վերահսկելը և կարգավորելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ գործող մեքենայի.
2)օպերատոր՝ մանածագործական մեքենայի:

61. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8263 ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱՐԻ ԵՎ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Տեքստիլ, մորթե, կաշվե հագուստների կարի և ասեղնագործության մեքենաների օպերատորները և մեքենավարները ղեկավարում ու հսկում են տեքտիլ, մորթե և կաշվե հագուստներ կարող ու այդ հագուստների, ինչպես նաև այլ արտադրատեսակների վրա զարդարական նախշեր ասեղնագործող սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հագուստի, ձեռնոցների, մանածագործվածքից, մորթուց, կաշվից տարատեսակ ապրանքների արտադրության կամ վերանորոգման նպատակով կայունաձև (ստանդարտ) կամ հատուկ տեսակի միաասեղ կամ բազմաասեղ կարի մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

2)տեքստիլ կամ այլ արտադրատեսակների վրա զարդարական նախշեր ասեղնագործելու համար կայունաձև (ստանդարտ) կամ հատուկ տեսակի միաասեղ կամ բազմաասեղ կարի մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

3)տարբեր տեսակի կտորներ փռելու գործընթաց վարելը, կարելու ընթացքում դրանց արդյունավետ օգտագործման հաշվարկներին մասնակցելը և խորհրդատվություն մատուցելը.

4)կարելու կամ ասեղնագործելու ընթացքում տարբեր բարդության արտադրատեսակների, դրանց առանձին մասերի մշակման գործընթացին մասնակցելը և խորհրդատվություն մատուցելը, աշխատանքի ընթացքում բոլոր տեսակի սարքավորումների ասեղներ ու կոճեր փոխելը, թելի խզում վերացնելը, թելի ձգվածություն ու մանրակարի քայլ կարգավորելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ կարի սարքավորման.

2)օպերատոր՝ կարի մեքենայի.

3)օպերատոր՝ ասեղնագործման մեքենայի:

62. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8264. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ՍՊԻՏԱԿԵՑՄԱՆ, ՆԵՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՔՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Սպիտակեցման, ներկման և մաքրման սարքավորումների օպերատորներն ու ապարատավարները կառավարում ու վերահսկում են թելի, կտորի, գործվածքի տեքստիլ, մորթե ու կաշվե արտադրատեսակների սպիտակեցման, ներկման ու մաքրման, այդ թվում՝ քիմիական մաքրման սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թելի, կտորի, գործվածքի, տեքստիլ, մորթե ու կաշվե արտադրանքի որոշակի գույներով ներկման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

2)թելի, կտորի, գործվածքի, տեքստիլ, մորթե ու կաշվե արտադրանքի սպիտակեցման, լվացման, մաքրման (այդ թվում՝ քիմիական) մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը, կեղտ, խառնուրդներ և քիմիական կպչուն նյութեր հեռացնելը.

3)կտորի կամ գործվածքի նստեցման և հիմքի ամրացման մեքենաների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

4)կտորին ջրամերժ և այլ լրացուցիչ հատկություններ հաղորդելու նպատակով քիմիական մշակման մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

5)մետաքսե կտորների վերջնամշակման մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը՝ այդ կտորներին ծավալ և կշիռ տալու նպատակով.

6)կտոր արդուկող, կտորին փայլ հաղորդող մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ քիմիական մաքրման մեքենայի.
2)օպերատոր՝ ներկման մեքենայի.
3)օպերատոր՝ լվացման մեքենայի.
4)օպերատոր՝ արդուկման մեքենայի.
5)մեքենավար՝ չորացման կայանքի:

63. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8265. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄՈՐԹՈՒ ԵՎ ԿԱՇՎԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մորթու և կաշվի մշակման սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են մորթու և կաշվի մշակման զանազան սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)նախքան վերամշակումը՝ մորթիներից միս և ճարպեր հեռացնող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

2)մորթիներից երկար, կոշտ մազեր հեռացնող, մազերը հավասարեցնող, մորթիները և կաշիները լվացող, ներկող, ձգող ու հարթեցնող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

3)կաշվից՝ մազերը, մնացորդային բրդից՝ միսը անջատող ու կաշին շերտավորող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

4)լուծույթներով և համապատասխան միացություններով մորթու և կաշվի մշակման մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը՝ վերջնամշակված կաշի և մորթեղեն ստանալու նպատակով.

5) ներկանյութերով կաշի և մորթեղեն մշակող մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

6)կաշվի և մորթու ջերմամշակման տեխնոլոգիական գործընթաց վարելը, համապատասխան մեքենաներ ղեկավարելը և հսկելը.

7)կաշվի և մորթու չորացման տեխնոլոգիական գործընթաց վարելը, համապատասխան մեքենաներ ղեկավարելը և հսկելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ կաշվից մազածածկույթի հեռացման մեքենայի.

2)օպերատոր՝ կաշվի ախտահանման մեքենայի.

3)մեքենավար՝ կաշվի և մորթու ջրաքիմիական մշակման սարքավորման.

4)մեքենավար՝ կաշվի լվացման մեքենայի.

5)մեքենավար՝ կաշվի ներկման մեքենայի:

64. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8266. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԿՈՇԿԵՂԵՆԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Կոշկեղենի և համանման այլ արտադրանքների պատրաստման սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են միակաղապար ու հատուկ կոշիկների, պայուսակների, այլ օժանդակ պարագաների (գլխավորապես՝ կաշվե) արտադրության ու վերանորոգման մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կոշիկի առանձին մասերի արտադրության համար ձևաններ (լեկալներ) պատրաստող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

2)կոշիկի առանձին մասեր, երիզներ, զարդարական մասեր կարող, սոսնձող, հարդարող, փայլեցնող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

3)ճամպրուկներ, պայուսակներ, գոտիներ, այլ պարագաներ, ինչպես նաև թամբեր, վզակապեր, սանձեր պատրաստող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը,

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ ձևանների պատրաստման մեքենայի.

2)օպերատոր՝ կոշիկի կարման մեքենայի.
3)օպերատոր՝ կաշվե իրերի կարման մեքենայի:

65. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8269. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ (ՏԵՔՍՏԻԼ), ՄՈՐԹԵ ԵՎ ԿԱՇՎԵ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Զբաղմունքների այս ստորին խումբը ներառում է փոքր խումբ 826-ի այլ ստորին խմբերում չներառված՝ մանածագործական, մորթե և կաշվե արտադրանքի արտադրության սարքավորումները կառավարող ու վերահսկող օպերատորների, ապարատավարների ու մեքենավարների:

2.Այս խմբին են դասվում գլխարկների, հյուսված երիզների, ժանյակների, թաղիքից պատրաստված իրերի և համանման այլ ապրանքների արտադրության մեքենաները կառավարող և վերահսկող աշխատողները:

3.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մանածագործական, մորթե և կաշվե գլխարկների կամ նրբաթաղիքե (ֆետրե) գլանագլխարկների (ցիլինդրների) ձգման կաղապարներ պատրաստող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

2)ժանյակների, թաղիքե իրերի արտադրության մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ գլխարկի մոդել պատրաստող մեքենայի.

2)օպերատոր՝ հյուսված երիզների արտադրության սարքավորման.

3)օպերատոր՝ թաղիքե իրերի արտադրության սարքավորումների:

66. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 827. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Սննդամթերքի և համանման մթերքների մշակման սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են սննդամթերք վերամշակող, մարդկանց ու կենդանիների օգտագործման համար սնունդ և համանման այլ արտադրանք մշակող ու պատրաստող սարքերի ու մեքենաների աշխատանքը:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. անասունների մորթի, պահպանման կամ վաճառքի համար նախատեսված մսի և ձկան կտրատման, մսամթերքների, ձկնամթերքների, դրանցից պատրաստված կիսապատրաստվածքների արտադրության, կաթի ու սերուցքի վերամշակման ու կաթնամթերքների արտադրության, հացահատիկի և այլ հատիկային բույսերի աղման, հացի թխման, հացաբուլկեղենի, մակարոնային ու հրուշակագործական արտադրատեսակների պատրաստման, հյութեր, կոմպոտներ, պահածոներ ու համանման այլ արտադրանք պատրաստելու նպատակով բանջարեղենի, ընկույզի ու մրգերի մշակման, շաքարի հումքի վերամշակման ու շաքարի զտման, թեյի տերևների, սուրճի և կակաոյի հատիկների մշակման, դրանց մշակման ժամանակ ստացվող երկրորդային նյութերի վերամշակման, գարեջրի, գինու, օղու, կոնյակի այլ ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտադրության, ծխախոտի մշակման ու ծխախոտի արտադրատեսակների պատրաստման, կերակրի աղի արդյունահանման ու մշակման և այլ տեսակի սննդամթերքների ու համանման այլ մթերքների մշակման, վերամշակման ու պատրաստման սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը: Այստեղ կարելի է ներառել նաև այլ աշխատողների ղեկավարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8271. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ մսի, թռչնի և ձկան, ինչպես նաև ոսկորի վերամշակման ու սոսնձի արտադրության սարքավորումների.**

2)**Ստորին խումբ 8272. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ կաթի և կաթնամթերքների արտադրության սարքավորումների.**

3)Ստորին խումբ 8273. Օպերատորներ՝ հացահատկի, հատիկային բույսերի աղման, կերակրի աղի արդյունահանման ու արտադրության սարքավորումների.

4)Ստորին խումբ 8274. Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ մանրացված հացահատկից հացաբուլկեղենի, մակարոնեղենի, շոկոլադային արտադրատեսակների և հրուշակեղենի այլ տեսակների արտադրության սարքավորումների.

5)Ստորին խումբ 8275. Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ՝ մրգերի, բանջարեղենի և ընկուզեղենի վերամշակման, սննդային խտանյութերի արտադրության սարքավորումների.

6)Ստորին խումբ 8276. Օպերատորներ և ապարատավարներ՝ շաքարի պատրաստման ու զտման սարքավորումների.

7)Ստորին խումբ 8277. Օպերատորներ և մեքենավարներ՝ թեյի, սուրճի ու կակաոյի արտադրության, եթերայուղերի արտադրության սարքավորումների.

8)Ստորին խումբ 8278. Օպերատորներ և ապարատավարներ՝ գարեջրի, գինու, այլ խմիչքների արտադրության սարքավորումների.

9)Ստորին խումբ 8279. Օպերատորներ և մեքենավարներ՝ ծխախոտի արտադրության սարքավորումների:

67. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8271 ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄՍԻ, ԹՌՉՆԻ ԵՎ ՁԿԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՍԿՈՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍՈՍՆՁԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մսի, թռչնի և ձկան, ինչպես նաև՝ ոսկորի վերամշակման ու օրգանական սոսնձի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են կենդանիների ու թռչունների մորթման և մաքրման, մսի ու մսամթերքի մշակման, մսամթերքից կիսապատրաստվածքների պատրաստման ու պահպանման, ձվի վերամշակման, ձկան ու ձկնամթերքի մաքրման, պահպանման ու վերամշակման, նշված գործընթացների համար երկրորդային հումք հանդիսացող ոսկորի մշակման, տարբեր նշանակության սոսինձների պատրաստման սարքավորումները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)անասուններ և թռչուններ մորթող, անասունների ու ձկների մարմինները սահմանված չափաբաժիններով կտրատող մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

2)մսից և ձկից լցոնի պատրաստման, պահպանման և արտադրության սարքավորումների աշխատանքը կառավարելը և վերահսկելը.

3)մսի և մսամթերքների, ձկան և ձկնամթերքների մշակման և դրանցից տարբեր մթերքների և կիսապատրաստվածքների (երշիկ, նրբերշիկ, ապխտած ձուկ, միս և այլն) արտադրության սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

4)մսի և ձկան պահածոների կամ սառեցված մսի և ձկան արտադրության սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

5) ձվի փոշու արտադրության ժամանակ զանգվածի ախտահարման, պահպանման, սառեցման, չորացման և մանրացման սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

6)մսամթերքների, ձկնամթերքների, ձվի փոշու, թռչնի փաթեթավորման սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

7)օրգանական սոսինձների (կազեինային, ոսկրային, սիլիկատային) արտադրության սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ մսամթերքի տեխնիկական մշակման.

2)օպերատոր՝ մսամթերքի կիսապատրաստվածքների արտադրության ավտոմատ կայանքի.

3)օպերատոր՝ երշիկի (նրբերշիկի) արտադրության սարքավորման.

4)ապարատավար՝ ձվային զանգվածի չորացման.

5)օպերատոր՝ ձկան ապխտման կայանքի.

6)ապարատավար՝ կազեինային սոսնձի արտադրություն:

68. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8272 ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Կաթնամթերքների արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են կաթի ու սերուցքի վերամշակման, կաթնաթթվային մթերքների, յուղի, պանրի, այլ կաթնամթերքների արտադրության մեքենաների ու սարքավորումների աշխատանքները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կաթի և սերուցքի ախտահարման, հոմոգենացման և ջերմային մշակման (տաքացման կամ սառեցման) սարքեր ղեկավարելը և վերահսկելը.

2)խտացրած կաթի և կաթի փոշու արտադրության սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

3)կարագի, պանրի և այլ կաթնամթերքների արտադրության սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

4) կաթնամթերքների փաթեթավորման և մակնիշավորման հաստոցներ ղեկավարելը և վերահսկելը.

5)կաթից ստացվող փորձնական կաթնամթերքների փորձանմուշները լաբորատոր սաքավորումներով արտադրելը, դրանց որակական ցուցանիշների բարելավման առաջարկություններ ներկայացնելը.

6)մանկական սննդի արտադրության սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ կաթ ախտահանող և սառեցնող կայանքի.

2)օպերատոր՝ կաթնամթերքի արտադրության ավտոմատ գծի.

3)ապարատավար՝ պանրի արտադրության.

4)ապարատավար՝ յուղի արտադրության.

5)ապարատավար՝ կաթնամթերք փաթեթավորող կայանքի:

69. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8273 ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՀԱՑԱՀԱՏԿԻ ԵՎ ՀԱՏԻԿԱՅԻՆ ԱՅԼ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՂՄԱՆ, ԿԵՐԱԿՐԻ ԱՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Հացահատկի և հատիկային այլ բույսերի աղման, կերակրի աղի արդյունահանման ու արտադրության սարքավորումներիի օպերատորները կառավարում ու վերահսկում են մարդկանց և կենդանիների օգտագործման համար հացահատկի և այլ հատիկային բույսերի վերամշակման ու մանրացման նախապատրաստման, հատիկների մանրացման, չորացման, խառնման, փաթեթավորման և այլ գործողություններ կատարող մեքենաների ու սարքավորումների, ինչպես նաև աղի արդյունահանման, հարստացման, փոխադրման և փաթեթավորման մեքենաների ու սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)խոշորահատիկ և մանրահատիկ աղացած ալյուրի արտադրության ու փաթեթավորման, անասնակերի արտադրության ու մշակման, բրնձի մշակման մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

2)հացահատկի և հատիկավոր բույսերի աղման սարքավորումների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

3)աղի արդյունահանման, փոխադրման, լվացման, հարստացման, ջերմային մշակման, փաթեթավորման սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ ալրաղացի.

2)օպերատոր՝ հացահատկի զտման.

3)օպերատոր՝ համեմունքների մանրացման սարքի.

4)օպերատոր՝ աղի հարստացման կայանքի.
5)մեքենավար՝ աղի արդյունահանման կոմբայնի:

70. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8274. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄԱՆՐԱՑՎԱԾ ՀԱՑԱՀԱՏԿԻՑ ՀԱՑԱԲՈՒԼԿԵՂԵՆԻ, ՄԱԿԱՐՈՆԵՂԵՆԻ, ՇՈԿՈԼԱԴԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մանրացված հացահատկից հացաբուլկեղենի, մակարոնեղենի, շոկոլադային արտադրատեսակների և հրուշակեղենի այլ տեսակների արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են խառնման, հավելանյութերի ներմուծման, արտադրանքի ձևավորման, թխման, մակարոնային արտադրատեսակների պատրաստման, շոկոլադային զանգվածի նախապատրաստման ու դրանից շոկոլոդե արտադրատեսակների կաղապարման, ինչպես նաև՝ այլ արտադրատեսակների արտադրության սարքավորումների ու մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)խմորի պատրաստման համար ալյուրի խառնման և հավելանյութերի ներմուծման, հացի, մակարոնեղենի, թխվածքաբլիթների ու համանման այլ արտադրատեսակների խմորի պատրաստման բոլոր տեսակի մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

2)խմորի բաշխման, կաղապարման, խմորագնդերի պատրաստման, արտամղման, մասնատման բոլոր տեսակի մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

3)հացի, թխվածքաբլիթների, մակարոնեղենի և համանման այլ արտադրատեսակների թխման վառարանների և հոսքային գծերի աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

4)մանրացված հատիկներից արտադրատեսակների և հրուշակեղենի արտադրությունում որպես լցանյութ օգտագործվող ալյուրի ու մանրահատիկների արտադրության սարքեր և հոսքային մեքենայացված գծեր ղեկավարելը և վերահսկելը.

5)շոկոլադի և կոնֆետների արտադրության մեքենաներ ու հոսքային գծեր ղեկավարելը և վերահսկելը.

6)այլ աշխատողներին ղեկավարելը.

7)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ հացի արտադրատեսակների կաղապարման հոսքային գծի.

2)հացթուխ՝ համալիր մեքենայացված գծի.

3)օպերատոր՝ ալյուրի արտադրության հոսքային գծի.

4)օպերատոր՝ շոկոլադային զանգվածի արտադրության հոսքային գծի.

5)մեքենավար՝ խմորի ստացման մեքենայի:

71. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8275. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ՄՐԳԵՐԻ, ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԵՎ ԸՆԿՈՒԶԵՂԵՆԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՍՆՆԴԱՅԻՆ ԽՏԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Մրգերի, բանջարեղենի և ընկուզեղենի վերամշակման, սննդային խտանյութերի արտադրության սարքավորումների օպերատորները, ապարատավարներն ու մեքենավարները ղեկավարում ու վերահսկում են մրգերից ու բանջարեղենից հյութերի ստացման, յուղատու մշակաբույսերից, ընկույզից և մրգերից յուղի արտազատման, ինչպես նաև՝ չորացման, տապակման, պահածոյացման, սառեցման եղանակներով մրգերի, բանջարեղենի և ընկույզի վերամշակման մեքենաների ու սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տաքացման և մամլման եղանակով տարբեր մրգերից հյութերի ստացման տեխնոլոգիական գործընթաց կառավարելն ու վերահսկելը, համապատասխան սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

2)յուղատու մշակաբույսերից, ընկուզեղենի և մրգերից յուղի ստացման տեխնոլոգիական գործընթաց վարելը և համապատասխան մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

3)կենդանական և բուսական յուղերից կարագի, մարգարինի ու համանման այլ արտադրատեսակների պատրաստման մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

4)մրգերի, բանջարեղենի և ընկուզեղենի հետագա վերամշակման նախապատրաստման մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

5) մրգերի, բանջարեղենի և ընկուզեղենի չորացման, ջերմամշակման, պահածոյացման, սառեցման կամ այլ եղանակներով մշակման մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

6)բոլոր տեսակի պահածոների արտադրության ժամանակ տարաների լցման, փաթեթավորման մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

7)սննդային խտանյութի արտադրության մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը,

8)այլ աշխատողներին ղեկավարելը.

9)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ մրգի մշակման մեքենայի.

2)օպերատոր՝ բանջարեղենի մշակման մեքենայի.

3)օպերատոր՝ բուսական յուղի ստացման հոսքագծի.

4)ապարատավար՝ լոլիկի հյութի և մածուկի ստացման կայանքի.

5)ապարատավար՝ մրգի, բանջարեղենի լվացման կայանքի.

6)ապարատավար՝ ջերմամշակման կայանքի.

7)մեքենավար՝ պահածոների փակման ավտոմատի:

72. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8276. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ՇԱՔԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԶՏՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Շաքարի պատրաստման և զտման սարքավորումների օպերատորներն ու ապարատավարները կառավարում ու վերահսկում են շաքարեղեգի ու շաքարի ճակնդեղի մշակման ու զտված շաքարի պատրաստման հաստոցների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շաքարեղեգի մասնատման մեքենաներ կամ շաքարահյութի արտամղման լուծամզիչ սարքերի (դիֆուզորների) աշխատանքը կառավարելը և հսկելը.

2)շաքարահյութի մաքրման կամ տաք շաքարահյութից շաքարի բյուրեղների ստացման նպատակով կուտակիչներ ղեկավարելը և վերահսկելը.

3)շաքարեղեգից և շաքարի ճակնդեղից շաքարի պատրաստման և զտման տեխնոլոգիական գործընթացներ վարելը հսկիչ-չափիչ սարքերի ու քիմիական վերլուծության միջոցով, համապատասխան սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

4)թխկուց, արմավենուց և բուսական այլ աղբյուրներից շաքարահյութի արտազատման մեքենաներ կառավարելն ու վերահսկելը.

5)շաքարավազի արտադրության, մաքրման, մաղման, փաթեթավորման սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

6)զտված շաքարի կտորների բյուրեղացման, սպիտակեցման ջերմային մշակման գործընթացներ վարելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ շաքարեղեգի կտրտման ու մշակման կայանքի.

2)ապարատավար՝ շաքարի կտորների սպիտակեցման սարքի.

3)օպերատոր՝ շաքարի ստացման և զտման կայանքի.

4)օպերատոր՝ շաքարի ճակնդեղից շաքարի ստացման հոսքային գծի:

73. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8277. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԹԵՅԻ, ՍՈՒՐՃԻ ԵՎ ԿԱԿԱՈՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԹԵՐԱՅՈՒՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Թեյի, սուրճի և կակաոյի արտադրության և եթերայուղերի արտադրության սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները կառավարում ու վերահսկում են թեյի տերևի, կակաոյի ու սուրճի ունդերի, ինչպես նաև՝ եղերդակի արմատների

նախապատրաստման ու խառնման մեքենաների, եթերայուղերի մշակման ու եթերայուղային հումքի խմորման սարքավորումների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թեյի տերևներ թառամեցնող, թառամած տերևները ոլորող և ոլորված տերևները չորացնող, ինչպես նաև՝ տարբեր տեսակի թեյեր միախառնող սարքավորումներ կառավարելն ու վերահսկելը.

2)սուրճի և կակաոյի ունդերի կտրատման, միջուկի և թեփի անջատման, չորացման և խառնման սարքավորումներ կառավարելն ու վերահսկելը.

3)սուրճի և կակաոյի ունդեր կամ եղերդակի արմատներ, դրանց խառնուրդները բովող սարքավորումներ կառավարելն ու վերահսկելը.

4)թեյի մանրացման կամ սուրճի, կակաոյի և եղերդակի արմատների աղացման մեքենաներ կառավարելն ու վերահսկելը.

5)թեյի տերևների, սուրճի և կակաոյի հատիկների տեսակավորման ավտոմատ գծեր ղեկավարելը և վերահսկելը.

6)եթերայուղերի հումքի խմորման գործընթաց վարելը, համապատասխան սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

7)եթերայուղի մշակման գործընթաց վարելը, փորձանմուշի ստացման և դրա որակի ստուգման արդյունքների հիման վրա պատրաստի եթերայուղերի արտադրությունը վերահսկելը.

8)պատրաստի թեյի, սուրճի և կակաոյի կշռման և փաթեթավորման սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ կակաոյի ունդերի մշակման մեքենայի.

2)օպերատոր՝ սուրճի ունդերի մշակման մեքենայի.

3)ապարատավար՝ եթերայուղային հումքի խմորման.

4)օպերատոր՝ բովման սարքավորման.

5)օպերատոր՝ թեյի կշռման և փաթեթավորման գծի:

74. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8278. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ՝ ԳԱՐԵՋՐԻ, ԳԻՆՈՒ ԵՎ ԱՅԼ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Գարեջրի, գինու և այլ խմիչքների արտադրության, մատուտակի արմատի արդյունահանման ու մշակման սարքավորումների օպերատորներն ու ապարատավարները կառավարում ու վերահսկում են հացահատկի ու մրգերի խառնման, մամլման, թթվեցման, խմորման մեքենաներ՝ թթվեցմամբ ստացվող խմիչքներ, գինիներ, ոգելից ու ոչ ոգելից այլ խմիչքներ պատրաստելու համար, բացառությամբ մրգային և բանջարեղենային հյութերի:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թորմամբ և թթվեցմամբ ստացվող խմիչքների արտադրության համար գարու և այլ հացահատիկների վերամշակման մեքենաներ, ինչպես նաև՝ խմորման գործընթացներ կառավարելն ու վերահսկելը.

2)գինիների պատրաստման համար օգտագործվող խաղողի և այլ մրգերի վերամշակման մեքենաներ, ինչպես նաև՝ խմորման գործընթացներ կառավարելն ու վերահսկելը.

3)թորակաթսաներում թորման գործընթացը կառավարելը և վերահսկելը՝ ոգելից խմիչքներում սպիրտի չափաքանակի ավելացման կամ նվազեցման նպատակով.

4)գինիների և այլ խմիչքների խառնման մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը՝ անհրաժեշտ համի և բուրմունքի խմիչքներ ստանալու համար.

5)ոչ ոգելից խմիչքների (բացառությամբ մրգային և բանջարեղենային հյութերի) պատրաստման մեքենաներ կառավարելն ու վերահսկելը.

6)խմչքների շշալցման և խցանման մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

7)սպիրտի խմորման և սպիրտի արտադրության գործընթաց վարելը, համապատասխան մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

8)գինենյութի և սպիրտի հումքի թորման գործընթաց վարելը կոնյակի սպիրտ ստանալու նպատակով.

9)գինու շամպայնացման գործընթաց վարելը, համապատասխան մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

10)սպիրտի թորման և բազմաթորման գործընթաց վարելը, համապատասխան մեքենաներ ղեկավարելը և վերահսկելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ ոգելից խմիչքների արտադրության սարքի.

2)ապարատավար՝ խմորման գործընթացի սարքավորումների.

3)ապարատավար՝ սպիրտի թորման սարքի.

4)ապարատավար՝ կոնյակի արտադրության հոսքագծի.

5)ապարատավար՝ շամպայնի արտադրության հոսքագծի.

6)օպերատոր՝ ոչ ոգելից խմիչքների արտադրության հոսքագծի:

75. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8279. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Ծխախոտի արտադրության սարքավորումների օպերատորներն ու մեքենավարները կառավարում ու հսկում են ծխախոտի վերամշակման, գլանակների ու ծխախոտից ստացվող այլ արտադրատեսակների արտադրության մեքենաներն ու սարքավորումները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ծխախոտի վերամշակման սարքավորումների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը՝ գլանակների և այլ արտադրատեսակների արտադրության նպատակով.

2)սիգարեթներ, գլանակներ և ծխախոտից ստացվող այլ արտադրանք թողարկող մեքենաներ կառավարելն ու վերահսկելը.

3)ծխախոտի խմորման տեխնոլոգիական գործընթացներ վարելը, համապատասխան սարքավորումներ ղեկավարելը և վերահսկելը.

4)սիգարեթի, գլանակի և այլ արտադրատեսակների փաթեթավորման հաստոցներ ղեկավարելը և վերահսկելը.

5)այլ աշխատողներին ղեկավարելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)օպերատոր՝ սիգարեթների արտադրության մեքենայի.

2)օպերատոր՝ ծխախոտի վերամշակման մեքենայի.

3)մեքենավար՝ խմորման հոսքային գծի.

4)մեքենավար՝ ծխախոտի վերամշակման հոսքային գծի:

76. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 828. ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ

1.Փականագործ-հավաքողները առանձին բաղադրիչ մասերից հավաքում են արտադրատեսակներ՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան, ընդ որում՝ հավաքման ենթակա օբյեկտը կարող է հոսքային գծի երկայնքով շարժվել մի բանվորից մյուսը:

2.Սույն փոքր խմբի աշխատողների պարտականությունները ներառում են. պլաստմասսայից, ռետինից, փայտից, մետաղից և այլ նյութերից, ինչպես նաև՝ այդ նյութերի տարբեր արտադրատեսակներից հանգույցներ, մեքենաներ հավաքելու տեխնոլոգիական գործընթաց վարելը, համապատասխան սարքավորումների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8281. Փականագործ-հավաքողներ՝ մեխանիկական մեքենաների.**

2)**Ստորին խումբ 8282. Փականագործ-հավաքողներ՝ էլեկտրատեխնիկական սարքավորումների.**

3)**Ստորին խումբ 8283. Փականագործ-հավաքողներ՝ ռադիոէլեկտրոնային սարքավորումների.**

4)Ստորին խումբ 8284. Հավաքողներ՝ մետաղե, պլաստմասսե և ռետինե արտադրատեսակների.

5)Ստորին խումբ 8285. Հավաքողներ՝ փայտից և համանման այլ նյութերից պատրատված արտադրատեսակների.

6)Ստորն խումբ 8286. Հավաքողներ՝ թղթից, մանածագործվածքից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների:

77. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8281 ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Մեխանիկական մեքենաների փականագործ-հավաքողները հանգույցներից և առանձին մասերից հավաքում են մեխանիկական մեքենաներ՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հանգույցներից կամ առանձին մասերից մեխանիկական մեքենաներ, շարժիչներ և տրանսպորտային փոխադրամիջոցներ հավաքելը՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան.

2)մեխանիկական մեքենաների, շարժիչների և տրանսպորտային միջոցների վերանորոգման նպատակով դրանց առանձին հանգույցներ և ագրեգատներ քանդելը, վնասված մասը նորով փոխարինելը և դրանք վերստին հավաքելը.

3)հավաքված կամ վերանորոգված մեխանիկական մեքենաների, շարժիչների և տրանսպորտային միջոցների փորձարկմանը կամ գործարկմանը մասնակցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փականագործ-հավաքող.

2)փականագործ-նորոգող:

78. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8282 ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Էլեկտրատեխնիկական սարքավորումների փականագործ-հավաքողները հանգույցներից և առանձին մասերից հավաքում են էլեկտրական մեքենաներ, էլեկտրատեխնիկական այլ սարքեր և սարքավորումներ՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հանգույցներից և առանձին մասերից էլեկտրական մեքենաներ և էլեկտրատեխնիկական այլ սարքավորումներ ու մեքենաներ հավաքելը՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան.

2)էլեկտրական մեքենաների, էլեկտրատեխնիական այլ սարքավորումների ու մեքենաների վերանորոգման նպատակով դրանց առանձին հանգույցներ և ագրեգատներ քանդելը, վնասված մասը նորով փոխարինելը և դրանք վերստին հավաքելը.

3)հավաքված կամ վերանորոգված էլեկտրական մեքենաների և էլեկտրատեխնիկական սարքավորումների փորձարկմանը կամ գործարկմանը մասնակցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող՝ էլեկտրական սարքավորման.

2)վերանորոգող՝ էլեկտրական սարքավորման:

79. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8283. ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ

1.Ռադիոէլեկտրոնային սարքերի փականագործ-հավաքողները հանգույցներից ու առանձին մասերից հավաքում են տարբեր տեսակի էլեկտրոնային սարքավորումներ՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հանգույցներից և առանձին մասերից էլեկտրոնային սարքավորումներ հավաքելը՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան.

2)էլեկտրոնային մեքենաների սարքավորումների և մեքենաների վերանորոգման նպատակով դրանց առանձին հանգույցներ և ագրեգատներ քանդելը, վնասված մասը նորով փոխարինելը և դրանք վերստին հավաքելը.

3)հավաքված կամ վերանորոգված էլեկտրոնային սարքավորումների փորձարկմանը կամ գործարկմանը մասնակցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է փականագործ-հավաքող՝ էլեկտրական մեքենայի:

80. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8284. ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ՄԵՏԱՂԵ, ՊԼԱՍՏՄԱՍՍԵ ԵՎ ՌԵՏԻՆԵ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ

1.Մետաղե, պլաստմասսե և ռետինե արտադրատեսակներ հավաքողները կատարում են մասնագիտացված սահմանափակ գործառնություններ՝ մետաղե, ռետինե և պլաստմասսե մասերից ու առանձին տարրերից հավաքելով տարբեր արտադրատեսակներ (դողեր, հեծանիվներ, խաղալիքներ և այլն)՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մետաղե, ռետինե և պլաստմասսե մասերից ու առանձին տարրերից արտադրատեսակներ հավաքելը՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան.

2)մետաղե, պլաստմասսե և ռետինե արտադրատեսակներից հավաքված մեքենաների սարքավորումներ, դրանց առանձին հանգույցներ և ագրեգատներ վերանորոգման նպատակով քանդելը, վնասված մասը նորով փոխարինելը և դրանք վերստին հավաքելը.

3)հավաքված կամ վերանորոգված մետաղե, պլաստմասսե և ռետինե արտադրատեսակներից հավաքված մեքենաների սարքավորումների փորձարկմանը կամ գործարկմանը մասնակցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող՝ մետաղե արտադրանքի.

2)հավաքող՝ պլաստմասսե արտադրանքի.

3)հավաքող՝ ռետինատեխնիկական արտադրանքի:

81. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8285. ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ՓԱՅՏԻՑ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ

1.Փայտից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակներ հավաքողները առանձին մասերից ու տարրերից հավաքում են փայտե տարբեր արտադրատեսակներ (կահույք, զարդարական իրեր և այլն)՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)փայտից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակներ հավաքելը՝ տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան.

2)փայտից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակները վերանորոգման նպատակով քանդելը, վնասված մասը նորով փոխարինելը և դրանք վերստին հավաքելը.

3)հավաքված կամ վերանորոգված՝ փայտից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների փորձարկմանը կամ գործարկմանը մասնակցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող՝ կահույքի.

2)հավաքող՝ զարդարական իրերի:

82. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8286. ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ԹՂԹԻՑ, ՄԱՆԱԾԱԳՈՐԾՎԱԾՔԻՑ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ

1.Թղթից, մանածագործվածքից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակներ հավաքողները թղթից, մանածագործվածքից, կաշվից ու համանման այլ նյութերից պատրաստված մասերից ու առանձին տարրերից հավաքում են տարբեր տեսակի արտադրանք (թղթե և ստվարաթղթե արկղեր, օդապարիկներ, թամբեր, սանձեր և այլն)՝ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)թղթից, մանածագործվածքից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակներ հավաքելը՝ տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան.

2)թղթից, մանածագործվածքից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակները վերանորոգման նպատակով քանդելը, վնասված մասը նորով փոխարինելը և դրանք վերստին հավաքելը.

3)հավաքված կամ վերանորոգված՝ թղթից, մանածագործվածքից և համանման այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների փորձարկմանը կամ գործարկմանը մասնակցելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող՝ թղթե և ստվարաթղթե արտադրանք,

2)հավաքող՝ կաշվե արտադրանք,

3)հավաքող՝ տեքստիլ արտադրանք:

83. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 829. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ԱՆՇԱՐԺ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1.Այլ խմբերում չներառված՝ անշարժ սարքավորումների օպերատորները, ապարատավարները, մեքենավարներն ու փականագործ-հավաքողները կառավարում ու վերահսկում են գազային թթվածնի և ազոտի, միկրոհաղորդալարերի և դրանցից պատրաստված հոսանքահաղորդիչ խրձերի, հանքաքարային բամբակի և դրանցից ստացված երեսպատման սալերի ու խողովակների արտադրության, գամային միացությունների ստացման սարքավորումների աշխատանքը, կատարում են տարբեր տեխնիկական միջոցների հանգույցների ու մասերի վերահսկիչ ու տիպային փորձարկումներ, հավաքում են ջերմամեկուսիչ կառույցներ, տարբեր տեսակի մարտկոցներ, հոսանքի աղբյուրներ, կուտակիչներ և այլ արտադրանք, ինչպես նաև՝ կառավարում են փաթեթավորման, մակնիշման, անհրաժեշտության դեպքում՝ արտադրանքին, փաթեթին և բեռնարկղերին զինանշանով դրոշմանիշերի փակցման մեքենաներ, վարում բարձր ճշտություն պահանջող հավաքման տեխնոլոգիական գործընթացներ:

2.Սույն փոքր խմբի աշխատողների պարտականությունները ներառում են վերը նշված գործընթացների ժամանակ մեքենաներ, սարքավորումներ, հաստոցներ, կայանքներ ղեկավարելը և վերահսկելը, հաստոցների հավաքման տեխնոլոգիական գործընթաց վարելը՝ ըստ տեխնիկական պահանջների:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)**Ստորին խումբ 8290. Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և փականագործ-հավաքողներ՝ անշարժ սարքավորումների, այլ խմբերում չներառված:**

84. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8290. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ, ԱՊԱՐԱՏԱՎԱՐՆԵՐ, ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ԱՆՇԱՐԺ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԱՅԼ ԽՄԲԵՐՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ

1. Այլ խմբերում չներառված՝ անշարժ սարքավորումների օպերատորները, ապարատավարները, մեքենավարներն ու փականագործ-հավաքողները կառավարում ու վերահսկում են գազային թթվածնի ու ազոտի արտադրության, ապակյա մեկուսիչով միկրոհաղորդալարերի, պլաստմասսե մեկուսիչով հոսանքահաղորդիչ խրձերի

պատրաստման, ինքնաթիռների երեսպատման թիթեղների, հանգույցների ու կայանքների գամային միացումով ամրացման աշխատանքները, կատարում են ավիատեխնիկայի մասերի ու հանգույցների վերահսկիչ ու տիպային փորձարկումներ, ստանում են հանքաքարային բամբակ ու հանքաբամբակյա սալեր և խողովակներ, հավաքում են ջերմամեկուսիչ կառույցներ, սնդիկացինկային, մագնիսական մարտկոցներ, հոսանքի ֆիզիկական և քիմիական աղբյուրներ, կապարային ու ալկալիական (հիմնային) ուժակուտակիչներ (ակումուլյատորներ), այլ արտադրանք, ինչպես նաև՝ կառավարում ու հետևում են փաթեթավորող, մակնիշող, արտադրանքին, փաթեթներին, բեռնարկղերին զինանշանով պիտակներ փակցնող մեքենաների աշխատանքը, վարում բարձր ճշտություն պահանջող հավաքման տեխնոլոգիական գործընթացներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)գազային թթվածնի և ազոտի արտադրության տեխնոլոգիական գործընթաց վարելը.

2) ապակյա մեկուսիչով միկրոհաղորդալարերի տեխնոլոգիական գործընթաց վարելը.

3)պլաստմասսե մեկուսիչով հոսանքահաղորդիչ խրձերի արտադրության տեխնոլոգիական գործընթաց վարելը.

4) գամային միացության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

5)մասերի ու հանգույցների վերահսկիչ և տիպային փորձարկումներ կատարելը.

6)հանքաքարային բամբակի արտադրության, դրանից ստացվող սալերի և խողովակների պատրաստման տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

7)տարբեր տեսակի էլեկտրական մարտկոցների, հոսանքի ֆիզիկական և քիմիական աղբյուրների հավաքման տեխնոլոգիական գործընթաց վարելը.

8)տարբեր տեսակի արտադրանքների փաթեթավորման մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

9)սոսնձման կամ այլ մեթոդներով ապրանքի, փաթեթների և տարբեր բեռնարկղերի մակնիշման, զինանշանով պիտակների փակցման գործառնություններ կատարող մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

10)բարձր ճշտություն պահանջող հավաքման տեխնոլոգիական գործընթացներ վարելը.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ապարատավար՝ օդազատող.

2)ապարատավար՝ ապակյա ծածկույթով միկրոհաղորդալարի պատրաստման հոսքագծի.

3)օպերատոր՝ կոմպոզիցիոն նյութերի արտադրության հոսքագծի.

4)օպերատոր՝ պիտակավորման մեքենայի.

5)օպերատոր՝ փաթեթավորման մեքենայի:

85. ԵՆԹԱԽՈՒՄԲ 83. ՎԱՐՈՐԴՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Շարժական սարքավորումների վարորդները և օպերատորները վարում և սպասարկում են գնացքներ, ավտոմեքենաներ, վերգետնյա և ստորգետնյա էլեկտրատրանսպորտ, շարժիչավոր այլ շարժական փոխադրամիջոցներ, ղեկավարում ու վերահսկում են շարժական արդյունաբերական, գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների աշխատանքը, նավերի և այլ ջրային փոխադրամիջոցների վրա կատարում են տախտակամածային աշխատանքներ:

2.Այս աշխատանքները գլխավորապես պահանջում են ղեկավարվող մեքենաների և սարքավորումների կառուցվածքի և աշխատանքի սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ, տրանսպորտային միջոցների սպասարկման փորձ, երթևեկության կանոնների ինացություն, շահագործման ընթացքում ի հայտ եկած անսարքությունների և թերությունների վերացման ունակություն:

3.Սույն ենթախմբի աշխատողների պարտականություններն են՝ բեռների, նյութերի և ուղևորների փոխադրման ժամանակ գնացքներ, ավտոմեքենաներ, վերգետնյա և ստորգետնյա տրանսպորտային միջոցներ, շարժական այլ փոխադրամիջոցներ վարելն ու սպասարկելը. արդյունաբերական ու գյուղատնտեսական շարժական մեքենաների ու

սարքավորումների, բեռնման-բեռնաթափման միջոցների, վերամբարձ և հողափոր մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը. տրանսպորտային միջոցներ վերանորոգելը և փոխադրումների ժամանակ առաջացած թերությունները վերացնելը. նավերի, այլ ջրային փոխադարմիջոցների տախտակամած մաքրելը, տախտակամածի սարքավորումներ սպասարկելը:

4.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)**Փոքր խումբ 831. Մեքենավարներ՝ գնացքաքարշերի և բանվորներ հարակից զբաղմունքների.**

2)**Փոքր խումբ 832. Վարորդներ՝ ավտոմոտոտրանսպորտի.**

3)**Փոքր խումբ 833. Օպերատորներ և մեքենավարներ՝ գյուղատնտեսական, հողափոր, ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման այլ շարժական սարքավորումների:**

86. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 831 ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԳՆԱՑՔԱՔԱՐՇԻ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Գնացքաքարշերի մեքենավարները և հարակից մասնագիտությունների բանվորները վարում են ապրանքատար և մարդատար գնացքները, սլաքային փոխադրիչների տեղափոխման, ձայնային ու լուսային ազդանշանների արձակման օգնությամբ ապահովում են գնացքների անվտանգ երթևեկությունը և մանևրային աշխատանքները կայարաններում, տեսակավորման և այլ տեսակի կայարաններում կազմավորում են շարժակազմեր և գնացքներ:

2.Այս փոքր խմբի մեջ մտնող մասնագետների պարտականություններն են՝ ջերմաքարշեր, էլեկտրաքարշեր և քարշարկման այլ ագրեգատներ ղեկավարելը. դրանց արագությունը կարգավորելը՝ կախված ճանապարհի ծրագծից (պրոֆիլից) և շարժակազմի զանգվածից. գնացքաքարշերի ստուգիչ–չափիչ սարքավորումները և ազդանշանային համակարգը վերահսկելը. ճանապարհի վիճակին հետևելը. վագոնների շարժման արագությունը արգելակման միջոցով կարգավորելը. ավտոմատ արգելակման համակարգը փորձարկելը. չկենտրոնացված կառավարմամբ սլաքային փոխադրիչներ տեղափոխելը, դրանք արգելափակելը. ձայնային և տեսանելի ազդանշաններ հաղորդելը՝ գնացքը կայարան մտնելիս, կայարանից մեկնելիս, հանդիպակաց գնացքին բաց թողնելիս, այլ գնացքի վազանցում կատարելիս, ինչպես նաև կայարանում մանևրային աշխատանքներ կատարելու ժամանակ. տեսակավորման և այլ տեսակի կայարաններում շարժակազմեր կազմավորելը և խմբացրելը վագոններ և գնացքաքարշեր կցելու և անջատելու միջոցով. շարժման անվտանգությունն ապահովելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8311. Մեքենավարներ՝ գնացքաքարշերի.**

2)**Ստորին խումբ 8312 . Բանվորներ՝ արգելակման, սլաքավարներ և վագոն կցողներ:**

87. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8311. ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԳՆԱՑՔԱՔԱՐՇԵՐԻ

1.Գնացքաքարշերի մեքենավարները վարում են մարդատար կամ ապրանքատար գնացքների ջերմաքարշերը, էլեկտրաքարշերը և քարշարկման այլ ագրեգատներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ջերմաքարշեր և էլեկտրաքարշեր վարելը, դրանց արագությունը կարգավորելը՝ կախված ճանապարհի ծրագծից (պրոֆիլից) և շարժակազմի զանգվածից, ազդանշաններ վերահսկելը, շարժակազմի և երթուղու վիճակին հետևելը, հպակային ցանցի, սլաքային փոխադրիչների դիրքը, հսկիչ-չափիչ սարքերի ցուցմունքները հսկելը, մանևրային աշխատանքներ կազմակերպելն ու կատարելը.

2)այլ տեսակի քարշային ագրեգատ ղեկավարելը, քարշային ագրեգատի առաջին վագոնի հետ կցորդելու, մյուս վագոններն իրար կցորդելու ճշգրտությունն ու հուսալիությունն ստուգելը, քարշային ագրեգատի աշխատանքի ժամանակ ծագած անսարքությունները վերացնելը.

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մեքենավար՝ ջերմաքարշի.

2)մեքենավար՝ էլեկտրաքարշի.
3)մեքենավար՝ քարշային ագրեգատի:

88. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8312. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ, ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՎԱԳՈՆ ԿՑՈՂՆԵՐ

1.Արգելակման բանվորները, սլաքավարները և վագոն կցողներն ապահովում են երկաթուղային տրանսպորտի անվտանգությունը և հուսալիությունը, վերահսկում անվտանգ երթևեկությունը, ազդանշանների փոխման կամ սլաքային փոխադիչների տեղափոխման միջոցով հսկում են երկաթուղային տրանսպորտի երթևեկությունը, տեսակավորման և այլ տեսակի կայարաններում կազմավորում են շարժակազմեր ու գնացքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վագոնների շարժման արագությունն արգելակման միջոցով կարգավորելը, գծերին կանգնած վագոնները արգելակային կալունների ու ձեռքի արգելակների օգնությամբ դիրքավորելը.

2)վագոնների ավտոմատ արգելակները կենտրոնացված վահանակի միջոցով փորձարկելը, շարժակազմերի ընթացքի ժամանակ էլեկտրոնային սարքերի միջոցով առանցքակալատուփերի տաքացման աստիճանը որոշելը.

3)գնացքները կայարան ժամանելու, կայարանից մեկնելու, այլ գնացքներ բաց թողնելու ժամանակ չկենտրոնացված սլաքային փոխադրիչը տեղափոխելը կամ արգելափակելը, արգելակային կալունների միջոցով շարժակազմեր ու վագոններ դիրքավորելը, սլաքային ազդանշանների լուսավորություն ապահովելը.

4)գնացքի վերջնամասը ցույց տվող ազդանշաններ ամրացնելը և հանելը, ձայնային ու տեսանելի ազդանշաններով գնացքների կայարան ժամանելը, կայարանից մեկնելը, այլ գնացքներ բաց թողնելը, ինչպես նաև մանևրներ ազդարարելը.

5)վագոններն անջատելու և կցելու միջոցով շարժակազմեր և գնացքներ ձևավորելը, տեսակավորման կայարաններում ու պահեստային գծերի վրա գնացքներ, շարժակազմեր վերախմբավորելը վագոնների տարանջատման միջոցով՝ գնացքների բեռնավորման, բեռնաթափման ու կազմավորման հանձնարարականներին համապատասխան, վագոնների՝ բեռնման-բեռնաթափման կետերին մատակարարման աշխատանքներին աջակցելը.

6)գծանցումներում գնացքների, ավտոմեքենաների և այլ փոխադրամիջոցների անվտանգ երթևեկությունն ապահովելը, գծանցումների ավտոմատ կայանքների, լուսացույցների ու ձայնային ազդանշանների, էլեկտրական լուսավորության և այլ կայանքների սարքինությունը վերահսկելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր՝ երկաթուղային տրանսպորտի արգելակների ղեկավարման.

2)սլաքավար.

3)ազդարար.

4)օպերատոր՝ վագոնի տեխնիկական սպասարկման.

5)հերթապահ՝ սլաքային պահակակետի.

6)կազմավորող–տարանջատող՝ գնացքների.

7)հերթապահ՝ գծանցման:

89. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 832. ՎԱՐՈՐԴՆԵՐ՝ ԱՎՏՈՄՈՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ

1.Ավտոմոտոտրանսպորտային միջոցների վարորդները վարում և սպասարկում են բոլոր տեսակի մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, ավտոբուսներ, հատուկ տեսակի տրանսպորտային միջոցներ, մոտոցիկլետներ և ավտոմոտոտրանսպորտային այլ միջոցներ, քաղաքային էլեկտրական տրանսպորտ՝ պահպանելով ճանապարհային երթևեկության կանոնները:

2.Այս փոքր խմբի զբաղմունքների մասնագետների պարտականություններն են՝ բոլոր տեսակի մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, ավտոբուսներ, հատուկ տեսակի տրանսպորտային միջոցներ, մոտոցիկլետներ և ավտոմոտոտրանսպորտաին այլ միջոցներ,

քաղաքային էլեկտրական տրանսպորտ վարելը. դրանք վառելիքով, քսայուղերով, հովացման հեղուկներով լիցքավորելը. շահագործման ժամանակ ծագած անսարքությունները վերացնելը. ճանապարհային երթևեկության կանոններն իմանալը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8321 Վարորդներ՝ մոտոցիկլետի, մոտոռոլլերի, մոպեդի, ձյունագնացի և տրանսպորտային այլ միջոցների.**

2)**Ստորին խումբ 8322 Վարորդներ՝ ուղևորատար տրանսպորտային միջոցների.**

3)**Ստորին խումբ 8323 Վարորդներ՝ բեռնատար տրանսպորտային միջոների.**

4)**Ստորին խումբ 8324 Վարորդներ՝ հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների:**

90. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8321. ՎԱՐՈՐԴՆԵՐ՝ ՄՈՏՈՑԻԿԼԵՏԻ, ՄՈՏՈՌՈԼԼԵՐԻ, ՄՈՊԵԴԻ, ՁՅՈՒՆԱԳՆԱՑԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.Մոտոցիկլետների, մոտոռոլլերների, մոպեդների, ձյունագնացների վարորդները վարում և սպասարկում են մոտոցիկլետներ, մոտոռոլլերներ, մոպեդներ, ձյունագնացներ, որոնք կահավորված են նյութերի, ապրանքների և ուղևորների փոխադրման համար, կատարում են նշված տրանսպորտային միջոցների սպասարկման աշխատանքներ, լիցքավորում վառելիքով և քսայուղերով, շահագործման ընթացքում վերացնում առաջացած փոքր անսարքությունները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մոտոցիկլետներ, մոտոռոլլերներ, մոպեդներ և այդօրինակ այլ փոխադրամիջոցներ վարելը, դրանց տեխնիկական սարքինությունն ստուգելը մեկնելուց առաջ ու աշխատանքի ավարտից հետո, դրանք վառելիքով ու քսուքայուղերով լիցքավորելը, շահագործման ժամանակ առաջացած փոքր թերությունները վերացնելը.

2)լեռնադահուկային սպորտի կենտրոններում ձյունագնացներ վարելը, կապի սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելը և դրանցից օգտվելը, վնասվածքներ ունեցող դահուկորդներին առաջին օգնություն ցուցաբերելը և համապատասխան վայր հասցնելը.

3)այլ աշխատողներին ղեկավարելը.

4)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)վարորդ՝ մոտոցիկլետի.

2)վարորդ՝ ձյունագնացի:

91. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8322. ՎԱՐՈՐԴՆԵՐ՝ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.Ուղևորատար տրանսպորտային միջոցների վարորդները վարում են մարդատար ավտոմեքենաներ, տաքսիներ, միկրոավտոբուսներ, ավտոբուսներ, տրոլեյբուսներ և տրամվայներ, որոնք կահավորված են ուղևորներ, ուղեբեռ և փոստ փոխադրելու համար, կատարում են նշված տրանսպորտային միջոցների սպասարկման, վառելիքով և քսայուղերով լիցքավորման աշխատանքներ, շահագործման ժամանակ վերացնում են ծագած փոքր անսարքությունները, ուղևորներին ցույց են տալիս անհրաժեշտ աջակցություն:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բոլոր տեսակի մարդատար ավտոմեքենաներ, միկրոավտոբուսներ, ավտոբուսներ, տրոլեյբուսներ և տրամվայներ վարելը.

2)ուղևորներին տրանսպորտային միջոց նստեցնելը, ուղեբեռը և փոստը բեռնախցիկում տեղավորելն ու ամրացնելը.

3)ճանապարհային երթևեկության կանոններն իմանալը և փոխադրումների ժամանակ դրանք խստորեն պահպանելը.

4)տրանսպորտային միջոցներ սպասարկելը, դրանք վառելիքով, քսայուղերով և հովացնող հեղուկներով լիցքավորելը.

5)շահագործման ժամանակ ծագած փոքր անսարքությունները վերացնելը.

6)նախատեսված կանգառներում ուղևորներին իջեցնելը՝ բացառությամբ տաքսիների, իսկ վերջինիս դեպքում՝ ուղևորի պահանջած տեղում իջեցնելը.

7)տրանսպորտային միջոցներում տեղակայված չափիչ-տեղեկատվական սարքերը վերահսկելը, շահագործման ժամանակ դրանց ցուցմունքները հաշվի առնելը.

8)տրանսպորտային միջոցների հիմնական վերանորոգումներին և վերանորոգումից հետո առանձին հանգույցների փորձարկմանը և գործարկմանը մասնակցելը.

9)ուղևորներից ուղեվարձ ստանալը, հաշվարկելը և տրանսպորտային կազմակերպության համապատասխան ծառայությանը հանձնելը, ուղևորների՝ ուղևորության համար սահմանված փաստաթղթերն ստուգելը և գրանցելը.

10)փոխադրումների ժամանակ ուղևորներին խորհրդատվության տեսքով փոքր ծառայություններ մատուցելը այլ փոխադրամիջոցների, երթուղիների, հանգստյան վայրերի, սննդի ընդունման, գիշերելու վայրերի և այլ հարցերի վերաբերյալ.

11)այլ աշխատողներին ղեկավարելը.

12)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)վարորդ՝ մարդատար ավտոմեքենայի.

2)վարորդ՝ տաքսու.

3)վարորդ՝ միկրոավտոբուսի.

4)վարորդ՝ միջքաղաքային երթևեկության ավտոբուսի.

5)վարորդ՝ տրոլեյբուսի (տրամվայի):

92. ՍՏՈՐԻՆ ԽՈՄԲ 8323. ՎԱՐՈՐԴՆԵՐ՝ ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.Բեռնատար տրանսպորտային միջոցների վարորդները վարում են բոլոր տեսակի բեռնատար ավտոմեքենաներ, որոնք կահավորված են բեռների և փոստի փոխադրման համար, կատարում են նշված տրանսպորտային միջոցների սպասարկման, վառելիքով և քսայուղերով լիցքավորման աշխատանքներ, շահագործման ժամանակ վերացնում են ծագած փոքր անսարքությունները, ապահովում են բեռը անվնաս և ժամանակին տեղ հասցնելը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բոլոր տեսակի բեռնատար ավտոմեքենաներ վարելը՝ բեռներն անվնաս փոխադրելու նպատակով.

2)բեռը ավտոմեքենայի թափքում տեղակայելու, ամրացնելու և բեռնաթափելու աշխատանքները վերահսկելը.

3)ճանապարհային երթևեկության կանոններն իմանալը և փոխադրումների ժամանակ դրանք խստորեն պահպանելը.

4)տրանսպորտային միջոցներ սպասարկելը, դրանք վառելիքով, քսայուղերով և հովացնող հեղուկներով լիցքավորելը.

5)շահագործման ժամանակ ծագած փոքր անսարքությունները վերացնելը.

6)տրանսպորտային միջոցներում տեղակայված չափիչ-տեղեկատվական սարքերը վերահսկելը, շահագործման ժամանակ դրանց ցուցմունքներով առաջնորդվելը.

7)տրանսպորտային միջոցների հիմնական վերանորոգումներին և վերանորոգումից հետո առանձին հանգույցների փորձարկմանը և գործարկմանը մասնակցելը.

8)բեռի փոխադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի պատրաստմանը մասնակցելը, փաստաթղթերը պահպանելը և համապատասխան ծառայություններին ներկայացնելը.

9)բեռի անվնաս փոխադրումն ապահովելու նպատակով փաթեթավորման սկզբունքներն իմանալը և այդ մասին բեռի տիրոջը խորհրդատվություն մատուցելը.

10)բեռը ժամանակին տեղ հասցնելու նպատակով երթուղուն նախօրոք ծանոթանալը, երթուղու ընտրության ժամանակ բեռի տիրոջը խորհրդատվություն մատուցելը.

11)շուտ փչացող, պայթուցիկ, ճառագայթաակտիվ և այլ վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության կանոններն իմանալը և փոխադրման ժամանակ դրանք խստորեն պահպանելը.

12)այլ աշխատողներին ղեկավարելը.

13)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)վարորդ՝ բեռնատար ավտոմեքենայի.
2)վարորդ՝ ավտոկցորդի.
3)վարորդ՝ ավտոֆուրգոնի:

93. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8324. ՎԱՐՈՐԴՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.Հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների վարորդները վարում են, հրշեջ ծառայության, շտապ բժշկական օգնության, բեռի բեռնման-բեռնաթափման ու տեղավորման, տեղակայման տրանսպորտային միջոցներ: Նրանք կատարում են նշված տեսակի տրանսպորտային միջոցների սպասարկման, վառելիքով և քսայուղերով լիցքավորման աշխատանքներ, շահագործման ժամանակ վերացնում են առաջացած փոքր անսարքությունները, կառավարում են տրանսպորտային միջոցներում տեղակայված լրացուցիչ սարքերն ու ագրեգատները:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հատուկ նշանակության մարդատար, բեռնատար ավտոմեքենաներ և ավտոբուսներ (հրշեջ ծառայության, շտապ օգնության, ներքին գործերի օպերատիվ նշանակության, փրկարար ծառայության, ավտոամբարձիչներ և այլն) վարելը.

2)ճանապարհային երթևեկության կանոնների իմացությունը և դրանց պարտադիր պահպանումը երթևեկության ժամանակ, սահմանված կարգով լուսային և ձայնային ազդանշաններ արձակելը ծառայողական երթերի ժամանակ.

3)տրանսպորտային միջոցներ սպասարկելը, դրանք վառելիքով, քսայուղերով և հովացնող հեղուկներով լիցքավորելը.

4)շահագործման ժամանակ առաջացած փոքր անսարքությունները վերացնելը.

5)տրանսպորտային միջոցներում տեղակայված չափիչ-տեղեկատվական սարքեր վերահսկելը, դրանց ցուցմունքներով շահագործման ժամանակ առաջնորդվելը.

6)տրանսպորտային միջոցների հիմնական վերանորոգումներին և վերանորոգումից հետո առանձին հանգույցների փորձարկմանը և գործարկմանը մասնակցելը.

7)տրանսպորտային միջոցներում տեղակայված հատուկ նշանակության սարքերի (ջուր մղող պոմպ, ջեռուցման կամ սառեցման համակարգ, բեռնման, բեռնաթափման սարք) և ագրեգատների աշխատանքը ղեկավարելը և վերահսկելը.

8)անհրաժեշտության դեպքում՝ հատուկ նշանակության տրանսպորտային միջոցի անձնակազմին օգնելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)վարորդ՝ հրշեջ ավտոմեքենայի.
2)վարորդ՝ շտապ բժշկական օգնության ավտոմեքենայի.
3)վարորդ՝ ավտոամբարձիչի:

94. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 833. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀՈՂԱՓՈՐ, ԱՄԲԱՐՁԻՉ, ԲԵՌՆՄԱՆ-ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1.Գյուղատնտեսական, հողափոր, ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման և այլ շարժական սարքավորումների օպերատորները և մեքենավարները վարում, սպասարկում, ղեկավարում ու վերահսկում են ապրանքներ, ծանր բեռներ փոխադրող գյուղատնտեսական մեքենաների և շարժական այլ սարքավորումների, հողափոր և ամբարձիչ մեքենաների ու սարքավորումների, բեռնման-բեռնաթափման միջոցների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են. տրակտորներ, կոմբայններ, լրացուցիչ սարքավորումներով համալրված գյուղատնտեսական այլ մեքենաներ վարելը. շինարարական աշխատանքների ժամանակ էքսկավատորներ, ուղեհարթիչներ (գրեյդերներ), կեռաշերեփներ, մղաններ և հողափոր այլ մեքենաներ, ամբարձիչ մեքենաներ և սարքավորումներ ղեկավարելը. բեռնող-բեռնաթափող միջոցների՝ ավտոբեռնիչների,

տրակտորների և այլ սարքավորումների աշխատանքը ղեկավարելը, դրանք սպասարկելն ու վերահսկելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)**Ստորին խումբ 8331. Մեքենավարներ՝ գյուղատնտեսական և անտառային տնտեսությունների շարժական սարքավորումների և մեքենաների.**

2)**Ստորին խումբ 8332. Օպերատորներ՝ հողափոր և համանման այլ մեքենաների.**

3)**Ստորին խումբ 8333. Օպերատորներ՝ ամբարձիչների, վերամբարձ կռունկների և բեռնման-բեռնաթափման այլ սարքավորումների ու մեքենաների:**

95. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8331. ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Գյուղատնտեսական և անտառային տնտեսությունների շարժական մեքենաների և սարքավորումների մեքենավարները վարում, սպասարկում, կառավարում ու վերահսկում են մեկ կամ մի քանի տեսակի մեքենաների ու սարքավորումների՝ տրակտորների, կոմբայնների, քարշակների, ինքնագնացների և այլնի աշխատանքը գյուղատնտեսական և անտառային տնտեսություններում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տրակտորներ, վարի սարքեր, սերմնացան մեքենաներ, կոմբայններ, հնձիչներ, տրակտորային քարշակների թափքի վրա հավաքված գյուղատնտեսական այլ հատուկ մեքենաներ ու այդօրինակ սարքավորումներ վարելը և սպասարկելը.

2)անտառային տնտեսություններում, փայտամթերման, գերանների մաքրման, հավաքման ու տեղափոխման, ինչպես նաև՝ ծառերի տնկման աշխատանքների ժամանակ տրակտորներ, քարշակներ, ամբարձիչներ, ինքնագնացներ և այլ հատուկ մեքենաներ վարելը և սպասարկելը.

3)վառելիքով, քսայուղերով և հովացնող հեղուկներով շարժական մեքենաներ և սարքավորումներ լիցքավորելը, վերանորոգման աշխատանքներին մասնակցելը, վերանորոգված ագրեգատների փորձարկման և գործարկման աշխատանքներ կատարելը.

4)այլ աշխատողներին ղեկավարելը.

5)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)վարորդ՝ փայտամթերքի փոխադրման ավտոմեքենայի.

2)տրակտորիստ.

3)կոմբայնավար.

4)օպերատոր՝ շարժական գյուղատնտեսական սարքավորման:

96. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8332. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ՀՈՂԱՓՈՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Հողափոր և համանման այլ մեքենաների օպերատորները շինարարական աշխատանքների և բաց կամ ստորգետնյա եղանակով հանքարդյունահանման ժամանակ կառավարում ու հսկում են բնահողը կամ այդօրինակ նյութերը քանդող, կտրող, հանող, հարթեցնող ու տափանող, ասֆալտը և բետոնը փռող ու ամրացնող մեքենաների աշխատանքը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)էքսկավատորների, մղանների (բուլդոզերների), կեռաշերեփների և այդօրինակ այլ մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը բնահողի, հանքաքարի, ավազի, խճի, կոպիճի և այդօրինակ այլ նյութերի արդյունահանման և տեղափոխման, ինչպես նաև շենքերի, ճանապարհների և այլ կառույցների շինարարության կամ քանդման ժամանակ.

2)ջրանցքների, ջրագծերի, նավթագծերի, գազագծերի և այլ խողովակաշարերի տեղադրման համար խրամուղիներ փորող մեքենաներ կառավարելն ու վերահսկելը.

3)մղանների, ուղեհարթիչների (գրեյդերների), կեռաշերեփների և այդօրինակ այլ մեքենաների աշխատանքը կառավարելը և վերահսկելը հողի, ավազի, ձյան և այլ նյութերի տեղափոխման, բաշխման կամ հարթեցման աշխատանքների կատարման ժամանակ.

4)ջրային ավազանների հատակից ավազ, կոպիճ, տիղմ դուրս հանող մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

5)հողի մեջ փայտյա, բետոնե կամ պողպատյա ցցեր խփող մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

6)ճանապարհաշինության, ասֆալտապատման և այդօրինակ աշխատանքներում տոփանման և հարթեցման գլդոնների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

7)ճանապարհաշինության և համանման աշխատանքներում բետոնի կամ հանքածյութի (գուդրոնի) խառնուրդի բաշխման ու հարթեցման մեքենաների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

8)մեքենաները վառելիքով, քսայուղերով և հովացնող հեղուկներով լիցքավորելը, բոլոր տեսակի վերանորոգման աշխատանքներին մասնակցելը, վերանորոգված ագրեգատների փորձարկման ու գործարկման աշխատանքներ կատարելը.

9)այլ աշխատողներին ղեկավարելը.

10)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)էքսկավատորավար.

2)մղանավար (բուլդոզերավար).

3)ուղեհարթիչավար (գրեյդերավար).

4)գլդոնավար:

97. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 8333. ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ՝ ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻ, ՎԵՐԱՄԲԱՐՁ ԿՌՈՒՆԿՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆՄԱՆ - ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԱՅԼ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1.Ամբարձիչների, վերամբարձ կռունկների և բեռնման-բեռնաթափման այլ սարքավորումների ու մեքենաների օպերատորները կառավարում ու վերահսկում են վերամբարձ կռունկների, ավտոբեռնիչների և վերամբարձ ու բեռնման-բեռնաթափման այդօրինակ այլ մեքենաների և սարքավորումների աշխատանքը շինհրապարակներում, հանքահորերում, պահեստներում և այլ վայրերում՝ բեռը բարձրացնելու, իջեցնելու, տեղավորելու, մարդկանց բարձրացնելու և իջեցնելու նպատակով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շարժական կամ սևեռված (դիրքադրված) սլաքով շարժական և անշարժ վերամբարձ կռունկների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը.

2)ամբարձիչ սարքավորումներ և մեքենաներ կառավարելն ու հսկելը շինհրապաակներում և այլ վայրերում՝ մարդկանց և բեռների իջեցման ու բարձրացման նպատակով.

3)կամրջակային, այծիկավոր, աշտարակային, ճոպանային և այլ ամբարձիչների աշխատանքը կառավարելն ու վերահսկելը բեռնման-բեռնաթափման, բեռները տարածության մի կետից մյուսը տեղափոխելու աշխատանքներում.

4)անտառանյութի բեռնման-բեռնաթափման բոլոր տեսակի ամբարձիչ, բեռնող-բեռնաթափող մեքենաներ և սարքավորումներ կառավարելն ու վերահսկելը.

5)վերամբարձ կռունկների, այլ ամբարձիչ սարքավորումների և մեքենաների ճոպանների, արգելակների և պաշտպանիչ ավտոմատ սարքերի աշխատանքը կարգավորելը և վերահսկելը, բեռի ամրացման ճշգրտությունը վերահսկելը.

6)նշված մեքենաների և սարքավորումների վերանորոգման աշխատանքներին մասնակցելը, վերանորոգված ագրեգատներ փորձարկելը և գործարկելը, մեքենաները և սարքավորումները վառելիքով, քսայուղերով, հովացնող հեղուկով լիցքավորելը, դրանց շահագործման անվտանգության կանոնները պահպանելը.

7)այլ աշխատողներին ղեկավարելը.

8)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մեքենավար՝ ավտոամբարձչի.

2)օպերատոր՝ ամբարձիչ կռունկի.

3)մեքենավար՝ շինարարական վերելակի.

4)մեքենավար՝ կայմասյունային և հանքահորային վերելակի.

5)օպերատոր՝ ավտոբեռնիչի:

ԲԱԺԻՆ 9

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ 9. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ

1. ՆԱԽԱԲԱՆ

1.Որակավորում չունեցող բանվորները կատարում են կրկնվող հասարակ պարտականություններ՝ հիմնականում ձեռքի պարզ գործիքների կամ զգալի ֆիզիկական ջանքերի գործադրմամբ:

2.Որակավորում չունեցող բանվորների պարտականությունները ներառում են. փողոցում, հասարակական վայրերում ապրանքներ վաճառելը կամ գնորդին ապրանքներ առաջարկելն ըստ նրա բնակության վայրի. փողոցում տարբեր բնույթի ծառայություններ մատուցելը. բնակելի տներում, հյուրանոցներում և այլ կազմակերպություններում հավաքելու, մաքրելու, լվանալու, արդուկելու ծառայություններ մատուցելը. շենքերի լուսամուտներ և ապակե մակերևույթներ լվանալը. թղթակցություններ ու ապրանքներ տեղ հասցնելը. ուղեբեռ մոտ բերելը. շենքերի մուտքեր հսկելը և ունեցվածք պահպանելը. առևտրի ավտոմատ սարքերից դրամ հավաքելը կամ հաշվիչի ցուցմունքներ գրառելը. աղբ հավաքելը, փողոցներ ու օժանդակ վայրեր մաքրելը. գյուղատնտեսության, ձկնաբուծության և որսորդության մեջ տարբեր բնույթի հասարակ գործողություններ կատարելը. շինարարության, արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման ոլորտներում հասարակ աշխատանքներ կատարելը՝ ներառյալ արտադրանքը տեսակավորելը. ձեռքով փաթեթավորելու և մանրամասեր հավաքելու պարզ աշխատանքներ կատարելը. ձեռքով բեռ տեղափոխելը, ոտնակային կամ ձեռքով կառավարվող փոխադրամիջոցներով ուղևորներ ու ապրանքներ փոխադրելը. քարշիչ ուժով աշխատող փոխադրամիջոցներ և մեքենաներ ղեկավարելը:

3.Այս հիմնական խմբի զբաղմունքների մեծ մասին բնորոշ է որակավորման ցածր մակարդակը, որը ձեռք է բերվում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության և աշխատատեղում անհատական ուսուցման շնորհիվ:

4.Այս հիմնական խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ենթախմբերում.

1)Ենթախումբ 91. Բանվորներ՝ սպասարկման և առևտրի ոլորտի.

2)Ենթախումբ 92. Բանվորներ՝ գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների.

3)Ենթախումբ 93. Բանվորներ՝ հանքարդյունահանման և մշակման արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետախուզման.

2. ԵՆԹԱԽՈՒՄԲ 91. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ

1.Առևտրի և սպասարկման ոլորտի բանվորների պարտականությունները հիմնականում առնչվում են փողոցում առևտուր կատարելու կամ գնորդին ըստ բնակության վայրի ապրանքներ և ծառայություններ առաջարկելու, բնակարաններում, հյուրանոցներում այլ կազմակերպություններում տարածքներ մաքրելու, ունեցվածքի պահպանության, ապրանքներ և գրություններ տեղ հասցնելու, ուղեբեռը մոտ բերելու հետ: Այսպիսի աշխատանքը ենթադրում է ձեռքի պարզ գործիքների օգտագործում կամ զգալի ֆիզիկական ջանքերի գործադրում:

2.Սույն ենթախմբի աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են. փողոցներում, հասարակական վայրերում կամ գնորդի բնակության վայրում ապրանքներ վաճառելը. փողոցում տարբեր բնույթի ծառայություններ մատուցելը. հավաքելը, լվանալը, արդուկելը, փողոցներ մաքրելը կամ աղբ հավաքելը. շենքերի մուտքեր հսկելը, ունեցվածք, գույք ու շենքեր պահպանելը. լուսամուտներ, ապակե այլ մակերևույթներ լվանալը. տոմսեր ստուգելը. ապրանքներ ու թղթակցություն տեղ հասցնելը. առևտրի ավտոմատ սարքերից օրվա հասույթը հավաքելը կամ հաշվիչի ցուցմունք գրանցելը, ուղեբեռ տեղ հասցնելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.

1)Փոքր խումբ 911. Վաճառողներ՝ փողոցում, և համանման այլ աշխատողներ.

2)Փոքր խումբ 912. Մաքրողներ՝ կոշիկի, և աշխատողներ՝ փողոցում տարբեր ծառայություններ մատուցող.

3)Փոքր խումբ 913. Սպասավորներ՝ տնային, հավաքարարներ՝ բնակարանների, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների.

4)Փոքր խումբ 914. Աշխատողներ՝ շենքերի սպասարկման, պատուհանների լվացման և համանման այլ աշխատանքների.

5)Փոքր խումբ 915. Ցրիչներ, բեռնակիրներ, դռնապաններ և աշխատողներ՝ հարակից այլ զբաղմունքների.

6)Փոքր խումբ 916. Հավաքողներ՝ աղբի, և համանման այլ աշխատողներ.

7)Փոքր խումբ 917. Աշխատողներ՝ պատվեր ընդունող, սպասարկման ոլորտի կազմակերպություններում:

3. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 911. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ՝ ՓՈՂՈՑՈՒՄ, ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

1.Փողոցում վաճառողները և համանման այլ աշխատողները փողոցում և հասարակական վայրերում վաճառում են մթերքներ և այլ ապրանքներ, ինչպես նաև ապրանքը գնորդին առաջարկում են ըստ նրա բնակության վայրի կամ հեռախոսով:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. սնունդ պատրաստելը և վաճառելը կամ նախօրոք պատրաստված սնունդ վաճառելը փողոցում կամ այլ հասարակական վայրում. արդյունաբերական ապրանքներ վաճառելը. կազմակերպություններին դրանց գտնվելու վայրում ապրանք վաճառելը կամ հեռախոսով ապրանք առաջարկելը. վաճառքի վայր կամ գնորդին հասցնելու համար սայլակներ կամ այլ տրանսպորտային միջոցներ ապրանք բեռնելն ու բեռնաթափելը. վաճառված ապրանքի դիմաց վճար ստանալը. առևտրի տեղը աղբից ու տարայից մաքրելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9111. Վաճառողներ՝ փողոցում, պարենային ապրանքների.

2)Ստորին խումբ 9112. Վաճառողներ՝ փողոցում, ոչ պարենային ապրանքների.

3)Ստորին խումբ 9113. Աշխատողներ՝ գնորդներին ըստ բնակության վայրի կամ հեռախոսով ապրանքներ և զանազան ծառայություններ առաջարկող:

4. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9111. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ՝ ՓՈՂՈՑՈՒՄ, ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1.Պարենային ապրանքներ վաճառողները փողոցում և հասարակական այլ վայրերում (մարզադաշտերում, կինոթատրոններում, թատրոններում և այլն) պատրաստում կամ վաճառում են պարենային ապրանքներ կամ վաճառում են նախօրոք պատրաստված տաք կամ սառը ուտեստներ, բանջարեղեն, մրգեր, պաղպաղակ, տարբեր խմիչքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վաճառքի համար սննդամթերք կամ խմիչքներ գնելը.

2)վաճառքի համար նախապես կամ տեղում ուտեստներ կամ խմիչքներ պատրաստելը.

3)վաճառվող ապրանքները ձեռքի սայլակներ կամ կամ այլ տրանսպորտային միջոցներ բեռնելը և բեռնաթափելը՝ վաճառքի համար դրանք տաղավարներ կամ հասարակական վայրեր (մարզադաշտեր, կինոթատրոններ, թատրոններ և այլն) տեղափոխելու նպատակով.

4)սնունդ և խմիչքներ դասավորելը.

5)վաճառված ապրանքի դիմաց վճար ստանալը.

6)առևտրի տեղը աղբից և տարայից մաքրելը՝ համաձայն առողջարարական պահանջների.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. մանրավաճառ՝ պարենային ապրանքների:

5. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9112. ՎԱՃԱՌՈՂՆԵՐ՝ ՓՈՂՈՑՈՒՄ, ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1.Ոչ պարենային ապրանքներ վաճառողները փողոցում և հասարակական այլ վայրերում (մարզադաշտերում, կինոթատրոններում, թատրոններում և այլն) վաճառում են տարբեր տեսակի ոչ պարենային ապրանքներ (գրքեր, թերթեր, մետաղից, փայտից, խեցեղենից, այլ նյութերից պատրաստված գեղարվեստական իրեր, հագուստ, կարած ու գործած զարդարական իրեր, կաշվե, մորթե իրեր և այլն):

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)վաճառքի համար զանազան ոչ պարենային ապրանքներ գնելը կամ պատրաստելը,
2)վաճառելու կամ պատվիրված վայր հասցնելու համար ապրանքը ձեռքի սայլակներ. հեծանիվներ, բեռնատարներ և այլ փոխադրամիջոցներ բեռնելը և բեռնաթափելը.
3)ապրանք դասավորելը.
4)թերթեր ու համանման ապրանքներ վաճառելը կամ գնորդի բնակության վայր հասցնելը.
5)տեղում վճար ստանալը.
6)առևտրի տեղը աղբից և տարայից մաքրելը՝ համաձայն առողջարարական պահանջների.
7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքի օրինակ է. մանրավաճառ՝ ոչ պարենային ապրանքների:

6. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9113. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ԳՆՈՐԴՆԵՐԻՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԿԱՄ ՀԵՌԱԽՈՍՈՎ ՏԱՐԲԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՂ

1.Բնակության վայրում կամ հեռախոսով գնորդներին ապրանքներ ու տարբեր ծառայություններ առաջարկող աշխատողները գնորդին առաջարկում են ձեռք բերել հիմնականում տնային գործածության ապրանքներ՝ այցելելով նրանց բնակության վայր կամ զանգահարելով հեռախոսով:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)այցելելով գնորդի բնակության վայր կամ զանգահարելով հեռախոսով՝ նրան զանազան ապրանքների ու ծառայությունների վաճառքի պայմանները մանրամասն նկարագրելը.
2)ապրանքանմուշների աշխատանքը ցուցադրելը, դրանց հիմնական բնութագրերը նշելը.
3)ստացված պատվերները գրանցելը և մատակարարող ընկերությանը փոխանցելը.
4)գովազդային գրականություն տարածելը կամ ապրանքին ծանոթանալու համար գնորդին նմուշներ առաջարկելը.
5)անհրաժեշտության դեպքում վճարներ հավաքելը, ապառիկ վաճառք կատարելը.
6)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)վաճառող՝ գնորդներին բնակության վայրում ապրանքներ առաջարկող.
2)վաճառող՝ հեռախոսով:

7. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 912. ՄԱՔՐՈՂՆԵՐ՝ ԿՈՇԻԿԻ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՓՈՂՈՑՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ

1.Կոշիկ մաքրողները և փողոցում տարբեր ծառայություններ մատուցող աշխատողները կատարում են տարբեր բնույթի սպասարկման աշխատանքներ, օրինակ՝ կոշիկ մաքրելը, ավտոմեքենաներ լվանալը, տնային գործածության ոչ բարդ սարքեր վերանորոգելը և այլն:
2.Այս փոքր խմբի աշխատողների պարտականությունները հիմնականում ներառում են. հաճախորդի ներկայությամբ կոշիկ մաքրելը, նորոգելը. կոշիկի նորոգման և խնամքի առարկաներ վաճառելը. համապատասխան միջոցներով ու սարքավորումներով ավտոմեքենաներ լվանալը, տնային գործածության ոչ բարդ սարքեր (կողպեքներ, բանալիներ, պատուհանների, դռների փեղկեր և այլն) վերանորոգելը, այլ բնույթի տարբեր հանձնարարություններ կատարելը:
3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.
1)Ստորին խումբ 9120. Մաքրողներ՝ կոշիկի, և աշխատողներ՝ փողոցում տարբեր ծառայություններ մատուցող:

8. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9120. ՄԱՔՐՈՂՆԵՐ՝ ԿՈՇԻԿԻ, ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՓՈՂՈՑՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ

1.Կոշիկ մաքրողները և փողոցում տարբեր ծառայություններ մատուցող աշխատողները կատարում են կոշիկ մաքրելու, ավտոմեքենաներ լվանալու, տնային պարզագույն իրեր

վերանորոգելու կամ փոխարինելու և այլ բնույթի հանձնարարություններ կամ ապահովում են այդօրինակ ծառայությունների մատուցումը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մաքրման համար անհրաժեշտ նյութեր ձեռք բերելը, հաճախորդի ներկայությամբ կամ առանց նրա ներկայության կոշիկ մաքրելը և ոչ բարդ նորոգում կատարելը, հաճախորդներին կոշիկի նորոգման և խնամքի համար անհրաժեշտ նյութեր և առարկաներ վաճառելը.

2)շարժական հաստոցներով տնային գործածության կտրող-ծակող գործիքներ սրելը և վերանորոգելը.

3)ավտոմեքենաներ լվանալը և մաքրելը.

4)զանազան տնային սարքերի և առարկաների ոչ բարդ վերանորոգում կատարելը և դրանք փոխարինելը, ինչպես նաև այդօրինակ այլ հանձնարարություններ կատարելը.

5)տեղում վարձավճար ստանալը.

6)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)սրող՝ կենցաղային իրերի.

2)մաքրող՝ կոշիկի.

3)լվացող՝ ավտոմեքենայի.

4)լվացող՝ ճանապարհների:

9. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 913. ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐ՝ ՏՆԱՅԻՆ, ՀԱՎԱՔԱՐԱՐՆԵՐ՝ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Տնային սպասավորները, բնակարանների հավաքարարները և հարակից զբաղմունքների աշխատողները մաքրելու ու լվանալու ծառայություններ են առաջարկում մասնավոր տներում, բնակարաններում, հյուրանոցներում, հիվանդանոցներում, տրանսպորտային և այլ կազմակերպություններում, կատարում են ձեռքով կամ մեքենաներով լվանալու, մաքրելու և արդուկելու աշխատանքներ՝ սպասարկվող տարածքի մաքրությունը պահպանելու նպատակով:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. ձեռքով կամ մեքենաներով տարածքներ և բնակարաններ մաքրելը. սպիտակեղեն փոխելը, լվանալը և արդուկելը. հատակ լվանալը. կահույք և այլ առարկաներ փայլեցնելը. անկողին հավաքելը. մասնավոր բնակարաններում տարբեր բնույթի ծառայություններ մատուցելը՝ կերակուր պատրաստելը և մատուցելը, ամանեղեն լվանալը և այլ աշխատանքներ:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9131. Սպասավորներ՝ տնային, և հավաքարարներ.

2)Ստորին խումբ 9132. Սպասավորներ և հավաքարարներ՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում և այլ հաստատություններում.

3)Ստորին խումբ 9133. Լվացարարներ և արդուկողներ՝ ձեռքով, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների:

10. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9131. ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐ՝ ՏՆԱՅԻՆ, ԵՎ ՀԱՎԱՔԱՐԱՐՆԵՐ

1.Տնային սպասավորները և հավաքարարները ձեռքով կամ փոշեկուլով կատարում են մաքրման և լվացման աշխատանքներ, լվանում և փայլեցնում են հատակը և կահույքը, լվանում և արդուկում են սպիտակեղենը, գնում են մթերքներ ու տնտեսական ապրանքներ, պատրաստում ու մատուցում են ուտեստներ, տանը կատարում են այլ պարտականություններ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ձեռքով կամ մեքենայական միջոցներով բնակարան մաքրելը, հատակ և կահույք լվանալն ու փայլեցնելը, պատուհաններ և այլ առարկաներ մաքրելը.

2)սպիտակեղեն լվանալը, արդուկելը, սպիտակեղեն և մանածագործվածքից պատրասված այլ իրեր նորոգելը.

3)սպասք լվանալը.

4)ուտեստներ պատրաստելը և մատուցելը.

5)տնային տնտեսությունը վարելու համար մթերքներ և սպառվող այլ ապրանքներ գնելը.

6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)սպասավոր՝ տնային.
2)բանվոր՝ տանը օրավարձով աշխատող.
3)հավաքարար՝ տնային:

11. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9132. ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՔԱՐԱՐՆԵՐ՝ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1.Հյուրանոցային տնտեսության օբյեկտների և այլ կազմակերպությունների սպասավորներն ու հավաքարարները մաքրման և հավաքման աշխատանքներ են կատարում հյուրանոցներում, հյուրատներում, հանրակացարաններում և այդօրինակ այլ կազմակերպություններում, ինչպես նաև մաքրում և հավաքում են տրանսպորտային միջոցները (հեռավոր երթևեկության գնացքներ, նավեր, ինքնաթիռներ, ավտոբուսներ և այլն):
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ձեռքով կամ մեքենաներով բնակելի տարածքներ մաքրելը և հավաքելը, կահույք և հատակ լվանալը և փայլեցնելը, գնացքներ, ինքնաթիռներ, նավեր, ավտոբուսներ և տրանսպորտային այլ միջոցներ մաքրելը.
2)անկողին հավաքելը, սպիտակեղեն տեսակավորելը և լվացքատուն հանձնելը, լոգարաններ, զուգարաններ մաքրելը, սրբիչ, օճառ և այլ առարկաներ փոխելը.
3)բնակվողներից կենցաղային ծառայությունների պատվերներ ընդունելը և դրանք ժամանակին կատարելն ապահովելը.
4)խոհանոցի մաքրման և հավաքման աշխատանքներին աջակցելը՝ ներառյալ ամանեղեն լվանալը.
5)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)սպասուհի՝ հյուրանոցների կամ հյուրատների.
2)հավաքարար՝ տրանսպորտային միջոցի.
3)լվացող՝ ամանների:

12. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9133. ԼՎԱՑԱՐԱՐՆԵՐ ԵՎ ԱՐԴՈՒԿՈՂՆԵՐ՝ ՁԵՌՔՈՎ, ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Ձեռքով լվացարարները և արդուկողները տանը, հյուրանոցներում, հյուրատներում և այլ կազմակերպություններում քիմիական մաքրման և լվացման են ենթարկում սպիտակեղենը, հագուստները, մանածագործական այլ իրեր, դրանք արդուկում են ձեռքով:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)տանը՝ շահառուի խնդրանքով, լվացքատանը կամ այլ կազմակերպությունում սպիտակեղեն, հագուստ, կտորներ և համանման այլ իրեր ձեռքով լվանալն ու արդուկելը.
2)բոլոր տեսակի ներքնակներ և վերմակներ, ինչպես նաև՝ մանածագործական այլ իրեր (բացառությամբ սպիտակեղենի) լվացքատանը, քիմմաքրման կամ այլ կազմակերպությունում ձեռքով մաքրելը և լվանալը.
3)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)լվացարարուհի՝ ձեռքով.
2)արդուկող՝ ձեռքով.
3)մաքրող՝ քիմմաքրման կազմակերպության:

13. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 914. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՇԵՆՔԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.Շենքերի սպասարկման, պատուհանների լվացման և համանման այլ աշխատանքներ կատարող աշխատողները հսկում են մասնավոր տարածքները, հյուրանոցները, հյուրատները և այլ կազմակերպություններ՝ դրանցում մաքրություն, սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովելու նպատակով:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. հյուրանոցներ, հյուրատներ, շենքեր, այլ կազմակերպություններ և նրանց հարող տարածքները հսկելը, դրանց մաքրման աշխատանքներին մասնակցելը. բնակվողների և տարածքներից օգտվողների կողմից շահագործման կանոնները պահպանելն ապահովելը (նյութական միջոցների հետ խնայողաբար վարվելը, լռություն պահպանելը և այլն), բնակիչների բացակայության ժամանակ նրանց փոքր ծառայություններ մատուցելը (առաքված ապրանքներ ընդունելը, տեղեկատվություն հաղորդելը և այլն), շենքերի և շինությունների ապակյա մակերևույթները և դրանց հարող կառուցվածքները լվանալը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9141. Աշխատողներ՝ շենքերի սպասարկման.

2)Ստորին խումբ 9142. Լվացողներ՝ տրանսպորտային միջոցների և պատուհանների:

14. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9141. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՇԵՆՔԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1.Շենքերի սպասարկման աշխատողները հետևում են շենքերին և դրանց հարող տարածքներին՝ դրանք մաքուր, պատշաճ առողջարարական վիճակում պահելու նպատակով:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շենքերի ու դրանց հարող տարածքների մաքրման և դրանք պատշաճ առողջարարական վիճակում պահելու աշխատանքներին մասնակցելը.

2)շենքերի, դրանց հարող տարածքների, առկա սարքավորումների ոչ բարդ վերանորոգումներ կատարելը.

3)ջեռուցում և տաք ջրի մատակարարում ապահովելու նպատակով վառարաններ ու կաթսաներ սպասարկելը.

4)բացակայող բնակիչներին փոքր ծառայություններ մատուցելը (փոստ և առաքված իրեր ընդունելը և բնակչին հանձնելը, այցելուներին տեղեկատվություն հաղորդելը և այլն).

5)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)աշխատող՝ շենքի սպասարկման.

2)պահակ՝ շենքի և հարակից տարածքի:

15. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9142. ԼՎԱՑՈՂՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ

1.Տրանսպորտային միջոցներ և պատուհաններ լվացողները լվանում ու փայլեցնում են շենքերի և շինությունների պատուհաններ, ցուցափեղկեր, դրանց հարող կառուցվածքներ, ապակյա այլ մակերևույթներ, հատակներ, ինչպես նաև՝ լվանում ու մաքրում են տրանսպորտային միջոցներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)շենքերի և շինությունների պատուհաններ, դրանց հարող կառուցվածքներ, ապակյա այլ մակերևույթներ ջրով ու տարբեր լուծույթներով լվանալը, դրանք չորացնելը և փայլեցնելը.

2)շենքերի և շինությունների հատակները ձեռքով կամ մեքենաներով լվանալը և փայլեցնելը, փայլեցման նյութեր նախապատրաստելը.

3)տրանսպորտային միջոցները ջրով կամ համապատասխան լուծույթներով մաքրելը, լվանալը և չորացնելը.

4)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մաքրող՝ պատուհանների.

2)բանվոր՝ հատակ փայլեցնող.

3)լվացող՝ տրանսպորտային միջոցի:

16. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 915. ՑՐԻՉՆԵՐ, ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ, ԴՌՆԱՊԱՆՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Ցրիչները, բեռնակիրները, դռնապանները և հարակից այլ զբաղմունքների բանվորները տեղ են հասցնում թղթակցություններ կամ ապրանքներ, մատուցում են

ուղեբեռ, հետևում են ավտոտրանսպորտի կայանատեղերին, պահպանում են մասնավոր ու հանրային սեփականությունը՝ սեփականատիրոջ տարածք անօրինական ներթափանցումները, գողության ու հրդեհների դեպքերը կանխելու նպատակով, դրամ են հավաքում առևտրի ավտոմատներից կամ գրառում են էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հաշվիչների ցուցմունքները:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. կազմակերպության ներսում, մի կազմակերպությունից մյուսը, մասնավոր տներ կամ այլ վայրեր թղթակցություններ, փաթեթներ, այլ իրեր հասցնելը. ուղեբեռ մոտեցնելը, հատկապես՝ հյուրանոցներում, կայարաններում և օդանավակայաններում. շենքերի մուտքերը հսկելը և սեփականությունը պահպանելը. տոմսեր ստուգելը. առևտրի ավտոմատները ապրանքով բեռնավորելը և դրանցից կամ ավտոմեքենաների կայանատեղերում տեղադրված դրամարկղերից դրամ հանելը. էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հաշվիչների ցուցմունքներ գրառելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9151. Ցրիչներ և բեռնակիրներ.

2)Ստորին խումբ 9152. Դռնապաններ, պահակներ և համանման այլ աշխատողներ.

3)Ստորին խումբ 9153. Հսկիչներ՝ առևտրի ավտոմատների, ջրի, գազի, էլեկտրաէներգիայի սպառման հաշվիչների և աշխատողներ՝ համանման այլ զբաղմունքների:

17. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9151. ՑՐԻՉՆԵՐ ԵՎ ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ

1.Ցրիչներն ու բեռնակիրները կազմակերպության ներսում, մի կազմակերպությունից մյուսը, մասնավոր տներ և այլ վայրեր են հասցնում թղթակցություններ, փաթեթներ, բեռներ և այլ իրեր, ինչպես նաև՝ մատուցում են ուղեբեռը, հատկապես՝ հյուրանոցներում, կայարաններում և օդանավակայաններում:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)կազմակերպությունների ներսում, մի կազմակերպությունից մյուսը և այլ վայրեր թղթակցություններ, փաթեթներ և այլ իրեր հասցնելը.

2)փոստային ցրիչի պարտականություններ կատարելը.

3)ծեռնարկություններ, խանութներ, մասնավոր տներ և այլ վայրեր տարբեր ապրանքներ տանելը և այդ վայրերից ապրանքներ բերելը.

4)հյուրանոցներում, կայարաններում, օդանավակայաններում ու այլ վայրերում ուղեբեռ հանձնելը և ստանալը.

5)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)փոստատար.

2)ցրիչ.

3)բեռնակիր՝ ուղեբեռի մատուցման:

18. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9152. ԴՌՆԱՊԱՆՆԵՐ, ՊԱՀԱԿՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

1.Դռնապանները, պահակները, հանդերձապահները, վերելակավարները և համանման այլ աշխատողները հսկողություն են իրականացնում բնակելի տներ և այլ հաստատություններ մտնող և դուրս եկող անձանց նկատմամբ, այդ հաստատություններում կառավարում են վերելակները և վերահսկում դրանց սարքինությունը, պահպանում են ավտոմեքենաների կայանատեղերը, բնակության և աշխատանքի համար նախատեսված տարածքները և այնտեղ տեղակայված անշարժ գույքը՝ գողությունները կանխելու, հրդեհի օջախները կամ այլ վտանգները հայտնաբերելու նպատակով, ինչպես նաև՝ հավաքում և ստուգում են տոմսերը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)հյուրանոցի մուտքը հսկելը, հյուրերին օգնելը, հատկապես՝ նրանց ժամանելու կամ մեկնելու ժամանակ, հյուրերի համար տաքսի պատվիրելը, ուղեբեռը և բանալիները տեղ հասցնելուն օգնելը, բնակավայրի վերաբերյալ հյուրերին հետաքրքրող տեղեկատվություն հաղորդելը կամ այդպիսի տեղեկատվություն ստանալուն աջակցելը.

2)բնակելի տների կամ հիմնարկների ու կազմակերպությունների շենքերի մուտքերը հսկելը, այցելուների մուտքի իրավունքը հավաստող փաստաթղթերն ստուգելը ու նրանց պահանջով անհրաժեշտ տեղեկատվություն հաղորդելը.

3)տներ և այլ անշարժ գույք պահպանելը՝ գողությունները, հրդեհները և այլ վտանգավոր իրավիճակներ կանխելու նպատակով.

4)բնակելի տների և կազմակերպությունների վերելակները կառավարելը և դրանց սարքինությունը վերահսկելը, վերելակի գործարկմանը և բոլոր հանգույցների աշխատանքի նախնական ստուգմանը մասնակցելը, խափանվելու դեպքում վերելակը կանգնեցնելը և ոչ բարդ անսարքությունները վերացնելը.

5)այցելուներին դատարանի դահլիճ, մարզական հաստատություններ և այլ վայրեր ուղեկցելը.

6)տոմսեր ստուգելը, անհրաժեշտության դեպքում՝ ուշացած հանդիսատեսներին կինոթատրոններում, թատրոններում, կրկեսներում և համանման այլ վայրերում տեղավորելը.

7)հանդերձարաններում իրեր հսկելը, հասարակական վայրերում զուգարաններ սպասարկելը.

8)կայանատեղային հրապարակներ պահպանելը.

9)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հանդերձապահ.

2)հսկիչ՝ տոմսերի.

3)դռնապան.

4)պահակ՝ թանգարանի.

5)դռնապան՝ հյուրանոցի.

6)պահակ՝ ավտոմեքենաների կայանատեղի.

7)վերելակավար:

19. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9153. ՀՍԿԻՉՆԵՐ՝ ԱՌԵՎՏՐԻ ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ, ՋՐԻ, ԳԱԶԻ, ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՇՎԻՉՆԵՐԻ, ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Առևտրի ավտոմատների, ջրի, գազի, էլեկտրաէներգիայի սպառման հաշվիչների հսկիչները և համանման այլ զբաղմունքների աշխատողները բեռնավորում են առևտրի ավտոմատները, հանում այնտեղ կուտակված գումարը, գրառում են ջրի, գազի, էլեկտրաէներգիայի սպառման հաշվիչների ցուցմունքները և կատարում այդօրինակ այլ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)առևտրային ավտոմատներն ապրանքներով բեռնավորելը և այնտեղ կուտակված գումարը հանելը.

2)ավտոմեքենաների կանգառներում կայանման վարձ հավաքելը կամ կայանատեղում տեղակայված ավտոմատներում կուտակված գումար հանելը.

3)ջրի, գազի, էլեկտրաէներգիայի սպառման հաշվիչների ցուցմունքներ գրանցելը, վճարման վերջնաժամկետի վերաբերյալ սպառողներին զգուշացնելը, վճարումը ուշացրած բաժանորդներին գազի և էլեկտրաէներգիայի մատակարարումը ժամանակավորապես դադարեցնելու, իսկ վճարումից հետո՝ այն վերականգնելու աշխատանքներին աջակցելը, որոշ դեպքերում՝ բաժանորդի խնդրանքով համապատասխան վճարում կատարելը և վճարման անդորրագիրը բաժանորդին հանձնելը.

4)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հսկիչ՝ առևտրային ավտոմատների.

2)հսկիչ՝ ավտոմեքենաների կայանատեղի.

3)հսկիչ՝ ջրի սպառման հաշվիչի.

4)հսկիչ՝ գազի սպառման հաշվիչի.

5)հսկիչ՝ էլեկտրաէներգիայի սպառման հաշվիչի:

20. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 916. ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ԱՂԲԻ, ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

1.Աղբ հավաքողները և համանման այլ աշխատողները շենքերում, բակերում և այլ հասարակական վայրերում հավաքում են աղբը, ապահովում են փողոցների և հասարակական վայրերի մաքրությունը, մասնավոր տներում կամ կազմակերպություններում կատարում են պատահական այլ աշխատանքներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. աղբ հավաքելը, բեռնելը և բեռնաթափելը. փողոցներ, այգիներ, հանգստյան գոտիներ և հասարակական այլ վայրեր մաքրելը. մասնավոր տներում պատահական հասարակ աշխատանքներ կատարելը, ինչպիսիք են՝ փայտ բեռնաթափելը, կտրելը, դասավորելը, ձեռքով ջուր բերելը և այլն:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9161. Հավաքողներ՝ աղբի.

2)Ստորին խումբ 9162. Մաքրողներ՝ տարածքի, և համանման այլ աշխատողներ:

21. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9161. ՀԱՎԱՔՈՂՆԵՐ՝ ԱՂԲԻ

1.Աղբ հավաքողները շենքերում, բակերում, փողոցներում և այլ հասարակական վայրերում հավաքում և տեղափոխում են աղբը:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)աղբը մեծ ծավալի բեռնարկղերի մեջ հավաքելը.

2)աղբ հավաքելը և տրանսպորտային միջոցներ բարձելը.

3)աղբի փոխադրման աշխատանքներին աջակցելը և նախատեսված վայրերում այն բեռնաթափելը.

4)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)հավաքող՝ մնացորդների.

2)հավաքող՝ աղբի:

22. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9162. ՄԱՔՐՈՂՆԵՐ՝ ՏԱՐԱԾՔԻ, ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

1.Տարածք մաքրողները և համանման այլ աշխատողները մաքրում են փողոցները, հանգստյան գոտիները, կայարանները, օդանավակայանները և հասարակական այլ վայրեր, կատարում են մեկանգամյա հասարակ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)փողոցներ, բակեր, հանգստյան գոտիներ, կայարաններ, օդանավակայաններ և հասարակական այլ վայրեր մաքրելը և աղբը սահմանված գոտիներում կուտակելը.

2)մեկանգամյա հասարակ աշխատանքներ (հանձնարարություններ) կատարելը, ինչպիսիք են փայտ բեռնաթափելը, կտրելը, դասավորելը, ձեռքով ջուր բերելը, գորգեր մաքրելը և այլն.

3)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)մաքրող՝ փողոցների.

2)մաքրող՝ հանգստյան գոտիների:

23. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 917. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՊԱՏՎԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1.Սպասարկման ոլորտի կազմակերպություններում պատվեր ընդունող աշխատողները բնակչությունից ընդունում են կենցաղային ծառայությունների պատվերներ, ժամանակավոր օգտագործման համար քաղաքացիներին վարձույթի կետերում տրամադրում են տնտեսական, կենցաղային և այլ նշանակության առարկաներ, մարզական գույք և հանդերձանք, տրանսպորտային միջոցներ և այլ իրեր:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ ոսկերչական իրերի, ժամացույցների, ռադիոհեռուստատեսային և համակարգչային տեխնիկայի, կենցաղային մեքենաների, սարքերի և այլ իրերի նորոգման պատվերներ ընդունելը և վերանորոգող վարպետների միջև բաշխելը. վերանորոգված իրերը հաճախորդին հանձնելը. տնտեսական,

կենցաղային, մարզական և այլ նշանակության առարկաները ժամանակավորապես տրամադրելը և այդ առարկաներն ընդունելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբում.

1)Ստորին խումբ 9170. Աշխատողներ՝ պատվեր ընդունող, սպասարկման ոլորտի կազմակերպություններում:

24. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9170. ԱՇԽԱՏՈՂՆԵՐ՝ ՊԱՏՎԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1.Սպասարկման ոլորտի կազմակերպություններում պատվեր ընդունող աշխատողները բնակչությունից ընդունում են կենցաղային ծառայությունների պատվերներ, ժամանակավոր օգտագործման համար քաղաքացիներին վարձույթի կետերում տրամադրում են տնտեսական, կենցաղային և այլ նշանակության առարկաներ, մարզական գույք և հանդերձանք, տրանսպորտային միջոցներ և այլ իրեր:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բնակչությունից տարբեր կենցաղային ծառայությունների պատվերներ ընդունելը, (ոսկերչական իրեր, ժամացույցներ, ռադիոհեռուստատեսային և համակարգչային տեխնիկա, կենցաղային մեքենաներ ու սարքեր և այլ իրեր նորոգելու պատվերներ).

2)պատվերները վերանորոգող վարպետների միջև բաշխելը, վերանորոգված իրերը հաճախորդին հանձնելը, տեղում վճար ստանալը.

3)քաղաքացիներին ժամանակավոր օգտագործման համար տնտեսական, կենցաղային, մարզական և այլ նշանակության իրեր տրամադրելը.

4)հաճախորդներին ժամանակավորապես տրանսպորտային միջոցներ տրամադրելը.

5)ժամանակավորապես տրամադրված իրերը և տրանսպորտային միջոցները վարձակալության հանձնելու փաստաթղթեր ձևակերպելը.

6)վարձույթից վերադարձվող առարկաներ ընդունելը, դրանց վիճակը զննելը և վարձույթի դիմաց գումար ստանալը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)ընդունող՝ պատվերների.

2)աշխատող՝ վարձույթի կետի:

25. ԵՆԹԱԽՈՒՄԲ 92. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ, ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1.Գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների բանվորները հիմնականում կատարում են գյուղատնտեսության ու անտառային տնտեսության, ձկնաբուծության ու ձկնորսության, ինչպես նաև՝ որսորդության ոլորտներում կրկնվող հասարակ աշխատանքներ, որոնք կատարվում են ձեռքի պարզ գործիքների օգտագործմամբ կամ ֆիզիկական զգալի ջանքերի գործադրմամբ:

2.Սույն ենթախմբի՝ բանվորների պարտականությունները հիմնականում ներառում են. բնահող փորելը, բահով այլ աշխատանքներ կատարելը. տարատեսակ ապրանքներ բեռնելը և բեռնաթափելը. խոտ դիզելը. հողը փոցխով հավասարեցնելը. եղաններով խոտը դիզելը և այլ աշխատանքներ կատարելը. գոմաղբ ու պարարտանյութեր հավաքելը և դաշտում ցրելը. բույսեր ջրելը և մոլախոտեր հեռացնելը. մրգեր, բանջարեղեն ու զանազան բույսեր հավաքելը. կենդանիներ կերակրելը, կենդանիների վանդակներ և ագարակի (ֆերմայի) տարածք մաքրելը. անտառ ու մանրանտառ մաքրելը. ձկնաբուծարաններ մաքրելը և ջրային բույսերին առնչվող այլ հասարակ աշխատանքներ կատարելը. ջրիմուռներ, ուտելի և այլ կակղամորթեր հավաքելը. հրազենով որսորդությանը և թակարդով կենդանիներ որսալուն առնչվող հասարակ աշխատանքներ կատարելը:

3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբում.

1)Փոքր խումբ 921. Բանվորներ՝ գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների:

26. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 921. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ, ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1.Գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների բանվորները հիմնականում կատարում են գյուղատնտեսության և անտառային տնտեսության, ձկնաբուծության ու ձկնորսության, ինչպես նաև՝ որսորդությանն առնչվող կրկնվող հասարակ աշխատանքներ՝ ձեռքի պարզ գործիքների օգտագործմամբ կամ զգալի ֆիզիկական ջանքերի գործադրմամբ:

2.Սույն ենթախմբի բանվորների պարտականությունները հիմնականում ներառում են. բնահող փորելը, բահով այլ աշխատանքներ կատարելը. տարատեսակ ապրանքներ բեռնելը և բեռնաթափելը. խոտ դիզելը. հողը փոցխով հավասարեցնելը. եղաններով աշխատանք կատարելը. գոմաղբ ու պարարտանյութեր հավաքելը և դաշտում ցրելը. բույսեր ջրելը և մոլախոտեր հեռացնելը. մրգեր, բանջարեղեն ու զանազան բույսեր հավաքելը. կենդանիներ կերակրելը, կենդանիների վանդակներ և ագարակի (ֆերմայի) տարածք մաքրելը. անտառ ու մանրանտառ մաքրելը. ձկնաբուծարաններ մաքրելը և ջրային բույսերին առնչվող այլ հասարակ աշխատանքներ կատարելը. ջրիմուռներ, ուտելի և այլ կակղամորթեր հավաքելը. հրազենով որսորդությանը և թակարդով կենդանիներ որսալուն առնչվող հասարակ աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9211. Բանվորներ՝ գյուղատնտեսության ոլորտի.

2)Ստորին խումբ 9212. Բանվորներ՝ անտառային կազմակերպությունների.

3)Ստորին խումբ 9213. Բանվորներ՝ ձկնաբուծության, ձկնարդյունաբերության և որսորդական կազմակերպությունների:

27. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9211. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

1.Գյուղատնտեսության ոլորտի բանվորները կատարում են գյուղատնտեսական մշակաբույսերի տնկմանը, խնամքին, բերքահավաքին, կենդանիների խնամքին առնչվող և այլ հասարակ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բնահող հանելը, առուներ, ջրի ակոսեր փորելը, հող փորելու այլ աշխատանքներ կատարելը.

2)գյուղատնտեսական զանազան արտադրանք և այլ հումք բեռնելը և բեռնաթափելը.

3)փոցխով և եղանով խոտ հավաքելը, խոտի դեզեր դարսելը.

4)ջրելը և քաղհանելը.

5)մրգեր, բանջարեղեն և բույսերի պտուղներ հավաքելը.

6)զանազան մշակաբույսերի տնկման, բերքահավաքի և ընդհանուր գյուղատնտեսական աշխատանքներ կատարելը.

7)կենդանիներ կերակրելը, ջուր տալը և մաքրելը, մսուրում մաքրություն ապահովելը.

8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարել:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր՝ որակավորում չունեցող, գյուղատնտեսական աշխատանքների.

2)աշխատող՝ բերք հավաքող:

28. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9212. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Անտառային կազմակերպության բանվորները օգնում են բնական և տնկովի անտառների շահագործման աշխատանքներին՝ կատարելով բազմապիսի հասարակ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ծառեր տնկելու համար փոսեր փորելը.

2)գերաններ և փայտանյութ դասավորելը.

3)աճող և տապալված ծառերից նրբակեղև հանելը.

4)անտառից տրանսպորտային միջոցներով փայտանյութ, կոճղեր և այլ արտադրանք դուրս հանելու ժամանակ բեռնման և բեռնաթափման աշխատանքներ կատարելը.

5)կտրված ծառերի կոճղերից անտառի տարածքը մաքրելը, ձեռքով փայտ կոտրելը՝ օգտագործելով պարզ հարմարանքներ.

6)գերաններ չափանշելը և ձեռքով դրանք սղոցելը.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)բանվոր՝ որակավորում չունեցող, անտառային տնտեսության.
2)փայտահատ.
3)սղոցող:

29. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9213. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.Ձկնաբուծության, ձկնորսության և որսորդական կազմակերպությունների բանվորները կատարում են զանազան հասարակ աշխատանքներ ձկների, տարբեր տեսակի ջրային կենդանիների և բույսերի բազմացման, հրազենով որսի թակարդների տեղադրման ժամանակ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)ձկնաբուծարաններ մաքրելը, աճեցվող ձկներին, խեցգետիններին ու այլ ջրային կենդանիներին կերակրելը.
2)ջրային բույսերի խնամքի աշխատանքներ կատարելը.
3)ձկան որսի և ջրային բույսերի հավաքման համար կիրառվող ցանցեր, եղաններ և այլ առարկաներ պատրաստելն ու նորոգելը.
4)թակարդներ և որսի այլ գործիքներ ու հարմարանքներ պատրաստելն ու նորոգելը.
5)թակարդ տեղադրելը, որսը թակարդից հանելը.
6)կերակրող մորը անտառում կորցրած ձագեր որոնելը և դրանց խնամքը կազմակերպելը.
7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)բանվոր՝ որակավորում չունեցող, ձկնաբուծական (ձկնորսական) կազմակերպության.
2)բանվոր՝ որակավորում չունեցող, որսորդական կազմակերպության:

30. ԵՆԹԱԽՈՒՄԲ 93. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ

1.Հանքարդյունահանման և մշակման արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության ընդերքի հետախուզման բանվորները հիմնականում կատարում են նշված ոլորտներում կրկնվող հասարակ աշխատանքներ՝ ձեռքի հասարակ գործիքների օգտագործմամբ կամ զգալի ֆիզիկական ջանքերի գործադրմամբ:
2.Զբաղմունքների սույն ենթախմբի բանվորների պարտականությունները հիմնականում ներառում են. բահով բնահող փորելը և ցրելը, բարձրացնելը, տեղափոխելը, տեղաշարժելը, մաքրելը, բեռնելը և բեռնաթափելը. չշահագործվող հանքահորեր, բաց հանքեր և հանքավայրեր մաքրելը. խիճ հավասարեցնելը. քար, աղյուս և համանման այլ իրեր տեղափոխելը, ինչպես նաև՝ այլ հասարակ աշխատանքներ կատարելը ճանապարհների, ամբարտակների կամ շենքերի կառուցման ժամանակ. շենքեր, շինություններ քանդելու աշխատանքներ կատարելը. մշակող արդյունաբերությունում պարզագույն աշխատանքներ կատարելը, այդ թվում՝ արտադրանք տեսակավորելը, հավաքման խիստ սահմանված կանոնների բացակայության դեպքում՝ առանձին մանրամասերից ձեռքով հանգույց կամ կառուցվածք հավաքելը, առանձին մանրամասեր կամ հանգույցներ ձեռքով փաթեթավորելը, ձեռքով բեռներ տեղափոխելը, փոստային թղթակցություն տեսակավորելն ու տեղ հասցնելը, ոտնակավոր կամ ձեռքով կառավարվող փոխադրամիջոցներով ուղևորներ ու ապրանքներ փոխադրելը:
3.Այս ենթախմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ փոքր խմբերում.
1)Փոքր խումբ 931. Բանվորներ՝ լեռնարդյունահանման արդյունաբերության, շինարարության, երկրաբանության և ընդերքի հետախուզման.
2)Փոքր խումբ 932. Բանվորներ՝ մշակման արդյունաբերության.
3)Փոքր խումբ 933. Բանվորներ՝ տրանսպոտի և կապի ոլորտի և բեռնակիրներ:

31. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 931. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԼԵՌՆԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ

1.Լեռնարդյունահանման արդյունաբերության, շինարարության, երկրաբանության և ընդերքի հետախուզման ոլորտի բանվորները կատարում են օգտակար հանածոների արդյունահանմանը, երկրաբանությանը, ընդերքի հետախուզմանը, ճանապարհների, շենքերի և շինությունների կառուցմանն ու նորոգմանն առնչվող՝ կրկնվող հասարակ աշխատանքներ ձեռքի հասարակ գործիքների կիրառմամբ կամ զգալի ֆիզիկական ջանքերի գործադրմամբ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. բահով բնահող փորելը և ցրելը, բարձրացնելը, տեղափոխելը, տեղաշարժելը, մաքրելը, բեռնելը և բեռնաթափելը. չշահագործվող հանքահորեր, բաց հանքեր և հանքավայրեր մաքրելը. փոսորակներից կավիճ, կավ, մանրախիճ կամ ավազ հանելը. խիճ հավասարեցնելը, քար, աղյուս և այդօրինակ այլ իրեր տեղափոխելը, ինչպես նաև՝ այլ հասարակ աշխատանքներ կատարելը երկրաբանական հետազոտությունների, ընդերքի հետախուզման, ճանապարհների, ամբարտակների կամ շենքերի կառուցման ժամանակ. շենքեր, շինություններ քանդելու, հանքահորերի և շինհրապարակների սպասարկման պարզագույն աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9311. Բանվորներ՝ լեռնարդյունահանման արդյունաբերության, հանքավայրերի մշակման, երկրաբանության և ընդերքի հետախուզման.

2)Ստորին խումբ 9312. Բանվորներ՝ շինարարության, ճանապարհների, ամբարտակների և համանման այլ կառույցների վերանորգման.

3)Ստորին խումբ 9313. Բանվորներ՝ շենքերի շինարարության:

32. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9311. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԼԵՌՆԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ

1.Լեռնարդյունահանման արդյունաբերության, հանքավայրերի մշակման, երկրաբանության և ընդերքի հետախուզման բանվորները օգտակար հանածոների արդյունահանման, լեռնային հանքավայրերի շահագործման, երկրաբանական հետազոտությունների և ընդերքի հետախուզման ժամանակ կատարում են կրկնվող հասարակ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ապարները վագոնիկներ բեռնելը և շարժական վագոնիկներ բեռնաթափելը, դրանք գլորելով մինչև փոխադրման հիմնական հարթակ տեղափոխելը, դատարկ կամ բեռնավորված վագոնիկներ կցելը և իրարից անջատելը.

2)երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհներ նախապատրաստելը.

3)հանքահորերում օգտագործվող ժամանակավոր հոսանքի աղբյուրներ լիցքավորելը.

4)շահագործումը դադարեցված հանքավայրերի հանքահորերից, բաց հանքերից փայտյա և մետաղյա հենասյուներ հանելը.

5)փոսորակներից կավ, մանրախիճ կամ ավազ հանելը.

6)տարբեր պատնեշներ վերացնելը՝ ըստ ստացված հրահանգի.

7)դաշտային աշխատանքների համար նախատեսված հանդերձանք և սարքավորումներ փաթեթավորելը, բեռնելը, բեռնաթափելը, տեղափոխելը, մաքրելը և լվանալը.

8)դաշտային աշխատանքների ժամանակ ձեռք բերված նմուշներ փաթեթավորելը, ըստ հանձնարարության դրանք մաքրելը, լվանալը և պահեստավորելը.

9)դաշտային աշխատանքների համար ընտրված ճամբարը մաքրելու և պահպանելու աշխատանքներ կատարելը.

10)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր՝ որակավորում չունեցող, հողային աշխատանքների.

2)բանվոր՝ որակավորում չունեցող, լեռնարդյունահանման արդյունաբերության.

3)գազաչափող.

4)վագոնիկավար՝ ճոպանուղու.

5)բանվոր՝ որակավորում չունեցող, երկրաբանական որոնողական աշխատանքների:

33. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9312. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ, ԱՄԲԱՐՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ

1.Շինարարության ճանապարհների, ամբարտակների և համանման այլ կառույցների վերանորոգմաան բանվորները ճանապարհների, ամբարտակների և այդօրինակ այլ կառույցների շինարարության ու սպասարկման ժամանակ կատարում են կրկնվող հասարակ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)ճանապարհների շինարարության, սպասարկման և վերանորոգման ժամանակ նախապատրաստական պարզագույն աշխատանքներ կատարելը, ինչպիսիք են մակերևույթի փոշին և կեղտը մաքրելը, քարեր հեռացնելը և այլն.

2)ճանապարհների շինարարության, սպասարկման և վերանորոգման ժամանակ հող փորելը և փոսեր լցնելը, խիճ, կոպիճ և համանման այլ նյութեր փռելը, պարզագույն այլ աշխատանքներ կատարելը.

3)ամբարտակների և համանման այլ կառույցների շինարարության ժամանակ որմնադրին քար, բետոն և շաղախ մատուցելը կամ այլ տեսակի օգնություն ցուցաբերելը,

4) բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր՝ որակավորում չունեցող, ամբարտակների շինարարության.

2)բանվոր՝ որակավորում չունեցող, ճանապարհների շինարարության:

34. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9313. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՇԵՆՔԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1.Շենքերի շինարարության բանվորները կրկնվող զանազան հասարակ աշխատանքներ են կատարում բոլոր տեսակի շենքերի շինարարության ժամանակ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)օգտագործված քարեր ու աղյուսներ մաքրելը, դրանց մնացորդները հավաքելը, շենքեր քանդելը և համանման այլ հասարակ աշխատանքներ կատարելը.

2)տարբեր պատնեշներ վերացնելը՝ ըստ տրված հրահանգի.

3)շինարարության հրապարակում որմնադրին ձեռքով քար, բետոն և շաղախ մատուցելը.

4)ջրամեկուսիչ շերտեր փռելուց առաջ մակերեսները փոշուց և կեղտից մաքրելը.

5)շենքերի ճակատները և համապատասխան մակերևույթները երեսպատման նախապատրաստելը, երեսպատման սալիկներ տեսակավորելը՝ ըստ չափերի, տեսակի և գույնի.

6)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր՝ որակավորում չունեցող, շենքի շինարարության.

2)բանվոր՝ որակավորում չունեցող, շենքի քանդման:

35. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 932. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1.Մշակման արդյունաբերության բանվորները կատարում են նյութեր, հումք և իրեր տեսակավորելու, չորացնելու, ջերմամշակումից հետո պատրաստվածքները դուրս բերելու ու բեռնաթափելու, պատրաստվածքները ձեռքով հավաքելու, փաթեթավորելու, պիտակավորելու, պահեստի և այլ կրկնվող հասարակ աշխատանքներ, որոնք պահանջում են ձեռքի պարզ գործիքների կիրառում, իսկ հաճախ նաև զգալի ֆիզիկական ջանքեր:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են՝ մշակման և վերամշակման արտադրությունում ձեռքով մանրամասեր հավաքելու պարզ գործողություններ կատարելը. օգտագործվող հումք ու կիսապատրաստվածքներ տեսակավորելը. դրանք բեռնելը, բեռնաթափելը և տեղափոխելը. պատրաստի արտադրանքը և տարաները լվանալը. ձեռքով փաթեթավորելը, փաթեթներ պիտակավորելը, պահեստի աշխատանքներ և ձեռքի համանման այլ հասարակ աշխատանքներ կատարելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9321. Բանվոր-հավաքողներ.

2)Ստորին խումբ 9322. Բանվորներ՝ մշակման արդյունաբերության և հարակից այլ զբաղմունքների:

36. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9321. ԲԱՆՎՈՐ-ՀԱՎԱՔՈՂՆԵՐ

1.Մշակման արդյունաբերության բանվոր-հավաքողները տեսակավորում են արտադրանքը և կատարում են մանրամասերը ձեռքով հավաքելու հասարակ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)մանրամասերը ձեռքով տեսակավորելը.

2)մանրամասերը ձեռքով հավաքելու հասարակ աշխատանքներ կատարելը.

3)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր-տեսակավորող՝ որակավորում չունեցող.

2)բանվոր-հավաքող՝ որակավորում չունեցող:

37. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9322. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ

1.Մշակման արդյունաբերության և հարակից զբաղմունքների բանվորները կատարում են նյութերը, հումքը և շինվածքները ձեռքով փաթեթավորելու և պիտակավորելու հասարակ աշխատանքներ, ինչպես նաև մշակման արդյունաբերությունում կատարվող պարզագույն, կրկնվող այլ աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)նյութերը կամ արտադրանքը ձեռքով փաթեթավորելը՝ արկղերի, պարկերի, ստվարաթղթե տուփերի, բեռնարկղերի, տակառների և այլ տարողությունների մեջ փոխադրելու կամ պահպանելու համար.

2)տարբեր նյութական արժեքներ պահեստում մուտքագրելուց հետո դրանք համապատասխան տեղերում ձեռքով տեղադրելը կամ տեղադրման տեխնիկական միջոցների աշխատանքին աջակցելը.

3)ներկայացված փաստաթղթերի հիման վրա ապրանքներ ընտրելը, դրանք լրակազմելը.

4)ձեռքով կամ այլ սարքավորումների օգնությամբ փաթեթներին պիտակների և պիտակավորման վահանակների ամրացման աշխատանքներ կատարելը, կապարակնքման համար լարեր և այլ նախապատրաստվածքներ պատրաստելը.

5)մշակման արդյունաբերության տարբեր ճյուղերում կամ վերանորոգման կազմակերպություններում հումք, նախապատրաստվածքներ կամ արտադրանք տեղաշարժելը, բարձրացնելը, տեղափոխելը, բեռնելը, բեռնաթափելը, լվանալը.

6)ձեռքով կամ ձեռքի կառավարմամբ աշխատող սարքավորումների միջոցով հումք, նախապատրաստվածքներ, պատրաստի արտադրանք փռելը, հարթեցնելը, ջրազրկելը, մամլելը, կաղապարելը, եզրահատելը, խոնավացնելը, փխրեցնելը և համանման այլ գործողություններ կատարելը՝ զգալի ֆիզիկական ջանքերի գործադրմամբ.

7)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)բանվոր՝ որակավորում չունեցող, մշակման արդյունաբերության.

2)փաթեթավորող՝ ձեռքով.

3)պիտակավորող՝ ձեռքով.

4)ջրազրկող՝ հումքի.

5)հարթող՝ նախապատրաստվածքի.

6)փռող՝ գործվածքի.

7)բանվոր՝ պահեստի.

8)լրակազմող՝ ապրանքի:

38. ՓՈՔՐ ԽՈՒՄԲ 933. ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ՝

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈՒ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1.Բեռնակիրները և տրանսպորտի ու կապի ոլորտների բանվորները վարում են հեծանիվներ և համանման փոխադրամիջոցներ, գյուղատնտեսական մեքենաներ կամ այլ ոչ շարժիչային քարշի ուժով աշխատող փոխադրամիջոցներ, ձեռքով փոխադրում են ծանրություններ, հասցեատերերին են հանձնում հեռագրեր ու պարբերական մամուլի թողարկումներ:

2.Կատարվող պարտականությունները հիմնականում ներառում են. հեծանիվներ և համանման փոխադրամիջոցներ վարելը. ուղևորների և բեռների տեղափոխման նպատակով ոչ շարժիչային քարշի ուժով աշխատող փոխադրամիջոցներ կառավարելը. ծանրությունները ձեռքով տեղափոխելը. կապի օպերատորներից հեռագրեր ու պարբերական մամուլի թողարկումներ ստանալն ու հասցեատերերին հանձնելը:

3.Այս փոքր խմբի զբաղմունքները ներառվում են հետևյալ ստորին խմբերում.

1)Ստորին խումբ 9331. Վարորդներ՝ ձեռքով կամ ոտնակով կառավարվող տրանսպորտային միջոցների.

2)Ստորին խումբ 9332. Վարողներ՝ ոչ շարժիչային քարշի ուժով աշխատող տրանսպորտային միջոցների.

3)Ստորին խումբ 9333. Բանվորներ՝ օժանդակ և բեռնակիրներ.

4)Ստորին խումբ 9334. Բանվորներ՝ կապի ոլորտի:

39. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9331. ՎԱՐՈՐԴՆԵՐ՝ ՁԵՌՔՈՎ ԿԱՄ ՈՏՆԱԿՈՎ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.Ձեռքով կամ ոտնակով կառավարվող տրանսպորտային միջոցների վարորդները վարում են հեծանիվներ և համանման այլ տրանսպորտային միջոցներ՝ ուղևորներ և բեռներ փոխադրելու համար:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)բեռներ բարձելը կամ բեռնաթափելը, տանսպորտային միջոց նստելու կամ իջնելու ժամանակ ուղևորներին օգնելը.

2)տրանսպորտային միջոցը հանձնարարված երթուղով տեղաշարժելը՝ պահպանելով երթևեկության գործող կանոնները.

3)տրանսպորտային միջոցի փոքր վերանորոգման աշխատանքներ կատարելը.

4)փոխադրավարձ ստանալը.

5)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.

1)վարորդ՝ ձեռքով կառավարվող տրանսպորտային միջոցի.

2)վարորդ՝ ոտնակով կառավարվող տրանսպորտային միջոցի:

40. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9332. ՎԱՐՈՂՆԵՐ՝ ՈՉ ՇԱՐԺԻՉԱՅԻՆ ՔԱՐՇԻ ՈՒԺՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.Ոչ շարժիչային քարշի ուժով աշխատող տրանսպորտային միջոցներ վարողները կառավարում են ոչ շաժիչային քարշի ուժով աշխատող տրանսպորտային միջոցները՝ ողևորներ և ապրանքներ փոխադրելու համար, ինչպես նաև կատարում են գյուղատնտեսական աշխատանքներ:

2.Նրանց պարտականությունները ներառում են.

1)տրանսպորտային միջոցներին կամ մեքենաներին կենդանիներ լծելը.

2)ապրանքներ բեռնելը և բեռնաթափելը կամ տրանսպորտային միջոց բարձրանալիս կամ իջնելիս ուղևորներին օգնելը.

3)անհրաժեշտ ուղղությամբ տեղաշարժվելու համար կենդանիներին կառավարելը՝ հաշվի առնելով այլ տրանսպորտային միջոցների տեղաշարժման կարգն ու ճանապարհային երթևեկության սահմանված կանոնները.

4)փոխադրավարձ ստանալը.

5)զբոսաշրջային երթուղիներում հատուկ կահավորված ձիասայլակներ շահագործելը.

6)գյուղատնտեսական և այլ մեքենաներին լծած կենդանիներ կառավարելը.

7)ոչ բարդ նորոգում կատարելը և տրանսպորտային միջոցները լավ վիճակում պահելը.

8)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:

3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)կառապան՝ ուղևորափոխադրման.
2)սայլապան՝ բեռնափոխադրման.
3)կառավարող՝ կենդանիների:

41. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9333. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ՕԺԱՆԴԱԿ ԵՎ ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ

1.Օժանդակ բանվորները և բեռնակիրները կատարում են կահույք և տնային գործածության այլ իրեր փաթեթավորելու, տեղաշարժելու, բեռնելու և բեռնաթափելու, ինքնաթիռներ, գնացքներ և տրանսպորտային այլ միջոցներ բեռնելու և բեռնաթափելու, ապրանքներ տեղափոխելու և պահեստավորելու աշխատանքներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)անհատ քաղաքացիների և կազմակերպությունների կահույքը, մեքենաները, սարքավորումները և համանման այլ իրեր փոխադրման նպատակով փաթեթավորելը.
2)բեռնման կամ բեռնաթափման ենթակա ապրանքները ինքնաթիռներ, գնացքներ և տրանսպորտային այլ միջոցներ տեղափոխելը.
3)ձեռքով բեռնման և բեռնաթափման աշխատանքներ կատարելը, ինչպես նաև՝ սորուն և հատային նյութերը (հատիկային մշակաբույսեր, ավազ, քարածուխ, ձուլածո նախապատրաստվածքներ և այլն) տարբեր տեսակի բեռնող-բեռնաթափող մեքենաներ մատակարարելը.
4)գազանման և հեղուկ նյութերի բեռնման-բեռնաթափման ժամանակ խողովակաշարեր նախապատրաստելը և միացնելը, բեռնման-բեռնաթափման աշխատանքները հսկելը.
5)ապրանքներ տեղափոխելը և պահեստներում ու համանման այլ վայրերում պահեստավորելը.
6)բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)բեռնակիր՝ ձեռքով բեռի փոխադրման.
2)բանվոր՝ օժանդակ.
3)բանվոր՝ պահեստի:

42. ՍՏՈՐԻՆ ԽՈՒՄԲ 9334. ԲԱՆՎՈՐՆԵՐ՝ ԿԱՊԻ ՈԼՈՐՏԻ

1.Կապի ոլորտի բանվորները հեռագրերի, ծանրոցների և պարբերական մամուլի առաքման ժամանակ կատարում են հասարակ աշխատանքներ:
2.Նրանց պարտականությունները ներառում են.
1)փոստային բաժանմունքներում հեռագրեր, ծանրոցներ, թերթեր և այլ պարբերականներ ստանալն ու դրանք ըստ նշված հասցեների տեղ հասցնելը.
2)մատուցված ծառայությունների դիմաց վճար ստանալը.
3)բովանդակությամբ կից աշխատանքներ կատարելը:
3.Սույն ստորին խմբի զբաղմունքների օրինակներ են.
1)փոստատար.
2)տեսուչ՝ հեռախոսային խոսակցության վարձավճարներ հավաքող: